ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

EUROPEAN EDUCATIONAL REGIONAL ACADEMY

ISSN 1829-4359

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

*ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ*

8

ԵՐԵՎԱՆ
2017

ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

EUROPEAN
EDUCATIONAL
REGIONAL
ACADEMY

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

*ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ*

**8**

ԵՐԵՎԱՆ
2017

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Ե 744

*Գլխավոր խմբագիր՝*
**Գևորգյան Հուսիկ,** ֆիզ-մաթ գիտ. թեկնածու, դոցենտ

*Խմբագրական խորհուրդ*
**Բիշարյան Հ. Վ.,** մանկավարժական գիտ. թեկնածու
**Խաչատրյան Ա. Հ.,** իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Աբրահամյան Հ. Մ.,** պատմագիտության դոկտոր
**Վահանյան Գ. Ա.,** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Ճուղուրյան Ա. Գ.,** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Կիրակոսյան Ն. Լ.**,տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
**Նալչադյան Կ. Ա.,** հոգեբանական գիտ. թեկնածու, դոցենտ
**Մանասյան Գ. Ս.,** աշխարհագրական գիտ. թեկնածու, դոցենտ
**Ղարսյան Է. Վ.,** տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**Մելիքյան Վ. Շ.,** տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
**Հայրապետյան Վ. Ժ.,** ֆիզ-մաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**Աստվածատրյան Ա. Վ.,** բժշկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**Քրիստոֆ Կրեյտց,** ինֆորմատիկայի դոկտոր, պրոֆեսոր

Ե 744 **Եվրոպական ակադեմիա:** Գիտ. հոդվածների ժղվ./ ԵԿՏԱ.
Գլխ. խմբ.՝ Հ. Գևորգյան,– Եր.: «ԵԿՏԱ» հրատ., 2017: Գիրք 8 - 472 էջ:

*Ժողովածուն ընդգրկում է մանկավարժության, հոգեբանության, իրավագիտության, տնտեսագիտության, մաթեմատիկայի, պատմության, քաղաքագիտության, զբոսաշրջության տարբեր ոլորտների հրատապ խնդիրների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:*

ЕВРОПЕЙСКАЯ АКАДЕМИЯ: СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ
EUROPEAN ACADEMY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-99941-2-609-5

© Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հրատարակչություն, 2017
© Publishing of European Educational Regional Academy 2017

# ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՇՈՒՐՋ

***Հեղինե Վաչեի Բիշարյան***
***մ.գ.թ.***
*ԵԿՏԱ, ռեկտոր*
***Արմեն Գևորգի Ճուղուրյան***
*ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, պրոֆեսոր*

Համալսարաններում բարձրագույն մասնագիտական կրթության առանցքային սպառողը բուհի շրջանավարտն է, որը կրթության է ձգտում հասարակության մեջ բարեկեցիկ դիրքերի հասնելու համար: Հետևաբար, մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումները պետք է առաջին հերթին բավարարեն կրթական ծառայությունների սպառողների շահերը, որը ներկայումս իր տեղն է գտնում բուհերի վարկանիշավորման համակարգում:

Որակի վարկանիշավորումը կրթության կառավարման մասնագետների կողմից արդարացվում է նրանով, որ բակալավրիատի կամ մագիստրատուրայի շրջանավարտը, դեռևս որպես համալսարանի դիմորդի կարգավիճակով, պետք է համոզմունք ունենա, որ տվյալ մասնագիտության գծով պահանջված է լինելու աշխատաշուկայում: Ներկայումս, միջազգային շուկայում ներկայացվում են վարկանիշային տարբեր սանդղակներ, դրանցում նշելով բուհի մրցակցային դիրքը (տես աղյուսակ 1):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս[1], որ բարձրագույն կրթության եվրոպական տարածքում (ԲԿԵՏ) համալսարանական շրջանավարտների գործազրկության շարժառիթների շարքում, տնտեսական ճգնաժամներից բացի, կարևոր պատճառ կարող է հանդիսանալ ուսումնառության ընթացքում մասնագետի հմտությունների և կարողությունների անհամապատասխանությունը՝ գործատուի պահանջներին: Այս առումով, համալսարանները ձգտում են հնարավորինս ուսումնառության վերջնարդյունքներն ուղղորդել մասնագետի այն հմտություններին և կարողություններին, որոնք պահանջվում են մասնագիտական կրթական առաջին կամ երկրորդ մակարդակում:

[1] Տե՛ս The European Higher Education Area in 2015: Implementation Report, p. 171-173

*Աղյուսակ 1*

Լավագույն համալսարանների տասնյակը՝ ըստ միջազգայնորեն ճանաչում ստացած վարկանիշային սանդղակի (2017 թ)[2]

| Դիր-քը | Առաջատար համալսարաններ | Մեկ աշխատակցի հաշվով՝ ուսանողներ | Միջազգային ուսանողների տեսակարար կշիռ |
|---|---|---|---|
| 1 | Օքսֆորդի համալսարան | 10,9 | 35% |
| 2 | Կալիֆորնիայի տեխնոլոգիական ինստիտուտ | 6,7 | 27% |
| 3 | Ստենֆորդի համալսարան | 7,7 | 22% |
| 4 | Քեմբրիջի համալսարան | 11,3 | 35% |
| 5 | Մասսաչուսեթի տեխնոլոգիական ինստիտուտ | 8,8 | 33% |
| 6 | Հարվարդի համալսարան | 8,8 | 25% |
| 7 | Փրինքեթոն համալսարան | 8,4 | 23% |
| 8 | Լոնդոնի թագավորական քոլեջ | 11,3 | 52% |
| 9 | Ցյուրիխի տեխնոլոգիական ինստիտուտ | 14,9 | 37% |
| 10 | Բերքլի համալսարան | 12 | 16% |

Եվ խնդիրը միայն այն չէ, որ շրջանավարտ մասնագետը կարող է չունենալ բավարար հմտությունների կամ կարողությունների ընդգրկուն շրջանակ, և դրանով իսկ, պահանջված չլինել գործատուի կողմից: Գործնականում քիչ չեն դեպքերը, երբ կրթության ընթացքում ձեռք բերած մասնագիտական հմտությունների լայն շրջանակը չի բավարարում գործատուին, քանի որ այն «գերհագեցած է» և որոշակիորեն կիրառելի չէ աշխատանքի ընթացքում: Եվ ստացվում է այնպես, որ այդ պարագայում բակալավրիատի, կամ մագիստրատուրայի շրջանավարտները գործատուների կողմից գնահատվում են «գերորակավորված» և արդյունքում աշխատանքի չեն անցնում: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Արևմտյան Եվրոպայի համալսարանական գործազուրկ շրջանավարտների շրջանում գործատուի համար

[2] https://www.timeshighereducation.com/world-university-rankings/2017/world-ranking#!/page/0/length/25/sort_by/rank/sort_order/asc/cols/stats

«գերորակավորում» ունեցող երիտասարդ մասնագետների տեսակա-րար կշիռը տատանվում 14-35% միջակայքում[3]:

Քննարկվող իրավիճակը ավելի սուր բնույթ է ստանում Հայաստանի Հանրապետությունում, քանի որ ըստ պաշտոնական վիճակագրության, վերջին տարիներին գործազուրկների մեջ առավել մեծ թվաքանակ են զբաղեցնում բարձրագույն կրթությամբ անձինք (տես աղյուսակ 2), որոնք ունեն կրթական ցենզի բարձր մակարդակ և իրենց մասնագիտական հմտությունների ու կարողությունների որակով գերազանցում են գործատուների պահանջմունքների մակարդակը, և վերջիններիս կողմից գնահատվելով «գերորակավորված», պարզապես աշխատանքի առաջարկ չեն ստանում:

*Աղյուսակ 2*

ՀՀ-ում գործազուրկներն՝ ըստ կրթական ցենզի (հազ. մարդ)[4]

| Կրթական ցենզը | Ընդամենը | | Տղամարդ | | Կին | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2013 | 2014 | 2013 | 2014 | 2013 | 2014 |
| **Ընդամենը** | 224.6 | 242.1 | 101.9 | 110.5 | 122.7 | 131.6 |
| Բարձրագույն, հետբուհական | **60.5** | **74.8** | **23.1** | **30.6** | **37.3** | **44.3** |
| Միջին մասնագիտական | 57.7 | 51.8 | 19.1 | 18.5 | 38.6 | 33.2 |
| Նախամասնագիտական | 3.5 | 6.7 | 1.5 | 3.6 | 2.1 | 3.1 |
| Միջնակարգ | 89.5 | 103.4 | 47.5 | 54.6 | 42.0 | 48.8 |
| Հիմնական ընդհանուր | 13.1 | 5.3 | 10.6 | 3.1 | 2.5 | 2.2 |
| Տարրական | 0.4 | 0.1 | 0.1 | 0.1 | 0.2 | 0.1 |

Այս առումով, կարծիք է հայտնվում, որ չնայած ՀՀ-ում Բոլոնիայի գործընթացի որոշակի ձեռքբերումներին, իրականացված բարեփոխումները հիմնականում դեռևս առնչվում են բարձրագույն կրթության կառուցվածքային բնութագրերին և, ընդհանուր առմամբ, դեռևս չեն անդրադարձել կրթական ծրագրերի բովանդակությանը և որակին[5]:

3 The European Higher Education Area in 2015: Implementation Report, p. 182
4 ԱՎԾ Տարեգիրք, 2015, էջ 72
5 Գաբրիելյան Մ., Բոլոնիայի գործընթաց. ուսանողակենտրոն համակա՞րգ, // Բաց հասարակության հիմնադրամ- Հայաստան

Դրանք, իրենց հերթին բերում են նրան, որ կրթական համակարգը, ընդհանուր առմամբ, դեռևս շարունակում է «կտրված» մնալ աշխատուշակայից և ամբողջովին հաշվի չի առնում գործատուների պահանջները: Մասնագիտական կրթական ծրագրերը, հաճախ գերհագեցած են լինում շրջանավարտներից պահանջվող հմտություններին ու կարողություններին ուղղակիորեն չառնչվող դասավանդվող առարկաներով, կամ էլ չեն ընդգրկում արդիական այնպիսի առարկաներ, որոնք կզարգացնեին այսօրվա շրջանավարտի կոմպետացիաները՝ հասցեագրված գործատուի պահանջներին:

Կրթական գործընթացի կազմակերպման հարթությունում ակնհայտ է մարդկային գործոնի կարևորությունը: Բազմաթիվ են օրինակները, երբ առկա են բավարար տեղեկատվություն, հնարավորություններ, սակայն ուսանողներն ու դասախոսները չեն օգտվում կամ չեն ցանկանում օգտվել դրանցից[6]: Հետևաբար, համալսարանները հրատապ անցում պետք է կատարեն ուսումնառության վերջնարդյունքների հենքով կրթության կազմակերպմանը, մասնագիտական կրթական ծրագրերում հստակ նշելով՝ թե որ առարկան ի՞նչ չափով և ինչպե՞ս է առնչվում շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

Այս ճանապարհով հնարավոր կլինի բեռնաթափվելու ուսումնական ծրագիրը գերծանրաբեռնող «անուղղակի» առարկաներից՝ փոխարենը ուսումնառության գործընթացում ընդգրկելով աշխատաշուկայի պահանջարկը բավարարող վերջնարդյունքներով նոր առարկաներ: Ուսումնառության վերջնարդյունքների թիրախավորումը աշխատաշուկայի պահանջներին մեծապես կբարձրացնի մասնագիտական կրթական համակարգում բարեփոխումների արդյունավետությունը:

Ուստի, այսօր մրցակցային են համարվում այն կրթական ծրագրերը, որոնց վերջնարդյունքներով ձևավորվում են ոչ միայն «գիտակ», այլև «ստեղծարար հմտություններով» շրջանավարտներ: Այս առումով, մասնագիտական կրթական ծրագրերում ներակյումս մեծ ուշադրություն պետք է դարձվի ուսանողի ոչ թե ձևական, այլ արդյունավետ անհատական աշխատանքի վերջնարդյունքներին, նպատակ ունենալով սովորողի մոտ զարգացնելու ստեղծարարությունը, նորարարու-

[6] Գաբրիելյան Մ., Բոլոնիայի գործընթաց. ուսանողակենտրոն համակա՞րգ, // Բաց հասարակության հիմնադրամ- Հայաստան:

թյունը և ինքնադրսևորումը, որը Բոլոնիայի ներկայիս գործընթացի պահանջներից մեկն է[7]:

Մասնագիտական կրթական ծառայությունների մատուցման մրցունակության գնահատման նպատակով արդեն ավանդույթ է դարձել բուհերի վարկանիշային սանդղակների հրատարակումը, որը արդեն մի քանի տասնամյակ կիրառվում է միջազգային պրակտիկայում՝ վարկանիշավորման տարբեր գործակալությունների կողմից: ՀՀ-ում բուհերի վարկանիշավորման պրակտիկան ընդամենը իր կիրառությունը գտավ 2013 թվականից: Այսպես, 2015 թվականի միասնական վարկանիշով 1-ին տեղում էր Երևանի պետական համալսարանը, 2-րդ տեղում՝ Հայ-ռուսական սլավոնական համալսարանը, 3-րդ տեղում՝ Երևանի պետական բժշկական համալսարանը, 4-րդն Ամերիկյան համալսարանն է, 5-րդը՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, 6-րդը՝ Հայաստանում ֆրանսիական համալսարանը, 7-րդը՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, 8-րդը՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը, 9-րդը՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը, 10-րդը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը[8]:

Սակայն, բուհերի վարկանիշավորումը միանշանակ չի ընդունվում կրթության ոլորտի շահառուների կողմից, ինչպես մեր հանրապետությունում, այնպես էլ արտասահմանում: Այս առիթով, Եվրոպական ուսանողների միությունը ընդունեց հռչակագիր, ընդգծելով վարկանիշավորման թերությունները: Նախ և առաջ, ուսանողները գտնում են, որ Բոլոնիայի գործընթացը առավելապես պետք է կենտրոնանա համալսարանների կողմից որակի ապահովման հաշվետվողականությանը, և ոչ թե վարկանիշավորմանը: Եթե, որակի տեղեկատվությունը կողմնորոշիչ է դառնում ուսանողության համար, ապա վարկանիշավորումը սրում է բևեռացումը Արևմուտքի և Արևելքի միջև և ավելորդ անգամ ընդգծում կրթական դաշտի անհավասարությունը ԲԿԵՏ-ում:

Բացի այդ, ուսանողները ընդդիմանում են բուհերի շուկայականացմանը, վարկանիշավորումը դիտելով բարձրագույն կրթության ա-

---

[7] ԲԿԵՏ նախարարների կոնֆերանս, Երևանի կոմյունիկե 2015

[8] Աղբյուրը՝ www//ranking.armedu.am

ճող շուկայականացման գործոն[9]: Նրանք գտնում են, որ վարկանիշները սպառնալիք են սոցիալական ուղղվածության տեսակետից և չեն կարող հիմնավոր կողմնորոշիչ դեր կատարել բուհի ընտրության գործում, քանի որ վարկանիշավորումը կրթական շուկայում թիրախավորվում է բուհի հեղինակության գովազդին և համապարփակ չի արտացոլում ուսանողի և դիմորդի շահերը:

## Ամփոփում

Այսպիսով՝ մրցունակ կարող են համարվել բակալավրիատի և մագիստրատուրայի այն կրթական ծրագրերը, որոնք հասցեագրված են ուսումնառության գործընթացի շահառուներին և բավարարում են վերջիններիս պահանջները, և ոչ թե բարձր որակներով վարկանիշավորվում են գնահատման տարբեր գործակալությունների կողմից:

*Հիմնաբառեր.* կրթության շուկա, մրցակցային դիրք, որակի վարկանիշավորում, բոլոնիայի գործընթաց:

## О РЕЙТИНГИРОВАНИИ КАЧЕСТВА УНИВЕРСИТЕТСКОГО ОБРАЗОВАНИЯ

**Бишарян Егине Вачеевна**
канд.пед.наук
ЕРОА, ректор
**Джугурян Армен Геворгович**
ЕРОА, кафедра Экономики и управления, профессор

## Резюме

В настоящее время стало обычным делом рейтингирование вузов и распространение результатов в рынках образовательных услуг. Однако, этот процес неоднозначно трактуется со стороны бенефициаров университетской деятельности. В статье рейтингирование вузов анализируется не только с точки зрения качества образовательных услуг,

[9] The Dangers of University Ranking System, //European Students Union, 2013

а также в контексте укрепления конкретных позиций университетов на рынке образования.

*Ключевые слова:* рынок образования, конкурентная позиция, рейтинг качества, болонский процесс.

## ABOUT RANKING OF QUALITY OF UNIVERSITY EDUCATION

**Heghine Bisharyan**
Candidate of science Pedogogy
EREA, Rector
**Armen Jughuryan**
EREA, Chair of Economics and Management, professor

### Summary

At the present time it has become common to rank universities and disseminate results in the markets of educational services. However, this process is not taking the same interpretation between beneficiaries of university activities. In the article, the ranking of universities is analyzed not only from the point of view of the quality of educational services, but rather from the point of view of strengthening specific positions of universities in the education market.

*Keywords*: education market, competitive position, ranking of quality, Bologna process.

# ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԹՐԵՍԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

***Արթուր Սուրենի Վեյան***
*ԵՊՀ, Անձի զարգացման ամբիոն, մագիստրոս*

Հոդվածում քննարկվում է հրշեջ-փրկարարների պատրաստվածության հոգեբանական առանձնահատկությունները և հարմարման օրինաչափությունների ուսումնասիրման ռազմավարական մոտեցումների հետ կապված հարցերը:

Մեր կողմից ծրագրված շարունակական հետազոտության շրջանակում առաջադրված խնդիրներից մեկը ենթադրում է ստեղծել հրշեջ-փրկարարի հարմարման բաղադրիչների համապարփակ բանաձև՝ մասնագիտական տարբեր ոլորտներում կիրառելու նպատակով:

Հենց նշված խնդրի իրականացմամբ էլ թելադրված է սույն հոդվածում արծարծված հիմնախնդրի հրատապությունն ու այժմեականությունը:

Ակներև է, որ արտակարգ իրավիճակները հասարակության պատմությանն ուղեկցող անխուսափելի երևույթներ են: Հասարակության զարգացման արդի փուլը ևս զերծ չէ տարաբնույթ աղետներից, դրանց ուղեկցող և հաջորդող արտակարգ իրավիճակներից, որոնք անկանխատեսելի են դարձնում մարդկային կացութաձևի հետագա ընթացքը: Նման իրավիճակներին դիմակայելու համար պահանջվում է արդիական մոտեցում:

Արտակարգ և ճգնաժամային իրավիՃակները շատ արդիական են ներկայիս հասարակության համար, քանի որ ցանկացած արտակարգ իրավիճակում արդյունավետ աշխատանքներ կազմակերպելու համար պարտադիր է ունենալ սոցիոլոգիական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-տնտեսական և այլ կարգի՝ գիտահետազոտական տվյալների հենքով ստեղծված գիտելիքների այնպիսի պաշար, որով հնարավոր լինի իմանալ արտակարգ իրավիճակների ժամանակ հրշեջ-փրկարարների մեջ առաջացող հոգեկան դրսևորումների յուրահատկությունները, գնահատել նրանց ճիշտ գործելու պատրաստավածության աստիճանը և այլն:

Փրկարարի դրդապատճառային համակարգի կառավարումը իր

կողմից կամ դրսից (հատուկ հոգեբան, ղեկավար և այլն), սթրեսի որոշակի սահմաններում կարող է տալ սթրես-կարգավորող էֆեկտ: [1;68]

Մեր հետազոտության նպատակն է բացահայտել արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում հրշեջ-փրկարարների հոգեբանական պատրաստվածության և սթրեսակայունության առանձնահատկությունները:

Հետազոտական մասը մեր կողմից իրականացվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ-փրկարարական ջոկատների հրշեջ-փրկարարների հետ:

Հետազոտության իրականացման նպատակով կիրառվել են՝ դիտում, զրույց, հարցում, անկախ փարձագետների գնահատականների մեթոդ, և թեստային հետևյալ մեթոդիկաները՝

1. «Թ. Հոլմսի Սթրեսում դեզադապտացիայի ռիսկի և նյարդահոգեկան կայունության ախտորոշման մեթոդիկա»

2. «Թ. Հոլմսի և Ռահեի սթրեսականության և սոցիալական ադապտացիայի բացահայտման մեթոդիկա»

3. «Թեյլորի տագնապախռովության չափման մեթոդիկա»

Այսպես՝ ուսումնասիրվել են 20-50 տարեկան 106 հրշեջ-փրկարար (76 արական, 30 իգական), հաշվի առնելով նրանց տարիքային, մասնագիտական անձնային փորձի և այլ առանձնահատկություններ, որոնց հիման վրա կազմվել են հրշեջ-փրկարարների անհատական և խմբային հոգեբանական բնութագիրը:

Կատարված հետազոտությունների արդյունքում բացահայտվել են մի շարք օրինաչափություններ, որոնք ընդհանրապես իրենց բնույթով լույս են սփռում անձի հոգեկան աշխատունակության հիմնախնդրի հոգեֆիզոլոգիական մեխանիզմների բացահայտման գործընթացի վրա:

Այսպես՝ հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ հոգեկան աշխատունակության հիմքում ընկած են խառնվածքի ուժեղ տիպերի, դրանց նյարդային գործընթացների առանձնահատկությունների դրսևորումները (չնայած, որ ինքնին փրկարարի գործունեության բնագավառը իր բնույթով պահանջում է ուժեղ տիպեր): Մյուս կողմից՝ գործունեության ընթացքում փրկարարները զուգահեռաբար ձեռք են բերում դժվար իրավիճակներում սեփական հնարավորությունների ինքնակառավարման, մոբիլիզացիոն հնարավորությունների ակտիվացման մեծ փորձ:

Բացի այդ, փրկարարական գործունեությունը ինքնին դեռևս ամբողջությամբ ուսումնասիրված չէ, դեռևս պարզ չէ այն մեխանիզմը, թե փրկարարը իր հոգեկան ուժերի ներդրման որ՞ սահմանում է գտնվում, երբ ցուցադրում է օգտակար, արդյունավետ գործողություններ, որքան է նրա պահեստային աշխատունակության հնարավորությունը, որն է ճգնաժամային իրավիճակում նրա գործառութային հնարավորությունների սահմանը: Դեռ ավելին, հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ փրկարարների գործունեության հիմքում ընկած է դրդապատճառների արտահայտվածությունը՝ պայմանավորված նրանց ծառայության առաջնային և երկրորդային ժամանակահատվածներում գտնվելու հանգամանքով:

Դիտումները կրել են երկարամյա բնույթ, որը կարելի է անվանել նաև լոնգիթյուդային դիտում, քանի որ այն կատարվել է երկարատև ժամանակի ընթացքում, (ամիսներ և տարիներ): Այն ենթադրում է հետազոտողի և հետազոտության օբյեկտի մշտական շփում:

Հիմնականում Երիտասարդներն (20-35 տարեկաններ) առաջնորդվում են ինքնահաստատման, ղեկավարների կողմից առավել վստահության ձեռքբերման, «տարեցները» (36-50 տարեկաններ) ծառայության մեջ մնալու, դրանից դուրս չմնալու դրդապատճառով (գործազուրկ չլինելու մղումով):

Այսպիսով՝ անդրադառնալով կատարված հետազոտության թեստային մեթոդիկաներին, հանգել ենք հետևյալ արդյունքների.

**1. «Թեյլորի տագնապախռովության չափման մեթոդիկա»**

Այս մեթոդիկան բաղկացած է 50 և առանձին ևս 60 պնդումներից: նրանք կարդալով հարցերը, պետք է պատասխանեին՝ համաձայն են պնդումների հետ, թե ոչ:

Հարցապնդման վերլուծությունից պարզ դարձավ, որ հրշեջ-փրկարարներից 68%-ի մոտ բարձր տագնապախռովության մակարդակ է, 20%-ի մոտ բարձրի միտումով միջին տագնապախռովության մակարդակ, իսկ 12%-ի մոտ տագնապախռովության մակակարդակը ցածր միտումով միջին մակարդակ է:

**2. «Թ. Հոլմսի և Ռահեի սթրեսականության և սոցիալական ադապտացիայի բացահայտման մեթոդիկա»**

Այս մեթոդիկան նախատեսված է յուրաքանչյուրի ինքնուրույն գնահատականի համար, ով ցանկանում է չափել իր «սթրեսի մակար-

դակը» և «սթրեսակայունությունը», ինչպես նաև կարելի է արդյունավետ օգտագործել փսիխոսոմատիկ խնդիրներով մարդկանց հետ հոգեախտորուշում անցկացնելիս: Պահանջն էր՝ հիշել այն բոլոր իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել նրանց մոտ վերջին մեկ տարվա ընթացքում: Մեթոդիկան կազմված է 43 մտքերից և համապատասխանաբար բանալիից:

Այս մեթոդիկայի միջոցով պարզեցինք, որ հրշեջ-փրկարարներից 89%-ի մոտ սթրեսի դիմադրողականության մակարդակը բարձր է, 7%-ի մոտ սթրեսի դիմադրողականության մակարդակը ցածր է, իսկ 4%-ի մոտ սթրեսի դիմադրողականության մակարդակը սահմանային է:

**3. «Թ.Հոլմսի սթրեսում դեզադապտացիայի ռիսկի և նյարդահոգեկան կայունության ախտորոշման մեթոդիկա»**

Այս Մեթոդը բաղկացած է 84 պնդումներից, հրշեջ-փրկարարները պետք է կարդային և պատասխանեին, կախված նրանից՝ համաձայն է նա նրանց մեջ պարունակվող պնդումների հետ, թե ոչ: Թ.Հոլմսի Սթրեսում դեզադապտացիայի ռիսկի և նյարդահոգեկան կայունության ախտորոշման մեթոդիկայի կիրառման ավարտի պես, ստացել ենք հետևյալ արդյունքները:

Վերլուծությունից պարզ դարձավ, որ հրշեջ-փրկարար ծառայության աշխատակիցներից 70%-ի մոտ նյարդահոգեկան կայունությունը սթրեսի ժամանակ բարձր է, 20%-ի մոտ նյարդահոգեկան կայունությունը սթրեսի ժամանակ միջին է, և միայն 10%-ի մոտ է, որ նյարդահոգեկան կայունությունը սթրեսի ժամանակ ցածր է:

Հետազոտական վերլուծությունից պարզ երևում է, որ եթե չկա նախնական հոգեբանական պատրաստվածություն՝ սթրեսակայունության, նյարդահոգեկան կայունության, տագնապայնության հոգեկան որակների փոխկապակցությամբ, ապա դրսևորվում է կորստի, վշտի և այլ բացասական հոգեկան երևույթների առաջացման միտում: Երկրաշարժն ապրած բնակչության սոցիալ-հոգեբանական խոցելիության նվազեցման գործընթացը պայմանավորված է անձի հոգեկան որակների՝ սթրեսակայունության, նյարդահոգեկան կայունության, հոգեբանական հարմարվողականության համալիր փոխկապակցվածությամբ:

Ի վերջո, կարելի է փաստել, որ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության հրշեջ ջոկատի փրկարարները ունեն բարձր պատրաստվածության մակարդակ և ցանկացած ար-

տակարգ դեպքի մեկնման ժամանակ չի նկատվում վարքի փոփոխություն, պասիվություն, հետմղում, ճնշվածությունն, երկմտանք:

Մասնագիտական,հասարակական պարտքի, պատասխանատվության, կայուն դրդապատճառային համակարգի, քաղաքացիական, անձնային բարձր գիտակցությամբ օժտվածության մակարդակի առկայությունը առաջ է մղում անձի դրդապատճառային համակարգը, կամային ոլորտի զարգացվածության աստիճանը, արտակարգ իրավիճակներում հոգեկան կայունության ապահովման, ինչպես նաև անձի և մոբիլիզացիոն հնարավորությունների դրսևորման ունակությունը: [2;46]

Սթրեսի ազդեցությունը մարդու վրա կարելի է համեմատել ջութակի լարերը լարելու հետ. եթե լարը շատ քիչ է ձգված, ապա այն խուլ ու տհաճ ձայն կարձակի, իսկ եթե լարը չափից շատ է ձգված, ապա սուր ձայն կարձակի, կամ լարը կկտրվի: Նմանապես, եթե մեր կյանքում սթրեսը շատ քիչ է կամ ընդհանրապես բացակայում է, մեր կյանքը համ ու հոտ չի ունենա, սակայն մյուս կողմից՝ չափից շատ սթրեսը կարող է նույնիսկ մահվան պատճառ լինել: Կարևորն այն է, որ սովորենք վերահսկել այն:[3;310]

Կարելի է ասել, որ մասնագիտական կարողությունների և հմտությունների առկայության ճիշտ կիրառումը նպաստում են, որ հրշեջ-փրկարարը, որը հայտնվել է արտակարգ իրավիճակներում, կարողանա համակարգված ցուցաբերել այն բոլոր ունակությունները, որոնցով օժտված է: Ե՛վ արտակարգ, և՛ ճգնաժամային իրավիճակում հրշեջ-փրկարարների հարմարման ճկունության կառուցվածքային միավորը սոցիալ-հոգեբանական, անձնային գործոնների փոխկապվածությունն է:

## Ամփոփում

Այսպիսով՝ որքան հրշեջ-փրկարարների մասնագիտական պատրաստվածությունը և հմտությունների մակարդակը բարձր է, այնքան ցածր է տագնապայնության մակարդակը:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները մեզ թույլ են տալիս փաստել, որ հոգեբանական հարմարվողականության և սթրեսակայունության վրա սեռային և տարիքային գործոններն էական ազդեցություն չունեն:

Ստացված արդյունքները կարող են օգտագործվել իրազեկման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ տարվող աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև հրշեջ-փրկարարների հետ աշխատող անձնակազմի մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման ասպարեզներում: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել արտակարգ իրավիճակներում գործունեություն իրականացնողներին, նրանց հիմնախնդիրներն ուսումնասիրողներին:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները նպաստավոր կլինեն. «Արտակարգ իրավիճակների հոգեբանություն» դասընթացի շրջանակներում իրազեկել, կիրառել և տարածել:

*Առանցքային բառեր*՝ ճգնաժամ, սթրեսակայունություն ադապտացիա, մասնագիտական պատրաստվածություն:

### Գրականություն


1. Հովհաննիսյան Հ. Ռ. Սթրեսային իրավիճակներում գործող մասնագետի վարքային բնորոշ փոփոխությունները «Արդի հոգեբանության տեսական և կիրառական հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2005, 73 էջ
2. Столяренко А.М. Экстремальная психопедагока:Учеб.пособие для вузов.-М.:ЮНИТИ- ДАНА.2002 960с.
3. Китаев-Смык Л.А. Психология стресса.М.-Наука. 1983.368с.


## FIREFIGHTER-RESCUERS PSYCHOLOGICAL PREPARATION, PECULIARITIES OF STRESSIVENESS IN EMERGENCY AND CRISIS SITUATIONS


**Artur Velyan**
YSU, Chair of Personality Development, Master


### Summary


So, how firefighter-rescuers have professional training and skill levels, the lower is the level of distress.

The results can be used to organize the work to make the awareness

process more efficient, as well as in the training, retraining and professional development of firefighters. The results of the study can be useful for those who are dealing with emergency situations, their key issues.

Our studies will be beneficial. Informing, applying and disseminating within the framework of the Emergency Psychology course.

*Keywords* - crises, stress characteristics, adaptation, professional training.

## ПСИХОЛОГИЧЕСКИЕ И СТРЕССОУСТОЙЧИВЫЕ ОСОБЕННОСТИ ГОТОВНОСТИ ПОЖАРНЫХ СПАСАТЕЛЕЙ В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ

**Велян Артур Суренович**
ЕГУ, кафедра Развития личности, магистр

### Резюме

Итак, на сколько выше уровень профессиональной подготовки и квалификации пожарных спасателей, тем ниже уровень бедствия.

Результаты могут быть использованы для организации работы, направленной на повышение эффективности процесса информирования, а также на подготовку, переподготовку и профессиональное развитие пожарных. Результаты исследования могут быть полезны тем, кто занимается чрезвычайными ситуациями и их ключевыми проблемами.

Наши исследования будут полезны при информировании, применении и распространении в рамках курса «Экстренная психология».

*Ключевые слова:* кризис, стрессоустойчивые характеристики, адаптация, профессиональная подготовка.

# ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԸ

***Արթուր Սուրենի Վեյան***
*ԵՊՀ, Անձի զարգացման ամբիոն, մագիստրոս*

Հոդվածում քննարկվում են արտակարգ իրավիճակներում բնակչության իրազեկվածության հոգեբանական կողմը, ընդ որում՝ ինքնատիրապետումը, սառնարյունությունը, բարդ և վտանգավոր իրավիճակներում սթափ մտածելու ունակությունը:

Վերլուծելով խնդիրները, որոնք առաջանում են բնակչության շրջանում կարելի է եզրակացնել, որ հաճախ նրանք հոգեբանորեն անպատրաստ են լինում բարդ իրավիճակներում գործունեության, այդ պատճառով էլ առաջանում են խաթարումներ:

Հենց նշված խնդրի իրականացմամբ էլ թելադրված է սույն հոդվածում արծարծված հիմնախնդրի հրատապությունն ու այժմեականությունը:

Արտակարգ իրավիճակները, խոշոր վթարները և աղետները, դրանց դժբախտ հետևանքները մարդկանց մոտ առաջացնում են ուժեղ հուզական լարվածություն, պահանջում են բարձր բարոյահուզական կայունություն, դիմացկունություն և տուժածներին օգնություն ցուցաբերելու պատրաստակամություն:

Ավերածությունների ծանր տեսարանը, կյանքին անմիջական վտանգը կարող են խափանել նորմալ մտածողության գործընթացը, թուլացնել, կամ ընդհանրապես բացառել ինքնատիրապետումը, ինչը հանգեցնում է չարդարացված և անկանխատեսելի գործողությունների: Ծառայողների, ստորաբաժանումների և ոչ զինվորական կազմավորումների բարոյահոգեբանական կայունությունից է մեծապես կախված, թե ինչ որակով և ինչ ժամանակահատվածում կիրականացվեն փրկարարական աշխատանքները: Արդյո՞ք, խմբերը, ստորաբաժանումներ կազմավորելիս, բավարար ուշադրություն են հատկացվում հոգեբանական համատեղելիությանը: Նման խմբերի մեջ են ընդգրկում նրանց, ովքեր դեպքի վայրում առավել օգտակար կլինեն: Սա, թերևս կարևորագույն չափանիշն է: Սա է պատճառը, որ նման խմբերի ղեկավարները առավել հաճախ կամավորների կարիք են զգում, ովքեր առանց վարանման պատրաստ են գնալ առավել վտանգավոր կետերը: Այդպես էր

Չերնոբըլում, Արզամասում, Բաշկորտոստանում, որտեղ մարդիկ ռիսկի էին դիմում գիտակցաբար, վստահ լինելով, որ ունակ են կառավարել սեփական վարքը, և դիմակայել սթրեսային իրադրություններին: Վթարների լիկվիդացման փորձը ասում է, որ էքստրեմալ իրավիճակները մարդուն կարող են դրդել այնպիսի արարքների, որոնց նա չէր համարձակվի սովորական պայմաններում: Այսպես, Սպիտակյան երկրաշարժի ժամանակ, նախկինում ոչնչով աչքի չընկնող տարածքային աշխատակից Մուրադյանը փրկարարական աշխատանքների ընթացքում բարձր ինքնատիրապետում է ցուցաբերել: Նույնիսկ սեփական ընտանիքի մահից հետո, նա, իր շուրջ մի խումբ կամավորներ հավաքելով, շարունակում է փրկարարական աշխատանքները:

Հոգեբանորեն չկոփված մարդկանց մոտ առաջանում է վախի զգացում, ինչը փախչելու ցանկություն է առաջացնում, կամ հակառակը՝ ուղեկցվում է մկանների լարվածությամբ: Նման դեպքերում խանգարվում է նորմալ մտածելու ունակությունը: Թուլանում կամ ընդհանրապես կորում է գիտակցված վարքի և մտածողության, կամքի և հույզերի կառավարման ունակությունը: Մարդու մոտ նկատվում են մի շարք փոփոխություններ, ինչպես ֆիզիոլոգիական, այնպես է հոգեբանական, որոնք կարող են բավականին տևական բնույթ կրել՝ մի քանի ժամից, մինչև մի քանի օր: Արտակարգ իրավիճակների հետևանքների լիկվիդացման ժամանակ, էական գործոններ են իրադարձության անսպասելիությունը, հնարավոր հետևանքների կամ տևողության կանխատեսումների անկարողությունը:

Նման դեպքերում փորձի բացակայությունը, վարքի կանոնների չիմացությունը, թույլ բարոյահոգեբանական պատրաստվածությունը կարող են բերել նման հետևանքների: [1;64]

Մշակված են մի շարք միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան խուսափել արտակարգ իրավիճակներում մարդկանց նման վիճակից:

Նախևառաջ հարկ է հիշել, որ ծանր հոգեբանական կորուստ ապրած մարդը ավելի արագ է վերականգնում հոգեկան հավասարակշռությունը, երբ ստիպված է լինում ֆիզիկական աշխատանք կատարել, և ոչ թե մենակ, այլ որևէ խմբի կազմում:

Երկրորդը, որպեսզի թուլացվի մարդու վրա բացասական ներգործությունը, անհրաժեշտ է մշտապես նախապատրաստական աշ-

խատանքներ տանել՝ արտակարգ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու համար, ձևավորել հոգեբանական կայունություն, կամքի ուժ դաստիարակել: Սա է պատճառը, որ հոգեբանական պատրաստակամության հիմնական բովանդակությունը անհրաժեշտ հոգեբանական որակների մշակումն ու ամրապնդումն է: Այստեղ էականը՝ ուսումնական գործընթացը առավելագույնս իրականին մոտեցնելն է դառնում: Հատկապես կարևոր է դաստիարակել ինքնատիրապետում, սառնարյունություն և բարդ և վտանգավոր իրավիճակներում սթափ մտածելու ունակություն: Միայն խոսքային մակարդակում նման հատկությունների ձևավորումը և մշակումը հնարավոր չէ: Միայն փորձը կարող է բերել ցանկալի արդյունքների՝ հուզակամային փորձին և հոգեբանական կայունությանը: Սա է պատճառը, որ բնակչության և հատուկ ստորաբաժանումների հետ համապատասխան վարժանքների անցկացման ժամանակ կարևոր է ոչ միայն անհրաժեշտ գործողությունների խոսքային նկարագրությունը՝ սահմանափակվելով կինո և վիդեո ֆիլմերի ցուցադրմամբ, այլ նաև ամրապնդումը՝ փրկարարական աշխատանքների գործնական օրինակներով:

Նման միջոցառումները պետք է տարբերակված կազմակերպվեն՝ հաշվի առնելով յուրաքանչյուր ստորաբաժանման նշանակությունը և այն իրավիճակը, որի հետ կարող է բախվել յուրաքանչյուր առանձին կոլեկտիվ: Այս ամենը պետք է արվի ուսումնական վարժանքների ժամանակ: Արտակարգ իրավիճակների հետևանքների լիկվիդացման փորձը այն բնագավառներում, որտեղ կենտրոնացված են հասարակության նյութական, հոգևոր և ինտելեկտուալ ռեսուրսները, պետք է լայնորեն կիրառվի բնակչության՝ արտակարգ իրավիճակներում գործողություններին նախապատրաստման փուլում: Պետք է հիշել, որ մարդկանց հոգեբանական օտարվածությսւն մակարդակը առավել կարևոր գործոններից մեկն է: Վախի նվազագույն դրսևորումը, հատկապես վթարի կամ աղետի ամենասկզբից, կարող են հանգեցնել անուղղելի հետևանքների: Նախ և առաջ սա վերաբերում է պաշտոնյա մարդկանց, ովքեր պարտավոր են անմիջապես գիտակցված որոշումներ կայացնել, քանի որ իրենց վրա դրված է ողջ կոլեկտիվի պատասխանատվությունը: [2;96]

Նման դեպքերում սկսում է գերակայել տագնապը, որը շղթայաձև փոխանցվելով՝ վեր է ածվում անկառավարելի գործընթացի: Մարդը,

նման դեպքերում, տեղի ունեցողը ավելի հուզական է ընկալում, նվազում է սեփական գործողությունների նկատմամբ պատասխանատվությունը, մարդը դադարում է գիտակցաբար գնահատել սեփական վարքը և ադեկվատ հակազդել ստեղծված իրադրությանը: Տագնապի առաջացմանը նպաստում է ճիշտ ժամանակին անհրաժեշտ ինֆորմացիայի բացակայությունը: Սա շատ կարևոր հանգամանք է, քանի որ ինֆորմացիայի բացակայության արդյունքում, մարդկանց մեջ սկսում է թյուր տեղեկատվություն շրջանառել, ինչը բերում է իրականությանը ոչ համապատասխան գործողությունների ձեռնարկմանը: Ինչպես ցույց է տալիս արտակարգ իրավիճակների արդյունքների լիկվիդացիայի փորձը, զոհերի քանակը մեծապես կախված է տեղեկատվության պակասից, ինչպես նաև նման իրավիճակներում գործողությունների ցածր պատրաստվածությունից:

Ժամանակակից պայմանները, որոնցում աշխատում են մի շարք մասնագիտությունների ներկայացուցիչներ, մասնավորապես՝ պաշտպանության նախարարության, արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակիցներ, վարորդներ, ատոմակայանների օպերատորներ և այլն, կարելի է անվանել յուրահատուկ, իսկ որոշ դեպքերում նաև էքստրեմալ:

Այն դեպքերում, երբ այդ իրավիճակը ուղեկցվում է նաև կյանքի համար իրական վտանգով, անվանում են էքստրեմալ:

Վերլուծելով խնդիրները, որոնք առաջանում են վերոհիշյալ մասնագիտությունների ներկայացուցիչների աշխատանքում, կարելի է եզրակացնել, որ հաճախ նրանք հոգեբանորեն անպատրաստ են լինում բարդ իրավիճակներում գործունեության, այդ պատճառով էլ առաջանում են խաթարումներ:

Հոգեբանական պատրաստվածության ժամանակակից գիտականորեն հիմնավորված մեթոդների և մեթոդիկաների կիրառությունը շատ կարևոր հանգամանք է, որը նպաստում է նշված պայմաններում հոգեբանական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը: Ընդ որում, կարևոր է այն հանգամանքը, որ այսպիսի մշակումները ոչ թե մեծապես գիտական են, այլ ավելի շատ գործնական: [3;121]

Հոգեծին բնույթ կրող գործունեությունը հատուկ պայմաններում բերում է անձի օրգանիզմում հոգեֆիզիոլոգիական փոփոխությունների: Սա կապված է նրա հետ, որ տվյալ աշխատանքը պահանջում է

մեծ հոգեհուզական գործադրումներ: Այս կապակցությամբ ոչ այնքան զարգացած մասնագետի մոտ, էքստրեմալ պայմաններում, տևական նյարդահուզական լարվածության պայմաններում առաջանում է հոգեֆիզիոլոգիական բլոկ, որը արգելակում է գլխուղեղի կեղևի արագություն (վերջինս պատասխանատու է մասնագիտական գործունեության իրականացման համար): Առաջանում է ստուպոր: Այսպիսով օրգանիզմը թույլ չի տալիս դուրս գալ գործունեության դիստրեսային ռեժիմի, որը կապված է ներքին ռեսուրսների ներգրավվման հետ: Մարդու նման վարքը պայմանավորված է նրանով, որ առօրյա կյանքում էքստրեմալ պայմաններ չկան և, հետևաբար, չկա նաև դրանց հոգեբանական հարմարման գործընթացը: Աա է պատճառը, որ մարդը պատրաստ չէ լարվածության նման մակարդակին:

Հոգեբանական պատրաստվածությունը գործունեության հատուկ և էքստրեմալ ձևերին՝ դա անձի վրա նպատակաուղղված ներգործությունն է հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական մեթոդների օգնությամբ, որն ուղղված է նման իրադրություններում ադեկվատ գործողությունների ձևավորմանը:

Հոգեբանական պատրաստվածություն ասելով նկատի ունենք սուբյեկտի հոգեբանական և հոգեֆիզիոլոգիական բնութագրերը, որոնք ապահովում են որոշակի գործողությունների և գործունեության հաջողությունը և արդյունավետությունը:

Հոգեֆիզիոլոգիայի տեսանկյունից այս գործընթացը կարելի է դիտարկել որպես օրգանիզմի մի շարք ուղեղային համակարգերի նախապատրաստություն, որոնք (համակարգերը) ներգրավված կլինեն այս կամ այն օպերացիայում: Հոգեբանական տեսնակյունից՝ նշված մեթոդների և մեթոդիկաների միջոցով համապատասխան ֆիզիոլոգիական օրգանների և նոր ֆունկցիոնալ համակարգերի ձևավորում է: Այս առանձին գործողությունները, որոնց շարքում են նաև զուտ մնեմոնիկ գործողությունները (պատկերավոր, մտածողական) հնարավորություն են տալիս միանալ որոշակի գործունեության և զբաղվել դրանով:

Մտավոր վարժությունները արժեքավոր են նաև այն տեսանկյունից, որ մատչելի են ոչ միայն անհատական մակարդակում, այլ նաև խմբային վարժանքների ժամանակ՝ մասնագետի ղեկավարությամբ: [4;73]

Իդեոմոտոր վարժանքները նպաստում են մարդու ողջ հոգեֆիզիոլոգիական ապարատի նյարդային կառույցների և անատոմիական սուբստրատների օպտիմիզացիային, որոնք պատասխանատում են նպատակաուղղված հմտությունների իրականացման համար, որոնք վերարտադրվում են արտակարգ իրավիճակներում:

Առանձնահատուկ նշանակություն ունի այն, որ այս վարժանքների ժամանակ անձը կենտրոնանում է գործողության ճիշտ իրագործման վրա: Մտավոր վարժեցման ընթացքում, սիստեմատիկ իդեոմոտոր վարժությունների արդյունքում աստիճանաբար ձևավորվում է օպտիմալ հոգեբանական վիճակ, քանի որ չափազանց հուզականությունը կարող է բերել կատարվող գործողությունների սխալներին: Նման վարժություններից հետո հոգեհուզական գործոնների ազդեցության աստիճանը էապես նվազում է: [5;26]

Բացի այդ, իդեոմոտոր վարժությունները լավ հիմք են տալիս աուտոգեն մարզման համար, որը ավելի բարդ գործընթաց է և որոշակի ժամանակ է պահանջում: Այն կարելի է նաև կիրառել որպես ուժեղ հոգեկանխարգելիչ մեթոդ:

Իդեոմոտոր մարզումը, կամ մտավոր պարապմունքը ամբողջական մեթոդ է, որը կարելի է կիրառել առանձին կամ համալիր, արտակարգ իրավիճակներում բնակչության պատրաստվածության հոգեբանական կողմը ապահովելու համար: Դրա կիրառությունը նյութական ծախսեր չի պահանջում, այն բավականին հեշտ է կիրառել, և այն բոլորովին նոր մակարդակի վրա է հանում էքստրեմալ պայմաններում գործունեության հոգեբանական պատրաստվածությունը:

## Ամփոփում

Այսպիսով՝ հոգեբանորեն չկոփված մարդկանց մոտ առաջանում է վախի զգացում, ինչը փախչելու ցանկություն է առաջացնում, կամ հակառակը՝ ուղեկցվում է մկանների լարվածությամբ: Նման դեպքերում խանգարվում է նորմալ մտածելու ունակությունը:

Հոգեբանական պատրաստվածության ժամանակակից գիտականորեն հիմնավորված մեթոդների և մեթոդիկաների կիրառումը շատ կարևոր հանգամանք է, որը նպաստում է նշված պայմաններում հոգեբանական պատրաստվածության մակարդակի բարձրացմանը: Ընդ

որում, կարևոր է նկատել այն հանգամանքը, որ նմանատիպ մշակումները ոչ այնքան գիտական են, որքան գործնական:

*Առանցքային բառեր*՝ Իդեոմոտոր վարժանքները, դիսթրեսային ռեժիմ, հուզական լարվածություն, դիմացկունություն, ինքնատիրապետման ձևավորում:

## Գրականություն


1. Анофриков В.Е., Бобок С.А., Дудко М.Н., Елистраток Г.Д. Безопасность жизнедеятельности // Учебное пособие. - М.: Финстатинформ, 1999. 92 стр.
2. Анохин П. К. Очерки по физиологии функциональных систем.– М.: Медицина, 1975.. 112 стр
3. Березин Ф. Б. Психологическая и психофизиологическая адаптация человека. Л., 1988..251 стр
4. Смирнов Б. А., Долгополова Е. В. Психология деятельности в экстремальных ситуациях. –Х.: Гуманитарный центр, 2007. 138 стр.
5. Мухина В.С. Психологическая помощь пострадавшим от землетрясения в Армянской ССР// Психологический журнал.-1989.- N5. 54. С.


## SYCHOLOGICAL SIDE OF POPULATION AWARENESS IN EMERGENCY SITUATIONS


**Artur Velyan**
YSU, Chair of Personality Development, Master


### Summary


Thus, people who are psychologically unaware are experiencing a feeling of fear that causes a wish to flee, or vice versa, it is accompanied by muscle tension. In such cases, the ability to think normally is disturbed.

The use of modern scientifically-based methods and methodology of psychological preparation is a very important factor that contributes to

raising the level of psychological preparation in these conditions. Furthermore, it is important to notice that such developments are not so scientific as practical.

*Keywords:* ideomotor excercises, distress mode, emotional pressure, endurance, formation of self-control.

## В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ ПСИХОЛОГИЧЕСКАЯ СТОРОНА ОБЕСПЕЧЕНИЯ ОСВЕДОМЛЕННОСТИ НАСЕЛЕНИЯ

**Велян Артур Суренович**
ЕГУ, кафедра развития личности, Магистр

### Резюме

Таким образом у психологически не закаленных людей возникает чувство страха, что создает желание убежать или, наоборот, сопровождается напряжением мышц. В таких случаях нарушается способность нормально мыслить.

Применение современных научно обоснованных методов и методологий психологической готовности является очень важным фактором, которое способствует повышению психологической готовности в вышеуказанных условиях. В то же время, важно отметить, что такие разработки являются не столь научными, а сколько практичними.

*Ключевые слова.* идеомоторные упражнения, режим дистресса, эмоциональное напряжение, выносливость, формирование самообладания.

# ЗНАЧЕНИЕ АРМЯНСКОЙ АЭС И ИНВЕСТИЦИОННЫЕ ВОЗМОЖНОСТИ ДЛЯ ВОЗВЕДЕНИЯ НОВОГО БЛОКА АЭС

***Карян Ара Владимирович***
*канд.экон. наук, доцент*
*ЕРОА, кафедра Экономики и управления*
***Ананян Сурен Арамович***
*ЕРОА, кафедра Экономики и управления, соискатель*

С момента создания РА и по сей день главными посылами повестки дня остаются безопасность и особенно энергобезопасность страны. В этом контескте Армянская АЭС (ААЭС) играет крайне важную роль для энергобезопасности, и в целом для устойчивого развития экономики страны, может обеспечивать по доступным тарифам порядка от 40 до 50% потребностей Армении в электроэнергии, правда в последние годы удельный вес его падает. Между тем, при оценке атомной энергетики РА следует исходить и учитывать не только факторы экономики и энергобезопасности, но и другие очень важные векторы развития, которые либо базируются на атомной энергетике, либо являются его производными. Это такие составляющие как – политическая, научно-техничекая, инновационная, развития человеческого капитала, построения действенной системы «образование - наука – производство», а также философско-мировозренческая составляющие развития общества.

И так, политическая составляющая, наличие АЭС позволяет республике быть участником саммита по ядерной безопасности. С 2010 г. президент Армении раз в два года принимал участие в мировом саммите по ядерной безопасности, что говорит об особом статусе РА. Последний такой саммит состоялся с 30 марта по 1 апреля 2016 г. в Вашингтоне. В работе саммита участвовали главы государств и правительств 52 стран. Это особая политическая площадка, лидирующих в мире стран, с проекцией по вопросам безопасности, военных и ядерных технологий. Само участие РА на этом саммите указывает на уникальный статус страны. Другой подобной возможности, где РА может встать в один ряд с лидирующими державами мира не возможно представить. В итоговом коммюнике этой многосторонней встречи на высшем уровне 2016 года, го-

вориться, что этот саммит стал последним в череде этих совещаний, одновременно, намечено создание специальной контактной группы, которая будет координировать дальнейшие совместные усилия и следить за реализацией общих планов в данной области[1].

ААЭС это не просто единица инфрасруктуры энергетики страны, станция позволяет Армении активно развивать инновационные технологии, привлекая в этих целях передовые мировые научно-технические разработки в сфере атомной энергетики. На мировом уровне атомная энергетика эксплуатируется в нуждах обеспечения электроэнергии 63 года, первая атомная станция была построена в Обнинске в 1954 г. в СССР, а спустя 22 года был возведен первый блок Армянской АЭС. Это простая констатация фактов указывает на то, что в этой области Армения, если не изначально, то с первых шагов присутствовала на передовой научно-технического прогресса. Эксперты утверждают, что с 2030 годов в мире ожидаетя появление новых суперсовременных ядерных реакторов, и Армения не должна оставаться в стороне от этих процессов, этот рубеж инновационных технологий необходимо сохранить.

ААЭС является системообразующей основой всего энергетического кластера страны, основанная на передовых научно-технических разработках. Продление срока эксплуатации блока N2 ААЭС и тем более строительство нового АЭС подразумевает привлечение и эксплуатацию новейших технологий, наличие и подготовку в будущем высококвалифицированных специалистов. Таким образом, выстраивается органическая платформа для развития человеческого капитала, которая подразумевает наличие действенной цепи «образования - науки и производства».

Станция важна с точки зрения обеспечения национальной безопасности страны в широком смысле. Надо понимать, что атомная энергетика генерирует новую философию и новое мировоззрение, которая имеет не только пассивное отражение, но и активное воздействие на все сферы деятельности общества. Специалисты и эксперты утверждают о появлении и развитии абсолютно новых трендов в

[1] The 2016 Washington Summit: Time to Open the Next Chapter in Nuclear Security, http://www.cfr.org/councilofcouncils/global_memos/p37574

ядерной энергетике, к примеру, безотходное или вторичное, и можно сказать экологическо-безвредное использование урана, и далее, использование для траснформации ядерной энергии в электрическую принципиально новых технологий без турбогенераторов и воды (напрямую), что многократно повысит к. п. д. трансформации энергии. Другое важное направление это эксплуатация установок на низкоэнергопороговых ядерных реакциях (НЭЯР), которые по конкурентоспособности могут вытеснить существующие АЭС. Например, установка никель-водородного генератора тепловой энергии, обладает плотностью энерговыделения выше, чем в ядерном реакторе, но при этом не производит нейтронного и радиационного излучения и радиоактивных отходов. Одновременно такая установка проста, дешева и масштабируема. Низкоэнергопороговые ядерные реакции (НЭЯР) образуют новый промежуточный класс реакций, который специалисты не склонны относить ни к химическим, ни к известным ядерным реакциям[2]. Этот класс реакций требует теоретических, фундаментальных и экспериментальных исследований. Пока с определенной условностью, на постановочном уровне, имея ввиду научные традиции Армении в области физики и в целом естественных наук, такое направление можно рассмотреть также как перспектвное направление научно-прикладных исследований в Армении. Данная постановка может стать предметом обсуждения Академии наук РА и госкомнауки с вынеснием особой резолюции для правительства.

Наличие атомной станции позволяет сдерживать рост тарифов на электроэнергию с стране. Стоимость электроэнргии АЭС составляет от 5 до 7,5 драмов за 1 кВт. ч., что является одним из самых низких в сравнении с электроэнергией с других объектов генерации. Правда, после модернизации ААЭС себестоимость электроэнергии с ААЭС повыситься на 2,5 драма, но и в этом случае он будет одним из самых низких. К примеру, Воротанский каскад ГЭС продает электроэнергию по цене в 8 драмов за 1 кВт.ч, Севан-Разданский каскад - 5 драмов, а другие объекты генерации намного дороже. К примеру, построенный на Ереванской ТЭС новый блок с парогенераторной установкой про-

[2] Александр Просвирнов, Какая ядерная энергетика нужна России, чтобы сделать всех, https://regnum.ru/news/innovatio/2196128.html

дает электроэнергию по цене в 36 драмов, а на Разданской ТЭС – 40 и более драмов. Малые ГЭС производят электроэнергию по цене от 16 – 25 драмов и более. То есть, очевидна роль и значение ААЭС для социально-экономического развития Армении, которая является сдерживающим фактором в ценообразовании в сфере энергетики.

Данный вопрос требует обратиться к периодически озвучиваемым мнениям о том, что в целях безопасности необходимо закрыть АЭС и акцент сделать на развитие альтернативной энергетики. Согласно имеющимся расчетам, атомная энергетика Армении может обеспечить 50% всей потребности страны в электроэнергетики. С учетом ее относительной дешевизны и экологической безопасности, данные обстоятельства играют очень важное значение. Возобновляемая энергетика не может быть среьезной альтернативой ядерной энергетике, по многим причинам, это сезонная, суточная и погодная нестабильность и низкая к. п. д. этих установок. К примеру, малая плотность энергетических потоков (солнечное излучение – менее 1 кВт на 1 м2, ветер при скорости 10 м/с и поток воды при скорости 1 м/с – около 500 Вт на 1 м2). Кроме того для работы станций возобновляемой энергии требуются значительные затраты на создание приемников, преобразователей, аккумуляторов, регуляторов и т. п.. Но все же высокие капитальные затраты компенсируются низкими эксплуатационными издержками.

Базисные мощности Армянской АЭС позволяют строить планы по развитию экономики на далекую перспективу. Для того, чтобы не быть голословным, укажем на то, что на 1 кг урана 235 можно производить электроэнергию, которую можно выработать на тепловых станциях с использованием 100 тонн высококачественного угля или 60 тонн нефти. И это при том, что в отличие от угля и мазута, уран может быть использован вторично. Полагаю, этого примера достаточно для того, чтобы опровергнуть бытующие иллюзии относительно альтернативной энергетики. Аргумнеты оппонентов атомных станций, эта тревога по поводу катастрофы на Фукусиме и в Чернобыле. За 63 года эксплуатации атомных станций, в мире произошли три наиболее крупные катастрофы – на Три Майл Айленд в США, на Чернобыльской АЭС в СССР и на Фукусиме в Японии, причины генерации, а

также последствия которых были совершенно разные. Специалисты неоднозначно оценивают их в плане много или мало это, тем не менее и на экспертном уровне и на уровне политики принятия решений, большинство склонно к однозначному развитию ядерной энергетики. Сегодня в мире эксплуатируется 449 ядерных энергоблоков, а к 2030 году количество их возрастет до 600 энергоблоков, с учетом также требующих консервации энергоблоков первого поколения. Все это говорит о том, что мир не отказывается от атомной энергетики, а наоборот намерен развивать его. Любопытная деталь, несмотря на аварию на Фукусиме правительство Японии рассматривает возможность развития своей ядерной программы. Была несколько жесткая и настороженная реакция правительства Германии, но и они начали пересматривать свою позицию. В соседней с ФРГ Францией идет совершенно обратный тренд. И не случайно, что Иран, Турция, Беларусь, Польша, Индонезия, Индия, Марокко, ряд стран Латинской Америки также намерены развивать свою ядерную энергетику, которая находит поддержку не только своих правительств, но и народов. К примеру, жители Швейцарии на референдуме высказались против немедленной консервации ядерной энергетики[3]. Исследование польского института международных отношений (PISM) в августе 2014 г. продемонстрировало общественную поддержку в пользу строительства первой атомной электростанции страны, за проект были 64% опрошенных. В качестве основания для их поддержки 57% опрошенных назвали увеличение потенциала страны для обеспечения большей энергетической независимости[4]. Все это говорит о том, что Армения не должна отставать от этих процессов, имея в виду не только продление срока эксплуатации блока N2 ААЭС, но и строительство нового ядерного энергоблока. Вопрос безопасности подразумевает непрерывное обучение и повышение квалификации персонала АЭС, и вопросы безопасности требуют выделения дополнительных ресурсов.

[3] На референдуме граждане Швейцарии отвергли инициативу об ускоренном закрытии АЭС, Seogan, https://www.seogan.ru/na-referendume-grazhdane-shveiycarii-otvergli-iniciativu-ob-uskorennom-zakritii-aes.html

[4] Nuclear Power in Poland, http://www.world-nuclear.org/information-library/country-profiles/countries-o-s/poland.aspx

После аварии на японской АЭС «Фукусима» на атомных электростанциях по всему миру проводятся «стресс-тесты» и поставлены гораздо более строгие требования безопасности и соответственно увеличены объемы ресурсов выделяемых для обеспечения задач безопасности. «Росатом» сегодня проектирует атомные станции способные выдержать землетрясение до девяти баллов, цунами до 15-ти метров высотой, падение тяжелого транспортного самолета на купол реактора, при самых непредвиденных случаях недопущение выхода радиоактивных веществ в грунт и в воду, а действующие станции дооснащает эффективными системами безопасности[5].

Следует указать, что с учетом развития указанных трендов ядерная энергетика в будушем сама может перейти в разряд экологически безвредных систем производства электроэнергии. Атомная энергетика – это безопасная безуглеродная энергетика, которая поможет и в решении проблемы потепления климата.

Эксплуатация и строительство АЭС в Армении уже базируется на менталитете с культурой безопасности, которую и далее следует воспитывать из поколения в поколение, таков тренд развития мировой цивилизации.

Между тем главный и определяющий вопрос возведения нового блока это инвестиционная составляющая. С этим непосредственно соприкасается также вопрос технической составляющей. Еще несколько лет назад речь шла о возведении блока в 1060 мегаватт, и по ходу обсуждения специалисты склонились к строительству блока средней мощности до 600 мегаватт. Несмотря на различные инженерно-технические альтернативы построения новой станции, проект этот довольно дорогой, потребуется привлечь порядка $5,5 млрд. Но в любом случае, следует отметить о том, что российский вектор при выборе партнеров и мощности нового блока будет определяющим, поскольку в лице ГК «Росатом» Армения имеет испытанного и надежного партнера.

И так, главный вопрос реализации проекта новой армянской станции возможность инвестиций. Следует указать, что еще несколько

---

[5] «Атомные станции сегодня способны выдержать падение самолета на купол реактора» «Газета.Ru» 14.06.2017, https://www.gazeta.ru/business/2017/06/13/10719941.shtml

лет назад Россия заявила о возможности своего участия в проекте в объеме 20%, позже эта цифра возросла до 40%. Глава французского государства Франсуа Олланд, в рамках своего государственного визита в Армению, заявлял о готовности французских компаний принять участие в строительстве в РА новой атомной станции. Вопрос в том, что при правильном построении интересов в реализацию данной программы можно вовлечь заинтересованных инвесторов. С учетом строительства ЛЭП Иран – Армения - Грузия – Россия целесообразно вовлечь в проект грузинскую и иранскую стороны, для стабильного роста экономики которых востребованность электроэнергии очевидна.

Вопрос формирования консорциума для реализации проекта и инвестиций сводится к матрице инвестиционного проекта. Какой интерес может быть у инвесторов для участия в проекте? В международной практике такие концепции и подходы известны и успешно реализуются. В основе их возможность покупки электроэнергии по льготным ценовым условиям, в определенных обьемах и на определенный период. Такая схема рассматривается и при строительстве АЭС «Акую» в Турции, которая строится при содействии «Росатома». В мировой практике можно указать на очевидно успешную финскую модель «Mankala»[6], формула которой можно назвать «кооперация с нулевой прибылью в интересах акционеров», которая подразуемавает, что акционеры вправе покупать электроэнергию по себестоимости, они несут ответственность за обслуживанаие долга, т. е. между акционерами распределены риски, оговорены принципы репатриации капитала и текущих расходов.

В целом схемы сооружения АЭС подразумевают заключение следующих основных видов контракта:

1) Контракт «под ключ» (Turnkey contract). В этом случае организация-подрядчик берет на себя ответственность за реализацию всех этапов проекта, с начала проектирования до окончания сооружения. Данный подход максимально уменьшает риски и количество взаимо-

---

[6] Mankala energy production model under threat? http://www.internationallawoffice.com/Newsletters/Energy-Natural-Resources/Finland/Krogerus-Attorneys-Ltd/Mankala-energy-production-model-under-threat#

отношений между участниками проекта, и рекомендован МАГАТЭ для возведения новых энергоблоков АЭС,

2) Контракт раздельных поставок (Split package contract). В этой схеме обязательства по проектированию и сооружению АЭС разделены среди относительно небольшого числа подрядчиков, и каждый подрядчик несет ответственность за значительный объем работ,

3) Контракт раздельных поставок распределенный по компонентам (Multiple package contract). По данной схеме заказчик/владелец будущей АЭС берет на себя всю ответственность за управление проектом – от проектирования до окончания сооружения, с помощью компании проектанта и/или консультантов.

Во всех указанных типовых контрактах заказчику/собственнику АЭС поставляется готовая атомная электростанция со вводом в эксплуатацию, включая тесты приемки.

Контракт раздельных поставок распределенный по компонентам, как правило, используется для внутринациональных проектов сооружения АЭС, в которых, генерирующая компания имеет долговременное сотрудничество с проектантами и производителями АЭС и сама определяет круг своих поставщиков, оценивает их предложения и управляет сооружением АЭС. Такой тип более приемлем для стран с развитой индустрией атомной энергетики, такие как РФ, Франция США и др..

Для РА может быть приемлема схема контракта «под ключ» или схема генерального подряда. В международной практике при такой схеме используется вариант генерального подряда («EPC» Engineering, Procurement, Construction). Контракт включает этапы инжиниринга, поставки оборудования и услуг, строительно-монтажные работ, включая сдачу АЭС в коммерческую эксплуатацию. Традиционная модель «EPC-контракта» с фиксированной ценой требует от владельца АЭС минимального контроля за поставками, включая также выбор субподрядчиков. Помимо подхода «EPC-контракт» существует также контракт по нефиксированной цене, который подразумевает существенный объем работ от владельцев АЭС и их поставщиков. Другой подход применяемый владельцами АЭС с целью получения информации о рынке и целевой цене, а также для соответствующего

распределения рисков и затрат, является схема открытого ценообразования. При этой схеме собственник АЭС имеет возможность работать с инжиниринговыми компаниями для обеспечения прозрачности каждой из основных статей затрат, включая непредвиденные расходы и прогнозы увеличения стоимости. Важная особенность такого подхода в том, что собственник АЭС и инжиниринговая компания имеют возможность договориться об установлении зависимости между оплатой субподрядчиков от рисков сбоя технологии (оборудования), а также превышения сметы затрат.

В указанных традиционных контрактах предметом контракта является поставка оборудования и услуг по проектированию, сооружению и пуску в эксплуатацию АЭС. Следует учетсь, что в международной практике используются новые типы контрактов, в которых предметом контракта является также электроэнергия, которая будет производиться на строящейся АЭС и продаваться в течение определенного периода времени в будущем по фиксированной цене или по согласованному алгоритму ценообразования.

Возвращаясь к источникам инвестиций для финансировании проектов сооружения АЭС, следует указать, что в международной практике основными источниками инвестиций сооружения АЭС являются: а) государственные ассигнования и гарантии (госфинансирование из бюджета, финансирование под гарантии бюджета страны заказчика или подрядчика); б) собственные средства энергетической компании; г) акционерный и заемный капитал. В связи со значительным объемом обязательств и рисков исторически крупномасштабные проекты АЭС, в основном, финансировались, за счет государственных источников и гарантий. На современном этапе государственные ассигнования не превалируют, как правило, они направляются на стимулирование затратного начального этапа развития проекта.

С учетом большой капиталоемкости проектов АЭС (включая строительство, утилизация отходов) в настоящее время, как правило, наиболее часто применяются комбинированные схемы финансирования с привлечением различных источников. К примеру, механизм взаимодействия государства и бизнеса базируется на частно-государственном партнерстве, используя одновременно государственное фи-

нансирование и средства частных коммерческих инвесторов. В настоящее время в международной практике для финансирования проектов АЭС значительное место отводится акционерному капиталу. Наблюдается также тренд все большего использования заемного финансирования, источниками которого являются средства: а) агентств по экспортным кредитам, б) многосторонних международных организаций по развитию, г) международных коммерческих займов, д) облигаций. Таким образом, современные проекты АЭС базируются на комбинированном финансировании, включая акционерный капитал и корпоративный долг, и одновременно включение на различных важных этапах государственного финансирования.

Для инвестиционной привлекательности проекта в принципе необходимо наличие двух важных условий: а) низко привлекательная стоимость квт-часа электроэнергии по сравнению с другими альтернативными способами генерации электроэнергии, б) достаточная потребность в электроэнергии на рынке потребления, где намечается реализовать ее.

В международной практике для повышения эффективности и конкурентоспособности проектов возведения АЭС используются механизмы: а) гарантии правительства по компенсациям генерирующей компании для покупки электроэнергии по заранее оговоренной цене, включая падение рыночных цен на электроэнергию, б) соглашения о гарантированных обьемах покупки электроэнергии, в) льготное кредитование и субсидирование кредитов, г) налоговые льготы на производство и инвестиции д) различные виды страхования рисков, включая страхование экпортных кредитов, рисков задержек строительства по вине государственных надзорных органов, е) включение проекта в программу льгот по сокращению экологически опасных выбросов (такие льготы применяются к проектам ветряной энергетики), е) ускоренная амортизация и др..

В рамках частно - государственного партнерства в международной практике разработаны ряд схем проектного финансирования[7]. Особенности этих схем заключаются в функциональных составляющих

---

[7] Иванов Т. В., Черняховская Ю. В., Методология финансирования как составляющая успешной реализации проектов сооружения АЭС, http://ispu.ru/files/80-85.pdf

проекта и различиях по уровню принимаемого риска. К числу таких схем относятся:

- Сооружение – Владение – (Эксплуатация и Техническое обслуживание) – (Передача) или Build–Own–Operate & Maintain – (Transfer) (BOOM),
- Сооружение – Владение – Передача или Build–Own–Transfer (BOT),
- Сооружение – (Эксплуатация) – (Лизинг) –Передача или (Build–(Operate)–(Lease)–Transfer (BOLT/BLT/BOL),
- Проектирование – Сооружение - (Финансирование)–Эксплуатация или Design–Build–(Finance)–Operate (DBFO/DBO):
- Модернизация – Владение – Эксплуатация или Modernize–Own–Operate (MOO).

Распространенными являются первые две схемы, которые широко используют возможности частных инвестиций. Посредством этих схем собирается инвестиционный фонд, создается проект, а затем эксплуатируется станция за тот период, когда можно возместить вложенные средства и выйти на прибыль. Собственником станции может стать конечный покупатель станции АЭС, или покупатель электроэнергии этой станции, или контрагент по толлинговым операциям, когда посредническая фирма заключает с предприятием толлинговый договор. Согласно толлинговому договору посредниг финансирует закупку и переработку сырья (урана), оплачивает работу предприятия и является собственником электроэнергии выработанного из этого сырья.

Конечный покупатель и инвесторы -заказчики заключают договор о намерениях о приобретении сооружаемого объекта или соглашение о гарантированных покупках электроэнергии. Схема дает определенные преимущества конечному покупателю, это: 1) капиталоемкий проект получает реальную возможность реализации, 2) при сооружении АЭС не происходит замораживания финансовых ресурсов на длительный срок, 3) в проектной компании концентрируются компетенции для реализации и управления проектом сооружения АЭС, функции по управлению проектом для конечного покупателя выводятся на аутсорсинг, 4) риски, возникающие в отношениях с исполнителями конкретных работ, берет на себя проектная компания.

Схема проектного финансирования имеет определенные недостатки: 1) высокая сложность схемы проекта, 2) длительность сроков по организации схемы проекта, 3) увеличение стоимости проекта за счет транзакционных издержек и стоимости финансирования, 4) неоднозначные или противоречивые позиции связанные с распределением рисков.

При реализации международного проекта к выше представленной схеме добавляются новые участники и функциональные составляющие, это - иностранные инвесторы, и страховщик по страхованию инвестиционных рисков, включая политические риски.

В проектах частно-государственного партнерства, как правило, государство и частный капитал создают целевую совместную компанию, задача которой реализация проекта. Государство являясь совладельцем компании является гарантом последней инстанции тем самым совместная компания способна гарантировать снижение многих рисков. Принципиально возможно создание двух типов целевой компании и соответствующей организации финансирования: а) балансовое финансирование с полным регрессом, б) безрегрессное проектное финансирование.

Первый тип предполагает финансирование с полным регрессом, отличительные черты которого: а) создается кредитоспособная компания или пул игроков энергетического рынка, которая полностью отвечает по всем обязательствам в отношении платежей по обслуживанию долга, б) кредиторы исходят исключительно из кредитоспособности этой компании и условия предоставляемого финансирования в т. ч. цена кредитования, соответствуют ее кредитоспособности.

При реализации данного типа финансирования участник проекта в полном объеме несет следующие риски: а) увеличение расходов, б) недостаточная выручка, г) возможные изменения в законодательстве, д) изменения в прочих обстоятельствах проекта.

При реализации проекта по второму типу - безрегрессного проектного финансирования, предполагается создание специальной компании без кредитной истории. Данная компания осуществляет разработку проекта, строительство и управление объектом и выступает в качестве заемщика. Кредиторы в данном случае в основном акценти-

руют внимание на выручке проекта как источнике выплат займа, а обеспечением является ограниченный список активов. Преимуществами такого финансирования являются:

- ✓ автоматическое улучшение кредитного рейтинга участника проекта и одновременно защита других активов от дефолта,
- ✓ распределение рисков – кредиторы принимают на себя часть рисков проекта,
- ✓ увеличение финансового левериджа - увеличение соотношения заемных и собственных средств, что уменьшает средневзвешенную стоимость капитала и повышает доходность на капитал,
- ✓ обеспечение доступа частного сектора к высококлассным операторам и менеджерам.

Приведенные характеристики безрегрессного проектного финансирования указывают на его очевидные преимущества, но дело в том, что на практике с учетом современного развития институтов и конъюнктуры рынка сооружения объектов атомной энергетики по такой схеме практически ограничено. Следовательно, следует искать пути преодоления таких сложностей.

Как было указано выше одним из эффективных инвестиционных моделей для возведения АЭС является консорциальная модель «Mankala». Особенность этой модели в том, что компания, ответственная за реализацию проекта сооружения АЭС одновременно является собственником и впоследствии потребителем электроэнергии. За счет этого происходит нивелировка распределения рисков реализации «EPC-контракта» и последующей капитализации энерготрейдерской деятельности.

Важной опцией модели является вхождение в консорциум «EPC - подрядчика», эксплуатирующей организации и непосредственных потребителей электроэнергии. Основными участниками модели являются владельцы создаваемой АЭС. Необходимые инвестиции привлекают на основе активов владельцев и одновременно под долгосрочные соглашения на продажу электроэнергии. Для проектов по сооружению АЭС очень важно возможность гибкой структуры финансирования на различных стадиях проекта, возможность рефинансирования

привлеченного долга и переход на более эффективное финансирование в долгосрочной перспективе.

Матрицей инвестиционного проекта новой армянсой АЭС может стать модернизированная финская инвестиционная модель «Mankala», в которую можно встроить дополнительную привлекательную составляющую для инвесторов, это преференции к расценке электроэнергии приобретаемого не только после возведения станции, а с момента инвестиции или на определенном его этапе, то есть конфигурация инвестиционой модели может быть разная.

## Резюме

В статье представлены факторы определяющие особое значение армянской АЭС, среди них обозначены не толко факторы экономики и энергобезопасности, но и политическая, научно-техничекая, инновационная, развития человеческого капитала, построения действенной системы «образование - наука – производство», а также филосово-мировозренческая составляющие развития общества. Представлены тренды развития атомной энергетики, с учетом также последствий катастрофы Фукусимы. Подчеркивается, что развитиие атомной энергетики не имеет серьезной альтернативы. Рассмотрен варианты проектиорвания консорциума и самой матрицы инвестиционного проекта для реализации проекта новой АЭС, с учетом современных трендов инвестиционных решений в атомной энергетике. В качестве ориентира приводится успешная финская модель «Манкала», формула которой сводится к кооперации с нулевой прибылью в интересах акционеров.

*Ключевые слова:* энергобезопасность, атомная энергетика, ядерная безопасность, инвестиционные модели возведения АЭС.

## Литература

1. Александр Просвирнов, Какая ядерная энергетика нужна России, чтобы сделать всех, https://regnum.ru/news/innovatio/2196128.html
2. «Атомные станции сегодня способны выдержать падение самолета на купол реактора» «Газета.Ru» 14.06.2017, https://www.gazeta.ru/business/2017/06/13/10719941.shtml

3. Иванов Т. В., Черняховская Ю. В., Методология финансирования как составляющая успешной реализации проектов сооружения АЭС, http://ispu.ru/files/80-85.pdf
4. The 2016 Washington Summit: Time to Open the Next Chapter in Nuclear Security, http://www.cfr.org/councilofcouncils/global_memos/p37574
5. Mankala energy production model under threat? http://www.internationallawoffice.com/Newsletters/Energy-Natural-Resources/Finland/Krogerus-Attorneys-Ltd/Mankala-energy-production-model-under-threat#

## ՀԱՅԿԱԿԱՆ ԱԷԿ-Ի ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Արա Վլադիմիրի Քառյան**
տնտ.թ., դոցենտ
ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն
**Սուրեն Արամի Անանյան**
ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, հայցորդ

### Ամփոփում

Հոդվածում ներկայացված են Հայկական ատոմային էլեկտրակայանի առանձնահատուկ կարևորության գործոնները: Դրանց շարքում մատնանշված են ոչ միայն տնտեսական ու էներգետիկ անվտանգության գործոնները, այլ նաև քաղաքական, գիտա-տեխնիկական, ինովացիոն, մարդկային կապիտալի զարգացման, «կրթություն, գիտություն և արտադրություն» գործնական համակարգի կառուցման, ինչպես նաև հասարակության զարգացման փիլիսոփայական ու աշխարհընկալման բաղադրիչները: Ներկայացված են աշխարհում միջուկային էներգետիկայի զարգացման միտումները, հաշվի առնելով նաև Ֆուկուսիմայի աղետի հետևանքները: Շեշտվում է, որ միջուկային էներգետիկայի զարգացումը հիմնավոր այլընտրանք չունի: Դիտարկվել են նոր ատոմակայանի կառուցման կոնսորցիումի և ինվեստիցիոն մատրիցի նախագծման տարբերակները, ելնելով ատոմային էներգետիկայում ներդրումային որոշումների արդի միտումներից: Որպես հաջողված ուղենիշ է նշվում ֆին-

նական «Մանկալայի» մոդելը, որի բանաձևը հանգում է ի շահ բաժնետերերի զրոյական շահույթով համագործակցության:

*Բանալի բառեր*՝ էներգետիկ անվտանգություն, ատոմային էներգետիկա, միջուկային անվտանգություն, ատոմակայանի կառուցման ներդրումային մոդել:

## IMPORTANCE OF THE ARMENIAN NUCLEAR POUWER STATION AND INVESTMENT OPPORTUNITIES FOR THE COSTRUCTION THE NEW NUCLEAR STATI

**Ara Karyan**
Ph.D. in Economics, Associate Professor
EREA, Chair of Economics and Management
**Suren Ananyan**
EREA, Chair of Economics and Management, Researcher

**Summary**

The article presents factors that determine special importance of the Armenian nuclear power station. The paper highlights not only factors of economics and energy security, but also political, scientific and technical, innovative, human capital development, construction an effective system of "education - science - production", as well as philosophical and world-view components of the development of society. The paper pointed trends of the development of nuclear energy, taking into account also the consequences of the Fukushima disaster. It is emphasized that the development of nuclear energy does not have a serious alternative. It considered different options of design the consortium and the matrix of the investment project for the implementation of the new NPP project, taking into account the current trends in investment decisions in the nuclear power industry. As a guide is cited successful Finnish model of "Mankala", the formula of which fall in to cooperation with zero profit in the interests of shareholders.

*Keywords*: Energy security, nuclear energy, nuclear safety, investment models for the construction nuclear power plants.

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# ՇՐՋԱՆԱՌՈՒ ԿԱՊԻՏԱԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

***Հովիկ Հրաչիկի Գրիգորյան***
*տնտ.թ., դոցենտ*
*ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն*
*ՀՊՏՀ, Ֆինանսների ամբիոն*

Շրջանառու կապիտալի ձևավորման հիմնական նպատակը ցանկացած կազմակերպությունում համարվում է անհրաժեշտ ակտիվների ձեռքբերման պահանջի բավարարումը և արդյունավետ օգտագործման համար կապիտալի կառուցվածքի օպտիմալացումը: Մասնավորապես՝ կապիտալի ձևավորման գործընթացի հիմքում դրվում են հետևյալ սկզբունքները.

- կազմակերպության տնտեսական գործունեության զարգացման հեռանկարները հաշվի առնելը,
- ներգրավվող կապիտալի ծավալի և ձևավորվող ակտիվների ծավալի համապատասխանության ապահովումը,
- կապիտալի օպտիմալ կառուցվածքի հաստատումը՝ ելնելով արդյունավետ օգտագործելու պահանջից,
- տարբեր աղբյուրներից կապիտալ ձևավորելիս ծախսերի մինիմալացման ապահովումը,
- սեփական կապիտալի շահութաբերության բարձրացման պայմանով կապիտալի օգտագործման բարձր արդյունավետության ապահովումը:

Նշված սկզբունքներին համահունչ՝ կազմակերպությունների սեփական շրջանառու կապիտալի ձևավորման խնդիրը գործնականում լուծվում է դրա ձևավորման ժամանակ: Գործունեության ընթացքում շրջանառու կապիտալի համալրման աղբյուրներ են ծառայում ստեղծված շահույթը, ինչպես նաև սեփականին հավասարեցված միջոցները: Վերջիններն այն միջոցներն են, որոնք կազմակերպություններին չեն պատկանում, բայց անընդհատ շրջանառության մեջ են: Նման միջոցները շրջանառու կապիտալի ձևավորման աղբյուր են ծառայում իրենց նվազագույն մնացորդի չափով:

Ավանդաբար՝ շրջանառու կապիտալի ֆինանսավորման բոլոր աղբյուրները ստորաբաժանվում են հետևյալ խմբերի.

- սեփական և սեփականին հավասարեցված,
- փոխառու,
- ներգրավված,
- այլ ներքին աղբյուրներ:

Սեփական միջոցներն ունեն գլխավոր դեր ակտիվների շրջապտույտի իրականացման գործում. առևտրային հաշվարկով աշխատող կազմակերպություններին պետք է դրանով ապահովվի որոշակի ինքնուրույնություն, ինչը ստեղծում է շահութաբեր գործունեության հնարավորություն: Շուկայական հարաբերությունների պայմաններում, չնայած սեփականության բազմաձևությանը և դրա հետ կապված՝ միջոցներ ներգրավվելու հնարավորությունների ընդլայնմանը, որպես շրջանառու միջոցների ֆինանսավորման աղբյուր նշանակալի մեծացել է հատկապես բանկային վարկերի դերը:

Կորպորատիվ ֆինանսները, մասնավորապես շրջանառու կապիտալի կառավարումը մեր իրականության համար լինելով տնտեսագիտական համեմատաբար նոր կատեգորիա, ներկայումս հանդիսանում է տեսական և փորձնական ուսումնասիրությունների օբյեկտ: Ինչո՞ւմն է կայանում այս կատեգորիայի նորույթն ազգային տնտեսվարող սուբյեկտների համար: Մինչ բարեփոխումների իրականացումը հանրապետությունում կամ ԽՍՀՄ տարածքում գործում էին բազմաթիվ ձեռնարկություններ, որոնց մեծամասնությունն իրենց արտադրության ծավալներով, ֆինանսավորման և դրամական հոսքերի մեծությամբ կարող էին համեմատվել համաշխարհային շուկայում գործող նմանատիպ, ոչ համայնավարական ձեռնարկությունների հետ: Տվյալ ձեռնարկությունների գործունեությունը զերծ չէր այնպիսի հասկացությունների կիրառումից, ինչպիսիք են ֆինանսավորում, կառավարում, միջոցների տնաբաշխում և այլն:

Այսպիսով, ինչպիսի՞ ֆունդամենտալ կամ տեսական հիմքերով է պայմանավորված շրջանառու կապիտալի ֆինանսավորման և կառավարման էական հիմնախնդիրներն ու առանցքային պատճառները Հայաստանում: Առաջադրված հարցին պատասխանելու համար դիտարկենք շրջանառու կապիտալի ֆինանսավորման և կառավարման մի շարք մոդելներ: Ֆինանսական մենեջմենթի տեսությունում ձեռ-

նարկության մենեջերի կողմից շրջանառու ակտիվների տատանվող մասի համար ֆինանսավորման աղբյուրների ընտրությամբ պայմանավորված՝ ընդունված է տարբերել շրջանառու ակտիվների ֆինանսավորման մի քանի ռազմավարություն: Հարկավոր է ընդգծել, որ նշված մոդելները պարզեցված են և կապիտալի կառուցվածքի վերաբերյալ որոշումներ կայացնելու հնարավորությունը վերապահված է մենեջերին: Շրջանառու կապիտալի կառավարման ոլորտում առավել հայտնի են հետևյալ չորս տեսական մոդելները. իդեալական, ագրեսիվ, կոնսերվատիվ, կոմպրոմիսային: Այս կամ այն մոդելի ընտրությունը տանում է երկարաժամկետ պասիվների մեծության որոշման և այդ հիմքի վրա զուտ շրջանառու կապիտալի մեծության հաշվարկման, որը սահմանվում է որպես երկարաժամկետ պասիվների և ոչ շրջանառու ակտիվների տարբերություն: Հետևաբար, յուրաքանչյուր ռազմավարությանը համապատասխանում է հավասարակշռության որոշակի մոդել:

Այժմ քննարկենք նշված մոդելներն առանձին-առանձին:

Իդեալական մոդել: Իդեալական մոդելի կառուցումը հիմնվում է հենց «շրջանառու ակտիվներ» և «շրջանառու պասիվներ» կատեգորիայի էության և դրանց փոխադարձ համընկման վրա: Այս մոդելում շրջանառու ակտիվներն իրենց մեծությամբ համընկնում են կարճաժամկետ պարտավորություններին, այսինքն՝ այս դեպքում զուտ շրջանառու կապիտալը հավասարվում է զրոյի: Իրական կյանքում այսպիսի մոդել չի հանդիպում: Բացի դրանից, իրացվելիության տեսանկյունից այս մոդելն ավելի ռիսկային է, քանի որ ոչ բարենպաստ պայմանների ժամանակ ձեռնարկության մոտ կարող է առաջանալ անվճարունակության հայտանիշ:

Այս ռազմավարության էությունը կայանում է նրանում, որ երկարաժամկետ պասիվները չեն սահմանվում շրջանառու ակտիվների մեծության մակարդակին համապատասխան, և բազային հաշվեկշռային հավասարումը (մոդելը) ձեռք է բերում հետևյալ տեսքը.

ԵՊ = Ոչ շրջանառու ակտիվներ




ՈՇՄ – Ոչ շրջանառու միջոցներ

ՀՄ – Շջանառու միջոցների համակարգային մաս

ՏՄ – Շջանառու միջոցների տատանվող մաս

ՍԿ – Սեփական կապիտալ

ԵՓԿ – Երկարաժամկետ փոխառու կապիտալ

ԿԿՊ – Կարճաժամկետ կրեդիտորական պարտավորություններ

Սակայն հարկավոր է նշել, որ որևէ կոնկրետ ձեռնարկության համար առավել իրական են շրջանառու միջոցների ֆինանսական կառավարման ռազմավարության մնացած երեք մոդելները, որոնց հիմքում ընկած է այն պնդումը, որ ձեռնարկության իրացվելիությունն ապահովելու համար որպես սահմանային պայման ոչ շրջանառու ակտիվները և շրջանառու ակտիվների համակարգային մասը (շրջանառու ակտիվների այն նվազագույն քանակը, որն անհրաժեշտ է տնտեսական գործունեություն իրականացնելու համար) պետք է ֆինանսավորվեն երկարաժամկետ պասիվներով: Այսպիսով, մոդելների տարբերությունը որոշվում է նրանով, թե ինչպիսի ֆինանսավորման աղբյուրներ են ընտրվում շրջանառու ակտիվների տատանվող մասի համար:

Ագրեսիվ մոդել: Այս մոդելի դեպքում երկարաժամկետ պասիվները ծառայում են որպես ոչ շրջանառու և ընթացիկ ակտիվների համակարգային մասի ֆինանսավորման աղբյուր: Այս դեպքում զուտ շրջանառու կապիտալը նույնությամբ համընկնում է շրջանառու ակտիվների համակարգային մասին, իսկ շրջանառու ակտիվների տատանվող մասը լիովին ֆինանսավորվում է կարաճաժամկետ կրեդիտորական պարտավորվածություններով: Իրացվելիության տեսանկյունից այս ռազմավարությունը նույնպես վտանգավոր է, քանի որ գործնականում միայն շրջանառու ակտիվների նվազագույնով սահմանափակվելն

անհնար է: Այս ռազմավարության դեպքում բազային հաշվեկշռային հավասարումը (մոդելը) ունի հետևյալ տեսքը.

ԵՊ = Ոչ շրջ. ակտիվ. + Շրջ. ակտիվ.համակարգային մաս




Կոնսերվատիվ մոդել: Այս մոդելի դեպքում ենթադրվում է, որ շրջանառու ակտիվների տատանվող մասը նույնպես ֆինանսավորվում է երկարաժամկետ պասիվներով: Այս դեպքում բացակայում են կարճաժամկետ կրեդիտորական պարտավորությունները, չկա նաև իրացվելիությունը կորցնելու ռիսկը, իսկ զուտ շրջանառու կապիտալը հավասարվում է շրջանառու ակտիվներին: Իհարկե պարզ է, որ սա հնարավոր է միայն տեսականորեն և կրում է արհեստական բնույթ: Այս ռազմավարության ժամանակ բազային հաշվեկշռային հավասարումը (մոդելը) կունենա հետևյալ տեսքը.

ԵՊ = Ոչ շրջ. ակտիվ. + Շրջ. ակտիվ. համակարգային մաս + Շրջ. ակտիվ. տատանվող մաս




Կոմպրոմիսային մոդել: Սա ավելի իրական մոդել է: Այս դեպքում ոչ շրջանառու միջոցները, շրջանառու ակտիվների համակարգային և տատանվող մասի կեսը ծածկվում են երկարաժամկետ պասիվներով (երկարաժամկետ պարտավորություններ և սեփական կապիտալ): Այս դեպքում զուտ շրջանառու կապիտալը հավասարվում է շրջանառու

ակտիվների համակարգային մասին և դրանց տատանվող մասի կեսին: Այս ռազմավարության ժամանակ ձեռնարկությունները որոշակի ժամանակահատվածում կարող են ունենալ շրջանառու ակտիվների որոշակի ավելցուկ, որը բացասաբար է ազդում շահույթի վրա, սակայն միաժամանակ համարվում է վճար՝ իրացվելիությունը կորցնելու ռիսկի դիմաց: Այս ռազմավարության դեպքում բազային հաշվեկշռային հավասարումը (մոդելը) ունի հետևյալ տեսքը.

Ե.Պ. = Ոչ շրջ.ակտիվ. + Շրջ. ակտիվ. Համակարգային մաս + 0.5 Շրջ. ակտիվ.տատանվող մաս

**Ամփոփում**

Շրջանառու կապիտալի ձևավորման հիմնական նպատակը ցանկացած կազմակերպությունում համարվում է անհրաժեշտ ակտիվների ձեռքբերման պահանջի բավարարումը և արդյունավետ օգտագործման համար կապիտալի կառուցվածքի օպտիմալացումը: Շրջանառու ակտիվների տատանվող մասի համար ֆինանսավորման աղբյուրների ընտրությամբ պայմանավորված՝ ընդունված է տարբերել շրջանառու ակտիվների ֆինանսավորման մի քանի ռազմավարություն:

*Բանալի բառեր.* շրջանառու կապիտալ, ներգրավվող կապիտալ, մոդել

**Գրականություն**

1. ՀՀ ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ դասագիրք, Լ. Բաղդանյան 2010
2. Հարկեր, տուրքեր և վճարներ առ 1/01.2010թ.
3. ՀՀ բյուջետային համակարգը և նրա առանձնահատկությունները Հ.Գրիգորյան 2016 թ.

# ПРИНЦИПЫ ОРГАНИЗАЦИИ И ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ОБОРОТНОГО КАПИТАЛА В КОММЕРЧЕСКИХ ОРГАНИЗАЦИЯХ

**Григорян Овик Грачикович**
канд.экон.наук, доцент
ЕРОА, кафедра экономики и управления
АГЭУ, кафедра Финансов

### Резюме

Основной целью формирования оборотного капитала в любой организации является удовлетворение нужды приобретения необходимых активов и оптимизация структуры капитала для эффективного использования. Принято выделить несколько стратегий финансирования оборотных активов, что обусловлено выбором источников финансирования для колеблющейся части оборотных активов.

*Ключевые слова:* оборотный капитал, ссудный капитал, модель.

# PRINCIPLES OF ORGANIZATION AND WAYS OF IMPROVING WORKING CAPITAL FOR COMMERCIAL ORGANIZATIONS

**Hovik Grigoryan**
Candidate of Economic Sciences, associate professor
EREA, Chair of Economics and Management
ASUE, Chair of Finance

### Summary

The main purpose of the working capital formation in any organization is satisfaction of needs of the acquisition of the necessary assets and optimizing capital structure for effective use. It is accepted to allocate several strategies for funding working capital, because of the choice of funding sources for the vibrating part of working capital.

*Keywords:* Working capital, loan capital, model.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

***Կարինե Նորիկի Սարգսյան***
տնտ.թ.
*ԵԿՏԱ, Կառավարման և փնփեսագիփության ամբիոն, դասախոս*

Ցանկացած հասարակարգում տնտեսական հարաբերությունների կողմերի հուսալիությունը կարևորագույն գործոն է: Պետության հուսալիությունը պայմանավորված է տնտեսական, քաղաքական, սոցիալական և այլ ոլորտների կայունությամբ: Տնտեսության կայունության գրավականներից է պետական պարտքի ցուցանիշը: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության պետական պարտքի՝ թե՛ արտաքին, թե՛ ներքին ցուցանիշներում աճի միտում է նկատվում (տե՛ս աղյուսակ 1):

*Աղյուսակ 1*

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ 2012-2017ԹԹ.(ՄԼՐԴ. ԴՐԱՄ)[1]

| | 31.12.2012 | 31.12.2013 | 31.12.2014 | 31.12.2015 | 31.12.2016 | 31.01.2017 |
|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ պետական պարտքը՝ այդ թվում | 1764.4 | 1861.3 | 2109.6 | 2453.1 | 2875.6 | 2901,4 |
| Արտաքին պարտք | 1509.0 | 1581.7 | 1797.9 | 2084.7 | 2325.6 | 2335,9 |
| Ներքին պարտք | 255.4 | 279.6 | 311.7 | 368.4 | 550 | 565,3 |

Պետական պարտքի արդյունավետ կառավարումը Հայաստանի Հանրապետության կարևորագույն հիմնախնդիրներից է, քանի որ պետական պարտքը ավելի մեծ տեմպերով է աճում, քան ՀՆԱ-ն (տե՛ս աղյուսակ 2):

---

[1] Հայաստանի Հանրապետության պետական պարտքի տեղեկագրեր 2012-2017թթ. http://minfin.am/hy/page/petakan_partqi_veraberyal_ampop_tvyalner (05.10.17),

*Աղյուսակ 2*

ՀՀ ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ 2012-2016ԹԹ.
(ՄԼՐԴ ԴՐԱՄ)[2]




Համադրելով աղյուսակ 1-ի և աղյուսակ 2-ի տվյալները՝ պարզ է դառնում պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության դինամիկան: Այն 2015թ.-ի տարեվերջին կազմել է 48,8%, որը չի գերազանցում «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքով սահմանված 50% շեմը, ուստի գտնվում է կառավարելիության շրջանակներում, սակայն 2016թ.ի դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ՀՀ պետական պարտքը ավելացել է 222,5 մլրդ դրամով կամ 17,2%-ով՝ կազմելով ՀՆԱ-ի 56,8%-ը:

Վերջին տարիներին ՀՀ պետական պարտքի 90%-ից ավելին ՀՀ կառավարության պարտքն է, որը 2017թ.-ի հունվարի 31-ի դրությամբ կազմում էր 91,4%, կազմելով՝ 2653,9 մլրդ դրամ, որի 79,2%-ը ձեռք է բերվել արտաքին աղբյուրներից:

ՀՀ կառավարության պարտքի 62,4%-ը արտաքին վարկերն ու փոխառություններն են, որոնք կազմում են 1655,3 մլրդ դրամ:

2014թ.-ից ՀՀ պետական պարտքը սկսել է աճել ավելի արագ տեմպերով, ինչը պայմանավորված է արտաքին վարկերի գծով նախատեսվածից ավել ստացված միջոցներով, ինչպես նաև եկամուտների համեմատ ծախսերի առավել բարձր կատարողականի հետ կապ-

[2] ՀՀ ԱՎԾ, Ժամանակագրական շարքեր, ՀՆԱ, (05.10.17) http://www.armstat.am/am/?nid=12&id=01001

ված՝ գանձապետական պարտատոմսերի հաշվին դեֆիցիտի ֆինանսավորման բարձր ցուցանիշով[3]:

Արժույթի միջազգային հիմնադրամը 2016թ.-ի հոկտեմբերի իր զեկույցում[4] կանխատեսել է, որ Հայաստանը դժվարությամբ կկարողանա նվազեցնել կամ գոնե պահել պետական պարտքի առկա մակարդակը, և 2018թ.-ին ՀՀ պետական պարտքը կհատի օրենքով սահմանված 60%-ի շեմը՝ հաշվի առնելով աղքատության բարձր մակարդակը՝ կարևորելով առկա մարտահրավերների հաղթահարումը և աճի ապահովումը բնակչության բոլոր սեգմենտների համար:

Վերոնշյալ օրնենքի համաձայն, երբ ՀՀ պետական պարտքը գերազանցի ՀՆԱ-ի 50 տոկոսը՝ օրենքով սահմանված շեմը, ապա կառավարությունը պետք է իրականացնի ծախսերի կրճատման քաղաքականություն՝ հասցնելով բյուջեի դեֆիցիտը առավելագույնը ՀՆԱ-ի 3 տոկոսին:

Սակայն 2015 հունիսի 23-ին ընդունվեց «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքը, համաձայն որի օրենքում «պետական պարտք» արտահայտությունը փոխարինվեց «կառավարության պարտք» արտահայտությամբ[5]: Վերջինս, ըստ էության, նշանակում է, որ պետական պարտքի գումարում չի ներառվում ՀՀ ԿԲ-ին բաժին ընկնող պետական պարքի գումարը: Հետևաբար, պետական պարտքի բեռի մեծացման նոր հնարավորություն է ստեղծվում:

2016 թվականի հուլիսի 7-ի N 723-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատեց «ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2017-2019թթ. ռազմավարական ծրագիրը», որը ներկայացնում է ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ կառավարության տնտեսական զարգացման ծրագրերով սահմանված պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար անհրաժեշտ փոխառու միջոցների ներգրավման և ռիսկե-

---

[3] Հայաստանի Հանրապետության 2015թ.-ի Պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվություն, http://www.parliament.am/draft_docs5/K-995/K-995_hashvetvutyun.pdf

[4] International Monetary Fund (IMF), «Regional economic outlook. Middle East and Central Asia» October 2016 http://www.imf.org/external/pubs/ft/reo/2016/mcd/eng/pdf/cca1016.pdf (05.10.17),

[5] ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2017-2019թթ. ռազմավարական ծրագիր, www.mfe.am/index.php?fl=7617&lang=1 (05.10.17),

րի կառավարման ռազմավարությունը: Այն հրապարակվում է տարեկան պարբերականությամբ և նպաստում է կառավարության պարտքի կանխատեսելի և թափանցիկ կառավարման ապահովմանը[5]:

Ռազմավարությունում քննարկված են ՀՀ կառավարության պարտքի աճի միտումները, հնարավոր ռիսկերը, իրականացված են վերլուծություններ և կանխատեսումներ անցած, ընթացիկ և առաջիկա տարիների համար և առաջադրված են որոշակի լուծումներ, որոնք, սակայն չափազանց ընդհանրական են և վերացական: Այն ցավոք չի պարունակում ՀՀ կառավարության պարտքի նվազեցմանն ուղղված շարունակական, թիրախավորված և հստակ քայլեր և գործողություններ, այն պետք է ներառի պետական պարտքի կառավարման գործիքների ավելի լայն սպեկտոր (պարտքի ժամկետից շուտ մարմանը կամ ետգնմանն ուղղված շուկայական օպերացիաներ, պարտքը ներդրումով, ապրանքներով, արժեթղթերով կամ այլ ֆինանսական գործիքներով փոխարինելու գործողություններ և այլն):

Պետական պարտքի ավելացումը սպառնում է պետության սնանկացմամբ և պետական պարտքի բեռն ապագա սերունդներին ժառանգություն թողնելով, ինչն էլ, ըստ էության, հակասում է ՀՀ Սահմանադրությամբ սահմանված սերունդների ազատության և ընդհանուր բարեկեցության մասին դրույթին[6]:

Պետական պարտքի կառավարումը՝ մարտավարական և ռազմավարական միջոցառումների ամբողջություն է, որը ներառում է պետական պարտքի սպասարկում, նոր պարտավորությունների ստանձնում, պարտքի ծավալի և կառուցվածքի կարգավորում, դրանց նպատակային և արդյունավետ օգտագործման ապահովում:

Պետական պարտքի կառավարումն առաջին հերթին պետք է ենթադրի ներքին և արտաքին պետական պարտքի պահպանումն այն մակարդակին, որի դեպքում երկրի տնտեսությանը վտանգ չի սպառնում և պետությունը կատարում է իր պարտավորությունները: Պետական պարտքը կառավարելիության շրջանակներում պահելու համար կարևոր է նաև մի շարք այլ խնդիրների դիտարկումը, այդ թվում՝

[6] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ներածական մաս, http://www.parliament.am/parliament.php?id=constitution (05.10.17),

- պետական պարտքի ներգրավման և մարման գործընթացներում շուկայի կանխատեսելիության և կայունության ապահովում,
- ներգրավված միջոցների, վարկերի, պարտքերի օգտագործման նպատակայնության և արդյունավետության ապահովումը,
- պետական վարկերի և նրանց տոկոսների մարման ժամանակին և պատշաճ ապահովումը,
- պարտքային պարտավորությունների դիվերսիֆիկացիա՝ ըստ տարբեր ցուցանիշների (ժամկետներ, տոկոսադրույք և այլն),
- պետական պարտքի ներգրավման, սպասարկման, իրացման և մարման գործընթացներում բոլոր պատասխանատու պետական սուբյեկտների աշխատանքի կարգավորում և կոորդինացիա և այլ խնդիրներ:

Պետական պարտքի կառավարման արդյունավետության գործում մեծ նշանակություն կունենա Հայաստանի Հանրապետության պետական պարտքի կառավարման միասնական համակարգի ստեղծումը:

Պետական պարտքի կառավարման միասնական համակարգը պետք է ապահովի.

- ներքին և արտաքին պետական պարտավորությունների ներգրավման, սպասարկման և մարման գործընթացների հաշվառման ու պլանավորման միասնականությունը, բնականոն փոխազդեցությունը,
- միասնական քաղաքականության միջոցով դրանց անխոչընդոտ մեկը մյուսով մարելը,
- պետական արժեթղթերի ներկայացման, մարման և եկամուտների վճարման ժամկետների օպտիմալացումը,
- կրեդիտորների ռիսկերի նվազեցմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների իրականացում,
- պետական պարտքի ուղղությամբ պարտավորությունների իրականացումը՝ նվազագույն ծախսերով, ռիսկերով և տնտեսության վրա բացասական ազդեցությամբ,
- ներքին և արտաքին պարտատերերի հանդեպ պարտավորությունների ժամանակին և պատշաճ իրականացումը՝ առանց լրացուցիչ պայմանավորվածությունների,

- պետական պարտքի բոլոր պարամետրերի ուղղությամբ լիարժեք, ամբողջական և ժամանակին տեղեկատվության տրամադրումը:

Այսպիսով՝ պետական պարտքի կառավարումը պետք է իրականացվի մեթոդական, հաշվառման և կազմակերպչական առումներով գործողությունների օպտիմալ միասնական համակարգի մշակման և ներդրման միջոցով:

## Ամփոփում

Հայաստանի Հանրապետությունում պետական պարտքը գնալով աճում է և շատ կանխատեսումների համաձայն, այդ թվում՝ միջազգային, շուտով կհատի օրենքով սահմանված շեմը և դուրս կգա կառավարելիության շրջանակներից: Հենց այս հանգամանքով է պայմանավորված պետական պարտքի հանդեպ մեր իրականությունում ձևավորված ուշադրության բարձր աստիճանը:

Հոդվածում դիտարկվել է ՀՀ պետական պարտքի ներկա վիճակը, վերջին տարիների դինամիկան, տրվել են գնահատականներ և առաջադրվել բարելավման ուղիներ:

*Բանալի բառեր*՝ պետական պարտք, արտաքին պետական պարտք, ներքին պետական պարտք, պետական պարտքի կառավարում, պետության ֆինանսներ:

## ПРОБЛЕМА УПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННЫМ ДОЛГОМ РА

**Саргсян Карине Нориковна**
канд.экон. наук
*ЕРОА, кафедра Экономики и управления, преподаватель*

## Резюме

Государственный долг Республики Армения постоянно растет и, согласно прогнозам (включая международные), в скором времени превысит порог, установленный законом, и станет неуправляемым. Именно этим обусловлено повышенное внимание в нашей стране к государственному долгу. В статье рассмотрена современная ситуация

с государственным долгом РА, его динамика последних лет, даны оценки и предложены пути улучшения ситуации с государственным долгом.

*Ключевые слова:* государственный долг, внутренний государственный долг, внешний государственный долг, управление государственным долгом, государственные финансы.

## THE PROBLEM OF STATE DEBT MANAGEMENT OF RA

**Karine Sargsyan**
Candidate of Economic Sciences
EREA, Chair of Economics and Management,lecturer

### Summary

The state debt of the Republic of Armenia is gradually increasing and, according to many predictions (including international), it will soon reach the threshold set by the law and will become ungovernable. And the high level of our attention towards the state debt has been conditioned just by this circumstance. The modern situation of the RA state debt and the dynamics of the recent years have been considered in the article, ways on the improvement of the situation with the state debt have been advanced and the assessments have been given in the article.

*Keywords:* state debt, external state debt, internal state debt, debt management, state finances.

# ФОРМИРОВАНИЕ ОСНОВ НАУЧНЫХ ЗНАНИЙ ПО УПРАВЛЕНИЮ НЕДВИЖИМОСТЬЮ

***Григорян Наира Ишхановна***
*канд.экон. наук*
*ЕРОА, кафедра Экономики и управления, преподаватель*

Для Армении недвижимость – фундамент национального богатства, основа и ключевая предпосылка в развитии бизнеса. Владение недвижимостью и ее характеристики определяют статус в бизнесе и обществе, а также это наиболее массовый объект собственности. Формирование научных основ управления недвижимостью, изучение предпосылок формирования данных знаний являются необходимыми и востребованными для успешной предпринимательской деятельности в различных отраслях и видах деятельности, а также это немаловажно в жизни любой семьи или отдельно взятого гражданина. Именно владение или распоряжение недвижимостью определяет степень свободы, независимости и мобильности населения, статус в обществе.

Развитый региональный рынок недвижимости может эффективно функционировать только при научно обоснованной системе изучения рыночной конъюнктуры, динамики спроса и предложения, определении специфики развития отдельных процессов и характерных тенденций. Это комплекс аналитических исследований о следующих процессах: общий объем спроса и объем спроса на отдельные группы объектов, общий объем предложения и предложения отдельных объектов, общий объем спроса на услуги, определение емкости рынка, общая и эксклюзивная эластичность цен, спроса и предложения на объекты и услуги; сезонные колебания цен спроса и предложения на объекты и услуги; структура спроса на объекты и услуги; стандарты и нормы качества товаров и услуг, а также информационного обслуживания, общий объем инвестиций, структура инвестиций и т.д. [6].

Однако пока к анализу развития рынка недвижимости очень мало применяются научные подходы. Также отсутствуют нормативные акты, регламентирующие оценочную деятельность, практически нет необходимой литературы по управлению недвижимостью и адаптированной к отечественным условиям методики, использующей достигну-

тый мировой опыт. Впрочем, в промышленно развитых странах любая операция с недвижимостью выполняется при жестком контроле государства и с участием или под руководством специалистов по управлению недвижимостью [8].

Также следует определить, что в рамках исследований рынка недвижимости отсутствуют фундаментальные исследования региональных сегментов, специфики их развития и функционирования, очень мало работ, посвященных вопросам диагностики рыночной конъюнктуры, а также проблемам и специфике формирования рынка земли. Это отрицательно сказывается на качестве практики ведения бизнеса в данной сфере и на качестве нормативноправовых актов. Рынок недвижимости активно развивается и все больше влияет на инвестиционный климат, показатели прибыльности предприятий, внешнеэкономической деятельности и многие другие процессы в регионе. Неизученность рынка недвижимости приводит к отсутствию оперативной информации, неточным экономическим прогнозам развития. Это далеко не полный список проблемных, малоизученных направлений рыночных отношений, которые уже имеют место [2].

Управление недвижимостью является новым явлением в системе знаний ***менеджмента***. Но в научной и учебной литературе к данной теме проявляется все больше интереса, издаются специализированные учебники и монографии, статьи и тезисы, посвященные формированию системы знаний об управлении недвижимостью.

На сегодняшний день в существующей литературе по проблеме управления недвижимостью не сложилось единого подхода к инструментам и механизмам в системе управления недвижимостью. Каждая страна формирует свои особенности в этом сложном процессе, имеет свои интересы и формы их реализации. Несмотря на сложность вопроса и особенности трансформационной экономики Армении, вопросу развития управления недвижимостью посвящены труды известных отечественных ученых, таких как Э. Сандоян, Э. Месропян, А. Маркосян, К.Адонц, С.Степанян, В. Оганесян и др.

*Цель* статьи заключается в определении ключевых основ научных знаний по управлению недвижимостью, в выявлении и обосновании предпосылок и перспектив развития этих знаний.

Недвижимость – центральное звено в совмещении экономических и социодемографических процессов, рыночных механизмов, частных и общественных интересов, государственного и регионального управления, административных норм и правил.

***Управление недвижимостью*** – деятельность, осуществляемая на свой риск, направленная на извлечение прибыли (от своего имени или по поручению собственника) от реализации полномочий владения, пользования и распоряжения недвижимостью. Основной задачей этого вида предпринимательской деятельности является достижение максимальной эффективности использования недвижимости в интересах собственника [3].

*По европейским стандартам к управлению недвижимостью относят такие виды услуг:*

**Facility management** – управление инфраструктурой здания (инженернотехническая эксплуатация, обслуживание инфраструктуры, обеспечение всем, что нужно для комфорта, – от закупки мебели до организации всех видов ремонтных работ). Целью Facility management является эффективное управление всеми службами, которые обеспечивают непрерывную работу объекта коммерческой недвижимости. В задачи данного вида услуги входит контроль за поставщиками, организация работы сервисных служб и решение вопросов строительства, текущего и аварийного ремонта;

**Property management** – услуги по подбору арендаторов, работе с ними, ведению договоров, распоряжению активами компании, бухгалтерской отчетности и т. д. Основной задачей является управление процессами маркетинговой, финансовой и юридической деятельности;

**Building management** – управление проектированием объекта, строительством, утилизацией, сносом, консультации по вопросам выбора инженерных систем, разработке общей системы технической эксплуатации;

**Asset management** – представляет управление финансовыми потоками собственника недвижимости. Asset management ставит перед собой задачу наиболее эффективного управления активами и инвестиционными портфелями недвижимости. Это доверительное управ-

ление капиталом инвестора с целью его приумножения. Основная цель данного направления – исходя из требований собственника (инвестора) и ситуации на рынке достигать и поддерживать оптимальное соотношение доходности и риска портфеля.

Объектами управления выступают как собственно объекты недвижимости, так и соответствующие им системы – муниципальный, ведомственный и частный жилой фонд, товарищества собственников жилья, земельный и лесной фонд и т.д. [4].

Объект управления состоит из таких подсистем:

- ***социальная,*** включающая исполнительские коллективы: рабочих, исследователей, инженернотехнических работников, а также совокупность социальных отношений между ними, условия их труда и жизни;
- ***техническая*** – вещественные элементы производства (средства труда, предметы труда);
- ***организационная***, т.е. совокупность форм и методов организации производства. Подсистема связывает все элементы производства в единое целое, устанавливает отношения и пропорции между ними, координирует их деятельность в пространстве и во времени;
- ***экономическая***, охватывающая управление основными фондами, оборотными и трудовыми ресурсами с помощью таких методов, как финансирование и кредитование [4].

Появление и развитие первичной системы знаний об управлении недвижимостью обусловлены рядом причин, которые носят объективный характер. И нельзя не уделить внимания той направленности, которая формируется под воздействием этих знаний. Схематично этот процесс изображен на рисунке 1.

Предложенное видение целевого воздействия теории управления недвижимостью не ограничивается лишь рассмотренными направлениями, они однозначно глубже и шире, но принципиальным является положение о влиянии на все экономические процессы и сегменты рыночной экономики, социальную сферу.[4]




***Рисунок 1. Целевое воздействие теории управления недвижимостью***

Системное значение для развития основ теории управления недвижимостью имеет понимание, теоретикометодологическое обоснование и практическое значение влияния рынка недвижимости на социальную сферу и все стороны общественной жизнедеятельности. Наиболее показательным является трактование общих и специфических функций рынка недвижимости: *ценообразующей, регулирующей, организующей, мотивационной, коммерческой, санирования, информационной, посреднической, стимулирующей, инвестиционной, социальной, культурной и пр.*

Исторически сложилось так, что система отношений в сфере владения и распоряжения недвижимым имуществом занимает центральное место в любом общественном устройстве. С объектами недвижимости тесно связано экономическое и правовое регулирование государством различных сфер жизни общества и материального производства, что является первичным в понимании роли и значения управления недвижимостью.

Основной, базовый, ***объект недвижимости – земля*** имеет уникальное значение во всей системе государственного и регионального управления, в предпринимательской деятельности. Земля представ-

ляет собой особую ценность как для мирового сообщества с его ограниченными ресурсами и любого национального сообщества, поскольку является единственным местом проживания населения определенной страны, а также единственным фактором в любой сфере хозяйственной деятельности, прямо или косвенно участвующих в производстве товаров и благ. И теория управления недвижимостью берет это положение за ключевой момент в регулировании парадигмы отношений ***«земля-человек-бизнес-государство»*** [5].

***Управление недвижимостью осуществляется в трех направлениях:***

- **правовом** – распределение и комбинирование прав на недвижимость;
- **экономическом** – управление доходами и затратами, формирующимися в процессе эксплуатации недвижимости;
- **техническом** – содержание объекта недвижимости в соответствии с его функциональным назначением [7].

В формируемой системе знаний управления недвижимостью в Армении накоплен определенный потенциал, сформированы предпосылки дальнейшего развития как научных исследований, так и возможностей практической реализации.

*Формирование теоретических знаний* о рынке недвижимости, процессах реализации спроса, предложения, ценообразовании. Накопление теоретических знаний о мировом опыте как о функционировании рынка недвижимости, его сегментов, возможностей государственного регулирования и системной поддержки, так и об особенностях управления недвижимостью.

*Формирование методологических подходов*, механизмов инструментов в вопросах функционирования бизнессреды рынка недвижимости.

*Практические наработки* армянских предприятий по оказанию услуг в сфере управления недвижимостью, получившие свое отражение в формировании таких сегментов данного рынка, как правоотношения в управлении недвижимостью. инвестиционном и инновационном проектировании управления недвижимостью, техническом и технологическом обеспечении функционирования объектов недвижимого имущества, эко-

номической, технической, экологической экспертизе, консалтинг, аудит проперти-менеджмент, административно-арендное управление.

В условиях рыночных отношений управление недвижимостью представляет собой сложную комплексную систему по удовлетворению потребностей в конкретном виде недвижимости.

В силу определенной специфики формирования и развития рынка недвижимости следует понимать и систематизированно изучать его особенности и характерные черты, крайне важные для осуществления управленческого воздействия. Систематизируем наиболее значимые особенности рынка недвижимости с учетом характеристик трансформационной экономики Армении:

1. *Основным объектом на данном рынке является недвижимое имущество* – это объект сделок и системы услуг. Товарность данного объекта специфична, так как он удовлетворяет различные, реальные или потенциальные потребности и имеет определенные качественные и количественные характеристики.

2. В системе ведения хозяйственной деятельности базовым является выполнение ряда функций – стимулирующей, координирующей, мотивационной, санирующей и прочих. Это трансформированные к специфической системе ведения деятельности и рыночной среде функции менеджмента.

3. Кроме функций менеджмента получают свою реализацию общеэкономические функции: накопления – аккумулируются средства производства для ведения хозяйственной деятельности и личной собственности граждан; воспроизводства – необходимый элемент в воспроизводственном цикле любого вида деятельности, в том числе и жизнедеятельности человека.

4. Недвижимое имущество имеет длительный эксплуатационный период, формирует понятие амортизации и является фондо и инвестиционноемким, обеспечивающим надежность инвестиций, так как стоимость его со временем может возрастать под влиянием различных факторов.

5. Обеспечивает тесную взаимосвязь между всеми рынками и определяет эффективность рыночной, транспортной и промышленной инфраструктуры.

6. Сам объект продажи имеет четкую локализацию и может быть потреблен лишь по месту территориальной привязки, но информационное обеспечение и использование ресурсов интернета формирует спрос и предложение по всему миру.

7. Специфический товар – недвижимое имущество имеет низкую эластичность спроса на рынке и во многом зависим от эффективности работы строительной индустрии; финансовых услуг; информационной поддержки в средствах массмедиа; поддержки государства и местных органов власти.

8. Эффективность рынка и его положительное влияние на экономику напрямую зависит от стабильности политической, экономической, социальной, экологической ситуации в стране и на данной территории.

9. Процесс реализации объектов недвижимого имущества имеет многокомбинаторный характер и предполагает использование разнообразных вариантов в своем осуществлении. Также предполагает разнообразие имущественных прав на владение (распоряжение, владение, эксплуатация и др.).

10. Процедура реализации объектов носит длительный временной характер и часто сопровождается неравномерностью денежных потоков (так, возможны сделки с рассрочкой, через ипотеку или определенные формы лизинга).

11. Сделка куплипродажи объектов носит жестко регламентированный характер и имеет место определенная фиксируемая и документационно оформляемая процедура сделки. Обязателен факт государственной регистрации и оплаты всех сборов и налогов.

12. Формирует собственную систему информационных технологий – *маркетинга, рекламных услуг и пиар-деятельности*. В условиях высокоорганизованной риэлторской деятельности активно позиционирует и продвигает на рынке специфическую маркетинговую характеристику–территориальные предпочтения.

13. Активно взаимодействует с финансовым рынком и его посредническими услугами–кредитованием, лизингом и ипотекой. Способствует формированию соответствующих высокоэффективных сегментов данного рынка.

14. Активно взаимодействует и напрямую влияет на сектор строительной индустрии. Способствует формированию спроса на продукцию и услуги данной отрасли, создает новые виды спроса и технологий его реализации.

15. Имеет специфический процесс ликвидности–длительный и требующий значительных предварительных инвестиций в маркетинговые исследования, информационную поддержку, ряда посреднических услуг юридического, риэлторского характера, средств массовой информации и пр.

16. Отражает эффективность государственной социальной политики в контексте решения проблем с обеспечением жильем населения.

17. Находится в постоянной динамике и представляет собой сложную комплексную систему удовлетворения потребностей по обслуживанию всех слоев населения и разнообразных видов ведения хозяйственной деятельности, формирует определенный имидж региона и государства. В процессе развития расширяются виды услуг и формы обслуживания: формируется система новых, более комплексных услуг – управление недвижимостью.

Такие особенности и характерные черты рынка недвижимости являются фундаментом в сложных процессах формирования маркетинга объектов недвижимого имущества, консалтинговых услугах по управлению недвижимым имуществом, информационного обеспечения риэлторской и оценочной деятельности.

В современной теории и практике управление недвижимостью получает свою реализацию в сложной конкурентной рыночной среде. Это среда трансформационного характера. Она отражает многие проблемы развития экономики и несовершенства государственного регулирования. Наиболее яркие проявления данной рыночной среды:

- несовершенство конкуренции и возможность появления олигополии (олигопольных сговоров),
- небольшое число покупателей и большое число продавцов (как результат – большинство сделок носят несистематичный, во многом частный характер);
- уникальность каждого объекта и несовершенство общей маркетинговой политики по продвижению объектов;

- значительный объем специальных документов, подтверждающих подготовку к акту куплипродажи (их непрерывное возрастание по параметрам – объем предоставляемой информации, цена, усложнение процедур получения и пр.) ;
- свободное ценообразование, которое в большинстве случаев не соответствует инструментам научного и маркетингового обоснования;
- всеобщность процессов в рамках национальных и мировых рынков;
- ограниченность входа на рынок – предполагающего наличие значительного капитала;
- условия ведения бизнеса приближены к информационной прозрачности и общей высокой степени информационной открытости;
- наличие фактов монопольного контроля так называемой информационной рыночной власти;
- значительные объёмы теневого и криминального оборота, не подлежащие оценке.

Такие характеристики и являются переходными в оценке рыночной среды, разрешение многих конфликтных зон еще в перспективе. По оценке независимых экспертов в сфере консалтинга необходимо еще 50 лет для устранения конфликтов в управлении рынком недвижимости, расширении спектра оказываемых услуг, обеспечения должного уровня прозрачности бизнес-деятельности [1].

Определяя и характеризуя специфику и современное состояние развития рынка недвижимости в Армении, необходимо четко определить зрелость и острейшую потребность ситуации в вопросах развития управления недвижимостью. *Охарактеризуем общие цели управления недвижимостью, наиболее востребованные в условиях трансформационной экономики нашей страны:*

➢ обеспечение и реализация конституционных прав граждан (физических и юридических лиц) на недвижимое имущество;

➢ реализация обязанностей, связанных с владением недвижимым имуществом;

➢ гармонизация рыночных отношений с позиции их социальной направленности в контексте решения проблем обеспечения населения жильем по доступным ценам;

➢ формирование единого правового поля по регулированию единого, общенационального порядка и условий для работы на рынке недвижимости;

➢ разработка и реализация основ государственной политики по вопросам регулирования рынка недвижимости, его приоритетных секторов, взаимодействия с другими рынками, подготовки кадров;

➢ обеспечение единых условий для работы всех участников рынка, независимо от формы собственности, территориальной дислокации или организационной формы;

➢ обеспечение безопасности в функционировании рынка недвижимости (защита интересов; правовая и социальная защита агентов рыночной среды, покупателей и продавцов);

➢ обеспечение действия рыночного механизма (свободного формирования спроса и предложения, ценообразования и др.);

➢ формирование активного инвестиционного поля и на основе положительного инвестиционного климата;

➢ поддержка и стимулирование предпринимательской деятельности на рынке;

➢ формирование единых научнометодологических основ развития управления рынком недвижимости с учетом дальнейшего приоритета процессов социализации и информатизации экономики;

➢ приоритетность в вопросах решения общенациональных проблем – жилищной, поддержки молодежи и социально незащищенных слоев населения, экологической безопасности;

➢ обеспечение информационной прозрачности независимо от форм собственности или общественного статуса субъектов рынка;

➢ формирование новых подходов к налогообложению недвижимого имущества и участников рынка недвижимости;

➢ стимулирование разработки национальных и региональных проектов по активному взаимодействию со строительной индустрией, туризмом, международными рынками и пр.

Реализация возможностей управления недвижимостью и ее науч-

ная направленность предполагают использование базовых принципов развития данной системы знаний. Научные принципы управления рынком недвижимости во многом определяются зрелостью: национальной экономики; рынка и его сегментов; общественным устройством; политической, экономической и социальной стабильностью; уровнем предпринимательской и рыночной культуры; возможностью адаптации мирового опыта; участием в формировании стандартов информационного общества.

Соблюдение преемственности в системе знаний по формированию и развитию системы управления рынком недвижимости, имеющей свою специфику и неповторимость, обусловлено рядом предпосылок.

- национальная и региональные истории и традиции развития рынка,
- синергетическое взаимодействие различных знаний, агрегируемых в процессах управления недвижимостью,
- накопленный мировой опыт регулирования прав собственности на различные объекты недвижимого имущества и процедуры управления,
- тесная взаимосвязь и взаимообусловленность с такими отраслями, как строительная и транспортная индустрии.

В целом развитие основ научных знаний по управлению недвижимостью в условиях трансформационной экономики Армении ее разнообразных регионов является логическим процессом эволюционирования менеджмента во всем его разнообразии направлений.[3] С позиции совершенствования рыночных отношений и перспектив формирования эффективных внутренних рынков значимость регуляторных воздействий приобретает стратегическое значение и формирует предпосылки для стабилизации экономического и социального развития экономики. В современной развитой рыночной экономике рынок недвижимости оказывает стимулирующее воздействие на все процессы жизнедеятельности и выполняет такие функции, как развития хозяйственного комплекса, социальной безопасности.

Успешность экономического и социального развития Армении зависит от качественных и количественных преобразований в сфере

рыночных отношений. На любом из этапов развития рынка при любом общественном устройстве особое, приоритетное, место в системе развития занимает недвижимое имущество. Именно рынок недвижимости обеспечивает стабильное функционирование, которое так или иначе влияет на все стороны жизнедеятельности и формирует успешность всех сферах бизнеса, государственного и регионального управления. По мнению автора, именно рынок недвижимости является центром рыночной среды, ее катализатором и стабилизатором. Качественные и количественные параметры данного рынка влияют на позитивные оценки мировым сообществом эффективности рыночных реформ и социальной направленности всех уровней управления.

В современной рыночной экономике ***недвижимость*** – это не только жизненно необходимый товар, удовлетворяющий различные потребности людей, но одновременно и капитал в материальной форме, приносящий доход. Соответственно управление недвижимостью обеспечивает качественные параметры жизнедеятельности, напрямую обеспечивает экономическую, политическую и социальную стабильность. Накопление научных знаний по управлению недвижимостью во всех ключевых направлениях – теоретическом, методологическом, практическом – стремительно обеспечивает предпосылки развития и прогресса научной мысли. Перспективная направленность развития научных знаний – новые принципы и формы управления, социальные и культурные технологии контроля, обоснование инновационных бизнеспроцессов и потребностей в информационном обеспечении.

## Резюме

В области современной экономики рынок недвижимости как особый механизм реализует спрос и предложение объектов недвижимости, объединение различных интересов и групп прав, функций государственного и регионального регулирования и определения цен. Развитие и перспективы этого рынка позволяют макроспециалистам говорить о государственных и будущих тенденциях национальной экономики.

В статье основное внимание уделяется основным принципам знания управления недвижимостью, определены и обоснованы предпосылки и перспективы развития управления недвижимостью.

*Ключевые слова:* недвижимость, управление недвижимостью, земельный участок, земельный фонд, рынок недвижимости, капитал, технические характеристики недвижимости, услуги по управлению недвижимостью, система управления недвижимостью.

## Литература

1. «Հայաստանի անշարժ գույքի շուկայի գնահատման հաշվեքարտը» Միջազգային մասնավոր ձեռնարկության կենտրոն (CIPE) և Օտարերկրյա ներդրումների և համագործակցության ասոցիացիա: էլ.-աղբյուր՝ http://www.cipe.org/sites/default/files/publication-docs/Report-Armenia_final_AM.pdf
2. Ասաուլ Ա., Սանդոյան Է., Մեսրոպյան Է., Անշարժ գույքի էկոնոմիկա: Եր.: ՄԱՆՄԱՐ, 2010թ., էջ՝ 352:
3. Ստեփանյան Ս.Ծ., Վ.Փ.Հովհաննիսյան, Ա.Լ.Գրիգորյան, Անշարժ գույքի էկոնոմիկա և կառավարում / Երևան, ԵրՃՇՊՀ 200
4. Айтмухаметова И., Минина О., ЭКОНОМИКА НЕДВИЖИМОСТИ: Новосибирск: 2003. 96с
5. Асаул А.Н. Экономика недвижимости: учебник для вузов / Старовойтов; – СПб.: АНО «ИПЭВ», 2009. – 304 с.
6. Талонов А. В. Управление недвижимостью: учебник для академического бакалавриата /– М.: Издательство Юрайт, 2015. – 411 с..
7. Иванов В.В. Управление недвижимостью - М.: ИНФРАМ, 2007. – 446 с.
8. Петручeня И., Недвижимость в современных условиях: Красноярск, 2003. 200 с.

# ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳԻՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

**Նաիրա Իշխանի Գրիգորյան**
տնտ. թ.
ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, դասախոս

**Ամփոփում**

Ժամանակակից տնտեսագիտության ոլորտում անշարժ գույքի շուկան որպես հատուկ մեխանիզմ իրականացնում է անշարժ գույքի օբյեկտների պահանջարկի և առաջարկի, տարբեր շահերի և իրավունքների խմբերի միավորում, պետական և տարածաշրջանային կարգավորման գործառույթներ և գների սահմանում: Այս շուկայի զարգացումը և հեռանկարները թույլ են տալիս մասնագետներին խոսել ազգային տնտեսության պետական և ապագա միտումների մասին:

Հոդվածում դիտարկված են անշարժ գույքի կառավարման գիտելիքի հիմնական սկզբունքները, բացահայտվել և հիմնավորվել են անշարժ գույքի կառավարման զարգացման նախադրյալներն ու հեռանկարները:

*Հիմնաբառեր՝* անշարժ գույք, անշարժ գույքի կառավարում, հող, հողային ֆոնդ, անշարժ գույքի շուկա, կապիտալ, անշարժ գույքի առանձնահատկությունները, անշարժ գույքի կառավարման ծառայություններ, անշարժ գույքի կառավարման գիտելիքի համակարգ:

# FORMATION OF THE BASICS OF SCIENTIFIC KNOWLEDGE ON REAL ESTATE MANAGEMENT

**Naira Grigoryan**
Ph.D. in Economics
EREA, Chair of Economics and Management, lecturer

**Summary**

In the field of modern economics real estate market as a special mechanism realizes the demand and supply of real estate objects, unification of different interests and rights groups, functions of state and re-

gional regulation and definition of prices. The development and prospects of this market allow professionals to speak about the state and future trends of the national economy.

The article focuses on the basic principles of real estate management knowledge, the prerequisites and prospects of real estate management development have been identified and substantiated.

*Keywords:* Real estate, real estate market, real estate management, land, land fund, capital, real estate specifications, real estate management services, real estate management knowledge system.

# ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆՈՒՄ

***Տաթևիկ Ռուբիկի Սարգսյան***
*տնտ.թ.*
*ԵԿՏԱ,Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, դասախոս*

Ժամանակակից քաղաքի զարգացումը անհնար է պատկերացնել առանց ներքաղաքային ուղևորատար տրանսպորտային համակարգի կատարելագործման: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ գոյություն ունի փոխկապվածություն երկրի տնտեսական զարգացման և քաղաքների տրանսպորտային համակարգերի վիճակի միջև, որոնցում առանձնահատուկ դեր ունի մետրոպոլիտենը:

Պետք է նշել, որ հասարակությանը տրանսպորտային ծառայության սպասարկման մակարդակը ՀՀ-ում ծայրահեղ ցածր է: Դա ունի մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, մասնավորապես.

- ուղևորատար տրանսպորտի շարժակազմի ֆիզիկական և բարոյական մաշվածքը,
- շարժակազմի նորացման գործընթացի դանդաղումը,
- ճանապարհա-տրանսպորտային մայրուղիների անհամապատասխանությունը ժամանակակից պահանջներին,
- ուղևորափոխադրումների ոչ ռացիոնալ և անհավասարաչափ բաշխումն ըստ տրանսպորտի տեսակների,
- ուղևորատար տրանսպորտի ոլորտում ստվերային գործունեության առկայությունը և այլն:

Մետրոպոլիտենն ունակ է արդյունավետորեն լուծել քաղաքի տրանսպորտային խնդիրները՝ ոչ միայն մարդկանց ապահովելով տեղափոխման երաշխավորված ժամանակով, այլև տնտեսական վիճակի բարելավմամբ: Ըստ էության, այն հանդիսանում է ներքաղաքային հասարակական արագընթաց տրանսպորտի միակ տեսակը: Բացի դրանից, մետրոպոլիտենը ավելի քիչ է ենթարկվում տնտեսական իրավիճակի գործոնների ազդեցությանը: Այստեղ առավել կարևորվում են տեխնիկական որոշումները, ինչպես նաև շարժակազմի և սարքավորումների շահագործման ծառայության առավել երկարատև բնույթը և պայմանները:

Վերգետնյա հասարակական տրանսպորտի զարգացման այլընտրանքային տարբերակների վերլուծությունը ցույց է տալիս, որ կապիտալ ներդրումները համապատասխան մայրուղիների և փողոցների կառուցման, դրանց հետ կապված շենքերի և շինությունների ապամոնտաժման, ինժեներական կոմունիկացիաների վերադասավորման աշխատանքների ծրագրերում 1.5-2 անգամ գերազանցում են մետրոպոլիտենով տրանսպորտային համակարգի ստեղծման ծրագրի արժեքին [1]: Բացի դրանից, վերգետնյա տրանսպորտի զարգացման մակարդակն ունի որոշակի սահման, որը պայմանավորված է վերջիններիս տեխնիկական և քաղաքաշինական հնարավորություններով:

Մետրոպոլիտենի առավելությունն այն է, որ այն տեղակայված լինելով հիմնականում ստորգետնյա տարածքում չի խաթարում քաղաքի պլանա- նախագծային աշխատանքները: Վերջինս թույլ է տալիս կազմակերպել ուղևորափոխադրումները անկախ ճանապարհային շարժի լարվածությունից և եղանակային պայմաններից: Հաշվի առնելով նաև մետրոպոլիտենի բարձր թողունակությունը, մասնավորապես, եթե վերգետնյա տրանսպորտի փոխադրման հնարավորությունները կազմում են 4-5 հզ. մարդ/ժամ, առավելագույն արագությունը 60 կմ/- ժամ է, իսկ շարժի նվազագույն ինտերվալը 180 վրկ, ապա մետրոպոլիտենի դեպքում այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 50-55 հզ. մարդ/ժամ, 90 կմ/ժամ և 90 վրկ, ապա տրամաբանական է դառնում այն փաստը, որ աշխարհի բոլոր խոշոր քաղաքներում տրանսպորտային հիմնախնդրի լուծումը իրականացվում է ի օգուտ մետրոյի նոր գծերի կառուցման: Սակայն, շատ հաճախ, ֆինանսական խնդրի պատճառով վերջինի լուծումը հետաձգվում է անորոշ ժամանակով:

Մետրոպոլիտենները համարվում են վնասով աշխատող կազմակերպություններ և նորմալ կենսագործունեություն ծավալելու (առավել ևս զարգանալու) համար ունեն արտաքին ֆինանսավորման անհրաժեշտություն:

Աշխարհի մետրոպոլիտենների գերակշիռ մասում արտաքին ֆինանսավորումը կատարվում է մի քանի աղբյուրներից (պետական բյուջե, համայնքային բյուջե, մասնավոր հատված): Մեր երկրում մետրոպոլիտենը ֆինանսավորվում է միայն պետբյուջեից: Երևանի մետրոպոլիտենին պետբյուջեից հատկացված սուբսիդիան ըստ տարինե-

րի ունեցել է աճի միտում, մասնավորապես, 2005-2014թթ. պետական բյուջեից մետրոպոլիտենին հատկացվող գումարն աճել է՝ 697 մլն-ից հասնելով 1 մլրդ 855 մլն: Սուբսիդիայի գումարն աճել է 1.6 անգամ՝ հաշվի առնելով նշված ժամանակահատվածում սպառողական գների ինդեքսը (1 մլրդ 099 մլն): Ըստ տարիների մետրոպոլիտենի եկամուտների կառուցվածքի դիտարկումից նկատում ենք, որ սուբսիդիան միջինը կազմում է ամբողջ եկամտի 55%-ը: 2014թ. այն կազմել է եկամուտների 41.3 %.

**Գծապատկեր 1. Երևանի մետրոպոլիտենի եկամուտների կառուցվածքը 2014թ.**

(Կազմված է ըստ՝ Երևանի մետրոպոլիտենի աշխատանքի արդյունքների 2005-2015թթ. տարեկան հաշվետվությունների տվյալների)




Վերլուծությունը ցույց է տալիս, որ, մետրոպոլիտենի եկամուտները, առաջին հայացքից ապահովել են աճ ըստ տարիների: Մասնավորապես 2005թ.-ին ուղևորների փոխադրումներից ստացվող եկամուտն ընդհանուրի մեջ կազմել է 42%, 2010թ.՝ 25.7%-ը, ինչը պայմանավորված է 2010թ. պետության կողմից մետրոպոլիտենին տրամադրված լրացուցիչ ֆինանսական օգնությամբ 110 մլն դրամի չափով: 2013թ. այս ցուցանիշն ավելացել է 10.9 տոկոսային կետով, կազմելով 36%: Սակայն, եթե հաշվի առնենք, որ 2014թ. վճարովի ուղևորափոխադրումների ծավալը կազմել է 14 072 հազ. ուղևոր, իսկ 2010թ. նույն ցուցանիշը կազմել է 18 161 հազ., ապա կտեսնենք, որ եկամտի աճը

պայմանավորված չէ ուղևորահոսքի ավելացմամբ: Վերջինիս պատճառը 2011թ.-ից ուղեվարձի բարձրացումն է: Մետրոպոլիտենի երթևեկության սակագինը սահմանում է Երևանի քաղաքապետարանը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի տնօրենների խորհրդի առաջարկությամբ՝ համաձայնեցնելով ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության հետ: Երևանի մետրոպոլիտենի ուղեվարձը փոփոխվել է 2003 թ. սեպտեմբերի 1-ին՝ 40 դրամից դառնալով 50 դրամ, իսկ 2011թ. հուլիսի 1-ից մինչ այժմ գործում է 100 դրամ սակագինը: Ինչպես նշեցինք, եկամուտների կառուցվածքում ուղևորափոխադրումներից ստացվող եկամուտներն ունեն ամենամեծ տեսակարար կշիռը (բացառությամբ սուբսիդիայի): Դա պայմանավորված է նրանով, որ ոչ հիմնական գործունեությունից (գովազդ, վարձակալություն և այլն) ստացվող եկամուտները, կարելի է ասել, կայուն մեծություններ են և ըստ տարիների դրանց տատանումները մեծ չեն եղել, իսկ 2008թ. ոչ հիմնական գործունեությունից ստացվող եկամուտների շեշտակի աճը պայմանավորված է մասնագիտացված կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքմամբ: Այսինքն կարելի է պնդել, որ ոչ հիմնական գործունեությունից ստացվող եկամուտները, որպես լրացուցիչ ֆինանսավորման լուրջ աղբյուր չի կարելի համարել:

Ինչ վերաբերվում է պետության կողմից հատկացվող սուբսիդիային, ապա պետք է նշել, որ չնայած ըստ տարիների նկատվում է վերջինիս զգալի աճ և 2008թ. վերջինիս գումարը 2005 թվականի նկատմամբ աճել է մոտ 2.5 անգամ, մասնավորապես, 2008թ. գումարը 2005թ. համեմատությամբ աճել է 136.4%-ով, 2010թ. 2008թ. համեմատությամբ՝ 1.1 անգամ (11.6%), 2014թ. աճը 2010թ. նկատմամբ եղել է չնչին և կազմել է 0.8%, այն չի բերել ընկերության ֆինանսական վիճակի բարելավման, քանի որ աշխատանքի վարձատրության և օրենսդրական դաշտում տեղի ունեցած փոփոխությունները (նվազագույն աշխատավարձի աճ, ինֆլյացիա, հարկերի դրույքաչափերի բարձրացում և այլն) հանգեցրել են ընկերության ծախսերի ավելացմանը: Եթե դրան ավելացնենք մետրոպոլիտենում օգտագործվող ապրանքանյութական արժեքների և պահեստամասերի շուկայական գների աճի նկատվող դինամիկան, ապա ակնհայտ կդառնա, որ սուբսիդիայի գումարի ավելացումը կրում է զուտ խորհրդանշական բնույթ:

2014թ. սուբսիդիայի չնչին աճը պայմանավորված է նույն տարում մետրոպոլիտենին հատկացված դրամաշնորհի գումարով:

Մետրոպոլիտենի ֆինանսավորման կարևոր խնդրահարույց հարց է համարվում ընկերության ծախսերը: Մետրոպոլիտենի տեխնիկական շահագործման կանոնները և մյուս գերատեսչական նորմատիվ ակտերը հատուկ սահմանում են գծային տնտեսության, կապի ու էներգամատակարարման համակարգերի, շարժասանդուղքների, էլեկտրագնացքների և այլ սարքավորումների տեխնիկական վիճակին ներկայացվող պահանջները, որոնց պահպանման դեպքում է միայն երաշխավորվում տրանսպորտի այս տեսակի անվտանգ և անխափան շահագործումը:

Մետրոպոլիտենի ընդհանուր շահագործական ծախսերի կառուցվածքը ներկայացված է ստորև.

**Գծապատկեր 2. Երևանի մետրոպոլիտենի ընդհանուր շահագործական ծախսերի կառուցվածքը 2014թ.**

(Կազմված է ըստ՝ Երևանի մետրոպոլիտենի աշխատանքի արդյունքների 2005-2015թթ. տարեկան հաշվետվությունների տվյալների)




Ինչպես տեսնում ենք գծապատկեր 2-ից, ընդհանուր շահագործական ծախսերը 2014թ. կազմել են 4915.1 մլն դրամ կամ շահագործվող մեկ կմ գծի հաշվով 406.2 մլն դրամ (4915.1մլն / 12.1):

ԱՊՀ անդամ երկրների մետրոպոլիտենների համար վերը նշված ցուցանիշը մի քանի անգամ գերազանցում է Երևանի մետրոպոլիտենի նույն ցուցանիշին (տե՛ս աղյուսակ 1): Աղյուսակ 1-ից պարզորոշ երևում է, որ Երևանի մետրոպոլիտենի շահագործական ծախսն ամենափոքրն է: Այն զիջում է անգամ Եկատերինբուրգի և

Սամարայի մետրոպոլիտենների նույն ցուցանիշին համապատասխանաբար 3.5 և 2.2 անգամ: Այդ հարաբերակցությունն ինքնին խոսում է Երևանի մետրոպոլիտենի ֆինանսավորման առկա վիճակի և այն զգալիորեն վերանայելու անհրաժեշտության մասին:

*Աղյուսակ 1*

**ԱՊՀ անդամ երկրների մի շարք քաղաքների մետրոպոլիտենների շահագործական ծախսերի կառուցվածքը 2013թ.** (ռուս.ռուբլի)

(Կազմված է ըստ՝ «Մետրո» Միջազգային Ասոցիացիայի մետրոպոլիտենների արտադրա-տնտեսական ցուցանիշները 2013թ. տվյալների, 30 հունվար 2014թ., էջ. 1-9)

| Քաղաքներ | Կայա-րաննե-րի թիվը | Շահա-գործվող գծի երկա-րությունը (կմ) | Շահագոր-ծական ծախսերը (մլն ռուբլի) | 1 կմ գծին բաժին ընկնող շահա-գործական ծախսերը (մլն ռուբլի) | Հարաբերակցու-թյունը Երևանի մետրոպոլիտենի նկատմամբ (%) |
|---|---|---|---|---|---|
| Երևան | 10 | 12.1 | 221.8 | 18.3 | 100 |
| Սամարա | 9 | 10.3 | 411.4 | 39.9 | 118 |
| Նիժնի Նովգորոդ | 14 | 18.8 | 683.5 | 36.4 | 98.9 |
| Եկատերինբուրգ | 9 | 12.7 | 815.1 | 64.2 | 250.8 |
| Նովոսիբիրսկ | 13 | 15.9 | 869.6 | 54.7 | 198.9 |

Մետրոպոլիտենի շարժակազմի, գծային տնտեսության, էներգամատակարարման, կապի, ջրահեռացման և մյուս համակարգերի տեխնիկական սպասարկումը, ընթացիկ և հիմնանորոգման աշխատանքների սահմանված ժամկետներում, ամբողջ ծավալով և պատշաճ մակարդակով իրականացումն անվտանգության ապահովման և անխափան շահագործման ամենակարևոր նախապայմանն է: Դրա հետ մեկտեղ, ինչպես վկայում են վերջին մի քանի տարիներին այդ ուղղությամբ կատարված վերլուծությունների արդյունքները, մետրոպոլիտենի հիմնանորոգման աշխատանքների ծրագիրը մշտապես թերակատարվում է ֆինանսական միջոցների սղության պատճառով: Մասնավորապես, 2004-2005թթ. հիմնանորոգման ծրագրերի կատարման համար նախատեսված համապատասխան 133.7 մլն և 137.0 մլն դրամի դիմաց, ֆինանսական միջոցների բացակայության պատ-

ճառով, փաստացի կատարվել են համապատասխանաբար 117.3 մլն և 93.3 մլն դրամի աշխատանքներ և երկու տարում պլանի ընդհանուր թերակատարումը կազմել է ավելի քան 28%: Դա այն դեպքում, երբ ծրագրով նախատեսվել են շուտափույթ լուծում պահանջող հարցերի չնչին մասը միայն: 2008 թվականին պետության կողմից մետրոպոլիտենին կատարվել է հատկացում 129.7 մլն դրամի չափով՝ ընթացիկ նորոգման նպատակով: Սակայն հաշվի առնելով, որ մետրոպոլիտենում գործող վագոնների մեծամասնության տարիքը գերազանցում է 25 տարին, ինչպես նաև տեխնիկայի և սարքավորումների շուկայական գներն ունեն աճի միտում, ապա պարզ է դառնում, որ նշված գումարը չնչին է և նման տեմպերով ու ծավալներով կատարվող հիմնանորոգման աշխատանքների շարունակումը անխուսափելիորեն կբերի տեխնիկական անսարքությունների հետագա ավելացման և կարող է սպառնալ երթևեկության անվտանգությանը: Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագրի համաձայն 2010թ. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից մետրոպոլիտենին տրամադրվել է վարկ: ՀՀ և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև համաձայնագրի շրջանակներում վարկառուն պարտավորվում է փոխել շարժակազմը, բարեկարգել գծերը, ինչպես նաև տեղադրել պոմպեր թունելներից ջրահեռացման համար: Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման ծրագիրը բաղկացած էր 2 փուլից: Այս նախագծի արժեքը կազմել է մոտ 15 մլն եվրո, որից 5 մլն եվրո վարկ հատկացրել է ՎԶԵԲ-ը, 5 մլն եվրո վարկ՝ Եվրոպական ներդրումային բանկը և 5 մլն եվրո դրամաշնորհ՝ Եվրոպական հանձնաժողովը[4]: Ծրագրի իրականացման արդյունքում վագոնների 60 ծայրահեղ հնամաշ սայլակներ փոխարինվել են նորերով, իրականացվել է բարձրավոլտ մալուխային համակարգի 36.4 կմ երկարությամբ 6 կվ նոր մալուխների և 17 նոր ուղղիչների մատակարարում և տեղադրում, խորքային և կոյուղային 76 նոր խորքային պոմպերի մատակարարում և տեղադրում, 14 վագոնների վերանորոգում և արդիականացում:

Մետրոպոլիտենի ընդհանուր շահագործական ծախսերի մեջ կարևորվում է ընկերության աշխատավարձի ֆոնդը, որը 2014 թ. կազմել է ամբողջ ծախսերի ավելի քան 48.4%-ը: Վերջինս հնարավորություն է տալիս ապահովել ընկերության աշխատակիցներին 154 հզ. դրամ միջին աշխատավարձ:

Այսպիսով, կատարելով եկամուտների և ծախսերի վերլուծություն, արձանագրում ենք, որ Երևանի մետրոպոլիտենը 2014թ. գրանցել է 415 մլն դրամի վնաս, իսկ մետրոպոլիտենի հետագա շահագործումը ֆինանսավորման ներկա պայմաններում՝ անվտանգության ապահովման տեսանկյունից, պարունակում է որոշակի ռիսկ և արդյունավետ ֆինանսատնտեսական մեխանիզմի մշակումը և ներդրումը դառնում է անհրաժեշտություն:

Նկատի ունենալով վերլուծության արդյունքները և մետրոպոլիտենների ֆինանսավորման արտասահմանյան փորձը, Երևանի մետրոպոլիտենի ֆինանսական վիճակը բարելավելու և վնասը ծածկելու նպատակով, առաջարկում ենք.

ԽՍՀՄ փլուզումից հետո Երևանի մետրոպոլիտենը որպես ռազմավարական ծրագրի մաս չի դիտարկվել, չի մշակվել կառավարական որևէ ծրագիր ֆինանսական միջոցներ հայթայթելու և մետրոն որպես այլընտրանքային տրանսպորտային միջոց զարգացնելու, նոր թունելախորշեր կառուցելու և Երևանի ծայրամասերը կենտրոնին կապելու ուղղությամբ: Այդ իսկ պատճառով, հաշվի առնելով Երևանի քաղաքային հասարակական տրանսպորտի, մասնավորապես վերգետնյա տրանսպորտի համակարգում տիրող իրավիճակը, առավել լրջորեն մոտենալ մետրոպոլիտենի ֆինանսավորման, արդիականացման (կարճաժամկետ) և նոր գծերի ու կայարանների կառուցման (երկարաժամկետ) խնդրին՝ այս ոլորտն ընդգրկելով կառավարության տնտեսական ծրագրերում, բացի պետության կողմից տրամադրվող դոտացիայից, իրականացնել արտաքին ֆինանսավորում հաշվի առնելով մետրոպոլիտենների ֆինանսավորման արտասահմանյան փորձը՝ «վճարում է նա, ով աղտոտում է» սկզբունքով, մասնավորապես. փոխադրամիջոցների համար գանձվող գույքահարկի գումարից մասհանում կատարել մետրոպոլիտենին, որի արդյունքում կլուծվեն ինչպես մետրոպոլիտենի մի շարք խնդիրներ, այնպես էլ վերջինս հիմք կհանդիսանա հետագայում փողոցների ծանրաբեռնվածության, օդի աղտոտվածության աստիճանի նվազման համար:

Ավելի իրատեսական է համարվել գումարի չափի հիմնավորումը տալ հիմքում ունենալով վերգետնյա ուղևորատար տրանսպորտով (ավտոբուս, տրոլեյբուս, երթուղային տաքսի, մարդատար տաքսի, անձնական թեթև մարդատար ավտոմոբիլային տրանսպորտ) փո-

խադրված ուղևորների քանակի և մետրոպոլիտենով փոխադրված ուղևորների քանակի հարաբերակցությունը (տե՛ս աղյուսակ 2).

*Աղյուսակ 2*

**Երևան քաղաքի վերգետնյա տրանսպորտով և մետրոպոլիտենով ուղևորափոխադրումները 2009-2014թթ**.[2,3]

մլն ուղևոր

| Տրանսպորտի տեսակը | 2009թ. | 2010թ. | 2011թ. | 2012թ. | 2013թ. | 2014թ. |
|---|---|---|---|---|---|---|
| Վերգետնյա տրանսպորտ* | 227.8 | 228.9 | 230.2 | 230.9 | 223.2 | 207.3 |
| Մետրոպոլիտեն | 18.9 | 19.9 | 17.0 | 14.9 | 15.6 | 15.8 |
| Հարաբերակցությունը (%) | 8.2 | 8.6 | 7.3 | 6.5 | 6.9 | 7.6 |

Ուսումնասիրելով 2009-2014թթ. ընթացքում վերգետնյա տրանսպորտով և մետրոպոլիտենով ուղևորափոխադրումները, նկատում ենք, որ վերջիններիս հարաբերակցությունը ըստ տարիների տատանվել է 6.5-8.6%-ի սահմաններում: Նշված ուսումնասիրության հիման վրա առաջարկում ենք մետրոպոլիտենին հատկացնել փոխադրամիջոցների գույքահարկից գանձվող գումարի 7.5%-ը (որպես վեց տարիների ցուցանիշների միջինացված մեծություն): Համեմատության համար նշենք, որ եվրոպական մի շարք երկրներում գործում են հասարակական տրանսպորտի և մասնավորապես մետրոպոլիտենի ֆինանսավորմանն ուղղված հարկեր, որոնք տատանվում են 5-10%-ի սահմաններում:

### Ամփոփում

Հասարակական ուղևորատար տրանսպորտը հանդիսանում է յուրաքանչյուր քաղաքի զարգացման շարժիչ ուժը: Սակայն, ինչպես հայտնի է, ամբողջ աշխարհում հասարակական տրանսպորտային կազմակերպությունները համարվում են ոչ շահութաբեր: Ուստի առանց պետական ֆինանսավորման, քաղաքային հասարակական տրանսպորտի ավանդական տեսակների (մետրոպոլիտեն, տրամվայ, տրոլեյբուս, ավտոբուս) գոյատևումը և հետագա զարգացումը հնարավոր չէ:

Հոդվածում ներկայացվել է Երևան քաղաքի ուղևորատար տրանսպորտի համակարգում մետրոպոլիտենի դերը և ներկայումս կիրառվող ֆինանսավորման մեխանիզմները: Մետրոպոլիտենի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության արդյունքում հեղինակի կողմից առաջարկվել է ֆինանսավորման նոր մեխանիզմ:

*Առանցքային բառեր.* հասարակական տրանսպորտ, մետրոպոլիտեն, արտաքին ֆինանսավորում, այլընտրանքային տրանսպորտային միջոց, շարժակազմ, ուղեվարձ:

### Գրականություն


1. Фролов Ю. С. Крук Ю. Е. Метрополитены на линиях мелкого заложения. Новая концепция строительства. - М.: ТИМР, 1994.– 244с.
2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014, ՀՀ ԱՎԾ, Երևան 2014, 606 էջ
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, ՀՀ ԱՎԾ, Երևան 2015, 601 էջ
4. ՀՀ ԱԺ պաշտոնական կայք՝ http://www.parliament.am/draft_docs5/K-995/K-995_hashvetvutyun.pdf (վերջին մուտքը՝ 07.08.2017)


## ВОЗМОЖНОСТИ ВНЕДРЕНИЯ ЭФФЕКТИВНОЙ ФИНАНСОВО-ЭКОНОМИЧЕСКОЙ СИСТЕМЫ В ЕРЕВАНСКОМ МЕТРОПОЛИТЕНЕ


**Саргсян Татевик Рубиковна**
канд. экон. наук
*ЕРОА, кафедра Экономики и управления, преподаватель*


### Резюме


Общественный пассажирский транспорт является движущей силой развития каждого города. Однако, как известно, во всем мире предприятии в сфере общественного транспорта считаются нерентабельными. Таким образом, выживание и дальнейшее развитие тради-

ционного городского общественного транспорта (метро, трамвай, троллейбус, автобус) невозможно без государственного финансирования.

В статье представлена роль метрополитена в системе пассажирского транспорта города Еревана и существующие механизмы финансирования. В итоге анализа финансово-экономической деятельности метрополитена автором предложен новый механизм финансирования метрополитена.

*Ключевые слова:* общественный транспорт, метрополитен, внешнее финансирование, альтернативное транспортное средство, подвижной состав, оплата за проезд.

## FINANCIAL_ECONOMIC EFFECTIVE SYSTEM'S INVESTMENT ABILITIES FOR YEREVAN SUBWAY

**Tatevik Sargsyan**
Ph.D. in Economics,
EREA, Chair of Economics and Management, lecturer

### Summary

Public transport is a motivator for a progress of each city. But, it is known, that public transport organizations is not profitable in the world. Thus, without state financing, town public transport's traditional types (tram, trolleybus, bus and subway) existence and further progress is impossible.

In the article is shown the role of subway in the system of passenger transport of Yerevan city and the applied financial mechanisms. A new mechanism of financing is suggested by the author asa a result of analysis of subway financial-economic activity.

*Keywords:* public transport, subway, alternative means of transport, rolling stock, external financing.

# ԱԶԳԱՅԻՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

***Լուսինե Կաղլենի Սարգսյան***
*ԵԿՏԱ,Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, դասախոս*

Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման միջազգային փորձի ներդրման, ինչպես նաև առանձին հիմնախնդիրների վերլուծության համար նպատակահարմար է նախ և առաջ ընտրել առանձին երկրներ կամ միություններ, որոշակի չափանիշներից ելնելով իրականացնել խմբային դասակարգումներ, ինչպես նաև որոշել, թե որ՞ երկրների փորձն է ճիշտ տեղայնացնել, ինչպիսի՞ չափանիշների, սկզբունքների և մոտեցումների հիման վրա պետք է ընտրել և տեղայնացնել կոնկրետ երկրի ազգային ինովացիոն համակարգի մոդելը:

Պետության ինովացիոն քաղաքականությունը ցանկացած պետության ինովացիոն համակարգի հիմնարար տարրն է: Այդ իսկ պատճառով, ավելի մանրամասն վերլուծելով այս ոլորտում առկա միջազգային փորձը, մասնավորապես, ինովացիոն պետական քաղաքականությունը ինովացիոն զարգացման տարբեր ուղղություններ ընտրած երկրներում, կարող ենք առանձնացնել ՀՀ տնտեսության մեջ կիրառելի, գործուն մոտեցումներ, որոնք կարող են ապահովել մեր երկրի համար գիտելիքահեն տնտեսական աճ և համաշխարհային տեխնոլոգիական շուկայում առաջատար դիրքեր:

**Ճապոնիայի** ազգային ինովացիոն համակարգի կառավարման առանձնահատկություններից է զարգացած հորիզոնական կապերի համակարգը, որն ապահովում է պետական և մասնավոր կազմակերպությունների ներգրավվածությունը պետական տնտեսական քաղաքականության ձևավորման գործում: Նորարարական գործունեության համակարգում կարևոր դեր են խաղում նաև հետազոտական կազմակերպությունները (300 ուղեղային կենտրոններ), որոնք մոնիթորինգ են անցկացնում նորարարական գործընթացների զարգացման և կանխատեսումների բնագավառում[4]: Ճապոնիայի կառավարության ինովացիոն քաղաքականության մեջ համեմատաբար նոր և կարևոր ուղղությունը կլաստերների ձևավորումը և զարգացումն է: Կլաստերային քաղաքականության հիմքում դրված են վենչուրային բիզնեսի

շրջանակներում ակտիվ աջակցության մեխանիզմները: Խրախուսվում են նաև արտասահմանյան կազմակերպությունների, համալսարանների և գիտահետազոտական ինստիտուտների հետ համագործակցության զարգացման և ընդլայնման նախաձեռնությունները:

**Չինաստանի** ազգային ինովացիոն համակարգի առանձնահատկությունն այն է, որ պատմականորեն պետությունը կարևոր դեր ունի վերջինիս զարգացման գործում: Պետությունը սահմանում է արդյունաբերական զարգացման գերակա ոլորտները, ինովացիոն զարգացման ծրագրերը, որոնցով հետագայում առաջնորդվում են համալսարանները և գիտահետազոտական ինստիտուտները: Չինական կառավարությունը կիրառում է բոլոր հնարավոր գործիքները նորարարական գործունեությունը խթանելու համար՝ աջակցելով տեխնոլոգիաների փոխանցմանը և մտավոր գործունեության արդյունքների առևտրայնացմանը: Այդ մեխանիզմներից մեկը հատուկ գոտիների և ինկուբատորների ստեղծումն է, որոնք աջակցում են բարձր տեխնոլոգիական ոլորտներին: Չինաստանի գիտության և տեխնոլոգիաների զարգացման միջնաժամկետ և երկարաժամկետ ազգային ծրագրի «կարգախոսը» անկախ (տեղական) նորարարությունների զարգացման ամրապնդումն է [3]:

**ԱՄՆ**-ում պետությունը հետազոտական աշխատանքների շրջանակներում ստեղծում է ենթակառուցվածքներ մասնավոր հատվածում, որոնք նպաստում են տեխնոլոգիաների զարգացմանը և փոխներթափանցմանը: Տեխնոլոգիաների զարգացման վերլուծությունը և կանխատեսումը կատարվում է պետության կողմից մասնավոր ընկերությունների կողմնորոշման, վերջիններիս անմիջական մասնակցությամբ տեխնոլոգիական զարգացման առավել հեռանկարային ուղղությունների բացահայտման, ապագան կանխորոշող կարևորագույն տեխնոլոգիաների և առաջնահերթությունների առանձնացման նկատառումով: Երկրի զարգացման հեռանկարների և այլ երկրների նկատմամբ վերջինիս մրցունակության դիրքերի գնահատումը նպաստում է արտաքին առևտրի քաղաքականության հիմնավորմանը և առանձին բնագավառների և ընկերությունների սուբսիդավորման խնդիրների լուծմանը: Ձևավորվում է պետական պահանջարկը և կանխորոշում պետության գնողունակությունը՝ դրանով իսկ ներգործելով նորամուծությունների շուկայի վրա՝ առաջին հերթին բարձրագույն տեխնոլոգիաների ոլորտում:

Պետությունն իր վրա է վերցրել նաև բոլոր պարտավորություննե-րը՝ կապված նորամուծությունների ստեղծման գործընթացին մասնակցող հիմնական տնտեսական գործակալների միջև գործընկերային հարաբերությունների ձևավորման հետ, ինչպիսիք են՝ համագործակցություն և գործընկերություն ինստիտուտների և արդյունաբերության միջև, դաշնային պայմանագրային կենտրոնների և ինստիտուտների միջև: Այդ պարտավորությունները կարող են դրսևորվել դաշնային լաբորատորիաների կողմից իրականացվող աշխատանքներին մասնակցելու կամ մասնակիցների միջև գործընկերային հարաբերություններ ստեղծելու ձևով:

ԱՄՆ-ում ազգային ինովացիոն համակարգի ձևավորման համար կառավարությունը խրախուսում է վենչուրային կապիտալով հիմնադրամների և հետազոտական կենտրոնների ստեղծմանը: Ըստ ԱՄՆ Ազգային գիտական հիմնադրամի մոտեցումների [5]՝ առավել արդյունավետ գործող հետազոտական կենտրոնները և վենչուրային հիմնադրամները իրենց գործունեության առաջին 5 տարիներին ամբողջությամբ կամ մասնակիորեն կարող են ֆինանսավորվել պետական կամ դաշնային բյուջեից: Ինովացիոն գործընթացների աջակցության ուղղակի տարրերից է նաև պետության կողմից ինովացիոն ենթակառուցվածքների ձևավորումը: Պետությունը կարող է ստեղծել նորարարություններ տարածող և խորհրդատվական ծառայություններ մատուցող կենտրոնների ցանցեր, որոնք գործարար ծառայություններ կմատուցեն նորարարներին: Պետական մարմիններն երկրում և արտասահմանում իրականացնում են նորարարական գործընթացների զարգացման մոնիթորինգ և կանխատեսումներ, և փորձում են հետագա ներդրման համար գտնել առավել արդյունավետ ու առաջադեմ տեխնոլոգիաները: Առանձնահատուկ տեղ է գրավում նաև ինովացիոն նախագծերի պետական փորձաքննությունը, քանի որ նորարարություններով զբաղվող առանձին կազմակերպությունների համար դժվար է գնահատել դրանց բոլոր հնարավոր հետևանքները տնտեսության վրա:

Ինովացիոն ցուցանիշների մեծամասնությամբ՝ Գերմանիան գտնվում է աշխարհի ամենաառաջատար երկրների շարքում: Հետազոտությունների և մշակումների վրա Գերմանիայի կատարած ծախսերը 2010-2014 թթ. կազմել են վերջինիս ՀՆԱ-ի 3%, իսկ ԵՄ-ում միայն Ֆինլանդիան և Շվեդիան ունեն ՀՆԱ-ի նշված մակարդակը գերազանցող

գիտության ֆինանսավորում: ԵՄ «առավելագույնս գիտելիքահեն» ընկերությունների տասնյակում հինգը գերմանական են: Գիտական հրատարակումների թվով, ԳԴՀ-ը գրավում է աշխարհում 4-րդ տեղը՝ 7,2% բաժնով (ԱՄՆ-ից, Չինաստանից և Մեծ Բրիտանիայից հետո):

Գերմանիայի ինովացիոն քաղաքականությունն իրականցվում է դաշնային մակարդակով և հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.[2]

1. Գիտահետազոտական մշակումների պետական ֆինանսավորման ծավալների անընդհատ մեծացում՝ գիտության առավել զարգացող ոլորտների և տեխնոլոգիաների շեշտադրումով:

2. «Ինովացիոն վերելակ» մեխանիզմի զարգացումը, ինչպես նաև նորամուծությունների ներդրման և առևտրայնացման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ պայմանների ստեղծումը: Գերմանիայի ինովացիոն քաղաքականությունը կոմնորոշված է դեպի գիտության և գործարար միջավայրի միջև ինտեգրացիոն կապերի ձևավորում:

3. Տեխնիկական մասնագիտություններ ունեցող աշխատակիցների, ինժեներների, կոնստրուկտորների որակավորման բարձրացում և մասնագիտական վերապատրաստում: Ամեն տարի, Գերմանիայի տնտեսության մեջ տեղի է ունենում տեխնիկական ԲՈՒՀ-երում կամ համալսարաններում բարձրագույն կրթություն ստացած մինչև 100 000 նոր ինժեներների և գիտնականների ներհոսք:

Գերմանիայի ազգային ինովացիոն համակարգի զարգացման մեջ գլխավոր դեր ունի փոքր և միջին բիզնեսը: Փոքր ինովացիոն բիզնեսի բաժինը կազմում է 54%: Այսպիսով, կարելի է պնդել, որ յուրաքանչյուր երկրորդ գերմանական ընկերություն զբաղվում է ինովացիոն գործունեությամբ: Չնայած, Գերմանիայում փոքր և մեծ բիզնեսի մի շարք ընկերություններ ֆինանսապես անկախ են, այնուամենայնիվ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ դաշնային մակարդակներով գործում է ձեռնարկատերերի աջակցության ավելի քան 200 ծրագիր: Վերջիններիս ֆինանսավորումն իրկանացվում է պետական «Kreditanstalt für Wiederaufbau» բանկի կամ վերջինիս «Deutsche Investitions- and Entwicklungsgesellschaft» (DEG – ներդրումների և զարգացման կորպորացիա) դուստր-մասնաճյուղի միջոցով: Բացի այդ, երկրում նախատեսված է փոքր և միջին ձեռնարկություններին արտոնյալ վարկավորում: Գերմանիայում գործում են 12 կազմակերպություններ, որոնք հանդիսանում են նորամուծությունների ոլորտի պե-

տական ծրագրերի օպերատորներ, ինչպիսիք են՝ հետազոտական և ֆինանսական հիմնարկություններ, ձեռնարկատիրական և մասնագիտական միություններ և Գերմանիայի էկոնոմիկայի և տեխնոլոգիաների Դաշնային նախարարության կառուցվածքային մասնաճյուղեր:

Ինովացիոն գործընթացների կառավարման պետական մեխանիզմը Գերմանիայում հանդիսանում է հզոր լծակ գլոբալ գիտա-կրթական տարածությունում սեփական դիրքերն ուժեղացնելու համար: Բարձրագույն ուսումնական հաստատություններին մրցակցային հիմունքով տրամադրվող հզոր ֆինանսական աջակցությունը թույլ է տալիս համալսարաններին իրականացնել առաջադեմ գիտական հետազոտություններ, հաջողությամբ առևտրայնացնել մտավոր գործունեության արդյունքները, ինչպես նաև, հզորացնել կադրային ներուժը; Այս գործուն մեխանիզմները թույլ են տալիս ստեղծել բարձրագույն կրթության գերմանական մրցունակ համակարգի անկրկնելի կերպարը, որն ունակ է արձագանքելու արդի գիտատեխնիկական և հասարակական կյանքի ամենաիրատապ մարտահրավերներին:

Տեխնոլոգիաների միջազգային փոխանցման խթանման ակտիվ պետական քաղաքականությունը, այդ թվում նաև, հիմնարար հետազոտություններին ուղղվող անուղղակի և ուղղակի սուբսիդիաները, մի շարք փորձագետների կարծիքով [1], ընկած է նաև Հարավային Կորեայի և Թայվանի տնտեսական հրաշքի հիմքում: Արդյունաբերական քաղաքականության առաջնահերթությունների համակարգի հանգամանալից մշակումը թույլ է տվել կառավարությանը ոչ միայն խթանել նորամուծությունները տնտեսության առանձին հատվածներում, այլ նաև ապահովել վերջիններիս փոխներթափանցումը: Բացի այդ, քաղաքականությունը նախատեսում էր միջոցառումներ՝ ուղղված կրթական համակարգի բարելավմանը, բարձրակարգ մասնագետների պատրաստմանը և արդյունաբերության ընդհանուր զարգացմանը: Խթանման օբյեկտ էր հանդիսանում ոչ միայն բացարձակ նոր տեխնոլոգիաների կիրառումը, այլև զարգացած երկրներում արդեն գոյություն ունեցող տեխնոլոգիաների ընդօրինակումը, այսինքն՝ «ներմուծմանը փոխարինող» արտադրանքների թողարկման յուրացումը: 1980-ական թթ. Կորեան անցավ ստեղծագործ ընդօրինակման քաղաքականությանը [1]:

Անդրադառնալով Ռուսաստանի Դաշնությանը կարող ենք արձանագրել, որ ազգային ինովացիոն համակարգի հիմնական տարրերը

կան, և դրանց հաջող գործարկման համար ընդամենն անհրաժեշտ է լրամշակում, այն է՝ ձևավորել հուսալի կապուղիներ այդ տարրերի միջև [6]: Միջնաժամկետ հեռանկարում ձևավորված է Ռուսաստանի Դաշնության ինովացիոն զարգացման առավել ակտիվ ռազմավարություն, որը վերջինիս բարեհաջող իրագործման դեպքում թույլ կտա օգտագործել ռուսական ինովացիոն համակարգի առավելությունները և շտկել թերությունները [7]: Այս քաղաքականության մասնակի դրսևորումն է Սկոլկովո գիտակրթական կենտրոնը [8]:

Այս մուտեցումներն են ընկած նաև Իսրայելի, Չիլիի, Էստոնիայի և մի շարք այլ երկրների տնտեսությունների արդիականացման և տեխնոլոգիական առաջընթացի հիմքում [1]:

Այսպիսով, զարգացած ինովացիոն տնտեսություն և նման հեռանկարներ ունեցող երկրների փորձի ուսումնասիրությունը ապացուցում է, որ պետությունը պետք է լինի ցանկացած երկրի ինովացիոն զարգացման ապահովման ամենաակտիվ գործակալներից մեկը:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ

- Նորամուծությունների արտադրության կամզակերպման որևէ տնտեսական, շուկայական ձև թույլ չի տալիս հասնել սոցիալապես արդյունավետ մակարդակի, եթե պետությունը չունի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն այդ արտադրության մեջ:
- Նորարարական ընկերությունների համար խթանները երբեմն լինում են թույլ, և ընկերությունը կամ գյուտարարը նորամուծության ուղղված ջանքեր է գործադրում միայն այն դեպքում, եթե երկրում ինովացիոն գործունեության համար ստեղծված են ավելի լավ պայմաններ, քան այլ ապրանքների արտադրության համար: Առաջընթացի գլխավոր արագացուցիչ է հանդիսանում պետության վարած արդյունավետ քաղաքականությունը;

Ինչպես վկայում է վերոնշյալ հարցադրումների շրջանակներում ազգային ինովացիոն համակարգի ձևավորման միջազգային փորձի մեր կողմից կատարված ուսումնասիրությունը, ինովացիոն ոլորտում «խաղի կանոնների» սահմանման և անհրաժեշտ գործիքների լրակազմի ձևավորման համար պետությունը պետք է իրականացնի հետևյալ միջոցառումները.

- երկրի առաջնահերթություններից, համաշխարհային տնտեսության զարգացման միտումներից և համաշխարհային շու-

կայում երկրի մրցունակ դիրքեր ապահովելու անհրաժեշտությունից ելնելով համապատասխան նպատակային հետազոտությունների նախանշումը և պետական գնումների համակարգի զարգացումը,

- գիտական նախագծերի, ինստիտուտների և կազմակերպությունների գործունեության համար անկախ փորձաքննության չափանիշների սահմանումը,
- այդ նախագծերի իրագործման կամ ինստիտուտների գործունեության մշտադիտարկման կազմակերպումը,
- գիտական ենթակառուցվածքի շրջանակներում, գիտության տարբեր ճյուղերում և տարբեր փուլերում իրականացվող հետազոտությունների (կիրառական և հիմնարար հետազոտություններ) միջև կապուղիների ստեղծումը,
- «գիտություն-կրթություն-արտադրություն» կապի խթանումը և ամրապնդումը,
- ինստիտուտների ամբողջական և առանձին գիտնականների դրամաշնորհների հիմքով աջակցության համակարգերի լայնորեն կիրառումը: Վերջիններիս համատեղումը թույլ է տալիս մեղմել յուրաքանչյուր համակարգի թերությունները և առավել լիարժեք կերպով օգտագործել առավելությունները:
- կրթական համակարգի համապատասխանեցումը Վ. Գումբոլդի կոնցեպտին [1]:
- ՀուՄ-երի վրա կատարվող ծախսերի մոտեցումը համաշխարհային չափանիշներին: Վերջիններս համաշխարհային տնտեսությունում միջինը կազմում են 2.13 % [10], ԵՄ երկրներում՝ 2.03%, ՏՀԶԿ երկրներում՝ 2.04 % [9]:
- կրթությանն ուղղված ծախսերի աճ: Համաշխարհային տնտեսության մեջ կրթության վրա միջինը ծախսում են ՀՆԱ-ի 4,7%-ը, [10] այդ թվում՝ ԵՄ երկրներում ՀՆԱ 4.4%, ՌԴ՝ 4.4 $, Էստոնիա՝ 4.8%:

Այսպիսով, ինչպես բազմիցս նշել ենք, ինովացիոն ոլորտը, առավել քան ցանկացած այլ ոլորտ, կախված է պետական կառավարման համակարգի արդյունավետությունից: Երկրի հաջողությունը պայմանավորված է հետազոտական կազմակերպությունների ռացիոնալ կառուցված համակարգով, գիտության և կրթության մեջ կատարվող

նշանակալի ներդրումներով, ինչպես նաև պետական կառույցների, բիզնես-ընկերակցության և գիտական հիմնարկությունների միջև առկա սերտ համագործակցությամբ: Ազգային ինովացիոն համակարգի այսպիսի արդյունավետ մեխանիզմն ապահովում է երկիրը ինովացիոն մրցունակ արտադրանքների առևտրայնացման բարձր տոկոսով և թույլ է տալիս դասվել ինովացիոն առումով առավել զարգացած պետությունների շարքին:

## Ամփոփում

Պետության ինովացիոն քաղաքականությունը ցանկացած պետության ինովացիոն համակարգի հիմնարար տարրն է: Այդ իսկ պատճառով, ավելի մանրամասն վերլուծելով այս ոլորտում առկա միջազգային փորձը, մասնավորապես, ինովացիոն պետական քաղաքականությունը ինովացիոն զարգացման տարբեր ուղղություններ ընտրած երկրներում, կարող ենք առանձնացնել ՀՀ տնտեսության մեջ կիրառելի, գործուն մոտեցումներ, որոնք կարող են ապահովել մեր երկրի համար գիտելիքահեն տնտեսական աճ և համաշխարհային տեխնոլոգիական շուկայում առաջատար դիրքեր:

*Առանցքային հասկացություններ:* Ազգային ինովացիոն համակարգ, պետության ինովացիոն քաղաքականություն, հետազոտություններ և մշակումներ, գիտական ենթակառուցվածք, կրթություն, տեխնոլոգիաների փոխանցում:

## Գրականություն

1. Киселева В.В., Колосницына М.Г., Государственное регулирование инновационной сверы, Москва 2008, 218-203 с
2. Обзор состояния экономики и основных направлений внешнеэкономической деятельности ФРГ в 2014 году, Торгпредство России в Германии апрель 2015 года http://www.ved.gov.ru/files/images/kai/Economics_Review_2014/Economics_Germany_2014.pdf
3. CHINA’S NATIONAL INNOVATION SYSTEM AND INNOVATION POLICY, Regulations and Intellectual Property Rights (IPR) Division,

Department of Policy and Regulations, Office of Innovation System Construction, Ministry of Science and Technology, China, http://apctt.org/nis/sites/all/themes/nis/pdf/CSNWorkshop_Report_P2S2_Wang.pdf
4. «Ինովացիոն քաղաքականության հարթակ» կայք՝ https://www.innovationpolicyplatform.org/content/japan
5. ԱՄՆ Ազգային գիտական հիմնադրամի պաշտոնական կայք՝ https://www.nsf.gov/bfa/dias/policy/
6. «Կրեատիվ տնտեսություն» հրատարակչության պաշտոնական կայք՝ https://bgscience.ru/lib/4899/
7. «Նորամուծությունները Ռուսաստանում» ինովացիոն քաղաքականության պետական աջակցության պաշտոնական կայք՝ http://innovation.gov.ru/ru/sites/default/files/documents/2014/5636/1238.pdf
8. «Սկոլկովո տեխնոպարկ»-ի պաշտոնական կայք՝ https://www.skolcity.ru/about/
9. ՏՀԶԿ պաշտոնական կայք՝ http://www.oecd-ilibrary.org/science-and-technology/main-science-and-technology-indicators_2304277x
10. Համաշխարհային բանկի պաշտոնական կայք՝ http://data.worldbank.org/indicator/SE.XPD.TOTL.GD.ZS?view=chart

## АНАЛИЗ МЕЖДУНАРОДНОГО ОПЫТА В РАЗРАБОТКЕ НАЦИОНАЛЬНЫХ ИННОВАЦИОННЫХ СИСТЕМ

**Саргсян Лусине Карленовна**
ЕРОА, Кафедра Экономики и Управления, преподаватель

### Резюме

Государственная инновационная политика является фундаментальным элементом инновационной системы любой страны. Вот почему, анализируя международный опыт в этой области, особенно государственную инновационную политику в странах, у которых различные инновационные стратегии, мы можем найти практические и эффективные подходы для экономики Армении, которые могут обеспе-

чить основанный на знаниях экономический рост и лидирующие позиции в глобальном технологическом рынке.

*Ключевые понятия:* национальная инновационная система, государственная инновационная политика, исследования и разработки, научная инфраструктура, образование, передача технологий.

## ANALYSIS OF THE INTERNATIONAL EXPERIENCE IN THE DEVELOPMENT OF NATIONAL INNOVATION SYSTEMS

**Lusine Sargsyan**
EREA, Chair of Economics and management, Lecturer

### Summary

State innovation policy is the a fundamental element of the innovation system of any country. That's why, analyzing the international experience in this field, particularly state innovation policy in the countries that have adopted different innovation strategies, we can identify practical and effective approaches for the Armenian economy, which can provide knowledge-based economic growth and leading positions in the global technology market.

*Key concepts:* National innovation system, state innovation policy, research and development, scientific infrastructure, education, technology transfer.

# ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԳԼՈԲԱԼ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՐԸ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

***Անուշ Մովսեսի Հակոբյան***
*ԵԿՏԱ, Կառավարման և Տնտեսագիտության ամբիոն, դասախոս*

Էլեկտրոնային առևտուրը շարունակում է արագ զարգանալ, սակայն մրցակցությունն աճում է ավելի արագ, քան շուկան: Սա նշանակում է, որ գնալով հաճախորդներին առավել դժվար կլինի գրավել և ավելի հեշտ՝ կորցնել նրանց:

Էլեկտրոնային առևտուրը որոշակի միտումներ է դրսևորում, որոնք համաշխարհային բնույթ են կրում՝ թողնելով մեծ հետևանքներ: Եթե մարքեթոլոգները ցանկանում են հաջողության հասնել, ապա ռազմավարություն մշակելիս պետք է հաշվի առնեն այդ միտումներից յուրաքանչյուրը: Ռազմավարության առկայությունը ևս անհրաժեշտ է ներկայիս մրցակցային պայմաններում: Համաձայն Սմարթ Ինսայթս (Smart Insights) մարքեթինգային խորհրդատվական ընկերության կատարած հետազոտությունների՝ պրոֆեսիոնալ մարքեթոլոգների 77%-ը գտնում է, որ պլանավորումը էլեկտրոնային մարքեթինգի կարևորագույն և ամենաարդյունավետ գործոնն է հանդիսանում, և միայն 14%-ն է գտնում, որ լավագույնը իրավիճակային մոտեցումն է[1]:

Թվարկենք այդ միտումներից կարևորագույնները.

**1. Համաշխարհային էլեկտրոնային առևտրի աճի շարժիչ ուժը Ասիան է**

Էլեկտրոնային առևտուրը վաղուց գլոբալ երևույթ է կրում, սակայն դրա զարգացման վաղ շրջանից սկսած շուկայի աճի առաջատարը և շարժիչ ուժը ԱՄՆ է: Վերջին 15 տարիների ընթացքում ԱՄՆ ամենամյա 10%-ով վաճառքի աճը հանգեցրեց էլեկտրոնային առևտրի պայթունավտանգ աճի: Դրա հետևանքով ԱՄՆ շատ մոտ է գտնվում հագեցվածության մակարդակին և ակնկալվում է, որ էլեկտրոնային վաճառքը կդադարի աճել կամ, առնվազն, կնվազեն աճի տեմպերը:

Հակապատկեր իրավիճակն է տիրում ասիական շուկաներում, հատկապես Չինաստանում, որտեղ, կանխատեսումների համաձայն,

[1] http://www.smartinsights.com/

կշարունակվի վաճառքի արագ աճը: Ստորև ներկայացված է ԱՄՆ և Չինաստանի էլէկտրոնային առևտրի վաճառքի աճի կանխատեսվող ցուցանիշները, որոնք զբաղեցնում են համաշխարհային էլեկտրոնային առևտրի շուկայի հսկայական մասնաբաժինը, և մոտ ապագայում այն կհանդիսանա գլոբալ աճի հիմնական գործոնը (տես գծապատկեր 1):

Գծապատկեր 1. ԱՄՆ և Չինաստանի էլէկտրոնային առևտրի վաճառքի աճի ցուցանիշները 2015-2019թթ




Չինաստանում էլեկտրոնային վաճառքը այնքան արագ է աճում, որ կանխատեսվում է, որ մինչեւ 2019 թ գլոբալ էլեկտրոնային վաճառքի ծավալը կարող է կրկնապատկվել:

Էլեկտրոնային առևտրի աճի կենտրոնի տեղաշարժը դեպի ասիական երկներ լուրջ հետևանքներ կունենա էլեկտրոնային առևտրով զբաղվող ընկերությունների համար: Այս միտումից օգտվելու համար այդ ընկերությունները պետք է մուտք գործեն միջազգային շուկա: Էլեկտրոնային առևտրով զբաղվելու դրական կողմերից մեկն այն է, որ ֆիզիկական ենթակառուցվածքի անհրաժեշտություն չկա արտաքին շուկա մուտք գործելու համար: Բեռնափոխադրման նազագույն սակագներով միջազգային առաքումների առաջարկը գնալով մեծանում է, իսկ էլեկտրոնային կայքերն էլ գնալով նվազեցնում են պետական

սահմանների կարևորությունը: Այժմ դժվար չէ նոր երկրներ և աշխարհագրական շուկաներ մուտք գործել, սակայն նոր միջավայրում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է մշակել համապատասխան ռազմավարություն՝ տվյալ տեղանքի սպառողների սովորույթներին և նախասիրություններին համապատասխան, ունենալ որակյալ թարգմանված կայք և այլն:[2]

**2. Բջջային սարքերից օգտվողները չեն համակերպվում բջջային սարքերից էլեկտրոնային գնում կատարելու մտքին**

Անհնարին է չնկատել վերջին 5 տարիների ընթացքում մարդկանց կողմնորոշումը դեպի բջջային սարքերը: Բջջային սարքերի միջոցով համացանցից օգտվողները այսօր կազմում են ողջ համացանցից օգտվողների կեսից ավելին:

Զարմանալին այն է, որ օգտվողների զգալի մասը դեռևս չեն հարմարվել բջջային սարքերի միջոցով էլեկտրոնայի առևտուր կատարելուն: Էլեկտրոնային գնորդների ավելի քան կեսը նախընտրում են էլեկտրոնային գնում կատարել սեղանադիր համակարգչի միջոցով, քանի որ մտահոգված են անձնական տվյալների և անվտանգության պաշտպանվածությամբ: Գծապատկեր 2-ում ներկայացված է E-Marketer-ի կողմից կատարված հարցման արդյունքները այն մասին, թե ինչու են բջջայինից օգտվողները խուսափում գնումներ կատարել իրենց բջջային սարքերից[3]:

[2] Strategy Rules- David B. Yoffie, Michael A.Cusumano: Five Timeless Lessons from Bill Gates, Andy Grove, and Steve Jobs, 2015

[3] https://www.emarketer.com/

Գծապատկեր 2. Բջջային սարքերով գնումներից խուսափելու պատճառները




Վոլֆգանգ Դիջիթլի (Wolfgang Digital) կողմից իրականացված ուսումնասիրություններն էլ տալիս են մեկ այլ կարևոր տեղեկատվություն: Ընկերությունը վերլուծել է 80 միլիոն էլեկտրոնային գործարք՝ 230 միլիոն եվրո արժո եկամտով: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ, չնայած՝ բոլոր առցանց այցերի 59%-ը կատարվել է պլանշետների և բջջային հեռախոսների միջոցով, սակայն այդ գործարքներից ստացված եկամուտը կազմել է ընդհանուր եկամտի միայն 38%-ը (տես Գծապատկեր3):[4] Սեղանադիր համակարգիչները դեռևս գերակայում

[4] https://www.wolfgangdigital.com

են՝ որպես էլեկտրոնային գործարքը ավարտին հասցնելու միջոց, իսկ բջջային սարքերը՝ որպես ապրանք որոնելու և ուսումնասիրելու միջոց: Այս երևույթը առավել ակնհայտ է դառնում, երբ խոսքը վերաբերում է թանկարժեք ապրանքների կամ ծառայությունների գնումներին, ինչպիսիք են ՝օրինակ հանգստի շրջագայություն գնելը:

Գծապատկեր 3. Դիտումների և կատարված գնումների մասնաբաժինները բջջային սարքերի և համակարգիչների միջոցով




Այսպիսով, բջջային օգտվողներն այցելում են կայք՝ ուսումնասիրելու ապագա գնումները, այնուհետև անցում են կատարում սեղանադիր համակարգչին՝ կատարելու և ավարտին հասցնելու գնման գործարքը: Հետևաբար, չպետք է անտեսել այս փաստը և «բջջայինից օգտվող» և «համակարգչից օգտվող» հասկացությունների ներքո դիտարկել տարբեր մարդկանց, քանի որ բջջայինից օգտվողը մեկ րոպեի ընթացքում կարող է վերածվել համակարգչից օգտվողի:

Այս կարևոր փաստը պետք է արտացոլվի նաև էլեկտրոնային խանութի փոստային ռազմավարության մեջ, օրինակ, ուղարկելով նամակ հաճախորդին, որը կհիշեցնի և ցույց կտա շարժական սարքից դիտված ապրանքները՝ դրանով իսկ աննկատելիորեն դրդելով գործարքի իրագործմանը:

**3. Գնալով թեժանում է մրցակցությունը էլեկտրոնային առևտրի բնագավառում**

Էլեկտրոնային շուկա են մուտք գործում գնալով ավելի մեծ թվով երիտասարդ ընկերություններ, իսկ առկա բրենդներն էլ շարունակում են ակտիվորեն զարգանալ էլէկտրոնային միջավայրում:

Ակնկալվում է, որ 2018թ էլեկտրոնային առևտրի բնագավառում մրցակցության նոր մակարդակ կձևավորվի և մոտ ապագայում մենք ականատես կլինենք մարքեթինգային գործիքների տեղատարափի: Եթե 2011թ օգտագործվում էր մոտ 150 անուն մարքեթինգային գործիք, ապա այսօր նրանց թիվը գերազանցում է 3500-ը: Այդ գործիքները զարգանում են՝ օգնելով մարքեթոլոգներին և որքան շատ գործիքներ են մատչելի լինում, այնքան մեծ է լինում օգուտը:[5] Սակայն 2018թ մրցակցության աճը իսկական գլխացավանք է դառնալու մարքեթոլոգների համար՝ առաջացնելով բովանդակային շոկ:

Խելամիտ և ճկուն մարքեթոլոգները ստիպված կլինեն ստեղծել բացառիկ և յուրօրինակ մարքեթինգային գործիքներ, որպեսզի առանձնանան մրցակիցների ամբոխից և կարողանան դիմակայել մրցակցությանը:

**4. Արհեստական ինտելեկտի օգտագործումը խելացի կանխատեսումներ կատարելու համար**

Մարքեթոլոգների համար մատչելի տվյալների ծավալը ընդլայնել է հնարավորությունները նպատակային հաճախորդների հետ աշխատելու հարցում: Սակայն, հնարավորությունների ընդլայնումը չի հանգեցրել արդյունավետության բարձրացման:

Ինչպես կարող են հսկայական ծավալների հասնող տվյալները և հիպեր թիրախավորումը ազդել այն հաճախորդի գնման որոշման վրա, եթե շաբաթներ, ամիսներ շարունակ գովազդում են նրա կողմից արդեն իսկ ձեռք բերված ապրանքը:

Իրականում այս երևույթը աշխարհում գոյություն ունեցող ամենավատ թիրախավորումն է, քանի որ գովազդվում է այնպիսի ապրանք, որը կոնկրետ սպառողը ամենայն հավանականությամբ այլևս չի պատրաստվում գնել այն: Թիրախավորումը առաջին հերթին պետք է խելացիորեն կազմակերպված լինի: Հենց այս բացթողումն է գալիս լրացնելու արհեստական ինտելեկտը:

---

[5] Marketing for Small Businesses in Easy Steps -Julia Doherty, 2016

Վերջին երեք տարիների ընթացքում արագորեն աճում է արհեստական ինտելեկտի խնդիրներով զբաղվող նորաստեղծական նախագծերի ֆինանսավորումը Վերջին երեք տարիների ընթացքում արագորեն աճում է արհեստական ինտելեկտի խնդիրներով զբաղվող նորաստեղծական նախագծերի ֆինանսավորումը՝ արձանագրելով ռեկորդային թվով գործարքներ: Այս տեխնոլոգիաներն էլ գնալով ձեռք են բերում արժանապատիվ ճանաչում, քանի որ հենց դրանց շնորհիվ է հնարավոր դառնում ուսումնասիրել կոնկրետ սպառողի հետաքրքրություններն ու շահերը և կազմակերպել նրա համար առավել արդյունավետ թիրախավորված ու անհատականացված գովազդ:[6]

**5. Ռոբոտ-զրուցակիցներ (Chatbots)**

Ռոբոտ-զրուցակիցները դարձան 2017թ շուկայավարման ամենաազդեցիկ տեխնոլոգիաները և ձեռք բերեցին պայթունավտանգ ժողովրդականություն, թեև նրանք հայտնվել էին ավելի վաղ:

Բոտը (bot) ծրագիր է, որը ընդօրինակում է օգտագործողին: Նախկինում դրանք օգտագործվել են հիմնականում կրկնվող խնդիրների ավտոմատացման համար: Այժմ տեխնոլոգիան այնքան է զարգացել, որ այն կարողանում է կատարել ավելի բարդ գործառույթներ: Ռոբոտ-զրուցակիցը ընդօրինակում է այն անձին, ում հետ հաղորդակցվում եք: Երբեմն դրանց անվանում են նաև սուրհանդակային ռոբոտներ (Messenger bots), քանի որ երկխոսությունը սովորաբար կատարվում է հաղորդագրությունների փոխանակման հավելվածներով:

Բոտերը կարող են հանդես գալ որպես կենդանի օգնական, միևնույն ժամանակ ստիպված չեք լինում աշխատավարձ վճարել կամ փնտրել համապատասխան պաշտոնի թեկնածու: Այն ստեղծում է հնարավորությունների հսկայական օվկիանոս: Օրինակ, տուրիստական կայքում բոտը կարող է հարցնել ձեր նախասիրությունների մասին, առաջարկել հյուրանոցների մի քանի տարբերակներ, համեմատել գները և պատվիրել ձեր նախընտրած ամենահարմարավետ տարբերակը:

2016թ սեպտեմբերին Ֆեյսբուքը (Facebook) իր Մեսենջեր (Messenger) հարթակի վրա տեղադրեց այս գործառույթը, որպեսզի

[6] UNITED NATIONS CONFERENCE ON TRADE AND DEVELOPMENT, “ELECTRONIC COMMERCE:LEGAL CONSIDERATIONS”, the UNCTAD secretariat,2015

բոտերի օգնությամբ սպառողը գնումներ կատարի:[7] Շուտով այս գործառույթը կդադարի հանդես գալ որպես փորձարարական նորություն և կդառնա սովորական երևույթ՝ հարթելով սպառողի ճանապարհը:

**6. Անհատականացված վաճառող տեսանյութեր**

Վաճառող տեսանյութը չի հանդիսանում բացարձակ նոր մեթոդ: Յութուբը (YouTube) գործարկում է այս տեխնոլոգիան 2015 թ-ից սկսած: Այն երևույթը, երբ տեսանյութը դիտելու ընթացքում փոքր նկարներ են հայտնվում, սխալ կլինի համարել տպավորիչ և արտասովոր: Սակայն ակնկալվում է, որ 2018թ-ին իրավիճակը կփոխվի, և կստեղծվի ծրագրային ապահովմամբ անհատականացված տեսանյութ՝ զգալիորեն փոխելով վաճառքի ձևը տեսանյութի միջոցով: Սա ընդամենը ժամանակի խնդիր է, որը դառնալու է էլեկտրոնային առևտրի գովազդի նոր ձևաչափ:

Այսպիսով՝ էլեկտրոնային առևտուրը արագ զարգացող ենթաճյուղ է, որն ակնթարթորեն արձագանքում է այդ բնագավառում դիտվող ցանկացած միտման: Ահա թե ինչու ընկերության մարքեթինգային ռազմավարության պատասխանատուները պետք է գիտակցեն թվարկված միտումներից յուրաքանչյուրի կարևորությունը:

## Ամփոփում

Էլեկտրոնային առևտուրը արագ զարգացող ենթաճյուղ է, որն ակնթարթորեն արձագանքում է ամենաթարմ միտումներին: Սա նշանակում է, որ ռազմավարության մեջ նույնիսկ ամենաչնչին թերացումները կարող են ընկերությանը դուրս մղել շուկայից: Ահա թե ինչու ընկերության մարքեթինգային ռազմավարության պատասխանատուները պետք է գիտակցեն թվարկված միտումներից յուրաքանչյուրի կարևորությունը:

*Բանալի բառեր*՝ էլեկտրոնային առևտուր, էլեկտրոնային մարքեթինգի, մարքեթինգային ռազմավարություն, արհեստական ինտելեկտ, ռոբոտ-զրուցակիցներ (չատբոտ):

---

[7] www.businessinsider.com/examples-brands-companies-chatbots

## Գրականություն


1. Marketing for Small Businesses in Easy Steps -Julia Doherty, 2015
2. Strategy Rules- David B. Yoffie, Michael A. Cusumano: Five Timeless Lessons from Bill Gates, Andy Grove, and Steve Jobs, 2015
3. UNITED NATIONS CONFERENCE ON TRADE AND DEVELOPMENT, “ELECTRONIC COMMERCE:LEGAL CONSIDERATIONS”, the UNCTAD secretariat,2012
4. http://www.smartinsights.com/
5. https://www.emarketer.com/
6. https://www.wolfgangdigital.com
7. www.businessinsider.com/examples-brands-companies-chatbot


# ГЛОБАЛЬНЫЕ ТРЕНДЫ ЭЛЕКТРОННОЙ КОММЕРЦИИ И ИХ РОЛЬ В МАРКЕТИНГОВОМ СТРАТЕГИИ КОМПАНИИ


**Ануш Мовсесовна Акопян**
ЕРОА, Кафедра Экономики и Управления, преподаватель


## Резюме


Электронная коммерция продолжает показывать быстрый рост, но конкуренция растет быстрее самого рынка. Это означает, что клиентов будет труднее завоевать, легче потерять, а сами они будут всё капризнее относиться к ценам и опыту взаимодействия с брендом.

Чтобы не оказаться среди отстающих, нужно знать о последних тенденциях в электронной коммерции и уметь извлекать из них выгоду. Эти тенденции носят глобальный характер, имеют огромные последствия и не собираются исчезать в ближайшее время.

Интернет-маркетологи должны учесть их при выработке рекламной стратегии, если хотят добиться успеха в 2017 году.



*Ключевые слова:* электронная коммерция, электронный маркетинг, маркетинговая стратегия, искусственный интеллект, робот-собеседники (чатботы):

## ELECTRONIC COMMERCE GLOBAL TRENDS AND THEIR ROLE IN MARKETING STRATEGY OF THE COMPANY

**Anush Hakobyan**
EREA, Chair of Economics and Management, Lecturer

**Summary**

E-commerce continues to grow rapidly, but with the huge market acting as a magnet to brands large and small, competition will ramp up faster than the total growth of the market. This means customers will be harder to win, easier to lose and fussier on price and user experience.

To avoid falling behind the ever more fierce competition we need to both be aware of and benefit from the latest trends in e-commerce. These megatrends are global, have huge implications.

E-commerce marketers have to itegrate them into their planning to be successful coming year.

*Keywords:* e-commerce, e-marketing, marketing strategy, artificial intelligence, chatbots.

# ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇԵՐՏԱՎՈՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

***Սիմոնյան Մանուչար Ժորայի***
*փնփ.թ.*
*ԵԿՏԱ, Գավառի մասնաճյուղ, փնօրեն*

Գոյություն ունեն մրցակցության և կազմակերպության ռազմավարության բազմաթիվ ուղիներ՝ արտադրական, ապրանքային, գնային և այլն: Սակայն ցանկացած ռազմավարության հիմքում ընկած է (կամ էլ պետք է ընկած լինի) մրցակցային առավելությունը: Ուստի ռազմավարական կառավարումը կարելի է սահմանել որպես մրցակցային առավելությունների կառավարման գործընթաց:

Մրցակցային առավելություն ասելով կարելի է հասկանալ կազմակերպության դիրքը շուկայում, որը հնարավորություն է ընձեռում նրան հաղթահարել մրցակցային ուժերը և իր կողմը գրավել գնորդներին:

Մրցակցային առավելությունը կազմակերպությանը հնարավորություն է տալիս ապահովել միջինից բարձր շահութաբերություն տվյալ ճյուղի այլ կազմակերպությունների նկատմամբ կամ էլ տվյալ շուկայի հատվածում (որը ապահովում է ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործում) և գրավել հաստատուն դիրք շուկայում:

Հայտնի է, որ կազմակերպության մրցակցային առավելությունը ճյուղում որոշվում է նաև նպատակային շուկայի ընդարձակությամբ: Այդ պատճառով կազմակերպության ընդհանուր ռազմավարության ընտրությունից առաջ անհրաժեշտ է որոշել մի շարք սահմանափակող գործոններ [1].

1. արտադրանքի անվանացանկը, որոնք նա պետք է արտադրի, բացի դրանից նաև հավանական գնորդների տիպը,
2. արտադրանքի բաշխման նախատեսվող ուղիները,
3. տեղանքը, որտեղ նա պետք է վաճառի արտադրանքը և մի շարք հարակից ճյուղերը, որոնց հետ պատրաստվում է մրցակցել:

---

[1] Գործնական մենեջմենթ (Ուսումնական ձեռնարկ): Հ.1-ին, Վ. Հ. Առաքելյան, Լ. Հ. Սիմոնյան, Ա. Ս. Թադևոսյան, Ա. Գ. Շահոյան, Երևան, «Ճարտարագետ» 2003:

Այս դեպքում կազմակերպությունը կարող է ընտրել զանգվածային շուկան կամ շուկայական առևտրախորշը:

Զուգակցելով նպատակային շուկաները հիմնական ռազմավարության հետ, կազմակերպություններն ընդլայնում են ռազմավարության ընտրության ոլորտը: Երբ ծախսերի նվազեցման և արտադրանքի շերտավորման ռազմավարությունները նպատակաուղղվում են մասսայական շուկա, ապա դրանք համապատասխանաբար անվանվում են առաջնություն ծախքերով և առաջնություն արտադրանքի շերտավորումով: Երբ այդ ռազմավարություններն ուղղված են դեպի շուկայական առևտրախորշերը, անվանվում են կիզակետված: Կոնկրետ մրցակցային ռազմավարության ընտրությունը էապես կախված է ինչպես կազմակերպության ռազմավարական հզորությունից, այնպես էլ ռեսուրսների ընդլայնման հնարավորություններից: Ուստի կազմակերպության կողմից ընտրված ռազմավարության իրագործումը շատ դեպքում որոշվում է նրա ներքին միջավայրով:

Ծախսերի գծով առավելության ռազմավարությունը կողմնորոշված է սպասարկելու ամբողջ շուկան ստանդարտացված ապրանքներով, շերտավորման ռազմավարությունը, հակառակ նախորդի, ուղղված է արտադրելու հատուկ արտադրանք, որը հանդիսանում է ստանդարտ արտադրանքի վերափոխություն: Այդպիսի արտադրանքը նախատեսված է այն սպառողների համար, որոնց չի բավարարում ստանդարտ արտադրանքը, և նրանք պատրաստ են վճարել արտադրանքի եզակիության համար:

Արտադրանքի շերտավորումը (կամ այլ կերպ ասած՝ ապրանքի մեկուսացումը շուկայում) կազմակերպության հնարավորությունն է ապահովելու եզակիություն և ավելի բարձր արժեք ունեցող (համեմատած մրցակիցների) արտադրանք (որակի տեսանկյունից) գնորդների համար՝ դրա առաքման մեթոդների, հետվաճառքային սպասարկման հատուկ բնութագրերի առավելության պայմաններում: Այն ենթադրում է պարզ, հասկանալի սպառողական պահանջմունք և նախապատվություն է տալիս գնորդների առջև պարտավորությունների կատարմանը, սեփական կազմակերպության հնարավորությունների իմացությանը, մշտական նորամուծությունների իրականացմանը:

Արտադրանքի շերտավորման ներուժային հիմք են հանդիսանում հետևյալ գործոնները՝ գնորդի համար արտադրանքի արժեքի բարձ-

րացումը, նրանց հոգեբանական բավարարվածությունը: Արտադրանքի շերտավորման ընթացքում նրա ինքնարժեքը բարձրանում է, սակայն ծախսերը այդ դեպքում ունեն երկրորդական նշանակություն, քանի որ դրանք փոխհատուցվում են, որպես կանոն, բարձր գներ սահմանելու հաշվին: Այդ պատճառով արտադրանքի շերտավորումը հնարավորություն է տալիս շեղվել գնային մրցակցությունից, «ցրվել» մրցակիցների հետ տարբեր շուկայական հատվածներ: Ուստի շերտավորման ռազմավարությունը հնարավորություն է ստեղծում շուկա բերել բազմազան ապրանքներ՝ առաջադրելով գնորդներին բարձր որակի, առանձնահատուկ բնույթի արտադրանք՝ թողարկված բարձր տեխնոլոգիաների կիրառման միջոցով, ապահովելով գնորդներին առաջնակարգ ծառայություն և այլն: Սակայն ոչ բոլոր ապրանքներն են, որ հնարավոր է շերտավորել այսինքն հարմարեցնել որոշակի սպառողների խմբի պահանջմունքներին: Այդպիսի օրինակ կարող են ծառայել բազմակողմանի, ստանդարտավորված ապրանքները ինչպիսիք են նավթը, գազը, հաղորդալարերը և այլն:

Ապրանքի շերտավորման գործընթացի հիմնական փուլերը բերված են գծանկար 1-ում [2]:

Դրանք ցույց են տալիս, որ տվյալ ռազմավարության հաջող իրականացման համար կազմակերպությունը պետք է մանրակրկիտ ուսումնասիրի սպառողների պահանջմունքները և վարքը, որպեսզի հասկանա, թե նրանք ինչն են համարում կարևոր ու արժեքավոր և ինչի համար են պատրաստ վճարել: Այնուհետև հաշվի առնելով ստացված արդյունքները, կազմակերպությունը իր արտադրանքին ավելացնում է մեկ կամ մի քանի տարբերակիչ բնութագրեր: Մրցակցային առավելությունը առաջանում է, երբ գնորդը նախապատվություն է տալիս այն ապրանքային բնութագրերին,որոնցով կազմակերպությունունը թողարկում է արտադրանքը:

[2] Գործնական մենեջմենթ (Ուսումնական ձեռնարկ): Հ.1-ին, Վ. Հ. Առաքելյան, Լ. Հ. Սիմոնյան, Ա. Ս. Թադևոսյան, Ա. Գ. Շահոյան, Երևան, «Ճարտարագետ» 2003:

*Գծանկար 1.* Ապրանքների շերտավորման հնարավորությունները




Շերտավորումը կարող է լինել անհաջող, եթե բարձրացրած գինը. որը գնորդը պատրաստ է վճարել, չի փոխհատուցում լրացուցիչ ծախսերը, որոնք կապված են արտադրանքի տարբերակիչ բնութագրերը ապահովելու հետ:

Սովորաբար առանձնացնում են ապրանքների շերտավորում, անձնակազմի շերտավորում, սպասարկման և իմիջի շերտավորում հասկացությունները: Ապրանքային շերտավորումը ենթադրում է արտադրանքի առաջարկումը նոր բնութագրերի, լավագույն ձևավորմամբ, քան մրցակիցներինն է: Արտադրանքի լայն շերտավորումը (ավտոմեքենա, կենցաղային տեխնիկա) շուկայական քաղաքականության հետևանք է և սովորական երևույթ: Արտադրանքի շերտավորման համար հիմք է ծառայում կազմակերպության արտադրանքի անվանացանկը, որը ներկայացնում է նմանատիպ կամ տեխնոլոգիապես սերտորեն իրար հետ կապված ապրանքներ: Ապրանքային շերտավորման շրջանակներում կազմակերպությունը կարող է առաջադրել սահմանափակ անվանացանկ (օրինակ, ավտոմեքենա BMW), պարզ

է, որ այս դեպքում խոսքը վերաբերում է կիզակետման շերտավորման ռազմավարությանը կամ էլ արտադրանքի լայն անվանացանկին:

Միջազգային մրցակցությունը հրամայական պահանջ է ներկայացնում հանրապետության ձեռնարկություններին իրականացնել ապրանքային շերտավորման ռազմավարություն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս ասպարեզում հաջողությունների են հասել թեթև արդյունաբերության կազմակերպությունները: Սպասարկման շերտավորման ռազմավարությունը ենթադրում է տարաբնույթ և ավելի բարձր (համեմատած մրցակիցների հետ) մակարդակի ծառայությունների առաջարկումը՝ զուգընթաց վաճառված ապրանքներին (մատակարարման, սարքավորումների տեղակայման, հետվաճառքային սպասարկման արագություն և հուսալիություն, հաճախորդների ուսուցում և խորհրդատվություն): Հարկ է նշել, որ այդպիսի ռազմավարությունը լայն տարածում է ստացել հանրապետության առևտրային կազմակերպություններում:

Անձնակազմի շերտավորման ռազմավարությունը ենթադրում է անձնակազմի վարձումը և վերապատրաստումը, նրանք իրականացնում են իրենց աշխատանքային ֆունկցիաները հաճախորդների հետ ավելի արդյունավետ, քան մրցակցի անձնակազմը: Անձնակազմի շերտավորման ռազմավարությունը արդյունավետ է, երբ այն օգտագործվում է ծառայությունների ոլորտում սպասարկման շերտավորման ռազմավարության հետ:

Իմիջի շերտավորման ռազմավարությունը ենթադրում է կազմակերպության կամ արտադրանքի իմիջի ստեղծում, որը լավագույն կողմերով տարբերվում է մրցակիցներից: Այսպես, հայտնի շատ ծխախոտների մակնիշներ ունեն համային որակ, Marlboro-ի մեկ տեսականին իր իմիջի հաշվին գրավել է համաշխարհային ծխախոտի շուկայի մոտ 30 %-ը՝ օգտագործելով իմիջի շերտավորման ռազմավարությունը: Ֆիրման կարող է թողարկել տարբեր տեսականու արտադրանք շուկայի տարբեր հատվածների համար:

Հարկ է նշել, որ իմիջի շերտավորման ռազմավարությունը լայն կիրառություն է ստացել հանրապետության տնտեսության մի շարք ոլորտներում: Այսպես, ծխախոտի արտադրության ոլորտում «Գրանդ Տոբակո»-ն, «Մասիս Տոբակո»-ն թողարկում են տարբեր տեսականու ծխախոտներ՝ ելնելով աճող պահանջներից:

Կախված արտադրանքի և կազմակերպության առանձնահատկություններից, միաժամանակ հնարավոր է իրականացնել շերտավորման մի քանի ուղղություններ: Գլխավորն այն չէ, որ պետք է հասնել արտադրանքի եզակիության ապահովմանը, այլ անհրաժեշտ է, որ այն ընդունվի գնորդների կողմից, որոնք վճարում են շերտավորման ծախսերը: Շերտավորումը այն իրական ուղին է, որի միջոցով կազմակերպությունը կարող է ստանալ միջճյուղային շահույթի մակարդակից ավելի բարձր շահույթ՝ պայմանավորված արտադրանքի առանձնահատկություններով, տվյալ ապրանքանիշի նկատմամբ գնորդների հակվածությամբ, որը նվազեցնում է նրանց զգացողությունը գնի նկատմամբ, իսկ աճող ծախսերը կարելի է տարածել գնորդների վրա: Որոշակի ապրանքանիշի նկատմամբ գնորդների հակվածությունը արգելք է հանդիսանում ճյուղ մուտք գործելու համար: Նոր ֆիրմաների արտադրանքը պետք է ապահովի հատուկ բնութագրեր, որոնք հնարավորություն են ընձեռում հաղթելու մրցակցային պայքարում:

Այսպիսով, կազմակերպության և նրա արտադրանքի շերտավորման (եզակիության) հնարավոր աղբյուրներն են.

- արտադրանքի (ապրանքի ) բարձր որակը, հուսալիությունը,
- կազմակերպության իմիջը, ապրանքանիշը, ապրանքի կարգավիճակը,
- թողարկվող արտադրանքի անվանացանկը,
- տեխնիկական առաջնությունները, նորամուծությունները,
- տրամադրվող սպասարկումը (վարկեր, հաճախորդների սպասարկում),
- մարքեթինգային գործառույթների առանձնացումը (գովազդի վրա կատարվող ծախսեր, առաքման ուղիներ),
- կիրառվող տեխնոլոգիաները (մշակման ճշտություն),
- աշխատողների որակավորումը և փորձը (հատկապես բանկային գործունեության ոլորտում),
- գործունեության վերահսկում,
- նպատակահարմար տեղադրությունը (օրինակ, մանրածախ խանութները).
- ուղղահայաց ինտեգրման մակարդակը:

Եզակիության աղբյուրները բազմաբնույթ և առանձնահատուկ են ամեն մի ճյուղի և կազմակերպության համար: Ծախքերի գծով առա-

վելության կարելի է հասնել՝ սահմանելով ծախսերի կառուցվածքի արդյունավետ ուղի: Շերտավորմանը հնարավոր է հասնել տարբեր ուղիներով: Այդ կարող է լինել ապրանքանիշի հեղինակությունը, ծառայությունների լրիվ համալիրը, արտադրանքի լրիվ անվանացանկը:

Ինչպես ծախսերի առաջնության գծով ռազմավարությունը, այնպես էլ հաջողված շերտավորումը հնարավորություն է ստեղծում ճյուղում մրցակցել հակառակ հիմնական մյուս ուժերի: Հարկ է նշել, որ շերտավորման ռազմավարությունը ենթադրում է ԳՀՓԿԱ ստորաբաժանումների և ճկուն արտադրության զարգացման անհրաժեշտություն, որը հնարավորություն է ընձեռում օպերատիվ կերպով ձևափոխել արտադրությունը՝ փոփոխող շուկայի պահանջմունքներին համապատասխան, կազմակերպությունում զարգացնել մարքեթինգային ծառայությունները, ժամանակին ընկալել գնորդների ցանկությունները նախապատվությունները:

Կարևոր բնութագրեր են հանդիսանում նաև կազմակերպության համբավը նրա արտադրանքի որակի մակարդակը, ստեղծագործական մթնոլորտը, բարձր որակավորում ունեցող աշխատակիցների ընդգրկումը համագործակցության նպատակով և այլն: Պարզ է, որ շերտավորված ապրանքները վաճառվում են ավելի բարձր գներով: Մյուս կողմից, որպեսզի գնորդները իրականում ընկալեն ապրանքների շերտավորման արժեքը, անհրաժետ է որոշակի շուկայական ազդանշաններ: Հետևաբար շերտավորման ռազմավարությունը ենթադրում է մարքեթինգի ոլորտում «Նոու-հաու»-ի առկայությունը, որը պահանջում է գործառնական մարքեթինգում խոշոր ներդրումներ: Այդ կարող է լինել ինտենսիվ գովազդը, հրապուրիչ փաթեթավորումը, կառուցվածքային առանձնահատկությունները, շենքերի ինտերիերը, որտեղ իրագործում են գնումները ֆիրմայի բարի համբավը, մարքեթինգային ոլորտի աշխատակիցների մեծ փորձը և այլն:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետությունում, բացառությամբ ծխախոտի, թեթև և սննդի արտադրությունների, առայժմ շերտավորման ռազմավարությունը լայն կիրառություն չի ստացել, հատկապես՝ ապրանքանիշների շերտավորումը: Ուստի անհրաժեշտ է, որ կազմակերպությունների ղեկավարները, ելնելով առաջավոր երկրների ֆիրմաների փորձից, մշակեն այնպիսի ռազմավարական ծրագրեր, որոնք հնարավորություն կտան իրացնել շերտա-

վորման ռազմավարությունը, ինչը կարող է ապահովել առավելագույն շահույթ և հասցնել միտված նպատակին:

**Ամփոփում**

Հոդվածում քննարկվել է ապրանքի շերտավորման ռազմավարության մշակման արդիական խնդիրները: Մասնագիտացված գրականության մեջ գոյություն ունեցող մոտեցումների վերլուծության արդյունքում հեղինակը կարևորել է մրցակցային շուկայում և մրցունակության ապահովման գործընթացում ապրանքի շերտավորման դերն ու նշանակությունը: Քննարկվել է այս ռազմավարության կիրառման առանձնահատկությունները արդյունաբերական ձեռնարկություններում:

Հեղինակը գտնում է, որ անհրաժեշտ է այս ուղղությամբ ուսումնասիրել առաջավոր երկրների փորձը և մշակել այնպիսի ռազմավարական ծրագրեր, որոնք հնարավորություն կտան իրականացնել արդյունավետ շերտավորման ռազմավարություն:

*Բանալի բառեր.* ապրանք, ռազմավարություն, արտադրահիքի շերտավորում, շուկա, մրցակցություն, մրցունակություն:

**Գրականություն**

1. Ансофф И. Стратегическое управление. М., Экономика, 1989
2. Антонов В., Уварова Г. Экономический советник менеджера. Минск, Финансы, 1996
3. Боумен К. Основы стратегического менеджмента. М., 1997
4. Бест М. Новая конкуренция. М., Т.Э.И.С, 2002
5. Дойль П. Менеджмент “стратегия тактика”. СПб.: Питер, 2001
6. Գործնական մենեջմենթ (Ուսումնական ձեռնարկ): Հ. 1-ին, Վ.Հ.Առաքելյան, Լ. Հ. Սիմոնյան, Ա. Ս. Թադևոսյան, Ա. Գ. Շահոյան, Երևան, «ճարտարագետ» 2003:

## О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ СТРАТЕГИИ РАССЛОЕНИЕ ПРОДУКЦИИ

**Симонян Манучар Жоревич**
канд.экон. наук
Филиал ЕОРА в г. Гавар, директор

### Резюме

В статье обсуждаются актуальные вопросы обработки стратегии дифференциации продукции.

Через анализ подходов, которые представлены в специализированной литературе, автор выявил роль и значимость расслоение продукции в развитии и повышении конкурентоспособности продукции в процессе обеспечивания конкурентоспособности на конкурентном рынке.

Были изучены особенности применения данной стратегии в промышленных организациях.

*Ключевые слова:* товар, стратегия, рынок, расслоение продукции, конкуренция, конкурентоспособность.

## SOME QUESTIONS OF PRODUCTION STRATIFICATION STRATEGY

**Manuchar Simonyan**
*Candidate of Economic Sciences*
EREA, Gavar branch, director

### Summary

The questions on the first market entry as well as the current problems of the synergistic strategy have been discussed in the article. The application of possibilities which will enable the use of effective strategies in order to develop competitive advantage in manufacturing organizations have been reviewed and suggested. The essence of the concept of synergy has been revealed and its role in ensuring the financial of organizations.

*Keywords:* product, market, competition, competitiveness, strategy, stratification.

# ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

***Սիմոնյան Մանուչար Ժորայի***
*փնփ.թ.*
*ԵԿՏԱ, Գավառի մասնաճյուղ, փնօրեն*

Յուրաքանչյուր երկրի սոցիալտնտեսական զարգացման հիմնական գործոնը նրա գիտատեխնիկական ներուժն է, ինչը նորմուծությունների կիրառման իրական նախապայմանն է: Այդ են վկայում ՀՀ-ում կատարված ուսումնասիրությունների արդյունքները, որոնք ցույց են տալիս, որ ՀՀ-ում նորամուծությունների ազգային համակարգի ձևավորման ռազմավարական հորիզոնները (տեսլականները) իրենց մեջ ներառում են հետևյալ փուլերը՝

- Մինչև 2014թ.- Առկա կարողությունների զարգացում և բացերի լրացում,
- Մինչ 2017թ.-Նախաձեռնությունների մասշտաբայնացում և կարողությունների հզորացում,
- Մինչև 2020 թ. - Հայաստանը ՀումՄ գլոբալ կենտրոն[1]:

Կատարված ուսումնասիրրությունները և առաջավոր երկրների փորձը այս ասպարեզում ցույց է տալիս, որ ՀՀ տնտեսության մեջ առանցքային են համարվում հետևյալ մարտահրավերները

1. Գլոբալ մասշտաբով զարգացած և զարգացող երկրների միջև տեխնոլոգիական խզվածքի կտրուկ մեծացումը՝ ի հաշիվ զարգացած տնտեսություններում նորագույն տեխնոլոգիական փնջերի՝ ի դեմս 5-րդ և 6-րդ կոնդրատևյան ալիքների տեխնոլոգիական մշակումների արմատավորման ու դրանց հիման վրա տնտեսական թռիչքի ապահովման:

2. Համաշխարհային շուկայում բարձր տեխնոլոգիական և գիտատար արտադրանքի գծով մրցակցության մակարդակի կտրուկ բարձրացումը. այն գործնականում հիմնական խաղից դուրս է թողնում զարգացող երկրներին ու նրանց վերածում այդ գործընթացի համր դիտորդների, կամ, լավագույն դեպքում, նրանց ուրվագծած տեխնոլո-

[1] Տե՛ս Հավելված ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 17-ի նիստի N 6 արձանագրային որոշման, էջ 6:

գիական շավիղների հլու նմանակողների, կամ հիմնային ռեսուրսների մատակարարների:

3. Համաշխարհային տնտեսության մեջ բարձր տեխնոլոգիական հիմքի վրա արժեստեղծման, մասնավորապես՝ ավելացված արժեքի շղթաների է՛լ ավելի մեծ չափով յուրացումը զարգացած փոքրաթիվ երկրների կողմից, եկամտի ու կենսամակարդակի է՛լ ավելի մեծ չափաբաժիններ է ապահովում այդ երկրների ազգաբնակչության համար՝ աշխարհի բնակչության մեծամասնությանը թողնելով բարեկեցության բարձրացման ոչ մեծ հնարավորություններ: Նմանատիպ կարծիք ունի նաև Ա.Ծ.Մարգարյանը[2]:

Ակնհայտ է որ համաշխարհային շուկայի տեխնոլոգիական զարգացումները իրենց հետքն են թողնում երկրի ռեսուրսային հնարավորությունների և սահմանափակումների վրա, որն իր հերթին էական ազդեցություն ունի նորամուծական քաղաքականության մշակման ու իրականացման վրա:

Այդ են վկայում տարբեր փորձագիտական գնահատումները՝ առաջիկա 1.5-2 տասնամյակների ընթացքում համաշխարհային տնտեսության մեջ բարձր տեխնոլոգիաների հիմքի վրա ձևավորվող նոր վերարտադրական առանցքը, որը հիմնված կլինի 6-րդ կոնդրատևյան տեխնոլոգիական փնջի վրա: Այդ առանցքի հիմնական տեխնոլոգիաները իրենց բնույթով լինելու են **միջառարկայական, միջոլորտային** ու **կոնվերգենտ (համամետ)** տեխնոլոգիաները՝ հիմնված **նանոտեխնոլոգիաների, կենսատեխնոլգիաների** և **տեղեկատվական տեխնոլոգիաների՝** տարաբնույթ ու ոչ ստանդարտ համակցությունների վրա: Տեխնոլոգիական այս փնջերի վրա հիմնված լուծումները թույլ կտան ստանալ սկզբունքորեն նոր ապրանքներ, որոնց պարամետրերն ու սպառողական հատկությունները սկբունքորեն անհասանելի կլինեն 4-րդ կամ 5-րդ «կոնդրատևյան ալիքների» վրա խարսխված տնտեսություններ ունեցող երկրներին:

Ներկայումս ՀՀ-ում խնդիր կա սահմանելու նորամուծական տնտեսության ձևավորման միասնական տեսլական և մշակելու համապարփակ ռազմավարություն, որը կինտեգրի ՀՀ-ում գործող և մեկնարկվող նախաձեռնությունները մեկ միասնական համատեքստում:

---

2 Տե՛ս ՀՀ տնտեսության նորամուծային տեխնոլոգիական արդիականացումը երկարաժամկետ ինստիտուցիոնալ փոխակերպման պայմաններում Մարգարյան Ա. Ծ. էջ 16:

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ-ում գործող և մեկնարկվող նախաձեռնությունների ինստիտուցիոնալ կերպափոխումների վեկտորը պետք է ուղղել դեպի վերը նշված 3 մարտահրավերները, որը կնպաստի քայլերի առավել նպատակաուղղված դարձնելուն և արդյունավետ կիրառմանը: Ակնհայտ է, որ ՀՀ-ում գործող և մեկնարկվող նորամուծական քաղաքականությունները մեկ միասնական համատեքստում դիտարկելով, հնարավորություն է ստեղծվում մշակել նորամուծական տնտեսության համապարփակ ռազմավարություն, որի առանցքը պետք է լինի հետևյալ հիմնխնդիրների լուծումը.

1. Մարդկային կապիտալի զարգացում և արտագաղթի կանխում:
2. Նորամուծական ներդրումային արդյունավետ քաղաքականության իրականացում և խրախուսում:
3. Տնտեսական իրական աճի ապահովում:
4. Արդյունավետ գիտակրթական համակարգի ստեղծում:
5. Վենչուրային ֆիրմաների, հոլդինգային ընկերությունների և կլաստերների ստեղծում ու զարգացում:
6. Գիտատեխնիկական ներուժի զարգացում ու արդյունավետ օգտագործում:
7. Օրենսդրական և դատական համակարգերի բարելավում:
8. Կանխատեսելի հարկային քաղաքականության իրականացում և այլն:

Այս հիմնախնդիրների լուծման առանցքում ընկած է ժողովրդագրական ահազանգող իրավիճակը, որը մեր հանրությանն ուղված առաջնային մարտահրավերն է: Քանի որ այն ունի սոցիալտնտեսական, քաղաքական և ռազմավարական լուրջ նշանակություն:

Հատկանշական է, որ ժողովրդագրության հիմնահարցերի վերաբերյալ 2014 թվականին կառավարությունը կատարել է որոշակի աշխատանքներ, որոնք բխել են ՀՀ ժողովրդագրական քաղաքականության ռազմավարության և դրա իրականացումն ապահովող միջոցառումների դրույթներից՝ հաշվի առնելով հանրապետությունում 2013թ. ընթացքում արձանագրված ժողովրդագրական զարգացումները: 2014 թվականին մշակվել է «Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2015-2017թթ. ազգային ծրագիրը»[3],

[3] http://www.parliament.am/draft_docs5/K-772/K-772_hashvetvutyun.pdf (մուտքի օրը՝ 14.05.2016թ.)

որում ներառված են բնակչության բնական աճի ապահովմանը՝ ծնունդների նյութական խրախուսմանը, մահացության կրճատմանը, երիտասարդ և բազմազավակ ընտանիքների աջակցությանն ուղղված միջոցառումներ: 2014 թվականի հունվարի 1-ից ներդրվել է ծնունդների խրախուսմանն ու բազմազավակ ընտանիքների կյանքի պայմանների բարելավմանն ուղղված՝ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում ընտանիքներին տրամադրվող պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակներում 3-րդ և 4-րդ երեխայի ծննդյան դեպքում նպաստի չափը սահմանվել է 1 մլն դրամ, իսկ 5-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 1.5 մլն դրամ: Ընդ որում, երկու դեպքում էլ 500 հազար դրամը տրամադրվում է կանխիկ, իսկ մնացած մասը՝ անկանխիկ, որպես ընտանեկան դրամագլուխ:

Հարկ է նշել, որ թերևս վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից մշակվել և իրականացվում են բազում ծրագրեր՝ ժողովրդագրական վիճակը բարելավելու նպատակով, սակայն ներկա արտագաղթը ունի ավելի խորը պատճառներ, մասնավորապես երկրի տնտեսական աճի ցածր մակարդակը, անվստահությունը, գիտական ներուժի արտագաղթը և այլն: Ինչ վերաբերվում է երկրի տնտեսական աճի զարգացմանը, պետք է նշել, որ համաձայն 2014-2025թթ. մակրոտնտեսական կանխատեսումների [[4]]՝ առաջիկա 11 տարվա ընթացքում, ըստ ծրագրի, ՀՆԱ-ի ծախսային կառուցվածքում ներդրումների մասնաբաժինն աճի միտում կունենա՝ կայունանալով 28-29% մակարդակի վրա: Միաժամանակ ակնկալվում է, որ կանխատեսվող տարիներին ներդրումների կառուցվածքում կգերակշռի ճգնաժամից հետո սկզբնավորված միտումը. ոչ արտադրական նշանակության կապիտալ շինարարությունը (հատկապես՝ բնակարանների և շենքերի շինարարությունը) կնվազի՝ արտացոլելով վերը նշված ՀՆԱ ճյուղային զարգացումները: Նման իրավիճակում ներդրումները ՀՆԱ-ում կգերազանցեն հետճգնաժամային տարիներին արձանագրված մակարդակը, իսկ արտադրական ներդրումների մակարդակը կբավարարի տնտեսության մյուս ճյուղերի զարգացումը: Այդպիսի զարգացումը հնարավորություն կնձեռի ապագայում 1%-ի աճ ներկայիս 27.9%-ի համեմատ, որը իհարկե լավ է, բայց կարծում եմ ոչ բավարար՝ առկա

[4] http://armef.com/hy/news/verlutsutyun/article_1397275062/ (մուտքի օրը՝ 28.05.2016թ.)

մարտահրավերներին դիմակայելու և տնտեսությունը առավել զարգացնելու համար:

Պարզ է, որ երկրի տնտեսական աճը պայմանավորված է արդյունավետ նորամուծական քաղաքականության իրականցմամբ, ուստի նորամուծական գործունեության աջակցության և խթանման նպատակով ՀՀ-ում իրականացվել են հետևյալ գործընթացները. գործարկվել է Գյումրու տեխնոլոգիական կենտրոնը, և կենտրոնի հիմնանորոգված շենք են տեղափոխվել ժամանակավոր (վարձակալված) տարածքում գործող լաբորատորիաները և մի շարք տեղական ու միջազգային ընկերություններ[5]: 2014թ.Սեպտեմբերի 13-ին հանդիսավոր կերպով տեղի է ունեցել կենտրոնի պաշտոնական բացումը: Կենտրոնում ներկայումս տեղակայված են «Դ-Լինկ», «Դիջիթըլ Փոմըգրանեթ», «ՋիԷնՍի-Ալֆա», «Ի-Վորքս», «Skyline ստուդիա», «Թայմ Փրոդաքշըն», Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն, «Գյումրու լեզուների տուն» կազմակերպությունները: ԳՏԿ-ն նախաձեռնել է «Start-up ակումբը», որի նպատակն է զարգացնել ձեռներեցությունը՝ երիտասարդների շրջանում:Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ, որոնց մասնակցել են 810 ուսանողներ և 2014 թվականի սոցիալ-տնտեսական զարգացման քաղաքականության հիմնական ուղղությունների 7 մասնագետներ: Բիզնես աջակցություն ու խորհրդատվություն է տրամադրվել 176 ընկերությունների և թիմերի: ԳՏԿ-ում իրականացվել են մի շարք միջոցառումներ, այդ թվում՝ Գյումրիում առաջին միջազգային խոշոր տեխնոլոգիական «iGyumri» համաժողովը: Ուռուցքաբանության գերազանցության հայկական կենտրոնում Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի (ՀԱՄՀ) հետ համագործակցության շրջանակում Լուվենի կաթոլիկ համալսարանի (Բելգիա) հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնում արտադրվելիք FDG [18F] իզոտոպը համալսարանի բժշկական դպրոցի նեյրոֆիզիոլոգիական լաբորատորիայի փորձերում օգտագործելու՝ Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիայի մասնագետների ներգրավմամբ, ինչպես նաև բժշկական անձնակազմի հատուկ ուսուցման և վերապատրաստման վերաբերյալ:

---

5 http://www.parliament.am/draft_docs5/K-772/K-772_hashvetvutyun.pdf (մուտքի օրը՝ 14.05.2016թ.)

Կազմակերպվել է «Ցիկլոտրոն ծրագրի վերաբերյալ» պայմանագրի ֆինանսավորման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության (Վարկառու) և «KBC NV» բանկի (Վարկատու) միջև 2010թ. նոյեմբերի 23-ին կնքված վարկային համաձայնագրի վերջնաժամկետի երկարացումը: ՀՀ էկոնոմիկայի նախարարության և IBA ընկերության միջև 2010թ. նոյեմբերի 23-ին կնքված «Ցիկլոտրոն ծրագրի վերաբերյալ» պայմանագրի շրջանակում մատակարարվող SPECT-CT համակցված համակարգը 2014թ. դեկտեմբերի 9-ին բերվել է Հայաստան:

Այս առումով հատկանշական է «ԱՊՀ մասնակից պետություններ-ի ինովացիոն ոլորտում մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածը: Համագործակցության միջպետական ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն ՊՈԱԿ-ում ձևավորել է Ազգային կոնտակտային կենտրոն:

2. Ապահովվել է ԱՊՀ երկրների Գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում համագործակցության միջպետական խորհրդի 13-րդ և 14-րդ նիստերին մասնակցությունը:

3. Տեղի է ունեցել ծրագրի իրականացման 2015-16թթ. միջոցառումների նախագծի և ծրագրի շրջանակում երիտասարդական քաղաքականության հարցերի քննարկում:

Նորամուծական գործունեության աջակցության և խթանման նպատակով կատարված այս քայլերը թերևս զգալի են, սակայն այսօր մենք գտնվում ենք մի փուլում, երբ ստիպված ենք մի քանի անգամ արագ վազել: Այսինքն համաշխարհային տնտեսության այս արագ զարգացումները և փոփոխությունները մեզ ստիպում են վերանայել և արագ կողմնորոշվել վերափոխելու մեր այն ռազմավարական որոշումները, որոնցով հնարավոր կլինի ապահովել ՀՀ տնտեսության կտրուկ վերելքը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ՀՀ տնտեսության կտրուկ վերելքը հնարավոր է ապահովել հատկապես արդյունաբերության և, մասնավորապես, բարձր նորարարական տեխնոլոգիաների ոլորտի զարգացման շնորհիվ: Իսկ ՀՀ-ը վերջին տարիներին բավականին առաջընթաց է գրանցել SS ոլորտում և 2016 թվականի դրությամբ 139 երկրների շարքում գրավում է 56-րդ տեղը:

Հարկ է նշել,որ նորամուծական ներուժի առումով ՀՀ-ն համաձայն «Գլոբալ նորամուծական ներուժի ինդեքս»-ի[6], 2014թ.-ին Հայաստանը աշխարհում գրավել է 79-րդ տեղը, որը 2012թ.-ի համեմատ աճել է 3 կետով, սակայն այդ նորարարական գաղափարները հիմնականում չեն առարկայանում ֆինանսական միջոցների, վստահության, պետական աջակցության բացակայության և այլ պատճառներով:

2015թ. Ապրիլի 11-ին Երևանում կայացած ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԻՏՁՄ) 14-րդ տարեկան համագումարում ներկայացվել է ԻՏՁՄ 2014-2018թթ. ռազմավարության նախագիծը[7], որով խնդիր է դրված բարձր տեխնոլոգիաների ոլորտը վերածել տնտեսական զարգացման ազգային ռազմավարության գլխավոր ուղղության:

Ուսումնասիրությունները և տնտեսական պրակտիկան ցույց է տալիս որ նորամուծության **ոլորտում** վերջին երկու տասնամյակում աշխարհի ամենաառաջադեմ տնտեսությունները նշանակալի կառուցվածքային փոփոխություններ են կրել: Այդ փոփոխությունների հանգուցային առանձնահատկությունը գիտելիքի աճող կարևորությունն է տնտեսական գործունեության բոլոր բնագավառներում:

Տնտեսական աճի մեջ գիտելիքի դերի լիակատար գիտակցումից ծագեց գիտելիքահենք տնտեսություն հասկացությունը: Գիտելիքահենք տնտեսություն տերմինն առաջին անգամ օգտագործվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) փաստաթղթերում՝[8] բնորոշելու համար այն տնտեսությունները, որոնք ուղղակիորեն հիմնված են գիտելիք ստեղծելու, փոխանցելու և օգտագործելու վրա:

Հատկանշական է, որ 2012-14թթ. տնտեսության զարգացումը շարունակվել է հիմնականում ծառայությունների և գյուղատնտեսության հաշվին: Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) միջին աճը այդ տարիներին կազմել է շուրջ 4.7%: Ընդ որում՝ 2012-14թթ. աճ է արձանագրվել տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ շինարարության:

---

6 http://www.armstat.am/am/?id=1585&nid=80 (մուտքի օրը՝ 22.10.2017թ.)

7 https://www.google.am/?gws_rd=cr&ei=ncg7VZPoKMSTsAGg4CYBw#q=%D5%AB%D5%B6%D6%86%D5%B8%D6%80%D5%B4%D5%A1%D6%81%D5 (մուտքի օրը՝ 22.10.2017թ.)

8 http://www.mineconomy.am/arm/79/gortsaruyt.html ՀԱՅԱՍՏԱՆԻ (մուտքի օրը՝ 02.10.2017թ.)

Նշված ժամանակահատվածում ծառայությունների հաշվին ապահովվել է տնտեսական աճի 2.0 տոկոսային կետը, իսկ իրական աճը կազմել է 5.2%, արդյունաբերության հաշվին ապահովվել է տնտեսական աճի 0.7%-ը՝ 4% իրական աճի պայմաններում, գյուղատնտեսության հաշվին ապահովվել է տնտեսական աճի 1.6%-ը՝ 8.3% իրական աճի պայմաններում: Շինարարությունը միջինը նվազել է 2.3%-ով՝ 0.3 տոկոսային կետով բացասաբար նպաստելով տնտեսական աճին:

Միջնաժամկետ հատվածում, ըստ 2015թ.ՀՀ կառավարության՝ հուլիսի 8-ի նիստին հաստատած 2016-18թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ)[9], կանխատեսվում է ՀՆԱ-ի միջին տարեկան 3.2% աճ, որը հիմնականում պայմանավորված կլինի ծառայությունների և գյուղատնտեսության ոլորտներով: ՀՀ տնտեսության 2015թ. առաջին ամիսների զարգացումների և համաշխարհային տնտեսության աճի կանխատեսումների հիման վրա 2015թ. համար կանխատեսվում էր 1% տնտեսական աճ (մինչդեռ 2015թ. ՀՆԱ-ի աճը կազմել է 3%), իսկ 2016-18թթ. իրական ՀՆԱ-ի տարեկան աճը կանխատեսվում է՝ համապատասխանաբար 2%, 3.5% և 4%, ծառայությունների և գյուղատնտեսության ոլորտների նպաստումը ՀՆԱ-ի միջին 3.2% աճին կկազմի՝ համապատասխանաբար 1.2 և 0.9 տոկոսային կետ:

Համեմատության համար հարկ է նշել որ համաշխարհային տնտեսական աճը 2015թ.-ին կանխատեսվում էր 3.5%, իսկ 2016թ.-ին՝ 3.8% [10]:

ԱՄՆ-ի տնտեսական աճը գնահատվում էր մոտ 2.6 %, ինչը կանխատեսվող հորիզոնում կարագանա՝ 2017թ.-ին հասնելով մոտ 3.2%-ի:

Այս առումով Ռուսաստանի 2015թ.-ի տնտեսական աճի վերաբերյալ միջազգային կազմակերպությունները կանխատեսում էին -3%-ից -5.5%-ի անկում, որը շարունակվեց մինչև 2016թ.-ի կեսերը և միայն 2017թ.-ին կնկատվի տնտեսական ակտիվություն՝ մոտ 0.7%-ի աճ:

Իհարկե, Ռուսաստանի՝ նման տնտեսական անկումը մեծ ռիսկեր է ստեղծում ՀՀ տնտեսական ակտիվության համար, սակայն միջնա-

---

[9] http://armef.com/hy/news/meknabanutyun/2015-t.-tntesakan-achy-1/ (մուտքի օրը՝ 15.10.2017թ.)

[10] http://armef.com/hy/news/verlutsutyun/2015-t.-hamashxarhajin-tntesakan-achy-3.5/ (մուտքի օրը՝ 18.09.2017թ.)

ժամկետ հատվածում հումքային և պարենային ապրանքների շուկաներում գների կայուն աճը և համաշխարհային շուկայում նավթի գնի աճը կնպաստի այդ ռիսկերի չեզոքացմանը:

Միջնաժամկետ կանխատեսումների հիմք են ծառայել տնտեսության զարգացման արձանագրված միտումներն ու առանձնահատկությունները, միջազգային կազմակերպությունների ներկայացրած՝ համաշխարհային տնտեսության վերաբերյալ սպասումներն ու վերլուծությունները, ինչպես նաև ճյուղային նախարարությունների ներկայացրած միջնաժամկետ պետական քաղաքականության ուղղությունները[11]:

Այսպիսով, միջնաժամկետ հեռանկարում տնտեսության մեջ կաճի արտահանելի հատվածի մասնաբաժինը (արտահանելի հատվածի մեջ դիտարկվել են արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը): 2012-14թթ. այն կազմել է ՀՆԱ-ի միջինը 37.5%-ը: Տնտեսությունը կշարունակի ընթանալ հետճգնաժամային տարիներին նախանշած ճանապարհով, և տնտեսության արտահանելի հատվածը կկազմի ՀՆԱ-ի 37.7%-ը:

Պարզ է, որ նորամուծական արդյունավետ քաղաքականությունը հնարավոր է իրականացնել գիտելիքահենք տնտեսության ձևավորման պայմաններում, որի հիմքում ընկած է նորամուծությունը (ինովացիան), որը գիտելիքի արդյունավետ կիրառման արտահայտությունն է, երբ հավելյալ տնտեսական արժեքը ստացվում է գիտելիքը նոր արտադրանքի, գործընթացների և ծառայությունների փոխակերպելու ճանապարհով: Հետևաբար, նորամուծական գործունեության խթանումն առանձնակի կարևորություն ունեցող խնդիր է պետության համար՝ պայմանավորված գիտատեխնոլոգիական և նորամուծական ներուժի նպատակային զարգացմամբ ու արդյունավետ օգտագործմամբ:

Նորամուծական գործունեության հաջողության էական բաղադրիչն է՝ դրա միջավայրի ձևավորման պետական քաղաքականությունը, որն իրականացվում է նորամուծական գործունեությունը կարգավորող իրավական դաշտի՝ օրենսդրական և նորմատիվային-իրավական մեխանիզմների ստեղծման ճանապարհով:

Այսպես, դեռևս 2006 թվականի մայիսի 23-ին ընդունվել է «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրեն-

[11] http://armef.com/hy/news/meknabanutyun/2015-t.-tntesakan-achy-1/ (մուտքի օրը՝ 19.09.2017թ.)

քը, որով սահմանվել են Հայաստանի Հանրապետությունում պետական ինովացիոն քաղաքականության ձևավորման և իրականացման իրավական և տնտեսական հիմքերը, նորամուծական գործունեության պետական աջակցության ձևերը:

Այս առումով պետք է նշել, որ ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտակրթական գործունեության համար 2014 թվականին պետական բյուջեից տրամադրել է 9.3 մլրդ դրամ՝[12] «Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք» դասին, որը կազմել է նախատեսված ցուցանիշի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն աճել են 6.8%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերի աճով: Գիտաշխատողներին գիտական աստիճանների համար 2014 թվականին ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են 366.8 մլն դրամ հավելավճարներ՝ ապահովելով 98.7% կատարողական և 4.2%-ով գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը՝ պայմանավորված հավելավճար ստացող գիտնականների թվի ավելացմամբ: «Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» ծրագրի շրջանակներում 14.4 մլն դրամ տրամադրվել է ՀՀ Սփյուռքի նախարարությանը, որի հաշվին պատվիրվել են սփյուռքին վերաբերվող թվով 12 գիտական հետազոտություններ:

Նույն ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեի ծախսերը 1991 թվականի համեմատ աճել են 33.3%-ով՝ պայմանավորված հետազոտությունների քանակի աճով: Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման ու զարգացման ծախսերը կազմել են ավելի քան 7.1 մլրդ դրամ կամ նախատեսվածի 99.8%-ը: Նախորդ տարվա համեմատ նշված ծախսերն ավելացել են 8.7%-ով՝ հիմնականում պայմանավորված գիտաժողովների թվի ավելացմամբ: «Ա. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» հիմնադրամի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման և գիտական ներուժի արդիականացման ծրագրի ծախսերը կազմել են 714.1 մլն դրամ՝ ամբողջությամբ ապահովելով ծրագրային ցուցանիշը: Իհարկե նա-

[12] http://www.parliament.am/draft_docs5/K-772/K-772_hashvetvutyun.pdf (մուտքի օրը՝ 15.09.2017թ.)

խորդ տարիների համեմատ 2015, 2016 և 2017 թվականներին նշված ծախսերն էական փոփոխություն չեն կրել:

Հայաստանում գիտելիքահենք տնտեսության ձևավորմանը և նորամուծական գործունեության աջակցմանն ուղղված ռազմավարության հայեցակարգը ենթադրում է սոցիալ-տնտեսական հարակից ոլորտների, մասնավորապես, գիտության, կրթական, հարկաբյուջետային, արդյունաբերական և արտահանման խրախուսման քաղաքականությունների ինտեգրում մեկ ամբողջական համատեքստում:

Կարծում եմ վերը նշված մարտահրավերներին դիմակայելու և գիտելիքահենք տնտեսության ձևավորման համար նպատակահարմար է այդ ոլորտում գերակա ուղղություններից մեկը ընդունել աշխարհում ներկայումս հայտնի, արագ զարգացող ֆորենզիկ գիտության արմատավորումը ՀՀ-ում, որի հիմքում ընկած է էլեկտրոնիկայի հետ կապված ամեն ինչ, այդ թվում տեղեկատվության վերականգնում, վերահսկում, գաղտնի ու բացահայտ փոխանցում:

Ֆորենզիկը տարբեր գիտությունների (հոգեբանություն, մանկավարժություն, կենսաբանություն, տնտեսագիտություն, ֆիզիոլոգիա, ֆիզիկա, մաթեմատիկա, ծրագրավորում, ինժեներիա և բազում այլ գիտություններ) համագործակցություն է: Այս գիտությամբ զբաղվող Technology and Science Dynamics Inc./Armtab

Technologies ընկերության նախագահի կարծիքով[13] աշխարհում այսօր ֆորենզիկ գիտությունը 700 մլրդ. դոլլարից ավելի շուկա ունի: Այս ոլորտում աշխարհում մասնագետների պահանջարկն ավելի քան 92% է: 2015թ.-ին վերը նշված ընկերությունը Հայաստանում համաձայն «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի, հիմնադրել է TSD ընկերությունը և Հայաստանում իրականացնում է պլանշետների արտադրություն:

Կատարված ուսումնասիրությունների և այս ընկերության հավակնությունների գնահատմամբ, եթե առաջիկա 5 տարիների ընթացքում ընկերությունը կարողանա համապատասխան պատրաստված մասնագետների շնորհիվ ֆորենզիկ շուկայից 0.003%-ը բերել Հայաստան և այստեղ արտադրել պահանջվող ապրանքները, ապա դրա

[13] Տե՛ս http://armef.com/hy/news/verlutsutyun/texnologiakan-zargacumy-mer-miak-chanaparhn-e/ (մուտքի օրը՝ 01.11.2017թ.)

շնորհիվ հնարավոր կլինի Հայաստանի բյուջեից 5 անգամ ավել գումար բերել երկիր:

Նոր ռազմավարությամբ խնդիր է դրվում բարձր տեխնոլոգիաների ոլորտը վերածել տնտեսական զարգացման ազգային ռազմավարության գլխավոր ուղղության: Այս առումով Ռազմավարության կարևոր դրույթներից մեկը վերաբերում է հայկական արտադրանքի, հայկական լուծումների վրա հիմնված նորաստեղծ կազմակերպություններին աջակցությանը, դրանց ձևավորմանն ու առաջխաղացմանը: Դրա շնորհիվ հնարավոր է շահույթի տեսքով մեծաքանակ հավելյալ արժեք բերել Հայաստան, որը հարյուրապատիկ ավելին է, քան այդ գործունեությամբ զբաղվող աշխատակիցների աշխատավարձների մեծությունը:

Հաշվի առնելով համաշխարհային մարտահրավերները և ՀՀ առկա աշխարհաքաղաքական ու տարածքային գործոնները, ՀՀ տնտեսության զարգացման համար տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն առավել հեռանկարային ու հասանելի ուղղություն է: Քանզի առանց տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման արդյունավետ ռազմավարության, անհնար է հավակնել՝ դասվել զարգացած երկրների շարքին: Իսկ արդյունաբերության մյուս ուղղությունները զարգացնելն ավելի ծանր է, պակաս արդյունավետ և դժվար:

Այսպիսով՝ ձևավորելով և զարգացնելով նորամուծական ազգային համակարգի համապատասխան հեռանկարային բաղադրիչները, հնարավոր կլինի հասնել Հայաստանի նորամուծական քաղաքականության ռազմավարական նպատակին՝ Հայաստանը դարձնելով տեխնոլոգիական հետազոտությունների ու մշակումների գլոբալ կենտրոն:

## Ամփոփում

Ներկայումս ՀՀ-ում խնդիր կա սահմանելու նորամուծական տնտեսության ձևավորման միասնական տեսլական և մշակելու համապարփակ ռազմավարություն, որը կինտեգրի ՀՀ-ում գործող և մեկնարկվող նախաձեռնությունները մեկ միասնական համատեքստում: Հեղինակի կողմից առաջարկվել է այդ համապարփակ ռազմավարության առանցքային հիմնախնդիրների լուծումը:

Արդի մարտահրավերներին դիմակայելու և գիտելիքահենք տնտեսության ձևավորման համար աշխատանքում առաջարկվում է ՀՀ-ում գերակա ուղղություններից մեկը ընդունել աշխարհում ներկայումս հայտնի, արագ զարգացող, Ֆորենզիկ գիտության արմատավորումը:

Այսպիսով՝ ձևավորելով և զարգացնելով նորամուծական ազգային համակարգի համապատասխան հեռանկարային բաղադրիչները, հնարավոր կլինի Հայաստանը դարձնել տեխնոլոգիական հետազոտությունների և մշակումների գլոբալ կենտրոն:

*Բանալի բառեր*՝ նորամուծություն, շուկա, ռազմավարություն, մրցունակություն, մրցակցություն, գիտատեխնիկական ներուժ:

### Գրականություն


1. Սիմոնյան Մ.Ժ. «Նորամուծական գործունեության զարգացման հիմնական ուղղությունները ՀՀ-ում», ֆինանսներ և էկոնոմիկա ամսագիր # 3-4 (175-176), մարտ-ապրիլ 2015թ., էջ 87-90:
2. Башков В. Информационное сопровождение инвестиционного процесса // Эко. 1997. № 2. С. 24-28.
3. Васильев В.П. Управление инновациями: учебное пособие/ пук. Авт. Колл.В.П. Васильев-М.: Депо и сервис, 2011-400с.
4. Завлин П.Н. и др. Инновационная деятельность в условиях рынка. -СПб.: КЦЦ; Наука, 1994. - 192 с.
5. Фридленов В. Н. Потенциал и проблемы инновационного развития промышленных предприятий / Инновации, 2011 1№7 (44):
6. Drucker P. F. Entrepreneurship and innovation.-NY:Harper a Row, 1985. IX.277 p.
7. http://armef.com/hy/news/verlutsutyun/texnologiakan-zargacumy-mer-miak chanaparhn-e/
8. http://www.parliament.am/draft_docs5/K-772/K-772_hashvetvutyun.pdf

## СТРАТЕГИЧЕСКИЕ ПУТИ РАЗВИТИЯ ИННОВАЦИЙ В РА

**Симонян Манучар Жоревич**
канд.экон. наук
Филиал ЕОРА в г. Гавар, директор

### Резюме

В настоящее время в Армении сушествует проблема установления общего видения формирования инновационной экономики и разработки всеобъемляющей стратегии, которая будет интегрироваться в едином контексте действующих и запускаемых инициатив в РА. Со стороны автора предлогается решение этих всеобъемляющих стратегических ключевых задач.

Для противостаяния современных вызовов и формирования хозяйств, которое основан на знании в работе предлагается укоренение в РА в данное время известен в мире, быстро развывающие наука Форензик.

Таким образом, формируя и развывая соотвествующих переспективных компонентов инновационных систем, будеть возможным сделать РА глобальным центром технологических иследовании и разработок.

*Ключевые слова:* инновации, рынок, стратегия, конкурентоспособность, конкуренция, научно-технический потенциал.

## STRATEGIC WAYS OF INNOVATION DEVELOPMENT IN RA

**Manuchar Simonyan**
*Candidate of Economic Sciences*
EREA, Gavar branch, director

### Summary

At present, there is a problem in Armenia to establish a common vision for the formation of an innovative economy and develop a comprehensive strategy that will integrate the existing and launched

initiatives in the RA in a single context. From the author's side, the solutions to these comprehensive strategic key tasks were proposed.

To counteract modern challenges and formations of farms, which is based on knowledge in the work, it is proposed to take in the RA at the given time an acceleration known in the world that is rapidly developing the science of Forensic.

Thus, by forming and developing appropriate components of the innovative systems, it will be possible to create a global center for technological research and development.

*Keywords:* innovation, market, strategy, competitiveness, competition, scientific and technical potential.

# ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

***Աննա Միքայելի Հայրապետյան***
*տնտ. թ.*
*ԵԿՏԱ, Գյումրու մասնաճյուղ, դասախոս*

Համաշխարհային տնտեսությունում ներդրումների դինամիկան և փոխատվական հարաբերություններում երկրների մասնակցության ցուցանիշները հաճախ անկանխատեսելի են: Օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ-երը) մշտապես գտնվում են արտաքին գործոնների ազդեցության տակ: Այդ իսկ պատճառով օտարերկրյա ուղղակի ներդրումների աճի կամ անկման պատճառների և տնտեսական զարգացման վրա դրանց հետևանքների բացահայտումն ու խելամիտ որոշումների կայացումը կազմում է արդյունավետ ներդրումային քաղաքականության հիմնական պայմանը:

ՕՈՒՆ-երի հոսքերը համաշխարհային տնտեսության մասշտաբներով 2016թ.-ին, նախորդ տարվա համեմատությամբ, կրճատվել են 13%-ով՝ հասնելով 1.52 տրլ դոլարի: Այս անկումը հանգեցրել է տնտեսական ակտիվության անկման գլոբալ մասշտաբով, իսկ պատճառները պայմանավորված են եղել առանձին երկրներում ներդրումային հոսքերի կրճատմամբ: Ուշագրավ է, որ անցումային երկրներում 2016թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ արձանագրվել է 30%-անոց աճ (+52 մլրդ դոլար), զարգացող երկրներում արձանագրվել է 20% նվազում (-600 մլրդ դոլար), իսկ զարգացած երկրներում՝ 9% նվազում (-872 մրդ դոլար)[1]: Անցումային երկրներում ներդրումների աշխուժացման այս միտումների համատեքստում փորձենք գնահատել ներդրումային միջավայրն ու տնտեսական զարգացման արդի վիճակը ՀՀ-ում:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տվյալներով 2017թ. առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ընդհանուր ներդրումների զուտ հոսքերի

[1] Global Investmen Trend Monitor, UNCDAT, Global FDI Flows Slip In 2016, Modest Recovery Expected In 2017, No.25, 1 February, 2016

ծավալը (օտարերկրյա ներդրումների գծով ստացումների և մարումների տարբերությունը) կազմել է -1 188.3 մլն դրամ, ինչը մոտ 5%-ով պակաս է 2016թ. գրանցված ցուցանիշից[2] և գրեթե 44%-ով զիջում է 2015թ.-ի նույն ցուցանիշին. 2015թ.-ին կազմել է 30 701.7 մլն դրամ[3]: 2015թ. համեմատաբար բարձր են եղել ներդրումների զուտ հոսքի ծավալները ՀՀ-ում, ինչը, սակայն, զիջում է 2014թ. նույն ցուցանիշին: Սկսած 2011թ.-ից ցուցանիշը անկում է ապրել: Խոսելով 2012 և 2013թթ.-ի ներդրումների բարձր մակարդակի մասին, պետք է նկատել, որ նույն ժամանակահատվածում ՕՈՒՆ-երի ցուցանիշով Հայաստանը ԱՊՀ երկրների մեջ դասվել է ամենացածր՝ 500 մլն դոլար և պակաս ներդրումային հոսքերով երկրների շարքին[4]:

2017թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսքի գերակշիռ բաժինը՝ 31.6 մլրդ դրամը, ուղղվել է հանքարդյունաբերության ոլորտ: Զուգահեռաբար, խոշոր ներդրումներ են կատարվել նաև անշարժ գույքի միջոցով գործառնությունների (3.8 մլրդ դրամ) և հիմնային մետաղների արտադրության ոլորտներում (3.7 մլրդ դրամ): Դրան հակառակ՝ 2017թ. առաջին կիսամյակում նախորդ տարվա համեմատությամբ ներդրումային հոսքերի կտրուկ անկում է գրանցվել հեռահաղորդակցության (-17.9 մլրդ դրամ) և խմիչքների արտադրության (-9.5 մլրդ դրամ) ոլորտներում: 2017թ. առաջին կիսամյակում օտարերկրյա ներդրումների խոշորագույն աղբյուր է հանդիսացել Ջերսի կղզին (աշխարհի հայտնի օֆշորային գոտիներից մեկը), որտեղից կապիտալ ռեսուրսների զուտ ներհոսքը կազմել է մոտ 31.6 մլրդ դրամ: Այս միջոցներն ամբողջությամբ ուղղվել են միայն դեպի հանքարդյունաբերություն և հարակից ոլորտներ: ՕՈՒՆ-երի զուտ ներհոսքի ծավալներով Ջերսիին հաջորդել են Լյուքսեմբուրգը (2.4 մլրդ դրամ) և Կիպրոսը (1.8 մլրդ դրամ), որոնք ևս հանդիսանում են խոշոր օֆշորային գոտիներ:

2016թ. հունվար-դեկտեմբերին իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալը (օտարերկրյա

---

[2] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-հունիսին, էջ 103, http://www.armstat.am/file/article/sv_07_17a_420.pdf, մուտքի ամսաթիվը՝ 22.09.2017թ.

[3] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար-հունիսին, էջ 99, http://www.armstat.am/file/article/sv_07_16a_420.pdf, մուտքի ամսաթիվը՝ 22.09.2017թ.

[4] World Investment Report 2014, UNCDAT, 2014, p. 106

ներդրումների գծով ստացումների և մարումների տարբերությունը) կազմել է 81 581.3 մլն դրամ, որից ուղղակի ներդրումների ծավալը կազմել է 62 679.3 մլն դրամ: ՕՈՒՆ-երի զուտ հոսքերի ծավալը 2016թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 6 747.5 մլն դրամով (9,7%-ով): ՕՈՒՆ-երի դինամիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ցուցանիշը նույն ժամանակահատվածում անկում է ապրել գրեթե բոլոր երկրների մասով (բացառությամբ մի քանի երկրների), ինչը պայմանավորված է եղել այդ երկրի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մարման փաստով: Ցուցանիշների անկման վրա ազդել են մարումները և ներդրումների կրճատումը:

Գծապատկեր 1. ՕՈՒՆ-երի զուտ հոսքերի ծավալներն ըստ երկրների 2015-2016թթ. դրությամբ (մլն դրամ)[5]




Դիտարկվող ժամանակահատվածում ներկայացված երկրների շարքում ամենաուշագրավը, ծավալային առումով, ՌԴ-ից ներդրումային հոսքերի կրճատումն է եղել, Կիպրոսից՝ ներդրումների աճը: Իրա-

[5] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-փետրվարին, էջ 87, http://www.armstat.am/file/article/sv_02_17a_420.pdf, մուտքի ամսաթիվը՝ 22.09.2017թ.

նի Իսլամական Հանրապետությունից ներդրումային հոսքերի փոխա-րեն արձանագրվել են մարումներ, իսկ Վրաստանից՝ ոչ էական ներդ-րումային հոսքեր՝ 133.7 մլն դրամի չափով:

Ըստ Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2014թ. առաջին կիսամյակում ռուսական ներդրումների մակարդակը կազմել է 36 434.8 մլն դրամ, 2015թ.՝ 3 432.6 մլն դրամ, այսինքն գրեթե տաս-նապատիկ անգամ անկում է ապրել: 2016թ. ցուցանիշը կազմել է -5 686.9 մլն դրամ, այսինքն մարումը գերազանցել է ստացմանը, իսկ 2017թ. առաջին կիսամյակում՝ -12 298.0 մլն դրամ[6]: Զգալի է նույն ժա-մանակահատվածում ռուսական ներդրումների կրճատումը էլեկտրաէ-ներգիայի արտադրության ոլորտում՝ -8 100.6 մլն դրամից -13 995.5 մլն դրամ, այսինքն գրեթե 73%-ով: 2011թ. դրությամբ ՌԴ-ից այլ երկր-ներում կատարված ներդրումների կառուցվածքում Հայաստանին ուղղված ներդրումների ծավալը կազմել է 1 370 մլն դոլար, որը ներդ-րումների ընդհանուր ծավալի 1,7%-ն է[7]:

Պետք է ասել, որ թեև Հայաստանը ԵՏՄ անդամ է, սակայն մինչ օրս այդ կառույցի ոչ մի երկրի հետ ներդրումային հարաբերություննե-րի էական առաջընթաց չկա, եթե հաշվի առնենք, որ այն չպետք է սա-հմանափակվեր միայն մաքսային միության ստեղծմամբ, այլ պետք է ապահովեր անդամ-երկրների տնտեսական ինտեգրացման ավելի լայն հնարավորություններ: Ընդհակառակը, եթե մինչ Հայաստանի՝ ԵՏՄ անդամ դառնալը Ռուսաստանից ներդրումները 42 646.5 մլն դրամ էին (2014թ.), ապա 2015թ. այդ ցուցանիշը անկում է ապրել՝ մինչև 35 983.3 մլն դրամ:

2014-2017թթ. առաջին կիսամյակների կտրվածքով ռուսական ներդրումների զուտ հոսքի դինամիկայի ուսումնասիրությունը ևս մեկ անգամ փաստում է ԵՏՄ շրջանակներում Հայաստան-Ռուսաստան տնտեսական համագործակցության դեռևս ցածր մակարդակը, եթե չասենք այդ համագործակցության անհասկանալի բնույթն ու ոչ հու-սադրող հեռանկարը:

---

[6] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-հունիսին, էջ 102, http://www.armstat.am/file/article/sv_07_17a_420.pdf, մուտքի ամսաթիվը՝ 22.09.2017թ.

[7] Комаров В.В., Литвина Н.И., Мировая экономика, прямые иностранные инвестиции, Москва 2012, с. 86

Գծապատկեր 2. ՕՈՒՆ-երի զուտ հոսքերի ծավալներն ըստ ոլորտների 2015-2016թթ. դրությամբ (մլն դրամ)[8]




ՀՀ-ում ՕՈՒՆ-երով աչքի ընկնող ամենախոշոր ոլորտներն են հանքագործությունը և խմիչքների արտադրությունը, ընդ որում բացառությամբ հանքագործության, մնացած ոլորտներում արձանագրվել է ցուցանիշի անկում դիտարկվող ժամանակահատվածում:

2016թ.-ին հանքագործական արդյունաբերությանն ուղղված ներդրումների 73%-ը (30.5 մլրդ դրամ) պատկանել է Միացյալ Թագավորությանը, 24%-ը (10.2 մլրդ դրամ)՝ Ջերսի բրիտանական կղզուն (որը հայտնի օֆշորային գոտի է), իսկ 3%-ը (1.2 մլրդ դրամ)՝ Ռուսաստանի Դաշնությանը: 2015-2016թթ. բավական ակտիվ գործունեություն է ծավալել Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործող «Lydian Armenia» ընկերությունը, որը 100%-ով պատկանում է «Lydian International Limited» բրիտանական օֆշորային ընկերությանը և գրանցված է Բրիտանական Ջերսի կղզու օֆշորային գոտում: Այս հանգամանքով է բացատրվում Ջերսիից Հայաստան ուղղված ՕՈՒՆ-երի՝ միջինից բարձր տեսակարար կշիռը ոլորտում ներդրված արտասահմանյան կապիտալի ընդհանուր ծավալում: Նշենք, որ Ջերսիից 2015թ. ներդրումային հոսքեր չեն արձանագրվել, իսկ ՄԹ-ից ներդրումների զուտ հոսքը մեկ տարվա ընթացքում գրեթե տասնապատկ-

[8] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ հունվար-փետրվարին, էջ 78, http://www.armstat.am/file/article/sv_02_17a_420.pdf, մուտքի ամսաթիվը՝ 22.09.2017թ.

վել է՝ 3.4 մլրդ դրամից դառնալով 30.5 մլն դրամ: 2014թ. ՄԹ-ից ներդրումների զուտ հոսքը կազմել է 2.7 մլրդ դրամ: 2017թ. առաջին եռամսյակում բրիտանական ներդրումների մակարդակը կազմել է ավելի քան մեկ մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ հնգապատիկ աճ է ունեցել:

Քանի որ շատ օֆշորային ընկերություններ գրանցման երկրից դուրս գործունեություն ծավալելու դեպքում հիմնականում այդ երկրում հարկեր չեն վճարում, և արժույթի, այդ թվում՝ ներդրումներից ստացված շահույթի հայրենադարձումը չի գտնվում այդ երկրի վերահսկման ներքո, ապա այս պարագայում պետական բյուջե գումարների փոխանցումը և ներդրումներ-տնտեսական զարգացում կապի ապահովումը դառնում են անիրատեսական:

2016թ.-ին նախորդ տարվա համեմատ խմիչքների արտադրության մեջ ներդրված օտարերկրյա կապիտալը կրճատվել է 2.7 մլրդ դրամով (26%-ով): Թեև ցուցանիշը նվազել է, սակայն ոլորտում ներդրված կապիտալի բաշխվածության համամասնությունը ըստ երկրների, պահպանվել է: Ամենամեծը Ֆրանսիական ներդրումների տեսակարար կշիռն է՝ 79% (6.2 մլրդ դրամ), բրիտանականը կազմում է 15,5% (1.2 մլրդ դրամ), իսկ մնացած 5,5%-ը (422.8 մլն դրամ) պատկանում է Լյուքսեմբուրգին:

Ուսումնասիրության տակ առնված ցուցանիշների շարքում թերևս հատկանշականը սննդարդյունաբերության ոլորտում ներդրումների բացասական միտումներն են. մասնավորապես 2015 և 2016 թվականներին ներդրումային հոսքեր չեն եղել. համապատասխանաբար՝ -340.1 մլն դրամ և -1 386.0 մլն դրամ, մինչդեռ 2015թ. այն կազմել է 129.5 մլն դրամ:

Հայաստանում ընթացիկ ֆինանսավորման մեջ են մի քանի տասնյակ ներդրումային ծրագրեր տարբեր ոլորտներում, որոնց արդյունքի գնահատումը հնարավոր կլինի կատարել տարիներ անց՝ արդյունավետությունը չափելով ըստ ստեղծված աշխատատեղերի, ՀՆԱ-ի աճի, համաշխարհային շուկայում մասնաբաժնի ավելացման, դիրքերի ամրապնդման, երկրի վարկանիշի բարձրացման:

*Աղյուսակ 1*

ՀՀ-ում ՕՈՒՆ-երով ֆինանսավորվող ինվեստիցիոն խոշոր ծրագրերի արժեքը և ընդհանուր բնութագիրը՝ ըստ ոլորտների 2017թ. դրությամբ[9]

| Ընկերության անվանումը | Ոլորտը և բնութագիրը | Ծրագրի արժեքը | Ներքին տոկոսադրույքը (IRR) | Գտնվելու վայրը (և մակերեսը) |
|---|---|---|---|---|
| «Սպայկա» և «Արմսանպրոդակտ» ՍՊԸ-ներ | Կիսափակ ջերմոցային համալիր և պանրի գործարան | 139,900,000 $ | - | Երևան, Նորագավիթ, զբաղեցնում է 120 հա մակերես |
| «Սպայկա» ՍՊԸ | Գյուղատնտեսական ընկերություն, որը 2007թ.-ից զբաղվում է գյուղմթերքների արտադրությամբ, մթերմամբ, արտահանմամբ, բեռնափոխադրմամբ, | 100,000,000 $ | 24% | Կոտայքի մարզ, զբաղեցնում է 100 հա մակերես |
| Գեոջերմային կայան | Հողմային և արեգակնային էներգիա արտադրող կայան | 100,000,000 $ | 10% | Սյունիքի մարզ, զբաղեցնում է 1,5 հա մակերես |
| Սյունիքի ազատ տնտեսական գոտի | Արտադրաարդյունաբերական համալիր գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության, էլեկտրականության մատակարարման, մեծածախ առևտրի, փոխադրումների, մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտներում | 28,000,000 $ | 12% | Սյունիքի մարզ, |
| «Soglasie-Armenia» ՍՊԸ | «Armenia Shopping Mall» բազմաֆունկցիոնալ համալիրի հիմնադիր | 25,700,000 $ | 11% | Երևան, զբաղեցնում է 4000 քմ առևտրային տարածք |
| «MANCHO GROUP» ՍՊԸ | Այլուրի, գինու, օղու, կոնյակի և հրուշակեղենի արտադրության ոլորտը հայկական ձեռնարկություն է, որը հիմնվել է 2001թ.: 2007թ. | 20,000,000 $ | 19% | ք. Երևան |

9 http://www.investmentprojects.am, մուտքի ամսաթիվը՝ 30.09.2017թ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| | հիմնել է «Աստաֆյան» գինու-կոնյակի գործարանը | | | |
| «GI Metals Investment» ՍՊԸ | Ոսկու արդյունահանող ընկերություն, որը զբաղվում է հանքերի ձեռք բերմամբ, թանկարժեք մետաղների արդյունահանմամբ, մշակմամբ և վերամշակմամբ: Ընկերությունը հիմնադրվել է ռուսաստանաբնակ հայերի ներդրումներով և ՀՀ-ում գործում է 2010թ.-ից՝ | 10,000, 000 $ | 45% | Սյունիքի մարզ, Զանգեզուրի հանքարդյունա-բերության կենտրոնական մասում, զբաղեցնում է 1800 հա մակերես |
| «Bacteck Eco» ՍՊԸ | Ոսկու և արծաթի արդյունահանող ընկերություն | 5,500,0 00 $ | - | Լոռու մարզ, զբաղեցնում է 60 հա մակերես |
| «Քարակերտի քարածուլման գործարան» ԲԲԸ | Քարի արդյունահանման և մշակման ընկերություն, որը հիմնվել է 1973թ., վերագործարկվել է 1992թ. | 5,000,0 00 $ | - | Արմավիրի մարզ զբաղեցնում է 20 հա մակերես |
| «Սլովակիա» ՍՊԸ | Տավուշի հանքային ջրերի գործարան, որը հիմնադրվել է 2014թ. | 4,000,0 00 $ | - | Տավուշի մարզ, զբաղեցնում է 10.000 քմ մակերես |

Այս և այլ՝ ընդհանուր թվով 66 ներդրումային ծրագրերի շրջանակներում նախատեսվում է մինչև 2017թ. ավարտը ներդրումների ծավալները հասցնել 492.8 մլն ԱՄՆ դոլարի, որի արդյունքում կստեղծվի շուրջ 7300 նոր աշխատատեղ[10]:

Խոսելով այն ձեռքբերումների կամ ձախողումների մասին, որոնք կապված են նախորդ տարիների ներդրումների հետ, պետք է ասել, որ զբաղվածության խթանման և արտագաղթի կանխման հարցում էական առաջընթաց դեռևս չկա, քանի որ ավանդական համարվող մեքենաշինական, վերամշակող, տեքստիլ, քիմիական արդյունաբերությունը, որպես երկրի տնտեսության ամրության ու կայունության գրավական, Հայաստանում շարունակում է մնալ ոչ միայն թերզարգացած, այլև պետական հոգածությունից և ուշադրությունից դուրս: Բացի այս ճյուղերից, անհրաժեշտ է զարգացնել նաև ռազմական արդյունաբերությունը՝ որպես բացարձակ նոր ուղղություն, որի համար անհրա-

[10] ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, http://www.mineconomy.am, մուտքի ամսաթիվը՝ 28.09.2017թ.

ժեշտ են համակարգային փոփոխություններ և մոտեցումներ՝ սփյուռքի ներդրումների ներհոսքը ուժեղացնելու համար: Ռազմական արդյունաբերությունը կհանդիսանա տնտեսության զարգացման լավագույն խթաններից մեկը:

Թեև ներդրումների խթանման առումով կարևոր քայլ են համարում մաքսային արտոնյալ ռեժիմների սահմանումը, սակայն այս արտոնությունը խիստ հարաբերական ու սուբյեկտիվ բնույթ է կրում, ինչը շատ թույլ ազդեցություն կարող է ունենալ գործարարության խթանման վրա: 2011թ.-ից ՀՀ կառավարության որոշմամբ ներդրումային ծրագրերի շրջանակներում 200 մլն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետը կարող է հետաձգվել մինչև 3 տարի ժամկետով: Նկատենք երեք հիմնական պահ. նախ, կառավարությունը սահմանում է այդ ընկերությունների կամ անհատ ձեռնարկատերերի ցանկը, այսինքն կատարվում է ընտրություն: Հետո՝ տեղի չի ունենում հարկից ազատում 3 տարով, այլ՝ ընդամենը հարկի վճարման ժամկետների հետաձգում, մինչդեռ 3 տարին շատ կարճ ժամանակահատված է սկսնակ ընկերությունների կայացման համար: Հաջորդ կարևոր նկատառումը հետևյալն է՝ խոսքը այնպիսի ներդրման (ներմուծվող արտադրական ապրանքների՝ հումքի, սարքավորումների) ծավալների մասին է, որը վերաբերում է հիմնականում միջին և խոշոր բիզնեսին: Հետևաբար, փոքր բիզնեսի զարգացման համար այս արտոնությունը էական խթան գործնականում չի կարող հանդիսանալ:

ՀՀ կառավարության հաշվետվության մեջ նշվում է, որ 2017թ. առաջին 8 ամսում Հայաստանում իրականացվել է 376 մլն դոլարի ներդրում, որից ուղղակի ներդրումները՝ 328 մլն. դոլար: Մասնավոր հատվածից ստացված ներդրումային ծրագրերից 28-ի համար սահմանվել են մաքսատուրքից ազատման արտոնություններ, 19-ի համար՝ ԱԱՀ հետաձգման արտոնություններ: Պետք է նկատել, որ այն մեծ թիվ չէ, բացի այդ, արտոնությունից օգտվում են միայն սահմանված ընկերությունները: Օրինակ, ՀՀ կառավարության որոշմամբ 3 տարով հետաձգվել է Ամուլսարի ոսկու հանքը շահագործող «Lydian Armenia» ընկերության ԱԱՀ-ի վճարումը՝ 26,7 մլրդ դրամի սարքավորումներ ներմուծելու համար: Տվյալ դեպքում նման խոշոր օֆշորային

ընկերությանը հարկային արտոնություն տալը զուրկ է որևէ տնտեսագիտական հիմնավորումից և չի բխում ՀՀ տնտեսական զարգացման ու տնտեսական անվտանգության հայեցակարգից:

Տնտեսական ու ազգային անվտանգության նկատառումներից ելնելով՝ պետք չէ խանդավառությամբ ընդունել արտասահմանյան օֆշորային ընկերությունների կողմից հանքարդյունաբերության ոլորտում կատարված ներդրումների մեծ ծավալներն ու դրանց աճը և ոգևորվել արտահանման կառուցվածքում ոլորտի արտադրանքի մեծ ծավալներով, քանի որ այս դեպքում ազգային հարստության մի մասն ու ստացված արդյունքը պատկանում է օֆշորային ընկերություններին, որոնք հաճախ հանքերը շահագործում են՝ խախտելով բնապահպանական հիմնական նորմերը: Արդյունքում, փաստորեն, գործ ունենք ՀՀ բնական ու մարդկային ռեսուրսների օգտագործման խիստ անարդյունավետ մի մոդելի հետ, որը ՀՀ կառավարությունը տարիներ շարունակ աչքաթող է անում: Ներդրումները և մեր ռեսուրսները (այդ թվում՝ գիտական) պետք է ուղղել հատկապես գիտատար ոլորտներ, քանի որ աշխարհում աճում են գիտահենք արտադրանքների ծավալները, որոնք ունակ են ստեղծելու իմիջ, փոխելու երկրների դեմքն ու հեղինակությունը: Հայաստանում կան բավական հեռանկարային ոլորտներ, որտեղ ավելի տեսանելի է ներդրումների՝ բազմապատիկ աճ բերելու հատկությունը: Բացի ՏՏ և զբոսաշրջության զարգացումից (որոնք գերակա ոլորտներ են հայտարարված), պետական ներդրումային քաղաքականությունը պետք է աշխատի հօգուտ էկոլոգիապես մաքուր ճյուղերի զարգացման (այլընտրանքային էներգետիկայի ստացում, օրգանական սննդի արտադրություն և այլն)՝ հանքերի անհեռատես շահագործման փոխարեն: 2017թ. դրությամբ Հայաստանում գործում են 70-ից ավելի հանքարդյունաբերական ընկերություններ՝ մեծ մասը արտասահմանյան կապիտալով, որոնց արդյունքը կազմում է ՀՆԱ-ի հազիվ 2,2%-ը (2015-2016թթ. միջինը), իսկ արտահանման 31%-ը (2015թ.):

Ըստ միջազգային վարկանշող կազմակերպությունների, որոնք հաշվի են առնում երկրի զարգացման մի քանի էական ուղղություններ, Հայաստանն ունի վարկանիշային տարբեր դիրքեր աշխարհի երկրների շարքում:

*Աղյուսակ 2*

Հայաստանի դիրքը միջազգային վարկանիշներում՝ ըստ Համաշխարհային բանկի[11]

| Ուղղությունները | Դիրքը երկրների շարքում (2017թ.) | Փոփոխությունը նախորդ տարվա համեմատ |
|---|---|---|
| Գործարարությամբ զբաղվելը (ընդհանուր առմամբ) | 38 | +5 |
| Բիզնես սկսելը | 9 | մնացել է նույնը |
| Շինարարական թույլտվությունները | 81 | -3 |
| Սեփականության գրանցումը | 13 | մնացել է նույնը |
| Վարկի ստացումը | 20 | +22 |
| Ներդրողների պաշտպանությունը | 53 | -2 |
| Հարկերի վճարումը | 88 | մնացել է նույնը |
| Տնտեսական ազատությունը | 33 | +21 |
| Մարդկային զարգացման ինդեքսը | 85 | +2 |

Եթե հիմք ընդունենք Transparency International կազմակերպության գնահատականները, ապա կոռուպցիայի ընկալման ինդեքսով 2016թ.-ին Հայաստանը 176 երկրների շարքում 113-րդ տեղում է եղել[12]. սա դիտարկվող ցուցանիշներից թերևս ամենավատթարն է: Նման իրավիճակում ներդրումային գրավիչ միջավայրի մասին խոսելն անհեթեթ է: Նկատենք, որ տարբեր վարկանշային կազմակերպությունների կողմից շնորհվում են տարբեր վարկանիշային միավորներ: Օրինակ, 2016թ. «Fitch» կազմակերպությունը մեր երկրի միջազգային վարկա-

[11] Doing Business: Measuring Business Regulations, The World Bank http://www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia, մուտքի ամսաթիվը՝ 30.09.2017թ.

[12] Corruption Perceptions Index 2016, Transparency International, https://www.transparency.org/news/feature/corruption_perceptions_index_2016, մուտքի ամսաթիվը՝ 07.10.2017թ.

նիշը գնահատել է B+ որը համարվում է կայուն, իսկ «Moody's»-ը՝ Ba3, որը համարվում է բացասական:[13]

ՀՀ-ում ՕՈՒՆ-երի կազմի և կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 2016 թվականը ներդրումների առումով ամենաանհաջող տարին է եղել վերջին մի քանի տարիների ընթացքում: Պատճառները հիմնականում քաղաքական բնույթի են՝ ապրիլյան քառօրյան, հուլիսյան ներքաղաքական դեպքերը, նոր կառավարության ձևավորումը, 2017թ. խորհրդարանական ընտրությունները, որոնք չէին կարող սպասումներ և լրացուցիչ ռիսկեր չձևավորել առկա և հնարավոր ներդրողների շրջանում: Հաջորդ գործոնը տնտեսականն է՝ Հայաստանի փոքր շուկան, արտահանման հետ կապված խնդիրները, պետական պարտքը, ներմուծման մենաշնորհացումը և շուկայի կենտրոնացվածությունը: Իրենց ազդեցությունն ունեն նաև ժողովրդագրական գործոնները՝ աճող արտագաղթը: Քիչ չեն այն ներդրողները, որոնք Հայաստանը գրավիչ երկիր չեն համարում՝ պարզապես գրանցման ընթացակարգերը բարդացնող բյուրոկրատական քաշքշուկների, կոռուպցիայի, գրպանումների և փայամասնակցության ճնշումների պատճառով, որոնք իսկապես լուրջ խոչընդոտներ են օրինակ սփյուռքահայ գործարարների ֆինանսական ներուժը ազգային տնտեսության մեջ ներդնելու համար: Ներդրումային հոսքերի կրճատման հետևանքով տնտեսական իրավիճակի փոփոխության առավել հստակ պատկեր կունենանք, եթե այն դիտարկենք տնտեսական աճի ցուցանիշների համատեքստում: Ըստ ՀՀ ԱՎԾ և ԿԲ-ի տվյալների՝ տնտեսական աճը 2014թ.-ին կազմել է 3,4%, 2015թ.-ին՝ 3%, իսկ 2016թ.-ին այն կազմել է 0,2%՝ կանխատեսված 2,2%-ի համեմատ:

Օտարերկրյա ֆինանսական ռեսուրսների ներդրման ուղղությունների ու միտումների գնահատման արդյունքում անհրաժեշտ է նկատել ևս մեկ փաստ. ՀՀ իրական հատվածում հիմնական գործընկեր-պետության՝ ՌԴ-ի ներդրումների ծավալների անկման փաստը չի տեղավորվում ԵՏՄ շրջանակներում համագործակցության և դրանից բխող տնտեսական ու գործարար միջավայրի զարգացման տրամաբանության մեջ: Բրիտանական և այլ օֆշորային ընկերություններից ստաց-

[13] Investment guide Armenia, September 2016, p. 34, http://www.amcham.am/img/Investment_guide_Armenia.pdf, մուտքի ամսաթիվը՝ 07.10.2017թ.

ված ներդրումային ռեսուրսների աճը, մասնավորապես և առավելապես հանքարդյունաբերության ոլորտում, փաստում է, որ ներդրումների և արտահանման տեսանկյունից դեռևս առաջատար ճյուղը լեռնահանքային արդյունաբերությունն է, բայց ոչ էֆեկտիվը՝ գործարար միջավայրի, տնտեսական զարգացման, զբաղվածության և մուլտիպլիկատորի արդյունք հանդես բերելու առումով: Այս հանգամանքը համաշխարհային շուկայում իբրև հումքային կցորդ լինելու փաստի հերթական ապացույցն է: Ուստի, ներդրումների խթանումը չպետք է դեկլարատիվ կամ ինքնանպատակ բնույթ կրի և չպետք է լուծի կարճաժամկետ խնդիր, այլ պետք է բխի երկրի ռազմավարական զարգացման, ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ու արտագաղթի կանխման հայեցակարգերից:

## Ամփոփում

Օտարերկրյա ուղղակի ներդրումների ազդեցությունը Հայաստանի տնտեսական զարգացման վրա բացահայտելու համար հոդվածի շրջանակներում կատարվել են արտասահմանյան ներդրումների կառուցվածքի և դինամիկայի վերլուծություն՝ ըստ ոլորտների և ըստ երկրների: Վիճակագրական ցուցանիշների ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են մի շարք բացասական միտումներ՝ կապված ոչ խելամիտ և անհեռանկարային ներդրումային քաղաքականության, ներդրումային հոսքերի և տնտեսական աճի կրճատման հետ, հիմնավորվել են ՕՈՒՆ-երի կրճատման պատճառները: Հոդվածի շրջանակներում կատարվել են առաջարկություններ՝ արդյունավետ ներդրումային քաղաքականության և ՀՀ տնտեսական զարգացման ուղղությամբ:

*Բանալի բառեր*՝ Օտարերկրկա ուղղակի ներդրումներ, օֆշոր, ներքին տոկոսադրույք, բարենպաստ ներդրումային միջավայր, արդյունավետ ներդրումային քաղաքականություն:

## Գրականություն

1. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ. հունվար-հունիսին, էջ 99, http://www.armstat.am/file/article/sv_07_16a_420.pdf

2. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-փետրվարին, էջ 78-87, http://www.armstat.am/file/article/sv_02_17a_420.pdf
3. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-հունիսին, էջ 102-103, http://www.armstat.am/file/article/sv_07_17a_420.pdf
4. Комаров В.В., Литвина Н.И., Мировая экономика, прямые иностранные инвестиции, Москва 2012, с. 86
5. Global Investmen Trend Monitor, UNCDAT, Global FDI Flows Slip In 2016, Modest Recovery Expected In 2017, No.25, 1 February, 2016
6. World Investment Report 2014, UNCDAT, 2014, p. 106
7. Doing Business: Measuring Business Regulations, The World Bank http://www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia
8. Corruption Perceptions Index 2016, Transparency International, https://www.transparency.org/news/feature/corruption_perceptions_index_2016
9. Investment guide Armenia, September 2016, p. 34, http://www.amcham.am/img/Investment_guide_Armenia.pdf
10. http://www.investmentprojects.am
11. ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն, http://www.mineconomy.am
12. «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը

## ПРИЧИННО-СЛЕДСТВЕННЫЙ АНАЛИЗ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ И ПРОБЛЕМ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ АРМЕНИИ

**Айрапетян Анна Микаеловна**
канд.экон. наук
Филиал ЕОРА в г. *Гюмри,* преподаватель

### Резюме

В целях выявления влияния прямых иностранных инвестиций на экономическое развитие Армении в статье были проанализированы структура и динамика иностранных инвестиций по странам и по сферам. В результате изучения статистических показателей были выяв-

лены ряд негативных тенденций, которые связаны с не разумной и не перспективной инвестиционной политикой, сокращением инвестиционных потоков и экономическим ростом, а также были обоснованы причины сокращения ПИИ. В рамках статьи были внесены некоторые предложения по эффективной инвестиционной политике и экономическому развитию Армении.

*Ключевые слова:* Прямые иностранные инвестиции, оффшор, внутренняя норма доходности, благоприятный инвестиционный климат, эффективная инвестиционная политика.

## CAUSAL ANALYSIS OF FOREIGN INVESTMENTS AND ECONOMIC DEVELOPMENT PROBLEMS OF ARMENIA

**Anna Hayrapetyan**
Ph.D. in Economics
EREA, Gyumri branch, Lecturer

### Summary

In order to identify the impact of foreign direct investments on economic development of Armenia, the foreign investments structure and dynamics by countries and spheres were analysed in the article. A number of negative trends have been revealed as a result of the study of statistical indicators, related to the not reasonable and not prospective investment policies, reduction of investment flows and economic growth, and the reasons of FDI reduction were substantiates. In the circle of the article some suggestions have been made towards effective investment policy and economic development of Armenia.

*Keywords:* Foreign direct investment, offshore, internal rate of return, favorable investment climate, effective investment policy.

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԱՌԱՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԱՐՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

***Անի Տիգրանի Թորոսյան***
*ԵԿՏԱ, տնտեսագիտության և կառավարման ամբիոն, հայցորդ*

Մարդկային հասարակության առանցքային ոլորտներում՝տնտեսության և մշակույթի փոխհամագործակցության հիմնախնդիրները տնտեսագետներին հետաքրքրել են վաղուց: Նոր հազարամյակի սկզբին տնտեսագիտական մտածելակերպում իշխող է այն գաղափարը, որ տնտեսությունն ու մշակույթը բարդ, դիալեկտիկական հակասություններով պայմանավորված փոխազդեցությունների շղթա են: Եվ դժվար է մեր օրերում անտեսել մշակութային կապիտալի կարևորությունը երկրի տնտեսական առաջընթացի, սոցիալական զարգացումների և առհասարակ հասարակության առջև դրված սոցիալ-տնտեսական հրատապ խնդիրների լուծման գործում: Առավել հետաքրքիր և այժմեական է մշակույթի ոլորտի դիտարկումն այն տեսանկյունից, որն արտահայտվում է մշակութային ապրանքների սպառումից և մատուցված ծառայություններից մարդկանց մոտ ձևավորվող այն հոգևոր և բարոյական արժեքների ու «վարքագծի» մեջ, որն անմիջական ազդեցություն է ունենում տնտեսական միջավայրի և առհասարակ մարդկային քաղաքակրթության զարգացման վրա: Պարզապես ի տարբերություն արտադրական ոլորտի, մշակույթի ոլորտը գերազանցապես ոչ նյութական, հոգևոր արտադրության ոլորտ է: Մշակութային գործունեության արդյունքները բավարարում են մարդկանց ոչ միայն նյութական, այլ հիմնականում մտավոր, էսթետիկական և հոգևոր պահանջմունքները, քանի որ ցանկացած մտածող մարդու համար այս արժեքները ոչ պակաս կարևոր են, քան նյութականը:[1]

Մշակութային առաջադեմ արժեքները դառնում են հասարակության մեջ նորարարությունների ու տնտեսական հաջողությունների ուղեկիցներ: Այս համատեքստում անառարկելի է մշակութային կապիտալի ազդեցությունը տնտեսական գործունեության ցուցանիշների վրա և ինչպես Մարկ Կասսոնն է նշում, «Տնտեսությունը սովորում է համաձայնության գալ մշակույթի հետ»: [2] Եվ ի վերջո, մշակութային արժեքներով պայմանավորված պետական մտածողությունն ապահո-

վում է երկրի ռազմավարական նպատակների իրականացումը, արդարության ու ընդհանուր բարոյական սկզբունքների արմատավորումը հասարակության մեջ և, ամենակարևորը, նպաստում է շահերի ներդաշնակեցմանը տվյալ տնտեսական միջավայրում: Տեղին է նշել Սին Խուան Մայքլ Սյարի մոտեցումն այս հարցին՝ «Մշակութային գործոնները չպետք է մեկնաբանվեն որպես անհատական սոցիալական վարքագիծ, այլ ավելի շուտ պետք է դիտարկվեն որպես կանոնակարգված, ինստիտուցիոնալացված մշակութային կրթության համալիր՝ հասարակության մակարդակով»: [3] Միայն այս մակարդակում, ըստ նրա, կարելի է զուգորդել մշակութային վարքագիծը տնտեսական գործունեության հետ: Մարդկային քաղաքակրթության զարգացման ճանապարհին մշակույթն աստիճանաբար ենթարկվում է շուկայական խաղի կանոններին վերածվում կապիտալի՝ բացառիկ և բազմատարր կապիտալի,որն իր մեջ ներառում է.

- Մարդկային քաղաքակրթության տվյալ փուլն արտացոլող համոզմունքների, սովորույթների, ավանդույթների ամբողջությունը, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ՝ հընթացս ձևավորելով և ազդելով տնտեսագիտական մտածելակերպի վրա,
- Մշակութային ժառանգությունը,
- Սոցիալական արժեքները /վստահություն, կոռուպցիա/,
- Հարստությունը /բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ, ազգային եկամուտ, ազգային հարստություն/,
- Գիտելիքները,
- Կրթությունը:

Թվարկումն անխոս, կարելի է շարունակել, սակայն հոդվածի նպատակը մշակութային կապիտալի ձևերից մեկի՝ օբյեկտիվ (առարկայացված) ձևի վերլուծությունն է ու դրա փոխակերպման գնահատումը մշակութային կապիտալի մեկ այլ՝ ինկորպորատիվ և ինստիտուցիոնալ ձևերի: Խնդրին առնչվող աղբյուրների [4] ուսումնասիրությունն արդեն իսկ փաստում է մշակութային կապիտալի, որպես բազմատարր գործոնի դժվարաչափությունը, դրա գնահատման միանական, մեկ ընդհանուր չափորոշիչի մշակման անհնարինությունը:

Մշակութային կապիտալի գնահատման մեթոդաբանությանն համապատասխան վիճակագրության շրջանակներում հաշվարկվում են մի շարք մասնակի ցուցանիշներ, որոնք բնութագրում են մշակույթի ո-

լորտում առանձին կազմակերպությունների գործունեությունը (գրադարաններ, թանգարաններ, թատրոններ, կինոթատրոններ և այլն):

**Գրադարանային գործունեությունը** բնութագրվում է ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշներով: Բացարձակ ցուցանիշներից են գրադարանների թիվը, գրադարանային ֆոնդը (մլն. օրինակ), ընդամենը ընթեցողների թիվը (հազար մարդ), հաճախումները, տացքը (սպասարկված գրականությունը, մլն. օրինակ): Գրադարանային գործունեության հարաբերական ցուցանիշներն ինտենսիվության բնութագրիչներն են, որոնցից են՝ գրադարանային ֆոնդը 1000 մարդու հաշվով (օրինակ), մեկ գրադարանին բաժին ընկնող գրադարանային ֆոնդը (օրինակ), գրադարանային ֆոնդը մեկ ընթերցողի հաշվով (օրինակ), ընթերցողների թիվը մեկ գրադարանի հաշվով (մարդ), տացքը մեկ ընթերցողի հաշվով (մեկ ընթերցողի ընթերցանությունը, օրինակ), մեկ ընթերցողի միջին հաճախումների քանակը, մեկ գրքի միջին շրջանառությունը:

Աղյուսակ 1-ում բերված տվյալներից երևում է, որ ՀՀ-ում գրադարանների գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշները ունեցել են նվազման միտումներ: 2001-2015թթ. գրադարանների քանակը տարեկան կրճատվել է 21-ով՝ արդյունում 1131-ից հասնելով մինչև 830-ի: Գրադարանների թվի նման փոփոխություններին հակառակ գրադարանային ֆոնդի փոփոխությունը եղել է աննշան կամ գրեթե չի փոփոխվել: 2001թ.-ին գրադարանային ֆոնդը կազմել է 19.7 մլն. օրինակ, իսկ 2015թ.-ին՝19.1 մլն. օրինակ:

Կրճատման միտումներ են գրանցվել ընթերցողների թվաքանակի, սպասարկված գրականության (տացքի) և հաճախումների գծով: Նշված ժամանակաշրջանում ընթեցողների թիվը տարեկան միջին հաշվով կրճատվել է 16.44 հազար մարդով, հաճախումները 269.52 հազարով, տացքը՝ 0.34 մլն. օրինակով: Ցուցանիշների նման փոփոխությունները իրենց ազդեցությունն են թողել հարաբերական ցուցանիշների փոփոխության վրա:

Ուսումնասիրվող տարիներին գրադարանների քանակի կրճատման, իսկ գրադարանային ֆոնդի գրեթե անփոփոխ մնալու արդյունքում մեկ գրադարանի հաշվով գրադարանային ֆոնդը 2015 թ-ին 2011 թ-ի համեմատությամբ ավելացել է 5.6 հազար օրինակով, իսկ 1000 բնակչի հաշվով այն ավելացել է 1187.7 օրինակով:

*Աղյուսակ 1*

ՀՀ-ում գրադարանների գործունեությունը բնութագրող հիմնական բացարձակ ցուցանիշները 2001-2015թթ. [5]

| Տարիներ | Գրադարանների թիվը | Գրադարանային ֆոնդը, մլն. օրինակ | Ընդամենը ընթերցողներ, հազար մարդ | Տացքը (սպասարկված գրականություն), մլն. օրինակ | Հաճախում-ներ, հազար |
|---|---|---|---|---|---|
| 2001թ. | 1131 | 19.7 | 737.2 | 14.4 | 8645.8 |
| 2002թ. | 1113 | 19.6 | 704.9 | 13.4 | 7611.1 |
| 2003թ. | 1085 | 19.5 | 664 | 12.7 | 7249.6 |
| 2004թ. | 1058 | 19.4 | 639.7 | 12.4 | 7225 |
| 2005թ. | 1051 | 19.3 | 650.3 | 12.1 | 7156 |
| 2006թ. | 1045 | 19.2 | 644.7 | 12.1 | 6735 |
| 2007թ. | 1038 | 19.2 | 641 | 12.4 | 6732.5 |
| 2008թ. | 1034 | 19.2 | 631.7 | 12.2 | 6847.9 |
| 2009թ. | 986 | 19.3 | 598.6 | 11 | 6158.7 |
| 2010թ. | 960 | 19.2 | 593 | 11.5 | 6315.7 |
| 2011թ. | 948 | 19.2 | 578.8 | 10.8 | 5775.1 |
| 2012թ. | 913 | 19.4 | 574.7 | 11 | 5627.9 |
| 2013թ. | 900 | 19.2 | 545 | 10.7 | 5254.9 |
| 2014թ. | 868 | 19 | 515.2 | 9.9 | 5024.4 |
| 2015թ. | 830 | 19.1 | 507 | 9.7 | 4872.5 |

Ընթերցողների թվաքանակի կրճատումն իր հետևանքներն է ունեցել մյուս հարաբերական ցուցանիշների ձևավորման վրա: 2015թ-ին 2001թ-ի նկատմամբ մեկ գրադարանի հաշվով ընթերցողների թիվը կրճատվել է 41 մարդով՝ կազմելով 611 մարդ, իսկ մեկ ընթերցողի հաշվով տացքը 19.5 օրինակից կրճատվել է մինչև 19.1 օրինակ (աղյուսակ 2): Վերլուծությունները ցույց են տվել, որ 2001-2015թթ. հաճախումների քանակն ավելի արագ է կրճատվել, քան ընթերցողների թիվը, որի

արդյունքում մեկ ընթերցողի միջին տարեկան հաճախումները 2001թ.-ի 11.7-ից կրճատվել են՝ 2015թ-ին հասնելով 9.6-ի: Նշված փոփոխությունները անդրադարձել են նաև գրքի շրջանառության ցուցանիշի վրա. 2001 թ-ին մեկ գրքի միջին շրջանառությունը կազմել է 0.7, իսկ 2015թ-ին այս ցուցանիշը նվազել է մինչև 0.5:

Աղյուսակ 2

ՀՀ-ում գրադարանների գործունեությունը բնութագրող հիմնական հարաբերական ցուցանիշները

| Տարիներ | Գրադարանային ֆոնդը 1000 բնակչի հաշվով, օրինակ | Մեկ գրադարանին բաժին ընկնող գրադարանային ֆոնդը, 1000 օրինակ | Գրադարանային ֆոնդը մեկ ընթերցողի հաշվով, օրինակ | Ընթերցողների թիվը մեկ գրադարանի հաշվով, մարդ | Տացքը մեկ ընթաերցողի հաշվով (մեկ ըթերցողի ընթերցանությունը), օրինակ | Մեկ ընթերցողի միջին հաճախումների քանակը | Մեկ գրքի միջին շրջանառությունը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2001թ. | 5182.5 | 17.4 | 26.7 | 652 | 19.5 | 11.7 | 0.7 |
| 2002թ. | 6101.1 | 17.7 | 27.8 | 633 | 19.0 | 10.8 | 0.7 |
| 2003թ. | 6080.3 | 18.0 | 29.4 | 611 | 19.1 | 10.9 | 0.7 |
| 2004թ. | 6029.2 | 18.3 | 30.3 | 605 | 19.4 | 11.3 | 0.6 |
| 2005թ. | 6005.9 | 18.4 | 32.1 | 619 | 18.6 | 11.0 | 0.6 |
| 2006թ. | 5969.3 | 18.4 | 29.8 | 617 | 18.8 | 10.4 | 0.6 |
| 2007թ. | 5950.7 | 18.5 | 29.9 | 617 | 19.3 | 10.5 | 0.6 |
| 2008թ. | 5952.1 | 18.6 | 30.4 | 611 | 19.3 | 10.8 | 0.6 |
| 2009թ. | 5951.7 | 19.6 | 32.3 | 607 | 18.4 | 10.3 | 0.6 |
| 2010թ. | 6318.1 | 20.0 | 32.4 | 618 | 19.4 | 10.7 | 0.6 |
| 2011թ. | 6349.3 | 20.3 | 33.2 | 611 | 18.8 | 10.0 | 0.6 |
| 2012թ. | 6425.7 | 21.3 | 33.8 | 629 | 19.2 | 9.8 | 0.6 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2013թ. | 6364.4 | 21.4 | 35.3 | 606 | 19.5 | 9.6 | 0.6 |
| 2014թ. | 6299.9 | 21.9 | 36.9 | 594 | 19.2 | 9.8 | 0.5 |
| 2015թ. | 6370.2 | 23.0 | 37.7 | 611 | 19.1 | 9.6 | 0.5 |

Գրադարանների գործունեությունը հիմնականում պայմանավորված է կրթության և գիտության ոլորտի գործունեությամբ, հետևաբար գրադարանների ընթերցողների, հաճախումների թվաքանակը հիմնականում կախված է ուսումնական հաստատություններում սովորողների, գիտության ոլորտում գիտահետազոտական աշխատանքներ իրականացնողների թվից:

Գծապատկեր 1 [6] ՀՀ ԲՈՒՀ-երում սովորողների թվի դինամիկան 2001-2015թթ., հազար մարդ




Գծապատկեր 1-ում ներկայացված տվյալներից երևում է, որ ընդհանուր առմամբ ավելացել են ՀՀ ԲՈՒՀ-երում սովորողների թիվը՝ 2015թ.-ին 2001թ.-ի նկատմամբ՝ 19.0 հազար մարդով կամ 28.9%-ով: Չնայած, 2001-2015թթ. ԲՈՒՀ-երում սովորողների թվի առավելագույն մակարդակ գրանցվել է 2009թ.-ին՝ 114.6 հազար ուսանող: 2009-2015թթ. ՀՀ ԲՈՒՀ-երում սովորողների թիվը միջին հաշվով տարեկան կրճատվել է 6000-ով կամ 14.1%-ով:

ՀՀ գիտահետազոտական աշխատանքներում ընդգրկված աշխատողների թվաքանակը ուսումնասիրվող տարիներին նույնպես ունեցել է նվազման միտում՝ չնայած առանձին տարիներին գրանցված աճով:

Գծապատկեր 2 [7] ՀՀ գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքականի դինամիկան 2001-2015թթ., մարդ




Գծապատկեր 2-ում ներկայացված տվյալներից երևում է, 2007թ-ին 2001թ-ին համեմատությամբ գիտահետազոտական աշխատանքներում զբաղվածների թիվը նվազել է 18.6%-ով, մինչև 2009թ. այն ավելացել է՝ հասնելով 6960.0 մարդու: 2009-2015թթ. գիտահետազոտական աշխատանքներում զբաղվածների թիվը կրճատվել է 1182 մարդով և կազմել է 5044 մարդ:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ ԲՈՒՀ-երում սովորողների և գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքականի դինամիկան իրենց ազդեցությունն են թողել գրադարանների ընթերցողների թվի և հաճախումների քանակի փոփոխությունների վրա:

Պարզելու համար նշված ցուցանիշների փոխազդեցությունը կառուցել ենք եռաչափ ռեգրեսիոն մոդելներ՝

$$y_{1t}=a_0+a_1x_{1t}+a_2x_{2t}+e_1,\ \hat{y}_{1t}=a_0+a_1x_{1t}+a_2x_{2t} \quad (1),$$

$$y_{2t}=b_0+b_1x_{1t}+b_2x_{2t}+e_2,\ \hat{y}_{2t}=b_0+b_1x_{1t}+b_2x_{2t} \quad (2),$$

որտեղ՝

$x_{1t}$ – ՀՀ ԲՈՒՀ-երում սովորողների թիվը t–րդ տարում, հազար մարդ (գործոնային հատկանիշ)

$x_{2t}$ – ՀՀ գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակը t–րդ տարում, մարդ (գործոնային հատկանիշ),

$y_{1t}$ – գրադարաններում ընթերցողների թիվը t–րդ տարում, հազար մարդ (արդյունքային հատկանիշ),

$y_{2t}$ – գրադարաններ հաճախումների քանակը t–րդ տարում, հազար (արդյունքային հատկանիշ),

$\hat{y}_{1t}$ և $\hat{y}_{2t}$ – արդյունքային հատկանիշների տեսական մակարդակներն են t–րդ տարում, որոնք հաշվարկվում են կառուցված ռեգրեսիոն մոդելների միջոցով,

$a_0;a_1;a_2$ և $b_0;b_1;b_2$ - համապատասխան ռեգրեսիոն մոդելների պարամետրերն են, որոնք գնահատվում են նվազագույն քառակուսիների մեթոդով (համաձայն փոքրագույն քառակուսիների մեթոդի՝ ռեգրեսիոն մոդելի պարամետրերը գտնում ենք այն սկզբունքով, որ արդյունքային հատկանիշի փաստացի և տեսական մակարդակների քառակուսիների գումարը ձգտի նվազագույնի) [8],

$e_1$ և $e_2$ - համապատասխան ռեգրեսիոն մոդելներում չընդգրկված գործոնների և պատահական գործոնների բաղադրիչներն են:

Աղյուսակով ներկայացնենք կատարված ռեգրեսիոն վերլուծության արդյունքները:

*Աղյուսակ 3*

ՀՀ գրադարանների ընթերցողների թվի և հաճախումների քանակի ռեգրեսիոն վերլուծության արդյունքները

| Ցուցանիշներ | Ըստ ՀՀ գրադարանների ընթերցողների թվի | Ըստ ՀՀ գրադարանների հաճախումների քանակի |
|---|---|---|
| Մոդելի տեսքը | $\hat{y}_{1t}=253.9-1.29x_{1t}+0.077x_{2t}$<br>$t_{a1}=1.87$, $t_{a2}=4.76$ | $\hat{y}_{2t}=469.41-22.48x_{1t}+1.29x_{2t}$<br>$t_{b1}=2.27$, $t_{b2}=5.57$ |
| Բազմակի կոռելյացիայի գործակիցը | $R_{y1x1x2}=0.816$ | $R_{y2x1x2}=0.856$ |
| Բազմակի դետերմինացիայի գործակիցը | $R^2_{y1x1x2}=0.667$ | $R^2_{y2x1x2}=0.733$ |

| Մոդելի նշանա-կալիությունը | $F = 11.9$ | $F = 16.5$ |
|---|---|---|
| $t_{crit(\alpha=0.05;k=12)} = 2.18$, $F_{crit(\alpha=0.05;k1=2;k2=12)} = 3.89$ | | |

Մեր կողմից կառուցված ռեգրեսիոն մոդելները կարող ենք համարել նշանակալի:

Աղյուսակ 3-ում ներկայացված վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ ԲՈՒՀ-երում սովորողների թվաքանակի 1000 մարդով ավելացման հետ զուգահեռ, այլ հավասար պայմաններում, գրադարանների ընթերցողների թիվը կրճատվել է 1.29 հազար մարդով ($a_1 = -1.29$), իսկ հաճախումների քանակը՝ 22.48 հազարով ($b_1 = -22.48$):

2001-2015թթ. ՀՀ գրադարաններ հաճախումների քանակը, ընթերցողների թիվը և ՀՀ գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակը ունեցել են նվազման միտումներ, դրանց զարգացումն ընթացել է նույն ուղղությամբ: Ըստ կառուցված ռեգրեսիոն մոդելների, ուսումնասիրվող ժամանակահատվածում, այլ հավասար պայմաններում, ՀՀ գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակի մեկ մարդով կրճատման զուգահեռ ՀՀ գրադարանների ընթերցողների թիվը կրճատվել է 0.077 հազար մարդով կամ 77 մարդով, իսկ հաճախումների քանակը՝ 1.29 հազարով կամ 1290-ով:

Ընտրված գործոնային և արդյունքային հատկանիշների միջև կապը ուժեղ է:

Հաշվարկված դետերմինացիայի գործակիցները ցույց են տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՀՀ գրադարանների ընթերցողների թվի տատանումների շուրջ 66.7%-ը և ՀՀ գրադարանների հաճախումների քանակի տատանումների շուրջ 73.3%-ը պայմանավորված է ՀՀ ԲՈՒՀ-երում սովորողների թվի և գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների թվաքանակի համատեղ տատանումներով:

Բացի մոդելի նշանակալիության գնահատականից անհրաժեշտ է գնահատել ռեգրեսիոն մոդելի ռեգրեսիայի գործակիցների նշանակալիությունը: Մեր հետազոտությունում ՀՀ գիտական հետազոտություններ և մշակումներ կատարող կազմակերպությունների աշխատողների

թվաքանակն էական ազդեցություն է թողնում, ինչպես ՀՀ գրադարանների ընթերցողների թվի, այնպես էլ ՀՀ գրադարաններ հաճախումների քանակի վրա: Այս գործոնային հատկանիշի պարամետրերը երկու մոդելներում էլ կարող ենք համարել նշանակալի:

Կատարված վերլուծության արդյունքների համաձայն ՀՀ ԲՈՒՀ-երում սովորողների թիվը էական ազդեցություն չի թողնում ՀՀ գրադարանների ընթերցողների թվի վրա, այս գործոնի պարամետրը կարող ենք համարել ոչ նշանակալի, սակայն այն էական ազդեցություն է թողել գրադարաններ հաճախումների թվի վրա, երկրորդ մոդելում այս գործոնի պարամետրը կարող ենք համարել նշանակալի: Այս ամենը մեզ թույլ են տալիս եզրակացնելու, որ ՀՀ ԲՈՒՀ-երում սովորողների մի որոշ մասն է դառնում գրադարային ծառայություններից օգտվող, հետևաբար սովորողների թվի կրճատումը անմիջականորեն ազդում է ոչ թե ընթերցողների թվի փոփոխության, այլ հաճախումների քանակի փոփոխության վրա:

Ակնհայտ է, որ գրադարանային ծառայություններից օգտվողների թիվը պայմանավորված է նաև նոր տեխնոլոգիաների զարգացմամբ, մասնավորապես ինտերնետային ծառայությունների հասանելիության աստիճանով: 2009թ.-ից ՀՀ ԱՎԾ-ն հրատարակում է տվյալներ ՀՀ բնակչության՝ ինտերնետային ծառայությունների հասանելիության վերաբերյալ տվյալներ:

Գծապատկեր 3 [9] ՀՀ-ում ինտերնետ հասնելիության բաժանորդների քանակը 2009-2015թթ.



Ինչպես երևում է գծապատկեր 3-ում ներկայացված տվյալներից, 2015թ.-ին 2009թ-ի համեմատությամբ ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակը ավելացել է շուրջ 1.79 անգամ՝ 1227.5 հազարից հասնելով 2199.8 հազար բաժանորդի:

ՀՀ գրադարանների ընթերցողների թվի ( $y_1$ ) և գրադարաններ հաճախումների քանակի ( $y_2$ ) վրա ինտերնետ հասանելիության բաժանորդների քանակի ( $x_t$ ) ազդեցությունը բացահայտելու նպատակով կառուցվել են երկու ռեգրեսիոն մոդելներ՝

ՀՀ գրադարանների ընթերցողների թվի դեպքում՝

$$\hat{y}_{1t} = 725.1 - 0.088x_t \qquad (3),$$
$$r_{y1x} = -0.754; R^2 = 0.570$$

ՀՀ գրադարաններ հաճախումների քանակի դեպքում՝

$$\hat{y}_{2t} = 7927.5 - 1.247x_t \qquad (4):$$
$$r_{y2x} = -0.714\,R^2 = 0.510$$

Երկու դեպքում էլ ուսումնասիրվող երևույթների միջև կապը հակադարձ է և ուժեղ: Կառուցված ռեգրեսիոն մոդելների համաձայն, ուսումնասիրվող ժամանակահատվածում ինտեննետային հասանելիության բաժանորդների քանակի 1000 –ով ավելացումը, այլ հավասար պայմաններում, ՀՀ գրադարանների ընթերցողների թիվը կրճատում է 0.088 հազար մարդով կամ 88 մարդով, իսկ ՀՀ գրադարաններ հաճախումների քանակը՝ 1.247 հազարով: Վերլուծության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ինտեննետային բաժանորդների քանակի ավելացումն ընդլայնել է ինտերնետային գրադարաններից օգտվելու հնարավորությունները, որոնք նույնպես կրճատել են գրադարանների ընթերցողների թվի և հաճախումների քանակը:

Այսպիսով, մշակութային կապիտալի գնահատման չափորոշիչներից մեկը համարվում է գրադարանային գործունեությունը, որն հիմնականում պայմանավորված է կրթության և գիտության ոլորտի գործունեությամբ, հետևաբար գրադարանների ընթերցողների, հաճախումների թվաքանակը հիմնականում կախված է ուսումնական հաստատություններում սովորողների, գիտության ոլորտում գիտահետազոտական աշխատանքներ իրականացնողների թվից և գործնականում այս փոխառնչությունները ունեն նվազման միտում: Ավելին, այ-

սօր գրադարանային ծառայություններից օգտվողների թիվը պայմանավորված է նաև նոր տեխնոլոգիաների զարգացմամբ, մասնավորապես ինտերնետային ծառայությունների հասանելիության աստիճանով, որն անշուշտ իր ներգործությունն է ունենում վերոնշյալ գործընթացների վրա:


**Ամփոփում**

Նոր հազարամյակի սկզբին տնտեսագիտական մտածելակերպում իշխող է այն գաղափարը, որ տնտեսությունն ու մշակույթը բարդ դիալեկտիկական հակասություններով պայմանավորված փոխառնչությունների շղթա են: Այս իսկ պատճառով մեր օրերում դժվար է անտեսել մշակութային կապիտալի կարևորությունը երկրի առջև դրված սոցիալ-տնտեսական հրատապ խնդիրների լուծման գործում:

Հոդվածում վերլուծված է մշակութային կապիտալի տարրերից մեկը՝ առարկայացվածը, և դրա փոխակերպումը մշակութային կապիտալի մեկ այլ՝ ինկորպորատիվ և ինստիտուցիոնալ ձևերի: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մշակութային կապիտալի գնահատման չափորոշիչներից մեկը գրադարանային գործունեությունն է, որն հիմնականում պայմանավորված է կրթության և գիտության ոլորտի գործունեությամբ: Հոդվածում հեղինակը եզրահանգում է, որ գրադարանային գործունեությունը բնութագրող ցուցանիշների նվազումը պայմանավորված է ուսումնական հաստատություններում սովորողների, գիտության ոլորտում գիտահետազոտական աշխատանքներ իրականացնողների թվից:

*Բանալի բառեր.* Մշակութային կապիտալ, գրադարանային գործունեություն, կրթություն, գիտական հետազոտություններ և մշակումներ:


**Գրականություն**


1. Бетехтина Д. А., Сфера культуры как особая область экономической деятельности // Евразийский Международный Научно-Аналитический Журнал, Экиномика и управление в сфере услуг, N4 (36), 2010 // http://www.m-economy.ru/issue.php?num=36 (29.03.2016)

2. Casson M., Cultural Determinants of Economic Performance // Journal of Comparative Economics, 1993, Vol. 17, P. 418
3. Hsiao H.-H. M., An East Asian Development Model: Empirical Explorations // In Search of an East Asian Development Model / Berger. L.P., Hsiao H.-H. M., (eds)., New Brunswick, NJ: Transaction Publishers, 1993, P. 20
4. Димаджио П. Культура и хозяйство / Западная экономическая социология; Хрестоматия современной классики; Сост. И науч. Ред. В.В. Радаев; Пер. М. С. Добряковой и др. ПОССПЕН, 2004 ; Н.В. Большаков, Измерение культурного капитала: от теории к практике, мониторинг общественного мненийя 6 (118), ноябрь-декабрь, 2013 / https://wciom.ru/fileadmin/file/monitoring/2013/118/2013_118_1_Bol's hakov.pdf (05.04.2016); Harrison L. E. and Huntington S. P / Culture Matters; How values shape human progress, Basic Book, A member of the perseus books group; New York, 2000
5. «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2015 թվականին և դինամիկայի շարքեր (2011-2015)», ՀՀ ԱՎԾ., վիճակագրական ժողովածու, Երևան 2016թ., էջ. 461, 462, 463, 473, 474-476,; «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2015», ՀՀ ԱՎԾ, Երևան 2015թ., էջ.139,140; «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2010», ՀՀ ԱՎԾ, Երևան 2010թ., էջ.144,-145,; «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005», ՀՀ ԱՎԾ, Երևան 2005թ., էջ.121-122; «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2010 թվականին և դինամիկայի շարքեր (2005-2010)», ՀՀ ԱՎԾ., վիճակագրական ժողովածու, Երևան 2010թ., էջ. 299; «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2004 թվականին և դինամիկայի շարքեր (1999-2004)», ՀՀ ԱՎԾ., վիճակագրական ժողովածու, Երևան 2010թ., էջ.209; «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2013 թվականին և դինամիկայի շարքեր (2008-2013)», ՀՀ ԱՎԾ., վիճակագրական ժողովածու, Երևան 2014թ., էջ. 437-439; «Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2007 թվականին և դինամիկայի շարքեր (2002-2007)», ՀՀ ԱՎԾ., վիճակագրական ժողովածու, Երևան 2008թ., էջ. 241-242; «Հայաստանի Հանրապետու-

թյան սոցիալական վիճակը 2005 թվականին և դինամիկայի շարքեր (2000-2005)», ՀՀ ԱՎԾ., վիճակագրական ժողովածու, Երևան 2006թ., էջ. 213-214
6. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016», ՀՀ ԱՎԾ, Երևան 2016, էջ. 124; «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011», ՀՀ ԱՎԾ, Երևան 2011, էջ. 129, «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2006», ՀՀ ԱՎԾ, Երևան 2006, էջ. 112;115
7. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016», ՀՀ ԱՎԾ, Երևան 2016, էջ. 146; «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2011», ՀՀ ԱՎԾ, Երևան 2011, էջ. 152; «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2006», ՀՀ ԱՎԾ, Երևան 2006, էջ.127
8. Эконометрика: учебник для магистров / И. И. Елисеева [и др.]; под ред. И. И. Елисеевой.– М.: Издательство Юрайт, 2014.– 453 с., ст. 40-42
9. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016», ՀՀ ԱՎԾ, Երևան 2016, էջ. 342; «Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2014», ՀՀ ԱՎԾ, Երևան 2014, էջ. 341

## ASSESSMENT OF MATERIALIZED ELEMENT OF CULTURAL CAPITAL

**Ani Torosyan**
EREA, Chair of Economy and Management, Researcher

### Summary

At the beginning of new millenium, the ruling theory is that economy and culture are mutual-correlational chain conditioned by complex dialectical concepts. For that reason, in the current days it is difficult to ignore the importnace of cultural capital in the process of solving urgent social-economical issues of the country. In the article one of the materialized elements of cultural capital and its transformation into another forms of the capital- incorporative and institutional is being analysed. The investigations show that one of the standards of capital assessment is the library activity which is mainly conditioned by the activity of the spheres of education and science. In the article, the author

concludes that with decrease of the index characterizing the library activity in conditioned by the number of students in educational institutions and the ones who implement scientific-research works in educational sphere.

*Keywords:* cultural capital, library activity, education, scientific researches and processing

## ОЦЕНКА МАТЕРИАЛИЗИРОВАННОГО ЭЛЕМЕНТА КУЛЬТУРНОГО КАПИТАЛА

**Торосян Ани Тиграновна**
ЕРОА, кафедра экономики и управления, соискатель

### Резюме

В начале нового тысячелетия ведущей теорией является то, что экономика и культура – это цепочка взаимоотношений, обусловленных сложными диалектными пониманиями. Поэтому, в наши дни трудно не заметить важность культурного капитала в процессе решения срочных социально-экономических проблем. В статье проанализирован один из элементов материализированного культурного капитала и его преобразование в другие формы капитала – инкорпоративный и институциональный. Исследования показывают, что одним из стандартов оценки капитала является библиотечная деятельность, которая в основном обусловлена деятельностью сфер образования и науки. В статье автор дает заключение, что снижением индекса, характеризующего библиотечную деятельность, обусловлено количество осуществленных работ в научно-исследовательской сфере.

*Ключевые слова:* культурный капитал, библиотечная деятельность, образование, научные исследования и разработка

# «ՀՀ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆՊԱՍՏՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

***Լիանա Հովհաննեսի Մկրտչյան***
*ԵՎՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, ասպիրանտ*

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (ԸԿԲՆ) ծրագիրը ձևավորվել է Հայաստանի Հանրապետությունում գործող տարաբնույթ նպաստների և փոխհատուցումների համակարգից մեկ միասնական նպաստի համակարգի անցնելու և առավել անապահով ընտանիքների նկատմամբ հասցեագրված սոցիալական աջակցության քաղաքականություն իրականացնելու նպատակով 1998 թ.-ին որոշում N 727[1]: Ընտանեկան նպաստների համակարգի հիմքում ընկած է դեռևս 1994 թվականին՝ մարդասիրական օգնության հասցեականությունն ու սոցիալական արդարությունն ապահովելու նպատակով ստեղծված «Փարոս» համակարգը: 1999-2007 թվականներին այս համակարգի շրջանակներում տրամադրվող պետական նպաստները անվանում էին «աղքատության ընտանեկան նպաստներ», այնուհետ, մինչև 2013 թվականը՝ «ընտանեկան նպաստներ», իսկ 2014 թվականի հունվարի 1-ից՝ «ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» (այսուհետ ԸԿԲՆ):

ԸԿԲՆ ծրագրի իրականացումը կարգավորվում է հետևյալ հիմնական իրավական ակտերով՝

– «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք[2]

Այս օրենքը կարգավորում է Հայաստանում սոցիալական աջակցության տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է սոցիալական աջակցության հասկացությունը, սոցիալական ծառայությունների տեսակները, կազմակերպման և տրամադրման սկզբունքներն ու կարգը, ֆինանսավորման աղբյուրները, սոցիալական աջակցության կառավարման համակարգը:

---

[1] ՀՀ-ում Ընտանեկան նպաստներրի համակարգը ներդնելու մասին ՀՀ կառավարության որոշումը,19 նոյեմբերի 1998 թվականի N 727, քաղ. Երևան, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=6945

[2] Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքը ընդունված է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94972

– «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենք[3]

Այս օրենքը կարգավորում է Հայաստանում պետական նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է պետական նպաստի հասկացությունը, տեսակները և տրամադրման կարգը:

– ՀՀ կառավարության 30.01.2014թ. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 145-Ն որոշում: Այս որոշումը սահմանում է նպաստների նշանակման և վճարման կարգերը, ընտանիքի անապահովության գնահատման կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայի ստեղծման և ձևավորման կարգը, ծրագրի իրականացումից բխող այլ կարգեր և ձևեր:

ԸԿԲՆ ծրագրի շրջանակներում գործող անապահովության գնահատման համակարգը հիմք է ծառայում նաև «Սոցիալապես անապահովներին հիվանդանոցային բուժօգնության տրամադրում» բյուջետային ծրագրի համար:

Սույն օրենքի համաձայն՝ **Ընտանիքների անապահովության գնահատման համակարգը ներառում է**.

1. ընտանիքի անապահովության գնահատման կարգը.
2. ընտանիքի հաշվառումը համակարգում.
3. ընտանիքի անապահովության գնահատման տեղեկատվական բազան[4]:

ԸԿԲՆ ծրագիրը՝ որպես ՀՀ սոցիալական քաղաքականության կարևոր բաղադրիչ, մշակվում և իրականացվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից, իսկ ֆինանսավորումը տրամադրվում է ՀՀ պետբյուջեից: ԸԿԲՆ ծրագիրն իրականացվում է սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների (այսուհետ՝ ՍԾՏՄ) կողմից: Հայաստանում կան 55 ՍԾՏՄ-ներ, որոնցից 38-ը ՀՀ մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումներ են՝ սոցիալական ծառայությունների տարածքային գործակալություններ, իսկ 17-ը՝ Երևանի քաղաքապետարանի, Ա-

[3] Պետական նպաստների մասին ՀՀ օրենքը՝ ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 12-ին, ՀՕ-154-Ն, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94822

[4] Տե՛ս նույն տեղում Հոդված 9

րարատի, Վանաձորի, Գյումրու և Ջերմուկի քաղաքային համայնքների ղեկավարների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումներ՝ սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններ: ՄԾՏՄ-ները համագործակցում են սոցիալական աջակցության խորհուրդների հետ, որոնք ստեղծվում են ՀՀ կառավարության որոշմամբ և գործում են սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմիններին կից՝ հասարակական հիմունքներով: Սոցիալական աջակցության խորհուրդների կազմում ընդգրկվում են մարզպետարանի ներկայացուցիչը, տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցիչը, ՄԾՏՄ ներկայացուցիչը, զբաղվածության տարածքային մարմնի ներկայացուցիչը և ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչները:

2017 թվականին բյուջետային դասակարգման սոցիալական պաշտպանություն բաժնին ընդհանուր առմամբ հատկացվել է պետական բյուջեի 27,4% կամ համախառն ներքին արդյունքի 7,8%[5]: Ստորև ներկայացված է Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագրի հատկացումները պետբյուջեից 2008-2016 թթ. կտրվածքով:

Գծապատկեր 1. ԸԿԲՆ ծրագրի կշիռը սոցիալական պաշտպանության համար հատկացված ընդհանուր բյուջեում, տոկոս




Աղբյուր՝ ՀՀ 2015-2016թթ. պետական բյուջեի մասին օրենքներ, ՀՀ 2008-2014թթ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ ԱՍՀՆ 2015 թվականի հաշվետվություն, ՏՁՀԿ հաշվարկներ

[5] Նախարար Արտեմ Ասատրյանը ներկայացրել է 2016թ. սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացված աշխատանքները, http://www.mlsa.am/?p=10712 02.08.2017, ժամը՝ 19:43

Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 1-ը, 2008թ-ից 2016 թ. ԸԿԲՆ ծրագրի համար հատկացված բյուջետավորումը նվազել է 4.1 %-ով:

ԸԿԲՆ ծրագրի շրջանակներում առկա են նպաստների հետևյալ երեք տեսակները.

1) ընտանեկան նպաստ՝ երեխա ունեցող աղքատ ընտանիքների համար,

2) սոցիալական նպաստ՝ երեխա չունեցող աղքատ ընտանիքների համար,

3) հրատապ օգնություն՝ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների համար[6]:

ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարեսկզբին հաստատում է տվյալ տարվա պետական բյուջեով ԸԿԲՆ ծրագրին հատկացված միջոցների բաշխումն ըստ հիմնական ուղղությունների և մարզերի: Մասնավորապես՝ 2015-ին ԸԿԲՆ ծրագրերի 82.7 %-ը ուղղվել է ընտանեկան նպաստներին, 13.0 %-ը՝ սոցիալական նպաստներին, իսկ 4.3 %-ը՝ հրատապ դրամական օգնությանը: ՀՀ ԱՍՀՆ նախարարը կարող է տարվա վերջին եռամսյակում, անհրաժեշտության դեպքում, կատարել ֆինանսական միջոցների վերաբաշխում՝ ըստ ընտանեկան, սոցիալական նպաստների և հրատապ օգնություն, ընդհանուր միջոցների մեկ տոկոսի սահմաններում[7]:

---

6 Պետական նպաստների մասին ՀՀ օրենքը՝ ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 12-ին,ՀՕ-154-Ն, http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94822

7 2015 թվականի ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափերը սահմանելու մասին ՀՀ կառավարության N 19-Ն որոշում, 15 հունվարի 2015 թվական, http://www.epension.am/am/gov_decrees/gov_decision_article?content.cid=1545

Գծապատկեր 2. ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորման կառուցվածքը 2015 թվականին, տոկոս




Աղբյուր՝ ՀՀ կառավարության 15 հունվար 2015 թվականի N 19-Ն որոշում, ՏԶՀԿ հաշվարկներ

Այսպես, եթե 2011թ. դեկտեմբերին ընտանեկան նպաստ էր ստանում շուրջ 84000 ընտանիք, ապա 2015թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում նպաստառու (ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող) ընտանիքների թիվը կազմել է շուրջ 106300[8]:

2015թ. ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված շուրջ 136000 ընտանիքից ընտանեկան կամ սոցիալական նպաստ է ստացել ամսական, միջին հաշվով, 105408-ը՝ հաշվառված ընտանիքների շուրջ 77,6%-ը, իսկ եռամսյակային հրատապ օգնություն, միջին հաշվով, 8598 ընտանիք կամ հաշվառվածների 6.3%-ը, նպաստի միջին չափը կազմել է 30350 դրամ: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ամփոփ տեղեկատվության, 2016թ. հուլիսի 1-ի դրությամբ ընտանեկան և սոցիալական նպաստներ ստացող ընտանիքների քանակը կազմել է 106 648, որի 75.5%-ը բաժին է ընկել ընտանեկան նպաստ ստացող ընտանիքներին[9]: Նպաստառուների թվի աճը մասամբ պայմանավորված է այս ծրագրի համար պետական բյուջետավորման չափաբաժնի ավե-

[8] Ազգային Ժողովում ներկայացվել է սոցիալական պաշտպանության ոլորտի 2015թ. գործունեության հաշվետվությունը, http://www.mlsa.am/?p=6335 02.08.2017, ժամը՝ 19:43

[9] Հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-հունիսին, http://www.armstat.am/am/?nid=82&id=1792, 02.08.2017, 19.40

լացմամբ, ինչպես նաև երկրում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակով: Ընտանեկան նպաստի իրավունք ունեցող ընտանիքներին տրվել է միանվագ դրամական օգնություն. երեխայի ծննդյան կապակցությամբ՝ 5181 ընտանիքի, երեխայի առաջին դասարան ընդունվելու կապակցությամբ՝ 10903 ընտանիքի, ընտանիքի անդամի մահվան կապակցությամբ՝ 170 ընտանիքի:

**Իսկ 2016 թ. ընթացքում 106.000 ընտանիք ընդգրկվել են Ընտանական նպաստների համակարգում և փաստորեն անապահովության գնահատման ուղղակի մեթոդաբանության հիման վրա որոշելով անապահով ընտանիքներին՝ տրամադրվում են դրամական միջոցներ: Շուրջ 80.000 ընտանիք, որոնք հիմնականում երեխաներ ունեցող ընտանիքներն են, ստանում են ընտանեկան նպաստներ՝ միջին չափով 31350 հազար դրամ: 26.000 ընտանիքները երեխաներ չունեցող կամ միայն չափահաս անձանցից բաղկացած ընտանիքներն են, որոնք ստանում են սոցիալական նպաստներ[10]:**

Որպեսզի ընտանիքը համարվի ԸԿԲՆ ծրագրի շահառու (Ընտանեկան նպաստների համակագում ընդգրկվելու) հավանական անապահով ընտանիքը պետք է նախ և առաջ դիմի ՍԾՏՄ: Տվյալ ընտանիքի համար ստեղծվում է սոցիալական քարտ (անձնագիր) և ընտանիքը հաշվառվում է համակարգում: Ընտանիքի համար հաշվարկվում է ընտանիքի անապահովության միավոր, որի մեծությունն էլ որոշիչ է, թե արդյոք այդ ընտանիքը կարող է ստանալ նպաստ, թե ոչ: Անապահովության միավորի մեծությունը կարող է ազդել նաև նպաստի մեծության վրա, ինչպես նաև լինել որոշիչ պետական այլ սոցիալական ծառայություններից օգտվելու համար:

Ընտանեկան նպաստ կարող են ստանալ հաշվառված այն ընտանիքները, որոնց ընտանիքի անապահովության միավորը (ԸԱՄ) գերազանցում է սահմանային միավորը (ներկայում կազմում է 30.00): Ընտանեկան նպաստը պարբերաբար (ամսական), շարունակաբար վճարվող նպաստ է: Դրա չափը կախված է ընտանիքում երեխաների քանակից: Այն որոշվում է՝ նպաստի բազային մեծությանը գումարելով յուրաքանչյուր երեխայի հաշվով հավելում: Ընդ որում, յուրաքանչյուր

---

[10] Նախարար Արտեմ Ասատրյանը ներկայացրել է 2016թ. սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացված աշխատանքները, http://www.mlsa.am/?p=10712 02.08.2017, ժամը՝ 19:50

երեխայի հաշվով տրվող հավելման մեծությունը տարբերվում է բարձր լեռնային և սահմանամերձ բնակավայրերի համար, ինչպես նաև՝ ըստ ԸԱՄ մեծության:

ԸԿԲՆ ծրագիրը պետական սոցիալական պաշտպանության ոլորտի երկրորդ խոշոր ծրագիրն է՝ Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրից հետո: 2015 թվականին պետական բյուջեից ԸԿԲՆ ծրագրի իրականացմանը հատկացվել է 38.4 մլրդ. դրամ, իսկ 2016 թվականին՝ 38.4 մլրդ. դրամ: Վերջինը կազմում է սոցիալական պաշտպանության բյուջեի 9.5 տոկոսը, կամ պետական բյուջեի 2.8 տոկոսը: Ծրագրի ֆինանսավորման ծավալները 2008-2016 թվականների ընթացքում շարունակաբար աճել են՝ միջին տարեկան 4.5 տոկոսով: Բացառություն է կազմում 2011 թվականը, երբ ֆինանսավորման ծավալները կրճատվեցին 6.1 տոկոսով: 2011 թվականին նվազել է նաև շահառու ընտանիքների թվաքանակը՝ ավելի քան 18 տոկոսով: Հետագա տարիներին շահառուների թվաքանակն աճել է՝ 2015-ին կազմելով մոտ 105 հազար ընտանիք[11]:

Գծապատկեր 3. ԸԿԲՆ ծրագրի ֆինանսավորման ծավալները և շահառուների քանակը




*Ըստ ՀՀ ԱՍՀՆ 2015 թվականի հաշվետվության

Աղբյուր՝ ՀՀ 2015-2016թթ. պետական բյուջեի մասին օրենքներ, ՀՀ 2005-2014թթ. պետական բյուջեի կատարման հաշվետվություններ, ՀՀ ԱՍՀՆ 2015 թվականի հաշվետվություն, ՏՁՀԿ հաշվարկներ

[11] ՀՀ օրենքը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին,ընդունվել է 09.12.2015, http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5383&lang=arm

ԸԿԲՆ ծրագրի շրջանակներում տնային տնտեսություններին տրամադրվող Նպաստների վճարման համար հիմք է ծառայում ընտանիքների անապահովության գնահատման համակարգը: Այս համակարգի արդյունքում առավել շատ ռեսուրսներ են հասել աղքատներին, քան կհասներ,եթե հասցեավորման որևէ փորձ չկիրառվեր: Այսինքն՝ կիրառվող համակարգը պրոգրեսիվ է: Առաջին քվանտիլում պրոգրեսիվության գործակիցը կազմել է մոտ 2.75, ինչը նշանակում է, որ ամենաաղքատ 20 տոկոսին ԸԿԲՆ ծրագրի բյուջեից հասել է 2.7 անգամ ավելի շատ ռեսուրս, քան անապահովության գնահատման համակարգի չկիրառման (պատահական բաշխման) պարագայում: Այնուհանդերձ, համակարգի արդյունավետությունը բավականին ցածր է, քանի որ ռեսուրսների 25-30 տոկոսը փաստացի հասնում է ոչ աղքատ՝ վերին 3 քվանտիլային խմբերին (գծապատկեր 4):

Գծապատկեր 4. ԸԿԲՆ ծրագրի շահառուների և բյուջեի բաշխումն ըստ քվանտիլային խմբերի




*Քվանտիլները բերվում են մինչև Նպաստների վճարումը
Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, ՏՁՀԿ հաշվարկներ

Համակարգում մեծ է ինչպես «ընդգրկման սխալը», այնպես էլ «չընդգրկման սխալը»: Դրա մասին են վկայում ինչպես 2014 թվականի ՏՏԿԱՀ տվյալները, այնպես էլ ՏՁՀԿ 2015 թվականի ՏՏ հետազոտության տվյալները: Եթե որպես համակարգի շահառուներ դիտարկենք բոլոր աղքատներին, ապա չընդգրկման սխալը կկազմի 73 տոկոս (ըստ ՏՏԿԱՀ՝ 79 տոկոս): Այսինքն, 2015-ին աղքատների 73 տոկոսը փաս-

տացի ընդգրկված չեն եղել համակարգում: Չընդգրկման սխալը շատ աղքատների համար (ներառյալ ծայրահեղ աղքատները) կազմում է 63 տոկոս (73 տոկոս՝ ըստ ՏՏԿԱՀ), իսկ միայն ծայրահեղ աղքատների համար՝ 56 տոկոս (69 տոկոս՝ ըստ ՏՏԿԱՀ): Այսպիսով, ծայրահեղ աղքատների նվազագույնը 56 տոկոսը չի օգտվում ԸԿԲՆ ծրագրից[12]:

Հարկ է նշել, որ ԸԿԲՆ ծրագիրը մեծ կարևորություն ունի Հայաստանում աղքատության կրճատման և կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքների աջակցության առումով. այս ծրագրի բացակայությունը կհանգեցնի սոցիալ-ժողովրդագրական, ինչպես նաև տնտեսական չափազանց մեծ բացասական հետևանքների: Այն համապատասխանում է քաղաքականությունների գերակայություններին և ռազմավարական նպատակադրումներին, հասարակության և շահառուների իրական կարիքներին: Այն աղքատության կրճատմանն ուղղված ամենակարևոր գործիքն է Հայաստանում: ԸԿԲՆ ծրագիրն ուղղված է երկրում աղքատության զսպմանը՝ հետևաբար տնտեսական զարգացման անբարենպաստ պայմաններում, անկախ ֆիսկալ իրավիճակից, բյուջետային սահմանափակումներից և ռեսուրսների առկայությունից, ԸԿԲՆ ծրագիրը պետք է ընդլայնվի: Հետևաբար, ճիշտ է նաև հակառակ պնդումը. տնտեսական զարգացման լավատեսական սցենարների պարագայում ԸԿԲՆ ծրագիրը պետք է աստիճանաբար կորցնի իր դերը: Այս բյուջետային ծրագրի և դրա ֆինանսավորման պահանջը հակադարձ համեմատական է երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակին և բյուջետային հնարավորություններին: Պետական բյուջեի վրա ԸԿԲՆ ծրագրի ճնշման թուլացման մյուս տարբերակը համակարգի արդյունավետության բարձրացումն է: ԸԿԲՆ ծրագրի արդյունքում շուրջ 105 հազար ընտանիք կամ Հայաստանի բոլոր ընտանիքների մոտ 14 տոկոսը ստացել են դրամական աջակցություն պետությունից: Դրանցից շուրջ 80 հազարը երեխա ունեցող ընտանիքներ են, որոնց մոտ մեկ չորրորդը՝ 3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներ են:

Հասցեականության վերոնշյալ խախտումները նվազեցնելու առումով հարկ է հաշվի առնել հետևյալ հանգամանքը, եթե նախկինում կա-

[12] Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ բյուջետային ծրագրի գնահատում, հեղինակային խումբ, Մուշեղ Թումանյան, Կարինե Հարությունյան, Լիլիթ Հակոբյան, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն, 2016, էջ 19

րիքավոր ընտանիքներին հաշվառում էին ըստ փաստացի բնակության վայրի, ապա այսօր ընդգրկում են ըստ հաշվառման հասցեի, սակայն կան անապահով ընտանիքներ, որոնք նույնիսկ հաշվառման հասցե չունեն: Այսինքն՝ խիստ կարիքավոր, շատ հաճախ դրսում հայտնված և բնակության վայր չունեցող ընտանիքները ինքնաբերաբար չեն կարող ընդգրկվել ԸԿԲՆ ծրագրում: Այս խնդիրը լուծելու համար առաջարկվում է, որ ընտանիքի համայնքի Սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների դեպք վարողները տնայցերի միջոցով պարզեն ծրագրի հավանական ընտանիքի բնակության վայրի հետ կապված հարցերը: Այդ նպատակով հարկ է բարձրացնել Սոցիալական ծառայությունների տարածքային մարմինների և սոցիալական աջակցության խորհուրդների աշխատանքների արդյունավետությունը՝ ներդնելով համապատասխան մեխանիզմներ և ընթացակարգեր, ակտիվ համագործակցություն սահմանել հասարակական կազմակերպությունների և միջազգային կազմակերպությունների հետ, ծրագրով սահմանված նյութական աջակցություն տալուց բացի իրականացնելով նաև սոցիալ-հոգեբանական պարբերական և կանոնակարգված հանդիպումներ ընտանիքի անդամների հետ: ԸԿԲՆ ծրագրում ընդլայնել անկախ մոնիտորինգի և գնահատման դերը: Հասարակության առավել մեծ ուշադրության առարկա դարձնել ԸԿԲՆ ծրագրի իրականացումը և արդյունքների քննարկումը: Ստեղծել մեխանիզմներ հանրային վերահսկողության ներդրման համար: Ապահովել ԸԿԲՆ ծրագրի կատարման և առաջընթացի վերաբերյալ պարբերական հաշվետվություններ:

## Ամփոփում

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (ԸԿԲՆ) ծրագիրը սկիզբ առավ՝ գործող տարաբնույթ նպաստների համակարգից մեկ միասնական հասցեագրված նպաստի համակարգի անցնելու նպատակով 1998 թ.-ին: ԸԿԲՆ ծրագրի արդյունքում շուրջ 105 հազար ընտանիք կամ Հայաստանի բոլոր ընտանիքների մոտ 14 տոկոսը ստացել են դրամական աջակցություն պետությունից: Դրանցից շուրջ 80 հազարը երեխա ունեցող ընտանիքներ են, որոնց մոտ մեկ չորրորդը՝ 3 և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներ են: Սակայն ծրագիրը դեռևս ունի հասցեականության, թիրախավորման

բացեր, և նյութականից աջակցությունից զատ նաև սոցիալ-հոգեբանական աջակցության տրամադրման:

*Բանալի բառեր* – սոցիալական պաշտպանության համակարգ, պետական նպաստների համակարգ, ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ, ընտանիքների անապահովության գնահատման համակարգը, հասցեականություն

**Գրականություն**


1. Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ բյուջետային ծրագրի գնահատում, հեղինակային խումբ, Մուշեղ Թումանյան, Կարինե Հարությունյան, Լիլիթ Հակոբյան, Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն, 2016
2. ՀՀ-ում Ընտանեկան նպաստներրի համակարգը ներդնելու մասին ՀՀ կառավարության որոշումը, 19 նոյեմբերի 1998 թվականի N 727, քաղ. Երևան,
   http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=6945
3. Սոցիալական աջակցության մասին ՀՀ օրենքը ընդունված է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին,
   http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=94972
4. Պետական նպաստների մասին ՀՀ օրենքը՝ ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 12-ին, ՀՕ-154-Ն,
   http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=94822
5. 2015 թվականի ընտանեկան նպաստի, սոցիալական նպաստի, հրատապ օգնության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի չափերը սահմանելու մասին ՀՀ կառավարության N 19-Ն որոշում, 15 հունվարի 2015 թվական,
   http://www.epension.am/am/gov_decrees/gov_decision_article?content.cid=1545
6. Ազգային Ժողովում ներկայացվել է սոցիալական պաշտպանության ոլորտի 2015թ. գործունեության հաշվետվությունը,
   http://www.mlsa.am/?p=633502.08.2017, ժամը՝ 19:43
7. Հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-հունիսին,
   http://www.armstat.am/am/?nid=82&id=1792, 02.08.2017, 19.40

8. ՀՀ օրենքը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին, ընդունվել է 09.12.2015, http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5383&lang=arm

## ПРОБЛЕМЫ ПРОГРАММЫ “ЛЬГОТЫ ДЛЯ УЛУЧШЕНИЕ ЖИЗНЕННЫХ СТАНДАРТОВ СЕМЕЙ В РА”

**Мкртчян Лиана Юваннесовна**
ЕРОА, кафедра экономики и управления, аспирант

### Резюме

По смыслу настоящего закона семья – это малая социальная группа граждан, состоящих на учете и (или) фактически проживающих в одном и том же месте жительства, члены которой ведут общее хозяйство и имеют общий бюджет, а также одиноко проживающий гражданин. Видами государственных пособий являются: а) семейное пособие, б) пособие по уходу за ребенком, в) единовременное пособие при рождении ребенка.

Степень необеспеченности семьи оценивается на основе показателей дохода каждого члена семьи, состава семьи, занятости каждого члена семьи, социального положения и показателей, характеризующих других условия. Порядок оценки необеспеченности семьи разрабатывается, а показатели, характеризующие малообеспеченность семьи, отбираются с учетом данных выборочных исследований бюджетов домашнего хозяйства. Семейное пособие назначается той малоимущей семье, балл необеспеченности которой выше предельного балла необеспеченности семьи. Порядок оценки необеспеченности семьи, перечень необходимых документов, а также предельный балл необеспеченности семьи устанавливается Правительством Республики Армения.

*Ключевые слова:* система социальной защиты, система государственных льгот, льготы для улучшения уровня жизни семей, система оценки уязвимости в семье, адресность.

## THE PROBLEMS OF THE PROGRAM "BENEFITS AIMED AT IMPROVING THE LIVING STANDARDS OF FAMILIES IN RA"

**Liana Mkrtchyan**
EREA, Chair of Economics and Management, Post-graduate student

**Summary**

The Family Benefits Program in Armenia has been implemented for more than 20 years with a view of supporting poor families. Given the considerable level of poverty in Armenia, it has gained visibility and delivered important results.

However, the issue of improved targeting of family allowance program was always viewed as the challenge for social work. Measures taken towards this end have mostly focused on: (i) the revision of the family poverty assessment system using integrated household living conditions survey data; (ii) revision of the family allowance size and linking it with the level of family poverty, area of residence (close to the border, highly mountainous) and number of children in the family; (iii) improved administration; (iv) training of staff in the municipalities; and (v) awareness raising campaigns among households. In general, the social protection system in Armenia can be divided into social insurance and social assistance. The equity and addressing in access of social services provided, and assurance of equity in quality remains an important and high priority issue for Armenia.

*Keywords:* Social Welfare System, State Benefits System, Benefits for improving the living standards of families, family vulnerability assessment system, addressing.

# ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿՈՒՄ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԵԿՇՌՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ (BALANCED SCORECARD) ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՒԼԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

***Լիանա Վովայի Պետրոսյան***
*ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, ասպիրանտ*

Ցուցանիշների հաշվեկշռված համակարգը (Balanced Scorecard) կազմակերպությունների կառավարման ամենաարդյունավետ ժամանակակից գործիքներից է: Սակայն, բազմաթիվ ընկերությունների փորձը ցույց է տալիս, որ Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի (ՑՀՀ) ներդրումը ձախողվում է թերի վերլուծության, ռազմավարության բացակայության, ոչ հստակ նպատակների և գործընթացների պատճառով: Առևտրային բանկերում, ինչպես շահույթ հետապնդող նաև այլ ընկերություններում, ՑՀՀ-ի ներդրման համար անհրաժեշտ է անցնել որոշակի փուլերով: Այդ ճանապարհի հիերարխիկ կառուցվածքը սկսվում է առաքելության ձևակերպմամբ և ավարտվում՝ ՑՀՀ-ի միջոցով ռազմավարության իրագործմամբ [1].

Առաքելություն՝ ինչի՞ համար է ստեղծվել ընկերությունը

↓

Արժեքներ՝ ինչի՞ն է հավատում և ինչպե՞ս է գործելու

↓

Տեսլական՝ ինչի՞ն է ուզում հասնել

↓

Ռազմավարություն՝ ինչպիսի՞նն է մրցակցային խաղի պլանը

↓

Ցուցանիշների հաշվեկշռված համակարգ՝ ինչպե՞ս է իրագործվելու այդ պլանը

Մինչ Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի մշակումը և ներդրումը, անհրաժեշտ է հստակ և հակիրճ սահմանել բանկի առաքելությունը, արժեքները և տեսլականը: Հստակ ձևակերպված առաքելությունը հաջող ռազմավարության հիմնաքարերից է, որը ղեկավարներին օգնում է շարժվել նախանշված ճիշտ ուղղությամբ, իսկ

գործընկերներին, հաճախորդներին և այլ սուբյեկտներին հուշում ընկերության գոյության նպատակի մասին: Արժեքներն այն համոզմունքներն ու գերակա ուղղություններն են, որոնց հետևելով պետք է առաջ շարժվի բանկը: Եթե առաքելությունը համարենք ճանապարհ, ապա տեսլականը այն վերջնակետն է, որին ձգտում է հասնել բանկը՝ հետևողական և արդյունավետ աշխատանքի շնորհիվ:

Այնուհետև, առաջարկում ենք գնահատել բանկի ռազմավարական դիրքը, առկա ռեսուրսները, հնարավորությունները: Միայն ամբողջական և համակարգված տեղեկատվությանը տիրապետելով է հնարավոր կազմել իրատեսական ծրագիր և ջանքեր ու միջոցներ ուղղել դրա իրականացմանը: Ռազմավարական ծրագիր մշակելիս առևտրային բանկի ղեկավարությունը պետք է դիտարկի այն որպես ճանապարհային քարտեզ, որտեղ հստակ ամրագրված են տեսլականը՝ այն, թե ինչին է ձգտում բանկը, և առաքելությունը՝ ինչու է գնում այդ ուղիով:

Բանկի ներկա վիճակը գնահատելու համար կարելի է սկսել գործարար աշխարհում լայնորեն կիրառվող SWOT վերլուծությունից: Անվանումը ձևավորվել է հետևյալ բառերի սկզբնատառերից՝

- Strengths – ուժեղ կողմեր
- Weaknesses – թույլ կողմեր
- Opportunities – հնարավորություններ
- Threats –սպառնալիքներ

SWOT-ը հնարավորություն է տալիս ընտրել այնպիսի ռազմավարություն, որը առավելագույնս համապատասխանում է կազմակերպության առկա ռեսուրսներին, առավելություններին և միջավայրին [2]: Իհարկե, այս գործիքը ունի թերություններ, այն իմաստով, որ հաճախ շատ ընդհանրական բնույթ է կրում և խորը վերլուծության համար բավարար չէ: Սակայն, SWOT վերլուծություն կարելի է իրականացնել և՛ ամբողջ բանկի, և՛ առանձին ստորաբաժանումների համար, ինչը թույլ կտա, բացահայտել բանկի ուժեղ և թույլ կողմերը՝ սպառնալիքների վերացման և հնարավորությունների օգտագործման նպատակով:

**Աղյուսակ 1. Առևտրային բանկի SWOT վերլուծության օրինակ**

| | |
|---|---|
| **S**trengths<br>• Տեխնոլոգիական հագեցվածություն<br>• Կորպորատիվ մշակույթ<br>• Ծառայությունների որակ<br>• Հաճախորդների բազա<br>• Դրական համբավ | **W**eaknesses<br>• Թույլ մարքեթինգային քաղաքականություն<br>• Աշխատակիցների բարձր հոսունության<br>• Չդիվերսիֆիկացված պորտֆել<br>• Մասնաճյուղային փոքր ցանց<br>• Կազմակերպական բարդ կառուցվածք |
| **O**pportunities<br>• Համագործակցություն ֆինանսավորող կառույցների հետ<br>• Նոր շուկաներ<br>• Բարձրակարգ մասնագետների ներգրավում<br>• Ծառայությունների ընդլայնում<br>• Կառավարման արդյունավետ համակարգի ներդրում | **T**hreats<br>• Նորմատիվային դաշտի փոփոխություններ<br>• Նոր մրցակիցներ<br>• Տնտեսական աճի ցածր տեմպ<br>• Ժամկետանցումների աճ<br>• Վստահության նվազեցում |

Աղյուսակ 1-ում ներկայացված է SWOT վերլուծության պարզ մոտեցում, երբ առանձնացվում են բանկի ներքին և արտաքին գործոնները՝ առանց հետագա հաշվարկների՝ ըստ կշիռների, կարևորության: Ուժեղ և թույլ կողմերը ցանկացած կազմակերպության համար ներքին գործոններ են և կարող են ուղղակիորեն կառավարվել, իսկ հնարավորություններն ու սպառնալիքները կամ վտանգները արտաքին են, և ղեկավարությունը կարող է միայն կանխատեսել և արձագանքել դրանց: Դրանք արտաքին միջավայրի ազդակներն են, որոնց անմիջական կրողն է հանդիսանում ցանկացած ընկերություն, առավել ևս ներկայիս գլոբալիզացման պայմաններում:

Հաջորդ քայլով անհրաժեշտ է իրականացնել գործունեության միջավայրի խորը ուսումնասիրություն, որն արդեն իսկ մասամբ իրականացվում է SWOT վերլուծության ժամանակ: Այդ նպատակով, առաջարկում ենք կիրառել արտաքին միջավայրի վերլուծության PEST կամ PESTEL մոդելը, որի անվանումը ձևավորվել է political, economic, socio-cultural, technological, environmental, legal բառերի սկզբնատառերից:

PEST կամ PESTEL վերլուծությունը պարզ և արդյունավետ գործիք է, որն օգտագործվում է մակրոտնտեսական իրավիճակի քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային, տեխնոլոգիական, բնապահպանական և իրավական վերլուծություն իրականացնելու համար: Արդյունքում բացահայտվում են բանկի վրա ազդող արտաքին միջավայրի ուժերը, որոնք կարող են ստեղծել և՛ հնարավորություններ, և՛ վտանգներ կազմակերպության համար [3]: Հետևաբար, PESTEL- վերլուծության կատարման նպատակը հետևյալն է.

- պարզել բանկի գործունեության ներկա արտաքին գործոնները,
- բացահայտել արտաքին գործոնները, որոնք կարող են փոխվել ապագայում,
- օգտագործել այդ փոփոխությունները կամ հնարավորությունները՝ ի օգուտ բանկի, կամ համապատասխան միջոցառումներ ձեռնարկել վտանգներից պաշտպանվելու համար:

Այս վերլուծություններից հետո, երբ արդեն բանկի տարբեր ստորաբաժանումների ղեկավարների ու աշխատակիցների հարցումների, վերլուծությունների հիման վրա համակարգված ձևով ներկացվում են բանկի կառավարման և զարգացման ծրագրի մշակման համար կարևոր ներքին և արտաքին գործոնները, անհրաժեշտ է առանձնացնել մրցակցային առավելությունները: Հաջողված ռազմավարական ծրագրի արդյունքներից է եզակի կամ կարևոր մրցակցային առավելության զարգացումը: Ժամանակակից աշխարհում ինտելեկտուալ կապիտալը առավել հաճախ է ապահովում կայուն մրցակցային առավելություն, քան ֆիզիկականը կամ ֆինանսականը, և ժամանակի ընթացքում ինտելեկտուալ ռեսուրսները ապահովում են ավելացված արժեքի աճ [4,5]:

Այսպիսով, դիտարկումների, վերլուծությունների և հարցումների արդյունքում գնահատելով առկա իրավիճակը, մշակվում է ռազմավարություն՝ հիմնվելով բանկի ուժեղ կողմերի, մրցակցային առավելությունների և ապագայի վերաբերյալ կանխատեսումների վրա: Անհրաժեշտ է հստակ ձևակերպել բանկի ռազմավարությունը և ապահովել դրա տարածում բանկի բոլոր ստորաբաժանումների միջև, որպեսզի յուրաքանչյուր աշխատակցի և ստորաբաժանման նպատակները համապատասխանեցվեն ռազմավարությանը:

Ռազմավարության իրագործման համար մշակվում և ներդրվում է Ցուցանիշների հաշվեկշռված համակարգը: ՑՀՀ-ը պետք է դիտարկել ոչ թե որպես ցուցանիշների համախումբ, այլ կառավարման հաշվեկշռված, ամբողջական համակարգ:

Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի ձևավորման և ներդրման հիմնական սկզբունքներն են [6]՝

- ✓ Փոփոխությունների գործընթացի կառավարում բանկի բարձրագույն ղեկավարության կողմից,
- ✓ Ռազմավարության իրարգործումը՝ որպես շարունակական գործընթաց,
- ✓ Աշխատանքային պարտականությունների իրականացման միջոցով աշխատակիցների ներգրավում ռազմավարության իրարգործմանը,
- ✓ Ռազմավարության իրագործման նպատակով բանկի վերափոխում,
- ✓ Անձնակազմի յուրաքանչյուր անդամի կողմից բանկի ռազմավարության գիտակցում և իրագործման մեջ ներգրավվածություն:

Վերոնշյալ սկզբունքներից առաջինի կիրառումը հատկապես կարևոր է ՑՀՀ-ի ներդրումն ապահովելու համար: Այդ սկզբունքի իմաստը կայանում է նրանում, որ բանկի ղեկավար անձնակազմը պետք է նախաձեռնի ՑՀՀ-ի մշակումն ու ներդրումը: Եվ նրանք են պատասխանատու ռազմավարության ու կառավարման մեջ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու հրատապության ու անխուսափելիության հանգամանքը բոլոր աշխատակիցներին հասցնելու համար:

Այս նպատակով Գծանկար 1-ում առանձնացված են պատասխանատվության որոշակի շրջանակներ և ղեկավարներ՝ ՑՀՀ-ի ներդրման գործընթացի սահուն կազմակերպման համար:

**Գծանկար 1. Ռազմավարական կառավարման պատասխանատվության գոտիները [7]**




Ֆինանսական տնօրենը իրականացնում է ներդրումների կառավարում, տարեկան բյուջեի կազմման և հաշվապահական քաղաքականության սահմանման գործընթացների կառավարում: Տեղեկատվական ծառայության տնօրենը ղեկավարում է տվյալների բազայի և տեղեկատվական համակարգերի ստեղծման գործընթացը: Ռազմավարական պլանավորման գործընթացների պատասխանատուն ռազմավարական պլանավորման գծով տնօրենն է: Անձնակազմի կառավարման տնօրենը կառավարում է այն գործընթացները, որոնք կապված են նպատակներ սահմանելու, աշխատակիցների մոտիվացման և խրախուսման համակարգերի մշակման ու ներդրման հետ:

ՑՀՀ կիրառելիս առևտրային բանկի գործունեությունը դիտարկվում է որպես ֆինանսներ, հաճախորդներ, ներքին գործընթացներ և ուսուցում ու աճ բաղադրիչների ամբողջություն: Հաշվեկշռվածության գաղափարը կայանում է նրանում, որ բաղադրիչներից յուրաքանչյուրի համար սահմանվում են միմյանց հետ կապված երկարաժամկետ ռազ-

մավարական խնդիրներ և նպատակներ: Յուրաքանչյուր աշխատակցի, ստորաբաժանման կամ օղակի առջև դրված նպատակներին հասնելով էլ լուծվում են այդ խնդիրները: Ֆինանսներ բաղադրիչի խնդիրների իրականացումը անմիջականորեն կապված են հաճախորդների թվով, նրանց գոհունակության մակարդակով: Որպեսզի բանկը կարողանա բավարարել հաճախորդների պահանջները, անհրաժեշտ է արդյունավետ կազմակերպել ներքին գործընթացները: Իսկ գործընթացներ բաղադրիչներում սահմանված նպատակների իրականացումը մեծապես կախված է ուսուցման և աճի գործընթացներում ընկերության կարողությունների իրացումից: Նպատակները պետք է լինեն հստակ ձևակերպված, չափելի, հասանելի և դրանց իրականացումը պետք է ապահովվի կոնկրետ պատասխանատուների շնորհիվ, որոշակի ժամկետներում:

Նպատակներ սահմանելուց հետո, հաջորդ քայլով անհրաժեշտ է որոշել արդյունավետության առանցքային ցուցանիշներ (Key performance indicators-KPI), որոնց միջոցով էլ չափվում է նպատակների իրականացումը:

Այնուհետև իրականացվում է, այսպես կոչված, կասկադավորում, ինչի շնորհիվ ռազմավարությունը կազմակերպական մակարդակից բերվում է անհատական մակարդակ: Այսինքն, կասկադավորումը ցուցանիշների համակարգերի, ռազմավարական քարտեզների, նպատակների մշակումն է բանկի կազմակերպական կառուցվածքի յուրաքանչյուր մակարդակի համար, ընդհուպ մինչև յուրաքանչյուր աշխատակից: Օրինակ, գործողությունների կասկադավորումը ՝հաճախորդներ’ բաղադրիչի համար, կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով [8].

- ✓ Հաճախորդների բազայի ավելացում
- ✓ Նոր հաճախորդների տարեկան 15% աճի ապահովում
- ✓ Նոր սեգմենտներ և շուկաներ գրավելու համար մարքեթինգային ծրագրի իրականացում
- ✓ Նոր շուկաներ մուտք գործելու հնարավորությունների ուսումնասիրություն
- ✓ Ներկա և կանխատեսվող շուկաների մրցակցային կողմերի վերլուծություն

Գործողությունների վերոնշյալ շղթայում առանձին ստորաբաժանումներ կամ աշխատակիցներ ստանձնում են համապատասխան պատասխանատվություն, սահմանվում են նպատակներ, դրանց հաս-

նելու ժամկետներ և ցուցանիշներ՝ արդյունքները գնահատելու համար: ՑՀՀ-ի հաջող կասկադավորման կարևոր նախապայմանն այն է, որ յուրաքանչյուր աշխատակից խորապես հասկանա համակարգում ընդգրկված նպատակները և ցուցանիշները, որոնք կազմվում են և՛ իր, և՛ վերին մակարդակների համար, որպեսզի տեսնի իր գործողությունների կարևորությունն ու կապը դրանց հետ:

Այսպիսով, ՑՀՀ-ի ներդրման և ռազմավարության հաջող իրագործման համար, անհրաժեշտ է իրականացնել իրավիճակի, բանկի ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն, հստակ պատկերացնել անցնելիք ուղին: ՑՀՀ-ն պետք է դիտարկել ոչ թե որպես ցուցանիշների համախումբ, այլ կառավարման հաշվեկշռված, ամբողջական համակարգ: Բանկի յուրաքանչյուր աշխատակից պետք է ներգրավված լինի ռազմավարության իրագործման գործընթացում: Շատ կարևոր է պարբերական ստուգումների և վերահսկողության իրականացումը՝ հետադարձ կապ ապահովելու և ռազմավարության, սահմանված նպատակների և ցուցանիշների մեջ անհրաժեշտ շտկումներ իրականացնելու համար:

**Ամփոփում**

Բազմաթիվ ընկերություններում ռազմավարության իրագործման և Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի (ՑՀՀ) ներդրման խոչընդոտ են հանդիսանում տեղեկատվության թերի վերլուծությունը, հստակ ձևակերպված ռազմավարության և դրա ներդրման գործընթացների բացակայությունը: Հոդվածում նկարագրվում են առևտրային բանկում Ցուցանիշների հաշվեկշռված համակարգի ներդրման փուլերը[a] առանձնահատուկ ուշադրություն դարձնելով իրավիճակի նախնական վերլուծությանը, բանկի մրցակցային առավելություններին, ինչպես նաև համակարգի կասկադավորման անհրաժեշտությանը[a] անձնակազմի կողմից ռազմավարական կառավարման նոր մեթոդի ընկալման և իրագործման նպատակով: Կարևորվում է նաև ավագ ղեկավարության դերը գործողությունների ռազմավարական պլանի մշակման, հաշվեկշռված ցուցանիշների վրա հիմնված կառավարման համակարգի ձևավորման և բանկի արդյունավետության բարձրացման գործում:

*Բանալի բառեր.* Ցուցանիշների հաշվեկշռված համակարգ (ՑՀՀ), առևտրային բանկ, ռազմավարություն, առաքելություն, տեսլական,

մրցակցային առավելություն, SWOT-վերլուծություն, PESTEL-վերլուծություն, կասկադավորում:

### Գրականություն

1. D. J. Collis, M. G. Rukstad "Can you say what your strategy is?", Harvard Business Review, April 2008, 10 p.
2. N. Ritson "Strategic Management", 2011, 52p.
3. https://www.strategicmanagementinsight.com/tools/pest-pestel-analysis.html (մուտքի ամսաթիվ՝ 25.08.2017թ.)
4. О. Г. Ваганян "Управление формированием и развитием интеллектуального капитала (концепция, технология, системотехника)". Ереван, 2016, 236 с.
5. Г. А. Ваганян "Машинная графика в управлении". Ереван, 1985, 175 с.
6. А. М. Гершун, Ю. С. Нефедьева "Разработка сбалансированной системы управления. Практическое руководство с примерами" 2-е изд. М., Олимп Бизнес", 2005, 123 с.
7. Р. С. Каплан, Д. П. Нортон "Сбалансированная система показателей: От стратегии к действию". Пер. с англ.-М.: "Олимп- Бизнес", 2003, 210 с.
8. https://onstrategyhq.com/resources/building-plan/ (մուտքի ամսաթիվ՝ 01.09.2017թ.)

## ЭТАПЫ И ПРОЦЕДУРА ВНЕДРЕНИЯ СБАЛАНСИРОВАННОЙ СИСТЕМЫ ПОКАЗАТЕЛЕЙ (BALANCED SCORECARD) В КОММЕРЧЕСКОМ БАНКЕ

**Петросян Лиана Воваевна**
*ЕРОА, кафедра экономики и управления, аспирант*

### Резюме

В многочисленных компаниях барьером препятствующим реализации стратегии и внедрению Сбалансированной системы показателей (ССП) являются неполный анализ информации, отсутствие четко сформулированной стратегии и процедур внедрения. В статье описаны этапы

внедрения Сбалансированной системы показателей в коммерческом банке, обращая особое внимание на предварительный анализ ситуации, конкуретниых преимуществ банка и необходимость каскадировния системы для понимания и осуществления персоналом нового метода стратегического управления. Выделяется также роль руководителей и старших менеджеров в деле формирования стратегического плана действий, построения системы управления на основе сбалансированных показателей и повыщения эффективности деятельности банка.

*Ключевые слова*: Сбалансированная система показателей (ССП), коммерческий банк, стратегия, миссия, ведение, конкуретное преимущество, SWOT-анализ, PESTEL-анализ, каскадирование.

## THE BALANCED SCORECARD INTRODUCTION STAGES AND PROCEDURES IN A COMMERCIAL BANK

**Liana Petrosyan**
EREA, Chair of Economics and Management, Post-graduate student

### Summary

In numerous companies, the incomplete analysis of information, the lack of a clearly defined strategy and implementation procedures are barriers to the implementation of the strategy and the introduction of the Balanced Scorecard (BSC). The article describes the stages of introducing and implementing the Balanced Scorecard in a commercial bank, paying special attention to the preliminary analysis of the situation, the competitive advantages of the bank and the need for cascading as the personnel can understand and implement the new method of strategic management. The role of directors and senior managers in forming a strategic action plan, building a management system based on balanced indicators and increasing the efficiency of the bank's activities is also highlighted.

*Keywords*: Balanced scorecard (BSC), commercial bank, strategy, mission, vision, competitive advantage, SWOT analysis, PESTEL analysis, cascading.

# ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

***Լիանա Հարությունի Օսիպյան***
*ԵԿՏԱ, Տնտեսագիտության և*
*կառավարման ամբիոն, հայցորդ*

Գիտության և կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների հիմնական նպատակը գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումն է: Այդ գործընթացում վճռորոշ դերակատարում ունի պետությունը: ՀՀ ում գիտության ոլորտը կարևորվում է որպես երկրի անվտանգության ապահովման կրթության, տնտեսության, մշակույթի և հասարակության առաջընթացի զարգացման բացառիկ գործոն: Գիտության ոլորտում կրթության կառավարման հիմնախնդիրներից են՝ գիտատեխնիկական ներուժի զարգացումը, գիտության և տեխնիկայի նվաճումների տնտեսության մեջ ներդրման խրախուսումը, գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը, հայագիտության զարգացման նպաստելը և այլն: Գիտության ոլորտի զարգացման վերոգրյալ հիմնախնդիրների լուծման համար ՀՀ-ում կատարվել են մի շարք փոփոխություններ: Բայց ոլորտի կառավարումը ունի բացթողումներ որոնք պետք է լուծվեն առաջնահերթ: Այդ կոնտեքստում առաջարկում ենք մի քանի ուղիներ:

1. Գիտության, կրթության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերի թվաքանակի աճի ապահովում, ինչպես նաև գիտության ոլորտի ենթակառուցվածքների և նյութատեխնիկական բազայի արդիականացում:

Ըստ ԲՈՀ-ի[1] հրապարակված արդյունքների 2010-2016թթ ընթացքում հանրապետությունում գիտական աստիճանի վկայագիր են ստացել 3348 հոգի, որոնցից 263ը գիտության դոկտոր և 3085ը գիտության թեքնածու,իսկ 2000-2009թթ.-ի ընթացքում հանրապետությունում գիտական աստիճանի վկայական ստացել են 4567 հոգի, որից 452 գիտության դոկտոր, 4057ը գիտության թեկնածուի աստիճան: Վիճակագրության դինամիկան ցույց է տալիս, որ վերջին 6 տարիներին գիտությամբ զբաղվողների թիվը կրճատվել է 12.19% ով (1219 մարդ):

[1] ԲՈՀ-http://boh.am/

Գիտության աստիճան ունեցող անհատների միջին տարիքը կազմում է 56տ, գիտությունների թեկնածուների միջին տարիքը 52տ.-ը իսկ դոկտորներինը 66տ: Ընդ որում զգալի է միջին սերնդի պակասը՝ 27-35 տարեկանները կազմում են ընդհամենը 15%, 36-50 տարեկանները 16%, իսկ 60ից բարձր տարիք ունեցողները 47%: Պետք է նկատել որ չկա երիտասարդների մոտ գիտությամբ զբաղվելու ցանկություն, իսկ դա պայմանավորված է ոլորտում հայտնի մի շարք բացթողումներով:

ա) Շարունակվում է բարձր որակավորում ունեցող կադրերի արտահոսքը ինչպես գիտության ոլորտից, այնպես էլ երկրից բացակայում է երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման պետական նպատակային քաղաքականությունը և համապատասխան ռազմավարությունը:

բ) Նյութատեխնիկական բազան և ենթակառուցվածքները չեն համապատասխանում ժամանակակից գիտության պահանջներն:

գ) Ոչ լիարժեք են հետազոտությունների գիտատեղեկատվական հենքը, բացակայում է էլեկտրոնային գրադարանների ցանցը: Գիտական հրատարակչական գործունեությունը չի բավարարում միջազգային չափանիշներին: Բացի վերոգրյալներից անհրաժեշտ է ուշադրությունը հրավիրել հետևյալ հարցերի լուծմանը:

- Գիտության պետական ֆինանսավորման անբավարար մակարդակը
- Գիտության ֆինանսավորման մեջ տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության ցածր մակարդակը
- Գիտության և տեխնոլոգիաների ոլորտի կառավարման համակարգի անհամապատասխանությունը ժամանակակից չափանիշներին
- Գիտության որոշ բնագավառներում բարձր որակավորում ունեցող կադրերի ոչ բավարար թվաքանակը
- Գիտաշխատողների բարձր տարիքային կազմը, գիտական կադրերի պատրաստման և վերապատրաստման արդյունավետ համակարգի բացակայությունը
- Գիտական կազմակերպությունների մեծամասնության զարգացման ռազմավարական ծրագրերի բացակայությունը
- Գիտական ենթակառուցվածքների արտադրանքի մեծամասնության անհամապատասխանությունն արդի չափանիշներին

- Տնտեսության և արդյունաբերության կողմից գիտական հետազոտությունների իրականացման պատվերների անբավարար մակարդակը
- Գիտություն-արտադրություն կապի խրախուսման մեխանիզմների բացակայությունը
- Կիրառական և նորարական հետազոտությունների փոքրաթիվ քանակը
- Միջդիսցիպլինար հետազոտությունների համակարգման ոչ բավարար մակարդակը
- Գիտնականների ինչպես նաև ասպիրանտների

Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները[2] ցույց են տալիս, որ առկա խնդիրների լուծումը և ՀՀ-ում գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավումը տեսնում ենք հետևյալ միջոցների իրականացման մեջ:

ա) Մշակել և ներդնել գիտական կադրերի պատրաստման նորարական մեխանիզմ: Գիտական և բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրերի պատրաստման նոր եղանակների կիրառում: Կազմել ՀՀ տնտեսության առանձնահատկությունների հայեցակարգ որը ուղղված կլինի ասպիրանտական ուսուցման բովանդակային բարեփոխումներին ու ատենախոսությունների գիտական մակարդակի բարձրացմանը: Պետք է անցում կատարել ժամանակակից գիտական, կրթական և ասպիրանտական եվրոպական չափանիշներին: Մասնավորապես, կիրառել հեռահար ուսուցման նոր մեթոդները, նոր ուսուցման ծրագրերը և էլեկտրոնային միջոցները:

բ) Ստեղծել այնպիսի միջավայր, որում ներգրավված կլինեն երտասարդ կադրերը: Դրամաշնորհային ծրագրերով աջակցել երտասարդ գիտական աշխատողներին, խթանել երիտասարդների մուտքը դեպի գիտություն: Երիտասարդ կադրերի համար մեծ նշանակություն ունի կարիերայի բարձրացումը, ուստի պետք է մշակել և ներդնել բարձր արդյունավետությամբ աշխատող գիտական աշխատողների խրախուսման մեխանիզմները, բարելավվել գիտական աշխատողների աշխատանքային և սոցիալական պայմանները, ինչպես նաև բարձր կենսաթոշակ՝ կենսաթոշակի անցնելու դեպքում:Այսօր քննիչի

[2] http://lib.armedu.am/

կամ դատավորի կենսաթոշակը մոտ տասը անգամ բարձր է պրոֆեսորի կենսաթոշակից, որն անընդունելի է:

գ) Գիտական ներուժի վերարտադրության արդյունավետության բարձրացումը, գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդման ապահովում: ՀՀ-ում գիտության ոլորտի առաջընթաց զարգացման համար սկզբունքային նշանակություն ունի գիտական կադրերի արդյունավետ վերարտադրության և սահուն սերնդափոխության ապահովման հարցը:

ՀՀ-ում ոչ լիարժեք են հետազոտությունների գիտահետազոտական հենքը, բացակայում են էլեկտրոնային կրթական շտեմարանների և գրադարանների, բուհական հաստատությունների ցանցը: Գիտահրատարակչական գործունեությունը չի բավարարում միջազգային չափանիշներին: Գրեթե անհնար է երիտասարդ գիտնականի մենագրության հրապարակումը կամ միջազգային կոնֆերանսների մասնակցությունը:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ գիտական հրապարակումների քանակը նախորդ տարիների ընթացքում կազմել է՝ 1) ըստ պետական գիտական կազմակերպությունների և բուհերի անձնագրավորման տվյալների 2011-2014 թվականներին հրապարակվել է տարեկան միջինում 4 464 գիտական հոդված՝[3] Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի գիտական պարբերականներում, ինչպես նաև 332 գիրք ու մենագրություն: Այդ ցուցանիշները 2011 թվականին կազմել են 4 362 և 273, իսկ 2014 թվականին՝ 4 619 և 437: Վերլուծությունը ցույց է տալիս, որ գիտական հոդվածների քանակն աճել է մոտ 6 տոկոսով, իսկ գրքերինը և մենագրություններինը՝ 60 տոկոսով.

2) ըստ ԷսՋեյԱր-Սիմագո Ջըրնըլ էնդ Քանթրի Ռենք (SJR-SCImago Journal & Country Rank) [4]կայքի 2016 թվականի հուլիսի 30-ի տվյալների՝ Սկոպուս (Scopus) գիտատեղեկատվական շտեմարանում ընդգրկված գիտական պարբերականներում Հայաստանի գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի կողմից հրապարակված փաստաթղթերի քանակը 2011-2015 թվականներին կազմել է 5 201, ինչը նախորդ հինգ տարիների համեմատ աճել է 56 տոկոսով՝

[3] scs.am/uploaded/info/razmav-naxagic-2017-20.doc

[4] http://www.irtek.am/views/act.aspx?aid=91223&sc=%20

2006-2010 թվականներին հրապարակվել է 3 323: Այդպիսի աճը մոտ 1.75 անգամ գերազանցում է Սկոպուս (Scopus) շտեմարանում ընդգրկված 231 երկրների 2011-2015 թվականների գումարային հրապարակումների քանակի աճը 2006-2010 թվականների նկատմամբ, ինչը կազմում է մոտ 32 տոկոս: Հայաստանի գիտական աշխատությունների քանակը 2013-2015 թվականներին եղել է համապատասխանաբար 1 034, 1 066 և 953: Վերոդրյալ ցուցանիշները վկայում են, որ մարդկային կապիտալի պոտենցիալը ՀՀ-ում բավականին բարձր է, սակայն արդյունավետ չի կառավարվում գիտության ոլորտում:

2011-2015 թվականներին ավելացել է նաև միջազգային համագործակցությունների շրջանակներում Հայաստանի գիտաշխատողների համահեղինակությամբ հրապարակված գիտական աշխատությունների մասնաբաժինը՝ տարեկան միջին արժեքը 2011-2015 թվականներին կազմել է 57.5 տոկոս, իսկ 2006-2010 թվականներին՝ 54.0 տոկոս: Այդ ցուցանիշը 2013-2015 թվականներին եղել է համապատասխանաբար 56.4, 58.4 և 63.0:

2) Հայաստանի գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի կողմից 2006-2015 թվականներին հրապարակած գիտական աշխատությունների (փաստաթղթերի) քանակը և միջազգային համագործակցության շրջանակներում հրապարակվածների մասնաբաժինն ըստ էսՋեյԱր-Սիմագո Ջըրնըլ էնդ Քանթրի Ռենք (SJR-SCImago Journal & Country Rank)-ի տվյալների (2016 թվականի հուլիսի 30-ի դրությամբ):

3) ըստ Վեբ օֆ Սայնս (Web of Science)-ի ԻնՍայտես (InCites) շտեմարանի տվյալների Հայաստանի Հանրապետության գիտահետազոտական կազմակերպությունների և բուհերի կողմից հրապարակած և Վեբ օֆ Սայնս (Web of Science)-ում ընդգրկված գիտական հոդվածների քանակը 2011-2015 թվականներին եղել է 3 827, իսկ 2006-2010 թվականներին՝ 2 549, աճը կազմել է մոտ 50 տոկոս (ըստ 2016 թվականի օգոստոսի 8-ի տվյալների): Գիտական հոդվածների թիվը 2011-2015 թվականներին կազմել է համապատասխանաբար 713, 837, 744, 727 և 806:

Ստորև ներկայացվում է աղյուսակ ՀՀ-ում բուհերի կառավարման մեխանիզմը 2014-2015-2016 թվերի հաշվետվության հիման վրա կատարված հետազոտության արդյունքները, որոնք հաստատում են վերոգրյալ խնդիրների առկա և դրանց լուծման անհրաժեշտությունը:

2014թ ՀՀ բուհերի հաշվետվություն

| | ՀՀ Բուհեր | ՀՀԿԳԹ փոխանցում | Աշխատակազմի աշխատավարձ | Հոգի | 1աշխ.-ի ամսական միջին | Ռեկտորի աշխատավարձ | Ֆին. Տարում օգտագործված միջոցների չափը | ուս. Վճարներ | Պետբյուջե փոխանցված հարկեր | Հարկա-տուների դիրք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԵՊՀ | 2,664,878,000 | 6,733,208,000 | 2920 | 192,157 | 808,500 | | 5,990,174,00 | 1,956,672,000 | 66 |
| 2 | ԵՄ ՀԱՊ բժշկ.համալս. | | 6,873,076,600 | 3105 | 184,462 | 631,000 | 11,509,226,000 | 12,018,675,000 | 2,133,567,300 | 63 |
| 3 | Հայաստանի Պետական տնտեսա-գիտական Համալսարան | 330,170,000 | 2,503,780 | 834 | 250,028 | | | | 684,047,800 | 171 |
| 4 | Հայաստանի Պետական Ճարտարա-գիտական Համալսարան | 1.526.009.430 | 2,685,365,000 | 1810 | 123,978 | 355,752 | 3,840,630,000 | 1,810,373,600 | 603,903,600 | 199 |
| 5 | Ճարտարա-պետության և շինարարու-թյան Հայաս-տանի ազգա-յին համալսա-րան | 185,972,900 | 1,524,571,483 | 933 | 136,171 | 411,095 | 2,074,978,565 | 1,241,128,567 | 476,915,800 | 265 |
| 6 | Հայաստանի պետական ագրարային համալսարան | 960.649 | 2.315.380.000 | 1564 | 140.000 | | 356.922.000 | 194.298.000 | 595,527,300 | 194 |
| 7 | Եվրոպական Կրթական Տարածա-շրջանային Ակադեմիա | 27,749,900 | 290,238,841 | 268 | 90,249 | 289.225 | 788,076,018 | 718,122,618 | 125,508,000 | 844 |
| 8 | Հայաստանի Ֆրանսիական Համալսարան | 1,058,000 | 342,601,000 | 206 | 138,592 | | 726,251,000 | 532,145,000 | | |
| 9 | Հայաստանի Ամերիկյան Համալսարան | | 1,739,749,000 | 276 | 525,286 | | 2,468,313,000 | 1,204,947,000 | 490,674,900 | 243 |

## 2015թ ՀՀ բուհերի հաշվետվություն

| | ՀՀ Բուհեր | ՀՀԿԳԹ փոխանցում | Աշխատակազմի աշխատավարձ | Հոգի | 1աշխ.-ի ամսական միջին | Ռեկտորի աշխատավարձ | Ֆին. Տարում օգտագործված միջոցների չափը | ուս. Վճարներ | Պետբյուջե փոխանցված հարկեր | Հարկա-տուների դիրք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԵՊՀ | 2,664,878,000 | 6,733,208,000 | 2920 | 192,157 | 808,500 | | 5,990,174,00 | 1,956,672,000 | 66 |
| 2 | ԵՄ ՀԱՊ բժշկ.համալս. | | 6,873,076,600 | 3105 | 184,462 | 631,000 | 11,509,226,000 | 12,018,675,000 | 2,133,567,300 | 63 |
| 3 | Հայաստանի Պետական տնտեսա-գիտական Համալսարան | 330,170,000 | 2,503,780 | 834 | 250,028 | | | | 684,047,800 | 171 |
| 4 | Հայաստանի Պետական Ճարտարա-գիտական Համալսարան | 1.526.009.430 | 2,685,365,000 | 1810 | 123,978 | 355,752 | 3,840,630,000 | 1,810,373,600 | 603,903,600 | 199 |
| 5 | Ճարտարա-պետության և շինարարու-թյան Հայաս-տանի ազգա-յին համալսա-րան | 185,972,900 | 1,524,571,483 | 933 | 136,171 | 411,095 | 2,074,978,565 | 1,241,128,567 | 476,915,800 | 265 |
| 6 | Հայաստանի պետական ագրարային համալսարան | 960.649 | 2.315.380.000 | 1564 | 140.000 | | 356.922.000 | 194.298.000 | 595,527,300 | 194 |
| 7 | Եվրոպական Կրթական Տարածա-շրջանային Ակադեմիա | 27,749,900 | 290,238,841 | 268 | 90,249 | 289.225 | 788,076,018 | 718,122,618 | 125,508,000 | 844 |
| 8 | Հայաստանի Ֆրանսիական Համալսարան | 1,058,000 | 342,601,000 | 206 | 138,592 | | 726,251,000 | 532,145,000 | | |
| 9 | Հայաստանի Ամերիկյան Համալսարան | | 1,739,749,000 | 276 | 525,286 | | 2,468,313,000 | 1,204,947,000 | 490,674,900 | 243 |

2016թ ՀՀ բուհերի հաշվետվություն

| | Բուհեր | ՀՀԿԳԹ փոխանցում | Աշխատակազմի աշխատավարձ | Հոգի | 1աշխ.-ի ամսական միջին | Ֆին. Տարում օգտագործված միջոցների չափը | ուս. Վճարներ | Պետբյուջե փոխանցված հարկեր | Հարկա-տուների դիրք |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ԵՊՀ | 2,664,878,000 | 6,719414000 | 2900 | 217000 | 10259136000 | 6187534 | 1,956,672,000 | 66 |
| 2 | ԵՄՀԱՊ բժշկ. համալս. | | 6,873,076,600 | 3105 | 184,462 | 11,509,226,000 | 12,018,675,000 | 2,133,567,300 | 63 |
| 3 | Հայաստանի Պետական տնտեսա-գիտական Համալսարան | 330,170,000 | 2,503,780 | 834 | 250,028 | | | 684,047,800 | 171 |
| 4 | Հայաստանի Պետական Ճարտարա-գիտական Համալսարան | | 2,685,365,000 | 1810 | 123,978 | 3,840,630,000 | 1,810,373,600 | 603,903,600 | 199 |
| 5 | Ճարտարապետ-տության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան | 185,972,900 | 1,524,571,483 | 933 | 136,171 | 2,074,978,565 | 1,241,128,567 | 476,915,800 | 265 |
| 6 | Հայաստանի պետական ագրարային համալսարան | | 257,822,200 | 162 | 132,624 | 3,109,074 | 1,830,986 | 595,527,300 | 194 |
| 7 | Եվրոպական Կրթական Տարածաշրջա-նային Ակադեմիա | 27,749,900 | 290,238,841 | 268 | 90,249 | 788,076,018 | 718,122,618 | 125,508,000 | 844 |
| 8 | Հայաստանի Ֆրանսիական Համալսարան | 1,058,000 | 342,601,000 | 206 | 138,592 | 726,251,000 | 532,145,000 | | |
| 9 | Հայաստանի Ամերիկյան Համալսարան | | 1,739,749,000 | 276 | 525,286 | 2,468,313,000 | 1,204,947,000 | 490,674,900 | 243 |

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### Ամփոփում

Գիտության և կրթության ոլորտում իրականացող բարեփոխումների հիմնական նպատակը գիտելիքի վրա հիմնված տնտեսության և հասարակության ստեղծումն է: Գիտության ոլորտում կրթությաան կառավարման հիմնախնդիրներից են՝ գիտատեխնիկական ներուժի զարգացումը, գիտության և տեխնիկայի նվաճումների տնտեսության մեջ ներդրման խրախուսումը, գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը, հայագիտության զարգացման նպաստելը և այլն: Միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ առկա խնդիրների լուծումը և ՀՀ-ում գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավվումը տեսնեւմ եմ մի քանի բարեփոխումների կայանալու մեջ: Մշակել և ներդնել գիտական կադրերի պատրաստման նորարական մեխանիզմ, ստեղծել այնպիսի միջավայր որում ներգրավված կլինեն երտասարդ կադրերը, ինչպես նաև

Բարձրացնել գիտական ներուժի վերարտադրության արդյունավետության, գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդման ապահովում:

*Բանալի բառեր*՝ կրթություն, դոկտոր, կրթության կառավարում


### Գրականություն


1. ВАГАНЯН Г. А "Виртуальные технологии менежмента" ЕРЕВАН - 2006
2. http://www.iatp.am/arcaler_scorecard/xls/aedu.htm
3. https://ru.wikipedia.org/wiki/Webometrics_Ranking_of_World_Universities
4. http://www.webometrics.info/en/About_Us
5. ВАГАНЯН Г. А "Системотехника управления социально-экономическими процессами" Системотехника. Под редакцией А. Гусакова. Москва, Фонд" Новое тысячелетие
6. scs.am/uploaded/info/razmav-naxagic-2017-20.doc
7. http://www.irtek.am/views/act.aspx?aid=91223&sc=%20

# ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ОБРАЗОВАТЕЛЬНЫМИ СИСТЕМАМИ В НАУЧНОЙ СФЕРЕ

**Осипян Лиана Арутюновна**
ЕОРА, кафедра Экономики и менеджмента, соискатель

## Резюме

Основная цель реформ, проводимых в научно-образовательной сфере, заключается в формировании экономики и общественности, основанных на знаниях.

Основными проблемами управления образовательными системами в науке являются: развитие научно-технического потенциала, поощрение инвестиций в достижения науки и техники, интеграция науки, образования и производства, содействие развитию арменоведения и т.д.

Результаты исследования международного опыта показывают, что решение существующих проблем и вовлечение молодых кадров в сферу науки РА, мы видим после проведения нескольких реформ.

Разработать и внедрить новаторский механизм подготовки научных кадров, создать такую среду, в которую будут вовлечены молодые кадры, в том числе необходимо также повысить эффективность воспроизводства научного потенциала, обеспечить укоренение молодых кадров в сфере науки.

*Ключевые слова:* Образова́ние – единый целенаправленный процесс воспитания и обучения, а также совокупность приобретаемых знаний, умений, навыков, ценностных установок, опыта деятельности и компетенции

## THE MAIN PROBLEMS OF EDUCATION MANAGEMENT IN SCIENCE

**Liana Osipyan**
EREA, Chair of Economics and Management, Researcher

**Summary**

The main goal of reforms in science and education is to build a knowledge-based economy and society. The main problems of education management in science are followings: development of scientific and technical potential, the promotion of science and technology investment in the economy, the integration of science, education and production and contribution to the development of Armenology and so on.I am seeing the solution of existing problems and the involvement of young specialist in the field of science in Armenia in number of improvements. Develop and introduce an innovative mechanism for the training of scientific staff, create an environment in which young specialist will be involved, as well as to increase the efficiency of reproduction of scientific potential, and the provision of younger specialist in science.

*Keywords*: Education is the process of facilitating learning, or the acquisition of knowledge, skills, values, beliefs, and habits

# THE IMPACT OF BLOCKHAIN ON BUSINESS ENVIRONMENT

***Hamidreza Mahjoub***
*EREA, Chair of Economics and Management, Researcher*

The technology most likely to change the next decade of business is not the social web, big data, the cloud, robotics, or even artificial intelligence. It is the blockchain, the technology behind digital currencies like Bitcoin. While bitcoin has gotten lots of press for its mysterious founder(s) and wild swings in valuation, the infrastructure behind it is the technology poised to be a truly transformative innovation. In fact, blockchain has the potential to reshape some of the foundational structures of our economy and society.

Blockchain has captured the imagination of Silicon Valley and Wall Street alike, leaving behind its origins as the underlying technology of Bitcoin. Yet much of the discussion around its potential uses remains abstract. The focus is on the power of a distributed ledger to decentralize markets and undermine the control of existing intermediaries.

However, the potential of blockchain is more nuanced and far-reaching than that simple narrative. To move beyond the theoretical to the practical, consider a range of specific real-world applications across a cross section of markets and industries, including travel, energy, real estate, and finance. Blockchain perfectly addresses the problems at hand and quantify how it might shift the dynamics of the industry. Private and public companies poised to serve as enablers or exploiters of the shift and analyze where blockchain could create new profit pools or undermine existing ones.

A key takeaway across these applications is that blockchain is not just about disintermediating the intermediary. In some cases, blockchain could disrupt markets and existing participants, while in others, it promises to help drive cost savings by reducing labor-intensive processes and eliminating duplicate effort. In some instances, it can create new markets by exposing previously untapped sources of supply. The common thread is that by enabling a fundamentally new type of database technology that can be distributed across organizations, blockchain creates the foundation

for solving problems or seizing opportunities that have eluded current systems.

The heart of blockchain's potential lies in the unique properties of a distributed database and how they can improve transparency, security, and efficiency. Historically, organizations used databases as central data repositories to support transaction processing and computation. Control of the database rested with its owner, who managed access and updates, limiting transparency, scalability, and the ability for outsiders to ensure records were not manipulated. A distributed database was practically impossible because of technology limitations. However, advances in software, communications, and encryption now allow for a distributed database spanning organizations.

In its purest form, as used by Bitcoin to create and track units of the crypto-currency, blockchain is a shared digital ledger of transactions recorded and verified across a network of participants in a tamper-proof chain that is visible to all. Permissioned or private variations add a layer of privileging to determine who can participate in the chain and the majority of commercial applications are to use some form of permissioned model.

The most important properties of blockchain, which are transparency, security, and efficiency, make it a particularly good choice for reshaping businesses that are bogged down by inefficiencies, and for enabling new business models based on distributed marketplaces and technology. Blockchain is not a "cure all" or a substitute for fixing broken business processes, but it is believed that it is particularly well suited to address a variety of problems.

**Facilitating secure, de-centralized transactions among many parties in the IoT**:

Because of the inherently decentralized nature of the ledger, blockchain is particularly effective at handling distributed transactions among a very large number of parties. In addition, blockchain delivers a high level of security for each transaction because of the cryptographic verification and validation among parties. As new distributed economic models evolve that cover tens or even hundreds of millions of assets (such as cars or apartments in the case of the Sharing Economy) or machines

(the Internet of Things), secure, distributed transaction models will be needed to facilitate transactions.[1]

**Reducing fraud and increasing trust with increased security:**

In many parts of the world, corruption can lead to counterfeiting or alteration of official records. For example, bribery might drive a government insider to change a record describing the amount of a payment made, or the owner of record of a particular asset. Similarly, a malicious actor might attempt to selectively alter or destroy records (for example a cyber-hacker changing payment records or trades between parties). Because each transaction is uniquely encoded via cryptography and this encoding is validated by other parties on the blockchain. Any attempt to alter or remove transaction information would be detected by others and corrected by other nodes.

**Increasing transparency and efficiency in multi-party transactions:**

In any transaction involving two or more parties, each party typically enters the same transaction separately into that organization's own independent systems. In the world of capital markets, the same trade order might be entered into the systems of two counterparties. In each organization, the transaction works its way through middle-office and back-office systems – at which point errors can create the need for costly reconciliation processes with significant manual intervention. By using a distributed ledger technology such as blockchain, organizations can streamline the clearing and settlement process, shorten settlement windows, and avoid substantial capital and operating expenses. We examine a number of capital markets applications where blockchain can be applied to significantly lower costs.

**Blockchain and Innovation Management:**

After three phases of revolution in management, which were Industrial Revolution, Scientific Management and Information Technology, now the fourth phase of this revolution coming to exist. This phase will bring deeper changes. As Klaus Schwab, Executive Chairman, World Economic Forum, declared, "One of the main features of the Fourth

[1] Advances in software communications, https://www.coursehero.com/file/p5u0cb0q/But-advances-in-software-communications-and-encryption-now-allow-for-a/

Industrial Revolution is that it does not change what we are doing, it changes us." Blockchain could bring pervasive change at a magnitude and speed never before experienced. "On the business side, it drastically modifies customer expectations, product enhancement, collaborative innovation and organizational forms," according to the European Commission.[2]

**Smart contracts**

Smart contracts are an important part of the enthusiasm surrounding blockchain technology. The promise of smart contracts is to create a new jurisdiction that is beyond the reach of government courts. Smart contracts are not enforced by violence, but through complex economic interactions of a decentralized community utilizing a common crypto currency.

Smart contracts are *pure information* and as such, they should be protected under freedom of speech. The result of a contract affects someone's reputation in the community. Their reputation takes the form of purchasing power of a community's cryptocurrency. The larger the community and the more economic might placed on its currency, the more powerful the rulings of its contracts can become. Everyone in the community having a clear and objective evaluation of who owns what and why enforces these rulings[3].

## Summary

Among all effects that will be done in various spheres of societies and economics, blockchain has profound effects on the nature of companies, how they are funded and managed, how they create value, and how they perform basic functions such as marketing, accounting, and incentivizing people. It allows companies to eliminate transaction costs and use resources on the outside as easily as resources on the inside. Networks based on blockchain will be better suited for creating products and services and for delivering value to stakeholders. Big companies like IBM

---

[2] Bitcoin news, https://news.bitcoin.com/bitcoin-blockchain-frontiers-management/

[3] Smart Contracts in a Free Society, https://steemit.com/ethereum/@dantheman/smart-contracts-in-a-free-society, Dantheman, Ethereum society

and Amazon recently work on their own private blockchain to create a smart supply chain management system.

Blockchain optimizes business transactions and trading relationships with robustly secure business networks on blockchain, both at scale and globally. Elimination of fraud and errors, improvement in inventory management, minimizing courier costs, reduction delays from paper works, and enhancement in consumers and partners trust are the first achievements in supply chain management based on blockchain technology.

*Keywords:* Blockchain, distributed ledger, decentralized authorities, Internet of Things, smart contracts.

.

## ՇՂԹԱՅԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (BLOCKCHAIN) ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԻԶՆԵՍ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ

**Համիդրեզա Մահջուբ**
ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, հայցորդ

**Ամփոփում**

Blockchain-ը բարելավում է գործարար միջավայրը և առևտրային հարաբերությունները, անխափան տեղեկատվական անվտանգություն ապահովելով բիզնես ցանցերում՝ ինչպես լայնամասշտաբ, այնպես էլ գլոբալ մակարդակով: Խարդախության դեպքերի կանխումը, կառավարման բարելավումը, տեղեկատվական ծախսերի նվազեցումը, թղթային աշխատանքների կրճատման հետաձգումը և սպառողների ու գործընկերների վստահության ամրապնդումը հոդվածում ներկայացվում են որպես բիզնես միջավայրում շղթայայական արգելափակման համակարգի առավելություններ:

*Հիմնաբառեր.* Blockchain, բաշխման մատյաններ, ապակենտրոնացված իրավասություններ, մտքերի համացանց, խելացի շփումներ

# ВЛИЯНИЕ СИСТЕМЫ ЦЕПОЧКИ БЛОКОВ (BLOCKCHAIN) НА БИЗНЕС СРЕДУ

**Амидреза Махжуб**
ЕРОА, кафедра Экономики и Управления, соискатель

**Резюме**

Blockchain улучшает деловую среду, обеспечивая бесперебойную информационную безопасность в бизнес-проектах как на широкомасштабном, так и на глобальном уровне. В зависимости от случаев мошенничества, улучшения управления, снижения информационных издержек, задержек при оформлении документов и повышения доверия и уверенности в клиентах, в статье представлены преимущества системы цепной блокировки в бизнес-среде.

*Ключевые слова:* Blockchain, журналы распределения, децентрализованные уполномочии, сеть мыслей, интеллектуальная сеть, умные контакты.

# CHALLENGES WORKFORCE FACES IN LABOR MARKET OF ARMENIA

***Bahareh Tajfirouz***
*EREA, Chair of Economics and Management, Researcher*

Previous and current attempts in the former soviet republics and Eastern European countries to transit from a centrally planned economy to a market economy are the inseparable elements of globalization process. The most important reason for supporting the transition to market economy is the empowering the competition and workforce. Transitional economies pass and endure sets of structural transformation in developing market economy which include liberalization, macroeconomic stabilization, restructuring and privatization and legal and institutional reforms[1]. This transformation has been applied in Armenia and besides its advantages; it has presented various challenges in the labor market such as shift in supply and demand of skills, little attention to technical and vocational education and training (TVET)[2], informal employment, inadequate employment situations and etc.

After the independence, like other former Soviet Union countries, Armenia had faced many economic crises especially in the labor market sector. The unemployment rate drastically increased due to many reasons such as closure of many state owned industries and transition to privatization. The employment rate declined by 45% between 1991 to 2004 (Table 1) and the economic growth between 2003 and 2008(Table 1) could not support an adequate increase in employment.[3] Between 1993 to 1997 (table 1) Armenia had huge inflation rate due to vanishing

[1] "Transition Economies: An IMF Perspective on Progress and Prospects". IMF. 2000-11-03. Retrieved 2009-03-09.

[2] Karapetyan, Susanna; Manasyan, Heghine. 2014. SABER workforce development country report : Armenia 2014. System Approach for Better Education Results (SABER) country report ; 2014.Washington,DC:WorldBankGroup. http://documents.worldbank.org/curated/en/345441468218375478/SABER-workforce-development-country-report-Armenia-2014

[3] Karapetyan, Susanna; Manasyan, Heghine. 2014. SABER workforce development country report : Armenia 2014. System Approach for Better Education Results (SABER) country report ; 2014.Washington,DC:WorldBankGroup. http://documents.worldbank.org/curated/en/345441468218375478/SABER-workforce-development-country-report-Armenia-2014

governmental price control. It naturally happened as the newly privatized firms started to produce with the real production costs and leaded in an enormous increase in general price level of goods in the market.

**Table 1: Unemployment, Inflation, and GDP Growth Rates in Armenia (1991-2016)[4]**

| Year | Unemployment rate | inflation rate | GDP Growth |
|---|---|---|---|
| 1991 | 21.4 | 0 | -11.70 |
| 1992 | 20.4 | 0 | -41.80 |
| 1993 | 20.8 | 3731.8 | -8.80 |
| 1994 | 19.9 | 5273.4 | 5.40 |
| 1995 | 28.3 | 176.7 | 6.90 |
| 1996 | 20.4 | 18.7 | 5.86 |
| 1997 | 19.7 | 14 | 3.32 |
| 1998 | 19.9 | 8.7 | 7.30 |
| 1999 | 20.1 | 0.6 | 3.30 |
| 2000 | 20.1 | -0.8 | 5.90 |
| 2001 | 40.1 | 3.1 | 9.56 |
| 2002 | 33.8 | 1.1 | 13.18 |
| 2003 | 35.2 | 4.7 | 14.04 |
| 2004 | 38.8 | 7 | 10.04 |
| 2005 | 34.6 | 0.6 | 13.86 |
| 2006 | 35.7 | 3 | 13.19 |
| 2007 | 36.2 | 4.6 | 13.74 |
| 2008 | 19.3 | 9 | 6.90 |
| 2009 | 19.9 | 3.5 | -14.15 |
| 2010 | 21.4 | 7.3 | 2.20 |
| 2011 | 19.8 | 7.7 | 4.70 |
| 2012 | 18.3 | 2.6 | 7.20 |
| 2013 | 17.5 | 5.8 | 3.30 |
| 2014 | 18.8 | 3 | 3.60 |
| 2015 | 18.5 | 5.6 | 3.00 |
| 2016 | 18.2 | -1.1 | 2.00 |

4 Data Source National Statistical Service of Republic of Armenia and World Bank National

The average inflation rate in Armenia 1991-1995 was very high and about 3,000% but then fell down and Armenia experienced a speedy growth and was the first among the former soviet republics. This growth was important because it was achieved while the country was recovering from Spitak earthquake and Nagorno-Karabakh war.

Growth has been steady but there are still some failures to create conditions for reduction of unemployment rate and overcoming the workforce challenges in the labor market. These challenges are:

**Shift in supply and demand of skills in labor market**: Supply and demand of skills in labor market is influenced by many factors like level of economic development, demographic and technological shifts. Armenia as a transitional economy had experienced a fundamental alteration in labor market which had to deal with a workforce which their skills were not matched with the current demand.

Despite of having well educated workforce in the labor market, employers can hardly find employees with the right skills and this is a main obstacle to the activities of firms. According to the feedback of the employers there are significant demands for highly skilled workers but the graduates do not possess the desired cognitive, job-related and socio-emotional skills.[5]

**Little attention to technical and vocational education:** According to World Bank (2012) the Literacy rate in Armenia is 99.61% of total adult above age 15. 99.2% of young population have their secondary school diploma and in average 47% [6]of them enroll for tertiary education. Vocational instructional and technical trainings does not pull in Armenian youngsters and the labor market encounter with undersupplied demand for skilled technicians.This is confirmed by the low shares of employment in related occupations for example, technicians (9.7 per cent of total youth employment), craft and related trades workers (12.1 per cent), and plant and machine operators (3.2 per cent). Similarly, only 0.1 per cent of

---

[5] "Valerio, Alexandria; Herrera-Sosa, Katia; Monroy-Taborda, Sebastian; Chen, Dandan. 2015. Armenia Skills toward Employment and Productivity : Survey Findings (Urban Areas). World Bank, Washington, DC. © World Bank. https://openknowledge.worldbank.org/handle/10986/25199 License: CC BY 3.0 IGO."

[6] Gross enrolment ratio, tertiary, both sexes (%),World bank data source 2008-2014

unemployed youth are seeking work in skilled agricultural jobs and only slightly more, 0.6 per cent, in the industrial field as plant or machine operators.[7]

**Informal employment:** One of the main concerns of most countries is the increasing level of hidden and informal economic activates. After formation of modern economies, informal economic activates have been considered as one of the main challenging features in labor market. Lack of supply of adequate formal jobs and evasion from the constraints of law and regulation are among the major reasons of people՝s entry in informal labor market.

In Armenia and other former soviet republics transition occurred within high level of poverty and inequality. Without having any private and state income, people started to engage in variety informal economic activities to make ends meet. However despite of many efforts for alleviating poverty and considerable economic growth, still about the half of the labor market work in the informal economic sector. High tax, minimum wage and unemployment are the major causes of informal economic activities in Armenia. According to National Statistical Service of the Republic of Armenia of the total employment about 52.1% are considered informal which is a little bit higher among women at 53.4% than among men at 51.0%. Informal employment has higher rate in rural areas than urban areas because of the informal employment in agricultural sector.[8]

**Underemployment:** Underemployment is a condition when the people are not employed in the jobs which are related to their educations, trainings, and skills or a condition when there are not adequate employment situations to change your job. According to National Statistical Service of the Republic of Armenia about 37.2% of employed people are not satisfied with their current jobs and 52.1% of them would like to change their jobs. 83.9% of those who want to change their jobs are employed in private sector and 55.8% of them prefer to have a

[7] Serrière Nicolas, Labor market transitions of young women and men in Armenia, International Labor Office ,Youth employment Programme , Employment Policy Department, Geneva: ILO,2014 p.2

[8] National Statistical Service of the Republic of Armenia 2009

second job. The main reasons for change job among 74.1% of the Armenian workers are better employment status and more profit. Only 7.1% of the workers want to change their job because their current jobs mismatch their professional and educational skills.[9]

**Shrinking workforce:** The main reasons of shrinking workforce are aging population, decline in childbearing and labor migration. According to United Nations classification, a country is considered aging when the median age increase and the percent of the population aged 60 or over exceeds 12%. In Armenia the median age is 34.6 and age of around 16.3% of population are over 60.[10]However, the key reason of workforce shrinking in Armenia is workforce migration and brain drain. The workforce migration is either temporal or permanent. The significant destination for temporal Armenian migrant workers is Russia. These workers work on warmer months and turn back to Armenia in winter. The popular destinations for permanent Armenian migrants are United States and Russia. Nonetheless we have to note that the remittances sent by these workers and Armenian diaspora make up 14.2% of GDP[11]. The mass migration of human capital in Armenia occurred between 1992 and 1994 that about one fifth of population left country[12].

In this paper only above mentioned challenges are discussed, however, undoubtedly there are many other challenges in labor market that need to be discussed and managed.

Due to the problems and challenges in the labor market, implementation of following strategies for workforce management is proposed:

**Re-engineering labor market policies for young people**: This procedure includes improvement in minimum wages, job security, training and ancillary wage costs.

**Matching skills of the workforce with current demand of labor market**: This process requires necessary training for jobseekers,

9 National Statistical Service of the Republic of Armenia 2008

10 UN Population Division, World Population Prospects, the 2015 Revision, Population Aging Tables.

11 Personal Remittances, received (% of GDP), Armenia, 2015, The World Bank Data Source

12 Migration and Human Development: Opportunities and Challenges, National Human Development Report 2009, UNDP Armenia 2009. P.37

professional supports, skill adjustment and recruitment support in order to equip workforce with right skills and reduce the unemployment.

**Investment in Vocational education and training:** Investment in human capital can be regarded as investment in creating skills, specialties, and innovations in order to increase the individual's professional abilities. Establishing jobs with appropriate training and education provides connection between investment in human capital and economic growth.

**The informal labor market management**: As it has been mentioned about 50% of employed population of Armenia is working in informal economic sector. Informal workers have lower earnings and are more vulnerable to higher risks than formal workers. The informal economic sectors cannot be eliminated and it will always remain as an inseparable part of economy. However, this sector can be managed in a way to reduce the risks which threaten the workers of this sector.

**Creating adequate employment situations:** As it was discussed about 37.2% of employed people in Armenia are not satisfied with their current job and this satisfaction impedes their progression and perfect utilization of their skills. These people should change their jobs and be employed in the professions which are matched with their interests, skills, and financial needs; however, as they are not enough employment situations, they will be either underemployed or brain drained.

### Summary

Overcoming challenges in labor market and workforce is an important objective in improving socioeconomic conditions of Armenia as a country experienced economy in transition. According to the survey a sustainable management in labor sector will pave the way to achieve this vital objective. However, to do so one needs to know the root causes of all the challenges in labor market, comprehensively analyzes them and provides the strategies and policies for improvement. Some of these challenges, as it was discussed, are shift in supply and demand of skills which creates a labor market with workers who do not possess the right skills: Lack of enough attention to vocational training which creates a

labor market with highly educated workforce who have not enough practical and technical training; The employment of half of the labor force in informal economic sectors which makes these workers more vulnerable to economic upheavals and risks; Lack of enough employment situations which causes the underemployment and dissatisfaction among the workers; and finally the shrinking workforce which is caused by aging population and human capital flight. It is suggested that implementation of following strategies can help to overcome such challenges in labor Market. Strategies like reengineering labor market policies for young people, matching skills of the workforce with current demand of labor market, Investment in Vocational education and training, managing the informal labor market, and creating adequate employment situations

Armenia like other former soviet republics had faced many challenges in labor market and economic crises during the transition from centrally planned economy to market economy. Challenges like high unemployment rate, lack of enough attention to vocational training, shift in skill demand, underemployment and shrinking workforce which country is still struggling with. In this paper these challenges and strategies for solving or minimizing their effects on labor market are briefly discussed.

*Keywords:* Transitional economy, labor Market, Market Economy, workforce, reforms, underemployment, mismatched skills, shrinking workforce

## Literature

1. Gross enrolment ratio, tertiary, both sexes (%),World bank data source 2008-2014
2. Karapetyan, Susanna; Manasyan, Heghine. 2014. SABER workforce development country report: Armenia 2014. System Approach for Better Education Results (SABER) country report; 2014. Washington, DC: WorldBankGroup. http://documents.worldbank.org/curated/en/345441468218375478/SABER-workforce-development-country-report-Armenia-2014

3. Migration and Human Development: Opportunities and Challenges, National Human Development Report 2009, UNDP Armenia 2009. P.37
4. National Statistical Service of Republic of Armenia and World Bank National
5. National Statistical Service of the Republic of Armenia 2009
6. Personal Remittances, received (% of GDP), Armenia, 2015, The World Bank Data Source
7. Serrière Nicolas, Labor market transitions of young women and men in Armenia, International Labor Office,Youth employment Programme, Employment Policy Department, Geneva: ILO,2014 p.2
8. Transition Economies: An IMF Perspective on Progress and Prospects". IMF. 2000-11-03. Retrieved 2009-03-09.
9. UN Population Division, World Population Prospects, the 2015 Revision, Population Aging Tables
10. Valerio, Alexandria; Herrera-Sosa, Katia; Monroy-Taborda, Sebastian; Chen, Dandan. 2015. Armenia Skills toward Employment and Productivity: Survey Findings (Urban Areas). World Bank, Washington, DC. © World Bank. https://openknowledge.worldbank.org/handle/10986/25199 License: CC BY 3.0 IGO

## ԱՇԽԱՏՈՒԺԻ ԳԾՈՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅՈՒՄ

**Բահարեհ Թաջֆիրուզ**
ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, հայցորդ

### Ամփոփում

Հայաստանը. ինչպես մյուս նախկին խորհրդային հանրապետությունները, անցում կատարելով կենտրոնացված պլանային տնտեսությունից դեպի շուկայական տնտեսության, ունեցավ բազմաթիվ մարտահրավերներ աշխատաշուկայում և հայտնվեց տնտեսական ճգնաժամում: Երկիրը դեռևս կանգնած է գործազրկության բարձր մակարդակի, մասնագիտական կրթության որակի հանդեպ ոչ բավարար վե-

ռաքերմունքի, աշխատանքային հմտությունների փոփոխությունի, գործազրկության, աշխատուժի պահանջմունքի անկման մարտահրավերների առջև: Հոդվածում մեկնաբանվում են վերոնշյալ մարտահրավերներից բխող հիմնախնդիրների լուծումներ:

*Հիմնաբառեր.* անցումային տնտեսություն, աշխատաշուկա, շուկայական տնտեսություն, աշխատուժ, բարեփոխումներ, գործազրկություն, անհապատասխան կարողություններ, աշխատուժի անկում

## ВЫЗОВЫ ТРУДОВЫХ РЕСУРСОВ НА РЫНКЕ ТРУДА АРМЕНИИ

**Бааре Тачфируз**
ЕРОА, кафедра Экономики и Управления, соискатель

### Резюме

Армения, как и другие бывшие советские республики, в процессе перехода от централизованной плановой экономики к рыночной экономике, столкнулась с разнообразными проблемами на рынке труда и перенесла экономический кризис. Страна по-прежнему сталкивается с проблемой высокого уровня безработицы, неадекватным качеством профессионального образования, динамическими изменениями профессиональных навыков, падением спроса рабочей силы. В статье рассматриваются пути решения вышеизложенных проблем.

*Ключевые слова:* страны с переходной экономикой, рыночная экономика, реформы, рабочая сила, безработица, некомпетеные способности, снижение спроса трудовых ресурсов

# THE MANAGERS' CRUCIAL ROLES IN MAXIMIZING THE RANGE OF HAPPINESS IN A WORKPLACE

***Farnoosh Khoshbakht***
*EREA, Chair of Economics and Management, Researcher*

Regarding the competitive global market, attaining business goals have become disquieting. A workplace as a core component of any enterprise plays a crucial role in achieving the business goals. A comfortable, non-stressful, supporting atmosphere in a workplace can guarantee the future of that business in a large scale. The fact is that, conducting this kind of workplace is not an easy task to do unconditionally.

Managers as the chiefs of human resources of a business, have beard heavy responsibilities in this field; selecting the working force, arranging them into appropriate categories, dealing with them, conducting positive atmosphere for them to work, and leading them to attain the goals of the company, can be considered as some of the managers' fundamental responsibilities in general. This is the mangers' erudition to select a proper methodology to overcome the different issues in any of these procedures.

A manger should be wise enough to consider all conditions which dealing with the employees' comfort. He also must be very inspired to conduct as new methods as possible to keep the workforce motivated and optimistic. In the following some of the methods for modern leadership are presented that can be practically helpful.

i. Consulting the work schedule with the employees

As mentioned before, the success of a business ascertains by the satisfaction of the employees. Thus, associating them in conducting the work schedule, can be very inspiring for them. Employees not only want to balance the work and their personal lives, but to have this choice to combine the two together. the underlying force behind flexible schedules is an inherent trust from employers that their employees will get done what they need to get

done, in the time frame they need to do it, even if that's not traditional 9 to 5 hours.[1]

ii. Improving the work-place set up

Office setups that encourage face-to-face communication like open-plan bull pen types, boost employee satisfaction. Cubicles with high walls have the worst influence on employee's smile rates, since they increase isolation. In general, **workplaces that make us feel included, valued, cared for, and competent bring out our best efforts.**

Adequate lighting, comfortable office décor, a quiet environment, breathable air, and empowering team dynamics are just some of the numerous ways managers can improve their underlings' workplace experiences.[2]

iii. Reducing the employees stress by physically exercises

In recent decades, utilizing the modern methodologies to improve the employee's mood can support the output of a company in a large scale. Considering this fact that mentally health is depended on physically health, allocating a place for exercising like a brief small gym can be very helpful[3].the more healthier employees, the more positive and energetic atmosphere in the workplace and the more output in conclusion. It has been biologically proved that by physically exercises, new brain neurons are made which helps the brain to work more properly[4].

iv. Being paid properly and on time

Expert mangers must be considerate to employee's needs and lives conditions. Employees, whom are paid properly and without any postpone, can focus on their work more optimistically. In this case financial issues play the most important role. Managers should also apply the reward system to stimulate employees to work more responsibly. Keeping a positive attitude about the management

---

[1] www.entrepreneur.com/article/247817
[2] https://greatist.com/happiness/10-scientifically-proven-ways-boost-workplace-happiness
[3] forbes.com/sites/womensmedia/2012/08/08/5
[4] huffingtonpost.com/dr-douglas-fields/why-does-exercise-stimula

system, keeps the employees optimistic about their work future and has a strong influence on the output of a company in conclusion.


## Summary

Regarding the competitive global market especially in recent decades, they are sole the technical strategies of the managers which can satisfy the employees and make them happy and satisfied in the working place and lead an organization to success ultimately. In other words human resources (HR), in a corporation can be considered as the main part of the corporation chain.

Therefore, any paces toward to satisfy the human resources, directly support the future success of the corporation.

Human resources play a crucial role in an organization success. An organization will abandon to failure with the lack of working-force's happiness. In general, employees who have job satisfaction perform better than employees without job satisfaction. Studies have shown that employees with high job satisfaction will produce good work performance[5].Considering this fact, the existence of an elaborate management system becomes crucial to conduct a positive and energetic atmosphere to improve the workplace conditions. Managers as the chiefs of working-force, have severe responsibilities for stimulating the employees and for the organization's output as well. Indeed there are abundant ways to boost happiness in the work-place and new ways are added every day in the world of management as well. This article considers the ways which were much noteworthy to my own sight.


*Keywords:* Human resources, working-force's happiness, elaborate management system, workplace conditions, managers, responsibilities, technical strategies.

[5] Hochwater et al., 1999; Mohr and Puck, 2006; Locke 1976; Lawler, 1974; Park and Deitz (2006); Nerkar, 1996; Valentine et al., 2009; Pitts, 2009.

# ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴԵՐԸ ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԵՐՋԱՆԿՈՒԹԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆԻ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

**Ֆարնուշ Մոհամմադի Խոշբախթ**
ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, հայցորդ

**Ամփոփում**

Մրցունակ համաշխարհային շուկայում, հատկապես վերջին տասնամյակների ընթացքում, ղեկավարների կողմից լուրջ ուշադրություն է դարձվում աշխատավայրերում աշխատողների երջանկության գնահատմանը: Ուսումնասիրությունները վկայում են, որ HR մենեջմենթի ջանքերը կազմակերպության աշխատավայրում կորպորատիվ գոհունակության բարձրացման գծով արդարացի են: Հոդվածում, վերլուծվում է կառավարիչների որոշիչ դերը՝ աշխատավայրում աշխատակիցների երջանկության ապահովման գործում:

*Հիմնաբառեր.* մարդկային ռեսուրսներ, աշխատուժի երջանկություն, կառավարման համակարգի կատարելագործում, աշխատանքային պայմաններ, ղեկավարների պարտականություններ, տեխնիկական ռազմավարություն:

# ПРИОРИТЕТНАЯ РОЛЬ МЕНЕДЖЕРА В ДОСТИЖЕНИИ МАКСИМАЛЬНОГО СЧАСТЬЯ СОТРУДНИКОВ НА РАБОЧЕМ МЕСТЕ

**Фарнуш Хошбахт**
ЕРОА, кафедра Экономики и Управления, соискатель

**Резюме**

На конкурентном мировом рынке, особенно в последние десятилетия, лидеры уделяют пристальное внимание счастью рабочих на рабочем месте. Исследования показывают, что усилия по управлению персоналом оправданы с точки зрения корпоративной удовлетворенности на рабочем месте организации. В статье анализируется решаю-

щая роль менеджеров в обеспечении счастья сотрудников на рабочем месте.

*Ключевые слова:* человеческие ресурсы, счастье рабочей силы, эффективность системы управления, условия труда, обязанности руководства, техническая стратегия.

# ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՈԼՈՐՏ

***Նոննա Նիկոլայի Խաչատրյան***
*տնտ. թ.*
*ԵՊՀ, դոցենտ*

Ծառայությունների շուկան ստորաբաժանվում է բազմաթիվ հատվածների, որոնք միմյանցից տարբերվում են ֆինանսական, սոցիալական, դեմոգրաֆիկ, ազգային և այլ հատկանիշներով: Թվարկած գործոնները հաշվի առնելով է հնարավոր դառնում կատարելու հիմնավորված կանխատեսումներ՝ ծառայությունների շուկայի պահանջարկի, դրա զարգացման միտումների վերաբերյալ:

Կրթությունը և առողջապահությունը եղել են ծառայությունների այն երկու պետական ենթաոլորտները, որոնք համեմատաբար հաստատուն են ՀՀ անկախացումից ի վեր: Սակայն, մեր տարածաշրջանում Հայաստանը հայտնվել է տարածաշրջանի ամենացածր կրթական ծախսեր ունեցող երկրների ցանկում, իսկ վերջին տարիներին չի նկատվում պետբյուջեում կրթական ծախսերի աճ (տես աղյուսակ 1.): Նույն միտումն է նկատվում ՀՆԱ-ի կազմում կրթական ծառայությունների մատուցման չափաբաժնի գծով (տես գծապատկեր 1.), այն դեպքում, երբ արևմտաեվրոպական զարգացած երկրներում մատուցվող կրթական ծառայությունների տեսակարար միջինացված կշիռը ՀՆԱ-ի կազմում մոտենում է 5%-ի շեմին:

*Աղյուսակ 1.*

ՀՀ պետական բյուջեում կրթության ծախսերի դինամիկան (մլն դրամ)[1]

| Ցուցանիշներ | 2011 թ. | 2013 թ. | 2016 թ. |
|---|---|---|---|
| Բյուջեի ծախսեր, այդ թվում | 986509.2 | 1142890. 3 | 1373476.1 |
| Կրթություն | 106085.0 | 103094.5 | 132113.3 |
| Կրթական ծախսերի տեսակարար կշիռ (%) | 10.75 | 9.02 | 9.62 |

[1] ՀՀ օրենքը պետական բյուջեի մասին, 2011, 2013, 2016 թվ:

Գծապատկեր 1. Կրթության պետական ֆինանսավորման և կրթական ծառայությունների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում[2]




Պետական միջոցների հաշվին ՀՀ-ում առավելապես ֆինանսավորվում է հանրակրթությունը (տես գծապատկեր 2), իսկ միջին՝ հատկապես բարձրագույն մասնագիտական կրթությունը հիմնականում կազմակերպվում է մասնավոր ռեսուրսների հաշվին: Այսպես, ՀՀ պետական բուհերում պետպատվերով սովորող ուսանողների տեսակարար կշիռը կազմում է շուրջ 24 %:

Գծապատկեր 2 Հանրային միջոցներով կրթական ծառայությունների մատուցման ծախսերի կառուցվածքը ՀՀ 2016 թվականի պետական բյուջեում[3]




[2] ԱՎԾ պաշտոնական կայք, //armstat.am

[3] ՀՀ օրենքը 2016 թվ պետական բյուջեի մասին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հանրապետությունում կրթական ծառայությունները զարգացման տարբեր աստիճաններ ունեն ոչ միայն ըստ ոլորտների, այլև ըստ մատուցման վայրերի: ՀՀ ծառայությունների շուկան ներկայումս հանդես է գալիս հետևյալ առանձնահատուկ գծերով, որոնք տեղիք են տալիս կատարելու մի շարք առաջարկություններ ոլորտի բարելավման ուղղությամբ.

Առաջին, համահարթեցման կարիք ունեն մարզերում և հանրապետության մայրաքաղաքում մատուցվող կրթական ծառայությունների ծավալները, քանի որ Երևան քաղաքին, որտեղ հանրապետության ազգաբնակչության կեսից ավելին չի բնակվում, կենտրոնացած է մատուցվող մասնագիտական կրթական ծառայությունների մոտ 78%-ը:

Երկրորդ, հանրապետությունում մատուցվող կրթական ծառայությունների կառուցվածքը, ըստ ֆինանսավորման բնույթի բարեփոխման կարիք ունի: Ներկայումս, առաջանցիկ զարգացում են ապրում մասնավոր կրթավճարների հենքով ծառայությունների տեսակները, այնինչ ժամանակն է լուրջ ուշադրություն դարձնել հանրային ռեսուրսներով և պետական ֆինանսական վերահսկողություն պահանջող կրթական ծառայությունների շրջանակի ընդլայնմանը:

Եվ վերջապես, արագ զարգացման կարիք ունեն կրթական ծառայությունների մատուցման այն ոլորտները, որոնք առավել մրցակցային են միջազգային շուկայում և անհրաժեշտ որակ ունենալու պարագայում կարող են նույնիսկ հանրապետությունից արտահանվել:

Ներկայումս, կրթական ծառայությունների արտահանմանը լուրջ ուշադրություն է դարձվում զարգացած երկրներում, որտեղ սովորող ուսանողների զգալի մասը արտասահմանցիներ են: Հատկապես, այդ գործընթացը ավանդաբար ակնառու դրսևորվում է ԱՄՆ-ում, Գերմանիայում, Սկանդինավյան երկրներում, Ֆրանսիայում (տես աղյուսակ 2): Իսկ այժմ առաջատարներին ձգտում է հասնել Չինաստանը, որը լուրջ ներդրումներ է կատարում օտարերկրյա ուսանողների կրթության կազմակերպման ոլորտում:

*Աղյուսակ 2*

Արտասահմանյան ուսանողների բաշխվածությունը կրթական ծառայություններ արտահանող երկրներում[4]

| Երկրներ | 1999/2000 | | 2014/2015 | |
|---|---|---|---|---|
| | արտասահ-մանցի ուսանողների թվաքանակ | արտասահ-մանցի ուսանողների տեսակարար կշիռը (%) | արտասահ-մանցի ուսանող-ների թվա-քանակ | արտասահ-մանցի ուսանողների տեսակարար կշիռը (%) |
| ԱՄՆ | 514 723 | 31 | 710 926 | 18 |
| Միացյալ Թագավորություն | 224 598 | 13 | 475 620 | 12 |
| Ֆրանսիա | 160 532 | 10 | 310 213 | 8 |
| Ավստրալիա | 138 381 | 8 | 270 252 | 7 |
| Գերմանիա | 175 065 | 10 | 268 114 | 7 |
| Չինաստան | 52 150 | 3 | 192 289 | 6 |
| Կանադա | 44 335 | 2 | 198 556 | 6 |
| Ճապոնիա | 64 011 | 4 | 120 870 | 2 |
| Ռուսաստան | 58 992 | 3 | 154 635 | 3 |
| Այլ երկրներ | 262 080 | 16 | 1 254 754 | 31 |
| Ընդամենը | 1 680 000 | 100 | 3 961 529 | 100 |

Նման գործընթացները ՀՀ-ում դեռևս պասիվ բնույթ են կրում և օտարերկրացի ուսանողների զգալի աճի միտումներ չեն արձանագրվում: Ավելին, եթե մեզ մոտ արտասահմանից գալիս են սովորելու, ապա դրանք հիմնականում Ռուսաստանի Դաշնության և Վրաստանի սփյուռքահայերն են: Ձևավորված նման իրավիճակը խորհելու առիթ է տալիս, թե այդ ինչու համեմատաբար ցածր կրթավճարներ առաջարկող երկրում չի նկատվում օտարերկրացի ուսանողների աճի միտում: Պատճառները շատ են, բայց դրանց մեջ կարևորագույնը՝ կրթության որակի ապահովումն է:

Կրթության որակն ուղղակիորեն կախված է լիարժեք ֆինանսավորումից: Նոր ֆինանսական գործելակերպի մշակումը կարևոր գործոն է շուկայական պայմաններում հաջողակ լինելու համար: Պետու-

[4] Галичов А., Тенденции развитии международного рынка образования, “Век глобализации”, #2, 2016, стр.24

թյան դրամական միջոցների ճիշտ օգտագործումը, լրացուցիչ ֆինանսական աղբյուրների ներգրավումը մեծ խթան կհանդիսանան կրթության համակարգի տնտեսական հարցերը կարգավորելու գործում:

Հաշվի առնելով խնդրի մեծ չափերը՝ առայժմ այն լրիվ ծավալով լուծված չի կարելի համարել: Այն հատկապես նկատելի է մասնագիտական կրթության համար նախատեսված բյուջետային քննարկումների ժամանակ: Անվճար հիմունքներով սովորողների թվի որոշումից հետո հաշվարկվում է դրանց ուսուցումը կազմակերպելու համար անհրաժեշտ գումարի չափը:

Բարձրագույն կրթության որակի նկատմամբ պահանջատիրության փոփոխությունները պայմանավորված են մի շարք հիմնական գործոնություններով: Այդ գործոններից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. ժողովրդագրական միտումները,
2. աշխատանքի պահանջարկը,
3. բնակչության կենսամակարդակը սոցիալական անհավասարությունը,
4. բնակչության կրթամակարդակը և ազգային ավանդույթները,
5. կրթության որակի համապատասխանությունը միջազգային չափանիշներին,
6. պետական ծախսային քաղաքականությունը բարձրագույն կրթության բնագավառում:

Կրթությունը կարելի է դիտել որպես հետաձգված հատույցով ներդրում: Հասարակության ներդրումները ներառում են պետական ծախսերը՝ դպրոցական ծառայությունների մատուցումը, կրթություն ստանալու հետ կապված այլ վճարները: Նույնիսկ այս ծախսերը ներառելուց հետո սոցիալական հատույցն ավելի բարձր է, սակայն սոցիալական հատույցի ի հայտ գալու համար պահանջվում են տարիներ:

Ինչ վերաբերում է աշխատաշուկայի պահանջարկով պայմանավորված բարձրագույն կրթություն ստացողների ավելացումներին, ապա առաջիկա 5 տարիների ընթացքում թերևս չի կարելի ակնկալել ավելացում՝ նկատի ունենալով բարձրագույն կրթությամբ մասնագետների զբաղվածության մակարդակը, որը քաղաքային բնակչության համար 2016թ. կազմել է շուրջ 28%:

Ապագայում աշխատաշուկայի պահանջարկի վրա էական ազդեցություն է թողնելու նաև պետության՝ որպես առավել խոշոր գործա-

տուներից մեկի՝ քաղաքականությունը: Ներկայումս անհանգստացնող է այն, որ մի շարք մասնագիտությունների գծով առկա է աշխատավարձի ցածր մակարդակը, մասնավորապես այն ոլորտներում, որտեղ պետությունը հիմնական գործատուն է: Մյուս կողմից, աշխատանքային շուկայի հետ կապերի արդյունավետության աճն ապահովելու համար անհրաժեշտ է կատարել մի շարք միջոցառումներ.

- կարիերային կենտրոնների զարգացումը բոլոր պետական բուհերում՝ օպտիմալացման գործընթացներին զուգահեռ,
- բուհերի օպտիմալացման գործընթացին զուգահեռ, ներքին ռեյտինգային կառույցների ստեղծումը, դրանց կողմից հրապարակվող տեղեկատվական հավաստի պահանջների մշակումը, տեղեկատվության հրապարակումը, մասնագիտական գիտելիքների և ունակությունների չափորոշիչների մշակումը:

Ինչ վերաբերվում է հեռանկարում մասնագիտական կրթական ծառայությունների աճին, ապա դա առաջին հերթին կապված է լինելու հանրակրթության շրջանավարտների թվաքանակի պահպանմամբ և ավագ դպրոցից հետո ուսումնառությունը շարունակողների թվաքանակի համեմատական աճով: Նման սպասելիքները հիմնավորվում են ինչպես երկրի տնտեսության զարգացմամբ, այնպես և հանրակրթության վրա պետական ծախսերի կայունության շարունակական քաղաքականությամբ:

**Ամփոփում**

Համալսարանական կրթության համակարգի ներքին արդյունավետության աճն ապահովվելու է մի շարք միջոցառումներով.

- պետական հատվածի արդյունավետության բարձրացում՝ պետական բուհերի խոշորացման և ներբուհական օպտիմալացման, մասնագիտությունների զուգահեռականության վերացման միջոցով:

- միջոցառումներ, որոնք ուղղված են ուսանող (դասախոս և ուսանող) ոչ դասախոսական անձնակազմ հարաբերակցության աճին:

- միջոցառումներ, որոնք ուղղված են բուհերի ֆինանսական կարգապահության ավելացմանը, ֆինանսական ռեսուրսների աղբյուրների և ծախսի թափանցիկության ապահովմանը:

*Բանալի բառեր.* մասնագիտական կրություն, կրթության ֆինանսավորում, կրթական ծառայությունների արտահանում, որակի ապահովման համակարգ

## ВЫСШАЯ ОБРАЗОВАНИЯ КАК СПЕЦИФИЧЕСКАЯ СФЕРА ОБРАЗОВАТЕЛЬНЫХ УСЛУГ

**Хачатрян Нонна Николаевна**
канд.экон. наук
ЕГУ, Доцент

### Резюме

В статье рассматриваются проблемы рынка образовательных услуг в Армении. В частности, на основе анализа нынешнего состояния организации высшего образования, предлагаются пути активизации услуг в сфере профессионального образования по таким направлениям, как использования альтернативных источников финансирования, увеличения число иностранных студентов, повышения эффективности качества образовательных услуг.

*Ключевые слова:* профессиональное образование, финансирование на образование, экспорт образовательных услуг, система обеспечения качества по образованию

## HIGHER EDUCATION AS A SPECIFIC SPHERE OF EDUCATIONAL SERVICES

**Nonna Khachatryan**
Candidate of Economic Sciences
ESY, Associate Professor

### Summary

The article deals with the problems of the educational services market in Armenia. In particular, on the basis of the analysis of the current state of the higher education organization, ways of activating services in the field of vocational education in such areas, as the use of alternative sources of financing, increasing the number of foreign students, improving the quality of educational services.

*Keywords:* vocational education, financing for education, export of educational services, quality assurance system in education

# ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՀԱՄԱՉԱՓՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԶՄԱՉԱՓ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՈՎ

***Անուշ Յուրիի Շիրինյան***
*փնփ.թ.*
*ՀՊԱՀ, վիճակագրության ամբիոն, ասիստենտ*

ՀՀ տնտեսության ժամանակակից միտումները գնահատելու համար անհրաժեշտ է տարածաշրջանային մոտեցում: Թեև վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում տարածական տնտեսական քաղաքականության իրականացման համար ստեղծվել են որոշակի նախադրյալներ, մշակվել և կենսագործվում են տարաբնույթ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր, այդուհանդերձ տարածքային զարգացման անհամաչափությունները շարունակում են խորանալ, և հիմնականում արտահայտվում են մայրաքաղաքի տնտեսական դերի և նշանակության աճով:

ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունը ուսումնասիրվել է բազմաչափ վիճակագրության երկու՝ գործոնային և կլաստերային վերլուծության մեթոդներով: Գործոնային վերլուծությունը ուսումնասիրվող փոփոխականների զանգվածը բաժանում է փոքր թվով խմբերի, այսինքն՝ տվյալների ոչ համակարգված զանգվածը վերածում է մի քանի մակրոփոփոխականների, որոնք էլ առավել համակարգված են նկարագրում ուսումնասիրվող օբյեկտի տարբեր բնութագրիչները: Կլաստերային վերլուծությունը նույնպես թույլ է տալիս ընդգծել վիճակագրորեն միանման փոփոխականները միավորող գործոնները, սակայն ավելի հաճախ այն օգտագործվում է դիտարկվող օբյեկտներն ըստ խմբերի դասակարգելու համար:

Բազմաչափ վերլուծության համար ընտրվել են հետևյալ ցուցանիշները, որոնց վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում.

1. բնակչության մեխանիկական հավելաճի գործակիցը, ‰ ($X_1$),
2. ժողովրդագրական խնամառության գործակիցը, % ($X_2$),
3. աղքատության մակարդակը, % ($X_3$),
4. աշխատանքային ռեսուրսների զբաղվածության գործակիցը, % ($X_4$),

5. գործազրկության մակարդակը, % ($X_5$),

6. տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում, % ($X_6$),

7. տղամարդկանց տեսակարար կշիռը աշխատանքային ռեսուրսների ընդհանուր թվաքանակում, % ($X_7$),

8. բնակչության մեկ շնչին ընկնող համախառն տարածաշրջանային արդյունքը, հազ. դրամ ($X_8$),

9. միջին ամսական անվանական աշխատավարձը, հազ. դրամ ($X_9$),

10. ներմուծման ծավալը բնակչության մեկ շնչի հաշվով, հազ. դրամ ($X_{10}$):

**Աղյուսակ 1. ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական որոշ փոփոխականներ 2015 թ.**

| Մարզեր | $X_1$ | $X_2$ | $X_3$ | $X_4$ | $X_5$ | $X_6$ | $X_7$ | $X_8$ | $X_9$ | $X_{10}$ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Երևան | -4.21 | 59.17 | 25 | 42.91 | 30.2 | 39.2 | 43.25 | 1678 | 180.1 | 1149.62 |
| Արագածոտն | -16.17 | 63.05 | 16.1 | 59.08 | 5.7 | 41.7 | 44.71 | 1176 | 119.2 | 167.19 |
| Արարատ | -10.46 | 63.39 | 27.3 | 63.62 | 8.3 | 49.4 | 46.29 | 1324 | 135.6 | 181.26 |
| Արմավիր | -5.82 | 64.51 | 29.6 | 61.23 | 9.4 | 53.1 | 47.35 | 1010 | 145.8 | 110.09 |
| Գեղարքունիք | -10.84 | 62.51 | 32.1 | 54.09 | 4.7 | 34.4 | 43.35 | 1048 | 136.6 | 104.86 |
| Լոռի | -14.35 | 63.32 | 36.2 | 49.56 | 15.7 | 50.6 | 42.03 | 936 | 140.5 | 151.89 |
| Կոտայք | -9.26 | 64.19 | 35.9 | 47.72 | 23 | 49.1 | 45.63 | 1187 | 146.1 | 218.62 |
| Շիրակ | -16.66 | 61.52 | 45.3 | 45.44 | 19 | 43.7 | 45.33 | 762 | 124.2 | 60.42 |
| Սյունիք | -6.7 | 54.4 | 24.5 | 57.57 | 15.7 | 39.4 | 47.64 | 2100 | 197.8 | 204.18 |
| Վայոց ձոր | -12.74 | 58.82 | 16.9 | 68.00 | 10.1 | 51.9 | 44.00 | 1075 | 128 | 137.39 |
| Տավուշ | -9.52 | 59.68 | 35.3 | 57.48 | 12.1 | 50.2 | 46.65 | 696 | 128.3 | 33.02 |

**Աղբյուրը՝http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=002cc9e9-1bc8-4ae6-aaa3-40c0e377450a*

Նշենք, որ ՀՏԱ-ն հաշվարկվել է հետևյալ սկզբունքով [1, էջ 33]. նախ, ՀՀ 2015թթ. համախառն ավելացված արժեքը ստորաբաժանվել է գործունեության չորս հիմնական տեսակների՝ արդյունաբերություն,

գյուղատնտեսություն, շինարարություն և ծառայություններ: Այնուհետև, որոշվել են վերոնշյալ ճյուղերի արժեքային ցուցանիշների մարզային կառուցվածքները, որոնց հիման վրա էլ ստացվել են գործունեության չորս հիմնական տեսակների մարզային ավելացված արժեքները (յուրաքանչյուր ճյուղի ավելացված արժեքը բազմապատկելով տվյալ ճյուղի մարզային բաժնեմասով): Ընդ որում, ըստ մարզերի արժեքներում հնարավոր են որոշակի շեղումներ՝ կապված տնտեսական գործունեության 21 տեսակը 4 խոշոր խմբերի տրոհելու, ինչպես նաև արտադրանքի ճյուղային արժեքային ցուցանիշների և գործունեության տեսակների ավելացված արժեքների մեթոդաբանական տարբերությունների հետ:

Գործոնային և կլաստերային վերլուծություններն իրականացվել են SPSS ծրագրային փաթեթի միջոցով [2, էջ 40-76]:

Թիվ 2 աղյուսակում բերված են գործոնային վերլուծության սկզբնական վիճակագրությունները [3, էջ 121]:

**Աղյուսակ 2. Ընդհանուր վարիացիայի տրոհումը (Total Variance Explained)**

| Component | Initial Eigenvalues | | | Extraction Sums of Squared Loadings | | | Rotation Sums of Squared Loadings | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Total | % of Variance | Cumulative % | Total | % of Variance | Cumulative % | Total | % of Variance | Cumulative % |
| **1** | 3.984 | 39.839 | 39.839 | 3.984 | 39.839 | 39.839 | 3.700 | 37.004 | 37.004 |
| **2** | 2.390 | 23.901 | 63.739 | 2.390 | 23.901 | 63.739 | 2.344 | 23.445 | 60.449 |
| **3** | 1.404 | 14.044 | 77.783 | 1.404 | 14.044 | 77.783 | 1.733 | 17.335 | 77.783 |
| **4** | .987 | 9.871 | 87.655 | | | | | | |
| **5** | .600 | 6.001 | 93.656 | | | | | | |
| **6** | .301 | 3.010 | 96.666 | | | | | | |
| **7** | .260 | 2.597 | 99.264 | | | | | | |
| **8** | .046 | .464 | 99.728 | | | | | | |
| **9** | .024 | .240 | 99.968 | | | | | | |
| **10** | .003 | .032 | 100.000 | | | | | | |

*Extraction Method: Principal Component Analysis.*

Ըստ այդմ՝ վերլուծության համար ընտրվել է երեք գործոն. առաջինը բացատրում է ընդհանուր դիսպերսիայի 39.8%-ը, երկրորդը՝ 23.9%-ը, երրորդը՝ 14.0%-ը, իսկ երեք գործոնները միասին՝ ընդհանուր դիսպերսիայի 77.8%-ը:

Գործոնային վերլուծության արդյունքների մեկնաբանման հաջորդ քայլը գործոնային գործակիցների շրջված մատրիցի (Rotated Component Matrix) դիտարկումն է [3, էջ 135]: Տվյալ աղյուսակը գործոնային վերլուծության հիմնական արդյունքն է, որում արտահայտվում են փոփոխականների դասակարգման արդյունքներն ըստ գործոնների:

Ինչպես երևում է թիվ 3 աղյուսակից, 10 ուսումնասիրվող փոփոխականները դասակարգվել են ըստ երեք գործոնի, ընդ որում, առաջինում կարելի է ընդգրկվել 3, երկրորդում՝ 4, իսկ երրորդում՝ 3 փոփոխական:

**Աղյուսակ 3. Բաղադրիչների շրջված մատրիցը (Rotated Component Matrix)**

| | **Component** | | |
|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 |
| **$X_1$** | .788 | .200 | .263 |
| **$X_2$** | -.699 | .167 | .093 |
| **$X_3$** | -.396 | -.760 | .280 |
| **$X_4$** | -.030 | .894 | .382 |
| **$X_5$** | .417 | -.809 | -.161 |
| **$X_6$** | -.331 | .660 | -.018 |
| **$X_7$** | .818 | -.162 | .339 |
| **$X_8$** | -.197 | -.121 | .909 |
| **$X_9$** | -.046 | .228 | .929 |
| **$X_{10}$** | -.510 | .389 | .589 |

*Extraction Method: Principal Component Analysis.*
*Rotation Method: Varimax with Kaiser Normalization.*

Առաջին գործոնն անվանվել է ժողովրդագրական, քանի որ դրանում ներառված են աշխատանքային ռեսուրսների կազմում տղամարդկանց մասնաբաժինը (0.818), բնակչության մեխանիկական հավելաճը (0.788) և ժողովրդագրական խնամառությունը բնութագրող փոփոխականները (-0.699):

Երկրորդ գործոնն անվանվել է սոցիալական, քանի որ այն ներառում է աշխատանքային ռեսուրսների զբաղվածությունը, գործազրկությունը, բնակչության ընդհանուր թվաքանակում տնտեսապես ակտիվ բնակչության տեսակարար կշիռը և աղքատության մակարդակը:

Տնտեսական անվանումը կրող երրորդ գործոնը ներառում է երեք փոփոխական՝ համախառն տարածաշրջանային արդյունք՝ մեկ շնչի հաշվով (0.929), միջին ամսական անվանական աշխատավարձ (0.909) և ներմուծում՝ մեկ շնչի հաշվով (0.589):

Թիվ 3 աղյուսակի տվյալները վկայում են, որ ՀՀ մարզերի սոցիալական զարգացման վրա ամենամեծ ազդեցությունը թողնում է տնտեսությունում բնակչության զբաղվածությունը, որի կոռելյացիայի գործակիցը գործոն 2-ի հետ կազմում է 0.894, երկրորդն ըստ ազդեցության գործազրկության մակարդակն է՝ կոռելյացիայի -0.809 գործակցով: Երրորդ փոփոխականը՝ աղքատության մակարդակը, նույնպես վերջինիս հետ ունի հակադարձ կապ՝ -0.760: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ ՀՀ մարզերի սոցիալական վիճակի վրա, առաջին հերթին, բարվոք է ազդում զբաղվածության մակարդակի բարձր լինելը, որն էլ հենց հանգեցնում է բնակչության ցածր գործազրկությանը, և, որ, առավել կարևոր է, ցածր աղքատությանը: Ավելին, սոցիալական վիճակը գնահատող նշված փոփոխականները, ի վերջո, պայմանավորում են ժողովրդագրական ներկայիս իրադրության ամենազգայուն գործընթացի առաջացումն ու զարգացումը՝ էմիգրացիայի ինտենսիվությունը և, որպես դրա ուղղակի հետևանք, բնակչության, հատկապես աշխատանքային ռեսուրսների կառուցվածքում տղամարդկանց մասնաբաժնի նվազումը: Նշանակում է՝ էմիգրացիայի ինտենսիվությունը բարձր է այն մարզերում, որտեղ ցածր է բնակչության զբաղվածության մակարդակը, հետևաբար՝ բարձր են աղքատության և գործազրկության մակարդակները:

Գործոնների արժեքներն ըստ մարզերի ներկայացված են աղյուսակ 4-ում, որի տվյալները վկայում են, որ բոլոր գործոններով ընդգծված առաջատար է Երևանը, ընդ որում, «տնտեսական» գործոնով մարզերի ու մայրաքաղաքի տարբերությունն առավել քան ցայտուն է: Դիտարկվող ցուցանիշով Երևանին հաջորդում են Սյունիքի և Կոտայքի մարզերը: «Սոցիալական» գործոնով Երևանից հետո առաջատարը Շիրակի և Կոտայքի մարզերն են:

**Աղյուսակ 4. Գործոնների սեփական արժեքները՝ ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի**

| Մարզեր | Գործոն 1 | Գործոն 2 | Գործոն 3 |
|---|---|---|---|
| **Երևան** | 1.575 | 1.286 | 2.155 |
| **Արագածոտն** | -0.613 | -1.375 | -1.067 |
| **Արարատ** | -0.044 | -0.665 | 0.637 |
| **Արմավիր** | 0.076 | -0.092 | 0.422 |
| **Գեղարքունիք** | 0.989 | -0.401 | -1.108 |
| **Լոռի** | 0.870 | 0.678 | -0.594 |
| **Կոտայք** | -0.093 | 1.216 | 1.290 |
| **Շիրակ** | -1.065 | 1.314 | 0.027 |
| **Սյունիք** | -1.498 | -0.567 | 1.644 |
| **Վայոց ձոր** | -0.169 | -1.442 | -0.214 |
| **Տավուշ** | -0.340 | 0.148 | 0.160 |

Գործոնային վերլուծությունը թույլ է տալիս ՀՀ մարզերը խմբավորել ըստ առանձին գործոնների, սակայն տվյալ մեթոդն այն չի իրականացնում բոլոր գործոնները միասին վերցրած: Կլաստերային վերլուծության առավելությունն այն է, որ հնարավորություն է ընձեռում դասակարգելու ոչ միայն ուսումնասիրվող փոփոխականները, այլ նաև դիտարկվող օբյեկտները, ընդ որում՝ ըստ ցանկացած թվով գործոնների կամ փոփոխականների [4, էջ 6]:

Գծապատկեր 1-ում ներկայացված է կլաստերների միացման կարգը բնութագրող դենդոգրաման, որը ցուցադրում է ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման վառ արտահայտված անհամաչափությունը: Նախ՝ ՀՀ մարզերը ստորաբաժանվել են երկու կլաստերի՝ Երևան և մնացած մարզեր, ապա մարզերն էլ իրենց հերթին տրոհվել են երեք կլաստերի, ընդ որում, երկու և չորս կլաստերների ձևավորման միջև հեռավորությունը շատ մեծ է՝ սանդղակի գրեթե 7.5-ից մինչև 25-ը:

**Գծապատկեր 1. ՀՀ մարզերի դասակարգման դենդրոգրաման:**




Առաջին կլաստերի մեջ ընդգրկված է քաղաք Երևանը, որտեղ մեկ շնչին ընկնող ՀՏԱ-ն առավելագույնն է 4 կլաստերների մեջ՝ 1678 հազ. դրամ: Այս կլաստերում բարձր է նաև բնակչության մեկ շնչի հաշվով ներմուծման ծավալը և միջին ամսական անվանական աշխատավարձի մեծությունը, սակայն բարձր է նաև գործազրկության մակարդակը:

Երկրորդ և երրորդ կլաստերները բնութագրվում են մեկ շնչին ընկնող ՀՏԱ-ի միջին մակարդակով (համապատասխանաբար 1246.3 և 1199.5 հազ. դրամ):

Երկրորդ կլաստերի մեջ ներառվել են 4 մարզ՝ Լոռի, Կոտայք, Արագածոտն, Սյունիք, իսկ երրորդ կլաստերի մեջ՝ Արարատի և Վայոց ձորի մարզերը, որտեղ դիտարկվող փոփոխականների արժեքները գրեթե միջին դիրք են գրավում I և IV կլաստերների համապատասխան ցուցանիշների նկատմամբ:

Չորրորդ կլաստերում ընդգրկված են Շիրակի, Արմավիրի, Գեղարքունիքի, Տավուշի մարզերը, որոնք անմխիթար վիճակում են հայտնվել նախևառաջ տնտեսական գործոնի հետևանքով: Այս կլաստերում մեկ շնչին ընկնող ՀՏԱ-ի միջին ցուցանիշը նվազագույնն է

մյուս կլաստերների համեմատ (982.5 հազ. դրամ), ցածր է նաև միջին ամսական աշխատավարձի մեծությունը:

Այսպիսով, գործոնային և կլաստերային վերլուծությունները հնարավորություն տվեցին կատարել ՀՀ մարզերի բազմաչափ դասակարգում և ուսումնասիրել որոշ գործոնների համալիր ազդեցությունը տարածքային զարգացման անհամաչափության վրա:


### Ամփոփում

Յուրաքանչյուր երկրի առաջընթացի հիմքում տարածքային կայուն զարգացումն է, բոլոր տարածքների համաչափ զարգացման ապահովումը, ուստի կարևոր խնդիր է տարածքային զարգացման անհամաչափությունները պայմանավորող գործոնների բացահայտումը և դրանց վարիացիայի բնութագրումը:

Սույն հոդվածում նկարագրված է բազմաչափ վիճակագրության երկու՝ գործոնային և կլաստերային վերլուծության մեթոդների կիրառությունը ՀՀ սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական մի շարք բնութագրիչների տարածքային անհամաչափությունն ուսումնասիրելու նպատակով:


*Հիմնաբառեր*՝ գործոնային վերլուծություն, համախառն տարածաշրջանային արդյունք, բաղադրիչների շրջված մատրից, կլաստերային վերլուծություն, դենդոգրամմա:

### Գրականություն


1. ՀՀ տարածքային համաչափ զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները / Ջ. Թադևոսյան և ուրիշներ, «Ամբերդ» մատենաշար: Եր.: Տնտեսագետ, 2015թ. – 140 էջ, http://media.asue.am/upload/Amberd_22.pdf
2. Սոցիալ-տնտեսական ցուցանիշների գնահատումը Հայաստանում SPSS փաթեթի կիրառմամբ: Հետազոտական աշխատանք, ՀՊՏՀ.-Եր.: Տնտեսագետ, 2016.- 101 էջ:
3. Дронов С.В. Многомерный статистический анализ.: Учебное пособие. Барнаул: Изд-во Алт. гос. ун-та, 2003. 213 с.
4. Berkhin P. A survey of clustering data mining techniques. Grouping Multidimensional Data, 2006. 56p.

## ИЗУЧЕНИЕ НЕРОВНОМЕРНОСТИ ТЕРРИТОРИАЛЬНОГО РАЗВИТИЯ РА С МНОГОМЕРНЫМИ СТАТИСТИЧЕСКИМИ МЕТОДАМИ

**Ширинян Ануш Юрьевна**
канд.экон. наук
АГЭУ, кафедра статистики, ассистент

### Резюме

Основой прогресса каждой страны является обеспечение устойчивого, равномерного развития всех территориальных единиц. Следовательно, важной проблемой является выявление определяющих неравномерность территориального развития факторов и определение их вариаций.

В этой статье описывается применение двух многомерных статистических методов (факторного и кластерного) для изучения территориальных диспропорций ряда социально-экономических и демографических характеристик РА.

*Ключевые слова* - факторный анализ, валовый региональный продукт, матрица повернутых компонент, кластерный анализ, дендрограмма.

## STUDY OF THE TERRITORIAL DEVELOPMENT DISPROPORTION OF RA WITH MULTIDIMENSIONAL STATISTICAL METHODS

**Anush Shirinyan**
Ph.D. in Economics
ASUE, Chayr of Statistics, Professor assistent

### Summary

The basis for the progress of each country is to ensure the sustainable, uniform development of all territorial units. Consequently, an important problem is the identification of the factors contributing to disproportion of territorial development and the determination of their variations.

This article describes the application of two multidimensional statistical methods (factor and cluster) to study the territorial disparity of a number of socio-economic and demographic characteristics of RA.

*Keywords* – factor analysis, gross regional product, rotated component matrix, cluster analysis, dendrogram.

# ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ - ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ԿԱՊԸ՝ ՈՐՊԵՍ ՀՀ ԿՐԹԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

***Գրիգորյան Կարմեն Համլետի***
*պնփ.թ.*
*ՀՊՏՀ, ՄՏՀ ամբիոն, ասիստենտ*
***Հովականյան Լիլիթ Յուրիի***
*պնփ.թ.*
*ՀՊՏՀ, Ֆինանսների ամբիոն, ասիստենտ*

Բացահայտելու համար ՀՀ-ում Կրթության և աշխատաշուկայի միջև բազմաբնույթ կապերի առանձնահատկությունները, այս հոդվածի շրջանակներում վերլուծել ենք զբաղվածների թիվն ըստ կրթական մակարդակի, գործազուրկների թիվն ըստ կրթական մակարդակի, շրջանավարտների որակի գնահատումը գործատուների կողմից և աշխատաշուկայում առաջարկ - պահանջարկի հարաբերակցությունն ըստ ոլորտների:

2015թ. տվյալներով ՀՀ-ում ըստ կրթական մակարդակի զբաղվածների բաշխումը ցույց է տալիս, որ բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողները համալրում են զբաղվածների ընդամենը 28%-ը (344.700 մարդ)՝ զբաղվածության մակարդակով զիջելով միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցողներին (զբաղվածների 43%-ը կամ 461.700 մարդ)[5]: Միջին մասնագիտական և թերի բարձրագույն կրթություն ունեն զբաղվածների 24%-ը, 2%-ն ունեն նախամասնագիտական կրթություն, 7%-ը՝ հիմնական ընդհանուր կրթություն, իսկ 1%-ը՝ հաճախել են միայն տարրական դպրոց:

Նմանատիպ ցուցանիշներ են գրանցվել նաև գործազրկության դեպքում. կրթական ամենաբարձր մակարդակ ունեցողները (գրանցված գործազուրկների 27.8%-ը կամ 67.800 մարդ) զգալի կշիռ ունեն գործազուրկների ընդհանուր քանակում և այդ ցուցանիշով զիջում են միայն միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցողներին (40.9% կամ 99.700 մարդ):

Զբաղվածների և գործազուրկների թվերի համեմատությունն ըստ առանձին կրթական մակարդակների ցույց է տալիս, որ աշխատանքի տեղավորման առավել լայն հնարավորություններ ունեն հատկապես

միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցողները: Նման եզրահանգման համար հիմք են հանդիսացել ըստ կրթական մակարդակների առանձնացված բնակչության տեսակարար կշիռը զբաղվածների և գործազուրկների ընդհանուր թվում: Այսպես, միջնակարգ ընդհանուր կրթություն ունեն զբաղվածների 43%-ը և գործազուրկների 40%-ը: Զբաղվածների և գործազուրկների թվում տեսակարար կշիռն ի նպաստ զբաղվածների է բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցողների շրջանում (զբաղվածների 29.1%-ը և գործազուրկների 27.8%-ը) ինչպես նաև տարրական և ոչ լրիվ տարրական կրթություն ունեցող բնակչության դեպքում. բնակչության այս խմբին է բաժին ընկնում զբաղվածների 5.4%-ը և գործազուրկների 4.15%-ը: Հիմնական ընդհանուր և նախամասնագիտական կրթությամբ բնակչության զբաղվածության և գործազրկության ցուցանիշները համամասնական են:

ՀՀ տնտեսությունում զբաղվածների ընդհանուր թվում ունեցած տեսակարար կշռի համեմատ գործազուրկների ընդհանուր թվում մեծ է միջին մասնագիտական և թերի բարձրագույն, ինչպես նաև բարձրագույն և հետբուհական կրթություն ունեցող բնակչության տեսակարար կշիռը: 2015թ. տվյալներով, միջին մասնագիտական կրթություն են ստացել զբաղվածների 22.7%-ը և գործազուրկների 27%-ը:

Ստացվում է, որ ՀՀ տնտեսության մեջ միջին մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողներն ավելի ցածր՝ միջնակարգ ընդհանուր կրթական մակարդակ ունեցող բնակչության համեմատ աշխատանքի տեղավորման համար առավել սահմանափակ հնարավորություններ ունեն:

Աշխատանքի և որակավորման համապատասխանությունն առավել մեծ է տարրական և ոչ լրիվ տարրական (98,4%), հիմնական ընդհանուր (99,8%) և միջնակարգ ընդհանուր (99,5%) կրթություն ունեցողների շրջանում: Եվ ընդհակառակը՝ կրթության առավել բարձր մակարդակներում փաստացի և աշխատանքի համար պահանջվող որակավորումների միջև խզումն ավելանում է: Մասնավորապես, 2014թ. կատարած աշխատանքը համապատասխանել է կրթական որակավորմանը նախամասնագիտական (արհեստագործական) կրթություն ունեցողների 72,8%-ի, միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն կրթություն ունեցողների 69%-ի և բարձրագույն կամ հետբուհական կրթություն ունեցողների 81%-ի դեպքում, ինչը նշանակում է, որ ո-

րակավորված մասնագետների շրջանում բարձր է հատկապես «մասնագիտական գործազրկության» մակարդակը:

Մասնագիտական որակավորում չունեցող բնակչության մոտ կատարած աշխատանքի և որակավորման համապատասխանության բարձր ցուցանիշը, մեր կարծիքով, հիմնավորվում է նրանով, որ այս խմբում ընդգրկված անձինք զբաղեցնում են ամենացածր որակավորում կամ ընդհանրապես որակավորում չպահանջող աշխատատեղերը, ուստի, զբաղված լինելու դեպքում նրանք մեծամասամբ աշխատում են իրենց որակավորմանը համապատասխան: Մինչդեռ բարձրագույն կրթություն ունեցողները որակավորմանը համապատասխան աշխատանք չգտնելու դեպքում ստիպված են լինում անցնել ավելի ցածր որակավորում պահանջող աշխատանքների: Միևնույն ժամանակ, առանց որակավորման համապատասխանությունը հաշվի առնելու՝ գործատուներն ավելի հակված են աշխատանքի ընդունել բարձրագույն կրթություն ունեցողներին:

Տեղական գործարարների և ղեկավարների կողմից ծավալուն քննարկումների առարկա են դարձել աշխատուժի որակը և շրջանավարտների անբավարար կրթական մակարդակը: Գերակշռող է այն տեսակետը, որ ընդհանուր առմամբ շրջանավարտները պատրաստ չեն աշխատելու իրենց մասնագիտական ոլորտներում՝ ինչպես տեսական, այնպես էլ գործնական գիտելիքների և հմտությունների պակասի պատճառով: Այսպիսով, մեծ ճեղքվածք կա կրթական համակարգի կատարելագործվածության մակարդակի և տնտեսության իրական պահանջարկի միջև: Օգտվելով աշխատաշուկայի՝ բարձրագույն կրթությամբ մասնագետների գերհագեցվածությունից՝ գործատուները չարդարացված պահանջներ են ներկայացնում (աշխատանքային փորձ, օտար լեզուների գերազանց իմացություն, վերապատրաստման և համապատասխան որակավորման փաստաթղթերի առկայություն և այլն) այնպիսի աշխատատեղերի համար, որոնք նախատեսված չեն որակավորված աշխատուժի համար և որոնց համար առաջարկվող աշխատանքի վարձատրությունն էականորեն ցածր է համապատասխան փորձառություն ունեցող աշխատողների վարձատրության չափից: Ստացվում է, որ բարձրագույն կրթությամբ կադրերն աշխատաշուկայում առավել խոցելի են մյուս աշխատանքային ռեսուրսների համեմատ և ավելի հաճախ են գործազրկությունից խուսափելու նպատա-

կով համաձայնում ստանձնել իրենց որակավորմանը չհամապատասխանող աշխատանք:

Այս ամենը վկայում է այն մասին, որ ՀՀ աշխատաշուկան գերհագեցած է բարձրագույն կրթությամբ մասնագետներով: Ստեղծված իրավիճակը նպաստում է ՀՀ-ից «ուղեղների արտահոսքի» տեմպերի աճին:

Տարիներ շարունակ գործատուների պահանջների և աշխատաշուկայում առաջարկ-պահանջարկի հարաբերակցության անտեսումը հանգեցրել է առանձին մասնագիտությունների գծով կադրերի գերարտադրությանը, բուհ-գործատու, բուհ-աշխատաշուկա կապերի խզմանը, ինչի պայմաններում բուհի շրջանավարտ լինելն ամենևին էլ աշխատանքով ապահովման երաշխիք չէ:

Կրթական համակարգում բնակչության ներգրավվածության բարձր ցուցանիշի և կրթության ցածր որակի պարադոքսը կարող է բացատրվել Հայաստանի կրթական համակարգում ներդրումների շատ ցածր մակարդակով: Այսպես՝ աշխարհի երկրներում կրթական ներդրումների և բարձրագույն կրթության մեջ ներգրավվածության ցուցանիշները քարտեզագրելու դեպքում պարզ է դառնում, որ Հայաստանը մեկն է բարձրագույն կրթական համակարգում մեկ ուսանողի վրա կատարվող ծախսերի ամենացածր մակարդակն ունեցող երկրներից:

ՀՀ տնտեսության առաջնահերթ հատվածներում իրականացված աշխատուժի առաջարկի և պահանջարկի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ցածր գիտելիքահեն (տեքստիլ և թեթև արդյունաբերություն, ժամագործություն, ադամանդագործություն, ոսկերչություն և սննդի արդյունաբերության ճյուղեր) ոլորտներում բարձր որակավորում չպահանջող հաստիքների որոշ մասում ներկայումս ներգրավված են բարձրագույն կրթություն ունեցող մասնագետներ: Իրականում վերոնշյալ հաստիքներին անհրաժեշտ են ոլորտի նախնական և միջին մասնագիտական կրթությամբ մասնագետներ: Սակայն, ներկայումս Հայաստանում գրեթե բոլոր ոլորտներում առկա է վերոնշյալ նախնական և միջին մասնագիտական կրթական համակարգի բաց, որը պետք է լրացվի՝ ոլորտների աշխատուժի պատրաստումը օպտիմալացնելու և ոլորտի կարիքները արդյունավետ հասցեագրելու համար:

Վերջին շրջանում միջազգային պրակտիկայում լայն կիրառություն են գտել ԲՈՒՀ-աշխատաշուկա կապի ամրապնդմանն ուղղված

նորագույն մեխանիզմները: Այսպես, օրինակ, Նիդերլանդներում, այն պրոֆեսորները, որոնք դասավանդում են օգտակար, շահութաբեր դասընթացներ, պետք է ավելի լավ վարձատրվեն:

Կրթական ծրագրերի նախագծման ասպարեզում գերիշխող է դառնում «թյունինգ» մեթոդաբանությունը, որը հնարավորություն է տալիս նախագծվող ծրագրերի կառուցվածքն ու բովանդակությունը համապատասխանեցնելու աշխատաշուկայի կարիքներին և պահանջմունքներին:

Աշխատաշուկայի կողմից բուհերի շրջանավարտների ամբողջ առաջարկը կլանելու համար անհրաժեշտ է շարունակական տնտեսական աճ, որը կուղեկցվի նոր աշխատատեղերի ստեղծմամբ:

Ընդհանուր առմամբ, ՀՀ տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում առկա են որոշակի անհամամասնություններ: Սա հատկանշական է այն աշխատատեղերի համար, որոնց դեպքում բարձրագույն կրթությունը պարտադիր պահանջ է (մասնավորապես ՏՏ ոլորտը). նշված հանգամանքն ընդգծում է Հայաստանի բուհական համակարգի անկատարությունը, որը գործատուների համար արտահայտվում է շրջանավարտների վերապատրաստմանն ուղղված լրացուցիչ ֆինանսական և ժամանակային ծախսերով:

Միևնույն ժամանակ, բարձրագույն կրթությամբ նոր աշխատուժի նկատմամբ պահանջարկը բարձր կլինի գիտալիքահեն և աշխատատար ոլորտներում: Հաշվի առնելով տնտեսական զարգացման միտումներն ու կառուցվածքային փոփոխությունները, ինչպես նաև մի շարք շուկաների աճի կանխատեսումները՝ մոտակա տարիներին նոր թափուր աշխատատեղերի ստեղծումը առավել հավանական է հետևյալ ոլորտներում՝ ֆինանսական/բիզնես ծառայություններ, ՏՏ, ինտերնետ ծառայությունների տրամադրում և ճշգրիտ ճարտարագիտություն, առողջապահական ծառայություններ, առևտուր և այլն: Ավելին, տնտեսության ընդհանուր զարգացմամբ պայմանավորված՝ կանխատեսվում է տնտեսագետների պահանջարկի աճ գրեթե բոլոր ոլորտներում:

Այսպիսով, ՀՀ կրթական ծառայությունների և աշխատանքի շուկայի համադրական վերլուծությունը թույլ է տվել կատարել հետևյալ եզրահանգումները.

✓ Կրթական ծրագրերում գերակշռում է սովորողների տեսական պատրաստվածությունը, շրջանավարտները չունեն կյանքի և մասնա-

գիտական գործունեության համար բավարար կիրառական կարողություններ ու հմտություններ, արդյունավետ մասնագիտական կողմնորոշում,

✓ թույլ է կրթության տարբեր մակարդակների, ինչպես նաև կրթության և տնտեսության միջև երկխոսությունը, բավարար չեն սոցիալական գործընկերության մեխանիզմները, կրթության համակարգը չի կարողանում արագ և արդյունավետ արձագանքել հասարակության և տնտեսության արագընթաց զարգացումներին:

Իրավիճակը բարելավելու նպատակով անհրաժեշտ ենք համարում՝

❖ Աշխատաշուկայի հետ հակադարձ կապի հաստատումը, գործատուների ներգրավումը կրթական ծրագրերի փորձաքննության և արդիականացման գործընթացներում:

❖ Շրջանավարտների ծառայունակության և մրցունակության բարձրացումը:

❖ Դասավանդող անձնակազմի կրթության ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին տիրապետման, վերապատրաստման արդյունավետության բարձրացումը, մանկավարժների մասնագիտական առաջխաղացման արդյունավետ համակարգի ներդրումը:

❖ Կրթական ծրագրերի տնտեսական համապատասխանության բարձրացումը, դրանց ուղղվածությունների և բովանդակության մերձեցումը աշխատաշուկայի արդի պահանջներին, ինչը ենթադրում է մասնագիտությունների առկա մանրամասնեցված ցանկի վերանայում և վերակողմնորոշում դեպի շուկայական պահանջարկը:

Մեր կարծիքով, առաջադրված խնդիրների լուծման մեխանիզմները պետք է դիտարկել ոչ թե համապետական, այլ ներբուհական մակարդակով՝ յուրաքանչյուր բուհի համար առաջարկելով իր գործունեության առանձնահատկություններից բխող դեղատոմս:

**Ամփոփում**

Կրթության և աշխատաշուկայի, բուհերի և իրական հատվածի միջև հարաբերությունները ճանաչվել են նորարարության և մրցունակության ապահովման հիմնական բանաձևը: ՀՀ-ում նման կապերի թուլացումը հանգեցրել է որոշակի մասնագիտությունների գծով բարձ-

րագույն կրթությամբ աշխատանքային կադրերով աշխատաշուկայի հագեցմանը, նրանց խնցելիության բարձրացմանը և, որպես հետևանք, «ուղեղների արտահոսքի»: Մի շարք այլ մոտեցումների հետ մեկտեղ հոդվածում առաջարկվում է նաև օրենսդրական մակարդակով դիվերսիֆիկացնել աշխատավարձի դրույքաչափերը՝ կախված աշխատողների կրթական և որակական հատկանիշներից:

*Առանցքային հասկացություններ:* աշխատաշուկա, մասնագետ, որակավորում, գործատու, կրթության մակարդակ, գործազուրկ

**Գրականություն**


1. Մարկոսյան Ա.Խ., Սարգսյան Հ.Լ., Թոքմաջյան Ս.Հ., Իվանյան Գ.Ա., Որակի ապահովման ներքին համակարգը ճարտարապետաշինարարական բարձրագույն ուսումնական հաստատություններում: Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, 2013. 248 էջ
2. Հայաստանում բարձրագույն կրթության շրջանավարտների պահանջարկի և զբաղվածության վերաբերյալ ուսումնասիրություն, վերջնական հաշվետվություն, Ի-Վի Քոնսալթինգ, ՀՀ ԿԳՆ Կրթական ծրագրերի կենտրոն ՓԲԸ, Եր. 2011թ. 86 էջ:
3. Հայաստանում բարձրագույն կրթության շրջանավարտների պահանջարկի և զբաղվածության վերաբերյալ ուսումնասիրություն, ԿԳՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, Երևան, 2011, էջ 42:
4. ՀՀ-ում բարձրագույն տնտեսագիտական կրթությամբ մասնագետների պահանջարկի գնահատումը և կանխատեսումը/ Ծրագրի գիտական ղեկավար՝ Ա.Ե. Զաքարյան; Կատարողներ՝ Ա.Վ. Գրիգորյան, Վ.Հ. Գրիգորյան, Ն.Ժ. Ղուկասյան, Կ.Հ. Առաքելյան.- Եր.: Տնտեսագետ հրատարակչություն, 2014.
5. ՀՀ ԱՎԾ Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2016 http://www.armstat.am/am/?nid=82&id=1861
6. «Տնտեսության առաջնային ոլորտներում բարձրագույն կրթության պետական աջակցություն. միջազգային փորձի ուսումնասիրություն և պահանջարկի կանխատեսում» Վերջնական հաշվետվություն Ներկայացվում է «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ կողմից ՀՀ կրթության

և գիտության նախարարության «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ, 100 էջ:
7. Проблемы развития инновационно-креативной экономики / Сборник докладов по итогам международной научнопрактической конференции, Москва, 29 марта-09 апреля 2010 г. / Под общей редакцией проф. Мельникова О.Н. – М.: Креативная экономика, 2010 – 384 с.: ил., стр.303-304, http://www.creativeconomy.ru/wp-content/uploads/2010/06/PRICE.pdf

## ВЗАИМОСВЯЗЬ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ СИСТЕМЫ - РЫНКА ТРУДА КАК ЗАЛОГ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ОБРАЗОВАТЕЛЬНЫХ УСЛУГ РА

**Кармен Гамлетовна Григорян**
канд.экон. наук
АГЭУ, кафедра Международных экономических отношений, ассистент
**Лилит Юрьевна Оваканян**
канд.экон. наук
АГЭУ, кафедра Финансов,ассистент

### Резюме

Взаимосвязь между образованием и рынком труда, университетом и предприятием признана основной формулой обеспечения новаторства и конкурентоспособности. Ослабление этой взаимосвязи в РА привело к перепроизводству кадров некоторых специальностей, пресыщению рынка труда кадрами с высшим образованием, что привело к утечке мозгов. Наряду с остальными подходами решения перечисленных проблем, нами предлагается также на законодательном уровне диверсифицировать ставки заработной платы в зависимости от классификации труда.

*Ключевые понятия:* рынок труда, специалист, квалификация, работодатель, уровень образования, безработный.

## EDUCATIONAL SYSTEM - LABOR MARKET RELATIONS AS A GUARANTEE OF COMPETITIVENESS OF THE EDUCATION SERVICES

**Karmen Grigoryan**
Ph.D in Economics, Assistant Professor
ASUE, Chair of International Economic Relations
**Lilit Hovakanyan**
Ph.D in Economics, Assistant Professor
ASUE, Chair of Finance

### Summary

The relations between education and the labor market, universities and enterprises has been recognized the basic formula for ensuring innovation and competitiveness. Rupture of the such ties in the RA has led to over-production of certain professions, the workload of the labor market with higher education personnel and their high vulnerability, and as a consequence, to the "brain drain". Along with other approaches to solving these problems, we also proposed to diversify the wage rates depending on the educational and qualitative characteristics of the employees at the legislative level.

*Keywords:* labor market, specialist, qualifications, employer, level of education, unemployed.

# ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

***Ռոդել Ռոբերտի Եղիազարյան***
*ՃՇՀԱՀ, էկոնոմիկայի, իրավունքի և*
*կառավարման ամբիոն, հայցորդ*

Հայտնի է, որ նախագծերում ներդրումների արդյունավետությունը կապված է նախագծի ռիսկերի կառավարմամբ: Սա հատուկ է նաև խոշորածավալ շինարարություն ենթադրող ներդրումային նախագծերին: Ակնհայտ է, որ շինարարական նախագծերում ներդրումների արդյունավետությունը կախված է նախագծի իրականացման տարբեր՝ նախագծման, շինարարության, շահագործման փուլերում, ինչպես նաև դրանց միջանկյալ գործընթացներում հնարավոր ռիսկերը արդյունավետ կառավարելուց:

Նախագծերը, որտեղ շինարարությունը իրականացվում է մի քանի կապալառու և ենթակապալառու կազմակերպությունների կողմից, ըստ էության այլ հավասար պայմաններում ավելի դժվար կառավարելի են: Նման նախագծերում ևս պատասխանատվությունը կրում է գլխավոր կապալառուն, սակայն կապալառու և ենթակապալառու կազմակերպությունների կողմից ստանձնած ռիսկերի և աշխատանքների համակարգման, փոխգործակցության, մատակարարումների, ժամանակացույցի, բյուջեի կառավարման, առանձին աշխատանքների ղեկավարների խմբերի միջև փոխգործակցության և այլ խնդիրները, կարող են առաջացնել նախագծի իրականացման էական ռիսկեր՝ նախանշված ժամանակացույցի, բյուջեի խախտման, ինչպես նաև նախագիծը իրականացնող կազմակերպության ֆինանսական, բարի համբավի, նախագծի ձախողման հետևանքով իրավական և այլ գործընթացներով պայմանավորված կազմակերպության բնականոն աշխատանքի խաթարման և այլ հետևանքներ:

Ռիսկերի կառավարումը նախագծի, այդ թվում՝ շինարարական արտադրության գործընթացի (այսուհետ՝ ՇԱԳ) բոլոր կողմերի գործառույթների բաղկացուցիչ մասն է կազմում: ՇԱԳ ռիսկերը բաշխվում

են կողմերի (ներդրող, նախագծող, կապալառու և այլ կողմեր) միջև՝ ըստ նախագծում գործառույթների իրականացման համար կնքված պայմանագրերի, ինչը պահանջների խախտման դեպքում ենթադրում է ֆինանսական փոխհատուցման հնարավորություն: [3,5]

Նախագծերում ներդրումների արդյունավետությունը կապված է նախագծի իրականացման բոլոր փուլերում համակարգված աշխատանքների և ռիսկերի կառավարման հետ: Ներկայումս և՛ գիտական մակարդակում և՛ կազմակերպություններում ներդրումներ իրականացնելիս կարևորում են նախագծման կառավարումը (design management) այն համարելով նախագծում ներդրումների հաջողության գլխավոր բաղադրիչներից մեկը: Նախագծման կառավարման մասին լայնածավալ աշխատությունները քիչ են, այն հանդիսանում է դեռևս թույլ ուսումնասիրված ոլորտ:[12]

Շինարարություն նախատեսող նախագծերում շինարարական գործընթացի ռիսկերը բաշխվում են կողմերի միջև: Ռիսկերի մի մասը կարող են առաջանալ ինչպես հիմնական կողմերից մեկի՝ աշխատանքները ոչ պատշաճ կազմակերպելու և կառավարելու հանգամանքով, այնպես էլ անկախ կամ երրորդ կողմերով պայմանավորված գործոններով: Բացի այդ ռիսկերի կառավարման մեջ նախագծի մի փուլում առաջացած ռիսկերը կամ դրանց հավանականությունը կարող են ստեղծել այլ ռիսկեր կամ բացասական հետևանքներ նախագծի այլ փուլերում, իսկ վերջնական արդյունքում ազդել ներդրող կազմակերպության վրա: Հայտնի է, որ ոչ միշտ են հնարավոր ռիսկերի ստեղծած հետևանքների նվազեցումը կամ կանխարգելումը այլ փուլերում: Ռիսկերի այդպիսի օրինակ են՝ նախագծային, շինարարության փուլում, ժամկետների խախտման, բարի համբավի և այլ ռիսկերը: ՇԱԳ որևէ փուլում անկախ պատճառից օբյեկտի շահագործման ժամանակացույցի խախտումը ներդրողի մոտ կարող է առաջացնել ներդրումների արդյունավետության անկում և այլն: Հաճախ պայմանագրերով սահմանված տուգանքները կամ պատասխանատվության միջոցները ամբողջությամբ չեն կարող հատուցել դրա հետևանքները:

Նախագծերի կառավարման հայտնի մոտեցումները ենթադրում են նախագծի կառավարումը տվյալ փուլի և պայմանագրի պատասխանատվության շրջանակներում: Ակնհայտ, որ նման դեպքում ներդրող կազմակերպության ռիսկերի կառավարման շրջանակը ըստ էու-

թյան մասամբ սահմանափակվում է պայմանագրերով: Անկախ պայմանագրով բաշխված պատասխանատվության և ռիսկերի, միևնույն է, ներդրող կազմակերպությունները կարող են կրել դրանց հնարավոր հետևանքները: Հետևաբար, բազմակողմ և բազմափուլ նախագծերում ներդրող կողմի ռիսկերի կառավարման արդյունավետությունը կախված է նաև նախագծի մասնակից կազմակերպությունների ռիսկերի կառավարման արդյունավետությունից:

Է. Զավադկասը նախագծերում ռիսկերի կառավարման գործընթացը ներկայացնում է քայլերի հետևյալ հաջորդականությամբ՝

- Նույնականացում,
- Վերլուծություն,
- Հսկողություն/վերահսկողություն (control):

Նույնականացումը՝ նախագծի արտաքին, ներքին, ռիսկերի բացահայտումն է, որին հաջորդում է վերլուծությունը՝ ռիսկերի գնահատում, առաջանալու հավանականությունը և այլն:[10]

Վերահսկողության միջոցառումները ենթադրում են ռիսկերի և դրանց առաջանալու հավանականության կանխում, որն իրականացվում է՝ դիվերսիֆիկացման և նվազեցման միջոցով: Ռիսկերի նվազեցումը ենթադրում է՝

- Կոմերցիոն ապահովագրություն,
- Ինքնապահովագրություն
- Միաձուլում և դիվերսիֆիկացում:[11]

Ա. Եգանյանը շինարարության նախագծերում ռիսկերի կառավարումը ներկայացնում է՝

- Հրաժարման,
- Փոխանցման,
- Ընդունման,
- Նվազեցման եղանակներով: [4]

Ձեռնարկություններում ռիսկերի կառավարման ռազմավարությունների մեջ Է. Հոլմսը առանձնացնում է հետևյալ մեթոդները՝

- ռիսկերից խուսափելու,
- փոխանցման,
- ապահովագրության,
- հեջավորման,
- դիվերսիֆիկացման

Ձեռնարկություններում և նախագծերում ռիսկերի կառավարման հաջորդ փուլը՝ ռիսկերի մոնիթորինգն ու կառավարումն է, որոնց նպատակը ռիսկերի հսկողության միջոցով՝ արտաքին և ներքին միջավայրերի գործոնների փոփոխությամբ պայմանավորված, ռիսկերի կառավարման ռազմավարության մեջ համապատասխան փոփոխությունների իրականացումն է: Նշված գործողությունները, ըստ էության, ենթադրում են տվյալ ռիսկը ստանձնած կողմի ռիսկերի կառավարման ռազմավարության և առանձին մեթոդների փոփոխություն: [1]

Ըստ էության, մոնիթորինգը և ռիսկերի նվազեցման և դրանց առաջացումը կանխարգելելու միջոցառումների նկատմամբ վերահսկողությունը իրականացնում է տվյալ ռիսկը ստանձնած կողմը: Ակնհայտ է, որ նախագծի ներդրող կողմը մոնիթորինգը իրականացնում է իր գործառույթների և ստանձնած ռիսկերի նկատմամբ:

Հայտնի է, որ ռիսկերը կարող են առաջանալ, ինչպե՛ս նախագծի մասնակից կողմի սխալի, այլև անկախ կամ ֆորսմաժորային գործոններով: Ակնհայտ է, որ նախագծի իրականացման տվյալ փուլի համար պատասխանատու կազմակերպությունն է կրում առաջացած ֆինանսական կորուստների և պահանջների պատասխանատվությունը: Հնարավոր են դեպքեր, որոնց պատճառները կապված չեն կողմերից մեկի թերացմամբ: Ինչպես օրինակ՝ քաղաքական ռիսկի որոշ տեսակները, բնական կամ տեխնոգեն լրկալ աղետների/վթարները (մատակարար կազմակերպության մոտ) և այլն: Նշված դեպքերը կարող են հանգեցնել մատակարարման խափանումների, հետևաբար, պայմանագրի պահանջների թերի կատարման՝ շահագործման ժամկետների հետաձգման և այլ հետևանքների: Նման դեպքերում, աշխատանքների կատարման համար կնքված պայմանագրերի համար գործում է ֆորս-մաժորի պայմանը, ինչը սովորաբար ամրագրվում է պայմանագրերում: Մյուս կողմից պայմանագրի կատարման ժամկետների հետաձգումը ներդրող կազմակերպության մոտ կարող է առաջացնել ֆինանսական խնդիրներ՝ վարկային, արժութային այլ ռիսկեր, սպասվող դրամական հոսքերի հետաձգում, ներդրումների արդյունավետության անկում և այլն: Ապահովագրական, փոխհատուցման պահանջի նպատակով՝ պատճառների հետաքննությունները, ուսումնասիրությունները և իրավական գործընթացները ժամանակատար են: Հետևաբար, դրանք, ևս կարող են ազդել նախագծի և ներդրումների արդյունավետության վրա: [14]

Միևնույն ժամանակ, տվյալ աշխատանքները իրականացնող կազմակերպությունը, աշխատանքների իրականացման և ռիսկերի կառավարման պատշաճ մակարդակ ապահովելու պարագայում օրինակ՝ պաշարների կառավարման, մատակարարման աղբյուրների դիվերսիֆիկացման և այլ միջոցառումների դեպքում կարող են խուսափել նմանատիպ ռիսկերից կամ նվազագույնի հասցնել դրանց հետևանքները:

Ներդրումների արդյունավետությունը ուղղակի կապված է ռիսկերի կառավարման արդյունավետության հետ: Հետևաբար բազմափուլ, բազմակողմ երկարաժամկետ խոշորածավալ շինարարական նախագծերում արդյունավետ ներդրումների կառավարման գլխավոր գործոններից մեկը՝ ռիսկերի արդյունավետ կառավարումն է նախագծի մասնակից բոլոր կողմերի կողմից:

Ռիսկերի արդյունավետ և համակարգված կառավարման պահանջը առավել բարձր և կարևոր գործոն է հատկապես մեծաքանակ կապալառու և ենթակապալառու կազմակերպություններից կազմված խոշոր նախագծերում: Նախագծերը, որտեղ շինարարությունը իրականացնում են փոքր կազմակերպությունները, նշված ռիսկերի բազմապատկմանը ավելանում են փոխհամաձայնեցված, համակարգված աշխատանքների իրականացման խնդիրները: Սովորաբար, փոքր կազմակերպությունների ռեսուրսների սահմանափակությունը ենթադրում է նաև ռիսկերի կառավարման ցածր մակարդակ:

Հիմնականում զարգացող երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, շինարարական կազմակերպությունները գտնվելով վաղ զարգացման փուլում, սովորաբար ռիսկերի կառավարման նպատակով չեն կիրառում միջազգային ստանդարտներ, կամ օգտվում որակավորված նախագծերի, ռիսկերի կառավարման որակավորված մասնագետների ծառայություններից: ՀՀ-ում ռիսկերի կառավարման՝ ISO 31000 և 31010 ստանդարտի որակավորումները տրամադրվում են «Ստանդարտների ազգային ինստիտուտի» կողմից, սակայն մեր կողմից իրականացված դիտարկումները ցույց են տվել որ ներկայում՝ ՀՀ-ում գործող շինարարական կազմակերպություններին ռիսկեր կառավարման միջազգային ստանդարտների որևէ որակավորում տրամադրված չէ:[6]

Բազմաթիվ երկրներում շինարարական նախագծերում ներդրողները շինարարության փուլի նկատմամբ, մասնավորապես՝ որակի և

տեխնիկական պայմանների հսկողության նպատակով, օգտվում են համապատասխան որակավորված մասնագիտական ծառայություններից: Որակի և տեխնիկական հսկողության նպատակը՝ սահմանված նորմատիվային ցուցանիշներին կառույցի համապատասխանության ապահովումն է: Շինարարության որակի և տեխնիկական հսկողության պրակտիկան (այսուհետ ՇՈՏՀ) կիրառվում է նաև ՀՀ-ում և հանդիսանում է օրենսդրական պահանջ: [13]

Այն, ըստ էության, մոնիթորինգային/վերահսկողական գործընթաց է, որն ապահովում է կառույցի որակի և սահմանված նորմատիվ տեխնիկական պահանջներին համապատասխանությունը: Ակնհայտ է, որ նշված պահանջների պահպանումը կապալառու կազմակերպության պարտականությունն է, մյուս կողմից՝ ներդրող կողմի համար ապահովում է նշված ռիսկերի կառավարման հսկողություն-մոնիթորինգ: ՇԱԳ-ի նկատմամբ պետական կարգավորող մարմինների կողմից սահմանված օրենսդրական և նորմատիվային պահանջների նպատակը՝ պետական, հասարակական, մարդու անվտանգության, շրջակա միջավայրի, տարածքների կառավարման և այլ ոլորտներում ռիսկերի ու պատահարների կանխարգելումն է: Տեսչական մարմինների վերահսկողությունը հանդիսանում է նշված պահանջների պահպանման մոնիթորինգ: [7]

Գործնականում՝ նախագծերում մասնակից կողմերի ռիսկերի կառավարման արդյունավետություն ապահովվելու նպատակով, պատվիրատու կողմը կարող է սահմանել կամ պարտադրել ռիսկերի կամ նախագծի կառավարման որոշակի ուղղեցույցներ, ստանդարտներ, պահանջներ: Սակայն անհրաժեշտ է, որ տվյալ կապալառու կազմակերպությունը ունենա համապատասախան որակավորմամբ կամ հմտություններով մասանգետներ, որոնք կարող են ներդրնել և կիրառել սահմանված պահանջները: Բացի այդ նմանատիպ պահանջները ոչ միշտ են հնարավոր ներդնել տվյալ կազմակերպությունում: Սովորաբար դրանք պահանջում են՝ որոշակի փորձառություն, ավելի շատ ռեսուրսներ, ժամանակ և միշտ չէ, որ կարող երաշխավորել ցանկալի արդյունք:

Վերլուծելով վերոնշվածը՝ մեր կարծիքով խոշորածավալ երկարաժամկետ շինարարական նախագծերում ներդրող կողմի ռիսկերի լավագույն կառավարումը, մասնակից մյուս կողմերի՝ աշխատանքների

կազմակերպման, ռիսկերի կառավարման գործընթացների նկատմամբ մոնիթորինգի/հսկողության և վերլուծության իրականացումն է՝ ներդրումների արդյունավետության, ռիսկերի կանխարգելման և կառավարման նպատակով: Սակայն ազդեցության տեսանկյունից ներդրող կողմի նախագծի թիմը կամ ղեկավարը չեն կարող ուղղակի ազդել կապալառու կազմակերպության տվյալ նախագծի հետ կապված ռիսկերի կառավարման գործընթացի վրա:

Նախագծի մասնակից կողմերի ստանձնած ռիսկերի կառավարման մոնիթորինգը ենթադրում է՝ մասնակից կողմերի ռիսկերի կանխարգելման և նվազեցման նպատակով իրականացվող միջոցառումների նկատմամբ մոնիթորինգ: Մոնիթորինգը հնարավորություն է տալիս գնահատել և կանխարգելել ռիսկերի կառավարման կառավարչական որոշումների հնարավոր սխալի ռիսկը: Այն հնարավորություն է տալիս վերլուծել և կանխարգելել ռիսկը ստանձնած կողմի՝ ռիսկերի կառավարման, որոշումների ընդունման սխալի ռիսկերից, որոնք վերջնական արդյունքում կարող են ազդել նախագծի արժեքի և ժամկետի վրա: Ակնհայտ է, որ մոնիթորինգի շահառուն ներդրողն է, հետևաբար մոնիթորինգ իրականացնող խմբի կամ մասնագետի ծառայությունների դիմաց վճարումը պետք է իրականացնի ներդրողը: Խոշորածավալ շինարարական նախագծերում ռիսկերի և նախագծի կառավարման մոնիթորինգ իրականացնող մասնագետը ըստ էության պետք է տիրապետի նաև որոշակի շինարարական գիտելիքների:

Շինարարության փուլում՝ որոշ աշխատանքների իրականացումը ենթադրում է լուծումներ, նախնական նախագծի փոփոխություններ և ոչ ստանդարտ որոշումներ, լուծումներ: Նշված ոչ ստանդարտ լուծումները և փոփոխությունները փոխհամաձայնեցվում են նախագծողի, շինարարության, հրապարակի աշխատանքների ղեկավարի, ինչպես նաև որակի և տեխնիկական հսկողության մասնագետի միջև (այսուհետ՝ ՇՈՏՀ): Օրենսդրությամբ ևս ՇՈՏՀ մասնագետի իրավասությունների և պարտականությունների շրջանակում է գտնվում նման միջամտությունը ընդհուպ՝ շինարարության դադարեցում և այլն: Ակնհայտ է, որ ՇՈՏՀ մասանգետը մասնակցում է նախագծի ՇԱԳ ողջ ընթացքին և ունի մասնագիտական բարձր որակավորում, այդ թվում՝ օրենսդրությամբ սահմանված: [7,9]

Վերոնշյալը հաշվի առնելով, մեր կարծիքով՝ զարգացող երկրնե-

րում, մասնավորապես՝ ՀՀ-ում խոշորածավալ շինարարություն նախատեսող (բնակելի և կոմերցիոն անշարժ գույքի շուկայում) նախագծում ներդրումներ իրականացնելիս ՇԱԳ փուլի և ռիսկերի կառավարման նկատմամբ մոնիթորինգի գործընթացը և հնարավոր ռիսկերի կանխարգելումն և կառավարումն առավել արդյունավետ և քիչ ծախսերով կարող են իրականացնել ՇՈՏՀ մասնագետները: Սովորաբար որակավորված նախագծի ղեկավարները և ռիսկերի կառավարման մասնագետները այլ հավասար պայմաններում չեն տիրապետում ՇԱԳ-ի առանձնահատկություններին, մյուս կողմից ներդրող կողմի շահերը ներկայացնող նախագծի ղեկավարները ըստ էության չեն կարող ազդեցություն ունենալ մասնակից կողմերի վրա:

Ներդրող կողմի խնդիրը ՇԱԳ բոլոր մասնակիցների կողմից ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացումն է: ՇՈՏՀ մասնագետների դերը պետք է հանդիսանա նախագծման, շինարարության և այլ միջանկյալ գործընթացներում աշխատանքների և ռիսկերի կառավարման գործընթացների նկատմամբ մոնիթորինգի վերլուծության և համապատասխան միջոցառումների իրականացումը:

Մեր կողմից ներկայացված մոնիթորինգը ենթադրում է ոչ թե՛ տվյալ կազմակերպության կողմից ստանձնած ռիսկերի մոնիթորինգ, այլ նախագծի իրականացման ողջ գործընթացի՝ նախագծման, հողային, գիոդեզիական, շինարարական և այլ միջանկյալ աշխատանքները իրականացնող կազմակերպությունների նախագծի և ռիսկերի կառավարման գործընթացի նկատմամբ մոնիթորինգ և վերլուծություն, որոնց արդյունքները պետք է օգտագործվեն համապատասխան կանխարգելիչ միջոցառումների իրականացման նպատակով:

Վերոգրյալից ելնելով՝ առաջարկում ենք նախագծեր իրականացնելիս ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման, շինարարության տեմպերի արագացման, նախագծային ժամկետների և բյուջեից հնարավորինս քիչ շեղում ունենալու նպատակով ՇԱԳ փուլում՝ նախագծի և ռիսկերի կառավարումը իրականացնել ՇՈՏՀ մասնագետի կառավարման միջոցով: Ըստ էության ներկայացված առաջարկը առավել կիրառելի և արդյունավետ կարող է լինել հատկապես բնակելի և կոմերցիոն անշարժ գույքի կառուցման նախագծերում ներդրումներ իրականացնելիս, որտեղ նախագծի իրականացման «հիմնական» մասը ՇԱԳ փուլն է:

Նախագծերում ՇՈՏՀ մասնագետի կողմից նախագծի կառավարման և ռիսկերի մոնիթորինգի գործընթացը կարող է բարձրացնել նախագծի, այդ թվում՝ ռիսկերի կառավարման արդյունավետությունը և լրացնել մասնակից փոքր ենթակապալառու կազմակերպությունների ռիսկերի կառավարման արդյունավետության բացը:

ՇՈՏՀ մասնագետի գլխավոր խնդիրը՝ նախագծի իրականացման մասնակից կողմերի կողմից ռիսկերի կառավարման գործընթացի վերլուծությունը և թերությունների բացահայտումն է՝ հնարավոր ռիսկերի կանխման և ազդեցության նվազեցման նպատակով: Մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալները փոխանցվում են ներդրող կողմին, որը վերագնահատում է աշխատանքների ընթացքը, ձեռնարկում ռիսկերի կառավարման համապատասխան միջոցառումներ՝ պահուստների վերագնահատում, պայմանագրերի վերանայում և այլն: [8]

Նախագծի ռիսկերի կառավարման և աշխատանքների իրականացման մոնիթորինգի իրականացման արդյունքները ենթադրում են որոշակի միջոցառումներ: Մյուս կողմից ակնհայտ է որ ՇՈՏՀ մասնագետը չի կարող ուղղակի ազդել կամ ներգործել աշխատանքների, որոշումների վրա: Ներգործության հիմնական ձևը ըստ էության խորհրդատվությունն է և լուծումների առաջարկումը: Որոնց չհետևելու հետևանքով առաջացած ռիսկերի հետևանքները պետք է կրի աշխատանքները իրականացնող կողմը:

## Եզրակացություն

Վերոգրյալից եզրահանգում են, որ խոշորածավալ շինարարություն նախատեսող նախագծերում ներդրումների արդյունավետությունը կախված է տվյալ նախագծի իրագործման առանձին փուլերում ռիսկերի կառավարման արդյունավետությունից: Շինարարական նախագծերում ներդրումների արդյունավետությունը կապված է ներդրող կազմակերպության ռիսկերի կառավարման մարմնի կողմից՝ ՇԱԳ ամբողջ գործընթացի մասնակիցների աշխատանքների, ռիսկերի կառավարման մոնիթորինգի, ռիսկերի վերագնահատման և կառավարման այդ թվում կառավարման ռազմավարության փոփոխությամբ:

Նախագծի ներդրումների և ռիսկերի արդյունավետությունը պայմանավորված է նախագծի տարբեր փուլերի աշխատանքների իրակա-

նացման և (ռիսկը ստանձնած կողմի՝ կապալառու) ռիսկերի կառավարման գործընթացի մոնիթորինգից: Մոնիթորինգի արդյունքների վերլուծության և ռիսկերի վերագնահատման հիման վրա ներդրող կազմակերպության ռիսկերի և ֆինանսերի կառավարման ռազմավարության համապատասխան փոփոխությունները կարող են ապահովվել նախագծում ներդրումների արդյունավետություն, ինչպես նաև կանխարգելել կառավարչական և մասնագիտական որոշումների սխալի ռիսկը: Նշված դեպքերը կարող են էական ազդեցություն ունենալ, ինչպե՛ս տվյալ կազմակերպության վարկանշի ձևավորման, այնպես էլ վերլուծությունների իրականացման և այլ նպատակների համար:

Մոնիթորինգի իրականացման աշխատանքներին ՇՈՏՀ մասնագետի մասնակցությունը ենթադրում է նաև վարձատրության փոփոխություն, կապված աշխատանքների իրականացման նպատակների փոփոխությունից: Քանի որ մոնիթորինգի աշխատանքների իրականացման դեպքում ՇՈՏՀ մասնագետի խնդիրը՝ նախագծի և ռիսկերի կառավարումն է ՇԱԳ փուլում ինչպես նաև նախագծի իրականացումը սահմանված ժամկետի և բյուջեի շրջանակներում: Հետևաաբար վարձատրությունը ևս պետք է իրականացվի ժամկետի երկարաձգման և բյուջեից շեղման աճին զուգահեռ՝ նվազման սկզբունքով:

**Ամփոփում**

Հոդվածում ներկայացված է շինարարական ներդրումային նախագծերի ռիսկերի կառավարման և ներդրումների արդյունավետության կապը՝ նախագծի շինարարական արտադրական գործընթացի ռիսկերի կառավարման հետ: Հոդվածի առարկան՝ ներդրումների արդյունավետության բարձրացումն է նախագծերում՝ մոնիթորինգի համակարգի ներդրման միջոցով, ռիսկերի կառավարման միջոցառումների վերլուծության, վերագնահատման և կառավարման մեթոդների փոփոխության միջոցով: Առաջարկվում է մոնիթորինգը իրականացնել՝ շինարարության որակի և տեխնիկական հսկողության մասնագետների ներգրավմամբ:

*Բանալի բառեր:* նախագիծ, ռիսկ, կառավարում, շինարարություն, մոնիթորինգ

# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Գրականություն


1. Холмс Э. / Риск-менеджмент / [пер. с англ.]. – М.: Эксмо, 2007- с. 136-143.
2. Абрамс Р., Бизнес-план на 100%: Стратегия и тактика эффективного бизнеса / Пер. С англ – М.: Альпина Паблишер, 2014 – с. 174-175.
3. Йескомб Э.Р., Принципы проектного финансирования / Пер. с англ. – М.: Алпина Паблишер, 2015.- с. 70-76.
4. Еганян А., Инвестиции в инфраструктуру: Деньги, проекты, интересы. ГЧП, концессии, проектное финансирование /– М.: Альпина Паблишер, 2015, -с. 235-236
5. Степанов И.С. Экономика строительства: учебник – 3-е изд., доп. и перераб. – М.: Юрайт-Издат, 2007. - 620 с.– с. 132-133. ISBN 978-5-94879-660-4
6. ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն Ստանդարտների ազգային ինստիտուտի կայք էջ: Հասանելի է՝ http://www.sarm.am/am/ հղմամբ:
7. ՀՀ Կառավարության որոշումը ՀՀ Քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության կանոնադրությունը եվ կառուցվածքը հաստատելու մասին 25.07.2002թ. N 1233-Ն: Հասանելի է՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=69518 հղմամբ:
8. Лоуренс Л. / Во время и в рамках бюджета: Управление проектами по методу критической цепи / Пер. с англ. – М.: Альпина Паблишерз, 2010. – с. 170-180, 354 с.
9. ՀՀ Կառավարության որոշումը քաղաքաշինության բնագավառում շինարարության որակի տեխնիկական հսկողության գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին: Հասանելի է՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=52749_հղմամբ:
10. Zavadskas E. K., Turskis Z. & Tamošaitiene J. Risk assessment of construction projects, Journal of Civil Engineering and Management, (2010) 16:1, pp 33-46 Հասանելի է՝ http://dx.doi.org/10.3846/jcem.2010.03

11. Han S. H.; Kim D. Y.; Kim H.; Jang, W.S. 2008. A webbased integrated system for international project risk management, Automation in Construction 17(3): pp 342–356 Հասանելի է՝ http://dx.doi.org/10.1016/j.autcon.2007.05.012 հղմամբ:
12. Knotten V., Svalestuen F., Hansen G. K. & Ladre O. / Design management in the building process- A review of current literature/ The Norwegian University of Technology and Science/ Procedia Economics and Finance 21 (2015) 120-127. Հասանելի է՝ https://doi.org/10.1016/S2212-5671(15)00158-6
13. ՀՀ Քաղաքաշինության նախարարի հրամանը՝ Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման մասին 20.06.1998թ. N 44: Հասանելի է՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=19495 հղմամբ:
14. Бригхэм Ю., Хьюстон Дж. Финансовый менеджмент. Экспресс-курс. 7-е изд./ Пер. с англ. – СПБ.: Питер, 2013. – с. 267-348, - 592 с.:

## ПРОБЛЕМЫ ПРЕДОТВРАЩЕНИЯ И КОНТРОЛЯ ИНВЕСТИЦИОННЫХ РИСКОВ ПРИ РЕАЛИЗАЦИЙ СТРОИТЕЛЬНЫХ ПРОЕКТОВ В РАЗВИВАЮЩИХСЯ СТРАНАХ

**Егиазарян Родел Робертович**
НУАСА, Кафедра экономики, права и управления, соискатель

### Резюме

В статье представлена взаимосвязь между управлением рисками процесса строительства и эффективностью инвестиций, также управлением рисками инвестиционных строителных проектов. Придметом статьи является повышение эффективности инвестиций за счет внедрения системы мониторинга, мер по управлению рисками в проектах, путем анализа, переоценки и изменения методов управления. Рекомендуется проводить мониторинг с привлечением специалистов по тех надзору за строительства.

*Ключевые слова:* проект, риск, управление, строительство, мониторинг

# THE ISSUES OF INVESTMENT RISK PREVENTION AND CONTROL BY THE IMPLEMENTATION CONSTRUCTION INVESTMENTS PROJECTS IN DEVELOPING COUNTIES

**Rodel Yeghiazaryan**
NUACA, Department of Economics, Law and Management,
Researcher

**Summary**

The article presents the connection between the risk management and investment efficiency in production process of construction projects and construction investment projects. It studies the investment efficiency enhancement by means of monitoring system implementation in projects as well as by changing methods in management, analysis and re-evaluation of risks. The article suggests to implement the monitoring by engaging professionals in construction quality and technical inspection.

*Keywords:* project, risk, management, construction, monitoring

# ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

***Անդրանիկ Արթուրի Ոսկանյան***
*ՀՊՏՀ, Ֆինանսների ամբիոն, ասպիրանտ*

Ակտիվներով ապահովված արժեթղթավորումը աստիճանաբար արմատավորվում է ֆինանսական շուկաներում՝ ներկայանալով որպես ֆինանսավորման ինովացիոն գործիք: Այն համարվելով ֆինանսական մի շարք ինստիտուցիոնալ կառույցների համակցված և փոխկապակցված գործունեություն, չի կարող արդյունավետ իրագործվել առանց պատշաճ օրենսդրական դաշտի առկայության: Պատահական չէ, որ ԱՄՆ-ում, որը պատմականորեն համարվում է ակտիվների արժեթղթավորման բորսայական գործարքների զարգացման հայրենիքը, վերջին երեք տասնամյակում շուրջ քսան տասնյակը գերազանցող օրենսդրական բարեփոխումներ են իրականացվել, ուղղված հիփոթեքային ակտիվների արժեթղթավորմանը[1]: Եվ անգամ նման օրենսդրական միջոցառումները չկարողացան կանխարգելել 2008-2010 թթ. համաշխարհային ֆիանսատնտեսական ճգնաժամը, որն ի դեպ ծագեց հենց ԱՄՆ հիփոթեքային շուկայում և այնուհետև համակարգային բնույթ կրեց:

Սակայն, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի դասերը նոր ազդակներ տվեցին ակտիվների արժեթղթավորման օրենսդրական բարեփոխումներին և հենց ԱՄՆ պարտքային շուկայում վերջին երեսուն տարիներին նկատվեց ակտիվներով ապահոված արժեթղթերի թողարկման տեսակարար կշռի աճ (տես գծապատկեր 1): Միայն, ֆինանսատնտեսական ճգնաժամի ընթացքում այդ աճը փոքր ինչ դանդաղեց, սակայն հետճգնաժամային տարիներին պարտատոմսերի տեսակարար կշիռը պարտքային շուկայում նորից աճ գրանցեց՝ արդեն կազմելով շուրջ 40 %: Բնականաբար, պարտատոմսերի նկատմամբ արժեթղթերի շուկայի նման վստահությունը էականորեն պայմանավորված էր գործող օրենսդրական նորմերի առկայությամբ:

[1] Ключников И. К. Финансовые кризисы: теория, история и современность. СПб.: изд-во СПбГУЭФ, 2011, стр. 26-27, (258 с)

Եվ միայն ԱՄՆ-ում չէր, որ ակտիվներով ապահովված արժեթղթերի նկատմամբ շուկան դրսևորեց զգալի հետաքրքրություն: Գծապատկեր 2-ում ներկայացվում են մի շարք երկրներ, որոնց համախառն ներքին արդյունքում արժեթղթավորված ակտիվներն ունեն զգալի տեսակար կշիռ, որը վկայում է այդ ուղղությամբ առկա բավարար օրենսդրական ամրագրումների մասին:

Գծապատկեր 1. Պարտատոմսերի տեսակարար կշիռի դինամիկան ԱՄՆ պարտքային շուկայում[2]




Հայաստանի Հանրապետությունում վերջին տասնամյակում նույնպես օրենսդրական հիմքեր ստեղծվեցին ակտիվների արժեթղթավորման համար: Ներկայումս, գործողության մեջ է «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման և այդ համալիր գործընթացի նկատմամբ վերահսկողության հետ կապված հարաբերությունները[3]: Սակայն, մինչ այդ, մեր հանրապետությունում արժեթղթավորումն իր արտացոլումն

[2] US Depth Market Data, http://www.bis.org/statistics/secstats.htm

[3] «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենք, 2008, հոդվ. 1

էր գտել ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում, Արժեթղթերի շուկայի մասին ՀՀ օրենքում և ՀՀ կառավարության մի շարք որոշումներում:

Գծապատկեր 2 Ակտիվներով ապահովված արժեթղթեր/ՀՆԱ հարաբերությունը 2016 թվականին, տոկոսներով[4]




Այսպես, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում նշվում է, որ արժեթուղթը գույքային իրավունքները հավաստող փաստաթուղթ է, որի իրականացումը կամ փոխանցումը հնարավոր է միայն այն ներկայացնելիս[5]: Սակայն օրենսգրքում ներկայացնելով արժեթղթերի տեսակները,[6] ընդհանուր դրույթներում հատուկ չեն արձանագրվում ակտիվներով ապահովագրված արժեթղթերի բնութագրիչ գծերը: Նույն սկզբունքով է ներկայացվում նաև «Պարտատոմսեր» հոդվածը, որտեղ արժեթուղթը բնութագրվում է որպես տիրապետողի իրավունքը հավաստող փաստաթուղթ, հստակեցված ժամկետներում պարտատոմս թողարկողից ստանալու արժեթղթի անվանական արժեքը կամ այլ գույքային համարժեք: Փաստորեն, պարտատոմսի տիրապետողին իրավունք է վերապահվում ստանալու անվանական արժեքից տոկոս կամ գույքային իրավունքներ[7]:

4 European Securitization forum, june, 2017
5 ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, 1998 թ., հոդ, 146
6 Նույն տեղը, հոդվ. 151
7 Նույն տեղը, հոդվ. 154

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 8-րդ գլուխը ամբողջությամբ նվիրված է արժեթղթերին և հիմնականում ընդգրկում է ընդհանուր դրույթներ, իսկ արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման գործընթացը մեր հանրապետությունում կարգավորվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, որի հիմնական նպատակներն են «ներդրողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, արժեթղթերի շուկայի թափանցիկության, կայուն և արդյունավետ զարգացման ապահովումը, արժեթղթերի գնագոյացման համակարգի արժանահավատության ապահովումը, արժեթղթերի շուկայում համակարգային ռիսկերի նվազեցումը»[8]: Սակայն, այս օրենքում նույնպես ակտիվների արժեթղթավորման առումով հատուկ մեկնաբանություններ չեն տրվում:

Այսպես, օրենքի բաժին երրորդը ամբողջությամբ նվիրված է ներդրումային ծառայությունների մատուցման կարգավորմանը, և առավելապես թիրախավորված է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ներդրումային գործընթացների վերահսկողությանը և ֆինանսական ռիսկերի կանխարգելմանը: Օրենքում առավելապես իրենց մեկնաբանություններն են ստացել ներդրումային գործունեություն ծավալող կազմակերպությունների գրանցման և լիցենզավորման (հոդվածներ 33-46), մասնագիտական որակավորման պահանջները (հոդվածներ 50-53), ինչպես նաև ներդրումային ծառայություններ մատուցողների գործունեության նկատմամբ սահմանվող պահանջները (հոդվածներ 62-80):

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքում հատուկ կարգավորման առարկա է դառնում շուկայում տեղի ունեցող գործարքների թափանցիկությունը: Մասնավորապես, պահանջ է ներկայացվում արժեթղթերը թողարկելիս և տեղաբաշխելիս հարապարակել ազդագիր, որը պետք է պարունակի թողարկողի և առաջարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը, որը տիրապետողի համար բավարար կլինի արժեթղթերով ամրագրված իր իրավունքների վերաբերյալ հիմնավորված գնահատական կազմելու համար[9]: Ընդ որում, ազդագրի ձևի ու բովանդակության նկատմամբ պահանջները սահմանվում են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից, երբ սահմանվում

[8] «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, 2007թ., հոդվ. 1

[9] «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, 2007թ., հոդվ. 8, կետ 1

է ազդագրի ձևի և բովանդակության նկատմամբ տարբեր պահանջներ՝ կախված առաջարկվող արժեթղթերի տեսակից[10]:

Սակայն, դրան զուգահեռ, օրենքում պահանջներ չեն ներկայացվում արժեթղթերի, մասնավորապես ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով ներկայացվող ազդագրերին ներկայացվող պահանջներին, որոնք կվերաբերեին ապահովագրության, կամ վարկանիշավորման առկայությանը: Ավելին, համաձայն օրենքի, ՀՀ Կենտրոնական բանկը փաստացի պատասխանատվություն չի կրում ազդագրում ներառված տեղեկությունների ճշտության կամ հավաստիության գծով: Այս առումով, օրենքում պահանջ է դրվում, որպեսզի ազդագիրը ներառի դրույթ այն մասին, որ Կենտրոնական բանկի կողմից դրա գրանցումը չի հավաստում ներդրման ապահովությունը, ներկայացված տեղեկության ճշտությունը կամ իսկությունը[11]:

Թվում էր, թե վերը թվարկած օրենսդրական լրացումները պետք է տեղ գտնեին «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքում, որի ընդունումը հաջորդեց «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի գործունեությանը, սակայն մեր կարծիքով, դեռևս այս օրենսդրական դաշտում նույնպես բարեփոխումների կարիք է զգացվում:

Այսպես, օրենքում արժեթղթավորվող ակտիվների խմբի միասեռության պահանջ չի դրվում և միայն շեշտադրում է կատարվում այն փաստին, որ արժեթղթավորման հիմնադրամին ակտիվների վաճառքի պահին այդ ակտիվները ծանրաբեռնված չեն լինելու դրանց նկատմամբ երրորդ անձանց իրավունքներով ու պահանջներով, և ազատ են լինելու որևէ սահմանափակումից[12]: Սակայն կարծում ենք, որ միասեռության առկայությունը հատկապես օրենսդրական պահանջ պետք է լինի ակտիվների «փուլը» ձևավորելիս, քանի որ դրամական նմանատիպ ներհոսքեր ապահովող ակտիվների համախումբը ֆինանսական կայուն պաշարներ է ձևավորում պարտատոմսերի ժամանակին և ամբողջական մարման համար:

---

10 «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, 2007թ., հոդվ. 8, կետ 4

11 «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, 2007թ., հոդվ. 10, կետ 6

12 «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենք, 2008, հոդված 23

Ընդ որում, սույն օրենքի հոդված 24-ի համաձայն՝ ՀՀ Կենտրոնական բանկն է ակտիվների խմբի գրանցումն իրականացնում, արժեթղթավորման հիմնադրամից պահանջելով անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ: Սակայն, փաստաթղթերի ներկայացման ցանկում առավելապես կարևորվում է ներառված ակտիվների նկատմամբ արժեթղթավորման հիմնադրամին փոխանցված սահմանված սեփականության իրավունքը հավաստող փաստաթղթերը[13]:

Մեր կարծիքով, դրան զուգահեռ, «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենքում անհրաժեշտ է առավել հստակեցնել արժեթղթավորման գրավչությունն ապահովող պայմանները: Այսպես, հոդված 31-ի կետ 1-ով արժեթղթավորված ակտիվների հանրային գրավչության պահանջ չի դրվում, ընդամենը նշելով, որ ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով նախաձեռնողի կամ վաճառողի, ինչպես նաև այլ անձանց կողմից կարող են տրամադրվել վարկային գրավչության միջոցներ: Բացի այդ, գրավչության միջոցների շրջանակին օրենքը անդրադառնում է ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով վճարումների համար պահուստի ստեղծման, ակտիվների ապահովագրության, ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով շուկայական պայմաններով վճարման պարտավորության կատարման երաշխիքների մասով,[14] սակայն, զուգահեռաբար, վաճառահանվող արժեթղթերի վարկանիշավորման օրենսդրական պահանջ չի դրվում:

Ընդհանուր առմամբ, գործող ՀՀ օրենսդրությունն անդրադառնում է արժեթղթերի գրավչության նշնակությանն ու ռիսկերին, նշելով, որ գրավչության միջոցը չպետք է վտանգի ներդրողների շահերը[15], սակայն օրենքը չի պարզաբանում, թե որ դեպքերի պարագայում պետք է արձանագրել «ներդրողների շահերի վտանգում»: Թերևս, այդ հիմնախնդրին ընհանուր գծերով անդրադառնում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքը, որտեղ նշվում է, որ ազդագրում տեղեկությունների ներկայացումը էապես չպետք է վնասի թողարկողի օրինա-

---

[13] «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենք, 2008, հոդված 24, կետ 2

[14] «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենք, 2008, հոդված 31

[15] «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՀ օրենք, 2008, հոդված 32, կետ 2

կան շահերը, ինչպես նաև ապակողմնորոշի ներդրողներին՝ թողարկողի, տեղաբաշխողի, երաշխավորի (առկայության դեպքում) ներկա և ապագա ֆինանսական վիճակի կամ առաջարկվող արժեթղթերով ամրագրված իրավունքների վերաբերյալ գնահատական կազմելիս[16]: Մեր կարծիքով, այս պարագայում օրենքը տալիս է ներդրողների համար տեղեկատվության ապահովվածության համընդհանուր, բայց ոչ նրանց շահերին թիրախավորված պահանջներ:

Ակտիվների արժեթղթավորման գործընթացի կարգավորմանը որոշակիորեն անդրադարձ է կատարվում ՀՀ Կառավարության փաստաթղթերում: Այսպես, ՀՀ կառավարությունը 2013 թվականին քննարկման առարկա դարձրեց տնտեսության իրական հատվածի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության էական բարձրացման խնդիրը՝ նախատեսելով համապատասխան հայեցակարգի ընդունում[17]: Բացի այդ ՀՀ կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի նիստի թիվ 47 արձանագրությամբ ամրագրվեց տնտեսության իրական հատվածի համար ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացման հայեցակարգին և գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին որոշումը[18]:

Այդ փաստաթղթի 10-րդ կետով նախատեսվում է տեղական ընկերությունների կողմից բաժնետոմսերի և պարտատոմսերի խրախուսման ուղղություն, իսկ 12-րդ կետը վերաբերում է հաջորդող գրավին առնչվող խնդիրների կանոնակարգմանը: Գործնականում լրացուցիչ գույքային արժեքների բացակայության պայմաններում անհրաժեշտություն է առաջանում գրավադրել արդեն իսկ գրավադրված գույքը, որի համար ներկայումս գործող օրենսդրության համաձայն պարտադիր պայման է սկզբնական վարկատու կազմակերպության (գրավառուի) համաձայնությունը: Օրենսդրական այս նորմը կիրառելի է նաև ակտիվների արժեթղթավորման պայմաններում: Բայց քանի որ ՀՀ Կառավարության սույն որոշումը գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին է, ապա նրանում խորքային մեկնաբանու-

---

16 «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք, 2007թ., հոդված 8, կետ 5, ենթակետ 2

17 ՀՀ կառավարության 2013 թվ. հուլիսի 18-ի N 800-Ն որոշման N 2 հավելվածի 58-րդ կետ

18 ՀՀ կառավարության 2013 թվականի 14 նոյեմբերի նիստի տնտեսության իրական հատվածի համար «Ֆինանսական ռեսուրսների հասանելիության բարձրացման հայեցակարգին և գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին որոշումը», թիվ 47 արձանագրություն

թյուններ չեն ստանում ակտիվների արժեթղթավորման գործընթացների ենթաօրենսդրական կարգավորումները:

ՀՀ օրենսդրությունը նաև տնտեսական խթաններ չի նախատեսում ակտիվների արժեթղթավորման գործընթացի նկատմամբ, այն դեպքում երբ օրինակ Ռուսաստանի Դաշնությունում հիփոթեքային արժևորման 2030 թվականի ռազմավարությամբ նախատեսվում է արժեթղթերից ստացված շահույթի նկատմամբ կիրառել պրոգրեսիվ

**Ամփոփում**

Այսպիսով, ակտիվների արժեթղթավորման ՀՀ-ում գործող օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի վերլուծության հիման վրա մեր կողմից կատարվել են հետևյալ եզրակացությունները:

Առաջին, օրենսդրությունը միտված է ֆինանսական ռիսկերի կանխարգելմանը, և ոչ թե ակտիվների արժեթղթավորման խթանմանը, ուստի հարկային օրենսգրքում և Կենտրոնական բանկի կանոնակարգային փաստաթղթերում արտոնություններ պետք է տրամադրվեն արժեթղթավորման գործընթացին, ՀՀ-ում այն ընդլայնելու և ատիվացնելու նպատակով:

Երկրորդ, արժեթղթավորման թափանցիկության ապահովմանն առավել ընդգրկուն օրենսդրական պահանջներ պետք է ներկայացվեն, այնպես, որ մի կողմից դրանք բավարարեն ներդրողների շահերը, և մյուս կողմից չխաթարեն նախաձեռնողների տեղեկատվական համակարգի անվտանգությունը ու վնասեն վերջիններիս մրցակցային դիրքավորմանը ֆինանսական շուկաներում:

Երրորդ, ՀՀ գործող օրնսդրությունը տարբերակիչ լծակներ չի առաջարկում ակտիվների տարբեր խմբերի արժեթղթավորումը կարգավորելիս: Ուստի անհրաժեշտ ենք համարում ձեռնարկելու օրենսդրական այնպիսի բարեփոխումներ, որոնք առանձնակի թիրախավորված կլինեն հիփոթեքային, ֆինանսական, և ապագա դրամական հոսքերի ատիվների արժեթղթավորմանը:

*Բանալի բառեր.* ակտիվների արժեթղթավորում, ֆինանսական շուկաներ, օրենսդրական բարեփոխումներ, միասեռ ակտիվներ, պարտատոմսեր:

# ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ЗАКОНОДАТЕЛЬНОСТИ СЕКЬЮРИТИЗАЦИИ АКТИВОВ В РА

**Восканян Андраник Артурович**
АГЭУ, кафедра финансов, аспирант

## Резюме

В статье анализируется состояние законадательной области секьюритизации активов в РА и на этой основе предлагаются пути совершенствования регулирования процесов выпуска облигаций. В частности, считается необходимым применения законадательных рычагов для мотивации секьюритизации, а также использования законодательных норм по улучшению информационной обеспеченности процессов секьюритизации как для инвесторов, так и для инициаторов выпуска облигаций.

*Ключевые слова:* секьюритизация активов, финансовые рынки, законодательные реформы, однородные активы, облигации.

# WAYS OF IMPROVING THE LEGISLATION OF SECURIZATION OF ASSETS IN RA

**Andranik Voskanyan**
ASUE, Chair of Finans, Ph.D student

## Summary

The article analyzes the state of the legislative area of securitization of assets in the RA and on this basis suggests ways of perfecting the regulation of the process of issuing bonds. In particular, it is considered necessary to use legislative levers to motivate securitization, as well as legislative norms to improve the information security of securitization processes, both for investors and for initiators of bond issue

*Keywords:* asset securitization, financial markets, legislative reforms, identical assets, bonds.

# ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵԱՏՄ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

***Տիգրան Անուշավանի Այվազյան***
*ՀՊՏՀ, Միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոն, հայցորդ*

Առևտրի դասական տեսության առավել հզոր դրույթներից մեկն այն է, որ միջազգային առևտրի շրջանակը որոշվում է համեմատական առավելությամբ: Այսպես, միջազգային առևտրում համեմատական առավելության տիրապետող երկիրը հանդես է գալիս տվյալ ապրանքն արտահանողի, իսկ համեմատական առավելություն չունեցող երկիրը՝ համապատասխանաբար՝ այդ ապրանքը ներմուծողի դերում:

Տնտեսագետները առաջ են քաշել երկրների համեմատական առավելությունները և դրանք ձևավորող տնտեսական պայմանները որոշող մի շարք մոտեցումներ, որոնց մեջ առավել լայն կիրառություն են գտել համեմատական առավելությունների որոշման համաթվերը: Այս առումով, հիմնական նորարարությունը պատկանում է Բելլա Բալասսային, որի արտահանման մասնագիտացման հարաբերական գործակիցը, այլ կերպ՝ Բելլա Բալասսայի համաթիվն (1965թ.)[1, pp.99-123] առավել հաճախ է կիրառվում արտաքին առևտրի ճյուղային վերլուծության նպատակով:

Այդուհանդերձ, անկախ դրա լայնորեն կիրառումից՝ Բալասսայի համաթիվը ևս ենթարկվել է քննադատության. մասնագիտական գրականության մեջ հանդիպում են արտահանման մասնագիտացումը որոշող մի շարք բանաձևեր:

Հայաստանի Հանրապետության և ԵԱՏՄ անդամ մյուս երկրների արտահանման համեմատական առավելությունների ուսումնասիրության համար վերը թվարկված ցուցանիշներից մեր կողմից ընտրվել են Բալասսայի և Լաֆեյի համաթվերը:

Ի տարբերություն առանձին երկրների արտահանման առևտրային հոսքերը կամ երկու գործընկեր երկրների միջև միջճյուղային փոխադարձ առևտրի ծավալները համեմատող բանաձևերի՝ Բելլա Բալասսայի և Լաֆեյի մասնագիտացման համաթվերը դիտարկվում են որպես երկրների համեմատական առավելությունների չափման առավել իրատեսական մոտեցումներ, քանզի դրանք բնութագրում են

երկրների մասնակցությունը համաշխարհային առևտրում [2, p.6]: Բացի այդ, հենց այդ երկու համաթվերն են օգտագործվում ՄԱԿ-ի Միջազգային առևտրի կենտրոնի կողմից ըստ ապրանքային դիրքերի առևտրի կատարողականի համաթվերի (Trade Performance Index HS) [3] հաշվարկման հիմքում:

Մասնագիտացման մակարդակը բնութագրող Բալասսայի համաթիվը (Balassa Index /RCA Index) թույլ է տալիս բացահայտել այն ճյուղերը կամ արտադրությունները, որոնցում դիտարկվող երկիրն ունի ակնհայտ առավելություն՝ միջազգային մրցունակության տեսանկյունից: Սա հատկապես կարևորվում է արտահանման խթանման քաղաքականության ապրանքային կողմնորոշման տեսանկյունից, քանի որ համեմատական առավելությունների որոշմամբ հնարավորություն է ընձեռվում արտահանման խթանման գործընթացները կենտրոնացնելու միջազգային շուկաներում առավել մրցունակ ապրանքների վրա:

Բելլա Բալասսայի համաթիվը որոշվում է երկրի արտահանման մեջ առանձին ճյուղերի մասնաբաժնի և համաշխարհային առևտրում ունեցած մասնաբաժնի հարաբերակցությամբ:

$$RCA_j^i = \frac{\frac{x_j^i}{X^i}}{\frac{x_j^w}{X^w}} \qquad (1)$$

որտեղ՝

$RCA_j^i$ – i-րդ երկրի մասնագիտացման մակարդակն է j-րդ արտադրանքի արտահանման գծով,

$x_j^i$ – i-րդ երկրի j-րդ արտադրանքի արտահանման ծավալն է,

$X^i$ – i-րդ երկրի արտահանման ընդհանուր ծավալն է,

$x_j^w$– j-րդ արտադրանքի արտահանման տեսակարար կշիռն է ընտրված տարածաշրջանից (կամ ամբողջ աշխարհից),

$X^w$ – համաշխարհային (տարածաշրջանային) արտահանման ընդհանուր ծավալը:

Համաթիվը կարող է արժեքներ ընդունել [0; +∞) միջակայքում, ընդ որում, եթե համաթվի արժեքը մեծ է 1-ից, ապա դիտարկվող երկիրը կհամարվի մասնագիտացված ընտրված ճյուղի ապրանքների արտահանման մեջ և ընդհակառակը:

Բալասսայի համաթիվը կիրառելի է այնպիսի ապրանքների կամ ապրանքախմբերի գծով մասնագիտացումը բնութագրելու համար, ո-

րոնց նկատմամբ չեն կիրառվում արտահանումը խթանող կամ սահմանափակող միջոցներ [3], քանզի հակառակ դեպքում համաթվի հավաստիությունը կասկածի տակ է առնվում: Այլ կերպ ասած՝ առևտուրը (մասնավորապես՝ արտահանումը) խթանող կամ խոչընդոտող միջոցների կիրառումը թույլ չի տալիս հստակ որոշել, թե արդյոք երկիրն այդ ապրանքների գծով տիրապետում է համեմատական առավելության, թե ոչ:

Ըստ այս համաթվի՝ երկիրը համարվում է որևէ ապրանքի արտահանման մեջ մասնագիտացված, երբ երկրի արտահանման մեջ տվյալ ապրանքի տեսակարար կշիռը գերազանցում է տվյալ տարածաշրջանի կամ աշխարհի արտահանման մեջ վերջինիս տեսակարար կշռին: Երկիրն ունի համեմատական առավելություն, երբ այս գործակցի արժեքը գերազանցում է մեկը:

Հետազոտության շրջանակներում մեր կողմից ընտրած մյուս ցուցանիշը Լաֆեյի համաթիվն է: Լաֆեյի համաթիվն, ըստ էության, հանդիսանում է նաև ներճյուղային մասնագիտացման գործակցի կատարելագործված տարբեակը, որի բանաձևի մեջ ավելացվել էր նաև երկրի ՀՆԱ-ն [4, p 15]:

Լաֆեյի համաթվի պարզեցված բանաձևն ունի հետևյալ տեսքը.

$$LFI_j^i = \frac{1000}{Y^i} \times \frac{2\left(X_j^i M^i - X^i M_j^i\right)}{X^i + M^i} \qquad (3)$$

որտեղ՝

$LFI_j^i$ –ն՝ Լաֆեյի համաթիվն է,

$Y^i$ –ն՝ երկրի ՀՆԱ-ն է:

i երկիրը տվյալ j ապրանքով կամ ապրանքախմբով ունի հարաբերական առավելություն, երբ համաթիվը գերազանցում է 0-ն:

Համաթիվը ենթադրում է ճյուղի առևտրային հաշվեկշռի համեմատություն մասնագիտացման բացակայության պայմաններում տեսականորեն ակնկալվող հաշվեկշռի հետ՝ արտահայտված ՀՆԱ-ի ցուցանիշով:

Լաֆեյի համաթիվը փոփոխվում է (-∞, +∞) միջակայքում: Ընդ որում, 0-ից մեծ արժեքների դեպքում դիտարկվող երկիրը ունի համեմատական առավելություն ընտրված ճյուղի արտադրանքն արտահանող աշխարհի հիմնական մրցակից երկրների շրջանում:

Քանի որ Լաֆեյի համաթիվը միաժամանակ հաշվի է առնում ներմուծման և արտահանման ցուցանիշները, այն ավելի հարմար է միջճյուղային առևտրի բարձր մակարդակ ապահովող երկրների մասնագիտացման աստիճանը բնութագրելու համար: Այն նաև հաշվի է առնում վերաարտահանման հոսքերը [5]:

Այժմ դիտարկենք ՀՀ արտահանման մրցակցային առավելությունները՝ ըստ ընտրված համաթվերի՝ 2015 թվականի ցուցանիշներով հաշվարկված արդյունքների (տե՛ս Աղյուսակ 1.):

Աղյուսակ 1.-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ Բալասսայի և Լաֆեյի արտահանման մրցակցային առավելությունների համաթվերը միանշանակ չեն գնահատում երկրի արտահանման հնարավորությունները, քանի որ Բալասսայի համաթվով մրցակցային համարվող ոչ բոլոր ապրանքների դեպքում է Լաֆեյի համաթիվը ևս արձանագրում դրական արդյունքներ:

*Աղյուսակ 1.*

**ՀՀ արտահանման մրցակցային առավելությունները՝ ըստ ԱՏԳ ԱԱ ապրանքային դիրքերի (2015թ. տվյալներով)** [6]

| № | ԱՏԳ ԱԱ | Բալասսայի համաթիվ | Լաֆեյի համաթիվ |
|---|---|---|---|
| 01 | Կենդանի կենդանիներ | 2,4 | 0 |
| 03 | Ձուկ և խեցգետնավորներ, մանրուքներ և այլ ծովային անողնաշարավորներ | 1,5 | 0 |
| 04 | Կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք | 3,3 | 0 |
| 05 | Այլ կենդանական ծագման ապրանքներ | 4,0 | 0 |
| 06 | Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր | 2,3 | 0 |
| 07 | Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ | 2,2 | 0 |
| 08 | Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ | 1,3 | 0 |
| 09 | Սուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ | 1,3 | 0 |
| 20 | Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք | 3,5 | 0 |

| | | | |
|---|---|---|---|
| 22 | Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ | 11,8 | 3 |
| 24 | Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ | 48,0 | 4 |
| 26 | Հանքաքար, խարամ և մոխիր | 26,3 | 11 |
| 43 | Բնական և արհեստական մորթի և դրանցից պատրաստված իրեր | 1,9 | 0 |
| 54 | Քիմիական թելեր | 1,6 | 0 |
| 62 | Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով | 3,1 | 1 |
| 68 | Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից | 1,1 | 0 |
| 70 | Ապակի և դրանից իրեր | 1,1 | 0 |
| 71 | Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ | 3,7 | 4 |
| 72 | Սև մետաղներ | 1,9 | 1 |
| 74 | Պղինձ և իրեր դրանից | 6,2 | 2 |
| 76 | Ալյումին և իրեր դրանից | 6,0 | 1 |
| 81 | Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից | 8,3 | 0 |
| 91 | Ժամացույցներ և դրանց մասեր | 4,1 | 0 |

Այսպես, համաձայն կատարված հաշվարկների՝ դիտարկվող երկու գործակիցներով արտահանման մասնագիտացման համեմատաբար բարձր ցուցանիշներ են արձանագրել հանքահումքային արտադրանքը, որի համար Բալասսայի համաթիվը (RCA) 2015թ. կազմել է 26,3, իսկ Լաֆեյի համաթիվը (LFI)՝ 11, ծխախոտը և դրա փոխարինիչները (RCA=48; LFI=4), ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներն ու քացախը (RCA=11,8; LFI=3), տրիկոտաժե արտադրանքը (RCA=3,1; LFI=1), բնական կամ արհեսատական մարգարիտը, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները (RCA=3,7; LFI=4), սև մետաղները (RCA=1,9; LFI=1), պղինձը և դրանից իրերը (RCA=6,2; LFI=2) և ալյումինը և դրանից իրերը (RCA=6,0; LFI=1):

Եթե համաթվերի արդյունքները համադրենք ՀՀ արտահանման փաստացի ցուցանիշների հետ, ապա ակնհայտ կդառնա, որ Բալասսայի և Լաֆեյի համաթվերով մրցունակ ճանաչված ապրանքախմբերը ամենամեծ մասնաբաժինն ունեն ՀՀ արտահանման կառուցված-

քում, իսկ միաժամանակ երկու գործակիցներով էլ դրական արդյունք արձանագրած ապրանքախմբերը բնորոշվում են նաև զուտ արտահանման դրական ցուցանիշներով: Երևույթը բացատրվում է նրանով, որ ի տարբերություն առաջինի՝ Լաֆեյի համաթիվը հաշվարկվում է արտահանման և ներմուծման ցուցանիշների համադրմամբ:

ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռ (24,71%) ունեցող «Հանքաքար, խարամ և մոխիր» ապրանքախումբն 2015թ. ապահովել է նաև զուտ արատահանման ամենաբարձր ցուցանիշը. այն է՝ 365,9 մլն ԱՄՆ դոլար: Ընդ որում, Հայաստանին բաժին է ընկնում տվյալ ապրանքախմբի համաշխարհային արտահանման 0,23%-ը, համեմատության համար նշենք, որ ՀՀ ընդհանուր մասնակցությունը համաշխարհային արտահանման մեջ կազմում է ընդամենը 0,01%, այսինքն՝ «Հանքաքար, խարամ և մոխիր» ապրանքախումբն ապահովում է երկրի ողջ արտահանումը 23 անգամ գերազանցող մասնակցություն համաշխարհային առևտրում:

Բալասսայի համաթվով մասնագիտացման ամենաբարձր մակարդակն ապահովել է «Ծխախոտ և դրա արդյունաբերական փոխարինիչներ» ապրանքախումբը, վերջինիս բաժին է ընկնում 2015թ. ՀՀ ողջ արտահանման 11,51%-ը և ապրանքախմբի համաշխարհային արտահանման 0,43%-ը:

Վերլուծության ընթացքում դիտարկվող համաթվերի արդյունքների վերաբերյալ նկատվել են որոշակի օրինաչափություններ: Մասնավորապես՝ ըստ Բալասսայի համաթվի՝ մասնագիտացման առավել բարձր մակարդակ են ապահովում համաշխարհային արտահանման մեջ համեմատաբար մեծ մասնաբաժին, իսկ Լաֆեյի համաթվի համաձայն՝ զուտ արտահանման ավելի մեծ դրական ցուցանիշ ունեցող երկրները, ինչը և ենթադրելի էր բանաձևերի կառուցվածքից:

Ուսումնասիրությունները փաստում են, որ խիստ բարձր է ՀՀ արտահանման ապրանքային և աշխարհագրական կառուցվածքի համակենտրոնացման մակարդակը՝ նույնիսկ արտահանման բարձր մասնագիտացմամբ ապրանքների դեպքում: Այսպես, օրինակ, «բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ» ապրանքախմբի կազմում ՀՀ-ից արտահանվող շուրջ 26 անուն ապրանքներից առաջին 3-ն ապահովում

են ողջ արտահանման 88,8%ը, իսկ արտահանման 29 շուկաներից 3-ին բաժին է ընկնում ապրանքախմբի արտահանման 76,2%-ը:

ԵԱՏՄ շրջանակներում արտահանման մրցակցային առավելությունների կիրառման աստիճանը գնահատելու համար մեր կողմից ուսումնասիրվել են համադրվել են անդամ բոլոր երկրների արտահանման մասնագիտացման մակարդակները և փոխադարձ առևտրի ապրանքային կառուցվածքները: Միևնույն ժամանակ, ԵԱՏՄ ձևավորման կարճաժամկետ արդյունքների գնահատման համար երկրների արտահանման ապրանքային կառուցվածքի փոփոխությունները համեմատվել են մինչ կառույցի վերջնական ձևավորումն իրականացված հետազոտությունների [7, էջ 58-62] արդյունքների հետ:

Այսպես, ըստ ՄԱԿ-ի Միջազգային առևտրի կենտրոնի վիճակագրական աղբյուրների՝ 2015թ. ՀՀ արտահանման մեջ 24,71%-ը կազմել է հանքաքարը, 13,85%-ը՝ մարգարիտը, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերը, թանկարժեք մետաղները, 11,51%-ը՝ ծխախոտը և դրա փոխարինիչները, 7,45%-ը՝ ալկոհոլային, ոչ ալկոհոլային խմիչքները և քացախը, որոնք էլ համապատասխանաբար համաշխարհային արտահանման մեջ ամենամեծ տեսակարար կշիռն ունեն (համաշխարհային արտահանման մեջ համապատասխանաբար 0,23%, 0,03%, 0,43% և 0,11%), ապա կարելի է արձանագրել, որ ՀՀ-ն մասնագիտացել է այս ոլորտների արտադրանքի արտադրության:

Այժմ տեսնենք, թե որքանով է Հայաստանը կարողանում օգտագործել իր համեմատական առավելությունները Ռուսաստանի Դաշնության հետ առևտրում: 2015թ. Հայաստանը ՌԴ է արտահանել 92,28 մլն ԱՄՆ դոլարի ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ, 24,4 մլն ԱՄՆ դոլարի կաթ և կաթնամթերք, թռչնի ձու, բնական մեղր և այլ կենդանական ծագման սննդամթերք, 22,4 մլն ԱՄՆ դոլարի տրիկոտաժե արտադրանք, 13,39 մլն ԱՄՆ դոլարի ձուկ և խեցգետնակերպեր, 12.3 մլն ԱՄՆ դոլարի մրգեր և ընկույզներ և 12 մլն ԱՄՆ դոլարի բանջարեղեն և կերային արմատապտուղներ [8, էջ 56-61]:

Ըստ ԱՎԾ տվյալների՝ 2015թ. Հայաստանը ՌԴ հետ առևտրում օգտագործել է իր մրցակցային առավելութունները ոգելից և ոչ ոգելից ըմպելիքների ու քացախի, ինչպես նաև տրիկոտաժե արտադրանքի գծով: Արտահանման համեմատաբար բարձր չափաբաժին ապահոված մյուս ապրանքատեսակները ՀՀ-ում մրցակցային են գնահատվել միայն Բա-

լասսայի համաթվով, մինչդեռ կիրառված երկու համաթվերով արտահանման մասնագիտացման առավել բարձր մակարդակ ապահոված մի խումբ ապրանքների գծով (հանքաքար, խարամ և մոխիր, ծխախոտ և դրա փոխարինիչներ, սև և գունավոր մետաղներ, բնական և արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ) մրցակցային առավելությունները ընդհանրապես կամ բավարար չափով չեն օգտագործվում: Այս առումով, հանքահումքային արտադրանքի և մետաղների արտահանման բացակայությունը, թերևս, հիմնավորվում է Ռուսաստանի՝ ինքնին ռեսուրսաշատ երկիր լինելու հանգամանքով, մինչդեռ ծխախոտի և թանկարժեք քարերի մասով առկա է արտահանման չիրացված ներուժ:

Փաստորեն, ուսումնասիրությունների արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ Ռուսաստանի հետ ՀՀ արտաքին առևտուրը կառուցված է ոչ առաջնահերթ մասնագիտացման ապրանքախմբերի ուղղությամբ, այսինքն՝ ՌԴ են արտահանվում այնպիսի ապրանքներ, որոնք չեն ընդգրկվում ՀՀ արտահանման ապրանքային անվանացանկի առաջին հորիզոնականներում:

2015 թ. Հայաստանն օգտագործել է իր համեմատական առավելությունները՝ Բելառուս արտահանելով հետևյալ ապրանքները՝ ոգելից, ոչ ոգելից ըմպելիքներ, քացախ (4,55 մլն ԱՄՆ դոլար), բնական և արհեստական մարգարիտ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ (1,3 մլն ԱՄՆ դոլար), բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք (162,1 հազար ԱՄՆ դոլար): Հատկանշական է, որ Հայաստանը Բելառուս է արտահանել նաև 232,4 հազ. ԱՄՆ դոլար արժողությամբ օպտիկական, լուսանկարչական չափիչ, բժշկական կամ վիրաբուժական սարքեր և ապարատներ, դրանց մասեր և սարքավորումներ [8, էջ 61-63], որոնց գծով Հայաստանը, ըստ դիտարկված համաթվերի, չունի մրցակցային առավելություն: Հայաստանը չի օգտագործել մնացած ապրանքախմբերով իր համեմատական առավելությունները, մասնավորապես 2015թ. ընդհանրապես չի արտահանել Բելառուս հանքաքար, խարամ, ծխախոտ, սև մետաղներ, պղինձ, ալյումին, դրանցից պատրաստված իրեր, այլ ոչ թանկարժեք մետաղներ:

2015 թ. Հայաստանն օգտագործել է իր մրցակցային առավելությունները և Ղազախստան է արտահանել 1,41 մլն ԱՄՆ դոլարի բնա-

կան և արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ (2012թ. 779 հազար ԱՄՆ դոլարի փոխարեն) [7, էջ 58-62], 1.11 մլն ԱՄՆ դոլարի ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ (2012թ. 1.5 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն), 309,3 հազ. ԱՄՆ դոլարի բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի վերամշակումից մթերք (2012թ. 216 հազար ԱՄՆ դոլարի փոխարեն), 276,7 հազ. ԱՄՆ դոլարի հանքաքար, խարամ և մոխիր, 239,4 հազ. ԱՄՆ դոլարի դեղագործական մթերք [8, էջ 64-65]: Ընդ որում, վերջին ապրանքախմբի արտահանման գծով, ըստ վերլուծություն արդյունքների, Հայաստանը չունի մրցակցային առավելություն:

Հայաստանը չի օգտագործել մնացած ապրանքախմբերով իր համեմատական առավելությունները, մասնավորապես 2015թ. ընդհանրապես չի արտահանել Ղազախստան սև մետաղներ, պղինձ, ալյումին, դրանցից պատրաստված իրեր, այլ ոչ թանկարժեք մետաղներ, ծխախոտ և դրա փոխարինիչներ, ժամացույցներ և դրանց մասեր: Ընդհանրապես, Ղազախստանի հետ առևտուրը ընդգրկում է շատ քիչ ապրանքախմբեր՝ ընդհանուր ցածր արժեքով:

ԵԱՏՄ-ին 2015թ. հունվարից անդամակցած Ղրղզստանի հետ ՀՀ արտաքին առևտուրը խիստ աննշան է. 2015թ. Հայաստան-Ղրղզստան արտաքին առևտրաշրջանառությունը կազմել է ընդամենը 496,9 հազար ԱՄՆ դոլար, որից 370,9 հազարը (կամ փոխադարձ առևտրի 75%-ը) միայն ՀՀ արտահանման հաշվին: Արտահանման ապրանքային կառուցվածքում գերակշռում են 3 ապրանքատեսակներ՝ ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ (59,9 հազար ԱՄՆ դոլար), դեղագործական մթերք (261,1 հազար ԱՄՆ դոլար) և էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ և դրանց մասեր (42,4 հազ. ԱՄՆ դոլար), որոնցից միայն առաջինի դեպքում Հայաստանն ունի մրցակցային առավելություն:

## Ամփոփում

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ ԵԱՏՄ շրջանակներում ՀՀ արտաքին առևտուրն իրականացվում է հիմնականում ոչ ի հաշիվ բարձր մրցակցային առավելություն ունեցող ապրանքների: Միևնույն ժամանակ, ԵԱՏՄ երկրներ ՀՀ ար-

տահանման ապրանքային կառուցվածքում զգալի կշիռ ունեն այնպի-սի ապրանքներ, որոնք ներառված չեն արտահանման մասնագիտաց-ման բարձր մակարդակ ունեցող ապրանքների ցանկում: Այստեղից հարկ է համապատասխան հետևություններ անել և փորձել ձևավորել մրցակցային առավելություններ նաև այն ապրանքատեսակների գծով, որոնց նկատմամբ ԵԱՏՄ երկրներում առկա է իրական պահան-ջարկ:

*Հիմնաբառեր*՝ արտահանում, արտահանման մասնագիտացում, մրցունակություն, մրցակցային առավելություն, ԵԱՏՄ, Բալասսայի համաթիվ, Լաֆեյի համաթիվ:

**Գրականություն**


1. Balassa B., "Trade Liberalization and Revealed Comparative Advantage", The Manchester School of Economic and Social Sciences, vol.32, no.2, 1965, pp.99-123.
2. Ferrarini B., Scaramozzino P., Indicators and Patterns of Specialization in International Trade // NCCR Trade Working Paper No 2011/10, March 2011. p. 6.
3. International Trade Center, Trade Competitiveness Map: Trade Performance HS Technical Notes - http://tradecompetitivenessmap.intracen.org/Documents/TradeCompMap-Trade%20PerformanceHS-Technical%20Notes-EN.pdf
4. Sanidas E., Shin Y., Comparison of Revealed Comparative Advantage Indices with Application to Trade Tendencies of East Asian Countries // Seoul National University, p 15
5. Maitah M, Kuzmenko E., and Smutka L., Real Effective Exchange Rate of Rouble and Competitiveness of Russian Agrarian Producers // Economics 2016, 4(3) - 10.3390/economies4030012
6. International Trade Center - http://tradecompetitivenessmap.intracen.org/TP_EP_CI.aspx?RP=051&YR=2015
7. ՀՀ տնտեսության ոլորտային զարգացման և հարկաբյուջետային քաղաքականության հիմնախնդիրները Մաքսային միության ան-

համակցության պայմաններում / Մ.Ս. Մելքումյան և ուրիշներ.- Եր.: Տնտեսագետ, 2015.- («Ամբերդ» մատենաշար), էջ 58-62:
8. Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2015 թվականին (ըստ ԱՏԳ ԱԱ 2-նիշ դասակարգման), վիճակագրական ժողովածու, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2016թ., էջ 56-65:

## КОНКУРЕНТОСПОСОБНОСТЬ ЭКСПОРТА РА В СТРАНАХ ЕАЭС

**Айвазян Тигран Анушаванович**
АГЭУ, кафедра Международных экономических отношений, соискатель

### Резюме

Исследования показали, что в рамках Евразийского экономическкго союза внешняя торговля Республики Армения проводится в основном не за счет наиболее конкурентоспособной продукции. В то же время, страны Евразийского экономического союза имеют значительный вес в товарной структуре экспорта товаров, не включенных в перечне продукции с высокой экспортной специализацией. Здесь уместно сделать выводы и попытаться сформировать конкурентные преимущества тех продуктов, для которых существует реальный спрос в странах Евразийского экономического союза.

*Ключевые слова:* экспорт, экспортная специализация, конкурентоспособность, конкурентное преимущество, Евразийский экономический союз, индекс Баласса, индекс Лафей.

## RA EXPORT COMPETITIVENESS IN THE EAEU MEMBER COUNTRIES

**Tigran Ayvazyan**
ASUE, Chair of international economic relations, Researcher

### Summary

Thus, studies have shown that, within the framework of the Eurasian Economic Union, the foreign trade of the Republic of Armenia is

conducted not mainly at the expense of the most competitive products. At the same time, the countries of the Eurasian Economic Union have significant weight in the commodity structure of RA exports not included in the list of products with high level of export specialization. So, it is appropriate to draw conclusions and try to form competitive advantages of those products for which there is a real demand in the countries of the Eurasian Economic Union.

*Keywords:* export, export specialization, competitiveness, competitive advantage, Eurasian Economic Union, Balassa Index, Lafay Index.

# СИСТЕМА GI/G/r/n-r ПРИ МАЛОЙ ЗАГРУЗКИ

***Погосян Араик Карапетович***
*канд.физ.-мат. наук*
*ЕРОА, АГЭУ, доцент*

Предположим в рассматриваемой системе GI/G/ $r/\ n-r$ функция распределения поступлениями A(t) имеет следующий вид $A(t)=1-e^{-\cdot S^{t}a(u)du}$

$B(t)$ $(B(+0)=0)$ функция распределения времени обслуживания
$\xi(t)$ состояние системы в момент t
$\xi(t)=K$ означает K вызовов в системе
q- вероятность отказа (потерии вызова) на периоде регенерации;
$q_0$-вероятность отказа по монотонной ступенки, т.е. $\{1\to 2\to\cdots\to n\to n+1\}$
$\gamma_{nm}=\beta_{(n+1)(m+1)}/\beta_1^{(n+1)(m+1)-1}$, $\beta_j=\int_0^{+\infty}t^j dB(t)$; $\eta_{nm}=\beta_{n(m+1)+1}/\beta_1^{n\,(m+1)}$

Тогда если

а) $A(t)$ фиксирования функция распределения

$$\int_0^{+\infty} a(t)\cdot dt=+\infty$$

б) $a(t)$ ограничена, $0\le a(t)<c<\infty. 0\le t<+\infty$:
в) в окресности нуля a(t) представима в виде

$$a(t)=\alpha\cdot t^m+O(t^{m+1}), \alpha>0, m\ge 0$$

То справедливы следующие соотношения

I. $\lim P(a_0\, J\tau>x)=e^{-x}$ при $\gamma_{mn}\to 0$

где

$$J=\alpha^n\iint\ldots\int_{(X_n)}\overline{B}(X_n)\,\overline{B}\,(X_n-X_1)\ldots\overline{B}\,(X_n-X_{r-1})\cdot$$

$$\cdot X_1^{m+1}\,(X_2-X_1)^{m+1}\ldots(X_n-X_{n-1})^{m+1}dx_1dx_2\ldots dx_n$$

$$Z_{(X_n)}=\{\infty>X_n>X_{n-1}>\cdots>X_1>0\}$$

$$a_0^{-1}=\int_0^{+\infty}tdA(t)$$

II

$$J\sim q_0 \text{ и } q\sim q_0 \text{ при } \eta_{mn}\to 0$$

Где

$$q = q_0 + \sum_{k=1}^{\infty} q_k$$

q – вероятность потери вызова на одном периоде занятости.

Под последним периодом закатости понимается тот период занятости на котором впервые произошла потерия вызова, $A_k = \{$на последнем периоде занятости до первой потери вызова обслужено равно к штук вызовов, $k \geq 0$ и $q_k = P(A_k)$.

Доказательство утверждении՝ I и II проводится аналогично как это делалось в работе А. Погосян [1]

Введем обозначения события.

А – на периоде регенерации произошел один отказ

В – отказ по монотонному пути $\{1 \to z \to \cdots \to и \to п + 1\}$

С – отказ одиночный т.е. только один раз осушествился переход $\{n \to n + 1\}$ событие

Д – отказ правилный т.е $\{1 \to 2 \to \cdots n \to n + 1 \to n - 1 \to \cdots \to 2 \to 1\}$

Е – осушествился следующая цепочка $\{1 \to 2 \to \cdots \to и \to n + 1 \to n\}$ Индекс внизу у этих событий будет означать что рассматривается к-ый по порядку отказ системы т.е $C_2$ – второй отказ системы одиночный

А черта на верху это отрицание событий т.е $\overline{B}$ не В т.е отказ не но монотонному пути.

Ясно что

$A \supset B \supset E \supset D, A \supset C \supset D$

Следовательно

$P(A) \geq P(B) \geq P(E) \geq P(D), P(A) \geq P(C) \geq P(D)$

Лемма 1 $P(A) \sim P(D)$

**Доказательство.** Справедливо следующее соотношение

$\frac{P(D)}{P(A)} = \frac{P(D/B)P(B)+P(D/\overline{B})P(\overline{B})}{P(B)+P(\overline{B})}$

Но так как $P(\overline{B}) = 0(P(B))$и если $\lim\ P\left(\frac{D}{B}\right) > 0$ то $\frac{P(D)}{P(A)} \cong \frac{P\left(\frac{D}{B}\right)P(B)}{P(B)} =$ $P(D/B)$ обазначим

$\xi_-$ время с момента отказа до окончания обслуживанич всех n+1 вызовов находящихся в системе момент отказа при условии отказ правильный

$\xi_-^0$- время с момента отказа до окончания обслуживания тех $r$ вызовов которые в момент отказа находились на обслуживание при условии что отказ правильный

$\beta_k$- время с момента отказа до окончания обслуживания к-го вызова при отказе по монотонной траектории (нумерация в порядке поступления вызовов в систему)

$$\phi(\mathrm{x}) \approx \mathrm{P}(\xi_- < \mathrm{x})$$

Тогда $P(D/B) \geq \int_0^\infty \big(1 - A(t)\big) d\phi(t) = 1 - \int_0^\infty A(t) d\phi(t)$

т.е 1- $(D/B) \leq \int_0^\infty A(t) d\phi(t)$

с другой стороны $\mathrm{A}(t) = 1 - e^{-\int_0^t a(u)du} \leq 1 - e^{-ct} \leq ct$

следовательно $1 - P$(D/B)$\leq C \cdot \int_0^\infty t d\phi(t) = C \cdot M\zeta_-$

Но $M\xi_- \leq M\xi_-^0 + (n - r + 1)M\eta = M\xi_-^0 + (n - r + 1)\beta_1,$

В сделанных обозначениях

$$P(\xi_k > x) = \frac{1}{P(B)} \iint \dots \int_{Z(x_n)} \prod_{i=1}^{n} (a(x_i - x_{i-1}) exp(- \int_0^{x_i - x_{i-1}} a(u)du))$$
$$\cdot \bar{B}(x_n) \cdot \bar{B}(x_n - x_1) \cdot \dots \cdot \bar{B}(x_n - x_{r-1})$$
$$\cdot \frac{\bar{B}(x_n - x_{k-1} + x)}{\bar{B}\,(x_n - x_{k-1})} dx_1 \dots dx_n$$
$$\leq \frac{1}{P(B)} \cdot \iint \dots \int_{Z(x_n)} \prod_{i=1}^{n} (a(x_i - x_{i-1}) \cdot e^{-cx_n} \cdot \prod_{\substack{i=0 \\ i \neq k-1}}^{r-1} \bar{B}\,(x_n$$
$$- x_i) \cdot \bar{B}(x_n - x_{k-1} + x) dx_{1,} dx_{2,} \dots, dx_n$$

Для М($\xi_k$)=$\int_0^{+\infty} P(\xi_k > x)\, dx = \frac{1}{\mathrm{P}(B)} \cdot \iint \dots \int_{Z(x_n)} \prod_{i=1}^{n} (a(x_i - x_{i-1}) \cdot e^{-cx_n} \cdot \prod_{\substack{i=0 \\ i \neq k-1}}^{r-1} \bar{B}\,(x_n - x_i) \cdot \bar{B}(x_n - x_{k-1} + x) dx_{1,} dx_{2,} \dots, dx_n dx \;\leq \frac{1}{P(B)} \cdot \iint \dots \int \big(\int_0^{+\infty} \bar{B}(x_n - x_{k-1} + x) dx\big) \prod_{i=1}^{n} a(x_i - x_{i-1}) \cdot e^{-cx_n} \cdot \prod_{\substack{j=0 \\ j \neq k-1}}^{r-1} \bar{B}\,(x_n - x_j) dx_{1,} dx_{2,} \dots, dx_n \leq \beta_1 \cdot \frac{1}{P(B)} \iint \dots \int \prod_{i=1}^{n} a(x_i - x_{i-1}) \prod_{\substack{j=0 \\ j \neq k-1}}^{r-1} \bar{B}\,(x_n - x_j) dx_{1,} dx_{2,} \dots, dx_n = \beta_1 \cdot \frac{]_{k-1}}{P(B)}$ где

$]_{k-1} = \iint \dots \int \prod_{i=1}^{n} a(x_i - x_{i-1}) \prod_{\substack{j=0 \\ j \neq k-1}}^{r-1} \bar{B}\,(x_n - x_j) dx_{1,} dx_{2,} \dots, dx_n$

Интеграл $]_{k-1}$ порядка $q_0$ так как оценка $q_0$ не зависит от $r$, следовательно окончательные оценки можно провести для интеграла $]_{k-1}$и получим $]_{k-1} \sim q_Q \sim q_0 = P(B)$ при $\eta_{mn} \to 0$

Значит $M\xi_{-} \to 0$ т.е $P(D/B) \to 1$, что означает $P(A) \sim P(D) \sim P(E) \sim P(C)$

Лемма 2. $P(A/H) \to 0$, при $\eta_{nm} \to 0$ где A и H отказ системы, т.е. хотим показать что вероятность второго отказа стремится к нулю.

Ясно что $H = \sum_{k=0}^{\infty} H_k$ где $H_k$-отказ системы при условии обслуживания к вызовов следовательно

$$P(A/H) = \frac{P(AH)}{P(H)} = \frac{P(AH_0) + P(A \sum_{K=1}^{\infty} H_k)}{P(H_0)\, P(\sum_{K=1}^{\infty} H_k)} \leq \frac{P(AH_0)}{P(H_0)} + \frac{P(A \sum_{i=1}^{\infty} H_i)}{P(H_0)} = L_1 + L_2$$

Для $L_2$имеем

$$L_2 = \frac{P(A \sum_{i=1}^{\infty} H_i)}{P(H_0)} \leq \frac{\sum_{i=1}^{\infty} q_i}{q_o} \to 0, \text{ при } z_{mm} \to 0$$

$P(AH_o) \leq P$ (в момент поступления n+2-го вызова период занятости не закончился), которое окончательно оценивается в работе [2]. Следовательно $L_1 = \frac{P(AH_0)}{P(H_0)} \to 0$, при $\eta_{mm} \to 0$ в результате чего имеем $P(A/H) \to 0$

т.е. вероятность второго отказа стремится к нулю.

## Резюме


Рассматривается система массового обслуживания (система надежности) GI/G/$r$/n-$r$ с функций распределения $B(t)$ $(B(t_0) = 0)$ времени обслуживания вызовов, A(t) функция распределения времени между поступлениями $A(t) = 1 - \exp\left\{-\int_o^t a(u)du\right\}$

Если $\bar{B} = 1 - B(\bar{x})$, $\beta_i = \int_{-}^{+\infty} t^{\vee`} dB(t)$,

$\gamma_{nm} = \frac{\beta_{(n+1)(m+1)}}{\beta_1^{(n+1)(m+1)-1}}$, в окрестности нуля $a(t) = \alpha \cdot t^m + o(t^{m+1})$, $\alpha > 0$, $m \geq 0, 0 \leq a(t) < +\infty$,

$\int_0^{+\infty} a(u)du < +\infty$, $a_0^{-1} = \int_0^{+\infty} t dA(t)$, $\eta_{nm} = \beta_{n(m+1)+1} / \beta_1^{n\,(m+1)}$

q – вероятность отказа (потери вызова) на периоде регенерации,

$q_o$ – вероятность отказа по монотонной ступени т.е. $\{1 \to 2 \to \cdots \to n \to n+1\}$

$Z(x_n) = \{\infty > x_n > x_{n-1} >,,, > x_1 > 0\}$

] = $\alpha^n \iint_{Z(X_n)} \int \bar{B}(X_n)\bar{B}(x_n - x_1) \ldots \bar{B}\,(x_n - \frac{x_{n-1}}{x_1^{m+1}(x_2-x_1)^{m+1}} \ldots (x_2 - x_{n-1})^{m+1} dx_1 \ldots dx_n$

то основные результаты работы следующие

lim P($a_o$]$\tau_n > x$)=$e^{-x}$ при $\gamma_{nm} \to 0$

J~$q_o$ и q~$q_o$ при $\eta_{nm} \to 0$

P(A)~P(D)

где $\tau_n$ –первый момент потери вызова

A = {на периоде регенерации произошел отказ системы}

D = { отказч правилный, т.е. $\{1 \to 2 \to \cdots n \to n+1 \to n-1 \to \cdots \to 2 \to 1\}$

*Ключевые слова:* Массовое обслужвание, вызов период регенерации, потерия вызова, отказ системы, правильный отказ, монотонная праектория, обслуживающий прибор, время обслуживания.

## Литература


1. А.К.Погосян. Некоторые новые результаты для системы Eк/G/r/n-r в условиях малой загрузки. “Ученые записи ЕрГУ” 1979г.
2. Э.А.Даниелян, Г.А.Попов. В. Ц. АН, Арм. ССР, вып. 2, 1979г.


## SERVICE SYSTEM GI/G/r/n-r WITH LOW TRAFFIC


**Arayik Poghosyan**

PhD in matematics,

EREA, ASUE, Associate Professor


## Summary


Consider the service system $GI|G|\tau|n-\tau$ with A(t) distribution function between of arrivals of customers in the system, $A(t) = 1 - exp(-\int_0^t a(u)du)$ and $B(t)(B(+0) = 0)$ is a distribution function of service time.

If $\bar{B}(t) = 1 - B(t), \beta_{j=} \int_0^{+\infty} t^j dB(t),\ j \geq 1,$

$a(t) = \alpha t^m + 0(t^{m+1})\ about\ zero\ \alpha > 0, m \geq 0, 0 \leq a(t) < c < +\infty$

$$\int_0^{+\infty} a(u)du < +\infty\,, a_0^{-1} = \int_0^{+\infty} tdA(t)\,, \eta_{nm} = \beta_{n(m+1)+1}/\beta_1^{n\,(m+1)}$$

$q$ – *probability of refusal* (*loss of customers*) *in the period regeneration,*
$q_0$ – *probability of refusal with monotonous steps, that's to say* $\{1 \to 2 \to \cdots \to n \to n+1\}$;

$$\gamma_{nm} = \beta_{(n+1)(m+1)} \Big/ \beta_1^{(n+1)(m+1)-1}\,, \eta_{nm} = \beta_{(n+1)(m+1)} \Big/ \beta_1^{n(m+1)},$$

$$z(x_n) = (\infty > x_n > x_{n-1} > x_1 > 0$$

$$J = \alpha^n \iint \ldots \int_{(X_n)} \overline{B}(X_n)\,\overline{B}\,(X_n - X_1)\ldots\overline{B}\,(X_n - X_{r-1})\,\cdot$$

$$\cdot\, X_1^{m+1}\,(X_2 - X_1)^{m+1}\ldots\,(X_n - X_{n-1})^{m+1}dx_1dx_2\ldots dx_n$$

Then the basic results of work are the following

I. $\lim P(a_0\,J\tau_n > x) = e^{-x}, when\ \lambda_{nm} \to 0$
II. $J \sim q_0\ and\ q \sim q_0\ when\ \eta_{nm} \to 0$
III. $P(A) \sim P(D)\ when\ \eta_{nm} \to 0$

Where $\tau_n$ – *first moment loss of customere,*
$A$ – *during the regeneration period one refusal took place,*
$D$ – *refusal is correct, that is* $1 \to 2 \to \cdots \to n \to n+1 \to n \ldots \to 2 \to 1$

*Keywords:* Service system, customer, regeneration period, loss of customers, refusal, correct refusal, service time.

## GI/G/r/n-r ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՐԱԳ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

**Արայիկ Կարապետի Պողոսյան**
Ֆիզ.-մաթ.գ.թ.,
ԵԿՏԱ, ՀՊՏՀ, դոցենտ

### Ամփոփում

Հետազոտվում է $GI|G|r|n-r$ մասսայական սպասարկման համակարգը, որտեղ $B(t)(B(+0) = 0)$ սպասարկման ժամանակի բաշխման ֆունկցիան է, իսկ $A(t) = 1 - exp(-\int_0^t a(u)du)$ երկու հաճախուների միջև ընկած ժամանակի բաշխման ֆունկցիան է:

Եթե $\bar{B}(t) = 1 - B(t), \beta_{j=} \int_0^{+\infty} t^j dB(t),\ j \geq 1,$

$\gamma_{nm} = \beta_{(n+1)(m+1)} / \beta_1^{(n+1)(m+1)-1}\ \ a(t) = \alpha t^m + 0(t^{m+1})\ \alpha > 0, m \geq$

0, զրոյի շուրջը և $0 \leq a(t) < c < +\infty$

$$\int_0^{+\infty} a(u)du < +\infty, a_0^{-1} = \int_0^{+\infty} tdA(t),$$

$q$ – պահանջի կորուստի համակարգի վթարի հավանականությունն է մեկ (վերջին) ռեգեներացիայի պարբերությունում

$q_0$ – վթարի հավանակությունն է մոնոտոն հետագծի դեպքում

$$z(x_n) = (\infty > x_n > x_{n-1} > x_1 > 0$$

$$J = \alpha^n \iint \dots \int_{(X_n)} \overline{B}(X_n)\,\overline{B}\,(X_n - X_1) \dots \overline{B}\,(X_n - X_{r-1}) \cdot$$

$$\cdot X_1^{m+1}\,(X_2 - X_1)^{m+1} \dots (X_n - X_{n-1})^{m+1} dx_1 dx_2 \dots dx_n$$

Ապա աշխատանքի հիմնական արդյունքը հետևյալն է.

I. $\lim P(a_0\, J\tau_n > x) = e^{-x}$, երբ $\lambda_{nm} \to 0$

II. $J \sim q_0$ and $q \sim q_0$ երբ $\eta_{nm} \to 0$

III. $P(A) \sim P(D)$ երբ $\eta_{nm} \to 0$

Որտեղ՝ $\tau_n$ պահանջի առաջին կորուստի պահն է

A – ռեգեներացիայի պարբերությունում տեղի է ունեցել միայն մեկ վթար

D – տեղի ունեցած վթարը կանոնավոր է՝ այսինքն տեղի է ունեցել հետևյալ շղթան

$$1 \to 2 \to \dots \to n \to n+1 \to n \dots \to 2 \to 1$$

*Հիմնաբառեր:* Մասսայական սպասարկում, պահանջ, ռեգեներացիայի պարբերություն, պահանջի կորուստ, վթար, կանոնավոր վթար, սպասարկող սարք, սպասարկման ժամանակ:

# 6-DIMENSIONAL HYPERMANIFOLD AS A GRAVITATIONAL MODEL OF STRONG INTERACTION

***Nectar Hakobyan***
*Candidate of Sciences in Physics and Mathematics*
*EREA, Chair of Information Technology, lecturer*

Six dimensional submanifolds of pseudo-Euclidean spaces are in the number of the most studying objects in Theoretical Physics [1]. In Theoretical Physics, the Einstein-Cartan theory is a classical theory of gravitation similar to general relativity. The theory was first proposed by Élie Cartan in 1922 and expounded in the following few years [2]. The Einstein field equations of Einstein-Cartan theory come from exactly the same approach, except that a general antysimmetric affine connection is assumed rather than the symmetric Levi-Civita connection (spacetime is assumed to have torsion in addition to curvature) and then the metric and torsion are varied independently. The gravitational model of strong interaction is the model, in which strong interaction is described by strong gravitation, the action of the gravitational torsion field and electromagnetic forces.

The present paper is devoted to the study of six dimensional hypermanifolds in pseudo-Euclidean space $E_4^7$, which will describe different special cases of physical interactions. Such method was suggested by Kaluza T., who studied **4** dimensional space-time theory as a special case of **5** dimensional theory [3].

The metric of $E_4^7$ is non-degenerated, therefore after some canonization of the moving frame it can be reduced to the canonical form

$$ds^2 = \left(dx^1\right)^2 + \left(dx^2\right)^2 + \left(dx^3\right)^2 - \left(dx_1\right)^2 - \left(dx_2\right)^2 - \left(dx_3\right)^2 - \left(dx_4\right)^2 .$$

The manifold $E_4^7$ is a **7**-dimensional pseudo-Euclidean space and it is composed by two families of **3** and **4** dimensional fibers. It means that the manifold $E_4^7$ has the structure of double fiber bundle. There are two smooth mappings $\pi_1 : E_4^7 \to M_1$ and $\pi_2 : E_4^7 \to M_2$ of $E_4^7$ onto **3** and **4** dimensional smooth manifolds $M_1$ and $M_2$ respectively, the fibers i.e.

full prototypes of points from $M_1$ and $M_2$ by mappings $\pi_1$ and $\pi_2$ are **3** and **4** dimensional smooth manifolds and the tangent spaces of fibers of bundles $\left(E_4^7, M_1, \pi_1\right)$ and $\left(E_4^7, M_2, \pi_2\right)$ have only zero intersection.

$$T_p\left(\pi_1^{-1}(x)\right) \cap T_p\left(\pi_2^{-1}(y)\right) = p, \quad \pi_1(p) = x, \ \pi_2(p) = y; \qquad x \in M_1, y \in M_2 .$$

Fixing now the natural frame $\{p, (e_i)_0, (e^\alpha)_0, i = 1,2,3, \ \alpha = 1,\dots,4\}$ on the chart with local coordinates $x^1, .x^2, x^3, y_1, \dots, y_4$ adapted to the structure of $E_4^7$ it is possible to introduce the vector fields

$$e_i = x_i^k (e_k)_0, \qquad e^\alpha = y_\beta^\alpha \left(e^\beta\right)_0,$$

where new independent variables $x_i^j$ and $y_\beta^\alpha$ satisfy conditions $\det\left(x_i^k\right) \neq 0, \det\left(y_\beta^\alpha\right) \neq 0$. Let us consider linear differential forms

$$\omega^i = x_k^i dx^k, \qquad \omega_\alpha = y_\alpha^\beta dy_\beta,$$

where $x_p^i x_k^p = \delta_k^i, \ y_\gamma^\beta y_\alpha^\gamma = \delta_\alpha^\beta$.

Thus we obtain a moving frame on $E_4^7$ which contains **3** and **4** vectors composing basis of the tangent space in each point of the fiber $\pi_1$ and $\pi_2$ respectively in the same point. Besides we have the dual system of local linear differential forms $\omega^1, .\omega^2, \omega^3, \omega_1, \dots, \omega_4$ on the tangent frames manifold ( $E_4^7$ )$^{(1)}$ those don't depend on the choice of the local chart.

Moreover, the fibers of fiber bundles $\left(E_4^7, M_1, \pi_1\right)$ and $\left(E_4^7, M_2, \pi_2\right)$ are integral manifolds of maximal dimension for the systems of linear differential equations $\omega^i = 0$, $i = 1,.2,3$ and $\omega_\alpha = 0$, $\alpha = 1,\dots,4$ respectively. The structure equations of the pseudo-Euclidean space $E_4^7$ can be written in the following form

$$\begin{cases} d\omega^i = \omega_k^i \wedge \omega^k, \\ d\omega_k^i = \omega_p^i \wedge \omega_k^p, \quad i,k,p = 1,2,3, \\ d\omega_\alpha = -\omega_\alpha^\beta \wedge \omega_\beta, \\ d\omega_\beta^\alpha = \omega_\gamma^\alpha \wedge \omega_\beta^\gamma, \quad \alpha,\beta,\gamma = 1,\dots,4, \end{cases} \tag{1}$$

where the secondary forms $\omega_\beta^\alpha$ are defined on the manifold $(E_4^7)^{(2)}$ of the second order frames on $E_4^7$. Using Frobenius Theorem [4] it's easy to see that each of systems of linear differential equations $\omega i = 0,\ i = 1,2,3$ and $\omega_4 = 0,\ \alpha = 1,\ldots,4$ is totally integrable. It means that subsystems of linear differential forms $\omega^i, \omega_k^i,\ i = 1,2,3$ and $\omega_\alpha, \omega_\beta^\alpha,\ \alpha = 1,\ldots,4$ are closed and therefore define **3** and **4** dimensional Euclidean subspaces in $E_4^7$ respectively. Geometrically it corresponds to the fibers and bases of bundles $(E_4^7, M_1, \pi_1)$ and $(E_4^7, M_2, \pi_2)$. These subspaces are described by structure equations

$$\begin{cases} d\omega^i = \omega_k^i \wedge \omega^k, \\ d\omega_k^i = \omega_p^i \wedge \omega_k^p, \quad i,k,p = 1,2,3, \end{cases} \begin{cases} d\omega_\alpha = -\omega_\alpha^\beta \wedge \omega^\alpha,\ \alpha,\beta,\gamma = 1,\ldots,4, \\ d\omega_\beta^\alpha = \omega_\gamma^\alpha \wedge \omega_\beta^\gamma. \end{cases} \quad \textbf{(2)}$$

In the cobasis of linear differential forms $\omega^1, \omega^2, \omega^3, \omega_1, \omega_2, \omega_3, \omega_4$ the general embedding $M \to E_4^8,\ \dim M = 6$ can be given by the following linear relation

$$\omega_4 = A_{4i}\omega^i + A_4^i\omega_i,\ i = 1,2,3.$$

where $A_{4i}$ and $A_4^i$ are some smooth functions on $M^{(1)}$. This relation is an identity on submanifold $M$. Differentiating it by exterior way, applying structure equations **(1)**, we'll obtain the following differential identity:

$$(dA_{4i} + A_{4k}\omega_i^k + A_{4i}\omega_4^4 - A_4^k A_{4i}\omega_k^4) \wedge \omega^i + (dA_4^i - A_4^k\omega_k^i + A_4^i\omega_4^4 - A_4^k A_4^i\omega_k^4 + \omega_4^i) \wedge \omega_i \equiv 0. \quad \textbf{(3)}$$

It follows from here that functions $A_{4i}$ are invariants on $M$ and the functions $A_4^i$ are not, therefore we can consider the values $A_4^i$ equal to zero. It also follows from differential identity **(3)** that the secondary forms $\omega_4^i$ are principal, i.e. linear combinations of principal forms $\omega^1$, $\omega^2$, $\omega^3$, $\omega_1$, $\omega_2$, $\omega_3$. Then we have

$$\omega_4 = A_{4i}\omega^i,\ i = 1,2,3. \quad \textbf{(4)}$$

The present paper is devoted to the study of hypermanifolds described by embedding **(4).**

Substitution of relation **(4)** in **(1),** i.e. the system of general structure equations comes to the system

$$\begin{cases} d\omega^i = \omega^i_k \wedge \omega^k, \\ d\omega^i_k = \omega^i_p \wedge \omega^p_k + R^{it}_{kp}\omega^p \wedge \omega_t, \qquad i,k,p,t = 1,2,3, \\ d\omega_i = -\omega^k_i \wedge \omega_k - A_{4k}\omega^4_i \wedge \omega^k, \\ d\omega_4 = -\omega^i_4 \wedge \omega_i - A_{4i}\omega^4_4 \wedge \omega^i, \\ d\omega^i_4 = \omega^i_k \wedge \omega^k_4 + \omega^i_4 \wedge \omega^4_4, \\ d\omega^4_i = \omega^4_k \wedge \omega^k_i + \omega^4_4 \wedge \omega^4_i, \\ d\omega^4_4 = \omega^4_i \wedge \omega^i_4, \end{cases} \qquad \textbf{(5)}$$

where $R^{it}_{kp}$ is the curvature tensor, which coefficient will be determined later.

Differentiating relation **(4)** by exterior way, applying structure equations **(5)** we'll obtain the following differential identity:

$$(dA_{4i} + A_{4k}\omega^k_i + A_{4i}\omega^4_4) \wedge \omega^i + \omega^i_4 \wedge \omega_i \equiv 0. \qquad \textbf{(6)}$$

Applying Cartan's lemma [4] to this identity we'll obtain:

$$\omega^i_4 = A^i_{4k}\omega^k + A^{ik}_4\omega_k, \qquad \textbf{(7)}$$

$$dA_{4i} + A_{4k}\omega^k_i + A_{4i}\omega^4_4 = A^{ik}_4\omega^k + A^k_i\omega_k, \qquad \textbf{(8)}$$

where coefficients $A^i_{4k}$, $A^{ik}_4$, $A^k_i$ are some smooth functions on $M^{(1)}$.

Differentiating relations **(7)** by exterior way, applying structure equations **(5)** we'll obtain the following differential identity:

$$(dA^i_{4k} + A^i_{4p}\omega^p_k - A^p_{4k}\omega^i_p + A^i_{4k}\omega^4_4 - A^{ip}_4 A_{4k}\omega^4_p) \wedge \omega^k + (dA^{ik}_4 - A^{ip}_4\omega^k_p - A^{pk}_4\omega^i_p + A^{ik}_4\omega^4_4) \wedge \omega_k \equiv 0. \qquad \textbf{(9)}$$

It follows from this differential identity, that the coefficients $A^{ik}_4$ are invariants on $M^{(1)}$ and the functions $A^i_{4k}$ are not, therefore we can consider the values $A^i_{4k}$ equal to zero. Then we have

$$\omega^i_4 = A^{ik}_4\omega_k. \qquad \textbf{(10)}$$

Substitution of relations $A^i_{4k} = 0$ in **(9)** we'll have:

$$-A^{ip}_4 A_{4k}\omega^4_p \wedge \omega^k + (dA^{ik}_4 - A^{ip}_4\omega^k_p - A^{pk}_4\omega^i_p + A^{ik}_4\omega^4_4) \wedge \omega_k \equiv 0. \qquad \textbf{(11)}$$

It also follows from these identities, if det( $A_4^{ip} A_{4k}$ )≠0, the secondary forms $\omega_p^4$ are principal forms, i.e. linear combinations of principal forms $\omega^i$, $\omega_i$. Applying Cartan's lemma to these identities we'll obtain:

$$\omega_i^4 = A_{ik}^4 \omega^k + A_i^{4k} \omega_k, \tag{12}$$

$$dA_4^{ik} - A_4^{ip} \omega_p^k - A_4^{pk} \omega_p^i + A_4^{ik} \omega_4^4 = A_i^{4k} \omega^k + A_4^{ikp} \omega_p, \tag{13}$$

where coefficients $A_{ik}^4$, $A_i^{4k}$, $A_4^{ikp}$ are some smooth functions on $M^{(1)}$.

Differentiating relations **(12)** by exterior way, applying structure equations **(5)** and relations **(4), (7), (10)** we'll obtain:

$$(dA_{ik}^4 + A_{ip}^4 \omega_k^p + A_{pk}^4 \omega_i^p - A_{ik}^4 \omega_4^4 - A_i^{4p} A_p^{4j} A_{4k} \omega_j) \wedge \omega^k + (dA_i^{4k} - A_i^{4p} \omega_p^k + A_p^{4k} \omega_i^p - A_i^{4k} \omega_4^4) \wedge \omega_k \equiv 0,$$

where j=1, 2, 3.

Substituting relations **(4), (7), (10)** and **(12)** in the system of structure equations **(5)** we'll obtain:

$$\begin{cases} d\omega^i = \omega_k^i \wedge \omega^k, \\ d\omega_k^i = \omega_p^i \wedge \omega_k^p - A_4^{it} A_{kp}^4 \omega^p \wedge \omega_t, \qquad i,,k,p,t = 1,2,3, \\ d\omega_i = -\omega_i^k \wedge \omega_k + A_i^{4k} A_{4p} \omega^p \wedge \omega_k, \\ d\omega_4^4 = A_{ik}^4 A_4^{ip} \omega^k \wedge \omega_p, \end{cases} \tag{14}$$

where coefficients $A_{4i}$, $A_4^{ik}$, $A_{ik}^4$, $A_i^{4k}$ are defined by the following differential equations:

$$\begin{aligned} \nabla A_{4i} &= A_4^{ik} \omega^k + A_i^k \omega_k, \\ \nabla A_4^{ik} &= -A_4^{ip} A_{4j} A_p^{4k} \omega^j + A_4^{ikp} \omega_p, \\ \nabla A_{ik}^4 &= A_{ikp}^4 \omega^p, \\ \nabla A_i^{4k} &= -A_i^{4p} A_p^{4k} A_{4j} \omega^j + A_i^{4kp} \omega_p, \end{aligned} \tag{15}$$

where coefficients $A_4^{ikp}, A_{ikp}^4, A_i^{4kp}$ are some smooth functions on $M^{(1)}$ and for example, $\nabla A_{4i} = dA_{4i} + A_{4k} \omega_i^k + A_{4i} \omega_4^4$ is the covariant differential of $A_{4i}$.

Structure equations of hypermanifold $M$ in pseudo - Euclidean space $E_4^7$, defined by embedding **(4)** can be represented in the form **(14)** where $A_{4i}$, $A_4^{ik}$, $A_{ik}^4$, $A_i^{4k}$ are defined by differential equations **(15).**

It's easy to note that the system of basic and secondary forms $\omega^1$, $\omega^2$, $\omega^3$, $\omega_1$, $\omega_2$, $\omega_3$, $\omega_k^i$, $\omega_4^4$ and functions $A_{4i}$, $A_4^{ik}$, $A_{ik}^4$, $A_i^{4k}$ satisfying structure equations **(14)** and differential equations **(15)** respectively is closed. In virtue of the Cartan–Laptev's theorem [5] the following statement is true.

**Theorem 1.** A special metric connection of the pseudo-Euclidean space $E_4^7$ induces a differential geometric structure of the special type affine connection $\Gamma$ defined by differential forms $\omega^1$, $\omega^2$, $\omega^3$, $\omega_1$, $\omega_2$, $\omega_3$, $\omega_k^i$, $\omega_4^4$ and the functions $A_{4i}$, $A_4^{ik}$, $A_{ik}^4$, $A_i^{4k}$ satisfying structure equations **(14)** and differential equations **(15)** on hypermanifold $M$ with torsion and curvature determined by embedding **(4).**

The structures of the curvature and torsion tensors of this affine connection are easily to seen from structure equations **(14)**: $R_{kp}^{it} = A_4^{it} A_{kp}^4$ and $S_{ip}^k = A_i^{4k} A_{4p}$.

The hypermanifold M has the structure of **6**-dimensional Cartan-Einstein space. The following statement is true.

**Theorem 2.** The hypermanifold M has the structure of **6**-dimensional Cartan-Einstein spacetime. Therefore it can be considered as a model of **6**-dimensional Universe: gravitational model of strong interaction.


## Summary

The geometry of hypermanifolds of a pseudo-Euclidean space $E_4^7$ is studied. The metric connection of a pseudo-Euclidean space $E_4^7$ to a hypermanifold generates an affine connection of a special type with torsion and curvature. Consequently, such **6**-dimensional hypermanifolds, according to the Einstein-Cartan theory, can be models of the Universe with strong interaction.

*Keywords:* hypermanifold, differential geometric structure, structure equations, affine connection, curvature, torsion, gravitational model, strong interaction.

### References

1. Грин Б., Элегантная Вселенная (Суперструны, скрытые размерности и поиски оканчательной теории), М., УРСС, 2004, 286 с.
2. Élie Cartan. "Sur les variétés à connexion affine et la théorie de la relativité généralisée." Part I: Ann. Éc. Norm. 40, 325–412 (1923) and ibid. 41, 1–25 (1924); Part II: ibid. 42, 17–88 (1925).
3. Сборник статей, "Альберт Эйнштейн и теория гравитации", М., Мир, 1979, с. 592
4. Рашевский П. К., Геометрическая теория дифференциальных уравнений с частными производными, М.-Л, Гостехиздат, 1947, 355 с.
5. Лаптев Г. Ф., Дифференциальная геометрия погруженных многообразии // Тр. Матем. о-ва, Т. 2 (1953), стр. 275-382

## 6-ՉԱՓԱՆԻ ՀԻՊԵՐԲԱԶՄԱՁԵՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՈՒԺԵՂ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՄԲ ԳՐԱՎԻՏԱՑԻՈՆ ՄՈԴԵԼ

**Նեկտար Սպարտակի Հակոբյան**
Ֆիզ.-մաթ. գ. թ.
ԵԿՏԱ, Տեղեկատվական Տեխնոլոգիաների ամբիոն, դասախոս

### Ամփոփում

Ուսումնասիրված է $E_4^7$ պսևդոէվկլիդեսյան տարածության հիպերբազմաձևությունների երկրաչափությունը: $E_4^7$ պսևդոէվկլիդեսյան տարածության մետրիկական կապակցությունը հիպերբազմաձևության վրա առաջացնում է ոլորում և կորություն ունեցող հատուկ տեսքի աֆինական կապակցություն: Հետևաբար, այդպիսի հիպերբազմաձևությունները, համաձայն Էյնշտեյն-Կարտանի տեսության, կարող են ծառայել որպես ուժեղ փոխազդեցությամբ Տիեզերքի մոդելներ:

*Բանալի բառեր.* հիպերբազմաձևություն, դիֆերենցիալ երկրաչափական կառուցվածք, կառուցվածքային հավասարումներ, աֆինական կապակցություն, կորություն, ոլորում, գրավիտացիոն մոդել, ուժեղ փոխազդեցություն:

## 6-МЕРНОЕ ГИПЕРМНОГООБРАЗИЕ КАК ГРАВИТАЦИОННАЯ МОДЕЛЬ СИЛЬНОГО ВЗАИМОДЕЙСТВИЯ

**Акопян Нектар Спартаковна**
канд. физ.-мат. наук
ЕРОА, кафедра Информационных технологий, преподаватель

### Резюме

Изучена геометрия гипермногообразий псевдоевклидова пространства $E_4^7$. Метрическая связанность псевдоевклидова пространства $E_4^7$ на гипермногообразий порождает аффиную связность специального вида с кручением и скривизной. Следовательно такие **6**-мерные гипермногообразия согласно теории Эйнштейна-Картана могут быть моделями Вселенной с сильним взаимодействием.

*Ключевые слова:* гипермногообразие, дифференциальная геометрическая структура, структурные уравнения, аффинная связь, кривизна, кручение, гравитационная модель, сильное взаимодействие.

# ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

***Աբրահամ Արմենի Աբրահամյան***
*ԵԿՏԱ, Իրավագիտության ամբիոն, ասպիրանտ*

Սույն հոդվածում ուսումնասիրվում է Եվրասիական տնտեսական միության ակտերի տեղի ու նշանակության հիմնահարցերը ՀՀ իրավական համակարգում: Մասնավորապես, հեղինակի կողմից անդրադարձ է կատարվում Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին և վերջինիս հետ անմիջական փոխկապակցության մեջ գտնվող մի քանի տասնյակ համաձայնագրերին, ինչպես նաև այդ միության մարմինների կողմից ընդունված որոշումներին: Հոդվածում ներկայացվում են այդ ակտերի վերաբերյալ հեղինակային մոտեցումները՝ ՀՀ իրավական ակտերի համակարգի համատեքստում:

ՀՀ Սահմանադրության 5, 13, 19, 47, 116, 132-րդ և այլ հոդվածներով ամրագրված նորմերի համակարգային ու համալիր վերլուծության արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետությանը՝ պետության հայեցողության սահմանների շրջանակում, վերապահվում է իրավասություն՝ մասնակցելու միջազգային իրավական հարաբերությունների կարգավորմանն ուղղված իրավական ակտերի նախապատրաստմանը, ընդունմանն ու իրականացմանը:

Եվրասիական տնտեսական միության շրջանակում անհրաժեշտ է կարևորել և միաժամանակ որոշել այդ կազմակերպության իրավական ակտերի բնույթը: Ընդ որում, այդ ակտերի կատարման պարտադիրությամբ, կամ մոդելային ու խորհրդատվական բնույթով պայմանավորված առանձնակի կարևորություն ունեն հետազոտության առարկա ոլորտի հարաբերությունները կարգավորող միջազգային իրավական ակտերի իրագործման կարգը, այդ ակտերով պայմանավորված ներպետական իրավական ակտերի ընդունումը պահանջող ընթացակարգը, միջազգային իրավական այլ ակտերի և Եվրասիական տնտեսական միության ակտերի ու միության անդամ պետությունների

ազգային իրավական ակտերի հարաբերակցության հիմնահարցերը, ինչպես նաև այդ կազմակերպության մարմինների իրավական կարգավիճակի, դրանց լիազորությունների ծավալի շրջանակները և այլն:

Անշուշտ, Եվրասիական տնտեսական միությունը իրապես կարող է հավակնել համաշխարհային տնտեսական և քաղաքական իշխանության կենտրոններից (բևեռներից) մեկի դերին, եթե այն կարողանա իրագործել իրեն վերապահված բոլոր հնարավորությունները:

Հարկ է կարևորել, որ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների իրավահարաբերությունները հիմնվում են իրավապայմանագրային հենքը կազմող այնպիսի հիմնարար ակտերի վրա, ինչպիսիք են՝ Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող՝ Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագիրը[1], այդ միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերը, երրորդ կողմի հետ կնքվող՝ միության միջազգային պայմանագրերը, ինչպես նաև Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումներն ու կարգադրությունները, որոնք ընդունվել են Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրով ու այդ միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված իրենց լիազորությունների շրջանակներում (հոդվ. 6):

Ընդ որում, Եվրասիական տնտեսական միության իրավունքի համակարգում կենտրոնական տեղը պատկանում է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին (այսուհետ՝ Պայմանագիր), որով սահմանվում է այդ միության հիմնադրման կազմակերպաիրավական հիմքերը: Մասնավորապես, այդ պայմանագրի 6-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանվում է, որ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի և Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները ենթակա են կատարման՝ անդամ պետությունների կողմից դրանց ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Միաժամանակ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումները գերակայում են Եվրասիական միջկառավարական խորհրդի և Եվրասիական

[1] Տե՛ս Договор о Евразийском экономическом союзе. М.: 2015. С. 496.

տնտեսական հանձնաժողովի որոշումների նկատմամբ, իսկ Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները գերակայում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նկատմամբ:

Այսինքն, նշված նորմերի բովանդակային վերլուծությունից անհրաժեշտ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միության իրավապայմանագրային հիմքում սահմանված չէ այդ միության շրջանակում ընդունվող իրավական ակտերի հարաբերակցությունը ազգային իրավական համակարգերի նկատմամբ, ինչը ենթադրում է նաև այն, որ մասնակիորեն են սահմանված այդպիսի ակտերի աստիճանակարգության (հիերարխիայի) և իրավաբանական ուժի մեջ մտնելու հարցերը, բավարար չափով կարգավորված չեն Եվրասիական տնտեսական միության մարմինների կողմից ընդունվող որոշումների իրականացման մեխանիզմները:

Հարկ է նաև կարևորել, որ Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների իրավական համակարգերի փոխգործակցությանն ուղղված հարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտությունը, իրավական ակտերի մշակումը, դրանց հետագա ուսումնասիրությունն ու կարգավորումը պահանջում են միասնական իրավական տարածք ձևավորման, այդ միության իրավական ակտերի արդյունավետությունն ապահովող և իրավական համակարգի հետ ազգային համակարգերի փոխազդեցության հարցերի խորքային հետազոտություն:

Հաշվի առնելով այն, որ Եվրասիական տնտեսական միությունը հանդիսանում է տարածաշրջանային տնտեսական ինտեգրման միջազգային կազմակերպություն, որն ունի միջազգային իրավասուբյեկտություն (հոդվ. 1, մաս 2), անհրաժեշտ է նաև նկատել, որ այդպիսի իրավասությամբ Եվրասիական տնտեսական միությունն օժտվում է ոչ միայն այդ պայմանագրով, այլև նույն միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով նախատեսված սահմաններում և ծավալներով (հոդվ. 6):

Անշուշտ, այդ իրավասության կրողները հանդիսանում են Եվրասիական տնտեսական միության պայմանագրի շրջանակներում գործող մարմինները (հոդվ. 8), որպիսիք են՝ ա) Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը (այսուհետ՝ Բարձրագույն խորհուրդ), բ) Եվրասիական միջկառավարական խորհուրդը (այսուհետ՝ Միջկառա-

վարական խորհուրդ), գ) Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), դ) Եվրասիական տնտեսական միության դատարանը (այսուհետ՝ Միության դատարան): Ընդ որում, այդ մարմինները իրենց լիազորությունների շրջանակում ընդունում են՝ կարգադրություններ, որոնք նշված պայմանագրով ընկալվում են որպես կազմակերպակարգադրական ակտեր, ինչպես նաև նորմատիվ իրավական բնույթի դրույթներ պարունակող ակտեր՝ որոշումների տեսքով (հոդվ. 2):

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ նշված պայմանագրով այդ կազմակերպության մարմինների լիազորությունները կանոնակարգող 2, 8-19 հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ այդ մարմինների կողմից ընդունվող ակտերի համակարգն ունի որոշակի աստիճանակարգություն (հիերարխիա): Այսպես, նույն պայմանագրի 6-րդ հոդվածի 3-4-րդ մասերին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական միության մարմինների որոշումներն ու կարգադրությունները չպետք է հակասեն Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին և այդ միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերին, միաժամանակ, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի, Եվրասիական միջկառավարական խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների միջև հակասություններ առաջանալու դեպքում՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշումները գերակայում են Եվրասիական միջկառավարական խորհրդի և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նկատմամբ, իսկ Եվրասիական միջկառավարական խորհրդի որոշումները գերակայում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումների նկատմամբ:

Անշուշտ, Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերի համակարգն անհրաժեշտ է ընկալել Եվրասիական տնտեսական միության օրենսդրության հիմունքները, անդամ պետությունների կողմից կնքվող միջազգային պայմանագրերը, իրենց իրավասությունների սահմաններում այդ միության մարմինների որոշումները, նորմատիվային իրավական այլ ակտերը, որոնք կազմում են այդ կազմակերպության իրավապայմանագրային հենքը:

Միաժամանակ, հաշվի առնելով միջազգային այդ կազմակերպության ակտերի նորմատիվային նշանակությունը, դրանք կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբերի՝ ներկազմակերպական հարցերով (ներքին կանոնակարգում) և Եվրասիական տնտեսական միության նպատակների անմիջական իրականացման հարցերով (արտաքին կանոնակարգում)[2]:

Այսպես, նշված ակտերի **առաջին խումբը** վերաբերվում է ընթացակարգի կանոնների, անձնակազմի վարքագծի կանոնների ընդունմանը, և միջազգային կազմակերպության գործունեությունը կարգավորող՝ այդ կազմակերպության մարմինների և անդամ պետությունների համար պարտադիր այլ նորմերի սահմանմանը: Դրանց թվին են դասվում Եվրասիական տնտեսական միության մարմինների որոշումները, որոնք սահմանում են այդ միության մարմինների կառուցվածքը և գործունեության ուղղություններն ու կառուցակարգերը, այդ մարմինների միջև փոխհարաբերությունները, պաշտոններում նշանակման կարգը, Եվրասիական տնտեսական միության պաշտոնատար անձանց և ծառայող մարմինների կարգավիճակը և այլ ներկազմակերպական հարցեր:

**Երկրորդ խմբի** մեջ անհրաժեշտ է ներառել Եվրասիական տնտեսական միության նպատակների անմիջական իրականացման հարցերով ընդունված ակտերը (արտաքին կանոնակարգում), որոնք հասցեագրված են անդամ պետություններին և սահմանում են վերջիններիս միջև, ինչպես նաև լիազորությունների շրջանակը երրորդ պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ փոխհարաբերություններում:

Բացի այդ, Եվրասիական տնտեսական միությունը ձեռք է բերում արտաքին կանոնակարգման բնույթ կրող միջազգային իրավունքի նորմեր սահմանելու իրավասություն՝ միջազգային այդ կազմակերպության հիմնադիր ակտի համապատասխան դրույթներին կամ համապատասխան միջազգային պայմանագրին հավանություն տալու միջոցով արտահայտված անդամ պետությունների համաձայնության հիման վրա:

Ասվածի համատեքստում անհրաժեշտ է կարևորել այն հանգա-

---

2 Տե՛ս նաև՝ Кашкин С. Ю., Четвериков А.О. Право Евразийского экономического союза, М.: 2016, стр. 11.

մանքը, որ Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի 13-րդ և 17-րդ հոդվածներին համաձայն՝ և Բարձրագույն խորհրդի, և Միջկառավարական խորհրդի որոշումներն ու կարգադրություններն ընդունվում են ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

Միաժամանակ, իրենց գործառութային նշանակությամբ պայմանավորված Եվրասիական տնտեսական միության շրջանակում ընդունվող իրավական ակտերը կարելի է դասակարգել.

- ակտերի, որոնք ենթակա են համապատասխանեցման և ներդաշնակեցման միության անդամ պետությունների ազգային օրենսդրություններում: Նման ակտերի առկայությունը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ դրանք ընդունվում են Եվրասիական տնտեսական միության նպատակների անմիջական իրացման հարցերով բոլոր անդամ պետությունների մասնակցությամբ, որոնց կատարման պարտադիր լինելն ինքնին իրականացվում է նույն պետությունների կողմից ազգային իրավական ակտերի ընդունման միջոցով,

- խորհրդատվական ակտերի, որոնք բովանդակում են բացառապես խորհրդատվական բնույթի եզրակացություններ և պարզաբանումներ: Նման ակտերի պարագայում, միության անդամ պետությունները՝ելնելով երկրի շահերից, ինքնուրույնաբար են որոշում տվյալ ակտերի իրականացման անհրաժեշտությունն ու նպատակահարմարությունը՝ ազգային իրավակիրառական և օրենսդրական պրակտիկայում,

*- և վերջապես ներքին ակփերի, որոնք կարող են ընդունվել բանաձևերի, կարգադրությունների և այլ ձևերով, որոնց կիրառման շրջանակը սահմանափակվում է* Եվրասիական տնտեսական միության մարմինների աշխատակազմերի գործունեությամբ:

Այնուամենայնիվ, անդրադառնալով՝ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում Եվրասիական տնտեսական միության իրավական ակտերի տեղի ու նշանակության հարցի դիտարկմանը, անհրաժեշտ է նկատել հետևյալը. Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրը՝ որպես միջազգային կազմակերպության հիմնադիր ակտ, սահմանում է, որ անդամ պետությունները ինքնուրույն են որոշում, թե երբ, ինչ կարգով, ինչպիսի ազգային նորմատիվային իրավական ակտեր կարող են ընդունել՝ ի կատարումը նույն կազմակերպության մարմինների ակտերի, և սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց իրացվելիության շրջանակները:

Սակայն, անհրաժեշտ է նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրի 1-ին հոդվածով նախատեսվում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի եւ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի 1-ին հավելվածում նշված միջազգային այլ պայմանագրերի առանձին նորմերի կիրառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության՝ Առեւտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու հետ կապված հարցերի վերաբերյալ նույն պայմանագրի 3-րդ հավելվածով նախատեսված պայմաններին ու անցումային դրույթներին համապատասխան[3]:

Դա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնում Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթվից իր տարածքում կիրառել Եվրասիական տնտեսական միության Բարձրագույն խորհրդի և Միջկառավարական խորհրդի որոշումներն ու կարգադրությունները:

Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից Հայաստանի Հանրապետության տարածքում կիրառվում են նույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից գործող՝ Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերը, ինչպես նաեւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի (Եվրասիական տնտեսական ընկերակցության միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի)) որոշումները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (Մաքսային միության հանձնաժողովի) որոշումները՝ հաշվի առնելով Պայմանագրի 3-րդ հավելվածով սահմանված դրույթները (Պայմանագրի 2-րդ հոդված):

Հարկ է նկատել, որ Եվրասիական տնտեսական միության մարմինների նորմատիվային իրավական ակտերի պարտադիր լինելը ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ Եվրասիական տնտեսական միության մյուս անդամ պետություններում իրականացվում է դրանց ներպետական իրավական նորմատիվային ակտերով ամրագրելու և իրավաբանական ուժ տալու միջոցով:

---

[3] Տե՛ս նաև՝ Бекяшев К.А., Моисеев Е.Г. Право Евразийского экономического союза, М.: 2016, стр. 16.

Անշուշտ, Եվրասիական տնտեսական միության շրջանակներում միջպետական հարաբերությունների իրավական կարգավորման կառուցակարգերը սահմանվում են սահմանադրական նորմերով:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության ազգային օրենսդրության ակտերի աստիճանակարգությամբ առանձնահատուկ ձևով չեն ներկայացվել Եվրասիական տնտեսական միության ակտերը, այդուհանդերձ, ակնհայտ է դառնում այն, որ բոլոր միջազգային իրավական ակտերը, այդ թվում՝ վավերացման ենթակա Եվրասիական տնտեսական միության ակտերը, վավերացվում են Ազգային ժողովի կողմից, եթե դրանք չեն հակասում ՀՀ Սահմանադրությանը (հոդվ. 116, 1-2-րդ մասեր):

Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում ամրագրված են դրույթներ, որոնք անուղղակիորեն վերաբերելի են Եվրասիական տնտեսական միությանը՝ սահմանելով այդ միության ակտերի տեղը ազգային իրավական համակարգում: Մասնավորապես, Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով՝ իրավական նորմերի աստիճանակարգության առանցքային սկզբունքներից է այն, որ Հայաստանի Հանրապետության վավերացրած Եվրասիական տնտեսական միության ակտերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Իսկ նույն Սահմանադրության 116-րդ հոդվածի 1-ին մասի տրամաբանությանը համապատասխան՝ Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում Եվրասիական տնտեսական միության այն ակտերը՝ որոնք վերաբերում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև պարտականություններին, նախատեսում են Հայաստանի Հանրապետության անդամակցություն միջազգային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության համար նախատեսում են ֆինանսական կամ գույքային պարտավորություններ և այլն: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն. Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

Կամ, ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված

դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ Եվրասիական տնտեսական միության պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության դատարանի պրակտիկան:

Հիշատակված նորմերի համակարգային վերլուծությունից կարելի է եզրակացնել հետևյալը.

- Հայաստանի Հանրապետությունում միջազգային իրավունքի և ներպետական իրավունքի փոխգործակցության մասով՝ ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 2005 թվականի խմբագրության, երկրի իրավական համակարգի կազմում բացակայում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքների ու նորմերի ներառման հանգամանքը, ինչը սակայն չի ենթադրում, որ Հայաստանի Հանրապետությունը այդ նույն սկզբունքների ու նորմերի հիման վրա չի կրում պարտավորություն: Այդ սկզբունքները, ի վերջո, համընդհանուր նշանակություն ունեն ՄԱԿ-ի բոլոր անդամ պետությունների համար, ընդ որում, մի կողմից, դրանց աղբյուրը հանդիսանում է հենց միջազգային պայմանագրերը, իսկ մյուս կողմից՝ դրանք համընդհանուր են ու հանրաճանաչ՝ առանց այդ սկզբունքների ամրագրման աղբյուրի նշման և գոյության:

- Հայաստանի Հանրապետությունում Եվրասիական տնտեսական միության ակտերի գործողությունը ճանաչվում է գերակա ազգային օրենսդրության նորմերի նկատմամբ, եթե դրանցում առկա է հակասություն:

- Հայաստանի Հանրապետությունում Սահմանադրությանը հակասող Եվրասիական տնտեսական միության ակտերը չեն կարող վավերացվել, հետևաբար, դրանց նորմերն ենթակա չեն գործողության մեջ դնելու ու կիրառելու:

Այստեղից, Հայաստանի Հանրապետության տարածքում Եվրասիական տնտեսական միության ակտերի նկատմամբ առաջնահերթությամբ օժտված է ՀՀ Սահմանադրությունը, սակայն իրավական նորմերի աստիճանակարգությանը համապատասխան այդ ակտերն ունեն գերակայություն ազգային օրենքների նկատմամբ:

**Ամփոփում**

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության և Եվրասիական տնտեսական միության ակտերի առավել ամբողջական հարաբերակցության վերաբերյալ կարելի է ձևակերպել հետևյալ բանաձևը. Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված Եվրասիական տնտեսական միության ակտերը չպետք է հակասեն Սահմանադրությանը, ինչը նշանակում է, որ այդ ակտերով ստանձնած միջազգային պարտավորությունները պետք է համապատասխանեն նույն Սահմանադրությանը, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում այդ ակտերն օժտված են գերակայությամբ ազգային օրենքների նկատմամբ:

*Հիմնաբառեր:* Եվրասիական տնտեսական միություն, իրավական ակտեր, իրավական համակարգ, Սահմանադրություն, Եվրասիական տնտեսական միության մարմիններ:

**Գրականություն**

1. Договор о Евразийском экономическом союзе. М.: 2015. С. 496
2. Кашкин С.Ю., Четвериков А.О. Право Евразийского экономического союза, М.: 2016, 191 стр.
3. Бекяшев К.А., Моисеев Е.Г. Право Евразийского экономического союза, М.: 2016, 160 стр.

## АКТЫ ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА В ПРАВОВОЙ СИСТЕМЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ВОПРОСЫ СООТНОШЕНИЯ

**Абраамян Абраам Арменович**
ЕРОА, кафедра правоведения, аспирант

**Резюме**

В настоящей статье изучаются вопросы места и значения актов Евразийского экономического союза в правовой системе РА. В частности, автор обращается к договору о Евразийском экономическом союзе от 29-го мая 2014 года и несколько десяткам соглашений, находящихся в непосредственной взаимосвязи с последним, а также к

решениям, принятым органами Союза. В статье представляются авторские подходы к этим актам в контексте правовых актов РА.

*Ключевые слова.* Евразийский экономический союз, правовые акты, правовая система, Конституция, органы Евразийского экономического союза.

## THE ACTS OF EURASIAN ECONOMIC UNION IN THE LEGAL SYSTEM OF REPUBLIC OF ARMENIA. THE ISSUES OF RELATIONSHIP

**Abraham Abrahamyan**
EREA, Chair of Law, Postgraduate student

### Summary

In this article studies the issues of the acts of place and significance of Eurasian Economic Union in the legal system of RA. Particularly, the author points out the contract about Eurasian Economic Union on the 29th of May, 2014 and several dozen agreements immediately related to the latter, as well as decisions made by these Union Bodies. This article presents author's approaches to those acts in the context of legal acts system of RA.

*Keywords:* Eurasian Economic Union, Legal Acts, Legal System, Constitution, Eurasian Economic Union Bodies

# ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԿՐՈՆԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ. ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

***Վահե Աշոտի Թորոսյան***
*ԵՊՏՀ, Իրավագիտության ամբիոն, ասպիրանտ*

Աշխարհիկ պետության հայեցակարգի ներդրումը Հայաստանի Հանրապետությունում անշուշտ ժողովրդավարական հասարակարգ կառուցելու անհրաժեշտ խթան է: Բայց նախքան աշխարհիկ դառնալը հարկ է նկատել թե ինչպիսի պատմական շրջափուլեր է թևակոխել Հայաստանը կրոնի և հոգևոր դասի նկատմամբ ունեցած վերաբերմունքի տեսանկյունից:

Այս առումով անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի պատմության սկզբնական շրջանից մինչև Հայաստանի երրորդ հանրապետության միջև ընկած ժամանակահատվածում աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերակցության փուլային նկարագրությունը, կարևորել նախաքրիստոնեական և հետքրիստոնեական հայկական պետության ձևի առանձնահատկությունները, բացահայտել պատմական կոնկրետ ժամանակահատվածում պետություն և քրմական դաս, ապա նաև պետություն և եկեղեցի առնչությունների էական խնդիրները: Ասվածի համատեքստում կարելի է պայմանականորեն առանձնացնել այդ փոխհարաբերությունների ու դրանց էվոլուցիոն զարգացման հետևյալ պատմական շրջափուլերը՝ 1) աստվածապետական շրջան, 2) թագավորի և քրմապետի պաշտոնների առանձնացման շրջան, 3) քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ճանաչման շրջան, 4) Հայաստանի առաջին հանրապետության շրջան, 5) աթեիզմի խորհրդային շրջան, 6) աշխարհիկ պետության ժամանակակից շրջան: Ընդ որում, այդ փուլերն ունեն իրենց զարգացման առանձնահատկություններն ու նշանակությունը: Մասնավորապես.

**1. Աստվածապետական շրջանի վերաբերյալ**. Հին Հայաստանում թագավորական իշխանության կողքին գոյություն ուներ մեկ այլ ազդեցիկ դաս՝ հանձին քրմական դասի: Քրմական դասին բնութագրական էր պետական կառավարման և հասարակական կյանքի տարբեր ոլորտներում ունեցած շոշափելի դերակատարությունը: Սկզբնական

շրջանում թագավորական ընտանիքն իր ձեռքում էր պահում քրմապետի պաշտոնը, թագավորը հանդես էր գալիս նաև որպես քրմապետ:

Շումերական հնագույն արձանագրություններում կան վկայություններ հայոց առաջին պետական կազմավորման՝ Արատտայի[1] մասին: Արատտան, որը շումերական դյուցազնավեպում հիշատակվում է որպես «սուրբ օրենքների և անմահների» երկիր, եղել է աստվածապետություն (թեոկրատիա), որում աշխարհիկ և հոգևոր իշխանությունը գտնվում էր հոգևոր դասի ձեռքում, որն էլ աստծո անունից կառավարում էր երկիրը[2]: Արատտայի արքան, որն իրեն համարում էր պատերազմի աստվածուհի Ինաննայի կողմից նշանակված արքա, միաժամանակ նաև երկրի գերագույն քուրմն էր: Նրան կից գործում էր բարձրագույն խորհրդակցական մարմին՝ Ավագների ժողովը, որի իշխանության ներքո գտնվում էին աշխարհիկ և հոգևոր ոլորտները: Աստվածապետությունը որպես պետության ձևի բնութագրիչ բնորոշ է եղել նաև Արատտային հաջորդած հայկական մյուս պետական կազմավորումներին: Վանի թագավորությունը ուներ իր պետական կրոնը, որը որպես տերության տարբեր ժողովուրդների երկրպագած աստվածությունների և հավատալիքների մի կուռ համակարգ՝ Հայկական լեռնաշխարհի բնակչության միաձուլմանը նպաստող հանգամանքներից մեկն էր[3]: Արարատյան թագավորության (Ուրարտու) իշխող հարստությունը կրոնապես կապված էր Խալդի պաշտամունքային կենտրոն Մուսասիրի տաճարի հետ: Թագավորը հանդիսանում էր գերագույն աստված Խալդիի ներկայացուցիչը և գործում նրա անունից:

Հասարակության արտոնյալ խավերից մեկը հանդիսացող քրմական դասը վայելում էր թագավորական իշխանության հովանավորությունը: Քրմերը գործում էին ուրարտական արքաների կառուցած տա-

---

[1] Արատտայի տեղադրության վերաբերյալ պատմագիտության մեջ չկա միասնական կարծիք: Տարբեր հեղինակներ այն տեղադրել են Աֆղանստանի, Իրանի և Հայաստանի տարբեր շրջաններում: Մեր դատողություններում որպես հիմք ընդունել ենք պատմաբաններ՝ Արտակ Մովսիսյանի և Մարտիրոս Գավուքչյանի տեսակետները Արրատայի տեղորոշման, պետական կառուցվածքի և այլ հարցերի վերաբերյալ:

[2] Տե՛ս, Արտակ Մովսիսյան. Հայոց 5000-ամյա պետականությունը. Գիտահանրամատչելի պատկերագիրք (երկրորդ բարեփոխված հրատարակություն) Էդիթ Պրինտ հրատարակչություն Երևան 2016թ. էջ 9:

[3] Տե՛ս, Ս. Գ. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը (Պատ. Խմբ.՝ Բ.Բ. Պիոտրովսկի) ՀԳԱ. Հնագիտության և ազգագրության ինստիտուտ- Երևան ՀԳԱ հրատ. 1990թ. էջ 9:

ճարներում, տնօրինում տաճարական սեփականություն հանդիսացող գույքը, որը հիմնականում գոյանում էր արքաների կատարած նվիրաբերություններից: Այդ պատճառով քրմական դասը անվերապահորեն ընդունում էր միապետի բացարձակ իշխանությունը և նրա գերակայությունը պետական և հասարակական կյանքի բոլոր ոլորտների նկատմամբ:

Այս շրջանի իրավական աղբյուրները արտահայտվել են սեպագիր արձանագրությունների տեսքով: Դրանք շարադրված են հիմնականում ժամանակին բնորոշ կրոնական պատկերացումների ոգով, որտեղ ամենախիստ իրավական պատասխանատվությունը համարվում էր աստվածային պատիժը:

**2. Թագավորի և քրմապետի պաշտոնների առանձնացման շրջանի վերաբերյալ**. Հայոց Երվանդունիների օրոք արմատական փոփոխություն է տեղի ունենում պետական կառավարման համակարգում՝ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերակցության տեսանկյունից: Եթե նախկինում հայոց թագավորը հանդես էր գալիս որպես քրմապետ-արքա, այժմ արդեն տարանջատում է մտցվում արքայի և քրմապետի պաշտոններում[4]: Մովսես Խորենացին վկայում է, որ Վաղարշակ թագավորը քրմապետի պաշտոնը ժառանգաբար հանձնում է հայկական հին ազգատոհմերից մեկին՝ Վահունիներին, որոնք իրենց համարում էին Վահագն աստծո հետնորդներ[5]:

Արքաները փորձում էին իրենց մերձավոր ազգականներին քրմապետ նշանակելու միջոցով կանխատեսելի դարձնել հեղինակավոր և ազդեցիկ այդ դասը: Թագավորի ազգականներին էր վերապահված նաև քրմական ծեսերի կատարումը: Մովսես Խորենացին վկայում է Երվանդ 4-րդ Վերջին թագավորի կողմից իր եղբայր Երվազին քրմապետ նշանակելու փաստը[6]: Մեկ այլ վկայությամբ Արտաշես Ա Բարե-

---

[4] Տե՛ս, Արտակ Մովսիսյան. Հայոց 5000-ամյա պետականությունը Գիտահանրամատչելի պատկերագիրք (երկրորդ բարեփոխված հրատարակություն) էդիթ Պրինտ հրատարակչություն Երևան 2016թ. էջ 29:

[5] Տե՛ս, Մովսէս Խորենացի Պատմութիւն հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն Երևան 1991թ. Գլ. Ը:

[6] Տե՛ս, Մովսէս Խորենացի Պատմութիւն հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն Երևան 1991թ. Գլ. Խ:

պաշտը իր որդի Մաժանին նշանակում է Արամազդի կուռքի քրմապետ[7]: Վերոհիշյալ վկայությունները առհավատչյան են այն պնդման, որ քրմապետության պաշտոնի նշանակումը անմիջանակորեն կախված էր թագավորի հայեցողությունից և քաղաքական դիրքի ամրապնդման նպատակ էր հետապնդում:

Քրիստոնեության տարածումը Հայաստանում հանդիպեց պետության կտրուկ դիմադրությանը: Պետությունը վերահսկողության տակ էր վերցնում ամբողջ հոգևոր դաշտը՝ սահմանելով կրոնը որպես իշխանության լծակներից մեկը, պայքարում այլախոհության դեմ: Ագաթանգեղոսը իր երկում մեջբերում է Տրդատ 3-րդ արքայի երկու հրովարտակները, որտեղ պատիժներ էին սահմանում նրանց նկատմամբ ովքեր կիարեին այլ կրոնի կամ կորդեգրեին հեթանոսությունից դուրս այլ դավանանք[8]:

Բնականաբար այս շրջանում նույնիսկ խոսք գնալ չէր կարող աշխարհիկ պետության որևէ բաղադրատարրի առկայության մասին: Խղճի և դավանանքի ազատության իրավունքը և առհասարակ կրոնական բազմակարծությունը ոչ միայն գոյություն չուներ այլ նաև չկար դրա սաղմնավորմանը նպաստող տեսանելի հեռանկար: Տրդատ թագավորի հրապարակած հրովարտակներից ինչպես նաև Դիոկղետիանոս կայսրի՝ Տրդատին ուղղված հրովարտակի բովանդակությունից հստակ երևում է, որ քրիստոնեությունը այդ շրջանում ուներ աղանդի կարգավիճակ և նրա նկատմամբ կար պետական ընդգծված դիմադրություն: Հետագայում քրիստոնեության ճանաչմամբ պարզապես մի ամբողջատիրական հավատամքը փոխարինեց մյուսին և արգելք դրվեց այլադավան ուղղությունների վրա: Հայ ականավոր իրավագետ Խ.Սամուելյանը ենթադրում է, որ Տրդատ Մեծի կողմից քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու քաղաքական ակտը «նոր կրոնի կենտրոնաձիգ հիերոկրատական սիստեմին» ապավինելու միջոցով թուլացած իշխանությունը հզորացնելու մտադրություն էր, որը սակայն Եկեղեցու հզորացմամբ այլ ընթացք ստացավ[9]:

---

7 Տե՛ս, Նույն տեղում, Գլ. ԾԳ:

8 Տե՛ս, Ագաթանգեղայ. Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանցի. Երևանի Համալսարանի հրատարակչություն Երևան 1983թ. էջ 83:

9 Տե՛ս, Խ. Սամուելյան Հին հայ իրավունքի պատմությունը հատոր 1, Արմֆան-ի հրատարակչություն Երևան 1939թ. էջ 41:

**3. Քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ճանաչման շրջանի վերաբերյալ**. Հայոց Արշակունիների թագավորության շրջանում քրիստոնեությունը հռչակվեց որպես պաշտոնական կրոն և պետական մակարդակով սկսվեց քրիստոնեության տարածումը: Եթե մինչ քրիստոնեության ընդունումը պետությունը դաժան հաշվեհարդար էր տեսնում այն դավանողների և քարոզողների նկատմամբ, ապա քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո աշխարհիկ և հոգևոր իշխանությունները միմյանց հետ դաշնակցած սկսեցին կատաղի պայքար մղել քրմական դասի և «կուռքերին պաշտողների» դեմ:

Քրիստոնեության հաղթարշավը ապա և պաշտոնական կրոնի կարգավիճակ ստանալը ըստ էության ոչինչ չփոխեց աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերակցության մեջ: Փոխվեց միայն հոգևոր սուբյեկտը, բայց փոխհարաբերությունների տրամաբանությունը մնաց նույնը: Եկեղեցական դասը քրմությունից ժառանգեց հոգևոր իշխանությունը: Ընդհանրապես հոգևոր դասը իր աստիճանակարգությամբ, ներքին կառուցվածքով, հարկեր գանձելու և հարկերից ազատված լինելու առանձնաշնորհի կարգավիճակով պետության ներսում հոգևոր միապետություն էր: Նրան էր տրված մեծ դատավարության գործակալությունը[10]: Պետությանը վերաբերող կարևորագույն հարցերը քննարկվում էին աշխարհաժողովներում, որոնց մասնակցում էին բարձրաստիճան նախարարներ, զինվորականներ, դատավորներ և այլք: Հատկանշական է, որ այս ժողովներում էր քննարկվում հոգևոր առաջնորդի ընտրության հարցը[11]:

Շատ դիպուկ է նկատում Մաղաքիա արք. Օրմանյանը. «…կաթողիկոսական իշխանութիւնը Հայոց մէջ պարզապէս եւ բացարձակապէս եկեղեցական չէր: Բոլոր հայրապետները յատուկ դիրք և յատուկ ձեռներէցութիւն կը վայելէին պետական գործերու մէջ, թե իբր Պահլաւունեաց կամ Պարթեվազանց տան նահապետ, թէ թագաւորական տոհմին արենակից եւ խնամի իշխանազուն, եւ թէ իբր եկեղեցական

---

[10] Տե՛ս, Հակոբ Մանանդյան. Ֆեոդալիզմը հին Հայաստանում, հրատարակություն Մելքոնյան ֆոնդի Երևան 1934թ. էջ 60:

[11] Տե՛ս, Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի. Երևանի համալսարանի հրատարակչություն Երևան 1987թ. էջ 72:

իշխանութեան պետ, որ հոգեւորական, կրթական, բարեգործական եւ դատական գործերու վրայ գերագոյն ձեռնհասութիւն ունէր»[12]:

Եկեղեցին իր ստեղծման օրվանից ստանձնեց արդարադատության իրականացման գործառույթը, որը պահպանեց նույնիսկ պետականության բացակայության պայմաններում: Եկեղեցական կանոնները որպես հասարակության ամենատարբեր ոլորտները կարգավորող իրավանորմեր, ընդունվում էին եկեղեցական ժողովներում: Այդ ժողովներն ըստ էության նաև ազգային ժողովներ էին, որովհետև շոշափում և քննարկում էին ինչպես հոգևոր-դավանական, այնպես էլ աշխարհիկ-կենցաղային բնույթի հարցեր և ենթակա էին պարտադիր կատարման ամբողջ Հայաստանի բնակչության կողմից: Խոսելով Աշտիշատի, Շահապիվանի, Աղվենի, Դվինի, Պարտավի, Սսի (1243թ.), Ձագավանի (1268թ.), Երուսաղեմի (1651թ.) ժողովների մասին և ընդգծելով դրանց ընդհանուր բնորոշիչ մի շարք հատկանիշներ, ինչպիսիք են՝ հրապարակայնությունը, գերակայությունը այլ որոշումների նկատմամբ, գաղափարական հստակ ուղղվածությունը, ազգային համաձայնությամբ ընդունվելու հանգամանքը պրոֆեսոր Գ. Հարությունյանը գալիս է այն համոզման, որ դրանք սահմանադիր ժողովներ էին[13]: Բացի բարձրագույն հոգևոր դասի անդամներից, դրանց մասնակցում էին նաև աշխարհիկ գործիչներ՝ նախարարական տան անդամներ, իշխաններ երբեմն նույնիսկ արքաներ: Փավստոս Բուզանդը Աշտիշատի ժողովի վերաբերյալ տալիս է հետևյալ բնորոշումը «...կարգեցին, կազմեցին, կանոնեցին, յօրինեցին»[14], որից պարզ է դառնում, որ այս ժողովները ոչ միայն հոգևոր բնույթի կանոններ էին սահմանում, այլև ինչպես «յօրինեցին» (օրենք) բառն է հուշում, իրականացնում էին օրինաստեղծ գործունեություն: Եկեղեցու իրավակարգավորիչ դերը մասնավորապես դրսևորվում էր ընտանեկան իրավունքի՝ ամուսնության,

---

[12] Տե՛ս, Մ. Օրմանեան, Ազգապատում, Հատոր Ա, գիրք Ա Բ Գ Ազգապատում Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած Ա. Հատոր, մասն Ա., Բ. Տպագրութիւն բարերարութեամբ՝ պրն՝ Տաճատ Սրապեանի, Պէյրութ, Տպ. Սեւան, 1959թ. էջ 93:

[13] Տե՛ս, Հարությունյան Գ.Գ. Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը եվ ժամանակի մարտահրավերները (խմբ. Գ.Դանիելյան, Ռ. Ավագյան, Կ. Միրումյան), վերահրատարակություն՝ (լրամշակումներով) Երևան, Նժար 2016թ. էջ 85:

[14] Տե՛ս, Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի. Երևանի համալսարանի հրատարակչություն Երևան 1987թ. էջ 118:

որդեծնության, ազգակցության աստիճանների, ծնողների ու զավակների փոխհարաբերությունների սահմանման մեջ[15]:

Սկզբնական շրջանում հայոց կաթողիկոսների ձեռնադրումը անմիջականորեն պայմանավորված էր հունական մետրոպոլիտի և Կեսարիայի եկեղեցական սինոդի համաձայնությամբ: Բայց հայոց Պապ թագավորը սկիզբ դրեց եկեղեցու ազգայնացմանը՝ առանց Կեսարիայի թույլտվության Շահակ Ա Մանազկերտցուն ձեռնադրելով հայոց կաթողիկոս: Փավստոսի վկայությունից երևում է, որ Պապի ժամանակ թերևս առաջին անգամ Հայաստանի քրիստոնեական պատմության մեջ ներդրվեց խղճի և դավանանքի ազատության, նախընտրած կրոնին հարելու իրավունքը: Արդյունքում մարդկանց մի մասը վերադարձավ հին հավատքին, յուրաքանչյուր ոք «զինչ և կամէին գործել, համարձակութեամբ գործէին»[16]: Պապը միաժամանակ վերացրեց պտղիի և տասանորդի հարկերը, հօգուտ արքունիքի բռնագրավեց եկեղեցուն պատկանող յոթ հողերից հինգը, թողնելով ընդամենը երկուսը մեկ քահանայի և մեկ սարկավագի համար, իսկ նրանց ազգականներին ծառայության մտցրեց արքունիքում: Մազդեզական կրոնը դավանող Պարսկաստանի հետ մերձեցումը անշուշտ պետք է ծայրահեղորեն սրեր մի կողմից թագավորի և եկեղեցու, մյուս կողմից թագավորի և բյուզանդական վերնախավի հարաբերությունները, ինչի հետևանքով Պապը դավադրաբար սպանվեց: Փաստ է մի բան, խղճի և դավանանքի ազատության իրավունքի հիման վրա նոր հասարակարգ կառուցելու Պապ թագավորի մշակած մոդելը, որտեղ յուրաքանչյուր ոք դավանում էր այն ինչ ցանկանում էր, աշխարհիկ պետություն ստեղծելու համարձակ տեսլական էր: Որքան էլ եկեղեցական մատենագիրները անվանարկեն Պապին, ամեն դեպքում մենք կարծում ենք, որ նրա ձեռնարկած ռեֆորմները աշխարհիկ և հոգևոր իշխանությունների ոլորտում այդ ժամանակների համար բավականին առաջադեմ էին և հավակնոտ: Խղճի և դավանանքի ազատությունը, որը վաղ միջնադարում, բնականաբար, դեռ չուներ իր իրավական ձևակերպումը, փաստորեն կենսագործվում էր՝ ապահովելով համընդհանուր կրոնական բազմակարծություն:

---

[15] Տե՛ս, Խ. Սամուելյան Հին հայ իրավունքի պատմությունը հատոր 1, Արմֆան-ի հրատարակչություն Երևան 1939թ. էջ 43:

[16] Տե՛ս, Փաւստոսի Բիզանդացւոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի. Երևանի համալսարանի հրատարակչություն Երևան 1987թ. էջ 352:

Քրիստոնեության պետական կրոնի կարգավիճակը պահպանվեց նաև Բագրատունյաց և Կիլիկյան Հայաստանում: Առանց հզոր աշխարհիկ իշխանության եկեղեցին չէր կարող պահպանել իր տնտեսական կայունությունը, միաժամանակ հուսալիորեն ապահովեր քրիստոնյա հոտի առաջնորդությունը: Եկեղեցին հանդես էր գալիս որպես թագավորական իշխանության հոգևոր հովանավոր: Կրոնավորական դասի բազմաքանակությունը, եկեղեցական ենթակառուցվածքների զարգացումը ուղիղ համեմատական էր լուսավորչական-միաբնակության դավանանքը մերժող ուղղությունների զսպմանը, դրանց անդամների հավատափոխությանը: Արտաքին հարաբերություններում եկեղեցին փորձում էր անխախտ պահել սեփական դավանական ուղեգիծը, չենթարկվել բյուզանդական պատրիարքների և կայսրերի ճնշումներին: Պետք է նկատել, որ Բյուզանդիայի կողմից սեփական եկեղեցու դավանանքը հայերին պարտադրելու պահանջը միայն նեղ կրոնական խնդիր չէր: Դավանաբանական-կրոնական հարցերը իրենց հերթին հետապնդում էին հեռուն գնացող քաղաքական նպատակներ. այն է՝ Հայաստանը հոգևոր ինքնուրույնությունից զրկելով պարարտ հող ստեղծել նրա ամբողջական նվաճման համար: Դա էր պատճառը որ տակավին 451թ. Քաղկեդոնի ժողովում «Քրիստոսի երկու բնությունների» հետ կապված կրոնական տարամետությունը նաև միջպետական հարաբերություններում ընգծված անջրպետ մտցրեց:

Խոսելով Բագրատունյաց թագավորության իրավական համակարգի մասին պրոֆեսոր Խ.Սամուելյանը նշում է, որ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» մեջ կան դրույթներ, որոնք կրում են Բագրատունյաց շրջանի իրավական համակարգի ազդեցությունը[17]: Թագավորական առանձին կարգադրագրեր իրենց ամրագրումն են գտել վիմական արձանագրություններում: Բացի դրանից պետության մեջ կիրառվել են նաև մի շարք օտար օրենքներ ու ժողովածուներ[18]:

Կիլիկյան Հայաստանում բացի սովորութային և կանոնական իրավունքից, իրավունքի աղբյուրներ են համարվում Դավիթ Ալավկաորդու կանոնները, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերը, ինչպես նաև օտար պետություններից փոխառնված օրենսգրքերը:

---

[17] Տե՛ս, Խ. Սամուելյան. Հին հայ իրավունքի պատմությունը հատոր 1, Արմֆան-ի հրատարակչություն Երևան 1939թ. էջ 138:

[18] Տե՛ս Торосян Х. Суд и процесс в Армении X-XIII вв. Е., 1985, էջ 44:

Կանոնական իրավունքի յուրօրինակ աղբյուր կարելի է դիտարկել Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը», որը կանոնախրատական ոգով գրված մի աշխատություն է՝ հասարակության ամենատարբեր դասակարգերի միջև հարաբերությունները կարգավորող նշանակությամբ:

Կիլիկյան Հայաստանում գործադիր իշխանությունը իրականցվում էր արքունի գործակալությունների միջոցով, որոնց պաշտոններում նշանակվում էին ոչ թե ժառանգականության սկզբունքով, այլ ունեցած անհատական հմտությունների և պաշտոնի համապատասխանելիության[19]: Արքունի քարտուղարը, որը կոչվում էր նաև ատենադպիր կամ ջանցլեր, որպես կանոն, հանդիսանում էր Սսի արքեպիսկոպոսը, թեև պատահում էր նաև, որ ատենադպիր նշանակվեր այլ բարձրաստիճան հոգևորական: Ջանցլերը նաև պետության արտաքին հարաբերություններում ազդեցիկ դերակատար էր, քանի որ մասնակցություն էր ցուցաբերում պետական դիվանագիտական աշխատանքներին, վարում էր բանակցություններ:

**4. Հայաստանի առաջին հանրապետության շրջանի վերաբերյալ**. Պետության կրոնի և իրավունքի հարաբերակցության որակապես նոր իրադրություն ստեղծվեց, երբ վեցդարյա պետության բացակայությունից հետո վերստին հիմնադրվեց հայոց պետականությունը: Առաջին հանրապետության գոյատևման դժվարին տարիներին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին լծվեց պետության կայացման ավանդական առաքելության իրագործմանը: Եկեղեցին, որ անիշխանության տարիներին մշտապես կրել էր հալածանքի ծանր լուծը, հայկական առաջին հանրապետության հովանու ներքո ստանում էր անկախ գործելու լայն հնարավորություն: Հարկ է նկատել, որ առաջին հանրապետության ղեկավար գործիչների մեջ մեծ թիվ էին կազմում Գևորգյան հոգևոր ճեմարանի շրջանավարտները և ուսուցիչները[20]: Պետության և եկեղեցու իրավական հարաբերությունների կարգավորման համար ընդունվեց մի ժամանակավոր դաշնագիր, որի բովանդակային տրամաբանությունը բխում էր եկեղեցու և պետության բարեկամական հարաբերություններից: Դաշնագրի առաջին կետը սահմանում էր. «Հայ Առա-

---

[19] Տե՛ս, Ս.Վ. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում 12-14-րդ դարերում Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն Երեվան 1973թ. էջ 68:

[20] Սիմոն Վրացյան, Նիկոլ Աղբալյան, Ավետիս Ահարոնյան և այլք:

քելական Մայր Եկեղեցին օրհնում է Հայաստանի Հանրապետության օրինական վեհապետական իշխանությունը, իսկ Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է Մայր Աթոռի և Նորին Վեհափառության՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախամեծար ու գերիշխան իրավունքները ազգային-եկեղեցական և կրոնաբարոյական խնդիրներում»[21]: Դաշնագրի երկրորդ կետով ամրագրվում էր. «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին հայտարարվում է գերիշխանությունից անկախ, որով և վավերացնում էր իր տնտեսական գործունեության կառավարումը»[22]: Բացի այդ, Դաշնագիրը լայն ազատություններ էր տալիս եկեղեցուն՝ կրթա-դաստիարակչական գործառույթը իրականացնելու համար: Եկեղեցին կարող էր բացել դպրոցեր և կրոնա-բարոյական հաստատություններ, ունենալ կառավարությանը առընթեր լիազոր ներկայացուցիչ, պետական միջամտությունից անկախ եկեղեցական պաշտոնական հրատարակություններ և այլն:

**5. Աթեիզմի խորհրդային շրջանի վերաբերյալ**. Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին Խորհրդային Միության գոյության յոթ տասնամյակների ընթացքում կրեց պետության տոտալիտար վերահսկողության բոլոր հետևանքները, զրկվելով հավատացյալ անդամների կրոնական պահանջմունքները ազատորեն բավարարելու իրավունքից: Թեև Խորհրդային Միության Սահմանադրությունը երաշխավորում էր ցանկացած կրոն դավանելու կամ ոչ մի կրոն չդավանելու իրավունքը այդուհանդերձ պետության վարած քաղաքականությունը, այս ոլորտում, տուրք էր տալիս աթեիստական քարոզչության ծավալմանը՝ խախտելով մարդկանց սահմանադրորեն ամրագրված խղճի ազատության իրավունքը: Սոցիալիստական հասարկարգի կառուցումը և դասակարգերի վերացման հեռակա տեսլականը անշուշտ պետք է կոտրեր «ցարիզմի» ժամանակ արմատավորված տարատեսակ սովորույթներ և իրավանորմեր, որոնցից մեկը կրոնականն էր[23]:

---

[21] Տե՛ս, Սանդրո Բեհբուդյան, Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը առաջին հանրապետության տարիներին ԱԿՏ , 2 դեկտեմբեր. 1920, Երևան 1999թ. էջ 516-517 :

[22] Տե՛ս, Սանդրո Բեհբուդյան, Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Ե, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը առաջին հանրապետության տարիներին ԱԿՏ , 2 դեկտեմբեր. 1920, Երևան 1999թ. էջ 516-517:

[23] Ցարական Ռուսաստանը իր պաշտպանության տակ էր վերցնում կրոնը: Օրենսդրությամբ սահմանված չէր նույնիսկ խղճի ձևական ազատություն, արգելվում էր աթեիզ-

Հայաստանի առաջին հանրապետության վերացումը, դրա հետևանքով նաև նրա խորհրդայնացումը, պատմական նոր շրջափուլի մեկնակետը հանդիսացավ: 1920 թվականի դեկտեմբերի 17-ին Հայաստանի հեղկոմի որոշմամբ դպրոցը անջատվեց եկեղեցուց, իսկ դեկտեմբերի 19-ին բռնագրավվեցին Էջմիածնի վանքի շենքերն ու ունեցվածքի մի մասը, այդ թվում նաև Ճեմարանի շենքը[24]: Հետագայում քանդվեցին հարյուրավոր եկեղեցիներ որոնցից մնացին միայն 4-ը, իսկ 800-ը փակվեցին վարչական եղանակով: Ստեղծվեցին եկեղեցու ոչնչացմանը միտված մի քանի կազմակերպություններ [25]:

Սոցիալիստական շինարարության ժամանակաշրջանում աթեիզմի պրոպագանդման բովանդակությունը, ձևերն ու մեթոդները սահմանող կարևորագույն փաստաթուղթ հանդիսացավ նշանավոր բոլշևիկ Վ.Ի. Լենինի «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» հոդվածը (1922թ.), որտեղ ասվում էր, որ անհրաժեշտ է ժողովրդական զանգվածներին տալ ամենաբազմազան նյութեր աթեիստական պրոպագանդայի վերաբերյալ, արթնացնելու նրանց կրոնական քնից, թափահարելու նրանց ամենաբազմազան կողմերից, ամենատարբեր եղանակներով և այլն[26]:

---

մի տարածումը, իսկ աստվածաանարգությունը ենթակա էր դատական հետապնդման: Կրոնական կազմակերպությունները բաժանվում էին չորս խմբի: Առաջին խումբը ներկայացնում էր ռուսական ուղղափառ եկեղեցին, որը տիրապետող էր, պետական: Այն կառավարում էր պետական մարմինը՝ սուրբ սինոդը, իսկ ֆինանսավորումը ապահովում էր ցարական գանձարանը: Երկրորդ խումբը կազմում էին կրոնական այնպիսի կազմակերպություններ, որոնց պաշտպանում էր ինքնակալությունը, բայց դրանք պետական հոգածություն ստանալու առումով զիջում էին ռուսական ուղղափառ եկեղեցուն: Դրանց թվին էին դասվում կաթոլիկական, լյութերական, ռեֆորմատորական, հայ-գրիգորյանական եկեղեցիները և այլն: Երրորդ խմբին դասվում էին կրոնական այն կազմակերպությունները, որոնց գոյությունը թույլատրվում էր, բայց նրանք պետության ոչ մի աջակցությունից չէին օգտվում, ինչպես օրինակ՝ բապտիստները մենոնիստները: Վերջապես, մի ամբողջ շարք կրոնական հոսանքներ, որոնք բացահայտորեն հակադրվում էին ուղղափառ եկեղեցուն, հալածվում էին ինքնակալության կողմից (դուխոբորներ, մոլոկաններ, անտերտերականներ և այլն):

[24] Տե՛ս, Արուսյակ Տերչանյան. Հայ առաքելական եկեղեցին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Նոր կյանք ինստիտուտ հրատարաչություն Երևան 2001 էջ 19:

[25] Տե՛ս, Վ, Ենգիբարյան, Ա Չախոյան, Հոգևոր իրավունքի հիմունքներ.ՀՀ դատավորների միություն, խմբ. Արթուր Սարկավագ Սարգսյան. Երևան անտարեs 2011թ. էջ 45-46:

[26] Տե՛ս, Գիտական Աթեիզմ, երկրորդ հրատարակություն «Հայաստան» Հրատարակչություն Երևան 1980թ էջ 220:

1922թ. ընդունված ԽՍՀՄ առաջին սահմանդրությունը հռչակեց եկեղեցու անջատումը պետությունից, իսկ դպրոցը եկեղեցուց: Սահմանադրության 52-րդ հոդվածով հաստատվում էր. «ԽՍՀՄ քաղաքացիների համար երաշխավորվում է խղճի ազատություն, այսինքն՝ ցանկացած կրոն դավանելու կամ ոչ մի կրոն չդավանելու, կրոնական պաշտամունքային ծեսեր կատարելու կամ աթեիստական պրոպագանդա մղելու իրավունք: Կրոնական հավատալիքների առնչությամբ թշնամանք և ատելություն և ատելություն հրահրելն արգելվում է»[27]: Խորհրդային Միությունում քաղաքացիները կարող էին կրոն ուսուցանել ու կրոն սովորել մասնավոր կարգով: Ծնողներին չէր արգելվում իրենց երեխաներին կրոն ուսուցանել տանը, սակայն նման ուսուցումը չպետք է կրեր դպրոցական տիպի խմբակային պարապունքի բնույթ: ԽՍՀՄ-ում դպրոցի եկեղեցուց անջատված լինելը նշանակում էր ժողովրդական կրթության ու դաստիարակության գործի վրա կրոնական կազմակերպությունների որևէ ազդեցության անթույլատրելիություն[28]: Խորհրդային օրենքները կրոնական միավորումներին և պաշտամունքի սպասավորներին արգելում էին հավատացյալների աղոթաժողովներն ու այլ հավաքույթներն օգտագործել պետության շահերի դեմ ուղղված քաղաքական ելույթների համար, հավատացյալներին ստիպել հրաժարվելու իրենց քաղաքացիական պարտականությունները կատարելուց և խորհրդային օրենքներով նրանց տրված իրավունքներն իրագործելուց[29]:

1930-ականներին ստալինյան բռնաճնշումների զոհ գնացին բազմաթիվ հոգևորականներ, այդ թվում, Խորեն Ա. Մուրադբեկյան կաթողիկոսը (1932-1938թթ.), ով սպանվեց իր առանձնասենյակում՝ խորհրդային գործակալների ձեռքով[30]: Երկրորդ աշխարհամարտի տարիներին Խորհրդային ղեկավարությունը մեղմացրեց իր կոշտ դիրքորոշումը եկեղեցու նկատմամբ և սիրաշահման քաղաքականություն վարեց: Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի Նախագահությունը որոշում

---

[27] Տե՛ս, Վ. Ենգիբարյան, Ա. Չախոյան, Եկեղեցի պետություն եվ հասարակություն Երևան 2009թ. էջ 16:

[28] Տե՛ս, Վ. Ենգիբարյան, Ա. Չախոյան, Եկեղեցի պետություն եվ հասարակություն Երևան 2009թ. էջ 20:

[29] Տե՛ս, Վ. Ենգիբարյան, Ա. Չախոյան, Դավանանքի իրավունք Երևան անտարես 2008 էջ 37:

[30] Տե՛ս, Վ,Ենգիբարյան, Ա Չախոյան, Հոգևոր իրավունքի հիմունքներ.ՀՀ դատավորների միություն, խմբ. Արթուր սարկավագ Սարգսյան. Երևան անտարես 2011թ. էջ 46:

ընդունեց «1940 թվին Էջմիածնի վանքի տերիտորիայում եկեղեցական ժողով հրավիրել՝ արտասահմանյան թեմերի ներկայացուցիչների մասնակցությամբ[31]: Եկեղեցու կողմից կազմակերպվեցին հանգանակություններ, որոնց արդյունքում ստեղծվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը, որը օժանդակեց խորհրդային բանակին ֆաշիզմի ջախջախման գործում[32]:

**6. Աշխարհիկ պետության ժամանակակից շրջանի վերաբերյալ.** Խորհրդային Միության փլուզման տրամաբանական շարանուակությունը հանդիսացող անկախության ձեռքբերումը օրակարգային դարձրեց պետության և կրոնական կազմակերպությունների միջև նոր փոխհարաբերությունների վերստեղծումը: ՀՀ Անկախության հռչակագիրը սահմանեց խղճի ազատության սկզբունքը, ինչպես նաև, ՀՀ քաղաքացիների իրավահավասարությունը՝ անկախ ազգությունից, ռասայական պատականելությունից և դավանանքից[33]: 1991թ. ընդունվեց մինչև օրս գործող «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որը ամրարգրեց ՀՀ քաղաքացիների խղճի ազատության իրավունքը՝ դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն[34], սահմանեց օրենքի առջև նրանց հավասարությունը՝ անկախ կրոնի նկատմամբ իրենց վերաբերմունքից կամ կրոնական պատկանելությունից[35]: Անկախության հռչակագիրը դարձավ այն բազիսային իրավական փաստաթուղթը, որի հիմքի վրա 1995թ. հուլիսի 5-ին ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը: 1995թ. Սահմանադրության տեքստում թեև սահմանավում էր մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքը[36], այնուամենայնիվ բաց էր

---

[31] Տե՛ս, Արուսյակ Տերչանյան. Հայ առաքելական եկեղեցին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Նոր կյանք ինստիտուտ հրատարաչություն Երևան 2001 էջ 30-31:

[32] Տե՛ս, Արուսյակ Տերչանյան. Հայ առաքելական եկեղեցին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Նոր կյանք ինստիտուտ հրատարաչություն Երևան 2001 էջ 45:

[33] Տե՛ս, ՀՀ Անկախության հռչակագիր (ընդունվել է՝ 1991թ. օգոստոս 23, սկզբնաղբյուրը՝ http://www.gov.am/am/independence/):

[34] Տե՛ս, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը Հդ. 1 (ընդունվել է՝ Ն-0333-1, 17.06.1991թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀ ԳԽՏ 1991/12 ):

[35] Տե՛ս, «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը ՀԴ. 2 (ընդունվել է՝ Ն-0333-1, 17.06.1991թ., սկզբնաղբյուրը՝ ՀՀ ԳԽՏ 1991/12 ):

[36] Տե՛ս, ՀՀ Սահմանադրություն (ընդունվել է՝ 05.07. 1995թ., սկզբնաղբյուրը՝ http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=1):

թողնված պետության և կրոնական կազմակերպությունների փոխգործակցության հիմնահարցը: «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը իր նախաբանում, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն վերապահեց ազգային եկեղեցու կարգավիճակ, որը իր սահմանադրաիրավական ամրագրումը ստացավ Սահմանադրության 2005, այնուհետև 2015 թվականների փոփոխություններով՝ պետության աշխարհիկությունը դիտարկելով սահմանադրական կարգի առանցքային սկզբունքներից մեկը:

Այսպիսով՝ ներկայացված դիտարկումների արդյունքներով պայմանավորված, կարելի է ներկայացնել հետևյալ եզրահանգումները.

ա) Հայ ժողովուրդը պատմականորեն մեծ տեղ է հատկացրել կրոնին, կարևորել վերջինիս դերը իր հավատամքային պահանջմունքների բավարարման հարցում: Հայաստանի պատմության մեջ կրոնի և նրա ենթակառուցվածքների հանդեպ որդեգրած դիրքորոշումը խիստ բազմաբովանդակ է: Այս իմաստով հայկական պետությունը անցել է միմյանց տրամագծորեն հակադրվող փուլեր՝ դրանցից յուրաքանչյուրում ունենալով իր ձեռքբերումները և կորուստները: Քրմապետության տարանջատումը արքայի պաշտոնից առաջին կառուցվածքային տեղաշարժը եղավ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների առնչությունների հարցերում, որով և ավարտվեց աստվածապետության երկարատև շրջանը:

բ) Պետությունը իր հովանու տակ առնելով քրիստոնեությունը, որոշ բացառություններով, նրա հետ հաստատեց գործընկերային հարաբերություններ՝ պայքարելով կրոնական բազմակարծության դեմ:

գ) Առաջին հանրապետության գոյության երկդարյա շրջանը նախանշվեց պետություն-եկեղեցի բարեկամական փոխհարաբերությունների ակտիվ կառուցմամբ, որը սակայն ընդմիջվեց խորհրդային աթեիզմի գաղափարախոսության պայմաններում:

դ) Ժամանակակից փուլում Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է աշխարհիկ պետություն, որտեղ յուրաքանչյուր ոք ունի մտքի խղճի, կրոնի ազատության իրավունք: Կարծում ենք, որ պետության զարգացման նման ձևաչափը համադրելի է ժողովրդավարական, ինքիշխան, իրավական պետության կառուցման տեսլականի հետ:

**Ամփոփում**

Հոդվածը նվիրված է հայկական պետության սկզբնավորման ժամանակներից մինչև նորանկախ հանրապետության շրջանը՝ պետության, կրոնի և իրավունքի հարաբերակցության որոշ առանցքային հիմնախնդիրների վերլուծությանը: Սույն հարաբերությունների համատեքստում հստակեցվում են միմյանց հաջորդող վեց պատմաշրջանները: Պատմական և իրավական փաստերի վերհանման և դրանց վերլուծության միջոցով բացահայտվում է պետության որդեգրած դիրքը՝ հոգևոր կառույցների, կրոնավոր դասի և առհասարակ կրոնի նկատմամբ:

*Բանալի բառեր:* կրոն, աթեիզմ, աշխարհիկ պետություն, եկեղեցի, քրմական դաս, իրավունք:

## SOME ASPECTS ON CORRELATION OF STATE, RIGHT AND RELIGION: HISTORICAL LEGAL ANALYSIS

**Vahe Torosyan**
EREA, Chair of Law, Postgraduate student

**Summary**

The article is devoted to the analysis of the key issues of the relationship between state, religion and law, from the time of the Armenian statehood to the period of the newly- independent republic. Six successive historical periods are defined in the context of these relations. Through the exposure of historical and legal facts and their analysis, the state's attitude is revealed in terms of religious class and institutions and religion on the whole.

*Keywords.* religion, atheism, secular state, church, Clergyman class, right.

# НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ВЗАИМОДЕЙСТВИЯ ГОСУДАРСТВА, ПРАВА И РЕЛИГИИ: ИСТОРИКО-ЮРИДИЧЕСКИЙ АНАЛИЗ

**Торосян Ваге Ашотович**
ЕРОА, кафедра правоведения, аспирант

**Резюме**

Статья посвящена анализу ключевых вопросов взаимоотношений между государством, религией и правом со времен армянского государства до периода новой независимой республики. В контексте этой взаимосвязи проясняются шесть последовательных периодов. Благодаря раскрытию исторических и правовых фактов и их анализу, положение государства как духовного существа, религиозного класса и религии в целом раскрывается.

*Ключевые слова:* религия, атеизм, светское государство, церковь, Жреческий класс, право.

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԻԿՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

***Վահե Աշոտի Թորոսյան***
*ԵԿՏԱ, Իրավագիտության ամբիոն, ասպիրանտ*

Ժամանակակից աշխարհում կրոնը հանդիսանում է անհատի աշխարհայացքի ձևավորման ամենաազդեցիկ երևույթներից մեկը: Կրոնը կարևորագույն ազդեցություն ունի աշխարհի տարբեր ժողովուրդների հասարակական կյանքում, նրանց ազգային բնութագրի ձևավորման գործում: Բայց կրոնը ցավոք երբեմն դառնում է նաև միջազգային հակամարտությունների և քաղաքական վայրիվերումների շարժիչ ուժը: Դա է թերևս պատճառը, որ պետությունները անկախ կառավարման ձևից պետական մեխանիզմում շատ հաճախ նախատեսում են պաշտոններ կրոնական գործերով խորհրդատուների, կրոնագետների համար, խիստ զգուշավորություն են դրսևորում կրոնի և կրոնական կազմակերպությունների հետ ունեցած հարաբերությունների բնագավառում պետական քաղաքականություն մշակելիս:

Այսօր՝ պետության և կրոնի իրավական հարաբերությունների ճշգրտման և կանոնակարգմանն ուղղված մոտեցումները լիարժեք չեն ուրվագծում այդ հարաբերությունների իրական սահմանները: Տեսաիրավական գրականությունում պետության մեջ կրոնի ներգրավվածության աստիճանից ավանդաբար հիշատակվում է պետության երեք ձև՝ աստվածապետություն, կրոնապետություն և աշխարհիկ պետություն: Այս ձևաչափը կարծում ենք համապարփակ չի ընգրկում և չի ամբողջացնում կրոնի ունեցած դերի համատեքստում պետության ձևի բնութագիրը: Հարկ է նկատել, որ կրոնի ինստիտուտը ոչ միայն իրավական, այլև բարոյական, փիլիսոփայական ֆենոմեն է և յուրաքանչյուր պետություն յուրովի է ձևավորում իր վերաբերմունքը կրոնի հանդեպ, սահմանում սեփական «խաղի կանոնները»:Անցկացվող հետազոտության մեջ հարկ է դիմել համեմատական-իրավական մեթոդին, կրոնական կազմակերպությունների և պետության փոխգործակցության խնդիրների լուծման արտասահմանյան փորձը դիտարկելիս:

Այսպես՝ կրոնի հանդեպ որդեգրած պետական քաղաքականության, կրոնական կազմակերպությունների իրավական կարգավիճակի սահմանման, իրավական համակարգում կրոնական նորմերի և դոգմաների պոզիտիվացման կամ դրանց անթույլատրելիության տեսանկյունից մենք առանձնացնում ենք պետության հետևյալ տեսակները՝ 1) աստվածապետություն, 2) կղերապետություն(կրոնապետություն), 3) աթեիստական պետություն, 4) կիսակրոնական կամ կիսաաշխարհիկ պետություն, 5) աշխարհիկ պետություն:

1) Աստվածապետություն: Սա պետության այն ձևն է, որտեղ կրոնական կազմակերպություններից մեկը հանդիսանում է որպես պետական իշխանություն և ունի իշխանական իրավասությունների իրականացման որոշակի նպատակներ, խնդիրներ, գործառույթներ, և մեթոդներ: Այլ կրոնական կազմակերպությունները արգելվում են կամ ենթարկվում հալածանքների: Իրավագիտության դոցենտ Մ. Լ. Վորոնկովան նշում է որ. «Աստվածապետական պետությունում կրոնական միավորումներից մեկը առանձնացված չէ պետությունից և նրա նկատմամբ ընդդիմադիր դիրք չի գրավում»:[1] Այդպիսի պետությունում քաղաքացին չունի ոչ միայն կրոնի, այլև աշխարհայացքի ազատ ընտրության իրավունք. նա պարտավոր է դավանել պետության կողմից սահմանված կրոնը: Ժամանակակից աշխարհում միակ այդպիսի պետությունը Վատիկանն է: Այն ստեղծվեց 1929թ. փետրվարի 11-ին Բենիտո Մուսոլինիի և Պիոս 11-րդ պապի միջև կնքված համաձայնագրով (Լատերանի Կոնկորդատ)[2]: Վատիկանում, որտեղ պետության աշխարհիկ և հոգևոր առաջնորդը Հռոմի Պապն է, Սուրբ Աթոռը միջազգային իրավունքին համապատասխան ունի ինքնիշխան սուբյեկտի կարգավիճակ: Հայ իրականության մեջ աստվածապետություններ են եղել հին հայկական պետական կազմավորումները:Արատտան, որը շումերական դյուցազնավեպում հիշատակվում է որպես «սուրբ օրենքների և անմահների» եղել է աստվածապետական (թեոկրատական) պետություն, որում աշխարհիկ և հոգևոր իշխանությունը

---

1 Տե՛ս, Воронкова М.Л. Конституционные основы светского государства в Российской Федерации: дис. Канд.юрид. наук 12,00,02 Саратов 2006 с 36:

2 Տե՛ս, Աստվածները մեռնում են, գիտա-աթեիստական տարեգրություն Հայաստանի պետական հրատարակչություն, Երևան 1962թ. էջ 151

գտնվում էր հոգևոր դասի ձեռքում, որն էլ Աստծո անունից կառավարում էր երկիրը[3]:

2)Կղերական պետություն: Կղերական պետության իշխանությունը որևէ կրոնական կազմակերպությանը բացահայտորեն օժտում է առանձին պետական լիազորություններով: Այդպիսի պետություններում հաճախ պաշտոնապես սահմանվում է պետական կրոն, և նրա կրոնական առաջնորդները մտնում են պետական իշխանության մարմինների կազմի մեջ, կամ պետական իշխանության մարմինների ներկայացուցիչներին շնորհվում է նաև կրոնական կարգավիճակ: Ինչպես և աստվածապետական պետությունում, այնպես էլ կղերականում, կրոնական կազմակերպությունների և պետության ազդեցության և լիազորությունների ոլորտները հատվում են կամ լիովին համընկնում: Շատ պետություններ գտնվում են աստվածապետական և կղերական պետությունների եզրագծում (Իրանի Իսլամական Հանրապետություն, Սաուդյան Արաբիայի Թագավորություն, Պակիստանի Իսլամական Հանրապետություն, Սոմալիի Հանրապետություն, Կատարի Արաբական Էմիրություն և այլն):

Դրանց մեջ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում տնտեսապես առավել զարգացած երկրները, ինչպիսիք են՝ Իրանն ու Սաուդյան Արաբիան: Սաուդյան Արաբիայում իրավունքի և կյանքի ողջ դասավորվածության գլխավոր աղբյուրը Ղուրանն է, իսկ ըստ իրավական ուժի երկրորդ նորմատիվ իրավական ակտը՝ «Սաուդյան Արաբիայի Թագավորության Հիմնական նիզամը (դրույթ)»: Հիմնական նիզամի 1-ին հոդվածի համաձայն՝ «Սաուդյան Արաբիայի Թագավորությունը, ինքնիշխան արաբական իսլամական պետություն է: Նրա կրոնը իսլամն է, Սահմանադրությունը՝ Բարձրյալ Ալլահի Գիրքը և նրա Մարգարեի սուննան, թող օրհնի նրան Ալլահը, լեզուն՝ արաբերենը, մայրաքաղաքը՝ Էր-Ռիադը»: 7-րդ հոդվածը սահմանում է. «Սաուդյան Արաբիայի Թագավորությունում իշխանությունը հիմնված է Բարձրյալ Ալլահի Գրքի և նրա Մարգարեի սուննաի վրա, որոնք հանդիսանում են տվյալ դրույթի և այլ պետական ակտերի հիմքը»:[4] Սաուդյան Արաբիայում պաշտո-

---

[3] Տե՛ս, Արտակ Մովսիսյան. Հայոց 5000-ամյա պետականությունը. Գիտահանրամատչելի պատկերագիրք /երկրորդ բարեփոխված հրատարակություն/ Էդիթ Պրինտ հրատարակչություն Երևան 2016թ. էջ 9

[4] Տե՛ս, Конституциа государств Азии/под ред. Хабриев Г.-М: Институт законодательства и сравнительного правоведения при правительсьтве РФ Норма 2010 с492:

նական և միակ կրոնը իսլամն է, մնացած բոլոր կրոններն արգելված են: Քաղաքացիների անցումը իսլամից մեկ այլ կրոնի պատժվում է մահապատժով: Սաուդյան Արաբիա մեկնող օտարերկրացիների մուտքի արտոնագրում առկա է դավանանքի մասին տող, քանի որ բացի իսլամի հետևորդներից, մահմեդական սրբազան քաղաքներ Մեդինա և Մեքքա նրանց մուտքն արգելվում է:

Ինչ վերաբերում է Իրանի Իսլամական Հանրապետությանը, ապա այստեղ նույնպես օրենքների ընդունումը պայմանավորված է Շարիաթի նորմերի պահպանմամբ: Այսպես, Իրանի Սահմանադրության 12-րդ հոդվածի «Իրանի պաշտոնական կրոն է հանդիսանում ջաֆարիական ուղղվածության իսլամը, որը ճանաչում է տասներկու իմամների գոյությունը, և այդ սկզբունքը ընդմիշտ կմնա անփոփոխ: Իսլամական այլդավանանքներ, մասնավորապես, հանաֆիտականը, շաֆիիթականը, մալիկիթականը, հանբալիթականը, զեյդիթականը արժանի են լիակատար հարգանքի»:[5] Իրանի բարձրագույն ղեկավարը (Ռահբարը) հանդիսանում է հոգևոր առաջնորդը, ընտրվում է կառավարման հիմնական մարմիններից մեկի՝ Փորձագետների խորհրդի կողմից: Բացի Փորձագետների խորհրդից գոյություն ունի նաև Սահմանադրության Պահապանների Խորհուրդը, որը վերահսկողություն է իրականացնում Մեջլիսի(խորհրդարանի) նկատմամբ: Խորհուրդը ինքնին չի մշակում օրինագծեր, սակայն այն ստուգում է Մեջլիսի յուրաքանչյուր օրինագծի համապատասխանությունը Շարիաթի օրենքներին և Սահմանադրությանը: Օրինագիծը Խորհրդի կողմից կարող է մերժվել, եթե հակասում է Սահմանադրությանը կամ Շարիաթին:

Անհրաժեշտ է նկատել, որ Իրանի Սահմանադրության 13-րդ հոդվածում բացի իսլամից ճանաչվում են միայն երեք կրոններ. «Իրանական զրադաշտականները, հուդայականները և քրիստոնյաները, որոնք հանդիսանում են կրոնական փոքրամասնություններ և կարող են ազատ իրականացնել իրենց կրոնական ծեսերը օրենքի շրջանակներում և քաղաքացիական գործերում կրոնական դաստիարակության տեսանկյունից ղեկավարվել համաձայն իրենց ուսմունքի»:[6]

Ներկայումս, իսլամը հանդիսանում է արաբական պետությունների մեծամասնության քաղաքական-գաղափարական հիմքերից մեկը:

---

5 Տե՛ս, Хачим Ф.И. Конституционное право стран Ближнего Востока РУДН 2001 с 34

6 Տե՛ս, նույն տեղում էջ՝ 35

Մի կողմից այն նպաստում է քաղաքական ռեժիմների կայունացմանը, իսկ մյուս կողմից ստեղծում է հասարակական կյանքի մի շարք ոլորտներում տարատեսակ հակասություններ:

Մահմեդականության սահմանումը որպես պետական կրոն բնորոշ է բնակչության միադավան կազմ ունեցող պետություններին: Այդ երկրների պետական կառուցվածքում կրոնը մեծ դեր է խաղում, օրենսդրական ակտերում առկա են կրոնական նորմեր (Շարիաթ), Հարկ է նշել, որ արաբական պետությունների քաղաքական կյանքում զգալի դեր ունեն ավանդույթները: Արաբական երկրների մեծ մասի Սահմանադրություններում ամրագրված է հավատարմությունը հասարակության բարոյահոգեբանական ամուր պատվանդան հանդիսացող իսլամի ավանդույթներին:

Կղերական պետությունում կրոնի և իրավունքի փոխադարձ կապը արտահայտում է իրավունքի փոխարինումը կրոնական նորմերով: Արաբական Միացյալ Էմիրությունների Սահմանադրության 7-րդ հոդվածը սահմանում է. «Իսլամը միության պաշտոնական կրոնն է, իսկ Շարիաթը՝ օրենսդրության պաշտոնական աղբյուրը»[7]: Սոմալիի Սահմանադրության 2.3-րդ հոդվածը սահմանում է. «Շարիաթի ընդհանուր սկզբունքներին չհամապատասխանող օրենքը չի կարող ընդունվել»[8]:

Շատ հակասական դրույթ է ամրագրված Իրաքի Սահմանադրության մեջ. «ոչ մի օրենք չի կարող ընդունվել, եթե այն հակասում է Իսլամի սահմանված նորմերին, ոչ մի օրենք չի կարող ընդունվել, եթե այն հակասում է ժողովրդավարության սկզբունքներին»[9]: Ինչպես երևում է Իսլամի նորմերը հավասարեցվում են ժողովրդավարության սկզբունքներին:

Իսրայելը կրոնի հարցում որդեգրած իր քաղաքականությամբ առավելապես բնութագրվում է որպես կղերապետություն: Կրոնը պատմականորեն հանդիսացել է հրեա ժողովրդի կենսագոյության պաշտպանական վահանը և հազարամյակներ շարունակ առաջնորդել նրանց: Պաշտոնական Սահմանադրության բացակայության պայմաններում Իսրայելի Հանրապետության իրավական համակարգում առաջ-

---

7 Տե՛ս, Конституциа государств Азии/под ред. Хабриев Г с 424

8 Տե՛ս, Временная конституция Сомали 2012 01,08,2012 URL: http://worldconstitutions,ru/?p=777

9 Տե՛ս, Конституциа государств Азии/под ред. Хабриев Г с 192

նային տեղ են զբաղեցնում Անկախության հռչակագիրը և պետության հիմնական օրենքները: Անկախության հռչակագիրը երաշխավորում է քաղաքացիների խղճի և դավանաքի ազատության իրավունքը, ինչպես նաև նրանց իրավահավասարությունը՝ առանց կրոնի, ռասայի և սեռի խտրականության[10]: Թեև հուդայականությունը պետության մեջ չունի պաշտոնական կրոնի կարգավիճակ, այնուամենայնիվ այն հսկայական դեր է խաղում հասարակության անդամների ինքնագիտակցության և աշխարհընկալման ձևավորման գործում: Իսրայելի Հանրապետության որպես կրոնապետության հիմնական բնորոշ հատկանիշը հանդիսանում է իրավունքի աղբյուրներում կրոնական իրավունքի (Թորա, Թալմուդ) առկայությունը: Աշխարհիկ դպրոցներից բացի Իսրայելում գոյություն ունեն պետական կրոնական դպրոցներ, որտեղ պարտադիր ուսուցանվում է Թորան: Դատական համակարգում գոյություն ունեն հատուկ կրոնական դատարաններ[11], գործադիր իշխանության մարմիններում՝ գործում է Կրոնի գործերի նախարարություն:

3)Աթեիստական պետություն: Աթեիստական պետության մեջ հերքվում է կրոնական աշխարհայացքը, հասարակությանը պարտադրվում է աթեիստական գաղափարախոսություն, ցանկացած կրոնական կազմակերպություն ենթարկվում է հետապնդման և ոչնչացման:Աթեիստական աշխարհընկալումը հանդիսանում է պետական գաղափարախոսության մի մասը, որը քարոզվում է իշխանության բոլոր ինստիտուտների կողմից: Քաղաքացիները չունեն խղճի և դավանանքի ազատության իրավունք, ինչպես նաև զրկված են իրենց կրոնական պահանջմունքները բավարարելու, կրոնական ծեսերը կատարելու, կրոնական կանոնակարգերին հետևելու իրավունքից: Աշխարհում միայն մեկ երկրում է աթեիստական գաղափարախոսությունը ամրագրվել Սահմանադրության մեջ (Ալբանիայի 1976թ Սահմ.): Խորհրդային Միությունը միայն «թղթի վրա» էր աշխարհիկ պետություն, իսկ իրականում հանդիսանում էր աթեիստական:

4) Կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական պետություն: Պետության այս ձևի առաջադրումը մեր կողմից պայմանավորված է որոշ

---

[10] Տե՛ս, Декларация Независимости Израиля Ратифицирован 14.05.1948 https://www.knesset.gov.il/docs/ru/megilat_ru.htm

[11] Տե՛ս, Yedidia Z. SterReligion, state, and the Jewish identity crisis in Israel 1775 Massachusetts Avenue, NW Washington, D.C. 20036 U.S.A pp. 8-18

պետությունների՝ աստվածապետական, աթեիստական, կրոնական կամ աշխարհիկ ձևերի շարքին դասելու անհնարինության հետ: Մեր դիտարկմամբ կիսակրոնական կամ կիսաաշխարհիկ պետությունը կրոնի և պետության փոխգործակցության համատեքստում միջանկյալ օղակ է կղերապետության և աշխարհիկ պետության ձևերի միջև: Պետությունը ելնելով իր պատմական փորձից, ավանդույթներից, բնակչության մեջ առավել մեծ հեղինակություն վայելող դավանանքային ուղղությունից, կարող է որոշել, թե որ կրոնական կազմակերպության հետ է ցանկանում սերտ համագործակցության դաշտ ստեղծել: Այսպիսի պետություններում որևէ կրոն կամ կրոնական կազմակերպություն ունի պաշտոնապես սահմանված արտոնյալ դիրք և պետության կողմից արժանանում է որոշակի նախապատվության: Սահմանադրությունում և օրենսդրական ակտերում ամրագրվում է պետության կախվածությունը կրոնական կազմակերպությունից և հակառակը: Կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական պետությունը՝ նման աշխարհիկ պետության, ճանաչում և երաշխավորում է խղճի և դավանանքի ազատության իրավունքը, միաժամանակ այդպիսի պետության մեջ կրոնական նորմերը չեն համարվում իրավունքի աղբյուր:

Սակայն ի տարբերություն աշխարհիկ պետությանը կիասկրոնական (կիսաաշխարհիկ) պետության մեջ գերիշխող կամ տիրապետող եկեղեցին (established church)[12] բավական մեծ ազդեցություն ունի պետական կառավարման համակարգում: Որպես կանոն բարձրաստիճան հոգևորականները նշանակվում են պետական իշխանության կողմից, իսկ որոշ պետական պաշտոնների համար սահմանվում են կրոնական համոզմունքներով պայմանավորված պահանջներ: Կիսակրոնական կամ կիսաաշխարհիկ պետությունները նյութական, քաղաքական, աջակցություն են ցույց տալիս պաշտոնական կամ տիրապետող (դոմինանտ) կրոնին, երբեմն էլ քաղաքացիներից գանձում կրոնական հարկ:

Այսպես՝ Դանիայի Թագավորությունում Ավետարանական-լյութերական եկեղեցին ունի Սահմանադրությամբ ամրագրված պաշտոնական կրոնի կարգավիճակ[13]: Եկեղեցու գլուխ կանգնած է միապետը, իսկ նրա կառավարման լիազորությունները տրված են Կրոնի գործերի

---

12 Տե՛ս, https://www.britannica.com/topic/established-church

13 Տե՛ս, Конституция Датского Королевств от 5 июня 1953 года http://worldconstitutions.ru/?p=152

նախարարությանը (Kirkeministeriet)[14]:Թագավորության տարածքը բաժանված է տաս թեմերի,որոնց հոգևոր առաջնորդները՝ եպիսկոպոսները, նշանակվում են միապետի կողմից՝Կրոնի գործերի նախարարի առաջարկությամբ: Միապետը Սահմանադրության 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն պետք է լինի Ավետարանական-լյութերական եկեղեցու անդամ[15]: Ավետարանական-լյութերական եկեղեցու կանոնադրությունը սահմանվում է առանձին օրենքով:

Կիսակրոնական պետության մեր առաջադրած հատկանիշներին է համապատասխանում նաև Նորվեգիայի Թագավորությունը: Այստեղ պետությունը ճանաչելով յուրաքանչյուրի խղճի ազատության իրավունքը, Ավետարանական-լյութերական եկեղեցուն հռչակում է պաշտոնական, պետական կրոն: Սահմանադրության 4-րդ հոդվածն ամրագրում է. «Թագավորը պարտավոր է դավանել Ավետարանական-լյութերական կրոնը, ցուցաբերել նրան օժանդակություն և հովանավորություն»:Նորվեգիայի Պետական Խորհրդի անդամների ընտրական իրավունքը սահմանափակվում է դավանանքով պայմանավորված պահանջներով: Սահմանադրության 12-րդ հոդվածում նշվում է, որ. «Պետական Խորհրդի անդամների կեսից ավելին պետք է դավանեն պաշտոնական, պետական կրոնը»: Իսկ ահա 27-րդ հոդվածի երկրորդ մասում՝ որպես վերոհիշյալի տրամաբանական շարունակություն, ասվում է՝ «պաշտոնական-պետական կրոն չդավանող Պետական Խորհրդի անդամը չի կարող մասնակցել այն քննարկումներին, որոնք վերաբերում են պետական եկեղեցուն»[16]:Նորվեգիայի գործադիր իշխանության կառուցվածքում գործում է մշակույթի և կրոնի գործերի նախարարությունը, որի նախարարը պետք է համարվի Ավետարանական-լյութերական եկեղեցու անդամ:

5)Աշխարհիկ պետություն: Պետության աշխարհիկ ձևը ամենից առաջ ենթադրում է կրոնական կազմակերպությունների առանձնացվածությունը պետությունից: Նման տարանջատումը, սակայն չի կանխորոշում կրոնական կազմակերպությունների մեկուսացումը պետու-

---

[14] Տե՛ս, Դանիայի Թագավորության Կրոնի գործերի նախարարության պաշտոնական ինտերնետային կայքը՝ http://www.km.dk/ministeren/

[15] Տե՛ս, Конституция Датского Королевств от 5 июня 1953 года http://worldconstitutions.ru/?p=152

[16] Տե՛ս, Конституция Норвежского Королевства от 17 мая 1814 года http://worldconstitutions.ru/?p=142

թյունից, ավելին յուրաքանչյուրին վերապահելով սեփական ինքնությունը, պահանջում է միմյանց հետ փոխգործակցություն: Աշխարհիկ պետության մեջ կրոնական կանոնները չեն հանդիսանում պետության իրավական համակարգի մաս, ճանաչվում և երաշխավորվում է խղճի և դավանանքի ազատության իրավունքը:

Այսօր՝ աշխարհիկության սկզբունքի ամրագրման և կենսագործման տեսանկյունից, աշխարհիկ պետությունները համասեռ չեն և չունեն միասնական ընգծված կառուցակարգ:Դա անմիջականորեն առնչվում է սոցիալական գործընթացների հետ, որոնց վրա մեծ ազդեցություն են գործում պետության և իրավունքի զարգացման պատմական, քաղաքական, մշակութային, բարոյական առանձնահատկությունները: Պետության աշխարհիկության սկզբունքի իրացումը ուղղակիորեն կախված է տվյալ պետության մեջ կրոնական կազմակերպությունների՝ պետությունից տարանջատման այս կամ այն նախանշանների իրականացման չափից, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների սահմանափակվածության աստիճանից:

Արտասահմանյան երկրների սահմանադրական և այլ իրավական ակտերի համեմատական-իրավական վերլուծության հիման վրա, մենք բացահայտել ենք, որ պետությունները աշխարհիկության սկզբունքի ամրագրման հարցում ունեն որոշակի առանձնահատկություններ, որոնք արտահայտվում են՝

1) Աշխարհիկ պետության սկզբունքի ուղղակի ամրագրումը Սահմանադրության մեջ՝ (Ղազախստան, Թուրքիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Հնդկաստան և այլն): Կրոնի հետ ունեցած կապերի, կրոնական կազմակերպությունների իրավական կարգավորվածության համատեքստում դիտարկենք որոշ պետությունների իրավական փորձը:

Ղազախստանի Հանրապետության Սահմանադրության առաջին հոդվածի համաձայն՝ «Ղազախստանի Հանրապետությունը հռչակում է իրեն ժողովրդավարական, աշխարհիկ, իրավական և սոցիալական պետություն, որի բարձրագույն արժեքներ են համարվում մարդը, նրա կյանքը, իրավունքներն ու ազատությունները»[17]: Ղազախստանի Սահմանադրությունը նաև ամրագրում է յուրաքանչյուրի խղճի ազատու-

[17] Տե՛ս, Конституция Республики Казахстан от 30 августа 1995 года(В редакции Законов Республики Казахстанот 07.10.1998 г. N284-1, 21.05.2007 г. №254-III ЗРК) http://worldconstitutions.ru/?p=129

թյան իրավունքը, որը ի թիվս մարդու և քաղաքացու մյուս իրավունքների ու ազատությունների կարող է սահմանափակվել միայն սահմանադրական կարգի պահպանության, հասարակական կարգի, մարդու իրավունքների և ազատությունների, բնակչության առողջության և բարոյականության պահպանման նպատակով[18]:

«Կրոնական գործունեության և կրոնական կազմակերպությունների մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքի նախաբանում նշվում է, որ Ղազախստանը «...ճանաչում է խանաֆիթական ուղղվածության իսլամի և ուղղափառ քրիստոնեության պատմական դերը ժողովրդի մշակութային և հոգևոր կյանքի զարգացման գործում, հարգում է այլ կրոններ, որոնք փոխկապակցված են Ղազախստանի ժողովրդի հոգևոր ժառանգության հետ...»[19] : Հարկ է նկատել որ խանաֆիթական ուղղվածության իսլամի և ուղղափառ քրիստոնեության դերը բարձր գնահատելով պետությունը նրանց որևէ իրավական արտոնություն չի տալիս մյուս կրոնական ուղղությունների նկատմամբ, այլ ապահովում է համընդհանուր իրավահավասարություն:

Ղազախստանի Հանրապետության պետական մարմիններում, կրթական և առողջապահական հաստատություններում, զորամասերում արգելվում է կրոնական կազմակերպությունների գործունեությունը և կրոնական արարողությունների անցկացումը[20]: Սահմանադրության 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն արգելվում է կրոնական ուղղվածության կուսակցությունների գործունեությունը[21]:

Ղազախստանի ժողովրդին հղած «Ռազմավարություն «Ղազախստան-2050» ուղերձում Հանրապետության նախագահի Նուրսուլման Նազարբաևը ընդգծելով պետության աշխարհիկության կարևորությունը նշեց. «Մենք հպարտ ենք, որ հանդիսանում ենք մուսուլմանական հանրույթի մի մասը: Դրանք մեր ավանդույթներն են: Բայց

---

[18] Տե՛ս, նույն տեղում հոդվ. 22, 39:

[19] Տե՛ս, Закон Республики Казахстан от 11 октября 2011 года № 483-IV «О религиозной деятельности и религиозных объединениях» (с изменениями и дополнениями по состоянию на 11.12.2016 г.) http://online.zakon.kz/Document/?doc_id=31067690#pos=0;0

[20] Տե՛ս, նույն տեղում:

[21] Տե՛ս, Конституция Республики Казахстан от 30 августа 1995 года(В редакции Законов Республики Казахстанот 07.10.1998 г. N284-1, 21.05.2007 г. №254-III ЗРК) http://worldconstitutions.ru/?p=129

չպետք է մոռանա,լ որ մենք ունենք նաև աշխարհիկ հասարակության ավանդույթներ, որ Ղազախստանը աշխարհիկ պետություն է: Մեր պետության աշխարհիկ բնույթը կարևոր պայման է Ղազախստանի հաջող զարգացման համար[22]:

Ուշագրավ է Թուրքիայի Հանրապետության՝ որպես աշխարհիկ պետության ձևի իրացման փորձը: Թուրքիան իսլամական աշխարհի առաջին երկիրն է, որտեղ կրոնի ինստիտուտը առանձնացվեց պետությունից: 1937թվականին ընդունված սահմանադրությունը ամրագրեց «Քեմալիզմի»՝ որպես թուրքական ազգայնականության գաղափարախոսության «վեց նետերի» [23] հայեցակարգը, որի վերջին կետը՝ «լաիցիզմը» ըստ էության վերաբերում է պետության աշխարհիկության սկզբունքի ներդրմանը: Սահմանվեց կրոնական կազմակերպությունների պետական կառավարման և քաղաքականության մասնակցության անթույլատրելիությունը[24]:

Թուրքիայի ներկայիս Սահմանադրության նախաբանում ամրագրվում է, որ պետության աշխարհիկության սկզբունքի համաձայն հոգևոր կրոնական զգացմունքները չեն կարող ազդեցություն ունենալ պետական գործերի և քաղաքականության վրա[25]: Սահմանադրության երկրորդ հոդվածում սահմանվում է. «Թուրքիայի հանրապետությունը իրավունքի գերակայության վրա հիմնված՝ ժողովրդավարական, աշխարհիկ, սոցիալական պետություն է...»[26]: Սահմանադրությամբ յուրաքանչյուրին վերապահված է խղճի, դավանանքի և կրոնական համոզմունքների ազատության իրավունք[27]:

2007թ. Թուրքիայի «Արդարություն և զարգացում» կուսակցության կողմից նախագահի պաշտոնում արտգործնախարար Աբդուլահ Գյուլի

---

[22] Տե՛ս, Послание народу Казахстана под названием «Стратегия «Казахстан-2050» от 4 декабря 2012 г. 2. http://www.akorda.kz/ru/addresses/addresses_of_president/poslanie-prezidenta-respubliki-kazahstan-nnazarbaeva-narodu-kazahstana-14-dekabrya-2012-g

[23] Տե՛ս, Քեմալիզմը հիմնված էր վեց սկզբունքների հիման վրա՝ 1) Հանրապետականություն, 2) ազգայնականություն, 3) ժողովրդայնություն, 4) էտատիզմ, 5) լաիցիզմ, 6) հեղափոխականություն: Տե՛ս, Р.Ф.Мухамметдинов. Зарождение и эволюция тюркизма. – Казань: Изд-во "Заман", 1996. С 157

[24] Տե՛ս նույն տեղում՝ էջ 159

[25] Տե՛ս, Конституция Турецкой Республики Введена в действие 7 ноября 1982 года. http://worldconstitutions.ru/?p=84

[26] Տե՛ս, նույն տեղում հոդվ. 2-րդ:

[27] Տե՛ս, նույն տեղում հոդվ. 24-րդ:

առաջադրման հետ կապված բուռն վեճերը ըստ էության պայմանավորված էին նրա իսլամական հայացքների հետ: Քեմալականները, որոնք պետության աշխարհիկության սկզբունքի կենսագործման աննահանջ ջատագովներ էին, մեղադրում էին Գյուլին և Էրդողանին Թուրիքիայում իսլամական կարգեր հաստատելու մեջ[28]: 2008թ. «Արդարություն և զարգացում» կուսակցությունը ևս երկու կուսակցությունների հետ սահմանադրական փոփոխությունների փաթեթ ներկայացրեց խորհրդարան ՝ մասնավորապես կրթական և պետական հաստատություններում կանանց և աղջիկների գլխաշոր կրելու արգելքը վերացնելու վերաբերյալ: Սահմանադրության մեջ կատարված սույն փոփոխության սահմանադրականության համապատասխանելիության հարցը վիճարկվեց Թուրիքիայի Սահամանդրական դատարանում և արդյունքում այն ճանաչվեց Սահմանադրությանը հակասող[29]:

Իսլամական աշխարհի երբեմնի դրոշակակիր Թուրքիան այսօր էլ առնչվում է Սահմանադրության հռչակած աշխարհիկության սկզբունքի և խորը արմատավորված իսլամական արժեհամակարգի համատեղելիության դժվարությունների հետ: 2016 թվականի ապրիլի 25-ին Թուրքիայի խորհրդարանի խոսնակ Իսմայիլ Կահրամանը սահմանադրական բարեփոխումների համատեքստում կայացած խորհրդաժողովներից մեկի ժամանակ հայտարարեց Սահմանադրության մեջ իսլամի դերը հստակեցնելու անհրաժեշտության մասին. «Մենք իսլամական երկիր ենք…աշխարհիկությունը չպետք է տեղ ունենա նոր սահմանդրության մեջ»[30]:

Պետության աշխարհիկության սկզբունքի իրացման արտասահմանյան փորձը դիտարկելիս արդարացված չի լինի, եթե չհիշատակենք Ֆրանսիայի Հանրապետության օրինակը:Ֆրանսիան առաջինը աշխարհում ընդունեց օրենք եկեղեցու և պետության առանձնացման մասին, որով ուժը կորցրած ճանաչվեց 1801թ. Նապոլեոն Բոնապար-

[28] Տե՛ս, Թուրքիայի Հանրապետության պատմություն, Բուհական դասագիրք/ Ռ. Սաֆրաստյան և ուրիշ.- Երևան ԵՊՀ հրատարակչություն 2014թ. էջ 319-325

[29] Տե՛ս նույն տեղում էջ 321-322

[30] Տե՛ս Իսմայիլ Կահրամանի հայտարարությունը Ստամբուլում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ https://www.rt.com/news/340937-turkey-secular-constitution-dropped/

տի և Հռոմի Պիոս 8-րդ պապի միջև ստորագրված Կոնկորդատը[31]: Օրենքը, որն ընդունվեց 1905թ., չէր տարածվում Էլզասի և Լոթարինգիայի վրա, որոնք այդ ժամանակ պատկանում էին Գերմանիային: Ֆրանսիան դադարեցրեց պետական կրոնական հաստատությունների ֆինանսավորումը, իսկ նրանց գույքի մեծ մասը դարձրեց պետական սեփականություն: Արդյունքում «աշխարհիկացման» գործընթացը նյութական ահռելի վնաս (մոտ մեկ միլիարդ ֆրանկ) հասցրեց Ֆրանսիայի Կաթոլիկ եկեղեցուն[32]:

Արդի ժամանակներում Ֆրանսիան շարունակում է պահպանել աշխարհիկ պետության իր կարգավիճակը: Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն «Ֆրանսիան համարվում է անբաժանելի, աշխարհիկ, սոցիալական, ժողովրդավարական հանրապետություն: Երաշխավորում է օրենքի առջև բոլոր քաղաքացիների հավասարությունը անկախ ծագումից, ռասայից և կրոնից»[33]:Կրոնական և քաղաքական շարժառիթներով պայմանավորված հաճախակի բնույթ կրող ահաբեկչությունները հարկադրում են ֆրանսիական իշխանություններին չշեղվել աշխարհիկացման ուղուց և կտրուկ գործողություններ իրականացնել հասարակության անվտանգ և ներդաշնակ զարգացման ապահովման համար: Ասվածի խոսուն վկայությունն է 2017թ սեպտեմբերի 25-ին Ֆրանսիայի ներքին գործերի նախարար Ժերար Կալոնի կողմից խորհրդարան ներկայացված «Ներքին անվտանգության ամրապնդման եւ ահաբեկչության դեմ պայքարի մասին» օրինագծը, որը ահաբեկչության մասին հիմնավոր հայտարարության առկայության դեպքում կրոնական հաստատությունների փակման իրավական ընթացակարգի պարզեցման երաշխիքներ է ամրագրում: 2017թ. հոկտեմբերի 18-ին Ֆրանսիայի Սենատը 244 կողմ և 22 դեմ ձայներով հավանություն տվեց օրինագծի ընդունմանը[34]:

---

[31] Տե՛ս, Понкин И.В. П56 Столетие французского закона о разделении церквей и государства. – М.: Издательство Учебно- научного центра довузовского образования, 2005. – 21 с.

[32] Տե՛ս նույն տեղում էջ 25

[33] Տե՛ս Конституция Французской Республики 1958 года с изменениями, внесенными 23 июля 2008 года http://worldconstitutions.ru/?p=138

[34] Տե՛ս http://www.bfmtv.com/police-justice/la-loi-antiterroriste-adoptee-definitivement-malgre-les-controverses-1280942.html#content/contribution/edit

Աշխարհիկ պետության սկզբունքն ամրագրված է նաև Հնդկաստանի Հանրապետության բարձրագույն օրենքի մեջ: Հնդկաստանի Սահմանադրության ներածության մեջ ասվում է. «Մենք՝ Հնդկաստանի ժողովուրդը, հանդիսավոր կերպով որոշել ենք Հնդկաստանը սահմանել որպես ինքնիշխան, սոցիալիստական,աշխարհիկ, ժողովրդավարական Հանրապետություն»: Նույն ներածության մեջ ասվում է, որ երաշխավորվում են «մտքի, կարծիքի արտահայտման, համոզմունքի, դավանանքի, պաշտամունքի ազատությունը»[35]:

Հնդկաստանում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները ներառում են նաև կրոնի ազատության իրավունքը: Սահմանադրության 25-րդ հոդվածում սահմանվում է խղճի, կրոնի, դավանանքի, կրոնական ծեսերի կատարման և կրոնական քարոզչության ազատությունը:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում Սահմանադրության 28-րդ հոդվածը, որը ամրագրում է կրոնի դասերի հաճախելու և որոշ ուսումնական հաստատություններում ժամերգության կատարման ազատությունը. «ոչ մի կրոնական դասավանդում չպետք է տեղի ունենա այն ուսումնական հաստատություններում, որոնք գոյատևում են պետական միջոցների հաշվին, պետության կողմից ճանաչված կամ պետական միջոցների հաշվին գոյատևող ուսումնական հաստատություն այցելող որևէ անձի չի կարելի պարտադրել հաճախել այնտեղ անցկացվող կրոնի դասերին կամ ներկա գտնվել ժամերգությանը, եթե այդ անձը կամ նրա անչափահաս լինելու պարագայում նրա խնամակալը չի տվել իր համաձայնությունը»[36]:

2.Աշխարհիկ պետության սկզբունքի միջնորդավորված ամրագրումը սահամանդրության մեջ՝ (Բուլղարիա, Հայաստան, Վրաստան, Ավստրիա, Գերմանիա, ԱՄՆ, Շվեյցարիա, Բելգիա, Մեքսիկա, Բրազիլիա, Ավստրալիա, Բոսնիա և Հերցոգովինա, Կանադա, Վենեսուելա և այլն):

Կանադայի և Բոսնիա-Հերցոգովինայի Սահմանադրությունների հիմնական իրավունքների բաժիններում, բավականին հակիրճ է խոսվում խղճի և դավանանքի ազատության մասին: Կարելի է ենթադրել, որ

[35] Տե՛ս, Маклаков В.В Конституция зарубежных стран учеб. Пособие //Маклаков В.В. 4 изд М; Волтерс Клувер 2003 С 444

[36] Տե՛ս, նույն տեղում էջ 454

կրոնական հարաբերությունների ոլորտում իրավունքների և ազատությունների այդպիսի նվազագույն ամրագրումը կապված է տվյալ պետությունների (Կանադա՝ կաթոլիկություն և բողոքականություն, Բոսնիաև Հերցեգովինա՝ ուղղափառություն, կաթոլիկություն և իսլամ) բնակչության բազմադավան կազմությամբ և որևէ դավանանքի նախապատվությամբ պայմանավորված միջկրոնական ընդհարման վտանգով:

ԱՄՆ-ի, Ավստրալիայի և Շվեյցարիայի Սահմանադրությունները, ամրագրում են աշխարհիկ պետությա նանքակտելի տարրերը: Շվեյցարիայի Սահմանադրության 15-րդ հոդվածի համաձայն.«Երաշխավորվում է խղճի և դավանանքի ազատությունը: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն ընտրել իր կրոնը, և աշխարհընկալման համոզմունքը, դավանել այն միայնակ կամ այլոց հետ»[37]:

Ավստրալիայի Սահմանադրության 16-րդ հոդվածում ասվում է. «Ավստրալական Միությունը իրավասու չէ սահմանել իրավական նորմեր պետական կրոնի կամ երկրպագության ձևերի վերաբերյալ կամ սահմանափակել որևէ կրոն դավանելու ազատությունը[38]:

ԱՄՆ Սահմանադրության առաջին ուղղումը պարունակում է հետևյալ իրավանորմը. «Կոնգրեսը չպետք է հրապարակի որևէ օրենք՝ կապված կրոնի սահմանման կամ դրանցից որևէ մեկ ազատ դավանանքը արգելելու հետ, կամ խոսքի և մամուլի ազատությունը սահմանափակող կամ ժողովրդի՝խաղաղ միավորվելու և բողոքները բավարարելու վերաբերյալ հանրագրերով կառավարությանը դիմելու իրավունքը»[39] :

ԱՄՆ Գերագույն դատարանի զգալի թվով որոշումներ՝ կրոնական կազմակերպություններին պետության կողմից ամեն տեսակի այդ թվում՝ ֆինանսական աջակցություն ցուցաբերելու արգելքի վերաբերյալ, հիմնվում են Անկախության Հռչակագրի հեղինակներից մեկի՝ Թոմաս Ջեֆերսոնի (քրիստոնեական կրոնի ջերմեռանդ քննադատի)

---

[37] Տե՛ս, Конституция государств Европы: В 3-х т/Л.А. Окунькова Институт законодательства и сравнительного правоведения при правительстве РФ Норма 2001 с435

[38] Տե՛ս, Конституция Австралии(Принята 1900/ Вступила в силу 1,01,1901/ Положения приняты 1988) URL: http://worldconstitutions.ru/?p=23

[39] Տե՛ս, Билль о правах 1789-1791гг. (Первые 10поправок к Конституции США) Хрестоматия по истории государств и права зарубежных стран в 2 т под ред. К. Батырева и Е. Поликарповой М Проспект 2013 С 73

հայտնի արտահայտության վրա, որում խոսվում է «եկեղեցու և պետության միջև կանգնած բարձր բաժանարար պատի» մասին[40]:

3. Պետական կամ ավանդական կրոնով(եկեղեցով) սահմանված աշխարհիկ պետություններ:(Բուլղարիա, Հայաստան, Վրաստան, Անդորրա, Արգենտինա)

Հարկ է այստեղ զատորոշել պետական կամ պաշտոնական կրոն և պարտադիր կրոն հասկացությունները: Երբեմն այս արտահայտությունները գործածվում են միասնական կերպով՝ ստեղծելով որոշակի հայեցակարգային մոլորություններ: Իրավաբանական գրականության մեջ պետական և պաշտոնական կրոն եզրույթները նույնանում են և գործածվում են որպես հոմանիշներ: Պետական կամ պաշտոնական կրոնի հռչակումը հակասության մեջ չի մտնում մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի հետ: Ներկայումս աշխարհի մի շարք զարգացած ժողովրդավարական երկրներ գերապատվություն են տվել որևէ կրոնի, այն ճանաչել են պետական կամ պաշտոնական, միևնույն ժամանակ երաշխավորել յուրաքանչյուրի խղճի և դավանանքի ազատության իրավունքը: Այլ է խնդիրը պարտադիր կրոնի ճանաչման դեպքում: Այն բնորոշ է առավելապես աստվածապետություններին և կրոնապետություններին: Գաղափարական բազմակարծությունը աշխարհիկ պետության անքակտելի տարրն է: Ակնհայտ է, որ ցանկացած պարտադիր գաղափարախոսություն չի կարող համատեղելի լինել ինչպես խղճի ազատության իրավունքի, այնպես էլ պետության աշխարհիկության սկզբունքի հետ:

Ավանդական կրոնական կազմակերպությունը կարող է ունենալ պետական կարգավիճակ կամ չունենալ: Անկախ այդ հանգամանքից այն պետության մեջ մեծ դեր է խաղում մշակութային դաստիարակության, ազգային-կրոնական ավանդույթների պահպանման ու զարգացման գործում: Պետք է նկատել որ միջազգային իրավունքը ըստ էության հակասություն չի տեսնում պետության աշխարհիկության սկզբունքի և պետության կողմից որևէ կրոնական կազմակերպության առանձնաշնորհության ճանաչման համադրման մեջ: Այնուամենայնիվ, պետության աշխարհիկությունը երբեմն քաղաքակրթական բախման մեջ է գտնվում աշխարհիկ հռչակված այս կամ այն պետության պատմական

[40] Տե՛ս, L. Dreisbach, "Sowing Useful Truths and Principles": The Danbury Baptists, Thomas Jefferson, and the "Wall of Separation," 39J. of Church & State 455,455 (1997).

փորձի, ավանդույթների, հասարակության պատկերացումների և հոգևոր ընկալումների հետ: Դրա հետևանքները լինում են այն, որ այդպիսի պետությունները իրենց հոգևոր պահանջմունքների բավարարման հարցում բավական «հեռու են գնում» քան թույլ է տալիս աշխարհիկության կարգավիճակը: Աշխարհիկ պետությունների մեջ կրոնականության հատկանիշները արտահայտվում են կառավարական միջոցառումների ժամանակ հոգևոր դասի անդամների գործուն մասնակցությամբ, Սուրբ Գրքի վրա նախագահների երդմնակալության[41], կրոնական տոների՝ պետության կողմից ճանաչման և այլ դրսևորումներով:

Անդորրայի Իշխանապետությունը որպես աշխարհիկ պետություն ձևավորել է կրոնի հանդեպ իր յուրահատուկ մոտեցումը: Բնակչության ճնշող մեծամասնությունը (մոտ 90 տոկոս) հարում է Կաթոլիկ եկեղեցու դավանանքին: Սահմանադրության 11-րդ հոդվածը երաշխավորում է «մտքի, կրոնի և պաշտամունքի ազատությունը, յուրաքանչյուրի կարծիքը, կրոնը և հավատը արտահայտելու իրավունքը»: Սահմանդրությունը նույն հոդվածով «երաշխավորում է Կաթոլիկ եկեղեցու ազատ և հանրային գործունեության իրականացումը և պետության հետ առանձնահատուկ համագործակցային հարաբերությունների օժանդակումը՝ հիմնված անդորրական ավանդույթների վրա»: «Սահմանադրությունը ճանաչում է Կաթոլիկ եկեղեցու կողմից հաստատված միավորումները, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ՝ համապատասխան նրա իրավանորմերին և լիարժեք գործունակությանը…»[42]: Այս առավելություններից բացի Անդորրայի Սահմանադրությունը եկեղեցական կարգով հաստատված ամուսնությունները ճանաչում է պետական:[43]

---

[41] Մի շարք աշխարհիկ պետություններում նախագահները երդմնակալության արարողության ժամանակ երդվում են ձեռքը դրած միայն մայր օրենքի վրա (Ղրղզստան, Ղազախստան) : Ռուսաստանի Դաշնության նախագահները ավանդույթի համաձայն երդվում են աջ ձեռքը Սահմանադրության իսկ ձախը՝ նախագահական իշխանության խորհրդանշանի վրա դրված: ԱՄՆ-ի բոլոր նախագահները, որոշ բացառություններով, երդվել են Սուրբ գրքի վրա: Հայաստանի Հանրապետությունում ավանդույթի ուժով նախագահների երդմնակալությունը կատարվում է աջ ձեռքը միաժամանակ դրված Սահմանադրության և պետական խորհրդանիշի իմաստ կրող Վեհամոր Ավետարանի վրա:

[42] Տե՛ս, Конституция Княжества Андорраот 14 марта 1993 года http://worldconstitutions.ru/?p=158

[43] Տե՛ս, նույն տեղում Հոդված 13-րդ հոդված առաջին մաս:

Կաթոլիկ եկեղեցին մեծ դեր է խաղում նաև Արգենտինայի ժողովրդի հասարակական կյանքում, ազգային ավանդույթների զարգացման գործում, ինչի հետևանքով պետությունը Կաթոլիկ եկեղեցու հետ սահմանել է գործընկերային հարաբերություններ: Արգենտինայի Սահմանադրության 2-րդ հոդվածն ամրագրում է «Դաշնային կառավարությունը աջակցում է Հռոմի կաթոլիկ-առաքելական եկեղեցու պաշտամունքը»[44]: Պետությունը երաշխավորվում է յուրաքանչյուրի կրոնի ազատության իրավունքը: Հատկանշական է, որ նախքան 1994թ. սահմանադրական բարեփոխումները, Արգենտինայի Հանրապետության նախագահը պետք է լիներ կաթոլիկ եկեղեցու դավանանքի հետևորդ:

Բուլղարիայի Սահմանադրության 13-րդ հոդվածն ամրագրում է. «1) դավանանքի ազատություն, 2) կրոնական հաստատությունները առանձնացված են պետությունից, 3) Բուլղարիայի Հանրապետությունում ավանդական կրոն է համարվում արևելյան-ուղղափառ հավատը 4) Կրոնական համայնքները եւ հաստատությունները, ինչպես նաեւ կրոնական համոզմունքները չեն կարող օգտագործվել քաղաքական նպատակների համար»[45]:

Այնուամենայնիվ, աշխարհիկ պետությունում պետական կրոնի սահմանմամբ, մեր կարծիքով, չի խաթարվում աշխարհիկության սկզբունքի էությունն ու նշանակությունը, եթե տվյալ պետության մեջ՝

ա) ճանաչվում և երաշխավորվում է յուրաքանչյուրի խղճի և դավանանքի ազատության իրավունքը,

բ) պետությունը կրոնական հիմքերով պայմանավորված արգելքներ չի դնում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրացմանը,

գ) կրոնական կանոնները ներառված չեն իրավունքի աղբյուրների մեջ,

դ) կրոնական կազմակերպությունները չեն մասնակցում պետական կառավարմանը, իսկ նրանց հոգևոր ներկայացուցիչները չեն կարող նշանակվել պետական իշխանության մարմինների կողմից:

---

[44] Տե՛ս, Конституция Аргентинской Республики Принята Генеральным Конституционным Конгрессом 1 мая 1853 г. Конституция пересматривалась в 1860, 1866, 1898, 1957 и 1994 гг. http://worldconstitutions.ru/?p=358&page=3

[45] Конституция Республики Болгарии (Обнародована в “Държавен вестник”, бр.56 от 13 июля 1991 г.)http://worldconstitutions.ru/?p=120

Միաժամանակ, սույն հետազոտության շրջանակում անհրաժեշտ է կարևորել տարբեր երկրերի կրթության ոլորտում աշխարհիկության սկզբունքի իրացման փորձի հետազոտությունը: Ուսումնական հաստատություններում կրոնական ուղղվածության առարկայի դասավանդման հարցը արտասահմանյան երկրներում լուծվում է տարբեր կերպ: Բելգիայի Սահմանադրության 24-րդ հոդվածը պարունակում է հետևյալ դրույթը. «Պետական իշխանությունների կողմից կազմակերպված դպրոցները մինչև պարտադիր դպրոցական ուսուցման ավարտը ընտրության հնարավորություն են սահմանում ճանաչված կրոններից որևէ մեկի և ոչ կրոնադավանական բարոյականության դասավանդման միջև»:

Գերմանիայում, Սահմանադրության համաձայն, դպրոցներում կրոնական ուսուցումը պարտադիր է: Սահմանադրության 7-րդ հոդվածում ասվում է. «Կրոնական ուսուցումը հանրային դպրոցներում, բացառությամբ ոչ կրոնադավանական դպրոցների, պարտադիր առարկա է: Առանց պետության հսկողության իրավունքին վնաս պատճառելու կրոնական ուսուցումն իրականացվում է կրոնական համայնքների սկզբունքներին համապատասխան: Ոչ մի ուսուցիչ չի կարող պարտավորված լինել իր կամքին հակառակ իրականացնելու կրոնական ուսուցում»[46]:

Ղազախստանը նույնպես ճանաչում է կրթության աշխարհիկության սկզբունքը: Համաձայն «Կրոնական գործունեության և կրոնական կազմակերպությունների մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասի. «Ղազախստանի Հանրապետության կրթական և դաստիարակության համակարգը բացառության հոգևոր (կրոնական) կրթական կազմակերպությունների առանձնացված է կրոնից և կրոնական միավորումներից և ունի աշխարհիկ բնույթ»[47]:

Բացի այդ, 2010 թվականին Ղազախստանում ֆակուլտատիվ կարգով (ըստ ցանկության) մտցվեց «Կրոնագիտության հիմունքներ»

---

[46] Տե՛ս, Конституции государств Европы: В 3-х т. / Общ. ред. и вступ. ст. Л. А. Окунькова с.130

[47] Տե՛ս, Закон Республики Казахстан от 11 октября 2011 года № 483-IV «О религиозной деятельности и религиозных объединениях» (с изменениями и дополнениями по состоянию на 11.12.2016 г.) http://online.zakon.kz/Document/?doc_id=31067690#pos=0;0

առարկան: Ղազախստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանի[48] համաձայն՝ 2016թ. Ղազախստանի միջնակարգ դպրոցների 9-րդ դասարաններում պարտադիր կարգով ներդրվեց «Աշխարհիկությունը և կրոնագիտության հիմունքները» առարկան, որի դասավանդումը վերապահվեց միայն հատուկ պատրաստվածություն անցած պատմության ուսուցիչներին:

Իսկ Մեքսիկայի Սահմանադրության 24-րդ հոդվածում բավականին արմատականորեն սահմանված է. «Երաշխավորվում է դավանանքի ազատությունը, որի սկզբունքներով պետք է առաջնորդվի կրթությունը, իսկ վերջինս չպետք է ընդհանուր բան ունենան որևէ կրոնական ուսմունքի հետ, այն պետք է հիմնված լինի գիտության առաջընթացի վրա և ծառայի տգիտության և նրա հետևանքների՝ ստրկության, ֆանատիզմի, և նախապաշարումունքների դեմ պայքարին»[49]:

Այսպիսով՝ վերլուծելով արտասահմանյան երկրների փորձը՝ կրոնի ինստիտուտի նկատմամբ հարաբերությունները ձևավորելիս և, մասնավորապես, այդ համատեքստում ուսումնասիրելով պետությունների աշխարհիկության սկզբունքի իրացման առանձնահատկությունները՝ կարելի է ընդհանրացված կարգով ներկայացնել հետևյալ եզրահանգումները.

1) Աստվածապետական, կղերական, աթեիստական պետություններում քաղաքացիները չունեն խղճի ազատության իրավունք կամ վերջինս զգալիորեն սահմանափակված է: Այդպիսի պետությունները իրենց էությամբ հակադրվում են պետության աշխարհիկ ձևին: Բախումը նաև նրանում է, որ աստվածապետական և կղերական պետության հակապատկեր է հանդիսանում նաև աթեիստական պետությունը, որտեղ կրոնական կազմակերպությունները ամբողջությամբ

---

[48] Տե՛ս, Приказ Министра образования и науки Республики Казахстан от 15 июля 2014 года № 281
О внесении изменения в приказ Министра образования и науки Республики Казахстан от 3 апреля 2013 года № 115 «Об утверждении типовых учебных программ по общеобразовательным предметам, курсам по выбору и факультативам для общеобразовательных организаций»
https://online.zakon.kz/Document/?doc_id=31601763#pos=3;-102

[49] Տե՛ս, Конституция Мексиканских Соединеных Штатов от 05,02,1917
URL: http://worldconstitutions,ru/?p=51

մեկուսացած են հասարակական կյանքից և սոցիալական գործընթացներից, ինչպես նաև զրկված են որևէ կարգավիճակից: Այս ծայրահեղությունների միջև գոյություն ունի պետության կիսաաշխարհիկ կամ կիսակրոնական ձևը, որը պարունակում է որոշակի հատկանիշներ և աշխարհիկ պետությունից և կրոնապետությունից:

2) Աշխարհիկ պետության սահմանման հիմքում դրվում են այնպիսի հատկանիշներ ինչպիսիք են՝ ա) նորմատիվ իրավական ակտերում խղճի և դավանանքի ազատության իրավունքի ամրագրումը, բ) իրավունքի աղբյուրներում կրոնական կանոնների և դոգմաների ներառման անթույլատրելիությունը, գ) դավանանքով պայմանավորված մարդու հիմնական իրավունքների և ազատությունների հատկապես՝ ընտրական իրավունքի սահմանափակման անթույլատրելիությունը, դ) հոգևոր գործիչների՝ պետական կառավարման մասնակցության արգելքը:

3) Պետության աշխարհիկության հայեցակարգում պետական կամ պաշտոնական կրոնի բացակայության տարածված տեսակետը մեր կողմից մերժվում է: Մեր կարծիքով ներկայումս չկա որևէ ծանրակշիռ տեսություն, որը «պետական կրոն» և «աշխարհիկ պետություն» եզրույթները համարի անհամատեղելի: Մեր համոզմամբ պետական կամ պաշտոնական կրոնի հռչակումը տակավին հիմք չէ պետությունը աշխարհիկ չհամարելու այլ ելակետային է, թե ինչ չափանիշներով է իրականցվում կրոնական կազմակերպությունների հետ հարաբերակցությունը:

4) Աշխարհիկ պետությունները կրոնի հանդեպ դրսևորած վարքագծով միատեսակ չեն և առաջնորդվում են կուտակած ազգային, կրոնական, մշակութային սովորույթներով, ավանդույթներով, որոնք էլ, ըստ էության, նախանշում են նրանց ազգային բարոյական նախահիմքն ու նկարագիրը: Աշխարհիկության սկզբունքի իրավական ամրագրումը դեռևս լիարժեք չի երաշխավորում դրա անշեղ իրացումն ու կենսագործումը: Հատկապես դա վերաբերում է այն պետություններին, որտեղ կրոնական կազմակերպություններից մեկն ավանդաբար շոշափելի մասնակցություն է ունեցել տվյալ պետության կամ ազգի մշակութային, բարոյական, արժեքային համակարգի կայացման և զարգացման գործում:

**Ամփոփում**

Հոդվածում իրավահամեմատական մեթոդի կիրառման միջոցով լուսաբանվում է արտասահմանյան տարբեր երկրների և հատկապես աշխարհիկ պետությունների փորձը կրոնական կազմակերպություն-ների հետ հարաբերակցության, ինչպես նաև աշխարհիկության սկզբունքի ձևավորման համատեքստում: Անդրադարձ է կատարվում աստվածապետության, կրոնապետության, աթեիստական, կիսակրո-նական կամ կիսաաշխարհիկ, աշխարհիկ պետությունների ձևի հատ-կանիշների բացահայտմանը և դրանց միջև համեմատական վերլու-ծության անցկացմանը:

*Բանալի բառեր* – պետության և կրոնական կազմակերպություն-ների հարաբերակցություն, աշխարհիկ պետություն, դավանանք, պաշտոնական կրոն

## MAIN ISSUES OF REALIZATION OF THE SECULARISM PRINCIPLE OF THE STATE UNDER THE LEGISLATION OF SEPARATE FOREIGN COUNTRIES: COMPARATIVE LEGAL ANALYSIS

**Vahe Torosyan**
EREA, Chair of Law, Postgraduate student

**Summary**

The article refers to the application of the benchmarking method to the experience of different foreign countries, especially secular states, in the framework of revealing the relationship with religious organizations and the formation of the secularism principle. It deals with the exposure of the features of theologic, religious, atheist, semi-religious or semi-secular states, and their comparative analysis.

*Keywords* - ratio of state and religious organizations, secular state, religion, state religion

# ОСНОВНЫЕ ВОПРОСЫ РЕАЛИЗАЦИИ ПРИНЦИПА СВЕТСКОСТИ ГОСУДАРСТВА ПО ЗАКОНОДАТЕЛЬСТВУ ОТДЕЛЬНЫХ ЗАРУБЕЖНЫХ СТРАН: СРАВНИТЕЛЬНЫЙ ПРАВОВОЙ АНАЛИЗ

**Торосян Ваге Ашотович**
ЕРОА, кафедра правоведения, аспирант

**Резюме**

На протяжении всей статьи использованием метода сравнительно-правово анализа опирается на опыт разных зарубежных стран и особенно светских государств в контексте взаимосвязи с религиозными организациями, а также в контексте секуляризма. Это относится к обнаружению особенностей формы богословия, религии, атеистических, полурелигиозных или полусветских, светских государств и их сравнительного анализа.

*Ключевые слова* - соотношение государственных и религиозных организаций, светское государство, религия, официальная религия

# ՊԱՇՏՊԱՆԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

***Ղարագյոզյան Լուսինե Վարուժանի***
*ԵԿՏԱ, իրավագիտության ամբիոն, ասպիրանտ*

Պաշտպանի դատավարական կարգավիճակի բովանդակության բացահայտման միջոցով վերջինիս հասկացության համակողմանի և նորովի սահմանումն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական կարևոր նշանակություն, քանի որ այն պաշտպանի գործունեության համար ունի կանխորոշիչ դերակատարում պաշտպանության իրականացման կապակցությամբ ծագող քրեադատավարական հարաբերություններում:

Իրավունքի տեսության մեջ նշվում է, որ իրավական կարգավիճակը քաղաքացուն պատկանող բոլոր իրավունքների, ազատությունների և պարտականությունների ամբողջությունն է [1, էջ 309]: Անձի՝ սուբյեկտի իրավական կարգավիճակի տեսակներից են, ի թիվս այլոց, ճյուղային իրավական կարգավիճակը, որը բնորոշվում է իրավունքի կոնկրետ ճյուղի նորմերով (քաղաքացիաիրավական, վարչաիրավական և այլն) և հատուկ իրավական կարգավիճակը [2, էջ 245, 3, էջ 92]:

Ինչպես նշել է Գ.Գ. Սկրեբեցը, պաշտպանն օժտված է հատուկ և ճյուղային իրավական կարգավիճակներով: Հատուկ կարգավիճակը որոշվում է «Փաստաբանական գործունեության և փաստաբանության մասին» Ռուսաստանի Դաշնության դաշնային օրենքով, իսկ ճյուղային կարգավիճակը՝ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքով: Պաշտպանի ճյուղային կարգավիճակը չի կրկնօրինակում, այլ լրացնում և կոնկրետացնում է նրա հատուկ կարգավիճակը [4]:

Այսպիսով, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում ամրագրված փաստաբանի (պաշտպանի) կողմից պաշտպանության իրականացումը քրեական գործերով վկայում է վերջինիս հատուկ իրավական կարգավիճակի մասին, որը կոնկրետացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասում և այլ քրեադատավարական իրավակարգավորումներում արտացոլված ճյուղային իրավական կարգավիճակում: Հետևաբար, պաշտպանի դատավարական կարգավիճակի բովանդա-

կությունը բացահայտելու համար անհրաժեշտ է անդրադառնալ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իրավակարգավորումներին:

Ինչ վերաբերվում է իրավաբանական գրականության մեջ պաշտպանի դատավարական կարգավիճակի բնորոշմանը, ապա նշենք, որ տեսության մեջ պաշտպանի դատավարական կարգավիճակը բնորոշվում է տարբեր հիմքերի միջոցով: Դրանք են՝

ա) օրենքով նախատեսված իրավունքները,

բ) իրավունքները և պարտականությունները,

գ) իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը,

դ) պաշտպանին վերապահված իրավունքների հիման վրա պաշտպանի փոխհարաբերությունները քրեական դատավարության այլ մասնակիցների հետ [5, էջ 28]:

Համամիտ ենք Վ.Լ. Կուդրյավցևի այն մոտեցմանը, որ պատասխանատվությունը և պաշտպանին վերապահված իրավունքների հիման վրա պաշտպանի փոխհարաբերությունները քրեական դատավարության այլ մասնակիցների հետ հիմքերը պաշտպանի դատավարական կարգավիճակի բնորոշման մեջ չներառելը հիմնավոր է նրանով, որ պատասխանատվությունը իրավաբանական պարտականության ձևերից մեկն է, իսկ պաշտպանի փոխհարաբերությունները քրեական դատավարության այլ մասնակիցների հետ կարգավորվում են փաստաբանի մասնագիտական էթիկայի նորմերով և ոչ թե իրավունքով՝ քրեադատավարական օրենսդրությամբ: Արդյունքում, Վ.Լ. Կուդրյավցևը նշում է, որ պաշտպանի դատավարական կարգավիճակն անհրաժեշտ է բնորոշել քրեադատավարական օրենքով նախատեսված պաշտպանի իրավունքների և պարտականությունների միջոցով: Մասնավորապես՝ վերջինս նշել է, որ պաշտպանի դատավարական կարգավիճակը հանգում է պաշտպանի հետևյալ բնորոշմանը՝ պաշտպանը դատավարության ինքնուրույն մասնակից է, որն օժտված է քրեադատավարական օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրականացման համար անհրաժեշտ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված որոշակի իրավունքներով և պարտականություններով [5, էջ 29, 39]:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումների վերլուծության հիման վրա դատավարագիտության մեջ նշվում է, որ պաշտպանի դատավարական կարգավիճակը քրեական դատավարությունում պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

1. *փաստաբան լինելով,* որը հաստատվում է փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթով,

2. *անձի դատավարական կարգավիճակով,* այսինքն՝ երբ քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն, այլ կերպ ասած՝ ստանձնում է նրանց պաշտպանությունը,

3. *կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությամբ,* որը հաստատվում է վերջիններիս ստորագրությամբ վավերացված փաստաթղթով, իսկ օրենսգրքով պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքում՝ առանց նշված համաձայնության՝ իրավասու մարմնի որոշմամբ [6, էջ 184]:

Պաշտպանի դատավարական կարգավիճակը լիարժեք և համակողմանի բնորոշելու, պաշտպանի կարգավիճակի դատավարական բնույթն ընդգծելու նկատառումներից ելնելով՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է այն դիտարկել պաշտպանի ճյուղային իրավական կարգավիճակը կազմող քրեադատավարական օրենքով նախատեսված իրավունքների ու պարտականությունների և դրանցով պայմանավորված ու պաշտպանյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրականացման համար անհրաժեշտ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված այլ հանգամանքների պրիզմայի ներքո: Ըստ այդմ՝ մեր համոզմամբ պաշտպանի դատավարական կարգավիճակի բովանդակությունը կարելի է ներկայացնել այն տարրերի բաժանելու միջոցով, ընդ որում՝ պաշտպանի կողմից քրեական դատավարության սուբյեկտի (քրեական վարույթի մասնակցի) դատավարական կարգավիճակ ձեռք բերելը փաստելու համար անհրաժեշտ է պաշտպանության իրականացման համար քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված բոլոր տարրերի միաժամանակյա առկայությունը: Մեր համոզմամբ պաշտպանի դատավարական կարգավի-

ճակը նման միասնության մեջ դիտելը պայմանավորված է նրանով, որ պաշտպանի ճյուղային իրավական կարգավիճակի տարրերը՝ իրավունքներն ու պարտականությունները, չեն կարող իրացվել առանց մյուս տարրերի առկայության և հակառակը, այսինքն՝ պաշտպանի դատավարական կարգավիճակը կազմող տարրերը միմյանց փոխպայմանավորող տարրեր են:

Պաշտպանի դատավարական կարգավիճակի բովանդակությունը՝ պաշտպանյալի (կասկածյալի կամ մեղադրյալի) իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրականացման համար անհրաժեշտ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված տարրերը, բացահայտելու նպատակով հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) և «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով ամրագրված իրավակարգավորումների համալիր և համակարգային վերլուծությանը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Պաշտպանը» վերտառությամբ 68-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է «պաշտպան» հասկացությունը, որի համաձայն՝ պաշտպան է այն փաստաբանը, որը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով: Նախագծի 6-րդ հոդվածի 25-րդ կետով ամրագրվել է պաշտպանի հետևյալ հասկացությունը՝ պաշտպանը փաստաբան է, ով քրեական վարույթի ընթացքում ստանձնել և իրականացնում է ձերբակալված անձի կամ մեղադրյալի պաշտպանությունը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փաստաբան է այն անձը, որն ունի իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում և ստացել է համապատասխան արտոնագիր՝ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար: Իրավաբանական օգնություն ցույց տալու ժամանակ փաստաբանը որպես ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցում է քրեական դատավարությանը և վարչական իրավախախտումների գործերով վարույթին:

Վերոնշյալ իրավակարգավորումներից բխում են հետևյալ հանգամանքները՝

- քրեական դատավարության ընթացքում պաշտպանյալի պաշտպանությունն իրականացնելիս փաստաբանը մասնակցում է որպես պաշտպան և ոչ թե ներկայացուցիչ,
- պաշտպան կարող է լինել միայն իրավաբանի որակավորում ունեցող և փաստաբանական գործունեություն իրականացնելու համար համապատասխան արտոնագիր ստացած անձը՝ փաստաբանը,
- պաշտպանն իրավաբանական օգնություն է ցույց տալիս կասկածյալի կամ մեղադրյալի (իսկ նախագծային ձևակերպման դեպքում՝ ձերբակալված անձի կամ մեղադրյալի) դատավարական կարգավիճակ ունեցող անձանց,
- կասկածյալին կամ մեղադրյալին իրավաբանական օգնությունը ցույց է տրվում, այլ կերպ ասած՝ պաշտպանությունն իրականացվում է օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը պաշտպանի իրավավիճակ ձեռք է բերում կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությամբ՝ նրա պաշտպանությունն ստանձնելու պահից: Սույն հոդվածը պաշտպանի կարգավիճակ ձեռք բերելը պայմանավորել է կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությամբ:

Նշենք, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածն ամրագրել է պաշտպան հրավիրելու, նշանակելու, փոխարինելու և վարույթին՝ նրա մասնակցելու այլ հիմքերի վերաբերյալ իրավակարգավորումները, որոնց թվում, բացի կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությունից, որպես պաշտպանի կարգավիճակ ձեռք բերելու հանգամանք նշված է քրեական վարույթն իրականացնող մարմնի պահանջի հիման վրա Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից նշանակվելը հետևյալ դեպքերում՝ կասկածյալի կամ մեղադրյալի միջնորդությամբ և այն դեպքում, երբ քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ կասկածյալը կամ մեղադրյալը պաշտպան չունի:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածով ամրագրված պաշտպանի կողմից իր իրավավիճակի հաստատման վերաբերյալ իրավակարգավորման համաձայն՝ իր իրավավիճակը հաստատելու համար պաշտպանը քրեական վարույթն իրականացնող

մարմնին ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթ և փաստաբանների պալատի կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև որպես պաշտպան հանդես գալու՝ կասկածյալի կամ մեղադրյալի ստորագրությամբ վավերացված փաստաթղթային հաստատումը կամ պաշտպան նշանակելու վերաբերյալ սույն օրենսգրքով իրավասու մարմնի որոշումը:

Պաշտպանի դատավարական կարգավիճակը բնորոշելու վերաբերյալ վերոգրյալ տեսական մոտեցումների և իրավակարգավորումների համալիր վերլուծության արդյունքում մեր կողմից առանձնացվել են պաշտպանի դատավարական կարգավիճակը կազմող հետևյալ տարրերը՝

1. *փաստաբան լինելը,*

2. *պաշտպան ունենալու իրավունք ունեցող անձի դատավարական կարգավիճակը,*

3. *պաշտպանի իրավունքներն ու պարտականությունները,*

4. *պաշտպանի դատավարական գործառույթը,* այն է՝ պաշտպանությունը՝ ի դեմս իր բովանդակությունը կազմող տարրերի՝

4.1. *պաշտպանի դատավարական կարգավիճակ ձեռք բերելու եղանակը,* այն է՝ պաշտպանության ստանձնումը,

4.2. *պաշտպանությունը ստանձնելու կամ պաշտպանի մասնակցության հիմքերը,* այն է՝ պաշտպան հրավիրելը, նշանակելը,

4.3. *պաշտպանությունը ստանձնելու պայմանները,* այն է՝ կասկածյալի կամ մեղադրյալի համաձայնությունը, վարույթն իրականացնող մարմնի՝ պաշտպան նշանակելու պահանջը,

4.4. *պաշտպանության սահմանները,* այն է՝ օրենքով չարգելված պաշտպանության միջոցներն ու եղանակները,

4.5. *պաշտպանության առարկան,* այն է՝ պաշտպանյալի իրավունքներն ու օրինական շահերը:

Նշենք, որ պաշտպանության տարրերը պաշտպանի դատավարական կարգավիճակի համար ծառայում են որպես ենթատարրեր:

Ամփոփելով պաշտպանի դատավարական կարգավիճակի տեսական և օրենսդրական հիմքերը՝ մեր կողմից առաջարկվում է պաշտպանի դատավարական կարգավիճակի հասկացության տեսական հետևյալ սահմանումը՝ ***պաշտպանի դատավարական կարգավիճակը*** *պաշտպանյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության*

*իրականացման համար անհրաժեշտ քրեադատավարական օրենսդրությամբ և փաստաբանության ու փաստաբանական գործունեության ոլորտը կարգավորող օրենքով սահմանված, միմյանց փոխպայմանավորող տարրերի ամբողջությունն է, որոնց միաժամանակյա առկայությունը պայմանավորում է պաշտպանի՝ քրեական դատավարության սուբյեկտի (քրեական վարույթի մասնակցի) կարգավիճակ ձեռք բերելը:*


**Ամփոփում**

Հոդվածում անդրադարձ է կատարվել պաշտպանի դատավարական կարգավիճակի բնորոշման հիմնախնդրին՝ այն ներկայացնելով սուբյեկտի իրավական կարգավիճակի համատեքստում, ներկայացվել են պաշտպանի դատավարական կարգավիճակի բնորոշման շուրջ դատավարագիտության մեջ առկա տարբեր մոտեցումները, ինչպես նաև վերլուծվել են խնդրո առարկայի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները, արվել է եզրահանգում պաշտպանի դատավարական կարգավիճակի հասկացության համալիր և համակարգային սահմանման անհրաժեշտության վերաբերյալ, տրվել է պաշտպանի դատավարական կարգավիճակի հասկացության տեսական սահմանումը:


*Հիմնաբառեր:* պաշտպան, քրեական դատավարություն, սուբյեկտի իրավական կարգավիճակ, ճյուղային և հատուկ կարգավիճակներ, դատավարական կարգավիճակ:

**Գրականություն**


1. Хропанюк В.Н. Теория государства и права. Учебник для высших учебных заведений (3-е издание, дополненнное, исправленное) /Под редакцией профессора В.Г. Стрекозова – М.: Издательство «Интерстиль», «Омега-Л», 2008. – 384с.
2. Общая теория права и государства: Учебник / Под ред. В.В. Лазарева. - 3-е изд., перераб. и доп. - М.: Юристъ, 2001. - 520с.
3. Матузов Н.И., Малько А.В. Теория государства и права: Учебник, М.: «Юристъ», 2004. - 245с.
4. Скребец Г.Г. Участие адвоката-защитника в формировании доказательств на стадии предварительного расследования: Авто-

реферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Екатеринбург, 2008, URL: http://www.dissercat.com/content/uchastie-advokata-zashchitnika-v-formirovanii-dokazatelstv-na-stadii-predvaritelnogo-rassled (дата обращения: 09.05.2016).
5. Кудрявцев В.Л. Процессуальные и криминалистические основы деятельности адвоката-защитника в российском уголовном судопроизводстве – М.: Издательство «Юрлитинформ», 2006. – 176с.
6. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. Խումբ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Եր.: Տիգրան Մեծ, 2016, 632 էջ:

## THEORETICAL AND LEGISLATIVE BASES OF THE DEFENDER'S PROCEDURAL STATUS

**Lusine Gharagyozyan**
EREA, Chair of Law, Postgraduate student

### Summary

The article is about the problem of determining the defender's procedural status which is introduced in the context of the subject's legal status, it presents the various approaches of the proceduralists in determining the defender's procedural status, analyzes legislative regulations on this issue, concludes that a comprehensive and systematic definition of the defender's procedural status is required, it's given the theoretical definition of the defender's procedural status.

*Keywords.* defender, criminal procedure, the subject's legal status, the branch and special statuses, procedural status.

# ТЕОРЕТИЧЕСКИЕ И ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ ОСНОВЫ ПРОЦЕССУАЛЬНОГО СТАТУСА ЗАЩИТНИКА

**Карагёзян Лусине Варужановна**
ЕРОА, кафедра правоведения, аспирант

## Резюме

В статье рассматривается проблема определения процессуального статуса защитника, представляющего его в контексте правового статуса субъекта, представлены различные подходы процессуалистов по определению процессуального статуса защитника, а также анализируются законодательные регулирования по данному вопросу, сделан вывод о необходимости комплексном и системном определении понятия процессуального статуса защитника, дано теоретическое определение понятия процессуального статуса защитника.

*Ключевые слова.* защитник, уголовный процесс, правовой статус личности, отраслевый и специальный статусы, процессуальный статус.

# ՊԱՇՏՊԱՆԻ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

***Ղարագյոզյան Լուսինե Վարուժանի***
*ԵՊՏՀ, իրավագիտության ամբիոն, ասպիրանտ*

Ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցության սահմանների վերաբերյալ հարցը դատավարագիտության մեջ բավականին քննարկված, սակայն հակադիր կարծիքներ առաջացրած դեռևս արդիական հարցերից է, որն իր արտացոլումն է ստացել պաշտպանին՝ որպես քրեադատավարական ապացուցման սուբյեկտ դիտելու հարցի մեջ: Պաշտպանի՝ որպես քրեադատավարական ապացուցման սուբյեկտի վերաբերյալ առկա գիտական մոտեցումների և իրավակարգավորումների վերլուծության համար անհրաժեշտ է քննարկել միմյանց հետ փոխկապակցված հետևյալ երկու հարցադրումները՝

ա) քրեադատավարական ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցությունը վերջինիս իրավու՞նքն է, թե՞ պարտականությունը

բ) պաշտպանը՝ որպես քրեադատավարական ապացուցման սուբյեկտ, իրավունք ունի վարելու փաստաբանական քննությու՞ն, թե՞ ոչ:

Մի շարք հեղինակներ քրեադատավարական ապացուցման գործընթացում պաշտպանի մասնակցությունը դիտում են որպես իրավունք, մյուսները՝ պարտականություն [1, էջ 60]: Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ պաշտպանի գործունեությունը հանրային-իրավական բնույթ է կրում (offentliches Amt, fonction publique) [2, էջ 199], որից բխում է պաշտպանյալի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու պաշտպանի ընդհանուր պարտականությունը: Այդ առնչությամբ Վ.Լ. Կուդրյավցևը նշել է, որ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի սահմանման[1] մեջ արտացոլված է պաշտպանի լիազորությունների իրավապարտադրող բնույթն ընդհանուր տեսքով, ընդ որում՝ նշենք, որ տվյալ պարագայում «լիազո-

[1] Պաշտպանը քրեական գործի վարույթով սույն օրենսգրքով սահմանված կարգով կասկածյալի և մեղադրյալի իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող և իրավաբանական օգնություն ցույց տվող անձն է:

րություններ» տերմինը օգտագործված է գրականության մեջ առկա այն սահմանման իմաստով, որի համաձայն՝ լիազորությունը իրավունքների և պարտականությունների զուգադիպությունն է, համընկնումը [3, էջ 56]: Նշված ընդհանուր բնույթը ենթադրում է, որ անհրաժեշտ է պաշտպանի գործողություններին վերաբերվել որպես նրան թույլատրված և միաժամանակ որպես կատարման ենթակա պարտադիր գործողություններ: Դրանից ելնելով՝ օրենսդիրը «պաշտպան» հասկացությունը սահմանելիս հիմք է ընդունել իրավակարգավորման բնութագրական մեթոդը՝ զերծ մնալով «իրավունք ունի» կամ «պարտավոր է» բառերի օգտագործումից, քանի որ վերջինս հնարավորություն չունի հստակ իրավակարգավորման ենթարկել այն կոնկրետ իրավիճակները, երբ պաշտպանը, օժտված լինելով օրենսդրությամբ իրեն վերապահված իրավունքներով, միաժամանակ կրում է դրանք իրացնելու պարտականություն: Ընդհանուր պարտականությունը պաշտպանից պահանջում է հնարավորության առկայության դեպքում իրացնել իր իրավունքները՝ պաշտպանության իրականացման նպատակով: Օրենքով չարգելված պաշտպանության բոլոր միջոցների և եղանակների օգտագործմամբ պաշտպանի իրավունքների իրականացման ընդհանուր պարտականության մասին է վկայում նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով ամրագրված փաստաբանի այն պարտականությունը, որի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:

Ինչ վերաբերվում է պաշտպանին՝ որպես քրեադատավարական ապացուցման սուբյեկտ դիտելու շրջանակում արված փաստաբանական քննություն անցկացնելու վերաբերյալ հարցադրմանը, ապա նշենք, որ այն բխում է ապացույցներ հավաքելու և ներկայացնելու պաշտպանի իրավունքից: Ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով 2001 թվականից նախատեսված է ապացույցներ հավաքելու և ներկայացնելու պաշտպանի իրավունքը (53-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Նշված նորամուծության հիման վրա առաջ է քաշվել զուգահեռ կամ փաստաբանական քննության գաղափարը, որը միանշանակ չի ընդունվել գիտնականների կողմից:

Ե.Գ. Մարտինչիկի կողմից մշակված հայեցակարգի և փաստաբանական քննության մոդելի համաձայն՝ փաստաբանական քննությունը մինչդատական վարույթի բաղկացուցիչ մաս է դիտվում, որն իրականացվում է կասկածյալի, մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով ձեռնհաս իրավաբանի՝ պաշտպանի կողմից: Փաստաբանական քննությունը հետաքննության և նախաքննության հետ մեկտեղ հանդես է գալիս որպես քրեադատավարական գործունեության նոր տեսակ, որն իրականացվում է մինչդատական վարույթի նշված տեսակների և ՌԴ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքերով ու կարգով հետաքննիչի, քննիչի կամ դատախազի կողմից հարուցված քրեական գործի սահմաններում [4, էջ 135]:

Մրցակցության գաղափարախոսության վերաիմաստավորման, մասնավորապես՝ այն դատավարական սկզբունքից դատավարության ձևի (ռեժիմի) վերածելու հայեցակարգային[2] խնդրի համատեքստում և դրանով պայմանավորված պաշտպանության կողմի իրավունքների ընդլայնման նպատակով ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) պաշտպանին նյութերի փոխարեն ապացույցներ հավաքելու և ներկայացնելու իրավունքի վերապահման արդյունքում Հայաստանի Հանրապետությունում ևս անխուսափելի և իրավաչափ է փաստաբանական քննություն անցկացնելու փաստաբանի հնարավորության հարցը: Նշված նորամուծությամբ՝ որպես քրեական գործերի քննության ընթացքում անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիքների ամրապնդման կարևորագույն նախադրյալ, ընդլայնվում են մրցակցության տարրերը:

Փաստաբանական քննություն վարելու հարցում դատավարագիտության մեջ առկա են երկու հակադիր մոտեցումներ:

***Առաջին մոտեցման համաձայն***՝ պաշտպանն իրավունք ունի վարել լիարժեք փաստաբանական քննություն, որի համար ապացույցներ հավաքելու ոլորտում օժտված է հետաքննիչի և քննիչի հավասար իրավունքներով: Նշված մոտեցման կողմնակիցներն իրենց դիրքորոշումը հիմնավորում են հետևյալ փաստարկների ուժով՝

[2] Տե՛ս ՀՀ կառավարության 2011թ. մարտի 10-ի նիստի N 9 արձանագրային որոշմամբ ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ):

• *Մեղադրանքի և պաշտպանության կողմերն իրավահավասար են դատարանի առջև,* որը բխում է մրցակցության սկզբունքի, մասնավորապես՝ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված պահանջից:

• *Պաշտպանը՝ որպես քրեական դատավարության սուբյեկտ ընդհանրապես, և որպես քրեադատավարական ապացուցման սուբյեկտ մասնավորապես, իրականացնում է ապացուցողական գործունեություն այլ դատավարական գործողությունների միջոցով:* Այսպես, ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ ապացույցները հավաքվում են քննչական և այլ դատավարական գործողությունների միջոցով, իսկ նույն հոդվածի 3-րդ մասում սահմանված են պաշտպանի կողմից ապացույցներ հավաքելու ուղիները, որոնք էլ հենց դիտվում են որպես պաշտպանի կողմից իրականացվող այլ դատավարական գործողություններ, քանի որ քննչական գործողությունների իրականացումը պաշտպանի իրավասությունը չէ:

• *Պաշտպանի կողմից հավաքվող ապացույցները դասվում են ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված «այլ փաստաթղթեր» տեսակի ապացույցների թվին:* Մասնավորապես, սույն մոտեցման կողմնակիցները նշում են, որ պաշտպանի կողմից հավաքվող ապացույցները (փաստաթղթերը, տվյալները, առարկաները) թույլատրելի և վերաբերելի ապացույցներ են, քանի որ հավաքվում են ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա և քրեական գործին կցվելուց հետո դառնում են քրեական գործի նյութեր [5]:

***Երկրորդ մոտեցման համաձայն՝*** պաշտպանի փաստաբանական քննությունը պետք է սահմանափակվի պետական իշխանության մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական միավորումներից և քաղաքացիներից նյութեր և այլ փաստաթղթեր ձեռք բերելով, քանի որ ապացույցներ հավաքելու միակ սուբյեկտ պետք է լինի հետաքննիչը, քննիչը: Բանն այն է, որ օրենսդրությամբ ամրագրվել է միայն ապացույցներ հավաքելու պաշտպանի իրավունքը, իսկ այդ իրավունքի իրացման կարգը չի սահմանվել, հետևաբար, ինչպես Ն.Ա. Կոլոկոլովն է արդարացիորեն նշել, ռուսական դատավարագիտության համար նոր ինստիտուտի՝ փաստաբա-

նական քննություն իրականացնելու ճանաչումը պահանջում է մանրամասն իրավական կարգավորում [6]:

Տվյալ դիրքորոշումը հիմնավորվում է ապացույցներ հավաքելու ոլորտում պաշտպանի լիազորությունների սահմանման մեջ առկա օրենսդրական հակասություններով: Այսպես, ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի շրջանակում առկա է հակասություն 86-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի նորմերի միջև, քանի որ 86-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ապացույցներ հավաքելու սուբյեկտների թվում պաշտպանը նշված չէ, մինչդեռ նույն հոդվածի 3-րդ մասում թվարկված են պաշտպանի կողմից ապացույցներ հավաքելու միջոցները: Բացի այդ, ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն պաշտպանն իրավունք ունի հավաքել ապացույցներ, մինչդեռ «Փաստաբանության և փաստաբանական գործունեության մասին» Ռուսաստանի Դաշնության դաշնային օրենքի (այսուհետ՝ Դաշնային օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պաշտպանն իրավունք ունի հավաքել տվյալներ, անել հարցումներ, հավաքել և ներկայացնել առարկաներ և փաստաթղթեր, որոնք կարող են իրեղեն և այլ ապացույցներ ճանաչվել օրենսդրությամբ սահմանված կարգով: Այսինքն՝ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն պաշտպանը հավաքում է ապացույցներ, իսկ Դաշնային օրենքի համաձայն հավաքում է նյութեր, որոնք ինքնին ապացույց չեն համարվում, այլ ապացույց համարվելու համար անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով դրանց ապացույց ճանաչելը:

Նշվածը վկայում է այն մասին, որ նման իրավակարգավորման պայմաններում պաշտպանը ապացույցներ հավաքելու տեսանկյունից չի դիտվում ապացուցման լիիրավ սուբյեկտ: Այս առումով հարկ ենք համարում նշել Հայեցակարգի 2.38-րդ կետում նախատեսված համապատասխան դրույթը, որն ուղղված է մրցակցության տարրերի ուժեղացմանը՝ «Հիմնվելով **պաշտպանի կողմից վարույթն իրականացնող մարմնին տրամադրված դատավարական տեղեկատվության օրինականության կանխավարկածի** վրա, նրա ներկայացրած նյութերը համարվում են թույլատրելի ապացույց, քանի դեռ վարույթն իրականացնող մարմինը չի ապացուցել հակառակը: Ընդ որում, պաշտպանի ներկայացրած փաստաթղթերը կամ առարկաները բոլոր դեպքերում **պետք է մնան** քրեական գործի նյութերում՝ անկախ դրանց

նկատմամբ վարույթն իրականացնող մարմնի վերաբերմունքից: Դրա հետ մեկտեղ պաշտպանը պահպանում է անձանց հարցման ենթարկելու և փորձագետի կարծիք հարցնելու իրավունքները:»:

Ընդհանրապես, դատավարագիտության մեջ նշվում է, որ ապացույցի թույլատրելիությունը որոշելիս պետք է պահպանել չորս «պատշաճի» կանոններ՝

1. ապացույցի ձեռքբերման պատշաճ դատավարական կարգ,
2. ապացույցը ձեռք բերող պատշաճ սուբյեկտ,
3. ապացույցի ձեռքբերման պատշաճ աղբյուր,
4. ապացույցի ձեռքբերման պատշաճ եղանակ [7, էջ 372]:

Գտնում ենք, որ վերոնշյալ հակասությունները չպետք է հիմք ծառայեն պաշտպանին ապացուցման սուբյեկտ, մասնավորապես՝ փաստաբանական քննություն իրականացնելու իրավունք ունեցող սուբյեկտ, չդիտելու համար, այլ անհրաժեշտ է նշված հակասությունների լուծման ուղիները սահմանելով միաժամանակ լուծել ժամանակով թելադրված մրցակցության տարրերի ընդլայնման խնդիրը: Այսպես, անհրաժեշտ է պաշտպանի կողմից ձեռք բերվող ապացույցների թույլատրելիությունը կասկածի տակ չդնելու նպատակով նախատեսել այնպիսի օրենսդրական իրավակարգավորումներ, որոնց համաձայն՝ պաշտպանի կողմից ձեռք բերվող ապացույցները կհամապատասխանեն ապացույցների թույլատրելիության չորս «պատշաճի» կանոններին:

Սույն խնդրի լուծման գործուն ուղիներից մեկը վերը նշված Հայեցակարգի 2.38-րդ կետում ամրագրված հայեցակարգային դրույթն է: Վերոգրյալի արդյունքում կարող ենք փաստել, որ ապացույցներ հավաքելու իրավունքի իրացման արդյունքում պաշտպանի դատավարական գործունեության հիմնական ուղղությունը ապացուցողական գործողությունների իրականացումն է: Այս առումով կարևորում ենք Նախագծով «ապացուցողական գործողություն» հասկացության նախատեսումը, որը բացակայում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Համաձայն Նախագծի 6-րդ հոդվածի 38-րդ կետի՝ ապացուցողական գործողությունը քննիչի կամ դատարանի կողմից, ինչպես նաև հետաքննության մարմնի (քննիչի հանձնարարությամբ) կամ փորձագետի (քննիչի կամ դատարանի հանձնարարությամբ) կողմից կատարվող՝ սույն օրենսգրքով նախատեսված վարույթային գործողություն է, որի արդյունքում ակնկալվում է ձեռք բերել ապացույց: Գտնում ենք, որ ապացուցո-

ղական գործողություն իրականացնող դատավարական սուբյեկտների շարքում պետք է ընդգրկել պաշտպանին՝ որպես ապացույց ձեռք բերելուն ուղղված վարույթային գործողություն կատարելու լիազորությամբ օժտված սուբյեկտի հետևյալ հիմնավորմամբ՝

• *Նախագծի 103-րդ հոդվածով փրված իրավակարգավորման* համաձայն՝ «ապացույցները հավաքվում են քրեական վարույթի ընթացքում՝ սույն օրենսգրքով նախատեսված **ապացուցողական գործողությունների կատարման միջոցով,** ...»: Այսպես, Նախագծի 49-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով պաշտպանին վերապահվել է ապացույցներ ձեռք բերելու և ներկայացնելու իրավունք՝ վարույթի նյութերին կցելու և հետազոտելու համար, սակայն թե ինչ գործողությունների կատարման միջոցով, Նախագծում նշված չէ: Դրա համար անհրաժեշտ է ապացուցողական գործողությունների կատարման սուբյեկտ նշել նաև պաշտպանին, քանի որ վերջինիս գործունեությունն իրականացվում է մրցակցության և իրավահավասարության սկզբունքների հիման վրա և ապացուցողական բնույթ է կրում:

• *Նախագծի «Ապացուցողական և այլ վարութային գործողությունների արձանագրությունները» վերտառությամբ 95-րդ հոդվածով փրված «սույն օրենսգրքով սահմանված՝ պատշաճ այլ անձի» ձևակերպումը:* Մասնավորապես՝ նշված հոդվածի համաձայն՝ ապացուցողական գործողությունների արձանագրություններն են սույն օրենսգրքով նախատեսված և գրավոր կազմված փաստաթղթերը, որոնք արտացոլում են ապացուցողական գործողությունների կատարման ընթացքում վարույթն իրականացնող մարմնի **կամ սույն օրենսգրքով սահմանված՝ պատշաճ այլ անձի կողմից** անմիջականորեն ընկալված՝ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքները: Այսինքն՝ պաշտպանը նշված հոդվածի շրջանակում կարող է և մեր համոզմամբ պետք է դիտվի ապացուցողական գործողությունների կատարման ընթացքում սույն օրենսգրքով սահմանված՝ պատշաճ այլ անձ, ում կողմից անմիջականորեն ընկալված՝ վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքներն արտացոլվում են ապացուցողական գործողությունների արձանագրություններում:

Վերոնշյալ առաջարկից բխում է ապացուցողական գործողությունների այնպիսի տարատեսակ, ինչպիսին է պաշտպանական գործողությունը, որի կապակցությամբ առաջարկում ենք վերջինիս

հետևյալ սահմանումը՝ պաշտպանական գործողությունը պաշտպանի կողմից կատարվող սույն օրենսգրքով նախատեսված ապացուցողական գործողություն է:

Հաշվի առնելով ապացուցման սահմանման դասական կանոնը, որի համաձայն՝ ապացուցումը կազմված է երեք տարրերից, գտնում ենք, որ պաշտպանի ապացուցողական գործողությունները, այսինքն՝ պաշտպանական գործողությունները, ևս պետք է դիտարկել ապացուցման երեք տարրերի իրացման ներքո, արդյունքում՝ պաշտպանին անհրաժեշտ է դիտել որպես ապացուցման ինքնուրույն և լիիրավ սուբյեկտ: Այստեղից հետևում է, որ փաստաբանական քննության վերաբերյալ ներկայացված հիմնավորումները կարող են նշված ինստիտուտի ներդրմամբ կյանքի կոչվել: Դրանից ելնելով՝ առաջարկում ենք օրենսդրական մակարդակով սահմանել նաև «փաստաբանական վարույթ» հասկացությունը, իսկ դրա հիման վրա պաշտպանական գործողությունները դիտել որպես վարույթային գործողություններ: Մասնավորապես՝ առաջարկում ենք Նախագծում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1. Նախագծի 6-րդ հոդվածի 37-րդ կետով տրված «վարութային գործողություն» հասկացության մեջ «ի պաշտոնե» բառից հետո լրացնել «կամ պաշտպանի կողմից» բառերով:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը լրացնել «փաստաբանական վարույթ» հետևյալ հասկացությամբ՝ փաստաբանական վարույթը պաշտպանի ապացուցողական գործողությունների արդյունքների ամրագրման ընթացակարգն է:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը լրացնել «Պաշտպանության եղանակներ և միջոցներ» վերտառությամբ հոդված, որում անհրաժեշտ է ամրագրել ապացույցների հավաքման միջոցների ու եղանակների կիրառման ընթացակարգերը՝ դատական և/կամ նոտարական դեպոնացում, հարցումներ, փաստաթղթեր պահանջել, միջնորդություններ և այլն: Այսինքն՝ նման ճանապարհներով ապացույցներ հավաքելու արդյունքում դրանք արդեն իսկ ձեռք են բերում ապացույցի կարգավիճակ՝ անկախ քրեական գործին դրանց կցվելուց:

Հարկ է նշել, որ պաշտպանը ո՛չ գործող քրեական դատավարության օրենսգրքում, ո՛չ էլ Նախագծում չի դասվում ապացուցման սուբ-

յեկտների շարքին: Չնայած քրեադատավարական օրենսդրությամբ պաշտպանին որպես ապացուցում իրականացնող սուբյեկտ չամրագրելուն, քրեադատավարական իրավունքի զարգացման արդյունքում, ինչպես արդեն նշվել է, Նախագծով պաշտպանին վերապահվել է ապացույցներ հավաքելու իրավունք, ինչն ապացուցման տարրերից է: Հարկ է նաև նկատել, որ Նախագծով փոխվել է ապացուցման հասկացությունը, որի տառացի մեկնաբանության արդյունքում ապացուցման նպատակի փոփոխությունից ևս կարող ենք փաստել, որ պաշտպանն անուղղակի ձևով դիտվում է ապացուցում իրականացնող սուբյեկտ, քանի որ ապացուցումը երեք տարրերի միասնություն է: Այսպես, Նախագծի 101-րդ հոդվածի համաձայն՝ ապացուցումը սույն օրենսգրքով նախատեսված՝ ապացուցման ենթակա փաստական հանգամանքները, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ ***հաստատելու կամ հերքելու նպատակով*** ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելն է: Իսկ ապացուցման ենթակա փաստական հանգամանքները հերքելու նպատակ են հետապնդում ոչ միայն վարույթի հանրային մասնակիցները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մաս), այլև պաշտպանը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 28-րդ կետ):

Մրցակցության սկզբունքի առավելապես իրացման, ինչպես նաև ապացուցման ոլորտում պաշտպանի դերակատարության բարձրացման նպատակով դատավարագիտության մեջ առաջարկվում է պաշտպանին, բացի ապացույցներ հավաքելու սուբյեկտ դիտարկելուց վերջինիս դասել նաև ապացույցները ստուգելու և գնահատելու իրավասություն ունեցող սուբյեկտների շարքին: Դրա մասին է վկայում այն, որ պաշտպանն օժտված է ապացուցման երեք տարրերն իրագործելու լիազորություններով [8, էջ 187-188], ապացույցները ստուգում է այլ դատավարական գործողությունների միջոցով և դրանք գնահատում է իր ներքին համոզմամբ [9], ստուգումն ու գնահատումը պաշտպանի կողմից իրականացվում են քրեական գործի նյութերին ծանոթանալու, միջնորդություններ ներկայացնելու, մեղադրանքի կողմին և դատարանին այս կամ այն ապացույցի թույլատրելիության վերաբերյալ իր դիրքորոշումը հայտնելու դեպքերում [5], ինչպես նաև նշվում է, որ պաշտպանը պարտավոր է ստուգել և գնահատել գործով բոլոր ապացույցները և

պետք է համարվի ապացուցման իրավահավասար սուբյեկտ փաստական տվյալների ստուգման և գնահատման տեսանկյունից [10, էջ 97]:

Սակայն, Մ.Մ. Շեյֆերը պաշտպանին չի համարում ապացույցները ստուգելու և գնահատելու լիարժեք սուբյեկտ: Նա պաշտպանին համարում է ապացույցները ստուգելու և գնահատելու սուբյեկտ միայն այն իմաստով, որ իր դատավարական կարգավիճակի շրջանակում իրականացնում է մտավոր գործունեություն, սակայն նման գործունեության արդյունքները չունեն ապացուցողական նշանակություն և սահմանափակվում են միայն ստուգելու արդյունքում ապացույցների համեմատական վերլուծության և միմյանց հետ համադրման միջոցով ապացույցները անթույլատրելի ճանաչելու միջնորդություններ հարուցելով, իսկ գնահատելու արդյունքում իրավական միջոցների՝ միջնորդությունների, պաշտպանական ճառի, ռեպլիկների միջոցով քրեական վարույթն իրականացնող մարմնի ներքին համոզման վրա ազդեցություն գործելով: Մ.Մ. Շեյֆերը բացառում է ապացույցներ ստուգելու պաշտպանի իրավունքի գոյությունն այլ ապացույցներ ձեռք բերելու միջոցով՝ հիմնավորելով, որ պաշտպանը չի կարող ապացույցներին հաղորդել դատավարական ձև: Վերջինս իրավասու է միջնորդություններ հարուցել միայն նոր ապացույցներ ձեռք բերելու վերաբերյալ: Պաշտպանն ապացույցները գնահատելու արդյունքում իրավունք չունի անթույլատրելի ճանաչել ապացույցը, քանի որ օժտված չէ իշխանական լիազորություններով, սակայն վերոնշյալ իրավական միջոցներով կարող է հասնել ապացույցը անթույլատրելի ճանաչելուն իրավասու մարմնի կողմից [11]:

Առջևում ունենալով մրցակցության տարրերի ընդլայնման տեսլականը՝ գտնում ենք, որ այն կարող է իրագործելի լինել պաշտպանին ապացուցման իրավունք ունեցող լիարժեք սուբյեկտ դիտելու դեմ նշված փաստարկների, խնդիրների լուծմանն ուղղված հիմնավորված համապատասխան օրենսդրական փոփոխություններ նախատեսելու դեպքում: Մասնավորապես՝

- «այլ ապացույցներ ձեռք բերելու միջոցով պաշտպանի կողմից ապացույցներ ստուգելու իրավունքի բացառումը այն հիմնավորմամբ, որ պաշտպանը չի կարող ապացույցներին հաղորդել դատավարական ձև» փաստարկի, խնդրի լուծում կարող է ծառայել դատավարագիտության մեջ առաջ քաշված փաստաբանական քննության գաղափարը

տեսական հարթությունից օրենսդրական և իրավակիրառ հարթություններ տեղափոխելով:

- «Պաշտպանն իրավասու է հարուցել միջնորդություններ միայն նոր ապացույցներ ձեռք բերելու վերաբերյալ» փաստարկը հակասում է ապացույցներ հավաքելու պաշտպանի իրավունքին, որն արդեն իսկ նախատեսված է ՌԴ օրենսդրությամբ, իսկ ՀՀ-ում այն նախատեսվել է Նախագծում և մրցակցության տարրերի ընդլայնման խնդրի կարևորագույն լուծումներից է: Բացի այդ, նոր ապացույցներ ձեռք բերելու հետ մեկտեղ պաշտպանը պահպանում է միջնորդություններ, օրինակ՝ Նախագծի 306-րդ հոդվածով նախատեսված ցուցմունքի դատական դեպոնացման միջնորդություն ներկայացնելու իրավունքը:
- «Պաշտպանն ապացույցները գնահատելու արդյունքում իրավունք չունի անթույլատրելի ճանաչել ապացույցը, քանի որ օժտված չէ իշխանական լիազորություններով» փաստարկի առնչությամբ նշենք, որ ապացույցն անթույլատրելի ճանաչելը պաշտպանի կողմից ապացույցը գնահատելու նպատակն է և ոչ թե արդյունքը, իսկ ապացույցը գնահատելու արդյունքը մեր կարծիքով պետք է լինի տվյալ ապացույցի թույլատրելիության վերաբերյալ իր դիրքորոշման ամրագրումը համապատասխան դատավարական ակտում: Մեր կողմից առաջարկվում է քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսել պաշտպանական ակտը՝ որպես պաշտպանի գնահատման արդյունքների՝ միջնորդությունների, հայտարարությունների, բողոքների ամփոփում և համակարգված դիրքորոշման արտահայտում, որը մեղադրական եզրակացության նման ևս ենթակա է դատարանին ներկայացման քրեական գործին կցված վիճակով: Գտնում ենք, որ պաշտպանական ակտը մեղադրական եզրակացությանը հավասարապես գոյության իրավունք ունի, հատկապես հաշվի առնելով այն, որ գործի լուծման համար փաստական հանգամանքների վերջնական գնահատական տվողը դատարանն է, ով կաշկանդված չէ կողմերի կարծիքներով, տվյալ պարագայում՝ մեղադրական եզրակացության և պաշտպանական ակտում արտացոլված համապատասխանաբար մեղադրանքի և պաշտպանության կողմերի գնահատման արդյունքներով: Այսպիսով, առաջարկում ենք Նախագծի 6-րդ հոդվածի 33-րդ կետով տրված դատավարական ակտ հասկացության մեջ «որոշումը» բառից հետո լրացնել «պաշտպանական ակտը» բառերը, իսկ հասկացությունների մեջ ավե-

լացնել պաշտպանական ակտ հասկացությունը՝ այն սահմանելով որպես քրեական գործով հանգամանքների վերաբերյալ պաշտպանության դիրքորոշումն արտահայտող վարույթային ակտ:

Նշենք, որ դատավարագիտության մեջ ևս առաջարկվել է նույնաբովանդակ դրույթ՝ որպես քննիչի գործունեության մեղադրական հակվածության չեզոքացման մեխանիզմ: Մասնավորապես, Գ.Գ. Սկրեբեցն առաջարկել է օրենսդրական մակարդակով ամրագրել հետևյալ իրավանորմը՝ «պաշտպանը գործում առկա ապացույցների հիման վրա կազմում է պաշտպանության եզրակացություն և ներկայացնում դատարան» [12]:

Վերոնշյալ վերլուծությունների արդյունքում գտնում ենք, որ անգամ ապացուցման իրավունքի իրականացման պարագայում պաշտպանն իրականացնում է ապացուցմանը ներհատուկ գործունեություն, ուստի, մեր համոզմամբ անհրաժեշտ է քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսել «Ապացուցում իրականացնող վարույթի մասնակիցներ» վերտառությամբ հոդված, որով ապացույցների հավաքման, ստուգման և գնահատման սուբյեկտների թվում պետք է նախատեսել նաև պաշտպանին, ինչը պաշտպանական դիրքի կառուցման ամուր հենքն է և կարող է ծառայել որպես պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման օրենսդրական կարգավորման նախապայմաններից մեկը:

Վերոշարադրյալի հիման վրա հանգում ենք այն եզրակացության, որ ապացուցման գործընթացում պաշտպանի ակտիվ և լիարժեք մասնակցության համար նոր իրավակարգավորումներ նախատեսելու և պաշտպանին որպես փաստաբանական քննության վարելու միջոցով ապացուցման իրավունք ունեցող ինքնուրույն սուբյեկտ օրենսդրական մակարդակով ամրագրելու արդյունքում պաշտպանյալի շահերի պաշտպանությունը կիրականացվի առավել արդյունավետ՝ ի օգուտ ոչ միայն պաշտպանյալի շահերի, այլև ողջ քննության համար:

**Ամփոփում**

Հոդվածում անդրադարձ է կատարվել պաշտպանին քրեադատավարական ապացուցման սուբյեկտ դիտարկելու գործնական խնդիրներին, որոնց համատեքստում քննարկվել են քրեադատավարական

ապացուցման գործընթացին պաշտպանի մասնակցությունը որպես վերջինիս իրավունք կամ պարտականություն դիտարկելու և պաշտպանի կողմից վարույթի հանրային մասնակիցներին զուգահեռ փաստաբանական քննություն վարելու հնարավորության վերաբերյալ հարցադրումները, վերլուծության են ենթարկվել թվարկված խնդիրների առնչությամբ դատավարագետների իրարամերժ մոտեցումները և օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև արվել են եզրահանգումներ և օրենսդրական առաջարկներ:

*Հիմնաբառեր*. պաշտպան, քրեադատավարական ապացուցման սուբյեկտ, փաստաբանական քննություն, մրցակցություն, կողմերի իրավահավասարություն, ապացույց, ապացուցողական գործողություններ:

## Գրականություն


1. Кудрявцев В.Л. Процессуальные и криминалистические основы деятельности адвоката-защитника в российском уголовном судопроизводстве – М.: Издательство «Юрлитинформ», 2006. – 176с.
2. Васьковский Е.В. Организация адвокатуры. Ч. 1: Очерк всеобщей истории адвокатуры; Ч. 2: Исследование принципов организации адвокатуры. Ч. 1-2 / Е. В. Васьковский. - СПб.: Н.К. Мартынов, 1893. - 621с.
3. Григорьев В.Н. Уголовный процесс: Учебник / В.Н.Григорьев, А.В.Победкин, В.Н. Яшин. - 2- е изд., перераб. и доп. - М.: Эксмо, 2008. - 816с. - (Российское юридическое образование).
4. Мартынчик Е.Г. Адвокатское расследование в уголовном процессе. Теоретико-методологические основы доктрины адвокатского расследования: учеб. пособие / М.: ЮНИТИ-ДАНА: Закон и право, 2009. – 239с.
5. Засорина Е.А. Защитник как субъект доказывания в российском уголовном процессе // Научно-практический журнал «Наука и образование: хозяйство и экономика; предпринимательство; право и управление», 2012 июнь, URL: http://www.journal-nio.com/index.php?option=com_content&view=article&id=1262&Itemid=107_(дата обращения: 22.01.2017).

6. Колоколов Н.А. Параллельное адвокатское расследование // Адвокатская практика, 2005, N 4, URL: https://www.lawmix.ru/comm/915 (дата обращения: 22.04.2017).
7. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Մաս 1, Հեղ. Խումբ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Եր.: Տիգրան Մեծ, 2016, 632 էջ:
8. Аксенов А.Д. Участие защитника в уголовно-процессуальном доказывании: Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, ННОУ ВПО «Московский гуманитарный университет», Москва, 2009, 205с.
9. Краскова И.С. Защитник как субъект доказывания на досудебных стадиях уголовного процесса: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, «Всероссийский научно-исследовательский институт МВД России», Москва, 2008, URL: http://www.dissercat.com/content/zashchitnik-kak-subekt-dokazyvaniya-na-dosudebnykh-stadiyakh-ugolovnogo-protsessa_(дата обращения: 05.04.2016).
10. Алиев Т.Т., Громов Н.А., Макаров Л.В. Уголовно-процессуальное доказывание. – М.: «Книга сервис», 2002. – 128с.
11. Шейфер М.М. Является ли защитник полноправным субъектом доказывания в уголовном процессе? URL: http://www.iuaj.net/node/477 (дата обращения: 22.04.2017).
12. Скребец Г.Г. Участие адвоката-защитника в формировании доказательств на стадии предварительного расследования: Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Екатеринбург, 2008, URL: http://www.dissercat.com/content/uchastie-advokata-zashchitnika-v-formirovanii-dokazatelstv-na-stadii-predvaritelnogo-rassled (дата обращения: 09.05.2016):

## SOME ISSUES OF THE DEFENDER'S CRIMINAL-PROCEDURAL STATUS IN THE REPUBLIC OF ARMENIA AND THE RUSSIAN FEDERATION

**Lusine Gharagyozyan**
EREA, Chair of Law, Postgraduate student

**Summary**

The article is about the practical issues of consideration the defender as a subject of criminal procedural proof in the context of which the following issues are discussed: the defender has the right or the duty to participate in criminal procedural proof, the defender has the right to carry out the lawyer's investigation in parallel with the public participants of the process. On the above issues, the contradictory approaches of the proceduralists and legislative provisions have been analyzed. Conclusions and legislative proposals also have been made.

*Keywords*. defender, subject of criminal procedural proof, lawyer investigation, adversarial, equality of rights of parties, evidence, evidentiary acts.

## НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО СТАТУСА ЗАЩИТНИКА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ И РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

**Карагёзян Лусине Варужановна**
ЕРОА, кафедра правоведения, аспирант

**Резюме**

Статья посвящена практическим вопросам рассмотрения защитника как субъекта уголовно-процессуального доказывания, при контексте которой обсуждаются следующие вопросы: защитник вправе или обязан уяаствовать в уголовно-процессуальном доказывании, защитник вправе осуществить адвокатское расследование параллельно с публичными участниками процесса. По вышеуказанным вопросам

проанализированы противоречивые подходы процессуалистов и законодательные положения, а также сделаны выводы и законодательные предложения.

*Ключевые слова.* защитник, субъект уголовно-процессуального доказывания, адвокатское расследование, состязательность, равенство прав сторон, доказательство, доказательственные деяния.

# ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՄԻՆՉԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

***Լիլիթ Անդրանիկի Սուքիասյան***
*ԵԿՏԱ, Իրավագիտության ամբիոն, ասպիրանտ*

Ցանկացած ժողովրդավարական քաղաքացիական հասարակությունում իշխանության իմանենտ կրողն ու սեփականատերը համարվում է ժողովուրդը, որն այն իրականացնում է հիմնականում ընտրությունների միջոցով: Այս հանգամանքի հաշվառմամբ հայեցկարգային մտածող Իմանուիլ Կանտն իր «Բարքերի մետաֆիզիկա»-աշխատության մեջ նշում է, որ միայն ընտրելու կարողությունն է որակում մարդուն որպես քաղաքացի[1]: ՀՀ Սահմանադրությունը հռչակում է ժողովրդաիշխանության սկզբունքը, ինչը հիմնականում կյանքի է կոչվում ընտրական իրավունքի իրացմամբ: Ժողովրդի կողմից ընտրված ներկայացուցչական մարմինների գործունեությունն էլ իր հերթին անդրադառնում է պետության կառուցակարգի բոլոր տարրերի վրա, ուստի դժվար է պատկերացնել արդի ժողովրդավարական մի պետություն առանց պատշաճ ներդրված ընտրական համակարգի:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 48-րդ հոդվածում տեղ են գտել քաղաքացիների ընտրական իրավունքին վերաբերող հիմնարար դրույթները: Այսպես, Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու իրավունք:

2015 թ. հանրաքվեով փոփոխված սահմանադրությունը մարդու իրավունքների սահմանափակման նոր մոտեցում է որդեգրել: Մասնավորապես, ցանկացած, այդ թվում նաև, ընտրեու իրավունքի, սահմանափակման հիմքերը սպառիչ կերպով սահմանվում են Սահմանադրությամբ: Այդ առնչությամբ ՀՀ սահմանադրության 48-րդ հոդվածի չորրորդ կետով սահմանվում են ընտրական իրավունքի սահմանափակման դեպքերը, համաձայն որոնց՝ ընտրել և ընտրվել, հանրաքվեներին մասնակցել չեն կարող

[1] Кант, Иммануил СОЧИНЕНИЯ В ШЕСТИ ТОМАХ, М., "Мысль", 1965. (Философ. наследие).- Т. 4 էջ 235.

1. դատարանի վճռով անգործունակ ճանաչված,

2. դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:

Ընտրվելու իրավունք չունեն նաեւ այլ հանցանքների համար դատապարտված եւ պատիժը կրող քաղաքացիները:

Սահմանադրական նշված նորմը թեպետ արտացոլում է Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած եվրոպական տարածաշրջանային և ունիվերսալ միջազգային-իրավական փաստաթղթերի պահանջները, այդուհանդերձ հիմնահարցը հայեցակարգային առումով յուրահատուկ դրսևորում է ունեցել հայկական պետականության ձևավորման տարբեր ժամանակահատվածներում, ինչի փորձն ուսանելի կարող է լինել արդի ժամանակաշրջանում:

Այս հոդվածով կփորձենք վեր հանել քաղաքացիների ընտրական իրավունքի սահմանափակման «հայկական» մինչխորհրդային ժամանակաշրջանի փորձը:

Դարեր շարունակ զրկված լինելով պետականությունից՝ հայ իրավական միտքը չէր դադարում ուղիներ փնտրել թուրք-պարսկական տիրապետությունից դուրս գալու և պետական կառավարման արդյունավետ համակարգ ստեղծելու հարցում:

Առաջին նման փորձը թերևս կարելի է համարել 1773 թվականին Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ Փառաց» աշխատությունը, որում սահմանադրական իրավունքի լուծումներ ստացած մի շարք հարցերից զատ ներկայացված են նաև ընտրությունները՝ որպես իշխանությունների ձևավորման եղանակ: Այսպես, աշխատության 14-րդ գլխում ասվում է. Հայոց աշխարհի բոլոր պաշտոններն ընտրովի են: Յուրաքանչյուր գավառից, որն ունի մինչեւ 12 հազար տուն, ընտրվում են մարդիկ: Քանի մարդ որ ընտրվի, նրանց միջև վիճակ գցելով, դարձյալ ընտրվում է երկու մարդ, որոնց էլ իրավունք է տրվում տանուտերությամբ նստել Հայոց տան աթոռին և փոխանորդ լինել 12 հազար տան:

Հեղինակը հետաքրքիր անդրադարձ է կատարում ընտրական իրավունքի սահմանափակման խնդրին՝ նշելով, որ ընտրվելու իրավունքը (պասիվ ընտրական իրավունք) սահմանափակվելու էր սոսկ բարոյական հատկանիշներով, մասնավորապես՝ ընտրելու և ընտրվելու իրավունքը վերապահելով «ծնունդով Հայաստանից, ***հեզ ու խոնարհ***

մի մարդու»[2]: Փաստորեն Շահամիր Շահամիրյանը ընտրելու իրավունքի (ակտիվ ընտրական իրավունք) իրացման կոորդինատային հարթությունը այդ ժամանակաշրջանում դիտարկում էր քաղաքացիական հասարակությունը, քանզի քաղաքացու հեզ ու խանորհ լինելը տրամաբանորեն բխում է վերջինիս կրթված լինելու և մի շարք այլ բարոյական հատկանիշներից: Հետևաբար այդ կատեգորիայի քաղաքացիները միայն կարող էին զերծ մնալ ընտրակաշառքի սուբյեկտ դառնալու գայթակղությունից:

Ոչ պակաս ուշագրավ է հայ իրավաքաղաքական մտքի գոհար հանդիսացող մեկ այլ արժեքավոր հուշարձան՝ թուրքահայության՝ 1860 թվականին ընդունված «Ազգային սահմանադրություն Հայոց»-ը: Այն նույնպես պարունակում է ընտրական իրավունքին վերաբերող մանրամասն դրույթներ: Այսպես՝ Փաստաթղթի համաձայն՝

Ընտրելու իրավունք վերապահվում էր Օսմանյան տերության հպատակ հանդիսացող քսանհինգ տարին լրացած անձանց[3]: Այստեղ արդեն Ընտրական իրավունքի հիմնական ցենզը ազգային տուրք վճարելը (տարեկան գոնե յոթանասունհինգ հազար ղուռուշ ընդհանուր տուրք) ու անձնական արժանիք ունենալն էր, որը վերաբերում էր արքունի դիվաններում և տերության ուրիշ պաշտոններում գտնվողներին, բժիշկներին, օգտակար գրքերի հեղինակներին, ուսուցիչներին և ազգին օգտակար այլ ծառայություններ մատուցած անձանց[4]: Նշված փաստաթուղթը ընտրական իրավունքի ցենզերից զատ ամրագրում էր նաև այդ իրավունքի սահմանափակման հիմքերը: Այսպես, Ընտրելու իրավունքից դատարանով զրկված էին հետևյալ անձինք՝

- քրեական հանցագործությունների համար դատապարտված անձինք, որոնք ըստ օրինական պատժի՝ տերության համար քաղաքականապես մեռյալ էին համարվում,
- ազգային գործերի մատակարարության մեջ խարդախության մեջ բռնվածները, որոնք դատապարտվել էին Ազգային ժողովներից որեւէ մեկի կողմից,

---

[2] Որոգայթ Փառաց, Շահամիր Շահամիրյան. թարգմանությունը գրաբարից Պ.Խաչատրյանի, Երևան, Հայաստան, 2002թ. էջ 78

[3] Ազգային Սահմանադրություն Հայոց, «Կ.Պոլիս-Սթանպօլ»-ի տպարանի Յ. Միհիէնտիսեան, 1863թ, հոդված 66

[4] Ազգային Սահմանադրություն Հայոց, «Կ.Պոլիս-Սթանպօլ»-ի տպարանի Յ. Միհիէնտիսեան, 1863թ, հոդված 65

- ինչպես նաեւ խելագարությամբ տառապող անբուժելի հոգեկան հիվանդները[5]:

Եթե Շահամիրյանի սահմանադրությամբ ընտրական իրավունքի սահմանափակումներն ունեին զուտ բարոյական հիմքեր, ապա «Ազգային Սահմանադրությամբ» ընտրական իրավունքի ինչպես ցենզերը (գույքային), այնպես էլ սահմանափակման դեպքերը շատ ավելի լայն էին, որոնք ըստ էության, իրենց մեջ ներառում էին նաև արարքի բարոյական կողմերը (խարդախության համար բռնված լինելը):

Առավել յուրօրինակ էր Ռուսական Կայսրության կազմում գտնվող Արևելյան Հայաստանի բնակչության ընտրական իրավունքի իրացումը: Քաղաքական և տնտեսական ճգնաժամի պայմաններում 1905թ օգոստոսի 5-ին Նիկոլայ 2րդ ցարը ստորագրեց մանիֆեստ «օրինախորհրդակցական» դումա հիմնելու մասին: Փաստաթղթի համաձայն՝ Բուլիգինյան դումայի պատգամավորների ընտրությունը պետք է կատարեին ընտրողների նահանգային ընտրական ժողովները, այսինքն ներդրվում էր միջնորդավորված ընտրությունների ինստիտուտը: Մասնավորապես, Պատգամավորներին ընտրելու իրավունք վերապահվում էր հետևյալ 4 կուրիաներին (ընտրախմբերին)՝ առնվազն 100 դեսյատին հող ունեցող հողատերերին, ոչ պակաս, քան 1500ռ գույքի տեր քաղաքացիներին, վոլոստների և ստանցիաների լիազորներին[6]:

Ինչպես երևում է վերոշարադրյալից ընտրական իրավունքի համար ցարական փաստաթուղթը նախատեսում էր բավականին բարձր գույքային ցենզեր, ինչի արդյունքում հասարակության լայն շերտեր՝ կանայք, զինվորականները, ուսանողները[7], քաղաքի աղքատ խավը, ազատազրկման դատապարտված անձինք[8] և այլք զրկված էին ընտրական իրավունքից[9]: Ընտրական իրավունքով օժտված էին կայսրության մոտ 15 միլիոն հպատակներ, ինչը կազմում էր արական սեռի

---

[5] Ազգային Սահմանադրություն Հայոց, «Կ.Պոլիս-Սթանպօլ»-ի տպարանի Յ. Միհիէնտիսեան,1863թ,հոդված 67

[6] Ֆ. Ն. Սամոյլով, «Ինչպես են կատարվել ընտրությունները ցարիզմի ժամանակ» Երևան, Պետական Հրատարակչություն 1937, էջ 5

[7] http://constitution.garant.ru/history/act1600-1918/5208/ Положение о выборах в Государственную думу, 5 օգոստոսի 1905թ. հոդված 6,

[8] Նույն տեղում, հոդված 7

[9] Ерошкин Н.П., История государственных учреждений дореволюционной России, Москва, Высшая школа,1968, էջ 265

բնակչության 1/3-ը[10]: Այս հանգամանքը փաստում է, որ բացակայում էր ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքը, որի արդյունքում պետական իշխանության ձևավորումը դառնում էր բացառապես ունևոր խավի մենաշնորհը՝ խաթարելով ժողովրդաիշխանության գաղափարը:

Ընտրական իրավունքի դերը վերարժևորվեց 1918 թ. Հայաստանի Առաջին Հանրապետության կազմավորմամբ: Պետք է հաշվի առնել իհարկե, որ պատմաքաղաքական ծանր ժամանակահատծը լուրջ մարտահրավերների առջև էր կանգնեցնում Առաջին Հանրապետության կառավարությանը, և որպես արդյունք, նույն թվականին կազմավորված Հայաստանի Ազգային խորհրդում ոչ թե ընտրված, այլ նշանակված պատգամավորներ էին: Այս առնչությամբ հետաքրքիր միջադեպ է գրանցվել 1919թ փետրվարի 28-ի Պառլամենտի 73-րդ նիստը բացելիս, երբ հասարակության միջից լսվել են բացականչություններ. «Չե՛նք ուզում այսպիսի խորհրդարան», «Մենք պահանջում ենք ընտրովի խորհրդարան», «Դու՛րս ինքնակոչ պատգամավորներ»[11]: Իսկ ՀՀ Պառլամենտի սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի Հայաստանի Պառլամենտի ընտրությունների ժամանակավոր կանոնադրության նախագծի առթիվ տրված բացատագրում նշվում է. «...իրերի նման դասավորության հետ կարելի էր մերվել միայն ժամանակավորապես, որ առաջին իսկ հնարավորության դեպքում անցկացվեն հնարավորինս արդար ընտրություններ՝ համընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի հիման վրա»[12]:

Վերոնշյալի հաշվառմամբ «Հայաստանի Պառլամենտի ընտրությունների մասին» 1919 թվականին ընդունված օրենքում արդեն մանրամասն կարգավորում է ստանում ընտրությունների անցկացման կարգը: Մասնավորապես ՀՀ-ի Պառլամենտին ընտրում է ազգաբնակչությունը առանց սեռի խտրության՝ ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հիման վրա, ուղղակի ընտրության և գաղտնի քվեարկության միջոցով, գործադրելով համեմատական ներկայացուց-

[10] http://ikvo35.ru/election/data/Vihnjakov.pdf, Вешняков А.А., Выборы в первую Государственную Думу,Выпуск N2 (68), էջ 5

[11] Հայաստանի Հանրապետության Պառլամենտի նիստերի արձանագրությունները 1918-1920թթ Ամատունի Վիրաբյան, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2009, էջ 216

[12] Հայաստանի Ազգային արխիվ, Ֆոնդ 198, ցուցակ 2, գործ 64

չության սկզբունքը: Օրենքի 2-րդ հոդվածում նշվում է, որ ՀՀ երկու սեռի քաղաքացիները, որոնց քսան տարին լրացել է ընտրությունների օրը, վայելում են Պարլամենտի ընտրություններին մասնակցելու իրավունք: Օրենքն ընդունելիս քննարկումների առարկա էր դարձել զինվորական ծառայության մեջ եղածների ընտրական իրավունքի հարցը[13]: Ի վերջո, որոշվում է, որ իսկական զինվորական ծառայության մեջ եղածները ընտրություններին մասնակցելու իրավունք չունեն: Այս առիթով հատկանշական է Զինվորական մինիստր Ախվերդովի բացատրագիրը ընտրություններին զինվորական ծառայողների մասնակցությունը աննպատակահարմար գտնելու մասին, որում մասնավորապես ասվում է.«…որպեսզի բանակը լինի միասնական և կառավարության կամքին հնազանդ, այն պետք է լինի նեյտրալ»[14]: Ընտրություններին չէին մասնակցում նրանք, ովքեր հաստատված օրինական կարգով խենթ կամ խելագար էին ճանաչված, նաև խուլուհամրերը, որ ենթակա էին խնամակալության:

Օրենքի 5-րդ հոդվածն անդրադառնում է ընտրական իրավունքից զրկելու դեպքերին. այսպիսով ընտրելու և ընտրվելու իրավունք չունեին՝

1. Նրանք, որոնց իրավունքներն ավելի վաղ չեն վերականգնված և որոնք օրինական զորություն ստացած դատաստանական վճիռներով դատապարտված են՝

ա) Տաժանակիր աշխատանքների և պատիժը կրելուց հետո դեռ տաս տարի չի անցած

բ) որոնք՝ իրավունքների զրկումով կամ սահմանափակումով՝ դատապարտված են աքսորական տարաբնակության, կալանավորական բարքուղղիչ բաժանմունքներ փոխանցելու, բարքուղղիչ տան մեջ արգելափակելու, բանտի կամ բերդի մեջ բանտարկելու և պատիժը կրելուց հետո դեռ հինգ տարի չի անցած:

2. Որոնք դատապարտված են գողության համար, խարդախության, վստահված գույքի իրացման կամ վատնումի, գողոնի թաքցման, բացահայտ գողոնի գնման ու գրավառման, կեղծարարության,

---

[13] Հայաստանի Հանրապետության Պառլամենտի նիստերի արձանագրությունները 1918-1920թթ Ամատունի Վիրաբյան, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2009 էջ 221

[14] Հայաստանի Ազգային արխիվ, Ֆոնդ 198, ցուցակ 2, գործ 84

վաշխառության, կաշառակերության, կաշառատվության, ինչպես նաև կավատության և անառակությանը սատարելու համար, ինչպես նաև այն գործերի համար, որ նպատակ են ունեցել խանգարելու օրենսդիր հիմնարկությունների և ինքնավարության օրգանների ընտրության ազատությունն ու կանոնավորությունը և պատժվելուց հետո դեռ երեք տարի չի անցած:

3. Անկար պարտապանները, որ օրինական զորություն ստացած դատաստանական որոշումների հիման վրա չարամիտ սնանկներ են ճանաչված, և այդ ճանաչումից հետո դեռ երեք տարի չի անցած.[15]

Իսկ նույն հոդվածի 8-րդ մասը հավելում է, որ «նրանք, ովքեր ընտրությունների ժամանակ զրկված կլինեն ազատությունից կամ օրինական զորություն ստացած դատաստանական դատավճիռների հիման վրա կամ դատական իշխանության կողմից քաշված կլինեն դատի՝ իբրև ամբաստանվածներ որևէ հանցագործության համար և նրանց վերաբերմամբ, իբր կանխարգել միջոց, ընտրված կլինեն պահակի հսկողությամբ պահելը, նույնպես իրավունք չեն ունենա մասնակցելու ընտրություններին:

Փաստորեն երեք շատ կարևոր տարբերություն կա ՀՀ գործող Ընտրական օրենսգրքի (սահմանադրական օրենքի) և Հայաստանի Առաջին Հանրապետության «Պարլամենտի ընտրությունների մասին» օրենքի միջև: Նախ այն, որ խուլուհամրերը չունեին ընտրելու իրավունք, ինչը իրավունքի ժամանակակից ընկալմամբ ամենևին անգործունակ ճանաչելու հիմք չէ: Երկրորդ, որ ազատազրկման դատապարտված անձինք չէին վերականգնում ընտրական իրավունքը պատիժը կրելուց անմիջապես հետո, նրանք չէին կարող մասնակցել ընտրություններին դատվածության մարման ժամկետի ընթացքում ևս: Եվ վերջապես, ընտրական իրավունքից զրկված էին նաև կալանավորված անձինք, ինչը նսեմացնում էր անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Այս դրույթների լույսի ներքո էլ 1919 թ. հունիսի 21-23-ը Հայաստանի Առաջին Հանրապետությունում կայացան առաջին և միակ խորհրդարանական ընտրությունները:

---

[15] Հայաստանի Ազգային արխիվ, Ֆոնդ 198, ցուցակ 1, գործ 6

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

### Ամփոփում

Հոդվածում պատմական անդրադարձ է կատարվել հայ իրավաքաղաքական իրականության մինչխորհրդային հատվածի ընտրական իրավունքի ընկալմանը: Քննարկվել են թե՛ ակտիվ (ընտրելու), թե՛ պասիվ (ընտրվելու) ընտրական իրավունքի սահմանափակման հիմքերը ինչպես հայկական պետության բացակայության պայմաններում, այնպես էլ Հայաստանի առաջին Հանրապետության ընդունած իրավական ակտերում: Հեղինակի կողմից վեր են հանվել և մեկնաբանվել արդի օրենսդրության հետ համեմատականներն ու ընդհանուր գծերը:

*Բանալի բառեր*- ընտրական, իրավունք, ընտրել, ընտրվել, ազատազրկված, սահմանափակումներ

### Գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն
2. ՀՀ Ընտրական օրենսգիրք
3. Кант, Иммануил СОЧИНЕНИЯ В ШЕСТИ ТОМАХ, Москва, "Мысль", 1965
4. Որոգայթ Փառաց, Շահամիր Շահամիրյան. թարգմանությունը գրաբարից Պ.Խաչատրյանի, Երևան, Հայաստան, 2002թ.
5. Ազգային Սահմանադրություն Հայոց, Կ.Պօլիս-Սթանպօլ, ի տպարանի Յ. Միհիէնտիսեան, 1863թ
6. Ֆ. Ն. Սամոյլով, Ինչպես են կատարվել ընտրությունները ցարիզմի ժամանակ, Երևան, Պետական հրատարակչություն, 1937
7. http://constitution.garant.ru/history/act1600-1918/5208/ Положение о выборах в Государственную думу, 5 օգոստոսի 1905թ
8. Ерошкин Н.П., История государственных учреждений дореволюционной России, Москва, Высшая школа, 1968
9. 1 http://ikvo35.ru/election/data/Vihnjakov.pdf, Вешняков А.А., Выборы в первую Государственную Думу,Выпуск N2
10. Հայաստանի Հանրապետության Պառլամենտի նիստերի արձանագրությունները 1918-1920թթ Ամատունի Վիրաբյան, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2009

## THE PROBLEMS OF RESTRICTIONS ON THE RIGHT TO VOTE/DISENFRANCHISEMENT IN ARMENIAN LEGAL AND POLITICAL PERCEPTION IN PRE-SOVIET PERIOD

**Lilit Sukiasyan**
EREA, Chair of Law, Postgraduate student

**Summary**

The article touches upon the right to vote in the Armenian legal-political reality of the pre-Soviet period. Both the active voting right (the right to elect) and the passive voting right (the right to be elected) are discussed within the framework of this article during the absence of the Armenian state and in the legal acts adopted by the first Republic of Armenia. The author has perceived and interpreted the general lines and comparisons with the current legislation of RA.

*Keywords*- right to vote, restriction, disenfranchisement, convicted, limitation

## ПРОБЛЕМЫ ОГРАНИЧЕНИЯ ИЗБИРАТЕЛЬНОГО ПРАВА В ПОЛИТИКО-ПРАВОВЫХ РЕАЛИЯХ АРМЕНИИ ДОСОВЕТСКОГО ПЕРИОДА

**Сукиасян Лилит Андраниковна**
ЕРОА, кафедра правоведения, аспирант

**Резюме**

В статье говорится о концепции ограничения избирательного права в армянской политико-правовой действительности досоветского периода. Затрагивается как активное (право голосовать), так и пассивное избирательное право (право быть избранным). В статье обсуждаются эти проблемы как в период отсутствия армянского государства, так и в правовых актах, принятых первой Республикой Армения. Автор интерпретирует и сравнивает общие направления с действующим законодательством РА.

*Ключевые слова:* избирательное, право, голосовать, избирать, избираться, заключенный, ограничения.

# ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԸՆԿԱԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ՊԱՏՄԱՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

***Արթուր Սեյրանի Նահապետյան***
*ԵԿՏԱ, իրավագիտության ամբիոն, ասպիրանտ*

Մարդն իր գոյության առաջին իսկ օրերից պայքար է մղել սեփական անվտանգության պահպանման համար: Թվում է՝ գոյության մի քանի հազարամյա պատմության ընթացքում արձանագրելով այն առաջընթացն ու նվաճումները, որ առկա են՝ մարդկությունը պետք է, որ լուծած լիներ անձնական անձեռնմխելիության հետ կապված խնդիրները: Սակայն, ներկայում տեղի ունեցող իրադարձությունների պայմաններում, որտեղ պատերազմները, ահաբեկչությունները, տեղահանումներն ու վերջին հաշվով մարդու դեմ ոտնձգող մնացյալ երևույթներն օրըստօրե ավելի սուր բնույթ են ստանում, խիստ արդիական է դառնում հասարակական անվտանգությունն ընդհանրապես և անձնական անվտանգությունը մասնավորապես, պահպանելուն և ամրապնդելուն ուղղված միջոցների, այդ թվում՝ իրավական կառուցակարգերի կատարելագործման հիմնախնդիրը:

Այս համատեքստում պատահական չէ միջազգային իրավական այնպիսի կառուցակարգերի առկայությունը, ինչպիսիք են «պաշտպանելու պարտականությունը (Responsibility to Protect)»[1], «հումանիտար ինտերվենցիան (Humanitarian Intervention)»[2], որոնք՝ որպես իրավունքի համեմատաբար նոր ինստիտուտներ, բխում են միջազգային հանրության կողմից պետականակենտրոն անվտանգությունից մարդակենտրոն անվտանգության անցում կատարելու ակտիվ քայլերի արդյունքում ձևավորվող այնպիսի հասկացության էությունից, ինչպիսին է միջազգային հանրության պարտավորությունը՝ պաշտպանելու մարդկանց ցանկացած պետության տարածքում նրանց իրավունքների զանգվածային խախտումներից:

---

[1] Տե՛ս, http://www.e-ir.info/2013/05/31/the-responsibility-to-protect-in-international-law/, մուտք գործելու ամսաթիվ՝ 25.10.2017

[2] Տե՛ս, http://opil.ouplaw.com/view/10.1093/law:epil/9780199231690/law-9780199231690-e306, մուտք գործելու ամսաթիվ՝ 26.10.2017

Նշված ոլորտում ներպետական կարգավորումներին անդրադառնալիս, նախևառաջ պետք է նշել, որ մինչև սահմանադրական ներկա իրավակարգավորումը, նախկինում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված էր հենց անձնական անձեռնմխելիության իրավունքը:

Իսկ ՀՀ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն) ուղղակիորեն ամրագրված է Ֆիզիկական և հոգեկան անձեռնխելիության իրավունքը, որը գոյություն ունեցող բազմաթիվ գիտական մոտեցումների համաձայն՝ ընդունված է դասել անձնական անձեռնմխելիության իրավունքի բաղադրիչների շարքում:

Ուստի, հաշվի առնելով ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի Սահմանադրությամբ անմիջականորեն նախատեսված լինելու հանգամանքը և դրա առարկայական սահմանները ձևակերպելու հրամայականը՝ անխուսափելի անհրաժեշտություն է դառնում մարդկային հասարակության գիտակից համակեցության ընթացքում անձնական անձեռնմխելիության իրավունքի զարգացման ընթացքն ամրագրող իրավափիլիսոփայական մտավոր շտեմարանի հնարավորինս օբյեկտիվ, բազմակողմանի և համադրված ուսումնասիրությունը:

Այսպիսով, անձնական անձեռնմխելիությունն ունի պատմական հնագույն արմատներ: Անձնական անձեռնմխելիության մասին գաղափարներն իրենց արտացոլումն են գտել դեռևս Հին աշխարհի մտածողների աշխատանքներում: Որպես այդ իրավունքի յուրօրինակ մեկնաբանություններ կարելի է համարել անտիկ խոշորագույն փիլիսոփա Արիստոտելի դրույթները՝ պետության, իրավունքի և անհատի ազատության անբաժանելի կապի մասին, Էպիկուրի դրույթները՝ անհատի անվտանգության ապահովման՝ որպես պետության գլխավոր նպատակի վերաբերյալ, Սենեկայի դրույթները՝ հոգևոր ազատության տեղի և դերի վերաբերյալ, Ցիցերոնի դրույթները՝ ուրիշներին չվնասելու անհրաժեշտության և մարդկանց կյանքն առավել անվտանգ դարձնելու վերաբերյալ, Ուլպիանոսի դրույթները՝ ազատության բնական իրավունքի վերաբերյալ[3]:

[3] Տե՛ս, Нерсесянц В.С. Философия права. - М., 1997, стр. 418, 421, 425, 428-429, 433:

Անհատի իրավունքների և ազատությունների գաղափարի մեկնաբանությունն ընդհանրապես և անձական անձեռնմխելիության նոր ծագող գաղափարի մեկնաբանությունը մասնավորապես, թեև աղերսվում էր մարդու բնական իրավունքների հետ, այդուհանդերձ զգալի չափով կրում էր դասակարգային (էլիտար), հետևապես և սահմանափակ բնույթ: Միջին դարերում անձնական անձեռնմխելիության գաղափարի զարգացումն օբյեկտիվորեն պայմանավորվում էր ստրկատիրական կարգերի տապալմամբ և ավատատիրական (ֆեոդալական) հասարակական հարաբերությունների ձևավորմամբ, որն անխուսափելիորեն հանգեցրեց ամբողջությամբ իրավազուրկ մարդկանց գոյության բացակայությանը: Սակայն ֆեոդալական հանրության հասարակական հարաբերությունների գույքային-ներկայացուցչական բնույթը խոչընդոտում էր անձնական անձեռնմխելիության իրավունքի հավասարաչափ տարածմանը բոլոր կատեգորիաների (դասակարգերի) քաղաքացիների վրա:

Բնորոշելով հասարակական հարաբերությունների զարգացման քննարկվող փուլը՝ Ա.Յ. Գուրևիչը նշում էր. «Ինչպես ազատությունը չէր բացառում կախվածությունը, այնպես էլ կախվածությունը չէր նշանակում ցանկացած իրավունքի բացակայություն»[4]:

Վերը նշված երևույթին անդրադառնալիս, չենք կարող չվկայակոչել միջնադարյան նշանավոր փիլիսոփա, օրթոդոքսալ սքոլաստիկայի համակարգող Թովմա Աքվինացու հայացքները, մասնավորապես նրա մի շարք աշխատությունների դրույթները՝ ընդհանուր բարիքի, մարդու ֆիզիկական և բարոյական էության վերաբերյալ, որոնց պետք է համապատասխանի պետության օրենքը[5]:

Հենց քննարկվող ժամանակահատվածին էլ վերագրվում է առաջին անգամ հստակ ձևակերպված անձնական անձեռնմխելիության գաղափարը: Ընդունված է համարել, որ անձնական անձեռնմխելիության իրավունքն առաջին անգամ իրավաբանորեն ամրագրվել է 1215 թվականի հունիսի 15-ին Անգլիայի թագավոր Հովհաննես I Անհողինի կողմից ստորագրված Ազատությունների մեծ խարտիայում (լատիներեն՝ «Magna Carta Libertatum»):

Ազատությունների մեծ խարտիան համաշխարհային պատմու-

[4] Տե՛ս, Гуревич А.Я. Категории средневековой культуры.- М., 1972, стр. 176:

[5] Տե՛ս, Нерсесянц В.С. Философия права. - М., 1997, стр. 440-441:

թյան մեջ այն եզակի փաստաթղթերից է, որն անցել է պատմական մեծ էվոլյուցիա՝ տարբեր դարաշրջաններում ունենալով իր շատ կոնկրետ իրավական, քաղաքական, տնտեսական ազդեցությունը հասարակության վրա:

Հիշատակված խարտիայի 39-րդ հոդվածն ամրագրում էր. «Ոչ մի ազատ մարդ չի կարող ձերբակալվել կամ բանտարկվել կամ զրկվել սեփականությունից կամ հայտարարվել օրենքից դուրս կամ արտաքսվել կամ որևէ այլ եղանակով ունեզրկվել և մենք չենք հետապնդի նրան այլ կերպ, քան նրան հավասարների օրինական դատավճռով և երկրի օրենքով»: Թագավորին արգելվեց առանց խորհրդի միջամտել խոշոր ֆեոդալների ներքին գործերին, հարկ գանձել, կալանավորել, արտաքսել նրանց և այլն: Ստեղծվեց Խարտիայի կատարմանը հսկող մարմին՝ բաղկացած 25 բարոններից: Բայց և այնպես Խարտիան գյուղացիությանը ոչինչ չտվեց:[6]:

Իրավական հաջորդ փաստաթուղթը 1628 թվականին Էդվարդ Կոկի շնորհիվ ընդունված «Իրավունքների մասին» պետիցիան է, որը շատ մասնագետների կողմից համարվում է երկրորդ Խարտիա, և այնտեղ արդեն խոսվում էր հպատակների ազատության մասին: Մասնավորապես, եթե Խարտիայի 39-րդ հոդվածն ամրագրում էր «ազատ մարդկանց (ազնվականների)» իրավունքները, ապա այստեղ նշվում է «հպատակների ազատության» մասին: Անշուշտ «հպատակ» հասկացությունն արդեն իսկ ներառում էր հասարակության ավելի լայն խավեր, ինչպիսիք էին ճորտերը, գյուղացիները և այլն:

Անձնական անձեռնմխելիության գաղափարն առավել մեծ արդիականություն, տեսական և գործնական նշանակություն է ձեռք բերում բուրժուական հեղափոխությունների ժամանակաշրջանում, երբ ավատատիրության դեմ պայքարում ձգտելով իրենց կողմը գրավել ժողովրդական լայն զանգվածներին՝ բուրժուազիան հանդես է գալիս ազատության, հավասարության և անվտանգության կարգախոսի ներքո:

Ինչպես նշում էր Հուգո Հրոցիուսը. «Պետությունն ազատ մարդկանց բացարձակ միություն է՝ կնքված հանուն իրավունքի պահպանման և ընդհանուր օգուտի:»[7]:

Մեկ այլ նշանավոր մտածող՝ անգլիացի մանկավարժ և փիլիսո-

---

6 Տե՛ս, http://boon.am/magna-carta/, մուտք գործելու ամսաթիվ՝ 17.10.2017

7 Տե՛ս, Гроций Г. О праве войны и мира. - М., 1956, стр. 74:

փա Ջոն Լոկն անձնական անձեռնմխելիությունը կապում էր այնպիսի արժեքների ապահովման հետ, ինչպիսիք են կյանքը, ազատությունը և առողջությունը:

Նրա կարծիքով. «Քանի որ բոլոր մարդիկ ստեղծված են մեկ ամենակարող և անվերջ իմաստուն Արարչի կողմից, նրանք մեկ տիրոջ ծառաներն են, ուստի՝ հավասար են և անկախ: Մեզնից յուրաքանչյուրը պարտավոր է պահպանել ինքն իրեն, իսկ երբ սեփական կյանքին վտանգ չի սպառնում, ինչքան հնարավոր է՝ մնացյալ մարդկանց: Պարտավոր է նաև, բացառությամբ հանցագործի նկատմամբ արդարադատություն իրականացնելու, չզրկել կյանքից, չոտնձգել դրա նկատմամբ, հավասարապես նաև չգործել այնպիսի արարքներ, որոնք բացասաբար կանդրադառնան ուրիշի կյանքի, առողջության, ազատության կամ սեփականության պահպանության վրա»[8]:

Վիլիամ Բլեքստոնը, առանձնացնելով անձնական անվտանգության և անձնական ազատության իրավունքները, առաջինի շարքն էր դասում անհատի կողմից իր կյանքի, մարմնի, առողջության և հեղինակության օրինական տնօրինումը, իսկ երկրորդի շարքը՝ տեղաշարժման հնարավորությունը, որի սահմանափակումը թույլատրելի էր միայն օրենքով նախատեսված դեպքերում[9]:

Շառլ Մոնտեսքյոն դիտարկում էր անձնական անվտանգությունը քաղաքական ազատության, քրեական և քրեադատավարական երաշխիքների հետ անխախտ կապի մեջ՝ համարելով, որ ազատության ապահովման համար անհրաժեշտ են օրենքով սահմանված դատական ընթացակարգեր, ընթացակարգային կանոններ եւ ձևեր, որոնք կնպաստեն օրենքների կենսագործման նպատակներին[10]:

Թոմաս Հոբբը մարդու անօտարելի (բնական) իրավունքների շարքում առանձնացնում էր մարդու դիմադրության իրավունքը նրանց հանդեպ, ովքեր կոտնձգեին մարդու կյանքի կամ առողջության նկատմամբ, կցանկանային մարդու վրա ապօրինի սահմանափակումներ դնել կամ բանտարկել նրան[11]:

---

8 Տե՛ս, Локк Д. Избранные философские произведения 1 Под ред. Макаровекого А.А. В 2-х т. Т. 2.-М., 1960, стр. 50-51, 145:

9 Տե՛ս, Blackstone W. Commentaries on the Laws of England. - Philadelphia, 1859, p. 129-134:

10 Տե՛ս, Монтескье Ш. Избранные произведения. - М., 1955, стр. 317-318:

11 Տե՛ս, Гоббс Т. Левиафан, или материя, форма и власть государства церковного и гражданского. - М., 1936. стр. 119:

Ստանալով խորը տեսական իմաստավորում՝ անձնական անձեռնմխելիության իրավունքն իր ամրագրումն է գտնում 1679 թվականի բրիտանական Հաբեաս կորպուս ակտում[12], 1789 թվականի Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հռչակագրում (փոփոխություններ 2, 7) և վերջապես, 1791 թվականի ԱՄՆ Իրավունքների մասին Բիլլում (փոփոխություններ 4, 5):

Այդ պատմական փաստաթղթերում անձնական անձեռնմխելիությունը դիտարկվում էր որպես անօրինական կալանքներից (նկատի ունի նաև ձերբակալությունները) և դատական կամայականություններից պաշտպանության երաշխիքների ամբողջություն, այսինքն՝ նախևառաջ, դիտարկվում էր քրեադատավարական ասպեկտով:

Այսպես, Հաբեաս կորպուս ակտը ներառում էր անձնական անձեռնմխելիության ապահովման մի շարք իրավական երաշխիքներ, սահմանում այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են պատշաճ ընթացակարգը և անմեղության կանխավարկածի սկզբունքը: Այդուհետ, ցանկացած անձ, որ ինքն իրեն կհամարեր անօրինական ձերբակալված կամ կալանավորված, կարող էր անձամբ կամ իր ներկայացուցիչների միջոցով դիմել դատարան՝ խնդրելով իր վերաբերյալ տալ «Հաբեաս կորպուս» հրաման: Եթե նման դատական հրաման էր տրվում, ապա պաշտոնատար անձինք, որոնց իրավազորության ներքո գտնվում էր դատարան դիմած անձը, պետք է այդ անձին ներկայացնեին դատարան և եթե կալանավորումը ճանաչվում էր անհիմն, ապա կալանավորին ազատ էին արձակում, և նա այլևս չէր կարող կրկնակի կալանավորվել միևնույն մեղադրանքով[13]:

1789 թվականի Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում անձի անձեռնմխելիությունն ամրագրված էր 7-րդ հոդվածում, որում ասվում էր, որ քաղաքացին չի կարող մեղադրվել, ձերբակալվել կամ բանտարկվել, այլ կերպ քան օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նախանշված հստակ ընթացակարգերի պահպանմամբ:

---

[12] Հաբեաս կորպուս ակտ անվամբ (Habeas corpus act - ծագել է կալանավորին բերելու դատական հրամանի լատիներեն անվանումից «Habeas corpus ad subjiciendum») հայտնիություն ձեռք բերեց 1679 թվականին անգլիական պառլամենտի կողմից ընդունված սահմանադրական օրենքը՝ «Քաղաքացու ազատության լավագույն ապահովման և ծովերից դուրս բանտարկության նախազգուշացման մասին ակտ»:

[13] Տե՛ս, История государства и права 1. Под ред. МИ. Сизикова. - М., 1997, стр. 275:

Նա, ով կխնդրի կամ կտա ապօրինի հրաման կամ կիրագործի կամ կկարգադրի իրագործել այն, ենթակա է պատժի[14]:

Վերջապես, 1791 թվականի Իրավունքների մասին ամերիկյան Բիլլի 4-րդ փոփոխության մեջ արդեն ուղղակիորեն գործածվում էր «անձի անձեռնմխելիություն» բառեզրույթը. «Անձի, բնակարանի, փաստաթղթերի և սեփականության անձեռնմխելիության ժողովրդի իրավունքը չհիմնավորված խուզարկություններով և կալանքներով չպետք է խախտվի, և որևէ սանկցիա չպետք է տրվի այլ կերպ, քան դրա համար բավարար հիմքերի առկայությամբ՝ հաստատված երդմամբ կամ հայտարարությամբ և խուզարկության ենթակա տեղի ու կալանքի ենթակա անձանց կամ առգրավման ենթակա առարկաների մանրակրկիտ նկարագրությամբ:»[15]:

Մարդու անօտարելի իրավունքները (առաջին սերնդի իրավունքներ), այդ թվում՝ անձնական անձեռնմխելիության իրավունքը, դիտարկվում էին որպես այսպես կոչված բացասական ազատության իրագործման իրավունքներ, որոնք պարտավորեցնում էին պետությանը ձեռնպահ մնալ այդ իրավունքներով կարգավորվող ոլորտներին միջամտելուց[16]:

Ռուս նշանավոր իրավագետ Բ.Ա. Կիստյակովսկին անձի անձեռնմխելիությունը դասում էր իրավունքների այն խմբին, որն ընդունված է կոչել «անձի ազատությունը պետությունից»[17]:

Զարգացնելով այս մոտեցումը՝ Բ.Պ. Վիշեսլավցևը համարում էր, որ անձի անձեռնմխելիության իրավունք նշանակում է «իրավունք՝ պահանջելու պետական իշխանությունից չմիջամտելու քաղաքացու անձին, քանի դեռ նա հակաօրինական որևէ արարք չի գործել»[18]:

Պետք է նշել, որ թե՛ ռուս, թե՛ եվրոպացի գիտնականների մեծամասնությունը ելնում էին այն հայեցակարգից, որ անձնական անձեռնմխելիությունն ազատություն է պետաիշխանական ոչ իրավաչափ հարկադրանքից:

Բովանդակային առումով այս գաղափարը իրավունքի գերակայության սկզբունքի և իրավական պետության բաղադրատարրն է, որն

---

[14] Տե՛ս, Антология мировой правовой мысли. Т. III. - М., 1999, стр. 244:
[15] Տե՛ս, Антология мировой правовой мысли. Т. III. - М., 1999, стр. 243:
[16] Տե՛ս, Общая теория прав человека. Под ред. Е.А. Лукашевой. - М., 1996, стр. 21:
[17] Տե՛ս, Кистяковский Б.А. Социальные науки и право. - М., 1916, стр. 561:
[18] Տե՛ս, Вышеславцев Б.П. Гарантии прав граждан. - М., 1917, стр. 7:

իր ժամանակակից արտացոլումն է գտել ինչպես ՀՀ՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության մեջ (Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:), այնպես էլ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ (Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:):

Անձնական անձեռնմխելիության վերաբերյալ վերը նշված մոտեցումների ֆոնին առանձնանում է Պ.Ի. Լյուբլինսկու դիրքորոշումը, որը բարձրացնում էր ոչ միայն պետաիշխանական ոչ իրավաչափ հարկադրանքից պաշտպանության հարցը, այլ նաև այլ քաղաքացիների կողմից գործադրվող հարկադրանքից պաշտպանվելու հարցը: Նրա կարծիքով անձի անձեռնմխելիությունը. «իրավունք է, որ հենվում է օրենքով սահմանված շրջանակներում սեփական համոզմունքներին համապատասխան գործելու հնարավորության գիտակցման վրա՝ դրա հետ մեկտեղ չվախենալով պետական իշխանության կամ մասնավոր անձանց կողմից բռնի բնույթ կրող պատասխան գործողություններից:»[19]: Ըստ էության, Լյուբլինսկին առաջիններից մեկն էր, որ այս իրավունքի իրացումը համարեց ոչ միայն պետության, այլև քաղաքացիների պարտականությունը: Ասվածից կարելի է բխեցնել, որ այս իրավունքն ունի գործողության պայմանականորեն երեք հարթակ՝ անձ-պետություն, անձ-հասարակություն և անձ-անձ հարաբերություններ:

Հատկանշական է, որ անգամ ՌԴ-ում, որն ի տարբերություն եվրոպական պետությունների չունի ժողովրդավարության և մարդու իրավունքների զարգացած ավանդույթներ, դեռևս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ակտիվորեն մշակվում էին անձի հիմնական իրավունքների սահմանադրական կարգավորման գաղափարներ, այդ թվում՝ անձնական անձեռնմխելիության իրավունքը:

Որպես ասվածի օրինակ, կարելի է վկայակոչել 1905 թվականին ներկայացված ռուսական կայսրության հիմնական օրենքի նախագիծը:

Այս նախագիծը նախատեսում էր զբաղմունքների և բնակության վայրի ընտրության ազատություն՝ ներառյալ երկիրը լքելու, ինչպես նաև երկիր վերադառնալու իրավունքը: Նախագծի արժանիքներից էր

---

[19] Տե՛ս, Люблинский П.И. Неприкосновенность личности. - Пг., 1917, стр. 6-7:

նաև այն, որ ամրագրում էր սեփական մտքերի բանավոր և գրավոր արտահայտման ազատությունը[20]:

Այսպիսով, անձնական անձեռնմխելիության իրավունք ասելով, ընդունված էր հասկանալ մի շարք իրավունքների համախումբ: Այս տեսանկյունից անձնական անձեռնմխելիության իրավունքի կայացման և զարգացման վրա որոշիչ ազդեցություն է ունեցել բնական-իրավական հայեցակարգը, որը կոչված էր արգելակող պատնեշ դնելու ազատության և անձի ինքնավարության զարգացմանը խոչընդոտող պետական գերիշխանության միջև:

Սակայն, պետք է նշել, որ բնական-իրավական հայեցակարգը միակը չի եղել մարդու իրավունքների կայացման և զարգացման գործում: Այս հայեցակարգին հակադրվել և շարունակում է հակադրվել դրական իրավունքի հայեցակարգը (պոզիտիվիստական հայեցակարգ)՝ մարդու իրավունքների բնույթին, մարդու և պետության փոխհարաբերություններին վերաբերող իր մոտեցումներով: Այս հայեցակարգի համաձայն՝ մարդու իրավունքները, դրանց ծավալն ու բովանդակությունը որոշվում են պետության կողմից, որը «նվիրում է» դրանք մարդուն[21]:

Ահա այսպիսի հակադիր դիրքերից են գնահատվել և գնահատվում մարդու իրավունքների և ազատությունների բովանդակությունը, մարդու և պետության փոխհարաբերությունները, այդ թվում՝ անձնական անձեռնմխելիության ոլորտում:

Հատկանշական է, որ մոտեցումների ընդգծված հակադրությունն առկա է ոչ միայն տեսական մակարդակում, այլ նաև՝ իրավական-օրենսդրական: Մասնավորապես՝ Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի, Ռուսաստանի և ԱՄՆ սահմանադրություններում մեծապես արտահայտված է բնական-իրավական հայեցակարգը, մինչդեռ Ավստրիայի և Գերմանիայի սահմանադրություններն առավելապես հենվում են պոզիտիվիստական հայեցակարգի մոտեցումների վրա:

Երկու հայեցակարգերի կապակցությամբ ուշադրության են արժանի Գ.Վ. Մալցևի և Ն.Լ. Գրանետի տեսակետները, որոնք համարում էին, որ հայցեակարգերից յուրաքանչյուրն արտացոլում է «գործերի» փաստացի վիճակը, բայց «տառապում է» միակողմանիությամբ:

Բնական-իրավական հայեցակարգը, պնդելով մարդուն ի ծնե պատ-

[20] Տե՛ս, Конституционное государство, Сб. Статей, Изд. 2-е.- Пг., 1905, стр. 527-574:
[21] Տե՛ս, Общая теория права. - Н.Новгород, 1993, стр. 11-21:

կանող իրավունքների անքակտելիությունը, անխուսափելիորեն բախման մեջ է մտնում հասարակական կյանքի արդի իրողությունների հետ:

Պոզիտիվիստական հայեցակարգը ցածրացնում է մարդու դերը և հաստատում պետության գերապատվությունը անձի նկատմամբ:

Մալցևի և Գրանետի կարծիքով ճշմարտությունն ինչպես միշտ մեջտեղում է. Բնական-իրավական հայեցակարգը պարտավորեցնում է պետական իշխանությանը սահմանադրական և այլ իրավական երաշխիքներով ճանաչել և ապահովել մարդուն ի ծնե պատկանող այնպիսի իրավունքներ, ինչպիսին է կյանքի իրավունքը, արժանապատիվ և բավարար կենսամակարդակի իրավունքը, ազատության, անձնական անձեռնմխելիության և մի շարք այլ իրավունքները, մինչդեռ գոյություն ունեն նաև այլ իրավունքներ, որոնք իրական կենսագործում ստանում են միայն պետական իշխանության միջոցով՝ սոցիալական, հոգևոր և նյութական իրավունքներն ամրագրող համապատասխան օրենքների ընդունմամբ, օրինակ՝ աշխատանքի իրավունքը, ակտիվ և պասիվ ընտրական իրավունքը և այլն[22]:

Անձնական անձեռնմխելիության իրավունքի մասով ամփոփելով իրավական հայեցակարգերի թեման՝ պետք է նշել, որ երկու հայեցակարգերն էլ իրենց հետքն են թողել քննարկվող իրավունքի կայացման և զարգացման ճանապարհին. առաջինը՝ առավելապես անձ-հասարակություն և անձ-անձ հարաբերությունների հարթակում, երկրորդը՝ առավելապես անձ-պետություն հարաբերությունների հարթակում:

Անձնական անձեռնմխելիության իրավունքի զարգացման արդի փուլի առնչությամբ, պետք է նշել, որ մարդու իրավունքների զարգացման տեմպերն աննախադեպ աճ արձանագրեցին հատկապես II համաշխարհային պատերազմի ավարտից հետո:

Ասվածի վկայությունը միջազգային-իրավական այն փաստաթղթերն են, որոնք այս կամ այն չափով ամրագրում են անձնական անձեռնմխելիության վերաբերյալ որոշակի դրույթներ: Հատկանշական է, որ այս փաստաթղթերից մի քանիսը անդամ պետությունների համար ստանձնած պարտավորությունների իմաստով, հանդես են գալիս, որպես սահմանադրական մինիմում: Այսինքն, տվյալ դեպքում մարդու իրավունքների ոլորտում Սահմանադրությամբ չեն կարող նախատես-

[22] Տե՛ս, Мальцев Г. В. Права и свободы человека//Теория государства и права. - М., 1995, էջ 217, Гранет Н.Л. Государство и личность. - М., 1997, стр. 8:

վել պակաս երաշխիքներ, քան նախատեսված են, օրինակ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա):

Կոնվենցիան ուղղակիորեն ամրագրում է անձնական անձեռնմխելիության իրավունքը, մասնավորապես 5-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: (…)»: Սակայն, միջազգային փաստաթղթերի շարքում Կոնվենցիան միակը չէ, որ ուղղակի ձևակերպում ունի անձնական անձեռնմխելիության վերաբերյալ: Համանման դրույթ է պարունակում նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (16-ը դեկտեմբերի 1966), որի 9-րդ հոդվածի առաջին մասի համաձայն. «Յուրաքանչյուր մարդ ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: (…)»:

Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես իրավական, ինչպես նաև մի շարք պայմանագրերի կողմ հանդիսացող պետություն, նույնպես ունի անձնական անձեռնմխելիության վերաբերյալ առանձին իրավակարգավորումներ: Սահմանադրական մակարդակում եղած կարգավորումներին անդրադառնալիս, անհրաժեշտ է նշել, որ Նախկին Սահմանադրության 16-րդ հոդվածն ամրագրում էր, որ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Ինչպես տեսնում ենք տեքստի շարադրանքից, ի տարբերություն վերը մատնանշված միջազգային իրավական փաստաթղթերի՝ Նախկին սահմանդրության քննարկվող ձևակերպման մեջ «անձնական» բառը ոչ թե «անձեռնմխելիություն» բառի կողքին է, այլ՝ «ազատություն» բառի: Սա առաջացնում էր վեճեր, թե արդյոք նման ձևակերպման պարագայում անձեռնմխելիություն ասելով պետք է հասկանալ անձնական անձեռնմխելիություն, որի բաղդրատարր է նաև հոգեկան անձեռնմխելիությունը, թե սոսկ ֆիզիկական անձեռնմխելիության մասին է խոսքը:

Նմանաբնույթ վեճերին, որոշակի իմաստով վերջ դրեց գործող Սահմանադրության 25-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք:

Այսպիսով, ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ թերևս կարելի է առանձնացնել հետևյալ եզրահանգումները.

1.Նախևառաջ, անհրաժեշտ է նշել, որ անձնական անձեռնմխելիությունը՝ որպես գաղափար, զարգացման անհամեմատ ավելի երկար պատմություն ունի, քան որպես իրավունք: Անձնական անձեռնմխելիության գաղափարի զարգացման պատմական ընթացքն ինչպես ցույց տվեցինք սկսվում է մարդկության գոյության ծագման օրերից և ձգվում մինչև մեր օրերը, մինչդեռ անձնական անձեռնմխելիության իրավունքի զարգացման պատմական մեկնարկ կարելի է համարել 13-րդ դարի առաջին կեսը:

2. Ստրկատիրական կարգերի գոյության պայմաններում, ստրուկները չէին համարվում քննարկվող իրավունքի հասցեատեր, քանզի նրանք դիտարկվում էին, որպես «խոսող գործիք», և առհասարակ զրկված էին որևէ իրավունքից: Մինչդեռ, այս կարգերի տապալման և ֆեոդալական հասակարգի հաստատման ժամանակաշրջանում հպատակները նույնպես ձեռք բերեցին անձնական անձեռնմխելիության տարրեր հանդիսացող մի շարք իրավունքներ, մասնավորապես՝ կյանքի, ազատ տեղաշարժվելու և այլն:

3. Անձնական անձեռնմխելիութան իրավունքը, անցնելով պատմական էվոլուցիա, գաղափարական ընկալման դաշտում սոսկ ֆիզիկական ազատության և անվտանգության ասպեկտից վերաճել է ավելի համապարփակ կատեգորիայի, որ ներառում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան անձեռնմխելիության (ամբողջականության) պահպանման հիմնախնդիրները:

4. Այս տեսանկյունից, գործող Սահմանադրության իրավակարգավորումն առավել ամբողջական և առաջադիմական է, բայց այդուհանդերձ այն ևս լրիվ չի սպառում անձնական անձեռնմխելիության իրավունքի հետ կապված լուծում պահանջող բոլոր խնդիրները, և կարիք ունի գիտատեսական վերլուծություններով բյուրեղացված եզրակացությունների միջոցով նշված ոլորտում առկա իրավակարգավորումների մշտական կատարելագործման:


### Ամփոփում

Հոդվածում տարբեր գիտնականների արտահայտած գաղափարների, հայացքների և միջազգային-իրավական մի շարք փաստաթղթերի ուսումնասիրության լույսի ներքո ներկայացվում է անձնական անձեռնմխե-

լիության իրավունքի գաղափարական զարգացման ընթացքը: Անդրադարձ է կատարվում նաև ինչպես նախկին, այնպել էլ նոր խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության մեջ անձնական անձեռնմխելիության իրավունքի այս կամ այն բովանդակությամբ ամրագրման հարցերին:

Իրականացված վերլուծության հիման վրա ներկայացվել են նաև որոշ տեսական ընդհանրացումներ և արվել են գիտագործնական բնույթի եզրակացություններ:

*Բանալի բառեր* - անձնական անձեռնմխելիություն, անձի անձեռնմխելիություն, ֆիզիկական և հոգեկան անձեռնխմելիություն, անձնական անվտանգության և անձնական ազատության իրավունքներ:

### Գրականություն


1. Нерсесянц В.С. Философия права. - М., 1997:
2. Гуревич А.Я. Категории средневековой культуры.- М., 1972:
3. Гроций Г. О праве войны и мира. - М., 1956:
4. Локк Д. Избранные философские произведения 1 В 2-х т. Т. 2. - М., 1960:
5. Blackstone W. Commentaries on the Laws of England. - Philadelphia, 1859:
6. Монтескье Ш. Избранные произведения. - М., 1955:
7. Гоббс Т. Левиафан - М., 1936:
8. Кистяковский Б.А. Социальные науки и право. - М., 1916:
9. Вышеславцев Б.П. Гарантии прав граждан. - М., 1917:
10. Люблинский П.И. Неприкосновенность личности. - Пг., 1917:
11. Под ред. МИ. Сизикова История государства и права 1. - М., 1997:
12. Под ред. Е.А. Лукашевой Общая теория прав человека. - М., 1996:
13. Антология мировой правовой мысли. Т. III. - М., 1999:
14. Конституционное государство, Сб. Статей, Изд. 2-е.- Пг., 1905:
15. Общая теория права. - Н. Новгород, 1993:
16. Мальцев Г. В. Права и свободы человека//Теория государства и права. - М., 1995:
17. Гранет Н.Л. Государство и личность. - М., 1997:

## HISTORICAL AND THEORETICAL ANALYSIS OF THE PROBLEMS RELATED TO THE LEGAL PERCEPTION OF THE CONTENTS OF RIGHT TO PERSONAL IMMUNITY

**Artur Nahapetyan**
EREA, Chair of Law, Postgraduate student

**Summary**

The paper presents the process of ideological development of the personal immunity right in the context of different scholars' ideas, views and a number of international and legal documents. Reference is made to the issues of different reflections of the personal immunity right both in the previous and in the current editions of the RA Constitution. Based on the analysis, some of the theoretical generalizations were made and scientific-practical conclusions were presented.

*Keywords* - personal immunity, person's immunity, physical and mental immunity, personal security and personal liberty rights.

## ФУНДАМЕНТАЛЬНЫЕ ВОПРОСЫ ПРАВОВОСПРИЯТИЯ СОДЕРЖАНИЯ ПРАВА ЛИЧНОЙ НЕПРИКОСНОВЕННОСТИ. ИСТОРИКО - ТЕОРЕТИЧЕСКИЙ АНАЛИЗ

**Наапетян Артур Сейранович**
ЕРОА, кафедра правоведения, аспирант

**Резюме**

В статье представлен процесс идеологического развития права личной неприкосновенности в контексте изучения идей, взглядов и ряда международно-правовых документов разных ученых. Обсуждаются также вопросы отражения в различном содержании права на личную неприкосновенность, как в прошлой, так и в новой редакции Конституции РА. На основе анализа были представлены некоторые теоретические обобщения и сделаны научно-практические выводы.

*Ключевые слова* - личная неприкосновенность, неприкосновенность личности, физическая и духовная неприкосновенность, право на личную безопасность и личную свободу.

# ԻՐԱՎԱԿԱՆ ՆԻՀԻԼԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱԿԱՏԵՍԱԿ

***Լյուսյա Ասատուրի Մարգարյան***
*ՀՀ ԳԱԱ, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի*
*և իրավունքի ինստիտուտ, ասպիրանտ*

Իրավական մշակույթը ժողովրդի ընդհանուր մշակույթի անբաժանելի մասն է, որը հիմնված է նրա սկզբունքների վրա, արտացոլում է նրա զարգացման մակարդակը, մտածելակերպը: Իրավական մշակույթը չի ձևավորվում քաղաքական, բարոյական, էսթետիկ մշակույթներից առանձին. նրանք կիսում են հասարակության բարոյական եւ իրավական կարգավիճակի ստեղծման ընդհանուր նպատակը, որն ապահովում է անհատի վարքագծի ազատությունն ու հասարակության նկատմամբ պատասխանատվությունը, պաշտպանում է իր իրավունքները, սոցիալական ապահովվածությունը, արժանապատվությունը: Այլ կերպ ասած, անհատը հայտնվում է տնտեսական, սոցիալական, քաղաքական, մշակութային գործընթացների կենտրոնում:

Իրավական մշակույթը՝ ունենալով բազմաթիվ տեսակներ և դրսևորման ձևեր՝ ունի նաև իր **հակատեսակը (անտիպոդը)՝ իրավական նիհիլիզմը:** Իրավական նիհիլիզմը (լատ Nihil – ոչինչ) ՝ իրավունքի՝ որպես սոցիալական ինստիտուտի, վարքագծի կանոնների և նմանատիպ բոլոր այն համակարգերի հերքումն է, որոնք նպաստում են մարդկային հարաբերությունների ճիշտ կարգավորմանը[1]: Հարկ է նկատել, որ իրավական նիհիլիզմը իրենից միաժամանակ ենթադրում է պետական նիհիլիզմ, քանի որ իրավունքի բացառումն իր մեջ, ըստ էության, ներառում է նաև պետության՝ որպես հանրային իշխանության իրավական կազմակերպության բացառումը: Իրավական նիհիլիզմի բնույթը կայանում է օրենքների ժխտման մեջ, ինչը, բնականաբար հանգեցնում է հակաիրավական գործունեությանը՝ խանգարելով իրավական համակարգի զարգացմանը: Ըստ էության իրավական նիհիլիզմը իրենից ենթադրում է իրավական մշակույթի բացակայություն:

Իրավական նիհիլիզմը կարող է լինել ակտիվ կամ պասիվ, կեն-

[1] Տե՛ս Зрячкин А.Н. Правовой нигилизм: причины и пути их преодоления. Автореф. дис... канд. юрид. наук. Саратов, 2007, с. 8.

ցաղային՝ կապված օրենքի չիմացության հետ, կամ փիլիսոփայական, ինչը կապված է մարդու աշխարհահայացքի կառուցվածքի հետ, որում ժխտվում է օրենքի հասարակական դերը: Միևնույն ժամանակ, իրավական նիհիլիզմը կարող է դիտվել օրենքի հետ որպես անվանական հաստատություն ակտիվորեն առնչվող անձանց մոտ, սակայն իրականում իրենց շահերին ձգտող՝ կոռուպցիայի եւ հիերարխիկ կառույցների միջոցով:[2] Իրավական նիհիլիզմը հանդիսանում է իրավագիտակցության խեղաթյուրման տեսակ:

Ինչպես նշվել էր, իրավական նիհիլիզմը արտահայտվում է անձի՝ իրավունքի նկատմամբ բացասական վերաբերմունքով: Սակայն օրենքի նկատմամբ նման վերաբեմունքը կարող է լինել տարբեր աստիճանի՝ ակտիվ և պասիվ: Պասիվ ձևը արտահայտվում է օրենքի նկատմամբ անհավատության, հասարակության մեջ իր դրական դերի հերքման մեջ: Ակտիվ ձևը բնութագրվում է օրենքների հանդեպ թշնամական վերաբերմունքով, նման հայացքների քարոզչությամբ այլ քաղաքացիների (անարխիզմ) միջև:

Իրավական նիհիլիզմը, ընդհանուր առմամբ, իրավունքի, իրավակարգի, օրենքների նկատմամբ հավատի բացակայությունն է, օրենքների նկատմամբ բացասական և անհարգալից վերաբերմունքը[3]: Իրավական նիհիլիզմի պատճառները տարբեր են: Բնութագրելով, օրինակ, հետխորհրդային Ռուսաստանը՝ պրոֆեսոր Վ.Տումանովը նշում է, որ՝ երբ երկիրը հրաժարվեց կառավարման ամբողջատիրական մեթոդներից և փորձեց որդեգրել իրավական պետության ուղին, երբ մարդիկ իրական հնարավորություն ստացան օգտվելու իրավունքներից և ազատություններից, այդ ժամանակ անմիջապես նկատվեց հասարակության իրավագիտակցության և իրավական մշակույթի ցածր մակարդակը, ինչպես նաև իրավունքի նկատմամբ անտարբեր վերաբերմունքը և դրա թերագնահատումը[4]: Հատկանշական է, որ այս երևույթը բնորոշ էր ոչ միայն հետխորհրդային Ռուսաստանին, այլև հետխորհրդային մյուս երկրներին՝ չնչին տարբերություններով:

---

2 Տե՛ս նույն տեղում:

3 Տե՛ս Донченко Р. Правовой нигилизм как устоявшееся общесоциальное явление, Юрист, 6, 2005, http://www.lawmix.ru/comm/1126/, /03.04.2014

4 Տե՛ս Туманов В. Правовой нигилизм в историко-идеологическом ракурсе. Государство и право. №8, М., 1993, с. 52-58.

Հայաստանի Հանրապետությունում ևս իրավիճակը չէր տարբերվում, քանի որ մեր հասարակությունը նույնպես սովոր էր իշխանությունների վարած քաղաքականությանը, և, իհարկե, վերջինիս համար բավականին դժվար էր յուրացնել նոր իրավական համակարգը, նոր իրավունքները և ազատությունները, որոնցից օգտվելու հմտությունները նույնիսկ այսօր դեռևս ամբողջությամբ ձևավորված չեն մեր հասարակության իրավագիտակցության մեջ: Ինչպես նշում է պրոֆեսոր Ի.Իլյինը. «Արդար, օրինապահ կարելի է լինել միայն սեփական համոզմունքով և որոշումով: Առանց դրա չկա իրավագիտակցություն և արդարություն: Եվ այդ դեպքում մարդիկ դառնում են ոչ թե իրավակարգի համար ապավեն, այլ խոչընդոտ: Այս դեպքում պետք է տարբերել օրինապահությունը օրինապաշտությունից, քանի որ առաջին դեպքում մարդիկ ենթարկվում են օրենքին, իսկ երկրորդ դեպքում հարգում են օրենքը: Այսինքն՝ օրինապաշտությունը անհատի կամավոր, այլ ոչ թե պարտադրված դիրքորոշումն է, հետևապես՝ այս դեպքում անհատը հետևում է օրենքին ոչ թե այն պատճառով, որ դրանից վախենում է, այլ այն պատճառով, որ հարգում է այն»[5]:

Իրավական նիհիլիզմի մեկ այլ պատճառ է նաև այն, որ որոշակի հանգամանքներում օրինականության և կարգի մասին գաղափարները կարող են շահագրգիռ առաջնորդների և իշխանական կառույցների կողմից օգտագործվել որպես ուժի գործադրման և մարդու իրավունքների խախտման առիթ: Սա կարելի է անվանել իրավական կոնֆորմիզմ, երբ իրավունքի և օրինականության գաղափարները հարմարեցվում են իրավիճակին, երբ դրանք օգտագործվում են ոչ թե ի նպաստ, այլ ի վնաս հասարակական շահերի և պահանջների[6]:

Ասվածը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ հաճախ քաղաքացիների խաղաղ ցույցերը, երթերը և հանրահավաքները, ինչպես նաև տարբեր քաղաքացիական նախաձեռնություններ արժանանում են իշխանության կողմից բռնի վերաբերմունքի, որը ներկայացվում է որպես հանրային շահի և սահմանադրական կարգի պաշտպանում,

---

[5] Տե՛ս Ильин И. А. Собрание сочинений: в 10 т. Т. 2. Кн. 1. «Наши задачи»: Статьи 1948-1950гг. / И. А. Ильин; сост., вступ.ст. и коммент. Ю. Т.Лисицы. М., Русская книга, 1993. с. 182.

[6] Донченко Р.Правовой нигилизм как устоявшееся общесоциальное явление, Юрист, №6, 2005, http://www.lawmix.ru/comm/1126//03.04.2014/.

մինչդեռ քաղաքացիներն օգտվում են իրենց սահմանադրական իրավունքներից և ազատություններից: Այս տեսանկյունից ուշագրավ է Հենդլիի այն կարծիքը, ըստ որի՝ իրավական նիհիլիզմի պատճառ կարող է հանդիսանալ հենց պետությունը: Մեկնաբանները հարց են բարձրացնում, թե ինչու քաղաքացիները պետք է հետևեն օրենքին, երբ այդ նույն օրենքին չի հետևում պետությունը[7]: Օրենքի նկատմամբ հավատի բացակայությունը կազմում է իրավական նիհիլիզմի հիմքը, ինչը նպաստում է իրավաքաղաքական հակամշակույթի: Օրենքի համընդհանուր անտեսումը իրավագիտակցության ծայրահեղ ցածր մակարդակի և համարժեք իրավական մշակույթի բացակայության հետևանքն է[8]: Իրավաքաղաքական նիհիլիզմի լուրջ աղբյուր է մարդու իրավունքների խախտումը, հատկապես այն իրավունքների, ինչպիսիք են՝ կյանքի, արժանապատվության, սեփականության, անվտանգության իրավունքները: Անձի թույլ իրավական պաշտպանվածությունը հանգեցնում է օրենքի նկատմամբ հավատի նվազման, հասարակության մեջ կարգի և կայունության ապահովման պետության կարողության թուլացմանը: Իրավունքի ոչ պատշաճ կիրառումը չի կարող ձևավորել վերջինիս նկատմամբ դրական վերաբերմունք, այլ հակառակը՝ այն ծնում է դժգոհություն և բողոք[9]:

Հաճախ իրավական նիհիլիզմի սուբյեկտները (քաղաքացիները, պաշտոնյաները, պետական մարմինները, հասարակական կազմակերպությունները) ուղղակի չեն համապատասխանեցնում իրենց վարքագիծը իրավական նորմերի պահանջներին, այլ ձգտում են գործել և ապրել «իրենց կանոններով»: Այս երևույթը կարող է բացատրվել տարբեր պատճառներով, սակայն դրանցից առաջնահերթ է այն հանգամանքը, որ հաճախ գործնականում իրավական նորմերը կարող են ոչ լիարժեքորեն արտահայտել իրենց հասցեատերերի շահերը, իրավունքները և ազատությունները: Իսկ սեփական իրավունքի իրականացման անհնարինությունը անհատի մոտ ծնում է նրանից օտարման զգացում, իրավական հիասթափություն, կասկածամտություն՝ ձևավորելով իրավական նիհիլիզմ: Քաղաքացին դադարում է գնահատել և

---

[7] Տե՛ս նույն տեղում, էջ 154:

[8] Տե՛ս Донченко Р. Правовой нигилизм как устоявшееся общесоциальное явление, Юрист, №62005,) http://www.lawmix.ru/comm/1126//03.04.2014/.

[9] Տե՛ս նույն տեղում:

հարգել իրավունքը, քանի որ նրանում չի տեսնում իր վստահելի երաշխավորին:

Իրավական նիհիլիզմը զուգորդվում է նաև արդարության հասկացության հետ, ինչը նշանակում է հասարակության կառուցվածքի ընդհանուր բարոյական իմաստ, սոցիալական կառուցվածքի սահմանափակ սկզբունքների համալիր, հասարակական և քաղաքական ինստիտուտների բարձր լեգիտիմություն: Ամերիկացի պրոֆեսորներ Ջ. Մեդիսոնը, Ա. Համիլթոնը և Ջ. Ջեյը արդարությունը դիտում են որպես կառավարման նպատակ: Նրանց կարծիքով՝ արդարությունը քաղաքացիական հասարակության նպատակն է: Եվ վերջինս միշտ ձգտել և շարունակելու է ձգտել այդ նպատակին[10]:

Անշուշտ, իրական քաղաքական կյանքը հաստատում է այս թեզը. որևէ երկարաժամկետ նպատակներ և ծրագրեր չեն կարող իրականացվել անարդար միջոցներով և մեթոդներով[11]: Եթե արդարություն չկա, առաջանում է իրավական նիհիլիզմ: Կարծում ենք, որ հայ հասարակության մոտ իրավական նիհիլիզմի առկայությունն իր մեջ պարունակում է բազմաթիվ վտանգներ ինչպես՝ հասարակության, այնպես էլ պետության համար: Իրավական նիհիլիստների մոտ ձևավորվում է այնպիսի իրավական մտածելակերպ, որը նրանց անընդհատ դուրս է բերում փողոց: Չհավատալով օրենքների արդարությանը, իրենց իրավունքների պաշտպանությունը չկապելով պետական և քաղաքական ինստիտուտների հետ՝ հասարակությունը անընդհատ գտնվելու է անկայուն վիճակում: Սա կարող է հանգեցնել երկու հետևանքի. իշխանությունն իր հերթին, հղում անելով պետության մեջ կարգ ու կանոնի պահպանման իր օրինական պարտավորությանը և իրավունքին՝ փորձելու է ճնշում գործադրել քաղաքացիների վրա:

Այս առումով տեղին է մեջբերել պրոֆեսոր Ուոլցերի խոսքերը, որ՝ «Իշխանությունից և հարկադրանքից ոչ մի տեղ չես փախչի»[12]: Իսկ

---

[10] 5Федералист. Политические эссе А. Гамильтона, Дж. Мэдисона и Дж. Джея: Пер. с англ. / Под общ. ред., с предисл. Н.Н.Яковлева, коммент. О.Л.Степановой. Прогресс–Литера, М., 1994, с. 87-93. http://grachev62.narod.ru/Fed/Fed_11.htm /17/07/2014/.

[11] 26Баранов Н.Современная демократия: эволюционный подход. Балт. гос. техн. ун-т. СПб., 2007, с. 162.

[12] Տե՛ս Фоули М., Эдвардс Б. Парадокс гражданского общества. JournalofDemocracy, 1996, vol. 7, #3, p. 38-52 http://old.russ.ru/journal/predely/97-11-25/fouli.htm /06.07.2014/

կամավորական միությունները, քաղաքացիական հասարակությունը սկսելու են, իրենց հերթին, կտրուկ կերպով քննադատել իշխանությանը, և արդյունքում առաջանալու է «դիսիդենտական» քաղաքացիական հասարակություն: Այս երկու հետևանքներն էլ Հայաստանի Հանրապետությունում ուղղակիորեն պայմանավորված են քաղաքական իշխանության վարքագծով, որը գործնականում մերժում է քաղաքացիական հասարակության հետ իրական երկխոսության միջոցները՝ հասարակությանը մղելով դեպի փողոց:

Արդյունքում՝ կարող է ստեղծվել հասարակություն-պետություն փոխհարաբերությունների մի մոդել, որը հիմնված կլինի ապակառուցողական կոնֆլիկտի վրա: Այս խնդիրները լուծելու համար պետք է իրավունքը մոտեցնել ժողովրդին, որպեսզի ամրապնդվի զանգվածային իրավագիտակցությունը, որպեսզի ժողովուրդը հասկանա և գնահատի օրենքները և կամավոր հետևի իր պարտավորություններին և արդարացիորեն իրականացնի իր լիազորությունները: Իսկ այս խնդիրը լուծելու միակ ուղին, մեր կարծիքով, իրավական պետության հաստատումն է՝ պետության, որում կիշխի իրավունքը:


### Ամփոփում

Տվյալ հոդվածում ուսումնասիրվում է հասարակության և պետության իրավական նիհիլիզմը՝ որպես ինքնուրույն կատեգորիա, որը միևնույն ժամանակ սերտորեն կապակցված է նույն հասարակության մեջ իրավական մշակույթի բացակայության հետ: Հոդվածում ներկայացված է իրավական նիհիլիզմի ապակառուցողական դերը հասարակության և պետական համակարգի համար, ինչպես նաև դրա գոյացման պատճառները: Հոդվածում քննարկվում են նաև իրավական նիհիլիզմի արտահայտման ձևերը և դրա հետևանքները: Օրենքի նկատմամբ բացասական վերաբերմունքը կարող է լինել տարբեր աստիճանի՝ ակտիվ և պասիվ: Պասիվ ձևը արտահայտվում է օրենքի նկատմամբ անհավատության, հասարակության մեջ իր դրական դերի հերքման մեջ: Ակտիվ ձևը բնութագրվում է օրենքների հանդեպ թշնամական վերաբերմունքով, նման հայացքների քարոզչությամբ այլ քաղաքացիների միջև: Հոդվածի միջոցով փորձել ենք վերհանել Հայաստանի Հանրապետությունում իրավական նիհիլիզմի տարածման պատճառները և վտանգը երկրի պետաիրավական համակարգի նկատմամբ:

*Հիմնաբառեր.* իրավական նիհիլիզմ, իրավական մշակույթ, պետական համակարգ, կատեգորիա, հասարակություն

**Գրականություն**

1. Зрячкин А. Н. Правовой нигилизм: причины и пути их преодоления. Автореф. дис. ... канд. юрид. наук. Саратов, 2007.
2. Донченко Р. Правовой нигилизм как устоявшееся общесоциальное явление, Юрист, №6, 2005, http://www.lawmix.ru/comm/1126/, /03.04.2014.
3. Туманов В. Правовой нигилизм в историко-идеологическом ракурсе. Государство и право. №8, М., Наука, 1993.
4. Ильин И. А. Собрание сочинений: в 10 т. Т. 2. Кн. 1. «Наши задачи»: Статьи 1948-1950гг. / И. А. Ильин; сост., вступ.ст. и коммент. Ю. Т.Лисицы. М., Русская книга, 1993.
5. Федералист. Политические эссе А. Гамильтона, Дж. Мэдисона и Дж. Джея: Пер. с англ. / Под общ. ред., с предисл. Н.Н.Яковлева, коммент. О.Л.Степановой. Прогресс–Литера, М., 1994, http://grachev62.narod.ru/Fed/Fed_11.htm /17/07/2014/.
6. Баранов Н.Современная демократия: эволюционный подход. Балт. гос. техн. ун-т. СПб., 2007:
7. Фоули М., Эдвардс Б. Парадокс гражданского общества.

## LEGAL NIHILISM AS AN OPPOSITION TO THE LEGAL CULTURE

**Lyusya Margaryan**
NAS RA, Institute of Philosophy, Sociology and Law,
Postgraduate student

**Summary**

This article examines the legal nihilism of the society and the state as an independent category, at the same time closely related to the lack of legal culture in the same society. The article presents the destructive role of legal nihilism for the public and state system, as well as the reasons for

its formation. The article also discusses the forms of expression of legal nihilism and its consequences. A negative oversight of the law can be varied as active and passive. The passive way is expressed in disbelief towards the law, in the denial of its positive role in society. The active form is characterized by hostile attitude towards the law, propaganda of such views among other citizens. Through the article, we have tried to identify the causes and dangers of legal nihilism in Armenia towards the state-legal system.

*Keywords:* legal nihilism, legal culture, state system, category, society

## ПРАВОВОЙ НИГИЛИЗМ КАК АНТИПОД ПРАВОВОЙ КУЛЬТУРЫ

**Маргарян Люся Асатуровна**
НАН РА, Институт Философии, социологии и права, аспирант

### Резюме

В данной статье правовой нигилизм общества и государства рассматривается как независимая категории, одновременно тесно взаимосвязанная с отсутствием правовой культуры в том же обществе. В статье представлена деструктивная роль правового нигилизма в государственной системе, а также причины ее формирования. В статье также рассматриваются формы выражения юридического нигилизма и его последствия. Негативное отношение к закону может выражаться по-разному- активно и пассивно. Пассивный путь выражается в недоверии к закону, в отрицании его положительной роли в обществе. Активная форма характеризуется враждебным отношением к законам, пропагандой этих взглядов среди других граждан. В этой статье мы попытались выявить причины распространения правового нигилизма в Армении и его опасности для государственно-правовой системы.

*Ключевые слова:* правовой нигилизм, правовая культура, государственная система, категория, общество

# ՀՕԿ-Ի ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

***Լիլիթ Ասքանազի Մակարյան***
*պ.գ.թ., դոցենտ*
*ԵԿՏԱ, Միջազգային հարաբերությունների ամբիոն, դասախոս*

Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ) ստեղծման առաջին իսկ օրերից սոցիալական հիմնախնդիրների հետ զուգահեռ մեծ ուշադրություն էր դարձնում նաև կրթամշակութային կյանքին վերաբերող հիմնախնդիրներին: 1920-ական թթ. սկզբներին Հայաստանի բնակչությունը, ծայրահեղ չքավորության մեջ լինելով, նաև գրագիտության պակաս ուներ: Երկրի մտավորականությունը, այդ թվում՝ ուսուցիչներն ապրում էին աղքատության պայմաններում: ՀՕԿ-ը արտասահմանից ստացված օգնությունից բաշխումներ էր անում նրանց, գրենական պիտույքներով ապահովում կրթական հաստատությունները, բուհերին փոխանցում արտասահմանի հայկական համայնքներից և անհատ նվիրատուների կողմից ուղարկված արժեքավոր բժշկական գործիքները, մասնագիտական գրականությունը: Կրթամշակութային հիմնախնդիրներին առանձնակի ուշադրություն դարձվեց 1922թ. ՀՕԿ-ի 2-րդ համագումարին, ուր հատուկ այդ նպատակի համար կազմված Կրթամշակութային հանձնաժողովի կողմից զեկուցումներով հանդես են գալիս գրականագետ Մ. Աբեղյանը և ՀՍԽՀ Լուսավորության ժողկոմ Պ. Մակինցյանը: Քանի որ երկրի բոլոր կրթական հաստատություններում պակասում էին գրենական պիտույքները, մասնագիտական գրականությունը, Մ. Աբեղյանն առաջարկում է ՀՕԿ-ի ստացած միջոցներից լրացնել այդ բացը[1]: ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը Հայաստանի մտավորականներին՝ հոբելյանների առիթով գումարներ էր հատկացնում, մասնավորապես՝ գրականագետ Կոստանդին Մելիք-Շահնազարյանին, դերասան Արշակ Հարությունյանին, գրական գործունեությունից չկտրվելու համար սոցիալական աննախանձելի վիճակում գտնվող տաղանդավոր գրող Դ. Դեմիճյանին և ուրիշներին[2]: 1922թ. ՀՕԿ-ի նախագահությունն առաջարկում է հի-

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 33, թ. 38 շրջ և 39:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 81, թթ. 24, 27 շրջ.:

վանդությամբ տառապող և ապաքինման շրջանում գտնվող Հ. Թումանյանին՝ իբրև ՀՕԿ-ի նախկին նախագահի, օգնության ձեռք մեկնել՝ տրամադրելով նրան 1000-1500ռ.: Քանի որ կոմիտեն իր տրամադրության տակ տվյալ պահին բավարար գումար չուներ, որոշվում է հիշյալ նպատակի համար հատկացնել միայն 300ռ. ոսկով՝ վերցնելով փոխարինաբար[3]: ՀՕԿ-ի Մոսկվայի կոմիտեն մեծ աջակցություն էր ցույց տալիս Հ. Թումանյանի բուժմանը Մոսկվայում: Մասնաճյուղը կազմակերպում է նաև մեծ բանաստեղծի հուղարկավորության արարողությունը Մոսկվայում: ՀՕԿ-ի Մոսկվայի մասնաճյուղը նաև Զանգեզուրի հայկական դպրոցների համար հավաքել և ուղարկել էր 1000 ռ. արժողությամբ գրենական պիտույքներ, ինչպես նաև վարկ էր բացել Հայ դրամատիկական ստուդիայի ներկայացումների նախնական ծախսերը հոգալու համար՝ հատկացնելով 10 չերվոնեց նպաստ[4]:

ՀՍԽՀ Պետլուսկինոյի աշխատանքներին օժանդակելու գործում՝ իբրև բաժնեմասի սեփականատեր, ՀՕԿ-ը ևս մեծ մասնակցություն է բերում[5]: ՀՕԿ-ի և Պետլուսկինոյի միջև 1924թ. նոյեմբերին և 1925թ. մայիսի 4-ին կնքված պայմանագրերով ՀՕԿ-ը հանդիսանում էր «Խորհրդային Հայաստան», և «Անուշ» կինոնկարների արտադրության գործում նրա գործընկերը՝ վճարելով 8000 ռուբլուց ավելի գումար: Ֆիլմի ցուցադրման մենաշնորհային իրավունքը ԽՍՀՄ տարածքում (բացի Անդրկովկասից) և արտասահմանում 3 տարի ժամկետով տրվում է ՀՕԿ-ին[6]: Արդեն 1924թ. դեկտեմբերի 1-ից սկսվում են Պետլուսկինոյի առաջին՝ «Խորհրդային Հայաստան» ֆիլմի նկարահանման աշխատանքները: Պայմանագրի համաձայն այդ ֆիլմի համար անհրաժեշտ բոլոր ծախսերը հոգում էր ՀՕԿ-ը, իսկ կովկասյան հանրապետությունների սահմաններում ֆիլմի ցուցադրման իրավունքը վերապահվում էր Պետլուսկինոյին[7]: Այդ ֆիլմի միջոցով ՀՕԿ-ը արտասահմանի հայկական համայնքներում քարոզչություն էր կատարում Խորհրդային Հայաստանի օգտին: 1928թ. ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը, Ակցիոներական ընկերությունը և Հայկինոն կնքում են

---

3 Տե՛ս նույն տեղում, գ. 35, թթ. 1-2, 4:
4 Տե՛ս նույն տեղում, գ. 306, թ. 2 և շրջ.:
5 Տե՛ս «Հրավիրակ», № 1, 1925թ., էջ 11:
6 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 112, թթ. 3-4:
7 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 9 դեկտեմբերի 1924թ., № 280, էջ 3:

պայմանագիր, որով ՀՕԿ-ը գնում է նաև «Նամուս» և «Չար ոգի» ֆիլմերը Ամերիկյան մայրցամաքում ցուցադրելու իրավունքը[8]: 1927-1934 թթ. ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը գումարներ էր հատկացրել Անգրագիտության վերացման ֆոնդին (4500ռ.), Պիոներական կենտրոնական բյուրոյին (10000ռ.), Պետթատրոնի 10-ամյակի առթիվ (15000ռ.), Հայ դրամատիկիական կոմիտեին (1000ռ.), Պարերի ստուդիային (1000ռ.), «Կարմիր զինվոր» թերթին (1000ռ.), Պատանի հանդիսատեսի թատրոնին (2000ռ.), Պետօպերայի կազմակերպչական ծախսերին (25000ռ.), Բանվորական թատրոնին (3000ռ.), Լենինականի դրամատիկական թատրոնին (5000ռ.)[9]: ՀՕԿ-ի գլխավոր վարչությունը գնահատելով Պետական թատրոնի աշխատանքները՝ վերջինի 10-ամյակի առթիվ հայ թատրոնի պատմությունը գրի առնելու համար 1932թ. Լուսժողկոմատին տրամադրում է 15 հազ. ռ.: Կոնսերվատորիային՝ կրկին 10-ամյակի առթիվ, նվիրում է 5 հազ. ռ., իսկ Պետօպերա կազմակերպելու համար՝ 25 հազ. ռ.[10]: 1930թ. սկսած՝ ՀՕԿ-ը մեծ ուշադրություն էր դարձնում պիոներների դաստիարակությանը՝ նյութապես աջակցելով նրանց ամառային միջոցառումների կազմակերպմանը, ինչպես նաև ֆուտբոլիստներին և հեծանվորդներին[11]: ՀՕԿ-ի նախագահ Գր. Վարդանյանի պատվերով պատրաստվում են Դ. Դեմիրճյանի և Վ. Թոթովենցի լիբրետոների հիման վրա Յ. Ստեփանյանի և Ա. Տեր-Ղևոնդյանի եղանակավորած «Քաջ Նազար» և «Աստղածոր» օպերաները[12]:

ՀՕԿ-ը Խորհրդային Հայաստանի կրթամշակութային հաստատություններին օգնություն ցույց տալուց բացի լայն քարոզչություն կատարելու համար ծավալեց նաև հրատարակչական գործունեություն: 1925թ. ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանը կից ստեղծվում է հրատարակչական բաժին, որի վարիչ է նշանակվում Գարեգին Լևոնյանը, ով նաև ՀՕԿ-ի կողմից հրատարակվող «Հրավիրակ» պարբերականի խմբագրական կոլեգիայի քարտուղարն էր[13]: ՀՕԿ-ը հայ գրողներին գրական պատվերներ տալով՝ գնահատում և քաջալերում էր նրանց

[8] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 17, թ. 20:
[9] Տե՛ս նույն տեղում, գ. 230, թ. 42:
[10] Տե՛ս «ՀՕԿ», Ա տարի, թիւ 4, 1933թ. մայիս, Փարիզ էջ 4:
[11] Տե՛ս «Վերելք», Ա տարի, թիւ 1, 1936թ., Նյու Յորք, էջ 151:
[12] Տե՛ս «ՀՕԿ», Բ տարի, թիւ 2, 1934թ. փետրվար, էջ 85:
[13] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 116բ, թ. 20:

աշխատանքը: ՀՕԿ-ի կողմից հրատարակվում են Վ. Թոթովենցի՝ «Նոր Բյուզանդիոնը», Ալ. Բակունցի՝ «Հովնաթան Նաղաշ» աշխատանքները: Տպագրության էին պատրաստել նաև Ե. Լալայանի՝ «Առակներ և հեքիաթներ», Լեոյի «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը», Պ. Աբելյանի՝ «Խորհրդային Հայաստանի վերելքը թվերով» գործերը[14], որոնք ևս լույս են ընծայվում: Հրատարակում էին նաև բացիկներ, Հայաստանի քարտեզներ, ՀՕԿ-ի հիմնադրման կապակցությամբ հրատարակվում է «Հայաստանի օգնութեան կոմիտէ» մեկօրյա թերթը, լույս է ընծայվում ՀՕԿ-ի կենտրոնական վարչության պաշտոնական օրգան «Հրավիրակը»՝ երեք համարով, «ՀՕԿ-ի տեղեկատու»-ն և այլն: ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը Խորհրդային Հայաստանի հրատարակություններից ուղարկում էր նաև արտասահման[15]:

Հրատարակչական ակտիվ գործունեություն էին ծավալում նաև ՀՕԿ-ի Վրաստանի և Մոսկվայի մասնաճյուղերը: Վրաստանի ՀՕԿ-ը հրատարակում է «Օգնիր Հայաստանին» մեկօրյա թերթը: 1925թ. Վրաստանի ՀՕԿ-ը հրատարակում է նաև «Հայրենաշեն» տեղեկատուն: Ռուսաստանում ապրող հայությանը Հայաստանի դրության և ՀՕԿ-ի աշխատանքների մասին իրազեկելու համար ՀՕԿ-ի Մոսկվայի կոմիտեն հրատարակում է ռուսերեն լեզվով ամսագիր՝ «Вестник Московского комитета помощи Армении» անունով[16]: 1924թ. հրատարակվում է նաև «Լրաբեր Հայաստանի օգնության կոմիտեի Մոսկվայի ճյուղի» պարբերականը, որտեղ բացի մասնաճյուղերի գործունեությունից, մանրամասն ներկայացվում էին խորհրդային հանրապետություններում հայերի տեղաբաշխվածության և հայկական համայնքների դրության մասին տեղեկություններ: Հետագայում Մոսկվայի մասնաճյուղի կողմից նույն նպատակի համար հրատարակում է «Возроздающаяся Армения» ամսագիրը: 1928թ. Մոսկվայում ՀՕԿ-ի կողմից տպագրվում է Մոսկվայի ՀՕԿ-ի նախկին նախագահ, գրող Կարեն Միքայելյանի հեղինակած «Հայ ժողովրդական հարստություններն արտասահմանում: Կտակներ, նվիրատվություններ և հասարակական գումարներ» գրքույկը:

[14] Տե՛ս «ՀՕԿ», Ա տարի, թիւ 4, 1933թ. մայիս, էջ 4:
[15] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 165, թ. 9 շրջ, 10:
[16] Տե՛ս նույն տեղում, գ. 306, թ. 2:

Կրթամշակութային և հրատարակչական գործունեությամբ առանձնանում էին հատկապես ՀՕԿ-ի Ֆրանսիայի և ԱՄՆ-ի մասնաճյուղերը: ՀՕԿ-ի արտասահմանի մասնաճյուղերին կից գործում էին զանազան մշակութային, կրթական, մարզական հաստատություններ, որոնք կազմակերպում էին բազմաբովանդակ միջոցառումներ, իսկ ստացված հասույթը տրամադրում էին մասնաճյուղերի տեղական կարիքներին կամ ուղարկում Խորհրդային Հայաստան:

Իրենց բուռն մշակութային միջոցառումներով հատկապես առանձնանում էին Ֆրանսիայի Փարիզ, Լիոն, Մարսել քաղաքներում գործող ՀՕԿ-ի մասնաճյուղերը: 1926թ. հունվարի 2-ին Լիոնի քաղաքապետարանի սրահում տեղի է ունենում «Մարտունի» լսարան-ընթերցարանի բացման միջոցառումը, որտեղ բանախոսելու համար Փարիզից հրավիրել էին նշանավոր գրող Զապել Եսայանին[17]: ՀՕԿ-ի Լիոնի մասնաճյուղին կից գործում էր «Տալվորիկ» մարմնամարզական միությունը[18]: Լիոնի «Զորագես» մասնաճյուղին կից գործում էին «Նոր ուղի» լսարանային միությունը, «Հրազդան» երգչախումբը, «Մարտունի» թատերախումբը «Սևան» մարզական, «Շիրականալ», «Պատանեկան» միությունները[19]: 1935թ. մարտի 17-ին Լիոնի 3-րդ թաղապետարանի սրահում «Վերելք» մասնաճյուղը կազմակերպվում է միջոցառում: Տրդատ Նշանյանի բեմադրությամբ թատերախումբը ներկայացնում է Հ. Պարոնյանի «Պաղդասար աղբար» կատակերգությունը: Միջոցառման ժամանակ ասմունքում են Ե. Չարենցի, Կ. Սիտալի ստեղծագործությունները[20]: Փարիզում ՀՕԿ-ի կողմից էր ստեղծվել հայտնի «Ալագյազ» երգչախումբը, որը համերգներով հանդես էր գալիս Ֆրանսիայի հայաշատ քաղաքներում և զարդարում ՀՕԿ-ի և այլ միջոցառումները: 1933թ. օգոստոսի 27-ին «Ալագյազ» երգչախումբը համերգով հադես էր եկել նաև Նիսում[21]: Փարիզի ՀՕԿ-ի «Գողթան» մասնաճյուղը 1933թ. մարտի 25-ին կազմակերպում է պարահանդես, որի գեղարվեստական բաժնում Հ. Առաքելյանի ղեկավարությամբ կրկին իր մասնակցությունն է բերում «Ալագյազ» երգչախումբը, իսկ

17 Տե՛ս «Երևան», թիւ 28, 7 հունվարի 1926թ., Փարիզ, էջ 2:
18 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 406, թթ. 8-9:
19 Տե՛ս «ՀՕԿ», թիւ 2, 1933թ. մարտ, Փարիզ, էջ 54:
20 Տե՛ս նույն տեղում, թիւ 4, 1935թ. ապրիլ, էջ 241:
21 Տե՛ս նույն տեղում, թիւ 5-6, 1935թ. մայիս-հունիս, էջ 341:

«Ման-Պաշի» խումբը հաջողությամբ ներկայացնում է «Վիուի ճաշարանի սպասավորը» կատակերգությունը: ՀՕԿ-ի Փարիզի շրջանի «Շինարար» մասնաճյուղն իր վերակազմությունից հետո (1932թ.) սկսել էր ակտիվ գործունեություն ծավալել, ուներ իր ընթերցարանը: ՀՕԿ-ի «Բյուրակն» մասնաճյուղը Փարիզի ուսանողական թաղամասի ամենաիին մասնաճյուղերից էր: Իր անդամներից մեկի՝ Զապել Եսայանի Հայաստան մեկնելու կապակցությամբ կազմակերպում է գինեձոն՝ Ֆրանսիայի ՀՕԿ-ի կենտրոնական վարչության փոխնախագահ Ավ. Իսահակյանի նախագահությամբ, որին մասնակցում են մոտ 150 մարդ[22]: Ֆրանսիայի ՀՕԿ-ի կենտրոնական վաչության նախաձեռնությամբ 1934թ. նոյեմբերի 11-ին Մյություալիթեի մեծ թատերասրահում կայանում է Վ. Թոթովենցի «Նոր Բյուզանդիոն» ստեղծագործության հիման վրա բեմադրված թատերական ներկայացումը, որին ներկա են լինում մոտ 1800 մարդ[23]:

Ֆրանսիայի Սեն Շամոնի մասնաճյուղին կից գործում էր «Շիրականալ» երկսեռ երգչախումբը: 1937թ. հունիսի 10-ին մասնաճյուղը կազմակերպում է մեծ երգահանդես, ուր բանախոսելու էր հրավիրվել Փարիզի կենտրոնական վարչության անդամ գրող Միսակ Մանուշյանը: Միջոցառման ընթացքում բեմադրվում է նաև Հ. Պարոնյանի «Շողոքորթը»[24]:

Մարսելի հայ համայնքը ՀՕԿ-ի մասնաճյուղերի շնորհիվ ևս մշակութային աշխույժ կյանքով էր ապրում: ՀՕԿ-ի Մարսելի շրջանի մասնաճյուղերի աջակցությամբ կազմակերպվում է նշանավոր «Նորք» մարզական միությունը, «Շահումյան» երգչախումբը, «Պարոնյան» թատերախումբը: Վերջինները մեծ հաջողությամբ ներկայացնում են «Անուշ» օպերան և այլ ստեղծագործություններ[25]: ՀՕԿ-ի արտասահմանի մասնաճյուղերը մեծ կարևորություն էին տալիս նաև մատաղ սերնդի՝ Խորհրդային Հայաստանի ոգով դաստիարակությանը: 1935թ. Ֆրանսիայի ՀՕԿ-ի մասնաճյուղերի 5-րդ համագումարի հաշվետու տարում կարևորություն է տրվում ՀՕԿ-ի դպրոցներին: Հիշյալ շրջանում արդեն գործում էին 4 դպրոցներ՝ 250 աշակերտներով և 7

---

[22] Տե՛ս նույն տեղում, թիւ 2, 1933թ. մարտ, էջ 51-53:

[23] Տե՛ս նույն տեղում, թիւ 12, 1934թ. դեկտեմբեր, էջ 760-763:

[24] Տե՛ս «Զանգու», թիւ 111, 9 հուլիսի 1937թ., Փարիզ, էջ 4:

[25] Տե՛ս «ՀՕԿ», թիւ 5, 1933թ. հունիս, էջ 50:

հոգանոց ուսուցչական կազմով: ՀՕԿ-ի Ֆրանսիայի դպրոցների վրա տարեկան ծախսվում էր 25 հազ. ֆրանկ[26]:

Ինչպես արդեն նշվել էր, Խորհրդային Հայաստանի կինոարտադրությունը ՀՕԿ-ի միջոցով ցուցադրվում էր սփյուռքի հայկական համայնքներում: 1936թ. դեկտեմբերին ՀՕԿ-ի Ֆրանսիայի կենտրոնական վարչությունը Լիոնում ցուցադրում է Խորդային Հայաստանի առաջին հնչյունային ֆիլմը՝ «Պեպոն»: Հունվարից ՀՕԿ-ը այն սկսում է ցուցադրել նաև Մարսելում, Վալանսում, Նիսում, Գրենոբլում և այլ քաղաքներում[27]:

1937թ. դրությամբ շարունակում էին գործել Մարսելի «Նորք» մարզական միությունը, Ֆրանսիայում ՀՕԿ-ի երկու լսարանական միություն, 13 ակումբ- ընթերցարան՝ 1040 կտոր գրքերով: Բացի «Ալագյազ» երգչախմբից՝ այս շրջանում ՀՕԿ-ը ուներ 10 երգչախումբ՝ 500 անդամներով: Գործում էր նաև «Նոր բեմ» նշանավոր թատերախումբը՝ Ա. Շահխաթունու ղեկավարությամբ: Ֆրանսիայում ՀՕԿ-ի թատերախմբերի թիվը հասել էր 10-ի[28]:

ՀՕԿ-ի Ֆրանսիայի կենտրոնական վարչությունը նաև հրատարակչական մեծ գործունեություն էր ծավալում: ՀՕԿ-ի աջակցությամբ Փարիզում 1925 թ.-ից 2500 տպաքանակով լույս էր տեսնում «Երևան» թերթը՝ ամսական 25 հազ. ֆրանկ բյուջեով[29]: Արտասահմանյան հոկերի քարոզչական օրգանը «ՀՕԿ» ամսագիրն էր: ՀՕԿ-ի գլխավոր վարչությունը Գր. Վարդանյանին գործուղում է արտասահման, ով Փարիզում կազմակերպում է տարեկան մինչև 3 հազ. դոլար ծախսով «ՀՕԿ» ամսագրի հրատարակությունը[30]: Այն սփյուռքահայությանը մեծ ինֆորմացիա էր հաղորդում Խորհրդային Հայաստանում կատարվող իրադարձությունների, շինարարական աշխատանքների, ՀՕԿ-ի մասնաճյուղերի գործունեության մասին, ինչպես նաև տպագրվում էին հայ նշանավոր գրողների՝ Նար-Դոսի, Վահան Թոթովենցի, Ալազանի, Գուրգեն Մահարու և ուրիշների ստեղծագործությունները և ներկայացվում սփյուռքահայ լայն շրջանակներին: Փարիզում ՀՕԿ-ի Ֆրան-

[26] Տե՛ս «Զանգու», թիւ 4, 22 հունիսի 1935թ., Փարիզ, էջ 2:
[27] Տե՛ս նույն տեղում, թիւ 84, 1 հունվարի 1937թ., էջ 4:
[28] Տե՛ս նույն տեղում, թիւ 111, 9 հուլիսի 1937թ., էջ 2:
[29] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 31, գ. 82, թ. 2շրջ.:
[30] Տե՛ս նույն տեղում, գ. 194, թ. 99:

սիայի կենտրոնական վարչության կողմից 1925թ. լույս է ընծայվում Տ. Բուդաղյանի «Սպիտակ ածուխը Հայաստանում» ուսումնասիրությունը, ՀՕԿ-ի Ամերիկայի շրջանի կենտրոնական վարչության կողմից 1929թ. Փարիզում հրատարակվում է Հ. Հակոբյանի «Խորհրդային Հայաստան» աշխատանքը, 1928թ. Մարսելում՝ Զ. Եսայանի «Պրոմէթէոս ազատագրուած» գիրքը[31]: Այդ աշխատանքները հրատարակելու համար Ամերիօկ-ը հատկացրել էր 2 հազ. դոլար: 1935-1936 թթ. Փարիզում Ֆրանսիայի ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կողմից լույս են տեսնում նաև ալբոմ-օրացույցներ[32]:

Կրթամշակութային և հրատարակչական ակտիվ գործունեություն էին ծավալում նաև ԱՄՆ-ի և Հարավային Ամերիկայի ՀՕԿ-ի մասնաճյուղերը: ՀՕԿ-ի Ամերիկայի շրջանի 6-րդ համագումարը (1932թ. հուլիս) մեծ կարևորություն է տալիս ՀՕԿ-ի դպրոցների բացմանը, որոնց շնորհիվ նոր սերունդը հայերեն կսովորեր և կկապվեր Խորհրդային Հայաստանի հետ: Սկսել էին գործել ՀՕԿ-ի Դիտրոյթի և Լինի դպրոցները, իսկ Չիկագոյում Պետական հայկական Կարմիր խաչի և ՀՕԿ-ի միացյալ դպրոցը[33]: ՀՕԿ-ի Հյուսիսային Ամերիկայի մասնաճյուղերի հովանավորությամբ 1934թ. դրությամբ գործում էին 17 դպրոցներ, որոնց նպատակն էր նոր սերնդին Խորհրդային Հայաստանի ոգով դաստիարակելը[34]: Դպրոցները կրում էին Ալ. Մյասնիկյանի, Ա. Խանջյանի, Ս. Տեր-Գաբրիելյանի, Ս. Շահումյանի անունները[35]: Ամերիկայի ՀՕԿ-ը երեք համարով հրատարակել էր «Շինարար» ամսագիրը՝ 5 հազ. օրինակով և «ՀՕԿ-ի տեղեկատու»-ն 1200 օրինակով: Ամերիկայի ՀՕԿ-ը 2000 օրինակով տպագրել էր «Մեր խորհրդային երկիրը» նկարների ալբոմը, 2000 օրինակով տպագրել էին «Վերելք» տարեգիրքը, հրատարակել էին նաև Կ. Սիտալի «Գյուղն իմ հեռավոր» պոեմը, խորհրդային նոր Սահմանադրությունը: ՀՕԿ-ի Կալիֆորնիայի շրջանի նախաձեռնությամբ և Խորհրդային Հայաստանին բարեկամ կազմակերպությունների քաջալերությամբ սկսվել էր նաև «Նոր ուղի» թերթի հրատարակումը[36]:

---

[31] Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանում:
[32] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 439, ց. 2, գ. 996, թ. 7շրջ:
[33] Տե՛ս Արձանագրութիւն ՀՕԿ-ի Ամերիկայի շրջանի 6-րդ համագումարի, 1932թ., էջ 26:
[34] Տե՛ս «ՀՕԿ», Գ տարի, թիւ 1, 1935թ. հունվար, էջ 41-45:
[35] Տե՛ս «Վերելք», Ա տարի, թիւ 1, 1936թ., Նյու Յորք, էջ 176:
[36] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 178, ց. 1, գ. 604, թթ. 39-40:

Հարավային Ամերիկայի ՀՕԿ-ի մասնաճյուղերը ևս ակտիվ մշակութային կյանքով էին ապրում: Բուենոս Այրեսում բացվել էր «Երևան» ընթերցարանը: Կորդոպայի «Մյասնիկյան» մասնաճյուղին կից գործում էր «Կարինյան» գրադարանը[37]: Կորդոպայի մասնաճյուղի ջանքերով բացվել էր Հայ ուսումնասիրաց ընկերությունը, որին կից գործում էր նաև մանկապարտեզ: Բերիսոյում «Մարտունի» մասնաճյուղը բացում է «Շիրվանզադե» գրադարան-ընթերցարան[38]: 1932թ. Հարավային Ամերիկայի ՀՕԿ-ի կողմից Բուենոս Այրեսում լույս է տեսնում նաև «Աշխատավորական երգարանը»[39]:

Հարավային Ամերիկայի ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը հատկապես մեծ ուշադրություն էր դարձնում ՀՕԿ-ի կրտսեր անդամների դաստիարակությանը և դպրոցներին: ՀՕԿ-ին կից գործում էին դպրոցներ: «Մյասնիկյան» վարժարանի տնօրենը Արաքս էֆեյանն էր, որին էլ հանձնարարված էր կրթական գործի կազմակերպումը: Դպրոց ուներ նաև Կորդոբայի «Մյասնիկյան» մասնաճյուղը, որը կրում էր Գ. Վարդանյանի անունը: Կարևոր էր Բ. Ալսինայում տեղի հայրենասերների կողմից «Թումանյան» վարժարանի սեփական շենքի կառուցումը, որին ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը տրամադրեց 100 պեսո: Ֆլորեսում գործում էր «Երևան» մարզական միությունը, իսկ Ն. Բոմբեժայում՝ «Սևանը»[40]:

Բուլղարիայի ՀՕԿ-ի մասնաճյուղերին կից ևս գործում էին կրթամշակութային, մարզական միություններ: Պլովդիվի ՀՕԿ-ն ուներ թատերական բաժին, ուր հանդես էին գալիս Կ. Քեշկեկյանը, Մ. Տաքեսյանը, Ե. Ավիճյանը[41]: Վառնայի մասնաճյուղը բացել էր երիտասարդական, մարզական և թատերական բաժիններ[42]: Մեծ միջոցառում է կազմակերպվում 1934թ. նոյեմբերի 18-ին «Ռանքոֆի» թատրոնում, ուր բեմադրվում է «Նայմիչկա» պիեսը[43]: ՀՕԿ-ի մասնաճյուղերին կից թատերական խմբակները մեծ աշխատանք ծավալեցին խորհրդային գրողների գործերը բեմականացնելու և տեղի հայությա-

---

37 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 8, գ. 64, թ. 53:
38 Տե՛ս նույն տեղում, ֆ. 178, ց. 1, գ. 503, թ. 13:
39 Տե՛ս Հայաստանի ազգային գրադարանում:
40 Տե՛ս «Շիրակ», Գ տարի, թիւ 8, 8 փետրվարի 1936, Բուենոս Այրես, էջ 3:
41 Տե՛ս «ՀՕԿ», Գ տարի, թիւ 2, 1935թ. փետրվար, էջ 101-102:
42 Տե՛ս նույն տեղում, Բ տարի, թիւ 10, 1934թ. հոկտեմբեր, էջ 626-627:
43 Տե՛ս նույն տեղում, Գ տարի, թիւ 2, 1935թ. փետրվար, էջ 104-105:

նը ծանոթացնելու ուղղությամբ: ՀՕԿ-ի Վառնայի մասնաճյուղի թատերախմբի անդամներ Ժ. Սիմոնյանը, Վ. Գասպարյանը, Ս. Գորիզյանը և ուրիշներ մեծ ճանաչում ունեին Բուլղարիայի հայ համայնքներում[44]: Կոստանցայում հայկական ամենաուժեղ կազմակերպությունը ՀՕԿ-ն էր, որի կողմից 1933թ. ներկայացվում է «Մաշտոե Իբատ» օպերետը[45]: Մասնաճյուղին կից գործում էր «Մյասնիկյան» երիտբաժինը: Կոստանցայի մասնաճյուղի շնորհիվ հիմք դրվեց Սիլիստրիայի ՀՕԿ-ին, որին կից գործում էր «Երևան» մարզական ակումբը[46]:

Հայաստանի օգնության կոմիտեի ստեղծումը հայ ժողովրդի համար այդպիսի ծանր ժամանակահատվածում միանշանակ անհրաժեշտություն էր: ՀՕԿ-ը ոչ միայն պայքար մղեց սովի ու համաճարակի դեմ, մասնակցեց Հայաստանի վերաշինությանը,ներգաղթի կազմակերպմանը, այլև մեծ աշխատանք կատարեց սփյուռքի հայաշատ քաղաքներում զանազան մշակութային միջոցառումների միջոցով ներհամայնքային կապերի ամրապնդման գործում: ՀՕԿ-ը բազմաթիվ կարող ուժերի համար կամուրջ հանդիսացավ՝ դեպի Խորհրդային Հայաստան:

**Ամփոփում**

Հայաստանի օգնության կոմիտեն ստեղծման առաջին իսկ օրերից սոցիալական խնդիրների հետ զուգահեռ մեծ ուշադրություն էր դարձնում նաև կրթամշակութային հիմնախնդիրների լուծմանը: Կոմիտեի արտասահմանյան մասնաճյուղերը կազմակերպում էին զանազան մշակութային և մարզական միջոցառումներ, որոնց շնորհիվ ամրապնդվում էին սփյուռքի ներհամայնքային կապերը: Հայաստանի օգնության կոմիտեն լայն քարոզչություն կատարելու համար իրականացրեց նաև հրատարակչական գործունեություն՝ տպագրելով թերթեր, ամսագրեր, օրացույցներ և այլն:

*Բանալի բառեր:* Հայաստանի օգնության կոմիտե, սփյուռք, կրթամշակութային կյանք, թատերախումբ, երգչախումբ, ամսագիր:

[44] Տե՛ս Ղասաբյան Զ., Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմությունից (1896-1970), Երևան 1986, էջ 206-207:

[45] Տե՛ս «ՀՕԿ», թիւ 4, 1933թ. մայիս, էջ 54:

[46] Տե՛ս նույն տեղում, թիւ 3, 1935թ. մարտ, 169-170:

## КУЛЬТУРНО_ОБРАЗОВАТЕЛЬНАЯ И ИЗДАТЕЛЬСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ КОМИТЕТА ПОМОЩИ АРМЕНИИ

**Макарян Лилит Асканазовна**
канд.ист.наук, доцент
ЕРОА, кафедра Международных отношений, Преподаватель

**Резюме**

С первых же дней своего существования Комитет помощи Армении, наряду с социальными задачами, большое внимание уделял также решению культурно-образовательных проблем. Зарубежные филиалы Комитета организовывали различные культурные и спортивные мероприятия, благодаря которым укреплялись внутриобщинные связи диаспоры. В целях широкомасштабной пропаганды, Комитет помощи Армении осуществлял также издательскую деятельность, печатая газеты, журналы, календари и прочее. Активную культурно-образовательную и издательскую деятельность развернули, в частности, филиалы во Франции и США.

*Клюевые слова:* Комитет помощи Армении, диаспора, культурно-образовательная жизнь, труппа, хор, журнал.

## EDUCATIONAL, CULTURAL AND PUBLISHING ACTIVITES OF THE COMMITTEE TO AID ARMENIA

**Lilit Makaryan**
PHD in History, Associate Professor
EREA, Chair of International Relations, Lecturer

**Summary**

From the very first days of its existence, the Committee to aid Armenia along with social objectives has also paid great attention to the solution of educational and cultural problems. Foreign branches of the Committee organized various cultural and sporting events, thanks to which the inter-community connections of diaspora were strengthened.

With a view to wide-scale propaganda, the Committee to aid Armenia also carried out publishing activities by printing newspapers, magazines, calendars and so on. Active educational, cultural and publishing activities were launched particularly by branches in France and the United States.

*Keywords:* Committee to aid Armenia, diaspora, educational and cultural life, troupe, choir, magazine.

# ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱԳՈՒՀԻՆԵՐԻ ԵՎ ԻՇԽԱՆՈՒՀԻՆԵՐԻ ԵԿԵՂԵՑԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ՆՎԻՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

***Մարիամ Գնելի Գրիգորյան***
*ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, պ.գ. թ.*
*ԵԿՏԱ-ի միջազգային հարաբերությունների ամբիոն, դասախոս*

Միջնադարյան Հայաստանում հոգևոր և կրթական նշանակություն ունեցող շինությունների կառուցման, դրանց դրամական շռայլ նվիրատվություններ կատարելու, հովանավորելու, հարկերից ազատելու, ինչպես նաև կրթության, դպրության զարգացման գործին իրենց նպաստն են բերել Հայոց ազնվազարմ տիկնայք:

Հայկական աղբյուրներում, հատկապես վիմագիր արձանագրություններում պահպանված տեղեկությունները թույլ են տալիս պատկերացում կազմել Բագրատունյաց Հայաստանի թագուհիների, իշխանուհիների գործունեության վերաբերյալ: Հայոց ազնվազարմ դասի տիկնանց գործունեությունն ընդգրկում էր չափազանց լայն շրջանակ: Թեպետ, երբեմն հանդիպում ենք նրանց՝ պետական գործերին միջամտելու վերաբերյալ վկայությունների, այդուհանդերձ առավել ծանրակշիռ է նրանց ներդրումը քաղաքաշինության, մասնավորապես, եկեղեցաշինության, ինչպես նաև եկեղեցիներին և վանական հաստատություններին նվիրատվություններ կատարելու գործում[1]:

Բագրատունյաց Հայաստանի թագուհիների և իշխանուհիների գործունեությունը կարելի է դասակարգել երկու պայմանական խմբի՝ շինարարական և նվիրատվական:

Եկեղեցաշինության բնագավառում աչքի ընկնող Բագրատունի թագուհիներից առանձնացնենք մի քանիսին: Ուշագրավ է Աշոտ III Ողորմածի (953-977) տիկին Խոսրովանույշ թագուհին, որի հովանավո-

[1] Պատմագիտության մեջ հայ կանանց դերակատարությանը տարբեր առիթներով անդրադարձած հեղինակներից առանձնացնենք Վ. Հացունու՝ «Հայուհին պատմութեան առջեւ», Վենետիկ, 1936, աշխատությունն ինչպես նաև՝ ճարտարապետական հուշարձանների կառուցմանն անդրադարձած Ռ. Բոյաջյանի՝ «Հայ կանանց դերը միջնադարյան ճարտարապետական հուշարձանների կառուցման գործում (IX-XIII դդ. )», «Լրաբեր հաս. գիտ»., 1978, թիվ 9, էջ 71-81 հոդվածը:

րությամբ Ձորագետի հովտում կառուցվել է Սանահինի և Հաղբատի վանքերը (966-976):[2]

Դրանք եղել են միջնադարյան Հայաստանի խոշոր գիտակրթական հաստատություններից:

Հայոց Գագիկ I (990-1020) թագավորի կնոջ՝ Սյունիքի Վասակ իշխանի դուստր Հայոց թագուհի Կատրանիդեի հոգածությամբ 1001 թ. կառուցվել է Անիի Մայր տաճարը (Ս. Աստվածածին) եկեղեցին[3], որի կառուցողական աշխատանքները սկսվել էին դեռևս 989 թ.՝ Սմբատ II արքայի (977-990) գահակալության տարիներին:

Թագուհիներից զատ եկեղեցաշինությամբ զբաղվում էին նաև իշխանուհիները:

Նրանցից հարկ է առանձնացնել Աշոտ I Բագրատունու (881/883-890) դուստր Մարիամին, որը Սյունյաց իշխան Վասակ Գաբուռի կինն էր: Նա Հայոց կաթողիկոս Մաշտոց Եղիվարդեցու (Հայոց կաթողիկոս՝ 897-898) հետ համատեղ 874 թ. կառուցում է Սևանի Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին եկեղեցիները[4]: Մարիամը կառուցում է նաև Շողվագա եկեղեցին՝ Պետրոս սուրբ առաքյալի անունով:

Սյունյաց իշխանաց իշխան Սմբատի կնոջ Սոփի (Սոփա) իշխանուհու աջակցությամբ կառուցվեց Գնդեվանքը[5]:

Հայոց թագուհիները և իշխանուհիները եկեղեցիները կառուցում էին ինչպես սեփական նախաձեռնությամբ, այնպես էլ՝ ավարտին էին հասցնում իրենց ամուսինների սկսած շինարարական աշխատանքները: Բազմիցս կարելի է հանդիպել հայ իշխանուհիների եկեղեցաշինական ձեռնարկների, որոնք կատարվել են իրենց ազգականների հետ համատեղ:

Անիի Մայր Տաճարի պատին պահպանված արձանագրությունում կարդում ենք. «... ես՝ Կատրանիդէ Հայոց թագուհի, դուստր Վասակա

---

[2] Սամուէլ Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 176 տե՛ս Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ, Վենետիկ, 1862, էջ 90:

[3] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 256 տե՛ս նաև Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ 300:

[4] Յիշատակարանք ձեռագրաց, կազմեց՝ Գ. Յովսէփեան, հ. Ա., (Ե դարից մինչեւ 1250 թ.) Անթիլիաս, 1951, սյուն 89:

[5] Դիվան հայ վիմագրության, պրակ III, կազմեց Ս. Բարխուդարյանը, Երևան, 1967, էջ 13:

Սիւնեաց թագաւորի յողորմութիւնն Աստուծոյ ապաւինեցա եւ հրամանաւ առն իմոյ Գագկա շահանշահի շինեցի զսուրբ Կաթաղիկէս…»[6]:

Հայոց իշխան Գրիգոր Պահլավունու կինը՝ «տիկնաց տիկին» Շուշանը, Վահրամ Պահլավունու և իր մյուս որդիների հետ հիշատակվում է որպես Մարմաշենի և մի շարք այլ եկեղեցիների հիմնադիր[7]:

895 թ. Տաթևի վանքի շինարարական աշխատանքները սկսվում են Սյունիքի իշխանների, ինչպես նաև՝ «…մեծահաւատ տիկնոջն Շուշանայ…»[8] իշխանուհու դրամական միջոցներով:

Բագրատունյաց Հայաստանում եկեղեցիներն ու վանական համալիրները կառուցվում էին երբեմն իրականացնելու ազնվազարմ կանանց տեսիլները, որոնք «պարտավորեցնում էին» ձեռնարկել այս կամ այն հոգևոր եկեղեցական հաստատության կառուցումը: Ասվածը փաստվում է Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորի (908-943) տիկնոջ Մլքե (Թամար) (վերջինս Սմբատ I (890-914) թագավորի եղբայր Շապուհ իշխանի դուստրն էր – Մ. Գ.) թագուհու օրինակով: Նրա խորհրդով և կամակցությամբ Գագիկ Արծրունին Վանա լճի ափամերձ կղզում կառուցում է Ս. Խաչ եկեղեցին: Ինչ վերաբերում է Վանեվանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն, ապա հարկ է նշել, որ շինության կառուցողական աշխատանքներին 903 թ. ձեռնամուխ է եղել Հայոց սպարապետ Շապուհ Բագրատունին՝ իրականացնելով իր քրոջ Սյունյաց իշխանուհի Մարիամի տեսիլը[9]: Հենց այս եկեղեցու բակում 914 թ. ամփոփվեց Հայոց թագավոր Սմբատ I Բագրատունու աճյունը:

Ազնվական տիկնանց եկեղեցաշեն գործունեությունն խրախուսվել է թագավորների ու իշխանների կողմից: Ասվածը կարելի փաստել Աշոտ I-ի օրինակով. Հայոց թագավորը խրախուսում և հովանավորում է դստեր եկեղեցաշինական ձեռնարկումները, և մասնակցելով Սևանի վանական համալիրի բացման արարողությանը, եկեղեցուն ժառանգում է Վարսեր, Ցամաքաբերդ, Գոմաձոր, Բերդք, Ուռյաց տափ գյուղերը և այգիները[10]:

Տիկնայք եկեղեցիները կառուցում էին հիմնականում քրիստոնեա-

---

[6] Դիվան հայ վիմագրության, պրակ I, կազմեց Հ. Օրբելին, Երևան, 1966, էջ 35:

[7] Орбели И., Надписи Мармашена, Изб. труды, Ереван, 1963, с. 442.

[8] Ստեփանոս Օրբելյան, էջ 223:

[9] Նույն տեղում, էջ 181-182:

[10] Նույն տեղում, էջ 174:

կան հավատքից ելնելով, իսկ երբեմն էլ իրենց մերձավորների արևշատության կամ նրանց հիշատակի համար:

Սանահինի Ս. Ամենափրկիչ եկեղեցին Խոսրովանույշ թագուհին կառուցել է թագավորի օժանդակությամբ իրենց որդիներ Գուրգենի, Սմբատի և Գագիկի արևշատության համար[11]:

Մարիամ իշխանուհին Շողվագա եկեղեցում միաբանություն էր հիմնել՝ ամուսնու՝ Վասակ Գաբուռի հոգու համար[12]: Բացի այդ, նա ուխտել էր վաղամեռիկ ամուսնու հիշատակին կառուցել 30 եկեղեցիներ:

Հայոց թագուհիներն ու իշխանուհիները, հատուկ հոգածություն ցուցաբերելով կրթության ու դպրության նկատմամբ, վերը թվարկված եկեղեցիներում և վանական հաստատություններում հիմնում էին բազմաթիվ վարդապետարաններ, նշխարատներ (գրատներ), դպրոցներ:

Միջնադարյան Հայաստանի կրթական կենտրոններից էր նաև Սանահինի Մագիստրոսի ճեմարանը, որն ըստ Կ. Ղաֆադարյանի, ամենայն հավանականությամբ կառուցվել է 11-րդ դարում[13]:

Սանահինի վանական համալիրի շենքերից հայտնի էր նաև նշխարատունը և նշխարախուցը կամ գրատունը:

Միջնադարյան Հայաստանում ձեռագիր գրքերը պահվում էին թանկարժեք եկեղեցական սպասքի և մասունքների հետ, հենց այդպիսի վայր էր ծառայում այս գրատունը: Սանահինի գրատունը կառուցվել է 1063 թ. Լոռվա Դավիթ Անհողին թագավորի (989-1048) դուստր Հրանուշ թագուհու միջոցներով: Թագուհու այս ձեռնարկը ցույց է տալիս նրա հոգածու վերաբերմունքը գրքի և առհասարակ կրթության նկատմամբ: Վերջինիս հովանավորությամբ է կառուցվել նաև նույն վանական համալիրի Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին[14]:

Որպես ժամանակի գիտակրթական խոշոր կենտրոն՝ հայտնի էր Հաղբատի վանական համալիրը:

Առանձնակի կարևորություն և հետաքրքրություն է ներկայացնում Հաղբատի գրատան գործունեությունը: Նրա կառուցման հստակ թվականը հայտնի չէ: Այն ուրույն նշանակություն է ունեցել միջնադարյան Հայաստանի կրթության կազմակերպման գործում: Կրթական գործու-

---

[11] Ղաֆադարյան Կ., Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 18:

[12] Ստեփանոս Օրբելյան, էջ 174:

[13] Ղաֆադարյան Կ., Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, էջ 29- 30:

[14] Նույն տեղում, էջ 33:

նեությունից զատ, այնտեղ գրվել և ընդօրինակվել են նաև բազմաթիվ ձեռագրեր, որոնցից առանձնացնենք միայն Հաղբատի (Գետաշենի) 1211 թ. Ավետարանը[15]:

Գրատնից բացի, այստեղ կրթության կարևորագույն գործառույթներն իր վրա էր ստանձնել նաև Հաղբատի դպրոցը:

Եկեղեցաշինությունից զատ, Հայոց տիկնայք զբաղվել են նաև նվիրատվական գործունեությամբ՝ հանդես գալով որպես շռայլ նվիրատուներ:

Նվիրատվությունների առարկան կարող էր լինել ինչպես անշարժ այնպել էլ՝ շարժական գույք, դրամական միջոցներ, սուրբ գրքեր, սպասք, թանկարժեք զարդեր, իրեր և այլն:

Նվիրատվությունների վերաբերյալ աղբյուրագիտական և վիմագրական ուշագրավ վկայությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս պատկերացում կազմել նվիրատուի զբաղեցրած սոցիալական դիրքի, ունեցած սեփականության, դրանից ստացվող շահույթի, դրա տնօրինման իրավունքի, ինչպես նաև նվիրատվության քանակի, տեսակի, նպատակի և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Միջնադարում, թեև, կինը համարվում էր հասարակության իրավազուրկ խավի ներկայացուցիչ, այդուհանդերձ, այս պնդումը չէր վերաբերում ազնվազարմ տիկնանց: Ավելին, միջնադարյան իրավունքի ավանդույթները, որոնք արտահայտված են վիմական արձանագրություններում, փաստում են լիովին հակառակը[16]: Հայոց թագուհիներն ու իշխանուհիներն ունեին ինչպես անշարժ, այնպես էլ՝ շարժական սեփականության իրավունք: Անշարժ սեփականություն էին հանդիսանում հողատարածք - կալվածքները, ինչպես ժառանգական, այնպես էլ՝ գանձագին հողերը: Միջնադարյան կնոջ անշարժ սեփականության մաս էին կազմում նաև գյուղերը, այգիները և ունեցվածքի այլ տեսակներ:

Այդ սեփականությունը ձեռք էր բերվում ինչպես հայրական գծով՝ իբրև ժառանգություն կամ օժիտ, այնպես էլ՝ Հայոց թագավորները կամ իշխաններն իրենք էին հաճախ շարժական և անշարժ գույք նվիրում իրենց տիկնանց: Տեղին է նշել, որ Սյունյաց Սմբատ թագավորը (987-998) իր տիկնոջը՝ Շահանդուխտին էր նվիրել Տեղ գյուղը[17]:

---

15 Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 35:

16 Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Յերեվան, 1939, էջ 247:

17 Ստեփանոս Օրբելյան, էջ 291-292:

Վերստին անդրադառնալով սեփականության խնդրին՝ նշենք, որ կանայք կարող էին ազատ տնօրինել իրենց ունեցվածքը և դրանից ստացվող շահույթը: Օրինակ՝ Վահրամ Պահլավունու կինը՝ Սեդան, Բագնայրի վանքին էր նվիրել տասանորդ տուրքն իր սեփական Գաղտ գյուղի բերքից «...վասն յիշատակի զաւրականին Քրիստոսի հաւրն իմոյ Վասակա»[18]: Ակնհայտ է, որ բերքից ստացվող եկամուտը նրա սեփականությունն էր և իշխանուհին ուներ այն տնօրինելու լիիրավ իրավունք:

Մեկ այլ պարագայում Վասակի կին Մարիամ իշխանուհին արաբներից 60.000 դրամով գնում է Ճողվագ գյուղը, աշխարհիկ բոլոր հարկերից ազատում և նվիրում է եկեղեցուն որպես սեփական կալվածք: Նույն ճակատագրին է արժանանում նաև Մազազ գավառի Գներ գյուղը, որն իշխանուհին գնել էր 3.000 դահեկանով[19]: Այստեղ հետաքրքրական է ոչ միայն իշխանուհու ազատ գործարքային հարաբերություններ հաստատելու իրավունքը, այլև հաջորդ հանգամանքը՝ այն է, գյուղը բոլոր հարկերից ազատելու իշխանուհու ձեռնարկը:

Գյուղերի՝ հարկերից ազատելու դեպքերի հանդիպում ենք նաև այլուստ:

Հովհաննես-Սմբատի (1020-1041) կինը հարկից ազատում է Երերույքն իր որդու և ամուսնու արևշատության համար[20]:

Եկեղեցուն գյուղեր նվիրելու ավանդույթը շարունակվում է նաև հետագայում: Նվիրատուներից կարելի առանձնացնել Հովհաննես-Սմբատի կնոջը, Գագիկ Բագրատունու և Կատրանիդեի թոռնուհուն՝ Սենեքերիմի դստերը «Ափխազաց եւ Հայոց թագուհի»[21] Մարիամին: Վերջինս Տարուս գյուղը նվիրաբերեց Մարմաշենի եկեղեցուն « ... վասն (Գա)գկա իմ պապոյն մեղաց թողութեան և Կատային իմ հանկանն եւ հատուցումն բարի ընկալա ի սրբոցս զսեանն եկեղեցին զսուրբ Պետրոս ի Քրիստոս պատարագաւ զտարին ողջոյն Կատային իմ հանկանն մինչ ի գալուստն Քրիստոսի...»[22]:

Բազմաթիվ գյուղեր նվիրաբերվել են նաև Տաթևի, Սանահինի և այլ վանքերին: Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու բացման

---

[18] Ալիշան, Շիրակ. տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ, 1881, էջ 113:

[19] Ստեփանոս Օրբելյան, էջ 174:

[20] Ալիշան, Շիրակ, էջ 171:

[21] Նույն տեղում,էջ 149:

[22] Նույն տեղում, էջ 149-150:

արարողության մասնակիցների շարքում հիշատակված Սյունյաց Շուշան իշխանուհին վանքին է նվիրաբերում Ծածարդ և Քարատնիս գյուղերը[23]: Նույն վանքին Սյունյաց Բաբգեն իշխանի դուստրը՝ Համասպրուհին, նվիրում է Հալիս գյուղը և մեծ այգի[24]: Սյունյաց Սմբատ Ա թագավորի (987-998)կինը՝ Շահանդուխտն,իր ամուսնու հոգու համար Տաթևի վանքին 998 թ. նվիրում է 6.000 դրամ և Հաբանդ գավառի Տեղ գյուղը, որը ըստ պատմիչի, ինքն էր շենացրել[25]: Տաթևին է նվիրվում նաև Արիտ գյուղը[26]:

Աշոտ III թագավորն ու Խոսրովանույշ թագուհին Սանահնի վանքը հարստացրել էին բազում. «…գեաւղորէիք եւ հայրենօք, սարով եւ ձորով»[27]:

Նվիրատվությունների շարքում մեծ թիվ են կազմում այգիներն ու կուղպակները:

Սոփին՝ Աշոտ III-ի դուստրը, Դավթի այգին նվիրում է Մրենի Սուրբ կաթողիկե եկեղեցին: «Սոփի դուստր մեծին Աշոտոյ Շահանշահի Հայոց եւ Վրաց թագուհի տվեալ եմ եւ հաստատեալ զԴավթի զայգին ի սուրբ կաթաղիկէ…»[28]:

Շուշան Պահլավունին՝[29] տիկնանց տիկինը, 994 թ. Մրվանի կուղպակները նվիրում է Անիի Սուրբ Գրիգոր եկեղեցուն[30]:

Շուշան Պահլավունու արձանագրությունից տեղեկանում ենք Ս. Գրիգոր եկեղեցուն Մրվանի կուղպակը և Ձ (80) դրամ նվիրելու մասին: Շուշան Պահլավունին իր այս նվիրատվության դիմաց եկեղեցու հոգևորականներից պահանջում էր ԺԶ (16) ժամերգություն կատարել ընդհանուր Ձ (80) դրամի չափով, որից Սեդայի համար Լ (30), իսկ Մրվանի՝ Ծ (50) դրամի չափով[31]:

---

23 Ստեփանոս Օրբելյան, էջ 229:

24 Դիվան հայ վիմագրության, պրակ II, կազմեց Ս. Բարխուդարյանը, Երևան, 1960, էջ 51:

25 Ստեփանոս Օրբելյան, էջ 290-291:

26 Նույն տեղում, էջ 322:

27 Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի Քէոթուկը), աշխատասիրութեամբ՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 63:

28 Ալիշան, Շիրակ, էջ 138:

29 Արձանագրության հեղինակ Շուշան Պահլավունու մասին առավել մանրամասն տե՛ս Գրիգորյան Գ.,Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին ու վանքերին (X-XIVդդ.) Երևան, 2002, էջ 15-16:

30 Դիվան I, էջ 32:

31 Նույն տեղում, էջ 31:

Սույն հիշատակությունները հետաքրքրականներն մի քանի առումներով: Բացի այն, որ հստակ դրամական նվիրատվություն է կատարվել, այսինքն՝ նշվել է նվիրատվության առարկան՝ դրամը, ինչպես նաև դրա քանակն ու նվիրատուի՝ համապատասխան չափով պատարագ մատուցելու պահանջը:

Հաջորդ հիշատակությունը կարևորում ենք այն պատճառով, որ նշված նվիրատվությունը տրվում է ցմահ տրիապետման իրավունքով:

Քուպղիդուխտ Սյունին՝ Հրահատ իշխանի կինը, «…շէն մի Մաճ անուն ի Բաղաց գաւառի…»[32] 867 թ. լեռներով և դաշտերով, մարգով և արտով, գետով, ջրով և ցամաքով, ծառով և տնկով նվիրում է Տաթևի Ս. Խաչին «…ի վայելումն եպիսկոպոսական աթոռին մինչեւ յաւիտեանս ժամանակաց»[33]:

Միջնադարյան Հայաստանում նվիրատվությունների մեջ տարածված էր նաև ձեռագիր գրքերի նվիրատվությունը: Կյուրիկե I-ի (1049-1089) դուստր Մարիամի՝ Հաղպատի վանքին կատարած նվիրատվությունների մեջ հիշատակվում է նաև «…զոսկէման աւետարանս»[34]:

Հայոց թագուհիների և իշխանուհիների անունները կապված են նաև հոգևոր-մշակութային արժեքների պահպանման հետ: Առանձնանցնենք Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորի (908-943) տիկնոջ Մլքե Թագուհու հատուկ հոգածության առարկա դարձած համանուն Ավետարանը, որը նա հանձնեց իր դրամական միջոցներով կառուցած Վարագա վանքի Ս. Աստվածածին եկեղեցուն:

Կարսի Գագիկ թագավորի (1029-1065) և Գորանդուխտի դուստրը՝ Մարիամը (Մարեմը), Հովհաննու Ավետարանի մեկնությունը երկու անգամ հանձնարարել է թարգմանել հայերեն[35]:

Ավետարանի թարգմանություն են պատվիրել նաև Սմբատ Բագրատունին և Սյունյաց Մարեմ տիկինը[36]:

Ավետարանների պատվիրատու թագուհիների ու իշխանուհիների կողքին հանդիպում ենք նաև հասարակ կանանց անունների. տիկին

---

[32] Ստեփանոս Օրբելյան, էջ 219:

[33] Նույն տեղում:

[34] Ղաֆադարյան Կ., Հաղբատ, էջ 175:

[35] Յիշատակարանք ձեռագրաց, սյուն 64:

[36] Հայերեն ձեռագրերի հշատակարաններ. Ե-ԺԲ դարերի, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 37:

Ծովուկը Կղոտ գավառի Թալաշայի վանքում 1018 թ. ստացել է իր պատվիրած Ավետարանը[37]:

Ավետարան են գնել 1183 թ. Խոսրովիդուխտը Գոհարի, Մարգարե ու Սուքիաս եղբայրների հետ[38]:

Ավետարաններ պատվիրելուց, դրանք ստանալուց, գնելուց զատ, հիշատակություններ են պահպանվել նաև կանանց շնորհիվ Ավետարաններ փրկելու վերաբերյալ: Առանձնացնենք դրանցից միայն «...հաւատարիմ կնոջ միոյ՝ որի անուն կոչի Շուշան»[39] -ի պարագան:

Հոգևոր-մշակութային արժեքների նկատմամբ նմանօրինակ հոգածությունը, անշուշտ, պայմանավորված էր ինչպես քրիստոնեական հավատքով, այնպես էլ՝ հոգևոր դաստիարակության, կրթության կարևորմամբ:

Այսպիսով մատենագրական և վիմագրական նմանօրինակ փաստերը թույլ են տալիս պնդել, որ Բագրատունյաց Հայաստանում թագուհիների և իշխանուհիների ծավալած եկեղեցանպաստ գործունեությունն ուներ ընդգրկուն շրջանակներ. եկեղեցաշինությունից, նվիրատվություններ կատարելուց մինչև քրիստոնեական դաստիարակություն, կրթության կազմակերպում և այլն:

## Ամփոփում

Բագրատունյաց Հայաստանի հոգևոր-մշակութային կյանքի զարգացմանն իրենց նպաստն են բերել Հայոց թագուհիներն ու իշխանուհիները:

Եկեղեցիների, վանքերի կառուցումը, դրանց շռայլ նվիրատվություններ կատարելը Հայոց ազնվազարմ տիկնանց հիմնական զբաղմունքն էր: Այս կապակցությամբ հայկական աղբյուրներում՝ պատմիչների աշխատություններում և վիմագիր արձանագրություններում, պահպանված վկայությունները նոր լույս են սփռում Հայոց թագուհիների և իշխանուհիների ինչպես կառուցողական, նվիրատվական, այնպես էլ՝ նրանց իրավունքների, սեփականության, դրա ազատ տնօրինման և մի շարք այլ հարցերի ուսումնասիրության վրա:

---

[37] Յիշատակարանք ձեռագրաց, սյուն 203-204:

[38] Նույն տեղում, սյուն 494-495:

[39] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 201:

*Բանալի բառեր* - թագուհի, իշխանուհի, Բագրատունյաց Հայաստան, եկեղեցի, վանք, նվիրատվություն:

## THE CHURCHBUILDING AND CHARITABLE ACTIVITIES OF THE QUEENS AND NOBLEWOMEN OF BAGRATID ARMENIA

**Mariam Grigoryan**
Ph.D. in Historical Sciencies NAS RA, Scientific worker
EREA, Chair of International Relations, Lecturer

### Summary

The Armenian queens and noblewomen had their active role in the developmen t of cultural and spiritual life of the state. The construction of churches and monasteries and generous donations was the basic activity of those women, The data, given by the Armenian historians and lapidary inscriptions regarding to this fact can spread a new light not only on the women's constructive and charitable activities, but also on their rights of owning property, its free disposal and a number of other issues.
*Keywords:* queen, nobelwomen, Bagratid Armenia, church, monastry, donation.

## БЛАГОТВОРИТЕЛЬНАЯ И ЦЕРКВОСТРОИТЕЛЬНАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКИХ ЦАРИЦ И КНЯГИНЬ В ЭПОХУ БАГРАТИДОВ

**Григорян Мариам Гнелевна**
канд. ист. наук НАН РА,научныи сотрудник
ЕРОА, кафедра Международных отношений, Преподаватель

### Резюме

Армянские царицы и княгини внесли активный вклад в развитие культурно-духовной жизни Багратидской Армении. Строительство церквей и монастырей, шедрые дарствования были основной деятельностью армянских женщин благородного происхождения.

Сведения из армянских источников, т.е. у армянских летописцев и в литографических надписях проливают свет не только на строительную и благотворительную деятельность армянских цариц и княгинь, но также на их право собственности, право свободно ею распоряжаться и на ряд других вопросов.

*Ключевые слова* – царица, княгиня, Багратидская Армения, церков, монастыр, благотворительность.

# ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱ. ՄԻՋԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԱԽՈՂՈՒ՞Մ, ԹԵ՞ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

***Անդրանիկ Ռաֆայելի Առաքելյան***
*ՀՀ ԳԱԱ, Արևելագիտության ինստիտուտ, ասպիրանտ*

Հոդվածի նպատակն է պարզել Արաբական Պետությունների Լիգայի կարևորությունը միջարաբական հակասությունների խաղաղ կարգավորման գործընթացում: Ուսումնասիրության է առնված Լիգայի գործունեությունը հիմնականում նորագույն շրջանում՝ ամփոփ ներկայացնելով նաև Լիգայի գործունեության ուղջ ժամանակաշրջանը:

«Արաբական Պետությունների Լիգայի ստեղծումը դարձավ արաբական միասնության շարժման կարևորագույն իրադարձությունը»[1]:

Ի սկզբանե արաբական պետությունների ղեկավարները ձգտում էին ստեղծել մի թույլ կազմակերպություն, որը ցանկացած պահի հնարավոր կլիներ անտեսել: Սակայն պատմական հետագա զարգացումներն ի ցույց դրեցին հզոր միջազգային կազմակերպության առկայության անհրաժեշտությունը:

Արաբական Լիգան նորագույն շրջանում թևակոխեց փոփոխությունների մի նոր ժամանակաշրջան[2]:

Այն ստեղծվեց 1945թ.: Կազմակերպությանը անդամակցած վերջին երկիրը հանդիսացավ Կոմորոսը՝ 1993թ.: Լիգայի նստավայրն է Կաիրեն, իսկ ներկայիս Գլխավոր քարտուղարը՝ եգիպտացի Աhմեդ Աբուլ Ղեյթը, ինչն ինքնին փաստում է կազմակերպությունում Եգիպտոսի բարձր դերը՝ չնայած 1979-89թթ. Լիգայից հեռացված լինելու հանգամանքին:

Հիմնադրման ժամանակաշրջանում Արաբական Լիգայի արտաքին քաղաքականության երեք հիմնական ուղղություններն էին հանդիսանում՝ պայքարը արաբական երկրների անկախության ու միասնության համար, ինչպես նաև Պաղեստինի հիմնախնդիրը[3]:

---

1 Рыденко Л.Н., Соловьева З.А., Лига Арабских Государств и Интеграционные Процессы в Арабском Мире, Москва, Ин-т востоковедения РАН, 2007г, 164стр, с. 14

2 Farah Dakhlallah, The League of Arab States and Regional Security: Towards an Arab Security Community? British Journal of Middle Eastern Studies, 39:3, pp. 393-412, 2012, http://dx.doi.org/10.1080/13530194.2012.726489/

3 Robert W. MacDonald, The League of Arab States: A Study in the Dynamics of Regional Organization (Princeton, NJ: Princeton University Press, 1965), p. 41.

1950թ. հունիսի 17-ին կազմակերպության շրջանակներում Սիրիան, Լիբանանը, Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան և Եմենը ստորագրեցին միասնական պաշտպանության պայմանագիր՝ Համատեղ Պաշտպանության ու Տնտեսական Համագործակցության Պայմանագիրը[4]: Վերջինս միաձայնորեն չհաստատվեց Լիգայի անդամ բոլոր պետությունների կողմից (Իրաքն ու Անդրհորդանանը չմիացան դրան)[5]:

Արաբական Լիգան համագործակցության եզրեր գտավ արաբական երկրների միջև տարբեր բնագավառներում: Այսպես 1953թ. ստեղծվեց Արաբական Հեռահաղորդակցման Միությունը (Arab Telecomunication Union), 1954թ.՝ Արաբական Փոստային Միությունը, իսկ 1959թ.՝ Արաբական Զարգացման Բանկը, որը հետագայում անվանափոխվեց Արաբական Ֆինանսական Կազմակերպության:

1964-65թթ. կոնֆերանսներում Արաբական Լիգայում նույնիսկ նախաձռնվեց արաբական միացյալ զինվորական հրամանատարության ստեղծումը: Հետագայում Արաբական Լիգան կարողացավ 1964թ. մայիսին ստեղծել Պաղեստինի Ազատագրության Կազմակերպությունը (Կահիրեյում անցկացվող Արաբական Լիգայի գագաթնաժողովին): Այն կարողացավ նաև խաղաղ կարգավորման հասնել մի շարք միջարաբական հակամարտություններում՝ 1963թ. Ալժիրի ներխուժմանը Մարոկկո և 1961թ. Իրաք-Քուվեյթյան հակասություններում: Վերջինիս ժամանակ նույնիսկ Քուվեյթ ուղարկվեցին արաբական խաղաղապահ ուժեր[6]:

Երբ 1975թ. Լիբանանում սկսվեց երկրորդ քաղաքացիական պատերազմը՝ Արաբական Լիգան միայն իր անհանգստությունը հայտնեց գրանցված միջադեպերի կապակցությամբ: Լիբանանյան ճգնաժամը լուծելու համար Էր-Ռիյադում Լիգայի անդամ երկրների ղեկավարները պայմանավորվեցին և 1975թ. ապրիլ ամսին Կահիրեյում գումարեցին առաջին արտահերթ նստաշրջանը: Անդամ երկրների միջև հակասու-

[4] Elmandjra Mahdi Saadi, 1957. The League of Arab States, 1945-1955. Thesis, University of London, London School of Economics, 1957, pp. 278-83
Seabury Paul, 1949. "The League of Arab States: Debacle of a Regional Arrangement", International Organization 3(4): pp. 633-643.

[5] Կարամանուկյան Ծ. Լ., Արաբական Պետությունների Լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Երևան, 1988, էջ 85

[6] Farah Dakhlallah, նշվ. աշխ. pp. 393-412, http://dx.doi.org/10.1080/13530194.2012.726489/

թյունները ակնհայտ եղան և, չնայած, հնարավոր եղավ ժամանակավորապես դադարեցնել ռազմական գործողությունները, Լիգան ճգնաժամին այդպես էլ որևէ արմատական լուծում չտվեց[7]: Այն կոչ արեց բոլոր կողմերին «խելամտություն ու զսպվածություն» ցուցաբերել միայն 1976թ. հունիսին, երբ իրավիճակը երկրում արդեն ծայրահեղ սրվել էր:

Արաբական Պետությունների Լիգան խիստ սառը դիրքորոշում է ընդունել տարածաշրջանում առաջացած գրեթե բոլոր քաղաքացիական պատերազմների նկատմամբ, ինչը որոշ հեղինակների հիմք է տալիս ենթադրել, որ անդամ երկրների միջև ներքին համաձայնություն գոյություն ունի՝ ներքին գործերին չմիջամտելու շուրջ[8]:

Ողջ 80-ականներին Արաբական Լիգայի գագաթնաժողովները անցան անարդյունավետ՝ հակամարտող անդամների հակամարտությունների պատճառով[9]: 1980թ. նոյեմբերին Ամմանում տեղի ունեցավ արաբական երկրների ղեկավարների հանդիպում: Հանդիպման օրակարգային հարցն էր՝ Իրան-իրաքյան պատերազմում համաարաբական դիրքորոշման մշակումը: Սակայն երկրներն այդպես էլ ընդհանուր դիրքորոշում չորդեգրեցին: Միայն 1988թ. հունվարի 7-ին Ալժիրում կայացած արտահերթ գագաթնաժողովում արաբական բոլոր երկրները կարողացան հանդես գալ ի աջակցություն խաղաղության հաստատման և դատապարտեցին Իրանին՝ ռազմական գործողությունները շարունակելու համար[10]:

Իրան-իրաքյան պատերազմը ի ցույց դրեց հակասությունների խորացումն ու կենտրոնախույս ուժերի ակտիվացումը արաբական աշխարհում 80-ականների սկզբին: Այդ պատերազմը նաև դրդեց Սաուդյան Արաբիային՝ 1981թ. ստեղծել նոր խմբավորում՝ Պարսից Ծոցի Արաբական Երկրների Համագործակցության Խորհուրդը[11]:

1990-91թթ. Ծոցի պատերազմում ևս Արաբական Լիգայում միասնական դիրքորոշում չձևավորվեց: 1990թ. մայիսին ու օգոստոսին գու-

---

[7] Կարամանուկյան Շ. Լ. նշվ. աշխ. էջ 165

[8] Նույն տեղում.

[9] Farah Dakhlallah, նշվ. աշխ. pp. 393-412, http://dx.doi.org/10.1080/13530194.2012.726489/

[10] Жданов Н.В., Игнатенко А.А., Ислам на пороге 21-ого века, Москва, 1989, 352стр, с. 291

[11] Рыденко Л.Н., Соловьева З.А., նշվ. աշխ., с. 34

մարված Լիգայի գագաթնաժողովները չկարողացան լուծել Իրաքի ու Քուվեյթի միջև նավթային խնդիրը: Դա հանգեցրեց Ծոցի անվտանգության «միջազգայնացմանը»:

Ծոցի 1990-91թթ. պատերազմում Արաբական Լիգան՝

1. չկարողացավ լուծում տալ Իրաք-Քուվեյթ հակասություններին, ինչը հանգեցրեց իրաքյան ագրեսիայի,

2. չկարողացավ հասնել խաղաղության պայմանագրի կնքման կողմերի միջև նույնիսկ ագրեսիայից հետո, ինչը հանգեցրեց արտաքին միջամտության,

3. բաժանվեց պրոիրաքյան ու հակաիրաքյան ճամբարների:

Հետագայում ՄԱԿ-ում Արաբական Լիգայի նախկին ներկայացուցիչ Քլովիս Մաքսուդը նշեց, որ Լիգան չուներ ինքնուրույն կանխարգելող քայլեր ձեռնարկելու լիազորություն, այդ իսկ պատճառով ստիպված էր գործել միայն գագաթնաժողովի միջոցով: Սակայն անդամ երկրների տարաձայնությունների արդյունքում Լիգան չկարողացավ լիարժեք միջամտություն ցուցաբերել նաև գագաթնաժողովի միջոցով[12]:

Արտաքին միջամտությունը Ծոցի անվտանգության հարցերին վտանգավոր նախադեպ հանդիսացավ ապագայի համար: Որոշ հեղինակներ բարձրացրեցին Արաբական Լիգայի գոյության արդյունավետության հարցը[13]: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ, ի տարբերություն Պարսից Ծոցի Արաբական Պետությունների Համագործակցության Խորհրդի, որի անդամները միաձայն դատապարտեցին Իրաքին, Արաբական Պետությունների Լիգայի 21 անդամներից 6-ը ուղղակիորեն աջակցեցին Իրաքին (Հորդանան, Մավրիտանիա, Սուդան, Եմեն, ՊԱԿ ու իհարկե Իրաք)[14]:

Սովետական միության փլուզումից և միաբևեռ համակարգի հաստատումից հետո ընկած տասնամյակում Արաբական Լիգան տապալվեց իր նախաձեռնություններում և չկարողացավ որևէ լուրջ միջամտություն ունենալ ստեղծված հակամարտություններում՝ մասնավորա-

---

[12] http://www.voanews.com/content/a-13-2006-01-05-voa67/398736.html, accessed 2 October 2012.

[13] Farah Dakhlallah, նշվ. աշխ. pp. 393-412, http://dx.doi.org/10.1080/13530194.2012.726489/

[14] Рыденко Л.Н., Соловьева З.А., նշվ. աշխ., с. 92

պես 2000թ. Պաղեստինում բռնկված երկրորդ ինթիֆադային: 90-ականներին միայն երկու գագաթնաժողով անցկացվեց Լիգայում՝ 1990թ. ու 1996թ.[15]: Ինչպես նշում է Կատարի արտաքին գործերի նախարար շեյխ Համմադ բին Յասսեմը.՝ «Մեր հանդիպումները կրում էին արարողակարգային բնույթ և մենք չունեինք ընդգծված նպատակակետ»[16]:

Իրավիճակը փոխվեց 2002թ., երբ Լիգայի Գլխավոր քարտուղար նշանակվեց հայտնի եգիպտացի քաղաքական գործիչ Ամր Մուսան: Այնուհետև Բեյրութում անցկացված գագաթնաժողովում Սաուդյան կողմն առաջ քաշեց Արաբական խաղաղության նախաձեռնությունը: Այն առաջարկում էր Իսրայելի հետ հարաբերությունների հաստատում՝ 1967թ. սահմաններին վերադառնալու պայմանով[17]:

Այնուհետև Լիգայի գագաթնաժողովներ անցկացվեցին Շարմ էլ-Շեյխում 2003թ., Թունիսում՝ 2004թ., Ալժիրում՝ 2005թ., Խարտումում՝ 2006թ., էլ-Ռիյադում՝ 2007թ., Դամասկոսում՝ 2008թ., Դոհայում՝ 2009թ. և այլն: Սկսեցին Արաբական Խաղաղության ու Անվտանգության Խորհուրդ (Արագ արձագանքման ուժեր և այլն) ստեղծելու փորձեր արվել՝ Աֆրիկյան Միության օրինակով:

2003թ. պատերազմն ի ցույց դրեց Արաբական Լիգայում առկա խնդիրներն ու փոփոխությունների անհրաժեշտությունը: Ողջ իրաքյան ճգնաժամի ընթացքում Արաբական Լիգան հիմնականում փորձեց համոզել իրաքյան կողմին՝ համագործակցել ՄԱԿ-ի հետ ու ընդունել վերջինիս առաջ քաշած բանաձևերը: Նախապատերազմական շրջանում Արաբական Լիգան արտահերթ հանդիպումներ կազմակերպեց, իսկ վերջինիս անդամ երկրների ներկայացուցիչները բազում այցելություններ կատարեցին Իրաք: Փորձեր կատարվեցին ընդհանուր դիրքորոշում որդեգրել ամերիկյան հնարավոր հարձակման դեպքում, եթե չհաջողվեր կանխել իրերի նմանատիպ զարգացումը: Սակայն տարակարծությունները Լիգայի շրջանակներում թույլ չտվեցին ընդհանուր հայտարարի գալ: Եգիպտական Հելուան համալսարանի քաղաքական

[15] Farah Dakhlallah, նշվ. աշխ., pp. 393-412, http://dx.doi.org/10.1080/13530194.2012.726489/

[16] Նույն տեղում

[17] Салех Малек Мохамед, Ливано-израильские отношения в контексте Арабо-Израильского противостояния в 1990-е – начале 2000-х гг., УДК 324(569.3:569.4)(091)«19/20» http://elib.bsu.by/bitstream/123456789/104268/1/43-49.pdf (16/12/2016)

գիտությունների դասախոս Սայեդ Էլիուան նշում է.՝ «Շատ արաբներ հիասթափված են, քանի որ Լիգայում ընդունված բանաձևերն ու որոշումները այդպես էլ կյանքի չեն կոչվում»[18]:

Մինչև 2003թ. պատերազմի սկսվելը՝ Արաբական Լիգան վերջին քայլը ձեռնարկեց այն կանխարգելելու նպատակով: Եգիպտոսի, Սիրիայի, Բահրեյնի, Լիբանանի ու Թունիսի արտաքին գործերի նախարարներից ու Լիգայի Գլխավոր քարտուղար Ամր Մուսայից կազմված պատվիրակությունը պետք է ժամաներ Բաղդադ: Սակայն Իրաքի ղեկավարությունը սկզբում խնդրեց հետաձգել այցը, ապա նաև չեղարկեց այն: Արաբական Լիգան «խորն ափսոսանք» հայտնեց Իրաքի որոշման վերաբերյալ: Իրաքի ղեկավարության նմանատիպ պահվածքը ցույց տվեց, որ ճգնաժամի պայմաններում արաբական երկրները չեն դիտարկում Արաբական Լիգայի օգնությանը դիմելու տարբերակը:

Պատերազմից հետո Արաբական Լիգան ոչ մի մարդասիրական օգնության նախագիծ չմշակեց Իրաքի տնտեսության վերականգնման վերաբերյալ: Արաբական Լիգայի անդամ ոչ մի պետություն նույնիսկ չհամարձակվեց խոսել Իրաքի ապագա ժողովրդավարական համակարգի մասին:

2003թ. իրաքյան պատերազմից հետո առաջացած ճգնաժամի ընթացքում Արաբական Լիգան որոշակի սիմվոլիկ միջոցառումներ այնուամենայնիվ ձեռնարկեց: 2006թ. Մոխթար Լամանին գործուղվեց Իրաք՝ որպես Իրաքում Արաբական Լիգայի մշտական ներկայացուցիչ: Սակայն արդեն 2007թ. սկզբին՝ Լամանին հրաժարվեց ստանձնած պաշտոնից[19]:

2003թ. ապրիլի 1-ին բրիտանական լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցում Լիգայի Գլխավոր քարտուղար Ամր Մուսան հայտարարեց, թե Իրաքյան պատերազմը չէր լինի, եթե արաբական բոլոր պետությունները միասնական դիրքորոշում որդեգրեին այդ հարցում: Նա հայտարարեց, որ պատերազմը այնքան խորը հակասությունների տեղ տվեց արաբական աշխարհում, որ ինքն անձամբ սկսեց կասկածել Արաբական Լիգայի լուսավոր ապագայի վրա: Ամր

---

[18] Farah Dakhlallah, նշվ. աշխ., pp. 393-412, http://dx.doi.org/10.1080/13530194.2012.726489/

[19] Marco Pinfari, նշվ. աշխ.

Մուսան նաև նշեց, թե արաբական երկրները ցանկանում էին պատերազմ, իսկ արաբ ժողովուրդը՝ ոչ[20]:

Agence France Presse-ի տեղեկություններով 2003թ. հունիսի 15-16-ը Կահիրեյում անցկացվել է խորհրդաժողով, որի նպատակն է եղել սկիզբ դնել Արաբական Լիգայի բարեփոխմանը: Ստեղծված հանձնաժողովը վեցամսյա ուսումնասիրությունների արդյունքում պետք է Լիգայի բարեփոխման նախագիծ առաջարկեր՝ հիմնված հիմնականում Եգիպտոսից, Սիրիայից ու Սաուդյան Արաբիայից եկող առաջարկությունների վրա: Արաբական Լիգայի վերափոխման համար որպես օրինակ պետք է ծառայեր Եվրոպական Միությունը:

2004թ. մարտին Ալժիրում արաբական երկրների ղեկավարների հանդիպմանը որոշվեց «ժամանակավոր միջարաբական խորհրդարան» ստեղծել: Կենտրոնակայանը լինելու էր Դամասկոսում: Դրա պատգամավորները (յուրաքանչյուր երկրից 4 ներկայացուցիչ) պետք է հող նախապատրաստեին համաարաբական ներկայացուցչական մարմին ստեղծելու համար՝ Եվրախորհրդարանի օրինակով: Նախագծի հեղինակները հույս էին տածում այդպիսով բարձրացնել Արաբական Պետությունների Լիգայի դերը միջազգային հարաբերություններում[21]:

2008թ. մարտին Դամասկոսում տեղի ունեցած արաբական խորհրդաժողովում, Լիգայի գլխավոր քարտուղար Ամր Մուսան հայտարարեց, որ միջարաբական հարաբերություններում «անընդունելի խառնաշփոթ է տիրում»[22]:

Արաբական Լիգան փորձել է ակտիվ գործունեություն ծավալել նաև մի շարք այլ միջարաբական հակամարտություններում: Այն փորձեց միջամտել ու կարգավորել իրավիճակը Եմենում սկսված քաղաքացիական պատերազմում՝ կառավարական ուժերի ու ապստամբած

[20] Financial Times, "Arab League Chief Questions League's Future After Divisions Over Iraq," April 1, 2003, http://search.ft.com/search?q=&t=all&fa=people%2Corganisations%2Cregions%2Csections%2Ctopics%2Ccategory%2Cbrand&s=-lastPublishDateTime&curations=ARTICLES%2CBLOGS%2CVIDEOS%2CPODCASTS&highlight=true (11/07/2016)

[21] Frederic Wehrey, Dalia Dassa Kaye, Jessica Watkins, Jeffrey Martini, Robert A. Guffey, The Iraq Effect: The Middle East After The Iraq War, USA, 2010, 187pages, p. 118

[22] Frederic Wehrey, Dalia Dassa Kaye, Jessica Watkins, Jeffrey Martini, Robert A. Guffey, The Iraq Effect: The Middle East After The Iraq War, USA, 2010, 187pages, p. 21

զինյալ կրոնական Հութիս խմբավորման միջև: Լիգայի Գլխավոր քարտուղար Ամր Մուսան այցելեց Եմեն 2009թ. մարտին ու հանդիպեց նախագահ Ալի Աբդուլլահ Սալեհի հետ: Մուսան առաջարկեց Լիգայի օգնությունը Եմենում խաղաղության ու կայունության հաստատման հարցում: Սակայն Եմենի նախագահը մերժեց՝ պատճառաբանելով, որ չի ցանկանում միջազգայնացնել ստեղծված իրավիճակը: Հետագայում Եմենը այնուամենայնիվ ընդունեց միջազգային կազմակերպության միջնորդություն, սակայն ոչ թե Արաբական Լիգայի, այլ Ծոցի Համագործակցության Խորհրդի[23]: Լիգան չէր կարող ինքնուրույն միջամտել հակամարտությանը՝ առանց հակամարտող կողմերի խնդրանքի: Իսկ հակամարտող կողմերը չէին վստահում Լիգային:

Այնուհետև Լիգան 2009թ. նոյեմբերին փորձեց միջամտել Սուդանում Եգիպտոսի ու Ալժիրի ֆուտբոլի հավաքականների հանդիպումից հետո առաջացած լարված իրավիճակին: Իրավիճակի լարմանը նպաստեց երկու երկրների հավաքականների երկրպագուների միջև բախումը: Խարխլվել էին դիվանագիտական հարաբերությունները Եգիպտոսի ու Ալժիրի միջև: Լիգայի փորձերն անհաջողության մատնվեցին՝ երկու կողմերն էլ մերժեցին միջնորդության առաջարկը[24]:

Արաբական Լիգային չհաջողվեց ազդել նաև Արևմտյան Սահարայում ստեղծված ճգնաժամային իրավիճակի վրա, քանի որ հակամարտող կողմերը որոշեցին դիմել միայն ՄԱԿ-ին[25]:

2006թ. Լիբանանյան ճգնաժամի պայմաններում Արաբական Լիգան պահանջեց վերացնել Լիբանանի օկուպացիան: Այն նաև պահանջեց միջազգային դատարանների միջոցով հետաքննել ու դատապարտել Լիբանանում իրականացված սպանությունների պատասխանատուներին՝ այդ թվում նաև նախկին վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության մեղավորներին:

Լիգան նաև մեծ ծավալի աշխատանք տարավ Սոմալիայում՝ քաղաքացիական պատերազմին վերջ դնելու ուղղությամբ: Լիգայի պաշտոնատար անձիք՝ խաղաղություն հաստատելու նպատակով, Դար-

23 Hesham Youssef, Mediation and Conflict Resolution in the Arab World: The Role of the Arab League, https://ifsh.de/file-CORE/documents/yearbook/english/13/Youssef-en.pdf/

24 Նույն տեղում

25 Hesham Youssef, Mediation and Conflict Resolution in the Arab World: The Role of the Arab League, https://ifsh.de/file-CORE/documents/yearbook/english/13/Youssef-en.pdf/

ֆուրում նույնիսկ ստիպված եղան բանակցություններ վարել ծայրահեղականների հետ:

Մավրիտանիայում 2008թ. ծավալված դեպքերի ժամանակ (ռազմական հեղաշրջում) Արաբական Լիգան առաջնային դերակատարում ստանձնեց խաղաղության հաստատման գործընթացում, քանի որ Աֆրիկյան Միության իրավունքները սահմանափակված էին ռազմական հեղաշրջման արդյունքում իշխանության եկած վարչակարգերի հետ բանակցություններ վարելիս: Այնուամենայնիվ երկու միջազգային կազմակերպությունները, սերտ համագործակցության արդյունքում, կարողացան որոշակի հաջողություն գրանցել[26]:

Չնայած իր վրա դրված մեծ պատասխանատվության՝ Արաբական Լիգան չկարողացավ արդարացնել իրեն: Այն մեծ ծավալի քննադատության սկսեց ենթարկվել այն բանից հետո, երբ 2003թ. դեկտեմբերին ստեղծված Աֆրիկյան Միության Խաղաղության ու Անվտանգության Խորհուրդը լիազորեց Աֆրիկյան Միությանը միջամտել անդամ երկրների հակամարտություններին, եթե դրանք սպառնում են պետությունների բնակչությանն ու կրում են խիստ հակամարդասիրական բնույթ: Արաբական Պետությունների Լիգան, ի հակադրություն դրա, հիմնականում հանդիսանում էր որոշում կայացնող մարմին և չուներ ազդող մեխանիզմներ[27]:

Արաբական Լիգան չկարողացավ նաև տնտեսապես միավորել անդամ երկրներին[28]: Այնուամենայնիվ՝ նման փարձեր կատարվեցին: 1965թ. ստեղծվեց Արաբական Միասնական Շուկան, որը բաց է Լիգայի անդամ բոլոր երկրների առջև: Վերջինս իր մեջ ներառում է մաքսային պարտավորություններից ազատում բնական պաշարների, գյուղատնտեսական արտադրանքի դեպքում, ինչպես նաև կապիտալի ու աշխատանքի ազատ տեղաշարժ անդամ երկրներում[29]:

---

[26] Hesham Youssef, նշվ. աշխ. https://ifsh.de/file-CORE/documents/yearbook/english/13/Youssef-en.pdf

[27] Kristiana Powell, 'The African Union's Emerging Peace and Security Regime: Opportunities and Challenges for Delivering on The Responsibility to Protect', Working Paper, The North-South Institute, 2005, pp. 10–13.

[28] Նույն տեղում, p. 81

[29] Jeremy Marcus, Julia Kung, The Arab League. EDGE, 2003, 6/9/03, https://www.google.am/search?q=Jeremy+Marcus%2C+Julia+Kung.+The+Arab+League&o

Ըստ որոշ հեղինակների՝ Արաբական Լիգան իրենից ներկայացնում է միջազգային կազմակերպության մի դժգույն կամ նույնիսկ տապալված օրինակ[30]: Սակայն հակամարտությունների կարգավորման գործընթացում Արաբական Լիգայի առավելությունը կայանում է նրանում, որ այն չի ներկայացնում որևէ առանձին խմբավորման շահերը: Այն ոչ թե պայքարում է ի շահ Համասի կամ Ֆաթհի, այլ՝ Պաղեստինի ժողովրդի: Այն չի պայքարում ի շահ սունի մահմեդականների և ընդդեմ շիա մահմեդականների: Արաբական Պետությունների Լիգան պայքարում է իր անդամ երկրների անհատական ու ընդհանուր հետաքրքրությունների համար:

Երկար ճանապարհ անցնելով՝ Արաբական Լիգան ունեցել է թե հաղթանակներ և թե պարտություններ: Այն մինչև օրս փորձում է լուծել արաբական աշխարհը բաժանող հակասությունները և ըստ էության միակ միջազգային համաարաբական կառույցն է, որ դեռևս շարունակում է գործել: Սակայն Արաբական Լիգան այդպես էլ չվերաճեց ավելի խորը համագործակցություն սերմանող կառույցի՝ ինչպես օրինակ ԵՄ[31]: Արաբական երկրներում իշխող վարչակարգերը գործնականում վախենում էին արաբական միությունից, քանի որ այն կարող էր խիստ սահմանափակել իրենց իշխանությունը[32]:

Այնուամենայնիվ՝ Արաբական Լիգան, չնայած ոչ արդյունավետ գործելուն, արաբական միասնությանը տվել է միայն օգուտ: Ի տարբերություն ակնկալիքների՝ Լիգան իհարկե չկարողացավ դառնալ արաբական աշխարհը միավորող մի վերպետական կազմավորում: Սակայն, այն միանշանակ փորձում էր և դեռևս փորձում է միավորել չա-

---

q=Jeremy+Marcus%2C+Julia+Kung.+The+Arab+League&aqs=chrome..69i57.723j0j4&sourceid=chrome&ie=UTF-8 (16/12/2016)

30 Lindholm Schulz, Helena and Michael Schulz, 2005, 'The Middle East: Regional Instability and Fragmentation', in M. Farrell, B. Hettne and L. van Langenhove (eds), Global Politics of Regionalism: Theory and Practice, London & Ann Arbor: Pluto Press, 2005, p.187

31 Ռուբեն Կարապետյան, Սիրիայի տեղն ու դերը արաբ-իսրայելական հակամարտությունում /1946-2000թթ/, Կահիրե, 2008թ, 352 էջ, էջ 92
Hesham Youssef, Նշվ. աշխ. https://ifsh.de/file-CORE/documents/yearbook/english/13/Youssef-en.pdf/

32 Barnett Michael and Solingen Etel, 2007, 'Designed to Fail or Failure of Design? The Sources and Institutional Effects of the Arab League', in A.I. Johnson and A. Acharya (eds), Crafting Cooperation: Regional Institutions in Comparative Perspective, New York: Cambridge University Press, p. 181

փազանց տարբեր նպատակներ ու տեսակետեր ունեցող արաբական երկրները: Լիգայից միասնություն է ակնկալում արաբ ժողովուրդը, սակայն ոչ արաբական վարչակարգերը:

**Ամփոփում**

Արաբական Լիգան նորագույն շրջանում թևակոխեց փոփոխությունների մի նոր ժամանակաշրջան: Սովետական միության փլուզումից և միաբևեռ համակարգի հաստատումից հետո ընկած տասնամյակում Արաբական Լիգան տապալվեց իր նախաձեռնություններում և չկարողացավ որևէ լուրջ միջամտություն ունենալ ստեղծված հակամարտություններում՝ մասնավորապես 2000թ. Պաղեստինում բռնկված երկրորդ ինթիֆադային: 90-ականներին միայն երկու գագաթնաժողով անցկացվեց Լիգայում՝ 1990թ. ու 1996թ.: Այնուհետև Լիգայի գագաթնաժողովներ անցկացվեցին Շարմ Էլ-Շեյխում 2003թ., Թունիսում՝ 2004թ., Ալժիրում՝ 2005թ., Խարտումում՝ 2006թ., Էլ-Ռիյադում՝ 2007թ., Դամասկոսում՝ 2008թ., Դոհայում՝ 2009թ. և այլն:

Չնայած իր վրա դրված մեծ պատասխանատվության՝ Արաբական Լիգան չկարողացավ արդարացնել իրեն: Այն, չնայած ոչ արդյունավետ գործելուն, արաբական միասնությանը տվել է միայն օգուտ: Ի տարբերություն ակնկալիքների՝ Լիգան իհարկե չկարողացավ դառնալ արաբական աշխարհը միավորող մի վերպետական կազմավորում: Սակայն, այն միանշանակ փորձում էր և դեռևս փորձում է միավորել չափազանց տարբեր նպատակներ ու տեսակետեր ունեցող արաբական երկրները:

*Բանալի բառեր* – ԱՊԼ, Եգիպտոս, միջարաբական համագործակցություն, հակամարտությունների կարգավորում, 2006թ. Լիբանանյան ճգնաժամ, 2003թ. Իրաքյան ճգնաժամ

# THE LEAGUE OF ARAB STATES: ARAB COOPERATIONAL FAILURE OR ACHIEVEMENT?

**Andranik Arakelyan**
NAS RA,Institute of Oriental Studies, post-graduate student

**Summary**

The League of Arab States was formed in Cairo on 22 March 1945 with six members: Egypt, Iraq, Transjordan, Lebanon, Saudi Arabia, and Syria. Yemen joined as a member on 5 May 1945. The League's main goal is to draw closer the relations between member States and co-ordinate collaboration between them, to safeguard their independence and sovereignty, and to consider in a general way the affairs and interests of the Arab countries. The main goal of this article is to explore the activity of the organisation after the collapse of the Soviet Union and to find out whether it was beneficial or not.

*Keywords* – LAS, Egypt, Inter-Arab cooperation, dispute settlement, 2006 Lebanon crisis, 2003 Iraq crisis

# ЛИГА АРАБСКИХ ГОСУДАРСТВ: ДОСТИЖЕНИЕ ИЛИ ПРОВАЛ МЕЖАРАБСКОГО СОТРУДНИЧЕСТВА?

**Аракелян Андраник Рафаэлович**
НАН РА,институт Востоковедения, аспирант

**Резюме**

Лига была создана 22 марта 1945 года на основании Александрийского протокола. Цели Лиги указаны предусматривают укрепление связей между государствами, участвующими в ней, выработку единой политической линии для осуществления сотрудничества между ними, защиты их независимости и суверенитета, для рассмотрения дел и интересов арабских стран.

*Ключевые слова* – ЛАГ, Египет, межарабское сотрудничество, урегулирование конфликтов, Ливанский кризис 2006г., Иракский кризис 2003г.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ԱՐԳԵԼՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ԳՈՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (1918–1920 ԹԹ.)*

***Համո Կարենի Սուքիասյան***
*պ.գ.թ., դոցենտ*
*ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող*
*ԵԿՏԱ, Միջազգային հարաբերությունների ամբիոն, դասախոս*

20-րդ դարի գրատպության պատմությունը հայ պատմագիտության թերի ուսումնասիրված հիմնախնդիրներից է: Ասվածը վերաբերում է նաև Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանի տպագրության պատմությանը: Խորհրդահայ ուսումնասիրողները ՀՀ օրոք հրատարակված գրքերն ուսումնասիրության առանձին խնդիր չեն դարձրել: Այնինչ, միայն Հայաստանի ազգային գրադարանի կողմից վերջին տասնամյակում հրատարակված «Հայ գիրքը 1901-1920 թվականներին» և «Հայ գիրքը 1921-1930 թվականներին» մատենագիտական ցանկերի ուսումնասիրությունից տեսնում ենք, որ թղթի պակասի և տպագրական գործի անմխիթար դրության պայմաններում Առաջին հանրապետության օրոք (նկատի ունենք նաև Լեռնահայաստանը) հրատարակվել է շուրջ վեց տասնյակ գիրք[1]: Սա ևս ճշգրիտ տվյալ չէ:

Չմոռանանք, որ նշյալ մատենագիտական ցանկերում արտացոլված է միայն հայալեզու գրականությունը, իսկ Հայաստանում հրատարակված ռուսալեզու գրականության մատենագիտական ցանկեր կազմված չեն, ռուսալեզու գրքերը չեն ուսումնասիրվել: Կարող ենք վստահեցնել, որ 1918-1921 թթ. հրատարակված որոշակի թվով գրքեր ու թերթեր ՀՀ գրադարաններում ու արտերկրի կենտրոններում չեն պահպանվել, ինչի պատճառով էլ ՀԱԳ-ի մատենագիտական ցանկերն ամբողջական չեն: Հայաստանի ազգային արխիվում ուսումնասիրություն կատարելիս մեզ հանդիպել են նշյալ ցանկերում չներառված

* Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 16YR-6A057 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

[1] Հայ գիրքը 1901-1920 թվականներին, կազմողներ՝ Օ. Գյուլումյան, Ա. Ադամյան, Ս. Թադևոսյան, Ա. Սավալյան, Մ. Սողոմոնյան, Ա. Սահակյան, Երևան, 2007, էջ 563-624, Հայ գիրքը 1921-1930 թվականներին, կազմողներ՝ Օ. Գյուլումյան, Ս. Գրիգորյան, Երևան, 2012, էջ 1-22:

գրքերի մասին տեղեկություններ: Այսպես. մեր կողմից հայտնաբերված փաստաթղթերից մեկում տեղեկություն կա 1924 թ. դեկտեմբերին Հայաստանի Հեղափոխական թանգարանում 1919 թ. Երևանում հրատարակված «Սգապսակ Արամի» խորագրով գրքի առկայության վերաբերյալ[2], որը նվիրված է եղել ՀՀ փաստացի հիմնադիր, ներքին գործերի անդրանիկ նախարար Արամ Մանուկյանի (1879-1919) հիշատակին: Նշյալ հրատարակությունը ոչ միայն այժմ ՀՀ գրադարաններում չկա, այլ նաև հիշատակված չէ Հայ գրքի մատենագիտական ցանկերում:

1918 թ. մայիսին Հայաստանի անկախացումից հետո կառավարությունը հայտարարեց տպագրության և մամուլի նկատմամբ քաղաքականության խնդրում ժողովրդավարական մոտեցումներ որդեգրելու մասին: Այս բնագավառում ՀՀ-ում կիրառվում էին Համառուսաստանյան ժամանակավոր կառավարության՝ տվյալ ժամանակի համար առաջադիմական իրավական ակտերը: Այդուհանդերձ, իշխանությունները միշտ չէ, որ հետևում էին հայտարարած պարտավորություններին[3]:

ՀՀ շրջանում հրատարակչական բնագավառը գտնվում էր ներքին գործերի նախարարության իրավասության ներքո: Կառավարության անունից ՆԳՆ-ն հարաբերություններ էր պահպանում տպարանների և թերթերի խմբագրությունների հետ, հրահանգներ տալիս նրանց, թույլատրում կամ կասեցնում մամուլի միջոցի հրատարակությունը, գրքերի տարածումը, հսկում էր, որ տպարանները հակապետական, քայքայիչ բնույթի կոչեր, թռուցիկներ չտպագրեին: Այդուհանդերձ, միշտ չէ, որ նախազգուշական միջոցառումները հաջողություն էին ունենում:

Հանրապետության անկախության առաջին ամիսներին (ընդհուպ 1919 թ. գարունը) պետության կողմից տպագրության նկատմամբ վերահսկողություն և գրաքննություն իրականացնելուն առնչվող ակնառու փաստեր մեզ հայտնի չեն: Իրադրությունը, սակայն, փոխվեց ՀՀ ներքին իրավիճակի կայունացմանը զուգընթաց և, հատկապես, 1919

2 Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 122, ց. 1, գ. 259, թ. 118 և շրջ.:

3 Սուքիասյան Հ. Կ., Մամուլի պետական վերահսկողությունը և գրաքննությունը Հայաստանի Հանրապետությունում (1918-1920 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, N 3, էջ 63-77:

թ. հունիսի 21-23-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների նախապատրաստական շրջանում և հաջորդ ամիսներին, երբ քաղաքական կուսակցությունների միջև ակտիվ պայքար ծավալվեց:

1919 թ. մայիսի 26-ին ՀՀ կառավարությունը ներքին գործերի նախարարին լիազորեց Պառլամենտի ընտրությունները կազմակերպող կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատանքների համար անհրաժեշտության դեպքում թուղթ և տպարաններ բռնագրավել[4]: Ամենայն հավանականությամբ սա պայմանավորված էր մի շարք քաղաքական ուժերի (Հայ ժողովրդական կուսակցության, հայ սոցիալ-դեմոկրատների, բոլշևիկների) կողմից խորհրդարանական ընտրությունները բոյկոտելու հանգամանքով: ՀՀ ղեկավարները մտավախություն ունեին, թե տպարանների տերերը կամ բանվորները կարող են անակնկալ գործադուլ կազմակերպել՝ ձախողելով քվեաթերթիկների տպագրման գործը: Կարևոր խնդիր էր նաև անհրաժեշտ թղթի պահեստավորումը: Փաստենք. 1918-1920 թթ. թղթի սուր կարիք կար, թուղթն ընդգրկված էր այն ապրանքների ցուցակում, որոնց արտահանումը ՀՀ-ից արգելված էր[5]:

Արխիվային և հրատարակված փաստաթղթերի, մամուլի և հուշագրությունների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում «արգելված գրականությանը» վերաբերող օրինակները քաղաքական բնույթ ունեն: Դրանց հիմնական մասը վերաբերում է հայ բոլշևիկների հրատարակություններին:

Բանն այն է, որ հայ բոլշևիկներն իրենց ընկալած դասակարգային պայքարի անիրական հեռանկարները գերադասում էին ազգային շահերից ու ձգտումներից: 1919 թ. ամռանը ՀՀ իշխանության մարմիններում, զինվորականների և բնակչության շրջանում վրդովմունք առաջացրեց Հայաստանի երիտասարդ բոլշևիկների գործունեությունը: Նշենք, որ 1919 թ. ապրիլին Երևանում ստեղծվել էր Երիտասարդ սոցիալիստ-ինտերնացիոնալիստների «Սպարտակ» միությունը, որը մայիսին վերանվանվեց Երևանի երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» կազմակերպության (նախագահ՝ Ղուկաս Ղուկասյան, քարտուղար՝ Աղասի Խանջյան): Կազմակերպության անդամները 1919 թ. ամ-

---

[4] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., Երևան, 2014, էջ 203:

[5] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 131, թ. 36:

ռանը գաղտնի պայմաններում հակապետական բովանդակությամբ երկու թռուցիկ տպագրեցին և տարածեցին Երևան քաղաքի փողոցներում, զորամասերում, հանրապետության քաղաքային և գյուղական բնակչության շրջանում:

Առաջին թռուցիկը տարածվել է հունիսի 21-23-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների նախօրեին: Նշյալ կոչում քննադատվում էին «բուրժուական» Հայաստանի պետական համակարգն ու կուսակցությունները: Այն վերջանում էր այսպես. «Կորչի՛ իմպերիալիզմը, կորչի՛ պառլամենտարիզմը, կեցցե՜ խորհրդային իշխանությունը, կեցցե՜ կոմունիզմը»[6]: «Սպարտակ»-ի անդամները հաջորդ թռուցիկը տարածեցին հուլիս ամսին, երբ ՀՀ բանակը Բեյուք-Վեդիի շրջանում զբաղված էր թուրք-թաթարական հակապետական խռովությունները ճնշելու գործով: Հիշյալ թռուցիկում, որի հեղինակը հայտնի հեղափոխական Արշավիր Մելիքյանն էր, հայ զինվորներին կոչ էր արվում զինվորական հրամանատարության կարգադրություններին ենթարկվելու, «թուրք աշխատավոր եղբայրների» դեմ կռվելու փոխարեն պայքարի դուրս գալ հանրապետության իշխանությունների դեմ[7]:

Վերջին կոչը մեծ արձագանք ունեցավ: Եթե նախորդը Ներքին գործերի նախարարությունն անուշադրության մատնեց, ապա այս անգամ «Սպարտակ»-ի երկու տասնյակ անդամներ ձերբակալվեցին և մի քանի օրով բանտարկվեցին: Երիտասարդներից երկուսը՝ Աղասի Խանջյանը և Հարություն Հասրաթյանը, շուրջ երկու ամիս բանտարկված մնացին, մինչև, ինչպես ՆԳ նախարար Ա. Գյուլխանդանյանն էր մի քանի ամիս անց նշում, «մեղա եկան, զղջացին իրենց արածը և ստորագրություն տվին, որ ոչ մի նմանօրինակ հակապետական քայլ չեն անի»[8]:

Մեզ հայտնի հաջորդ օրինակը 1919 թ. սեպտեմբերի 9-16-ը Երևանում կայացած Հայ ժողովրդական կուսակցության երկրորդ համագումարում ընդունված «Քաղաքական մոմենտի մասին» բանաձևն է, ուր խստորեն քննադատվում էր ՀՀ իշխանությունների ու իշխող

---

6 Սպարտակ. 1917-1920, հուշեր և վավերագրեր, Երևան, 1935, էջ 174-177:

7 Նույն տեղում, էջ 17-19, 33-34, 67, 79-81, 86-87, 98-100:

8 ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 64, թ. 4 շրջ.: Հասկանալի է, տարիներ անց այս իրադարձությունների մասին գրած հուշերում Ա. Խանջյանը «մոռացել է» հիշատակել մեղա գալու մասին (Սպարտակ. 1917-1920, հուշեր և վավերագրեր, էջ 18-19):

կուսակցության՝ Հ. Յ. Դաշնակցության, գործունեությունը և պահանջ դրվում ցրել ՀՀ խորհրդարանն ու կառավարությունը: Բանաձևը թռուցիկի տեսքով բազմացվեց քաղաքի «Լույս» տպարանում (այստեղ էր տպագրվում նաև ՀԺԿ-ի «Ժողովուրդ» պաշտոնաթերթը) և տարածվեց՝ դժգոհություն առաջացնելով իշխանությունների շրջանում: Ներքին գործերի նախարար Աբրահամ Գյուլխանդանյանի կարգադրությամբ սեպտեմբերի 19-ի առավոտյան խուզարկություն կատարվեց «Ժողովուրդ» թերթի խմբագրատանը և բռնագրավվեցին Բանաձևի տպագրված օրինակները: Փակվեց նաև «Լույս» տպարանը: Այնուհետև ներքին գործերի նախարարը հատուկ կարգադրություն արեց տպարանի կառավարչին՝ «հակապետական գրություններ» չտպելու մասին[9]: Միայն տպարանատիրոջ կողմից հակակառավարական նյութեր չտպագրելու մասին պարտավորագրի ստորագրումից հետո տպարանը վերաբացվեց: Սեպտեմբերի 24-ից վերսկսվեց նաև «Ժողովուրդ» թերթի տպագրությունը[10]: Սա ՀՀ օրոք հրատարակչական բնագավառի բիրտ վերահսկողության աննախադեպ փաստ էր, ինչը հիմնովին հակասում էր այդ կարգադրությունը կատարած կառավարության հայտագրի տառին և ոգուն:

ՀՀ իշխանություններին առանձնապես մտահոգում էր հայ բոլշևիկների կողմից հակապետական գրականության տարածումը: 1919 թ. սեպտեմբերի 9-ին ՀՀ կառավարությունը Ներքին գործերի նախարար Ա. Գյուլխանդանյանին հանձնարարեց «վնասակար տարրերին» Հայաստանից արտաքսելու մասին օրինագիծ մշակել[11]: Բանն այն է, որ հատկապես 1919 թ. գարնանից սկսած ՀՀ էին տեղափոխվում Վրաստանում և Ադրբեջանում հալածվող հայ կոմունիստները՝ իրենց գործունեության համար պարարտ հող փնտրելով հայկական պետությունում, ուր կուսակցական պատկանելության համար հալածանքներ չկային: Հանրապետությունում բոլշևիկների գործունեությունը նոր թափ ստացավ 1919 թ. սեպտեմբերին Երևանում կայացած Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին

---

9 «Հայաստանի ձայն», Երևան, 22 սեպտեմբերի 1919, N 1, ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 39, թ. 113: Տե՛ս նաև՝ Հակոբյան Ա. Մ., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Երևան, 2005, էջ 210-211:

10 «Ժողովուրդ», Երևան, 24, 26 սեպտեմբերի 1919, N 104, 105:

11 Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, էջ 294-295:

խորհրդակցությունից հետո, երբ ստեղծվեց ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն (Արմենկոմ)[12]:

ՀՀ կառավարության հանձնարարությամբ ՆԳՆ-ն 1919 թ. դեկտեմբեր – 1920 թ. փետրվարին Երևանում, Ալեքսանդրապոլում ու Դիլիջանում ձերբակալեց մի շարք ակտիվ բոլշևիկների (Սարգիս Կասյան, Ասքանազ Մռավյան, Նիկոլայ Պանֆիլով, Սարգիս Խանոյան, Հայկ Յաղուբյան, Մուշեղ Աղայան և ուրիշներ): Սոցիալիստ-հեղափոխականների խմբակցության առաջարկով ձերբակալվածների հարցը մանրամասն քննարկվեց Հայաստանի պառլամենտի 1920 թ. փետրվարի 20-ի նիստում: Նիստի սղագրությունից պարզվում է, որ ձերբակալվածները մեղադրվում էին «հանցագործ գրականություն» տարածելու, զորքի մեջ քարոզչություն կատարելու և թռուցիկներ տարածելու, թուրքերի հետ համագործակցելու մեջ[13]:

Այդ «հանցագործ գրականությունը» հայ ճանաչված բոլշևիկ Սարգիս Կասյանի հեղինակած «Ուր է ելքը» գրքույկն էր, որը վերջինս, «Ս. Ատենյան» ծածկանունով, ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի հանձնարարությամբ գաղտնի պայմաններում փոքր տպաքանակով հրատարակել էր 1919 թ. դեկտեմբերին: Հյուսիսային Կովկասի հայ բոլշևիկ գործիչների նախաձեռնությամբ 1920 թ. այն վերահրատարակվում է հայտնի բոլշևիկ Սարգիս Լուկաշինի (Սրապիոնյան) հակիրճ առաջաբանով[14]:

Գրքում նկարագրվում էր հանրապետությունում տիրող ծանր սոցիալ-տնտեսական դրությունը, կատարվող չարաշահումները, սուր քննադատության էր ենթարկվում Կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը: Ստեղծված իրավիճակից ելքը համարվում էր դեպի հյուսիս (Խորհրդային Ռուսաստան) ՀՀ դիմաշրջումը և խորհրդայնացումը[15]: Ի դեպ, Հայաստանի խորհրդայնացումից հետո՝ 1922 թ., «Բանվորագյուղացիական գրադարան» մատենաշարով գրքույկը Երևանում վերահրատարակվել է:

---

12 Գալոյան Գ. Ա., Հերոսական մայիսից-հաղթական նոյեմբեր, Երևան, 1980, էջ 53-54:

13 ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 79, թ. 5-6:

14 Կարապետյան Հ. Ն., Մեծ պայքարի մարդիկ. Սարգիս Կասյան, Սահակ Տեր-Գաբրիելյան, Գևորգ Աթարբեկյան, Երևան, 1963, էջ 112, 127, Հարությունյան Վ. Ա., Սարգիս Կասյան, Երևան, 1965, էջ 18:

15 Ատենեան Ս. (Կասեան Ս.), Ուր է ելքը, առաջ.՝ Լուկաշինի, Նոր Նախիջևան, Հայկական գործերի կոմիսարիատի Ռոստով-Նախիջևանի ճյուղի հրատ., 1920, 84 էջ:

Ինչ վերաբերվում է Արմենկոմի՝ ՀՀ իշխանություններին զայրացրած թռուցիկին, ապա վերջինի ստեղծման առիթ էր հանդիսացել 1920 թ. հունվարի 19-ին Փարիզում Դաշնակից երկրների Գերագույն խորհրդի կողմից Հայաստանի անկախության փաստացի ճանաչումը: Այն ցնծությամբ էր ընդունվել Երևանում և մեծ շուքով տոնվել[16]: Նշված թռուցիկում այն միտքն էր անցկացվում, որ ՀՀ անկախությունը թվացյալ է, Հայաստանի բանվորներն ու գյուղացիներն իրական անկախություն կունենան միայն Խորհրդային Ռուսաստանի կարմիր բանակի օգնությամբ Հայաստանում խորհրդային իրավակարգի հաստատումից հետո: Այն ավարտվում էր հետևյալ կոչերով. «Կեցցե՛ Կարմիր բանակը, կեցցե՛ Խորհրդային Ռուսաստանը, կեցցե՛ Խորհրդային Հայաստանը, մահ ժողովրդի տզրուկներին ու թշնամիներին, կեցցե՛ սոցիալիզմը»[17]:

1920 թ. մայիսի սկզբին հայ բոլշևիկների հակապետական ապստամբության բռնկումից հետո պետությունն առավել խստացրեց տպարանների նկատմամբ հսկողությունը: ՀՀ Բյուրո-կառավարության մայիսի 6-ի նիստում որոշվեց հանրապետության տարածքում տպարանների բռնագրավման, նրանց նկատմամբ վերահսկողության և օգտագործման հարցը վերապահել ՆԳ նախարարի հայեցողությանը[18]: Ավելին, տպարանների նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով ՀՀ ՆԳ նախարարությունը հատուկ կոմիսարներ նշանակեց: Այսպես. նախարարի օգնական Ս. Թորոսյանի մայիսի 8-ի հրամանով Երևանի և Էջմիածնի տպարանների կոմիսար նշանակվեց պառլամենտի անդամ, դաշնակցական Ենովք Միրաքյանը: Մայիսի 15-ին վերջինին փոխարինեց Սարգիս Պողոսյանը[19]: Բոլշևիկյան գրականության դեմ պայքարի տեսակետից այս քայլերը որոշ արդյունք տվեցին:

ՀՀ-ում հատկապես մասնագիտական գրքերի սուր պահանջարկ կար: Բանը հասավ նրան, որ ՀՀ կառավարությունը, 1920 թ. հուլիսի 7-ի նիստում քննարկելով երկրից իրավաբանական բնույթի գրքերի

---

[16] Հայոց պատմություն, հ. IV, գիրք I, Երևան, 2010, էջ 152-153:

[17] Մայիսյան ապստամբությունը Հայաստանում. 1920-1930 (հիշողությունների և դոկումենտների ժողովածու), Երևան, 1930, էջ 155-157:

[18] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, էջ 445:

[19] ՀԱԱ, ֆ. 201, ց. 2, գ. 151, թ. 2-4:

արտահանումն արգելելու հարցը, որոշում ընդունեց արգելել բոլոր տեսակի մասնագիտական գրքերի արտահանումը[20]:

Փաստորեն, Ս. Կասյանի «Ուր է ելքը» գիրքը և հայ բոլշևիկների՝ ՀՀ անկախ պետականության դեմ ուղղված թռուցիկները Հայաստանի Հանրապետությունում արգելվեցին, իսկ դրանք տարածողները ձերբակալվեցին: Մյուս օրինակը ՀԺԿ-ի «Քաղաքական մոմենտի մասին» բանաձևի՝ թռուցիկի տեսքով բազմացված օրինակն էր: Ինչպես տեսնում ենք, միայն պայմանական կերպով կարելի է խոսել ՀՀ օրոք արգելված գրականության, հատկապե՝ գրքերի մասին: Եղած մասնակի դեպքերը, մեկ բացառությամբ, հիմնականում առնչվում են կառավարության ջանքերին՝ հայ բոլշևիկների հակապետական, պետությունը հիմքից քանդելուն ուղղված քայլերը չեզոքացնելուն:

## Ամփոփում

Հայաստանի Հանրապետության շրջանում հրատարակչական բնագավառը գտնվում էր ներքին գործերի նախարարության իրավասության ներքո: Կառավարության անունից ՆԳՆ-ն հարաբերություններ էր պահպանում տպարանների հետ, հրահանգներ տալիս նրանց, հետևում գրքերի տարածմանը, հսկում, որպեսզի տպարանները հակապետական կոչեր ու թռուցիկներ չտպագրեն: Այդուհանդերձ, միշտ չէ, որ նախազգուշական միջոցառումները հաջողություն էին ունենում: Հոդվածում ցույց է տրվում, որ ՀՀ-ում «արգելված գրականությանը» վերաբերող օրինակները քաղաքական բնույթ ունեին: Դրանց հիմնական մասը վերաբերում է հայ բոլշևիկների հրատարակություններին. Սարգիս Կասյանի «Ուր է ելքը» գիրքը և հայ բոլշևիկների՝ ՀՀ անկախ պետականության դեմ ուղղված թռուցիկներն արգելվեցին, իսկ դրանք տարածողները ձերբակալվեցին: Մյուսը Հայ ժողովրդական կուսակցության «Քաղաքական մոմենտի մասին» 1919թ. սեպտեմբերի բանաձևի՝ թռուցիկի տեսքով բազմացված օրինակն էր:

*Բանալի բառեր և արտահայտություններ.* Հայաստանի Հանրապետություն, Երևան, արգելված գրականություն, գիրք, թռուցիկ, տպարան, բոլշևիկներ:

---

[20] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ, էջ 510:

# К ВОПРОСУ О НАЛИЧИИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ "ЗАПРЕЩЕННОЙ ЛИТЕРАТУРЫ" (1918-1920 ГГ.)

**Сукиасян Амо Каренович**
Канд. ист. наук, доцент НАН РА,научныи сотрудник
ЕРОА, кафедра Международных отношений, преподаватель

**Резюме**

В период Республики Армения издательская отрасль находилось под юрисдикцией Министерства внутренных дел. От имени правительства МВД поддерживал отношения с типографиями, инструктировал их, следил за распростронением книг, надзирал чтобы типографии не напечатали антигосударственные призывы и листовки. Но эти предупредительные мероприятия не всегда имели успех.

В статье показывается что в РА примеры "запрещенной литературы" имели политический характер. Их основная часть касается публикациям большевиков армян. Книга Саркиса Касяна "Где выход" и направленные против независимой государственности РА листовки были запрещены а их рапростронenители арестованы. Также был растиражированный в виде листовки сентябрский 1919-го года экземпляр резолюции Армянской народной партии "О политическом моменте".

*Ключевые слова и выражения:* Республика Армения, Ереван, запрещенная литература, книга, листовка, типография, большевики.

# ON THE ISSUE OF EXISTENCE OF "BANNED LITERATURE" IN THE REPUBLIC OF ARMENIA (1918-1920)

**Hamo Sukiasyan**
PhD in History, Associate Professor NAS RA, Scientific worker
EREA, Chair of International Relations, Lecturer

**Summary**

In the Republic of Armenia, publishing industry was under the jurisdiction of the Ministry of Internal Affairs. On behalf of the

government, the Ministry of Internal Affairs was maintaining relations with the printing houses, giving instructions to them and following the distribution of books, inspecting the printing houses not to print anti-state calls and leaflets. Nevertheless, precautions were not always successful.

The article shows that the examples of "banned literature" in the Republic of Armenia were of political nature. Most of them refer to the publications by the Armenian Bolsheviks: "Where is the gate?" by Sargis Kasyan and leaflets by Bolsheviks against the independent statehood of the Republic of Armenia were prohibited, and those who distributed them were arrested. Examples of leaflets copied from the resolution “On a Political Moment” accepted by the Armenian Democratic Party in September 1919 were also forbidden. Examples of leaflets copied from the resolution “On a Political Moment” accepted by the Armenian Democratic Party in September 1919 were also forbidden.

*Keywords and phrases*: Republic of Armenia, Yerevan, banned literature, book, leaflet, printing house, bolsheviks.

:

# ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՏՄ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

***Ռոման Սեդրակի Մելիքյան***
*քաղ.գիտ.թեկն.*
*ԵԿՏԱ, Միջազգային հարաբերությունների ամբիոն, դասախոս*

Թեպետ ՀՀ-ն ավելի քան երկու տարի է, ինչ դե-յուրե հանդիսանում է Եվրասիական տնտեսական միության պաշտոնական լիրավ անդամ-երկիր, այնուամենայնիվ, գիտական և փորձագիտական տարբեր գնահատականների համաձայն՝ ՀՀ-ն փաստացի գտնվում է դեռևս անդամագրման-ինտեգրման ճանապարհին՝ ունենալով բազմաթիվ արտաքին նշանակության հնարավոր վտանգներ և այլ մարտահրավերներ: Ըստ այդմ, ինչպես նշում է հայ տնտեսագետ, տնտեսագիտության դոկտոր Ա. Թավադյանը՝ դրանք հիմնականում բխում են ներքին ճգնաժամից և անհամապատասխանություններից՝ մեծապես կապված անհամաձայնեցված արտաժույթային քաղաքականության և բավական մեծ գնաճի մակարդակի հետ {1}: ԵՏՄ անդամ-երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, ի սկզբանե գերակայում էին տնտեսության կառուցվածքային խնդիրները, որոնց ավելացան նաև ինտեգրատիվ հիմնախնդիրները, հատկապես՝ հակառուսական պատժամիջոցները և նավթի գները: Տնտեսության բավական թույլ դիվերսիֆիկացված լինելը և նորարարությունների ոլորտի զարգացման թերի վիճակը Ռուսաստանում և Ղազախստանում, որոնց ընդհանուր ՀՆԱ-ն կազմում է ԵՏՄ երկրների ՀՆԱ-ի 95%-ը, չափից շատ կախված են ածխաջրածնային հումքից: Արտարժույթով բյուջեի եկամուտների կրճատումը, գնողունակության մակարդակի նվազումը, ռուբլու անկումը և ներդրումների ծավալների կրճատումը Ռուսաստանում հանգեցրեցին այդ երկրից Հայաստան տրանսֆերտների աճի նվազմանը, որը կենսական նշանակություն ունի ՀՀ տնտեսության համար: Այդ առումով, ՀՀ-ի համար, ըստ երևույթին, կարևոր է իրականացնել տնտեսական քաղաքականության առաջնահերթությունների վերաիմաստավորում, նպատակների հստակեցում և տնտեսական կառավարման ենթակառուցվածքների համապատասխանեցում, հատկապես՝ ԵՏՄ երկրների հետ տնտեսական զարգացման նոր մոդելի մշակում և ներդրում, ակնկալվող արդյունքների կանխատեսում: Այդ տեսակետից, հարկ է նշել, որ Եվրասիական տնտեսա-

կան միության շրջանակում կազմավորվում է Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հետ Հայաստանի փոխգործակցության հարցերի աշխատանքային խումբը {2}: Այն հատկապես կարևոր է այդ կազմակերպության շրջանակներում ՀՀ-ի կողմից ստանձնած պարտականությունների և սահմանակարգերի առումով: Հայաստանը ԱՀԿ անդամակցությամբ ստանձնել է բոլոր ապրանքների մաքսատուրքերի որոշակի սահմանաչափերը չգերազանցելու պարտավորություններ: ԵՏՄ անդամակցությամբ Հայաստանի ապրանքների մի մասի մաքսատուրքերը փոխվելով, գերազանցում են նշված սահմանաչափերը: ԱՀԿ ընթացակարգերի և ընդունված գործելակերպի համաձայն՝ մաքսատուրքերի փոփոխությունների վերաբերյալ երկկողմ բանակցություններ կընթանան միայն այն ԱՀԿ անդամների հետ և այն ապրանքատեսակների մասով, որոնց համար այդ երկրները կունենան բանակցային իրավունք և կներկայացնեն համապատասխան ցանկություն: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ԵՏՄ-ն ԱՀԿ-ում ներկայացված չէ, այն դեպքում, երբ Հայաստանը հանդիսանում է ԱՀԿ անդամ: Մյուս կողմից, գործող մաքսատուրքերի դրույքաչափերի փոփոխությունները հանդիսանում են ԵՏՄ իրավասության հարց և ոչ՝ ԵՏՄ առանձին անդամների: Հետևաբար, ԱՀԿ գործընացներում ներկայացված է Հայաստանը՝ որպես ԱՀԿ անդամ, և գործընթացում, ընդհանուր առմամբ, որևէ ձևաչափով, կարելի է ասել, ներգրավված է նաև ԵՏՄ-ն՝ որպես հարցի առնչությամբ իրավասու կառույց: Այդ ընդհանուր դիտակետից ելնելով, ըստ էությամբ, պետք է կանոնակարգվի ԵՏՄ անդամ-երկրների արտաքին տնտեսական հարաբերությունները և զարգացման հեռանկարները, այդ թվում նաև ՀՀ-ի համար: Միևնույն ժամանակ բավական խոստումնալից և միաժամանակ բազմաբովանդակ մարտահրավերներ է իրենից ներկայացնում ԵՏՄ-Չինաստան փոխգործակցության հետագիծը: Դեռևս 2015թ. փետրվարին՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական գործարկումից ընդամենը մեկ ամիս անց, Չինաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Անդրեյ Դենիսովը հայտարարեց ազատ առևտրի գոտի ստեղծելու՝ կողմերի ունեցած մտադրության մասին: Ե՛վ Չինաստանը, և՛ Ռուսաստանը եվրասիական տարածաշրջանում առավել խորը ինտեգրման ջատագովներ են, սակայն երկուսն էլ ունեն ինտեգրման վերաբերյալ սեփական պատկերացումները: Ռուսաստանի դեպքում ինտեգրացիոն գործընթացները

ծավալվում են ԵԱՏՄ համատեքստում, իսկ ահա Չինաստանը 2013թ.-ից հետևում է նախագահ Սի Ծինփինի առաջ քաշած «Մետաքսի ճանապարհի» դոկտրինին: Երկու դեպքում էլ նպատակը եվրասիական տարածաշրջանի երկրներում տնտեսական փոխկապվածության և փոխկախվածության խորացումն է հօգուտ այս երկրների տնտեսական ու աշխարհաքաղաքական շահերի: Այս համատեքստում գոնե մեկ տեսանկյունից երկու ծրագրերի նպատակները համընկնում են, և դեպքերի զարգացման օպտիմալ սցենար է դառնում ազատ առևտրի համաձայնագրի կնքումը: Ուստի և հետաքրքրական է դառնում այն հարցը, թե ինչպիսի տնտեսական հետևանքներ կարող է ունենալ այսպիսի համաձայնագրի կնքումը Եվրասիական տնտեսական միության և, մասնավորապես, Հայաստանի համար:

ԵԱՏՄ-ն և Չինաստանը աշխարհագրական առումով հարևան և փոխկապված երկու ռեգիոններ են, և այդպիսով կողմերի միջև պատմականորեն ձևավորվել են կայուն և սերտ առևտրային կապեր: Ստորև ներկայացված է գրաֆիկ, որն արտացոլում է ԵԱՏՄ անդամ երկրների ընդհանուր արտահանման մեջ դեպի Չինաստան կատարվող արտահանման մասնաբաժինները (Տե՛ս՝ Գրաֆիկ 1):

Գրաֆիկ 1. ԵՏՄ երկրների դեպի Չինաստան կատարվող արտահանման մասնաբաժինները




Ինչպես երևում է գրաֆիկից, վերջին տարիների ընթացքում ԵԱՏՄ անդամ երկրներից միայն Հայաստանն է գրանցել դեպի Չինաստան արտահանման ծավալների շարունակական աճ: Այս իրավիճակում թվում է, թե ազատ առևտրի համաձայնագիրը կդառնա հենց այն գոր-

ծիքը, որով կարելի է մեծացնել Հայաստանից արտահանման ծավալները և լուծել մի շարք տնտեսական խնդիրներ: Սակայն թվերը ևս կարող են խաբուսիկ լինել, քանզի դեպի Չինաստան արտահանման մասնաբաժնի աճ գրանցվել է ոչ թե արտահանման բացարձակ աճի հաշվին, այլ դեպի ուրիշ երկրներ արտահանման շեշտակի կրճատման հաշվին: Բանը նրանումն է, որ Ռուսաստանի տնտեսության անկման ու ռուբլու արժեզրկման արդյունքում ՀՀ-ից դեպի ՌԴ արտահանման կտրուկ կրճատում է եղել, և այդ պայմաններում Չինաստանի տեսակարար մասնաբաժինն աճել է, մինչդեռ բացարձակ առումով արտահանումը 2014թ. 414 մլն ԱՄՆ դոլարից կրճատվել է՝ 2015թ. հասնելով 315 մլն ԱՄՆ դոլարի: Զուգահեռաբար խորանում է նաև Հայաստանից դեպի Չինաստան կատարվող արտահանման ապրանքային միատեսակությունը: 2015թ. արտահանման 99.36%-ն ապահովվել է հանքաքար, խարամ և մոխիր ապրանքախումբը: Այս ոլորտը արդյունահանող արդյունաբերության քիչ ավելացված արժեք ստեղծող ոլորտներից է, ուստի իրատեսական չէ ակնկալել, որ այս ապրանքախմբի արտահանման ավելացման հաշվին հնարավոր է էական շահույթներ ստանալ և ապահովել բյուջետային լրացուցիչ մուտքեր: Ավելին, նմանատիպ ապրանքների արտադրության ավելացումը մտահոգիչ կարող է լինել շրջակա միջավայրին հասցվող վնասների առումով: Միաժամանակ ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքում գերակշռող են մնում այնպիսի ապրանքատեսակները, ինչպիսիք են սննդեղենը և գյուղատնտեսական հումքը (28.56%), հանքանյութերը (27.1%) և թանկարժեք քարերն ու մետաղները (20.4%) {3}: Բոլոր այս ոլորտներում Չինաստանը համաշխարհային շուկայի կարևորագույն մատակարարներից է, և եթե նկատի ունենանք ՀՀ-Չինաստան տրանսպորտային ենթակառուցվածքների թերզարգացվածությունը, ապա կարելի է արդարացիորեն նշել, որ ԵԱՏՄ-Չինաստան ազատ առևտրի համաձայնագիրը հազիվ թե օգնի այս ոլորտների հայրենի արտադրողներին մտնել չինական շուկա: Սրան զուգահեռ՝ վերջին տարիներին ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներում մեծանում է Չինաստանից կատարվող ներմուծման մասնաբաժինը: Չինական էժան ապրանքները կարողանում են հեշտորեն դուրս մղել ազգային արտադրողներին ներքին շուկայից՝ վնասելով հայրենական արտադրությանը: ՀՀ-ում ևս Չինաստանից ներմուծման ծավալները բավականին կայուն են և, ի տարբերություն արտահանման ապրանքային

կառուցվածքի, բավականին դիվերսիֆիկացված են: Հետևաբար, հավանական է, որ ազատ առևտրի համաձայնագրի կնքման պարագայում մի շարք ապրանքատեսակներով չինական արտադրողները սկսեն հայկական շուկայից դուրս մղել տեղական արտադրողներին: Այս պայմաններում հարց է առաջանում, թե արդյո՞ք մաքսատուրքերի զրոյականացում նախատեսող ազատ առևտրի համաձայնագիրը բխում է ՀՀ կամ ԵՏՄ շահերից: Սխալ կլինի ակնկալել, որ ազատ առևտրի համաձայնագիրը թույլ կտա մեծացնել ՀՀ-ից արտահանման ծավալները և կապահովի նոր աշխատատեղերի ստեղծում: Ընդհակառակը, առավել հավանական է, որ չինական էժան ապրանքները, որոնք այսօր գերմրցակցային են համաշխարհային շուկայում, կկարողանան հեշտորեն դուրս մղել ազգային արտադրողներին շուկայից և էլ ավելի կբարձրացնեն գործազրկության մակարդակը: Անպատեհ չի լինի այս համատեքստում դիտարկել ԵՄ օրինակը: Եվրամիությունը Չինաստանի խոշորագույն առևտրային գործընկերն է, իսկ Չինաստանը՝ ԵՄ-ի երկրորդ ամենախոշոր գործընկերը: Չնայած դրան, որ ԵՄ-ն ունի համեմատաբար կայուն տնտեսություն և զգալի մրցակցային առավելություններ արտաքին առևտրում, Եվրահանձնաժողովը շարունակ հետաձգում է Չինաստանի հետ ազատ առևտրի համաձայնագրի կնքումը՝ այդպիսով պաշտպանելով ընդհանուր շուկան չինական էժան ապրանքների ներհոսքից և դրանից բխող բոլոր բացասական տնտեսական հետևանքներից: Տնտեսական զարգացման գոնե արդի մակարդակում սխալ չէր լինի հետևել ԵՄ օրինակին: Ե՛վ Հայաստանը, և՛ ԵՏՄ անդամ այլ երկրները պետք է նախևառաջ կենտրոնացնեն ուշադրությունն իրենց երկրների ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացման և իրենց ազգային արտադրողներին աջակցելու վրա, քանզի ինտեգրացիոն գործընթացների խորացումից օգուտներ կարող են ապահովել միայն այն երկրները, որոնք ունեն բարձր մրցակցային և կայուն ազգային տնտեսություն {4}:

**Այսպիսով, ԵՏՄ-ին ՀՀ անդամակցության պարագայում առաջ են քաշվում հետևյալ արտաքին խնդիրներն ու մարտահրավերները.**

- Ընդհանուր սահմանի բացակայությունը նշանակում է, որ ՀՀ և ԵՏՄ անդամ երկրների միջև ապրանքաշրջանառությունն իրականացվում է երրորդ երկրի կամ երկրների միջոցով և ենթարկվում է մաքսային ձևակերպումների, ինչը շատ բարդ իրավիճակներ կարող է

ստեղծել, հատկապես՝ աշխարհաքաղաքական բավական լարված գործընթացների պայմաններում:

➢ ՀՀ-ում և ԵՏՄ անդամ երկրներում մաքսատուրքերը ձևավորված են տարբեր սկզբունքներով: ՀՀ-ն, չունենալով բնական պաշարներ, իր արտաքին քաղաքականությունը ձևավորել է ներմուծող ռեսուրսների նկատմամբ ցածր մաքսատուրքերի կիրառման սկզբունքով, իսկ ԵՏՄ անդամ երկրները, որոնք ունեն բնական պաշարներ, իրենց շուկաները պաշտպանելու նպատակով սահմանել են ներմուծվող ռեսուրսների նկատմամբ բարձր մաքսատուրքեր: Ինտեգրվելով ԵՏՄ-ին՝ ՀՀ-ն պարտավորվում է նույնպես բարձրացնել իր մաքսատուրքերը, ինչը չի բխում ՀՀ ներկա առևտրատնտեսական շահերից: Ուստի հայկական կողմի համար նպաստավոր և շահեկան կլինի սույն օրենքը հայանպաստ դարձնելու հրամայականը ոչ միայն հրատապ դարձնել, այլ նաև կոնկրետ հասնել ի շահ հայկական պետության որոշումների կայացմանը, ինչը հնարավոր է մեծապես միասնության անդամ-երկրների հետ փոխշահավետ քաղաքականության իրացման պայմաններում:

➢ ՀՀ առևտրատնտեսական դաշտը կարգավորող օրենսդրությունը տարիներ շարունակ համապատասխանեցվել է ԵՄ օրենսդրությանը, իսկ ԵՏՄ անդամ երկրներինը՝ ոչ: Անդամակցելով ԵՏՄ-ին՝ ՀՀ-ն պարտավորվում է կիրառել ԵՏՄ-ում գործող օրենքները, որոնք շատ դեպքերում հիմնված են այլ սկզբունքների վրա, մասնավորապես՝ ՀՀ-ն չէր կիրառում ապրանքների պարտադիր ստանդարտացման մոտեցումներ, այլ կիրառում էր տեխնիկական կանոնակարգման մոտեցումներ: Նույնը կարելի է ասել նաև Սանիտարական և ֆիտոսանիտարական պահանջների վերաբերյալ, որոնք ՀՀ-ում և ԵՏՄ-ում հիմնված են տարբեր սկզբունքների վրա:

➢ ՀՀ-ում և ԵՏՄ-ում զգալի տարբերվում են տնտեսական գործունեությամբ զբաղվելու թույլտվությունների համակարգերը: ՀՀ-ն որդեգրել էր ազատական քաղաքականություն, իսկ ԵՏՄ անդամ երկրներում դեռ գործում է հսկողական մոտեցումը, մասնավորապես՝ արտաքին-տնտեսական գործունեությամբ զբաղվելը ԵՏՄ երկրներում հանդիսանում է թույլտվության առարկա:

➢ Այլ երկրների հետ ՀՀ առևտրատնտեսական պայմանագրերը կարող են մնալ ուժի մեջ միայն այն դեպքում, եթե ԵՏՄ անդամ երկները նույնպես ունենան նման պայմանագրեր, ինչը նշանակում է, որ

ՀՀ-ն ԵՏՄ-ին վերջնական ինտեգրվելուց հետո չի կարողանալու ինքնուրույն վարել առևտրատնտեսական բանակցություններ: Այդ բանակցությունները կարող են իրականացվել միայն ԵՏՄ դրոշի ներքո: Հետևաբար, նման դեպքերում նպատակահարմար է օրենսդրական նման բացթողումների պարագայում ցուցաբերել սեփական նախաձեռնություն և հասնել հայանպաստ որոշումների կայացմանը:

➢ Հանդիսանալով ԱՀԿ անդամ երկիր՝ ՀՀ-ն ներկայանում էր այդ կազմակերպությունում որպես առանձին միավոր և իր դրոշի ներքո մասնակցում էր այդ կազմակերպության որոշումների կայացմանը: Անդամակցելով ԵՏՄ-ին՝ ՀՀ-ն նախ պարտավորվում է վերաբանակցել իր իսկ ստանձնած պարտավորությունները և այսուհետ ԱՀԿ-ին ներկայանալ:

➢ ԵՏՄ-ին անդամակցելով՝ ՀՀ-ն մեծ հաշվով զրկվել է ինքնուրույն արտաքին առևտրատնտեսական քաղաքականություն իրականացնելու հնարավորությունից՝ պատվիրակելով այդ իրավունքը ԵՏՄ խորհրդին:

➢ ԵՏՄ-Չինաստան համագործակցության շրջանակներում ազատ գոտու ստեղծումն ունի ինչպես իր դրական, այնպես էլ բացասական կողմերը: Սակայն, հիմնվելով ԵՄ-Չինաստան փոխգործակցության գործոնի վրա՝ փորձը ցույց է տալիս, որ նպատակահարմար է ազատ գոտու ստեծղման հեռանկարները ԵՏՄ-Չինաստան շրջանակների համար երկարաձգել:

**Ամփոփում**

Եվրասիական ինտեգրման առաջին իսկ օրվանից ի վեր Հայաստանի Հանրապետության առջև աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական բազում մարտահրավերներ են գոյացել, որոնցից առավել կարևորներից մեկը մինչ օրս շարունակում է մնալ հետևյալ հարցը. որքանո՞վ են արդարացված ԵՏՀ-ում Հայաստանի Հանրապետության ինտեգրման գործընթացները և ինչպիսի՞ն են դրանց արդյունավետ գործունեության հեռանկարները: Սույն գիտական հոդվածում իրականացվում է բազմակողմանի տնտեսաքաղաքական վերլուծություն՝ կապված այդ կազմակերպությունում Հայաստանի Հանրապետության ինտեգրացիայի հետ: Այդ նպատակին հասնելու համար կիրառվում են ինչպես ինտեգրացիայի, այնպես էլ դեինտեգրացիայի գործընթացների համար նախատեսված անհրաժեշտ գործիքներն ու մոտեցումները:

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

*Բանալի բառեր՝* ԵՏՄ, ԵՄ, ՌԴ, ՀՀ, ինտեգրում, անդամագրում, Չինաստան, մարտահրավերներ:

**Գրականություն**

1. См. Тавадян А. Перед ЕАЭС стоят внешние и внутренние вызовы-эксперт. Общественное радио Армении. - http://www.armradio.am/ru/2015/12/26/%D0%BF%D0%B5%D1%80%D0%B5%D0%B4-%D0%B5%D0%B0%D1%8D%D1%81-%D1%81%D1%82%D0%BE%D1%8F%D1%82-%D0%B2%D0%BD%D0%B5%D1%88%D0%BD%D0%B8%D0%B5-%D0%B8-%D0%B2%D0%BD%D1%83%D1%82%D1%80%D0%B5%D0%BD%D0%BD%D0%B8%D0%B5/ (25.09.2017):
2. Տե՛ս՝ Հայաստան-ԱՀԿ հարցերի աշխատանքային խումբը ԵՏՄ-ում արդեն ստեղծվում է. «News.am» լրատվական գործակալություն. - https://news.am/arm/news/245927.html (21.09.2017):
3. Տե՛ս՝ ՀՀ արտաքին առևտուրն ըստ ապրանքների. ՀՀ մաքսային պետական կոմիտեի պաշտոնական վեբ-կայք. - http://www.customs.am/Content.aspx?itn=csCIForeignTradeByProducts (11.10.2017):
4. Մանուկյան Ա. ԵԱՏՄ-Չինաստան ազատ առևտրի գոտու վտանգները. Իրազեկ քաղաքացիների միավորում. «GALATV» լրատվական գործակալություն. - http://galatv.am/hy/your-voice/166998/ (23.09.2017):

## ВНЕШНИЕ ВЫЗОВЫ РА В РАМКАХ ИНТЕГРАЦИИ В ЕЭС

**Меликян Роман Седракович**
канд. полит. наук,
ЕРОА, кафедра Международных отношений, преподаватель

**Резюме**

С самого начала евразийской интеграции перед Республикой Арменией стоял целый ряд вызовов геополитического и геоэкономиче-

ского мира, среди которых важным до сих пор остается вопрос, требующего всестороннего осмысления: насколько обоснованными могут быть интеграционные процессы Республики Армения в ЕЭС и каковы перспективы ее эффективного функционирования? В данной статье проводится всесторонний политико-экономический анализ продуктивности интеграции армянской республики в данную организацию. Для достижения данной цели используются инструментарии исследования процессов как самой интеграции, так и деинтеграции.

*Ключевые слова:* ЕЭС, ЕС, РФ, РА, Интеграция, Регистрация, Китай, Вызовы.

## EXTERNAL CHALLENGES OF THE RA IN THE FRAMEWORK OF INTEGRATION TO EEU

**Roman Melikyan**
Ph.D in politics.,
EREA, Chair of International Relations, Lecturer

### Summary

At the beginning of the Eurasian integration the Republic of Armenia had a number of challenges of the geopolitical and geo-economic directions. One of them with the important issue still remains requiring a comprehensive interpretation: how justified are integration processes of the Republic of Armenia in Eurasian Economic Union and what are the prospects for its effective functioning? This article provides a comprehensive political and economic analysis of the effectiveness of the integration of the Republic of Armenia in this organization. To achieve this goal the process analysis tools are used both integration and de-integration.

*Keywords:* EEU, EU, RF, RA, Integration, Enrollment, China, Challenges.

# ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Աննա Վաչիկի Գրիգորյան***
*ՀՀ ԳԱԱ, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի*
*և իրավունքի ինստիտուտ, հայցորդ*

Ընդունելով, որ խորհրդարանական դիվանագիտությունն այլևս իրականություն է, այլ ոչ թե պարզապես գիտական բանավեճի առարկա դիվանագիտության ոլորտի հնարավոր զարգացումների վերաբերյալ՝ քաղաքական գործիչներն ու հետազոտողները փաստում են, որ այն գործառում է առեղծվածով. դիվանագիտությունը փաստացիորեն շարունակում է մնալ գործադիր իշխանության գործառույթը, միևնույն ժամանակ այն դաշտ է, որից խորհրդարանը լիովին բացառված չէ: Սա առեղծված է, քանզի դիվանագետը «ծառայության մեջ է» կառավարությունում, մինչդեռ խորհրդարանականն ազատ է արտահայտվելու և կաշկանդված չէ գործադիր պարտավորություններով[1]: Արդյունքում ինչպիսի՞ դիրք է զբաղեցնում խորհրդարանական դիվանագիտությունն ավանդականի նկատմամբ, ի՞նչ առանձնահատկություններով և լրացուցիչ առավելություններով է օժտված, և ինչո՞վ կարող է խորհրդարանն առհասարակ արդարացնել իր միջամտությունը մի ոլորտի, որն ավանդաբար համարվել է գործադիր իշխանության բացառիկ առանձնաշնորհը: Դիվանագիտության հետ կապված այս լարվածությունը գործադիրի և խորհրդարանի միջև եղել և շարունակում է մնալ խորհրդարանական դիվանագիտությանն առնչվող բազմաթիվ բանավեճերի հիմնական լեյտմոտիվը:

«Պետք է խոստովանեմ, որ երբ Մալթայի արտաքին գործերի նախարարն էի, խորհրդարանական դիվանագիտությանը նայում էի այլ կերպ, քան այն ինձ ներկայանում է այսօր, երբ Մալթայի խորհրդարանի խոսնակն եմ: Արտգործնախարար եղած ժամանակ խորհրդարանական դիվանագիտությունն ինձ սկզբնապես թվում էր ներխու-

[1] Frendo M. Parliamentary Diplomacy and Cultural Constraints. Dubrovnik, Croatia, 24-26 May 2012. P. 3.Available at: file:///C:/Users/Publish%20User1/Downloads/Parliamentary%20Diplomacy%20and%20Cultural%20Constraints.pdf. (Last accessed 30.05.2016. 10:15).

ժում դիվանագիտության բացառիկ ոլորտ, որը վերապահված է պետության ու արտաքին գործերի նախարարի կողմից ղեկավարվող ազգային դիվանագիտական կորպուսին: Դա, անշուշտ, պարզամիտ պատկերացում էր և ոչ ճիշտ. ավելի ուշ ես հասկացա, որ նա, ով ընդհանուր առմամբ ընկալվում է իբրև մրցակից, կարող է դառնալ նաև հզոր դաշնակից»,- 2012թ. մայիսին Դուբրովնիկ քաղաքում (Խորվաթիա) անցկացված «Դիվանագիտությունը և միջմշակութային երկխոսությունը» թեմայով ֆորումում հայտարարել էր Մալթայի խորհրդարանի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Մ. Ֆրենդոն[2]: Անդրադառնալով խորհրդարանական դիվանագիտության առանձնահատկություններին և առավելություններին՝ խոսնակը նշել էր. «Խորհրդարանականները կարող են հանրության աչքից ավելի հեռու գործել, քան գործադիրի անդամները: Նրանք ավելի հեշտությամբ կարող են «կոտրել սառույցը», նախապատրաստել ու հարթել ճանապարհ:… Այն դեպքում, երբ ավանդական դիվանագիտությունը հանդիսանում է պետական թագավորության գլուխը, սահմաններից այն կողմ գտնվող խորհրդարանական միջոցներն առանձնապես կարևոր են այդ գլուխը սառը պահելու և դիվանագիտական բանավեճերի հետ կապված կրքերը հանդարտեցնելու համար»[3]: Ըստ Մ. Ֆրենդոյի՝ խորհրդարանական դիվանագիտությունը շատ արդյունավետ է բոլոր այն երկկողմ հարցերում, որոնցում խորհրդարանականներն ու դիվանագետներն ունենում են նույն դիվանագիտական ուղերձը, և որտեղ խորհրդարանականները կարող են դառնալ անդրկուլիսյան դիվանագիտության կարևոր աղբյուր՝ լավագույն դրսևորումներով[4]:

Իսպանացի քաղաքական գործիչ Պ. Գարսիա-Էսկուդերո Մարկեսը նշում է խորհրդարանական դիվանագիտության հետևյալ առանձնահատկությունները.

- խորհրդարանականների կողմից օգտագործվող մեթոդները պակաս ձևական բնույթ են կրում, ինչը հեշտացնում է արտաքին քաղաքականության որոշ հարցերի լուծումը,

---

2 Frendo M. Parliamentary Diplomacy and Cultural Constraints. Dubrovnik, Croatia, 24-26 May 2012. P. 1.Available at: file:///C:/Users/Publish%20User1/Downloads/Parliamentary%20Diplomacy%20and%20Cultural%20Constraints.pdf. (Last accessed 30.05.2016. 09:30).

3 Նույն տեղում:

4 Նույն տեղում:

- խորհրդարանական պատվիրակությունները, իբրև կանոն, բաղկացած են խորհրդարանում ներկայացված տարբեր քաղաքական խմբերի ներկայացուցիչներից՝ ներկայացուցչական բազմակարծություն, որը հարստացնում է արտաքին փոխգործակցությունը,
- լրացնում է դասական դիվանագիտությանը, որի հետ նա պարտավոր է համագործակցել՝ չմոռանալով, որ գործադիր իշխանությունն է պատասխանատու արտաքին քաղաքականության ուղղորդման համար,
- ունի հասանելիություն այն հարցերին, որոնք մատչելի չեն կառավարությանն իր ֆորմալ կապերում, ուստի հաճախ ծառայում է իբրև նախնական քայլ,
- կարող է ծառայել իբրև գործադիր իշխանության վերահսկողության գործիք,
- կայունությունը երկրի կառավարության մեջ հնարավոր փոփոխությունների նկատմամբ,
- հարում է ժողովրդավարական սկզբունքներին ու գաղափարներին, ինչը միանգամայն հասկանալի է՝ հաշվի առնելով խորհրդարանական այն ինստիտուտները, որոնցից ծագում է,
- և վերջապես, խորհրդարանի արտաքին քաղաքական գործունեությունը բնորոշվում է նրանով, որ հաշվի է առնում ոչ միայն պետության, այլ նաև միջազգային հանրության շահը[5]:

«Խորհրդարանական դիվանագիտության կարևոր առանձնահատկություններից է նաև, որ այն իր տրամադրության տակ ունի հատուկ քաղաքական մեխանիզմներ և ինստիտուտներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կերպով ազդել իրենց կառավարությունների արտաքին քաղաքական որոշումների վրա: Ի տարբերություն ավանդական դիվանագիտության՝ խորհրդարանական դիվանագիտությունն ավելի ազատ է և կաշկանդված չէ կառավարական տարատեսակ հրահանգներով»,- Եվրոպական սենատների ասոցիացիայի՝ 2010թ. ապրիլին Հռոմում տե-

[5] García-Escudero Márquez P. Diplomacia y Cooperación Parlamentarias: Las Cortes Generales. Asamblea: Revista Parlamentaria de la Asamblea de Madrid, No. 19 (2008). pp. 5-6. Disponible en: http://www.asambleamadrid.es/RevistasAsamblea/ASAMBLEA%2019%20COMPLETA.pdf. (última visitada 31.06. 2016 14:30).

ղի ունեցած «Խորհրդարանական դիվանագիտության զարգացումը 21-րդ դարում. սենատորների դերը» թեմայով նիստում նշել էր ՌԴ Դաշնության խորհրդի նախագահ Սերգեյ Միրոնովը: Ամենագլխավորն, ըստ Ս. Միրոնովի, այն է, որ թեև խորհրդարանականները չունեն հավատարմագրեր, նրանք ունեն ոչ պակաս ծանրակշիռ մանդատ՝ ընտրողների, այսինքն՝ իրենց պետությունների ժողովուրդների մանդատը[6]:

Ավանդական և խորհրդարանական դիվանագիտության տարբերությանն անդրադառնալով՝ ՌԴ Պետդումայի միջազգային գործերի կոմիտեի նախագահ Դ. Ռոգոզինը նշել էր. «Խորհրդարանական դիվանագիտության հիմնական գործընկերները խորհրդարաններն են, այլ ոչ թե նախագահները և գործադիր իշխանությունը: Խորհրդարանականներն՝ իբրև արտաքին քաղաքականություն իրականացնողներ, ոչ մի դեպքում չեն կրկնօրինակում ԱԳՆ-ի աշխատանքը, բայց լուծում են որոշակի խնդիրներ իրենց, կարելի է ասել «հորիզոնական» մակարդակում»[7]:

«Խորհրդարանը քաղաքական մարմին է. որոշումներն ընդունվում են խմբակցությունների կողմից կազմված մեծամասնությամբ: Իրենց գործունեության բնույթով և ընտրազանգվածի առաջ ունեցած պարտավորություններից ելնելով՝ պատգամավորները խորհրդարանի հանձնաժողովների (այդ թվում և միջազգային) նիստերում պետք է անցկացնեն համապատասխան գիծ, քանզի այդ լիազորությունը նրանց փոխանցվել է բնակչության այն խմբերի կողմից, որոնց նրանք ներկայացնում են»,- նշում են ռուս տեսաբաններ Յու. Կոսովն ու Վ. Տորոպիգինը՝ ընդգծելով, որ դրանում է էական տարբերությունը գաղափարապես չեզոք գործադիր իշխանությունից, որն իր գործունեության մեջ չի բախվում միևնույն հարցի նկատմամբ տարբեր մոտեցումների (երբեմն՝ տրամագծորեն հակառակ) համաձայնեցման խնդրին: Դա կարևորագույն առանձնահատկություններից մեկն է[8]: «Մյուս կող-

6 Официальный сайт Совета Федерации Федерального Собрания Российской Федерации. «Сергей Миронов: Межпарламентские форумы все увереннее заявляют о себе в глобальной и региональной политике».[Электронный ресурс]: Режим доступа: http://www.council.gov.ru/events/news/19256/. (Дата обращения: 20.02.2016 г. 18:00).

7 Руглый стол #26. Парламентская дипломатия. ». Дата публикации: 5 Июня 2002. [Электронный ресурс]: Режим доступа: http://old.russ.ru/politics/20020605-stol.html. (Дата обращения: 19.09.2017 г. 10:00).

8 Косов Ю. В. Торопыгин А.В. Содружество независимых государств институты, интеграционные процессы, конфликты и парламентская дипломатия. М. 2009. с.191.

միջ, պետության պաշտոնական դիրքորոշման հետ ոչ այդքան սերտ կապը տալիս է բանակցություններում մանևրելու հնարավորություն»,- նշում են հեղինակները և հիշեցնում, որ հենց խորհրդարանականներն առաջին անգամ նստեցին ԼՂ հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցությունների սեղանի շուրջ, քանզի կառավարական կառույցների չափազանց կոշտ դիրքորոշումը թույլ չէր տալիս նման առաջին քայլն անել[9]:

2011թ. Նոր Դելիի Ջավահարլալ Ներուի անվան համալսարանում «Խորհրդարանական դիվանագիտության հնարավորություններն ու առավելությունները» վերնագրով իր զեկույցի շրջանակներում Ավստրիայի Ազգային խորհրդի նախագահ Բարբարա Պրամմարը ևս՝ իբրև խորհրդարանական դիվանագիտության էական առանձնահատկություն, նշել էր նրա մեծ ճկունությունն ու բաց բնույթը. «Պատգամավորները չունեն արարողակարգային սահմանափակումներ, դրանով իսկ պարտադրված չեն սեփական երկրի, հետևաբար և իրենց կառավարության պաշտոնական դիրքորոշումը ներկայացնել: Հենց այդ պատճառով խորհրդարանական դիվանագիտությունը ժողովուրդների միջև ուղիղ կապ հաստատելու լավագույն հնարավոր այլընտրանքն է»[10]:

2012թ. հոկտեմբերին Կանադայի Քվեբեկ քաղաքում խորհրդարանական դիվանագիտության դերին նվիրված «կլոր սեղան»-ի ժամանակ Հնդկաստանի ներկայացուցիչն ընդգծել էր, որ խորհրդարանականների դիվանագիտական նախաձեռնությունները չպետք է դիտարկել ճիշտ նույն կերպ, ինչ պետական դիվանագիտության հովանու ներքո իրականացվողները. «Չնայած երկուսն էլ ունեն իրենց սահմանափակումները՝ վստահությունը, հարգանքն ու փոխադարձությունն անհրաժեշտ են, մասնավորապես, խորհրդարանական դիվանագիտություն իրականացնելիս»[11]: Նույն «կլոր սեղան»-ի ընթացքում

---

9 Косов Ю. В. Торопыгин А.В. Содружество независимых государств институты, интеграционные процессы, конфликты и парламентская дипломатия. М. 2009. с.191.

10 Parlamentarische Diplomatie wird zunehmend wichtiger. NR-Präsidentin Prammer zu Gast an der Jawaharlal Nehru University. Die offizielle Website des Parlament der Respublik Österreich. Parlamentskorrespondenz Nr. 125 vom 08.02.2011. Verfügbar um: https://www.parlament.gv.at/PAKT/PR/JAHR_2011/PK0125/index.shtml.(Zuletzt aufgerufen 30.05.2016 10:40).

11 Summary records of the proceedings of the 127th IPU Assembly. Session I: Roundtable discussion: Multilateralism and the role of parliamentary diplomacy. Québec City

Քվեբեկի Ազգային ժողովի նախագահ Ջ. Շանյոնը նշել էր, որ խորհրդարանականններն օժտված են խոսքի ազատությամբ և անկախության որոշակի աստիճանով, ինչը մերձեցրել է նրանց՝ թույլ տալով ավելի անմիջականորեն և առավել մեծ ճկունությամբ հասկանալ թեմաներն ու լուծել հիմնախնդիրները՝ հավելելով, որ շնորհիվ իր անկախ, բազմակուսակցական բնույթի՝ խորհրդարանական դիվանագիտությունը բացառիկ և պարտադիր է[12]:

Այսպիսով, ի տարբերություն պաշտոնական դիվանագիտության, խորհրդարանական դիվանագիտությունը պակաս ֆորմալ բնույթ ունի: Դիվանագետը գործադիր իշխանության ներկայացուցիչն է, ով արտահայտում է պետության դիրքորոշումները: Խորհրդարանի անդամները, սակայն, քաղաքական գործիչներ են, ովքեր ցանկացած հարցի շուրջ կարող են ունենալ պետության պաշտոնական դիրքորոշման հետ համընկնող կամ չհամընկնող քաղաքական համոզմունքներ: Միջազգային երկխոսության մեջ նրանք ավելի ազատ են, կաշկանդված չեն դիվանագիտական արարողակարգով պայմանավորված սահմանափակումներով: Նման ճկունությունը խորհրդարանականներին թույլ է տալիս ավելի բաց բանավիճել օտարերկրյա գործընկերների հետ և առաջ քաշել միջազգային բարդ հիմնախնդիրների նորարարական լուծումներ: Շնորհիվ այս առավելությունների՝ քաղաքական գործիչների և հետազոտողների մեծ մասն արտահայտվում է խորհրդարանական դիվանագիտության օգտին՝ համարելով այն արժեքավոր լրացում դասական դիվանագիտության համար:

**«Խորհրդարանական դիվանագիտությունը կարող է լրացնել կառավարության դիվանագիտությանը, քանզի խորհրդարանի անդամները կարող են ավելի ճկուն լինել դիվանագիտական գործունեությանը մասնակցելիս»,- Խորհրդարանների գլխավոր քարտուղարների ասոցիացիայի՝ 2012թ. հերթական նիստում (Քվեբեկ, Կանադա) «Խորհրդարանական դիվանագիտություն՝ դիվանագիտություն ժողովրդավարական մանդատով» վերտառությամբ իր ծա-**

(Canada) 21-26 October 2012.p. 51. Available at: http://www.ipu.org/conf-e/127/sr.pdf. (Last accessed 02.06.2016. 14:20).

12 Summary records of the proceedings of the 127th IPU Assembly. Session I: Roundtable discussion: Multilateralism and the role of parliamentary diplomacy. Québec City (Canada) 21-26 October 2012.p. 46. Available at: http://www.ipu.org/conf-e/127/sr.pdf. (Last accessed 02.06.2016. 13:30).

**վալուն զեկույցի շրջանակներում նշել էր Նիդեռլանդների ներկայացուցիչ Գ. Համիլտոնը՝ ընդգծելով, որ խորհրդարանական դիվանագիտությունը ո՛չ կրկնօրինակում, ո՛չ էլ փոխարինում է ավանդական դիվանագիտությանը»[13]:**

«Խորհրդարանականներն ազատ են միջազգային շփումներում առավել կոշտ պահանջներ ներկայացնելու, քան կառավարության ներկայացուցիչներն են ի զորու անել դա»,- 2006թ. մայիսին Խորհրդարանի նախագահների եվրոպական համաժողովում (Թալին, Էստոնիա) նշել էր Շվեդիայի խորհրդարանի խոսնակ Բյորն ֆոն Սյուդովը՝ հավելելով, որ խորհրդարանականների ներդրումը հաճախ դիտվում է իբրև ողջունելի լրացում կառավարության ներկայացուցիչների աշխատանքին»[14]:

Ըստ մեքսիկացի միջազգայնագետ Խ. Մունյոս Լեդո Կաբրերայի՝ խորհրդարանական դիվանագիտությունն աջակցում, ամրապնդում է ավանդական դիվանագիտական մեթոդները. «Այսօր դա միջազգային հանրության ունեցած, թերևս, միակ գործիքն է, որը պետություններին թույլ է տալիս հարթել տարաձայնությունները, երկխոսության, քննարկումների և կանոնակարգված բանակցությունների միջոցով հաշտեցնել, անգամ միավորել շահերը»[15]:

Նույն կարծիքին է գայանացի դիվանագետ Օ. Իսմայելը՝ «խորհրդարանական դիվանագիտությունն առանձնակի օգտակար գործիք է և կատարյալ լրացում ավանդական դիվանագիտության համար»[16]:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Խորհրդարանական դիվանագիտության խթանումը» վերտառությամբ զե-

---

[13] Hamilton Geert Jan A. Parliamentary diplomacy: diplomacy with a democratic mandate. Constitutional and Parliamentary Information 62(2012). Published by the Association of Secretaries General of Parliaments, under the auspices of the Inter-Parliamentary Union. 22-25.10.2012 Quebec. Available at: http://www.asgp.co/node/30729.P. 9. (03.06.2016, 15:30).

[14] Statement by Björn von Sydow Bridge – building through Parliamentary Diplomacy. The Parliamentary Assembly of the Council of Europe. European Conference of Presidents of Parliaments. Tallinn, Estonia. May 30-31, 2006. P.2.

[15] Cabrera, Muñoz Ledo, Jesús. La diplomacia parlamentaria y el protocolo coadyuvante. Conferencias. Seminario de Cultura Mexicana. Sept. del 2011. Disponible en: http://www.jesuscabrera.com.mx/protocolo.html. (última visitada 31.05.2016 09:30).

[16] Ismhael O. Notes on Diplomatic practic e. Parliamentary diplomacy. 11.11.2012. Availableat: https://odeenishmaeldiplomacy.wordpress.com/2012/11/11/parliamentary-diplomacy/. (last accessed 08.06.2016 15:10).

կույցը (2010թ.) խորհրդարանական դիվանագիտությունը բնորոշում է իբրև «ավանդական դիվանագիտության լրացուցիչ գործիք»:

Այստեղ տեղին է նշել, որ ավանդական դիվանագիտության հետ փոխհարաբերության համատեքստում ոչ միանշանակ մեկնաբանությունների է արժանանում կառավարության պաշտոնական դիրքորոշումից խորհրդարանական դիվանագիտության անկախության հարցը: «Եթե խորհրդարանական դիվանագիտությունն իրենից ներկայացնում է ավանդական դիվանագիտության ևս մեկ խողովակ, ապա, ըստ ամենայնի, պետք չէ նրան չափազանց մեծ ուշադրություն դարձնել»,- գրում է հույն միջազգայնագետ Ս. Ստավրիդիսը և հավելում. «Իսկ եթե, ընդհակառակը, այն դիվանագիտության նոր ձև է, որը գրեթե դե ֆակտո ներառում է ժողովրդավարացման տարր, ապա պետք է ավելի մեծ ուշադրության արժանա»: Հեղինակի կարծիքով՝ խորհրդարանական դիվանագիտությունը պետք է հանդիսանա ոչ թե պաշտոնական քաղաքականության հերթական խորհրդարանական արտահայտողը, այլ դառնա խորհրդարանականների միջև իրական երկխոսություն[17]: Իր աշխատանքներից մեկում նման կարծիք է հայտնում Բրյուսելի Բաց համալսարանի Եվրոպական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող Դանիել Ֆիոթը՝ նշելով, որ եթե խորհրդարանականները չափազանց մոտ և չտարբերակելի են սեփական կառավարությունից, ապա դա կարելի է համարել խորհրդարանական դիվանագիտության թույլ կողմ: Ըստ Դ. Ֆիոթի՝ խորհրդարանական դիվանագիտության ուժը նրա անկախությունն է կառավարությունից և այլ հաստատություններից[18]: Ռուս տեսաբաններ Յու. Կոսովն ու Վ. Տորոպիգինը կարծում են, որ խոսել խորհրդարանական դիվանագիտության մասին՝ իբրև պետության արտաքին քաղաքական մեխանիզմում ինքնուրույն ճյուղի, կարելի է միայն առանձին մեխանիզմի, կազմակերպական կառուցվածքի իմաստով, այլ ոչ թե առանձին քաղաքականության անցկացման[19]:

---

[17] Stavridis Stelios "Parliamentary Diplomacy": some preliminary findings. JMWP No. 48.02, November 2002.[Working Paper]

[18] Fiott D. On the Value of Parliamentary Diplomacy. Madariaga Paper, Vol. 4, No. 7, April 2011. (02.04.2016. 21:00).

[19] Косов Ю. В. Торопыгин А.В. Содружество независимых государств: институты, интеграционные процессы, конфликты и парламентская дипломатия. М. 2009. с.191.

Յուրաքանչյուր երկրի միջազգային հեղինակության համար կարևոր է միջազգային հարթակներում երկրի արտաքին քաղաքական խնդիրները հնչեցնելիս հանդես գալ միասնական դիրքորոշումներով, հետևաբար արդյունավետ պրակտիկա ապահովելու համար դիվանագիտության այս երկու ճյուղերը պետք է գործեն միմյանց հետ սերտ համակարգմամբ: Չնայած կառավարության շրջանակներում լայնորեն ընդունված է, որ խորհրդարանի ավելի լայն ներգրավվածությունը միջազգային հարաբերություններին նվազեցնում է նրա ավանդաբար ընկալվող դերն, այնուամենայնիվ, արդյունքը կլինի փոխշահավետ, եթե քաղաքականությունը մշակվի համատեղ, և նրանց հարաբերությունները հիմնվեն փոխադարձ վստահության վրա[20]: Այդ դեպքում ընդունվող արտաքին քաղաքական որոշումները կհիմնվեն ավելի լայն կոլեկտիվ կարծիքի վրա, կբարձրանա կոլեգիալության մակարդակը: Մանավանդ, ինչպես նշում է Մալթայի խորհրդարանի Ներկայացուցիչների պալատի խոսնակ Մ. Ֆրենդոն, եթե հաշվի առնենք, որ շատ միջազգային խնդիրներ ազգային համերաշխության խնդիրներ են, գոյություն ունի լայն հարթակ խորհրդարանական դիվանագիտության և ավանդական դիվանագիտության համագործակցության համար: Հետևաբար, «խորհրդարանական դիվանագիտությունը չպետք է դիտարկվի իբրև անհրաժեշտ տհաճություն կամ մրցակցող գործունեություն, այլ հավատալ դրա՝ ազգային դիվանագիտական ջանքերի արդյունավետությունն ուժեղացնելու պաշար և աղբյուր լինելուն[21]:

## Ամփոփում

Ի տարբերություն պաշտոնական դիվանագիտության՝ խորհրդարանական դիվանագիտությունը պակաս ֆորմալ բնույթ ունի: Դիվա-

[20] Bajtay P. Parliamentary actors and tools in shaping and controlling EU foreign policy. Congrès AFSP Aix 2015. p.11. Availableat: http://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/549045/EXPO_STU(2015)549045_EN.pdf.p. 11. (last accessed 08.06.2016 13:20).

[21] Frendo M. Parliamentary Diplomacy and Cultural Constraints. Dubrovnik, Croatia, 24-26 May 2012. Available at: file:///C:/Users/Publish%20User1/Downloads/Parliamentary%20Diplomacy%20and%20Cultural%20Constraints.pdf. (Last accessed 15.06.2016 11:30).

նագետը գործադիր իշխանության ներկայացուցիչն է, ով արտահայտում է պետության դիրքորոշումները: Խորհրդարանի անդամները, սակայն, քաղաքական գործիչներ են, ովքեր ցանկացած հարցի շուրջ կարող են ունենալ պետության պաշտոնական դիրքորոշման հետ համընկնող կամ չհամընկնող քաղաքական համոզմունքներ: Նման ճկունությունը խորհրդարանականներին թույլ է տալիս ավելի բաց բանավիճել օտարերկրյա գործընկերների հետ և առաջ քաշել միջազգային բարդ հիմնախնդիրների նորարարական լուծումներ:

*Բանալի բառեր*- խորհրդարանական դիվանագիտություն, ավանդական դիվանագիտություն, առանձնահատկություն, լրացում, արտաքին քաղաքականություն, ճկունություն, երկխոսություն:

## ОСНОВНЫЕ ОСОБЕННОСТИ ПАРЛАМЕНТСКОЙ ДИПЛОМАТИИ

**Григорян Анна Вачиковна**
НАН РА, Институт Философии, социологии и права, соискатель

### Резюме

В отличие от официальной дипломатии парламентская дипломатия менее формальна. Дипломат является посланником исполнительной власти, который представляет позиции государства. Члены парламента, однако- это политики, которые по любому вопросу могут придерживаться политических убеждений, совпадающих или не совпадающих с официальной позицией страны. Такая гибкость позволяет парламентариям более открыто дискутировать со своими зарубежными коллегами и продвигать инновационные решения сложных международных проблем.

*Ключевые слова* – парламентская дипломатия, традиционная дипломатия, особенность, дополнение, внешняя политика, гибкость, диалог.

## THE BASIC FEATURES OF PARLIAMENTARY DIPLOMACY

**Anna Grigoryan**
NAS RA, Institute of Philosophy,
Sociology and Law, Researcher

### Summary

Unlike official diplomacy, parliamentary diplomacy is less formal. A diplomat is a representative of the executive branch who conveys the stance of the State. Members of Parliament, however, are politicians who have political beliefs which may or may not coincide with their respective country's official position on any given issue. This flexibility allows parliamentarians to debate more openly with their foreign counterparts and to promote innovative solutions to complex international problems.

*Keywords* - parliamentary diplomacy, traditional diplomacy, feature, addition, foreign policy, flexibility, dialog.

# ԵՐԿՐԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

***Արփակ Արմենակի Ամիրխանյան***
*տեխ.գ.թ.*
*ԵԿՏԱ, զբոսաշրջության և սպասարկման*
*նոր տեխնոլոգիաների ամբիոն, դասախոս*

Ներկայումս տուրիզմի զարգացման առավել հեռանկարային ուղղություններից է էկոլոգիական տուրիզմը (էկոտուրիզմ), ինչը իրենից ներկայացնում է շրջագայությունները (տուրեր)՝ ուսուցանող, արկածային և այլն: Վերջիններիս ընդհանրությունը կայանում է նրանում, որ օգտագործվում են բնության տարածքները, որոնք հնարավորինս քիչ են ենթարկվել մարդկային գործունեությանը: Դա հիմնավորում է բնական համալիրների հետազոտման անհրաժեշտությունը որպես տուրիզմի ռեսուրսներ: Մեծ քաղաքների արվարձաններում բնական համալիրները զանգվածային հանգստյան վայրերի մեծ արժեք են ներկայացնում: Զբոսաշրջային գործունեության պլանավորման և կազմակերպման գործընթացները նման վայրերում հնարավոր են միայն այդ տարածքների ռեկրեացիոն պոտենցիալի մանրամասն ուսումնասիրության պայմաններում ինչը և ներկայումս արդիական է: [1]

Աշխատանքի նպատակն է մեծ քաղաքի արվարձանային հատվածների բնական-ռեկրեացիոն պոտենցիալի վերհանումը: Վերջինիս իրագործման համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

- առանձնացնել տուրիզմի տեսակները որոնք զարգանում են մեծ քաղաքների արվարձանների բնական տարածքներում,
- Վեր հանել լանդշաֆտի առանձին բաղադրիչների նշանակությունը մեծ քաղաքների արվարձանային հատվածների զբոսաշրջության զարգացման գործում,
- Վերամշակել երկրատեղեկատվական համակարգերի (ԵՏՀ) պրոյեկտի կառուցվածքը (թվային քարտեզագրման բազա) ռեկրեացիոն թեմատիկայով մեծ քաղաքի արվարձանային հատվածի համար և ստեղծել նմանատիպ ԵՏՀ նախագիծ ՀՀ տարածքի արվարձանային հատվածի համար,

- ստացված ԵՏՀ նախագծի օգնությամբ կազմակերպել ՀՀ տարածքի արվարձանային հատվածի բնական-ռեկրեացիոն գոտիավորումը,
- հետազոտել ՀՀ տարածքի զբոսաշրջության զարգացման ժամանակակից տենդենցները:

Հետազոտման օբյեկտն են ՀՀ-ի արվարձանային հատվածի հանգստի տարածքների բնական համալիրները, ռեկրեացիոն ռեսուրսները և տարածքային-ռեկրեացիոն համակարգերի բաղադրիչները:

Հետազոտման առարկան խոշոր քաղաքային արվարձաններում ռեկրեացիոն գործունեության պայմանների տարածքային տարանջատումն է:[2]

Աշխատանքի գործնական նշանակությունը կայանում է հետևյալում՝ բնական-ռեկրեացիոն գոտիավորման նախագիծը կարող է օգտագործվել ՀՀ տարածքի արվարձանային հատվածների զբոսաշրջության զարգացման նախագծման համար: ԵՏՀ ծրագիրը կարող է օգտագործվել որպես պետական մարմինների համար տեղեկատվական աղբյուր, ինչպես նաև զբոսաշրջային կազմակերպությունների համար՝ որպես տվյալների բազա:

**Ինչ է երկրատեղեկատվական համակարգը**

ԵՏՀ համակարգերը ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ են, որոնք կիրառվում են մարդկային գործունեության բազմաթիվ բնագավառներում, ինչպիսիք են՝ առողջապահությունը, կառավարությունը, տրանսպորտային պլանավորումը, ծառայությունների պլանավորումը, քարտեզագրումը, աղտոտման հսկումը, շրջակա միջավայրի կառավարումը և շատ այլ ոլորտներ:

ՀՀ-ում բացակայում է ժամանակակից պահանջները բավարարող տեղեկատվական համակարգ, որն անհրաժեշտ է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ կառավարման մարմիններ) տնտեսության կառավարման բնագավառի խնդիրներն արդյունավետ լուծելու համար:

ԵՏ համակարգ երևույթի հակիրճ սահմանումը բավականին դժվար է տալ: ԵՏՀ-ն հնարավորություն է տալիս նոր հայացքով նայելու մեզ շրջապատող աշխարհին: Եթե շրջանցենք պատկերները և

ընդհանրացումները, դա համակարգչային տեխնոլոգիա է իրական աշխարհի քարտեզագրման և վերլուծության, ինչպես նաև իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունենում մեր մոլորակում: ԵՏՀ-ն հսկայածավալ արդյունաբերություն է, որում ընդգրկված են հազարավոր մարդիկ ամբողջ աշխարհում: Այս տեխնոլոգիան օգտագործվում է մարդու գործունեության գրեթե բոլոր բնագավառներում: [3]

Այս տեխնոլոգիայով միավորվում են ավանդական գործողությունների տվյալները բազայի տվյալների հետ, ինչպիսիք են հարցումը և վերլուծությունը՝ արտացոլման և աշխարհագրական (տարածական) վերլուծության առավելություններով, ինչը տրամադրում է քարտեզը: Այս հատկանիշները տարբերակում են ԵՏՀ-ն այլ տեղեկատվական համակարգերից և ապահովում եզակի հնարավորություններ տարաբնույթ խնդիրների լուծման համար, կապված շրջապատող աշխարհի երևույթների վերլուծության և կանխատեսման հետ, ըմբռնելով և առանձնացնելով հիմնական գործոնները և պատճառները, ինչպես նաև դրանց հնարավոր հետևանքները՝ պլանավորելով ռազմավարական որոշումները և ձեռնարկված գործողությունների ընթացիկ հետևանքները:

Քարտեզագրումը և աշխարհագրական վերլուծությունը չեն հանդիսանում բոլորովին նոր բան: ԵՏՀ տեխնոլոգիան տրամադրում է նոր, ավելի ժամանակակից, ավելի արդյունավետ, հարմարավետ և արագ մոտեցում պրոբլեմների վերլուծությանը և խնդիրների լուծմանը, որոնք կանգնած են ընդհանուր առմամբ՝ մարդկության, և կոնկրետ կազմակերպության կամ խմբի մարդկանց առջև: Այն ավտոմատացնում է վերլուծության և կանխատեսման գործընթացը: Մինչ ԵՏՀ-ի օգտագործումը քչերը ունեին հնարավորություն աշխարհագրական տեղեկատվության ընդհանրացման և համապարփակ վերլուծության մասին՝ նպատակ ունենալով ընդունել հիմնավորված որոշումներ, որոնք հիմնված կլինեն ժամանակակից մոտեցումների և գործիքների վրա:

Ներկայումս ԵՏՀ-ն բազմամիլիոն արդյունաբերություն է, որում ներգրավված են հարյուր հազարավոր մարդիկ ամբողջ աշխարհում: Այս տեխնոլոգիան օգտագործվում է մարդկային գործունեության գրեթե բոլոր բնագավառներում՝ լինի դա գլոբալ խնդիրների վերլուծություն, ինչպիսիք են գերբնակեցումը, տարածքի աղտոտվածությունը, անտառային տարածքների նվազումը, բնական աղետները, թե մաս-

նավոր խնդիրների լուծում, ինչպիսիք են միավորների միջև լավագույն երթուղի գտնելը, նոր գրասենյակի օպտիմալ տեղադիրքի ընտրությունը, տան որոնումը իր հասցեով, խողովակների տեղադրումը տեղանքում և այլն:

Մեծ քաղաքների արվարձանների բնական տարածքներում հնարավոր են տուրիզմի հետևյալ տեսակների զարգացումը՝ հանգիստ առանց ծանրաբեռնվածության, սպորտային և ուսուցողական արշավները, սպառողական հանգիստը՝ սնկի հավաքում, ձկնորսություն, հատապտուղների հավաքում և այլն:

Հարկ է նշել, որ տուրիզմի զարգացման համար շատ կարևոր են անտառների առկայությունը, ոչ հարթ ռելիեֆները, յուրահատուկ երկրաբանական օբյեկտները, ինչպես նաև բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը, որը տեղանքը դարձնում է առավել գրավիչ:

## ԵՏՀ-ի հիմնական պահանջները

ԵՏՀ-ներն աշխատում են ցանկացած տեսակի տվյալների հետ, որոնք հնարավոր է տեղադրել քարտեզի կամ սխեմայի վրա: ԵՏՀ-ն ավանդական քարտեզների և տվյալների բազայի զուգակցումն է: Համակարգիչների օգտագործումը թույլ է տալիս նման զուգակցման նոր որակներ ստանալ: ԵՏՀ-ն հնարավորություն է տալիս ունենալ կառավարվող օբյեկտների նկարագրման ողջ ամբողջությունը, որն արդեն առկա է գործող տվյալների բազաներում և փաստաթղթերում, միևնույն ժամանակ այն ցույց է տալիս այդ օբյեկտների տեղադրությունը տարածության մեջ, դրանց փոխազդեցությունը, ինչպես նաև այդ օբյեկտների վրա ազդող տարաբնույթ գործոնների ազդեցությունը: [4]

Երկրատեղեկատվական համակարգերի ստեղծման նպատակն ու խնդիրները:

ՀՀ ԵՏ համակարգի ստեղծման նպատակը պետական միասնական երկրատեղեկատվական բանկի ստեղծումն է, որը հանրապետության բնական և տնտեսական ռեսուրսների, դրանց իրավական կարգավիճակի ու արժեքի վերաբերյալ ամբողջական տեքստային և գրաֆիկական տվյալների կենտրոնացումն է, և նպատակաուղղված է ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացմանը: Նախկին պետական պլանավորված վարչահրամայական կառավարումից շուկայական փոխ-

հարաբերությունների անցումը առաջ բերեց բազմաթիվ նոր խնդիրներ, որոնց արդյունավետ լուծումը հնարավոր է միայն լիարժեք տեղեկատվության ու նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ:

ԵՏՀ-ի ստեղծմամբ և ներդրմամբ բացատրվեց ոչ բավարար հիմնավորումներ ունեցող որոշումների ընդունումը, և անցում կատարվեց պետական կառավարման որակապես բարձր մակարդակի: [5]

Ի՞նչ կարող է անել ԵՏՀ-ն մեզ համար.

Կատարել տարածական հարցումներ և վերլուծություն: Տվյալների բազաներում որոնման և տարածական հարցումների անցկացման ԵՏՀ կարողությունը թույլ տվեց բազմաթիվ ընկերությունների տնտեսել միլիոնավոր դոլլարներ: ԵՏՀ-ն օգնում է նվազեցնել հաճախորդների հարցումներին արձագանքելու ժամանակը, բացահայտում է պահանջվող գործունեությանը նպատակահարմար տարածքները, տարբեր պարամետրերի փոխկապակցվածությունները (օրինակ՝ հողերի, կլիմայի կամ գյուղատնտեսական մշակաբույսերի եկամտաբերությունը) հոսանքալարերի կտրվածքների տեղերը: Անշարժ գույքի գործակալները օգտագործում են ԵՏՀ-ն գտնելու համար օրինակ՝ բոլոր տները որոշակի տարածքում, որոնք ունեն շիֆերային տանիքներ, երեք սենյականոց են, ունեն 5 մետրանոց խոհանոցներ, իսկ հետո՝ թողարկելու համար այդ կառույցների ավելի մանրամասն նկարագրությունը: Հարցումը կարող է ճշգրտվել՝ ներմուծելով լրացուցիչ պարամետրեր, ինչպիսին է օրինակ՝ գնայինը: Կարելի է ստանալ բոլոր տների ցուցակը որոնք գտնվում են կոնկրետ գծից, կամ աշխատանքի վայրից որոշակի հեռավորության վրա:

ԵՏ համակարգեր կիրառող բազմաթիվ կազմակերպություններ նկատել են, որ նրա հիմնական առավելություններից են սեփական կազմակերպության և նրա ռեսուրսների կառավարման բարելավման նոր հնարավորությունները, որոնք հիմնված են առկա տվյալների աշխարհագրական միավորման և համատեղ օգտագործման ու համաձայնեցված ձևափոխությունների հնարավորությունների վրա: Տվյալների բազայի համատեղ օգտագործման հնարավորությունը և տարբեր բաժանմունքների կողմից մշտական լրացումն ու ուղղումը թույլ է տալիս բարձրացնել ինչպես տարբեր բաժանմունքների, այնպես էլ ամբողջ կազմակերպության արդյունավետությունը: ԵՏՀ-ն այլ տեղեկատվական տեխնոլոգիաների նման հաստատում է խոսքը, որն ա-

սում է՝ լավագույն տեղեկացվածությունը օգնում է ընդունել լավագույն որոշումը:

Ընկալման և միավորման համար հասանելի տեղեկատվության առկայությունը թույլ է տալիս պատասխանատու աշխատակիցներին կենտրոնացնել իրենց ջանքերը լուծումներ գտնելու վրա՝ առանց շատ ժամանակ ծախսելու հասանելի տարաբնույթ տվյալների հավաքման և վերլուծության վրա: Կարելի է բավականին արագ դիտարկել լուծման մի քանի տարբերակներ և ընտրել առավել արդյունավետը:

ԵՏՀ-ում հատուկ տեղ է տրվում քարտեզներին, որոնք ստեղծելու գործընթացը շատ ավելի պարզ և ճկուն է, քան ավանդական՝ ձեռքով կամ ավտոմատ քարտեզագրման մեթոդներում: Որպես ելքային տվյալների ստացման աղբյուր կարելի է օգտվել սովորական թղթե քարտեզների թվայնացումից: ԵՏՀ-ի վրա հիմնված քարտեզագրական տվյալների բազաները կարող են լինել շարունակական (առանց առանձին թերթերի և տարածաշրջանների բաժանման) և կապված չլինել կոնկրետ մասշտաբով: Այսպիսի տվյալների բազայի հիման վրա մենք կարող ենք ստեղծել քարտեզներ՝ էլեկտրոնային տեսքով: Տվյալների բազան ցանկացած ժամանակ կարող է լրացվել նոր տվյալներով (օրինակ՝ այլ տվյալների բազաներից), իսկ նրանում առկա տվյալները անհրաժեշտության դեպքում կարելի է թարմացնել: ԵՏՀ-ն իր հնարավորությունների մեծ մասը ցույց է տալիս այն ժամանակ, երբ գործի են դրվում նրա վերլուծական ֆունկցիաները: ԵՏ համակարգերը հնարավորություն են տալիս կատարել հաշվառում, պլանավորում և կանխատեսում: ԵՏՀ-ն հնարավորություն է տալիս ճշգրիտ հաշվարկել օբյեկտների կոորդինատները և տեղամասի մակերեսները: ԵՏՀ-ները կարող են զանազան աղբյուրներից ամենատարբեր տեղեկություններ պահանջել՝ թղթային քարտեզներ, նախագծեր, գծագրեր և սխեմաներ: Դրանք կարելի է սկաներով տեղափոխել համակարգչի մեջ և թվայնացնել: Թղթի վրա փաստացի տեղեկատվություն չունենալու դեպքում այդ փաստաթղթերը ԵՏՀ-ում կարելի է ստեղծել զրոյից: [6,7]

Ռեկրեացիոն ոլորտի ԵՏՀ բազան բաղկացած է հետևյալ շերտերից.

- աշխարհագրական հիմքի շերտեր
- բնական օբյեկտների շերտեր, որոնք ունեն ռեկրեացիոն նշանակություն (ջրային օբյեկտներ, անտառներ, ճահիճներ),

- շերտեր, որոնք ցույց են տալիս տրանսպորտի տեսակների հասանելիությունը տարածքներում,
- շերտեր որոնք նկարագրում են տուրիզմի զարգացման ներկա վիճակը,
- բնական-ռեկրեացիոն տարածքների արվարձանային հատվածի շերտեր:

Այսպիսով, արվարձանային հանգստի ինտենսիվ զարգացման և բնական-ռեկրեացիոն ռեսուրսների պահպանման համար անհրաժեշտ է նախ և առաջ.

- նախագծել զբոսաշրջիկների հոսքի տարածքային բաշխումը,
- հաշվարկել բնական-ռեկրեացիոն օբյեկտների օգտագործման սահմանափակումները,
- ապահովել բոլոր հնարավոր միջոցներով բնակչության իրազեկումը:

Ինչ դեր ունեն ԵՏՀ համակարգերը տուրիզմի զարգացման գործում:

Թերևս ամենակարևոր դերը, որը կատարում են ԵՏՀ համակարգերը, դա ինչպես տարածական տեղեկատվության, այնպես էլ ցանկացած այլ՝ տարածության մեջ տեղաբաշխված տեղեկատվության առավել բնական ներկայացումն է: Նշենք, որ տեղեկատվության ներկայացման ձևերը կարող են լինել տարբեր. տվյալների թվային ներկայացումը, տվյալների բազայից աղյուսակներ, նկարներ կամ իրական տեսաձայնագրություններ, ձայնագրություններ:

Այսպիսով, երկրատեղեկատվական համակարգերը կարող են օգնել ամենուրեք՝ այնտեղ, որտեղ օգտագործվում է տարածական տեղեկատվությունը և տարածության որոշակի հատվածներում տեղակայված օբյեկտների մասին տեղեկատվությունը: [8]

Եթե փորձենք վերլուծել ԵՏՀ տնտեսական արդյունքները, ապա կարող ենք փաստել, որ շատ կազմակերպություններ կարողացել են միլիոնավոր դոլլարների տնտեսական արդյունքներ ապահովել: Այսպես, օրինակ, Կանադայի Պինավա քաղաքի և դրա հարակից տարածքների զբոսաշրջային ԵՏՀ համակարգի ստեղծման համար ծախսվել է 82.500 դոլլար և ներկայումս այն բերում է տարեկան 5.000.000 դոլլարի եկամուտ: [9]

ԵՏ համակարգերը օգնում են կրճատել հաճախորդների հարցումների պատասխանների ստացման ժամանակահատվածը, ա-

ռանձնացնել համապատասխան միջոցառումների համար անհրաժեշտ տարածքները, վեր հանել տարբեր պարամետրերի միջև փոխկապվածությունները (օրինակ եղանակի և բերքատվության միջև կապը):

ԵՏ համակարգերի տեխնոլոգիայով համացանցային նախագծումը զբոսաշրջության մեջ:

ԵՏՀ-ն ինտերակտիվ տեխնոլոգիա է, որը պատասխանում է օգտատերերի հարցումներին գրեթե անհապաղ, ինչը ավելի արդյունավետ է:

ԵՏ համակարգերը և արբանյակային տեխնոլոգիաները:

Բարձրագույն տեխնոլոգիաների զարգացման պայմաններում մեր առօրյա կյանքում տեղի են ունենում էական փոփոխություններ: Ի վերջո, 30-40 տարի առաջ ով կարող էր մտածել որ բջջային կապը կդառնա բոլորին հասանելի, կամ ավտոճանապարհային քարտեզներին փոխարինելու կգան էլեկտրոնային պլանշետները, որտեղ ոչ միայն ներառված են քարտեզներ կամ ցանակցած մասշտաբի տեղանքի պլաններ, այլ նաև նշվում են օբյեկտի տեղադիրքը և շարժման ուղղությունը: Վերջինիս օգնությամբ կարելի է կողմնորոշվել, թե ինչպես հասնել օբյեկտի նախընտրելի հասցեին: Ընդ որում՝ մանրամասնեցումը կարող է հասնել ընդհուպ մինչև շենքի կոնկրետ հարկի ներկայացմանը: Այն հնարավորություն է տալիս ստանալու տեղեկատվություն՝ տարվող ճանապարհային աշխատանքների մասին, ինչը երբեք քարտեզի օգնությամբ ստանալ հնարավոր չէր լինի: Ներկայումս գործում են երկու արբանյակային համակարգեր՝ ամերիկյան Navstar (Navigation System using Timing and Ranging) մեզ առավել հայտնի GPS (Global Postioning System) և ռուսական ГЛОНАСС-ը: Վերջիններիս աշխատանքի բնույթը շատ դեպքերում նման է: Այդ համակարգերի կազմի մեջ մտնող արբանյակների գլխավոր խնդիրը ազդանշանների անընդհատ փոխանցումն է, որոնք ընդունում են ազդանշանային կայանները՝ ավիացիոն, սուզանավային, ավտոմոբիլային և այլն: Ընդ որում, համակարգերը կառուցված են այնպես, որ ընդունիչը միաժամանակ «տեսնում է» մի քանի արբանյակներ: Համեմատելով տարբեր արբանյակներից ստացվող ազդանշանների ուշացումները՝ ընդունիչը հաշվարկում է դրանց հեռավորությունը իրենից, որից հետո լուծում է հավասարումների համակարգերը՝ իր կոորդինատները որոշելու հա-

մար: Հեշտ է և գեղեցիկ: Արբանյակային նավիգացիան անհրաժեշտ է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են զբոսաշրջությունը, ավիացիան, ծովային և ավտոմոբիլային տրանսպորտը, ԵՏ համակարգերը, շինարարությունը, փրկարար ծառայությունը, որսորդությունը, ձկնորսությունը և այլն, որտեղ առանց կոորդինատների իմացության անհնար է: [10,11]

Ունենալով նավիգացիոն ընդունիչ՝ կարելի է մի քանի մետր ճշտությամբ որոշել օբյեկտի կոորդինատները, տեղափոխման արագությունը և շարժման ուղղությունը: Վերջինս տեղանքի էլեկտրոնային քարտեզի և բջջային կապի միջոցների հետ համատեղ դառնում է հզորագույն գործիք դիսպետչերական համակարգերի կառուցման համար:

Արբանյակային նավիգացիայի հնարավորությունները հասարակ քաղաքացիական օգտատերերից առաջինը գնահատել են բանկիրները՝ ստեղծվել են դրամական արժեքների տեղափոխման վերահսկման համակարգեր: Այսպիսով, բանկի աշխատակիցը մոնիտորի վրա տեսնում է տեղափոխման ամբողջ պատկերը՝ որ փողոցի որ կետում է գտնվում ինկասացիայի մեքենան, որ ուղղությամբ է շարժվում և այլն:

Ներկայումս երկրատեղեկատվական տեխնոլոգիաները աստիճանաբար գրավում են հայկական շուկան: Զբոսաշրջային ուղղվածություն ունեցող ԵՏՀ ստեղծման համար անհրաժեշտ կլինի ֆինանսական և օրենսդրական աջակցություն պետության կողմից՝ ԵՏՀ նախագծերի չափազանց թանկ լինելու պատճառով: Այսպիսով, ԵՏՀ տեխնոլոգիայի կիրառումը մեծ օգնություն կլինի տուրերի կազմակերպման և իրականացման, ինչպես նաև ուղեկցող ծառայությունների գործում:

## Ամփոփում

Ներկայումս երկրատեղեկատվական տեխնոլոգիաները աստիճանաբար գրավում են հայկական շուկան: Բնական-ռեկրեացիոն գոտիավորման նախագիծը կարող է օգտագործվել ՀՀ տարածքի արվարձանային հատվածների զբոսաշրջության զարգացման նախագծման համար: ԵՏՀ ծրագիրը կարող է օգտագործվել որպես պետական մարմինների համար տեղեկատվական աղբյուր, ինչպես նաև զբո-

սաշրջային կազմակերպությունների համար՝ որպես տվյալների բազա: Զբոսաշրջային ուղղվածություն ունեցող ԵՏՀ ստեղծման համար անհրաժեշտ կլինի ֆինանսական և օրենսդրական աջակցություն պետության կողմից՝ ԵՏՀ նախագծերի չափազանց թանկ լինելու պատճառով: Այսպիսով, ԵՏՀ տեխնոլոգիայի կիրառումը մեծ օգնություն կլինի տուրերի կազմակերպման և իրականացման, ինչպես նաև ուղեկցող ծառայությունների գործում:

*Բանալի բառեր.* ռեկրեացիոն ռեսուրսներ, տուրիզմ, երկրատեղեկատվական համակարգեր, նավիգացիա, տվյալների բազա, տարածական տվյալներ:

### Գրականություն


1. Азар В.И. Экономика и организация туризма. М. Экономика, 1972. – 184 с.
2. Веденин Ю.А. Динамика территориальных рекреационных систем. М.: Наука, 1982. – 190с.
3. Երկրատեղեկատվական համակարգերի օգտագործումը տարբեր բնագավառներում: Ուսումնական ձեռնարկ – Երևան: ԵրՃՇՊՀ հրատ., 2013. – 113 էջ.
4. Машимов М.М. Всеобщий взгляд на спутниковую технологию // Геодезия и картография. - 1994. - N 12. – С. 6-11.
5. Ամիրխանյան Ա.Ա. Տարածական տվյալների ենթակառուցվածքների ստեղծման և զարգացման նախադրյալները // ԵՃՇՊՀ ուսանողական զեկույցների ժողովածու, Ջերմուկ, 7-9 մայիս, 2010թ. - Երևան: ԵՃՇՊՀ հրատ., 2010. – էջ. 64-70:
6. Հայաստանի Հանրապետության տարածական տյալների տեղեկատվական ենթակառուցվածքի կազմը, ձևավորման և վարման կարգը հաստատելու մասին. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 13-ի N 136-Ն որոշում:
7. Программно-аппаратное обеспечение, фонд цифрового материала, услуги и нормативно-правовая база геоинформатики: Ежегод. Обзор. – Т. 1, Вып. 3 (1996-1997) (приложение к Информационному бюллетеню ГИС-ассоциации). – М.: ГИС-Ассоциация, 1998. – 206с.

8. Кошкарев А.В. Канада - национальная инфраструктура пространственных данных // ГИСинфо. - 2005. - № 5(11). - С. 30-33.
9. https://gisandscience.files.wordpress.com/2012/08/3-an-introduction-to-the-geo-information-system-of-the-canada-land-inventory.pdf
10. Генике А.А., Побединский Г.Г. Глобальная спутниковая система определения местоположения GPS и ее применение в геодезии.- М.: Геодезиздат, 1999. - 271 с.
11. Романов Л.М., Шведов А.К. Моделирование спутниковой радионавигационной системы NAVSTAR // Зарубежная радиоэлектроника. - 1987. -N 12. - С.31-46.

## ИСПОЛЬЗОВАНИЕ ГЕОИНФОРМАЦИОННЫХ СИСТЕМ В РАЗВИТИИ ТУРИЗМА

**Амирханян Артак Арменакович**
кан.тех.наук
ЕРОА, кафедра туристических и сервисных
новых технологий, преподователь

### Резюме

На сегодняшний день геоинформационные технологии постепенно завоевывают Армянский рынок. Схема природно-рекреационного районирования может использоваться для территориального планирования развития туризма в окрестностях Армении. ГИС проект может использоваться как источник справочной информации для органов власти и туристических фирм и как база данных для последующего детального проектирования обьектов туризма.

Для создания туристско-ориентированных ГИС потребуется обьединение усилий всех заинтересованных сторон, это необходимо для создания информационного контента баз данных, постоянного поддержания его актуальности и соответствия действительности. Также необходима финансовая и законодательная поддержка со стороны государства, ввиду высокой дороговизны ГИС проектов. Применение

технологии ГИС является огромным подспорьем в деле организации и проведения туров, а также сопутствующего сервиса.

*Ключевые слова:* рекреационные ресурсы, туризм, геоинформационные системы, навигация, база данных, пространственные данные.

## THE USAGE OF GEOGRAPHIC INFORMATION SYSTEMS IN THE DEVELOPMENT OF TOURISM

**Artak Amirkhanyan**
Candidate of technical sciences
EREA,Chair of Tourism and New technologies
in service, lecturer

### Summary

At present geographic information system technologies gradually occupy the Armenian market.

A natural-recreational segment can be used to design tourism development in suburban areas of Armenia. The geographic information system program can be used as a reference source for government agencies and tourism organizations as well as a database for further detailed design of tourism areas. Establishing a tourism-oriented geographic information system will require the efforts of all sides inferested in the project, it is necessary for the creation of data base, constatnt maintanance of its relevance and acting correspondance. The financial and legislative assistance by the state us urgent because of the overwhelming cost of the geographic information system projects. Thus, the use of geographic information system technology will be a great help in organizing and implementing tours as well as accompanying services.

*Keywords:* recreational resources, geographic information systems, navigation, database, spatial data.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Հ.Վ. Բիշարյան, Ա.Գ. Ճուղուրյան**
Համալսարանական կրթության որակի վարկանիշավորման շուրջ...........3

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Ա.Ս. Վեյան**
Հրշեջ-փրկարարների հոգեբանական պատրաստվածության և սթրեսակայունության առանձնահատկությունները արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում ........................................................10
Արտակարգ իրավիճակներում բնակչության իրազեկվածության հոգեբանական կողմը.............................................................. 17

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**А.В Карян, С.А. Ананян**
Значение армянской АЭС и инвестиционные возможности для возведения нового блока АЭС.............................................................25
**Հ.Հ. Գրիգորյան**
Շրջանառու կապիտալի կազմակերպման սկզբունքները և կատարելագործման ուղիները առևտրային կազմակերպություններում.. 41
**Կ.Ն. Սարգսյան**
Հայաստանի Հանրապետության պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները .................................................................48
**Н.И. Григорян**
Формирование основ научных знаний по управлению недвижимостью ..55
**Տ.Ռ.Սարգսյան**
Ֆինանսատնտեսական արդյունավետ համակարգի ներդրման հնարավորությունները Երևանի մետրոպոլիտենում............................... 71
**Լ.Կ. Սարգսյան**
Ազգային ինովացիոն համակարգերի ձևավորման միջազգային փորձի վերլուծությունը.....................................................................82
**Ա.Մ.Հակոբյան**
Էլեկտրոնային առևտրի գլոբալ միտումները և դրանց դերը ընկերության մարքեթինգային ռազմավարությունում............................92

**Մ.Ժ. Սիմոնյան**
Արտադրանքի շերտավորման ռազմավարության մի քանի հարցեր ..... 102
Նորամուծական զարգացման ռազմավարական ուղիները ՀՀ-ում .........111
**Ա.Մ. Հայրապետյան**
Օտարերկրյա ներդրումների և ՀՀ տնտեսական զարգացման հիմնախնդիրների պատճառահետևանքային կապի վերլուծություն ..... 126
**Ա.Տ. Թորոսյան**
Մշակութային կապիտալի առարկայացված տարրի գնահատումը ........141
**Լ.Հ. Մկրտչյան**
«ՀՀ ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի հիմնախնդիրները ............................................ 156
**Լ.Վ. Պետրոսյան**
Առևտրային բանկում ցուցանիշների հաշվեկշռված համակարգի (balanced scorecard) ներդրման փուլերն ու ընթացակարգը .................. 169
**Լ.Հ. Օսիպյան**
Գիտության ոլորտում կրթության կառավարման հիմնախնդիրները..... 179
**H. Mahjoub**
The impact of blockhain on business environment.................................190
**B. Tajfirouz**
Challenges workforce faces in labor market of Armenia..........................196
**F. Khoshbakht**
The managers’ crucial roles in maximizing the range of happiness in a workplace ........................................................................................205
**Ն.Ն. Խաչատրյան**
Բարձրագույն կրթությունը որպես ծառայությունների մատուցման առանձնահատուկ ոլորտ .............................................................. 210
**Ա.Յ. Շիրինյան**
ՀՀ տարածքային զարգացման անհամաչափության ուսումնասիրությունը բազմաչափ վիճակագրական մեթոդներով..........217
**Կ.Հ. Գրիգորյան, Լ.Յ. Հովականյան**
Կրթական համակարգ - աշխատաշուկա կապը՝ որպես ՀՀ կրթական ծառայությունների մրցունակության գրավական................................. 227
**Ռ.Ռ. Եղիազարյան**
Զարգացող երկրներում շինարարական ներդրումային նախագծերում ներդրումային ռիսկերի կանխարգելման և վերահսկողության խնդիրները ........................................................................................236

**Ա.Ա. Ոսկանյան**
Ակտիվների արժեթղթավորման օրենսդրական դաշտի բարելավման ուղիները ՀՀ-ում....................................................................249
**Տ.Ա. Այվազյան**
ՀՀ արտահանման մրցակցային հնարավորությունները ԵԱՏՄ անդամ երկրներում ......................................................................258

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

**А.К. Погосян**
Система GI/G /r/ n – r при малой загрузки ........................................270
**N. Hakobyan**
6-dimensional hypermanifold as a gravitational model of strong interaction ...................................................................................... 277

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Ա.Ա. Աբրահամյան**
Եվրասիական տնտեսական միության ակտերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում. հարաբերակցության հիմնախնդիրները ........................................................................285
**Վ.Ա. Թորոսյան**
Պետության, իրավունքի և կրոնի հարաբերակցության որոշ հիմնահարցեր. պատմաիրավական վերլուծություն ............................296
Պետության աշխարհիկության սկզբունքի իրացման հիմնահարցերը արտասահմանյան առանձին երկրների օրենսդրությամբ. համեմատական իրավական վերլուծություն ........................................312
**Լ.Վ. Ղարագյոզյան**
Պաշտպանի դատավարական կարգավիճակի տեսական և օրենսդրական հիմքերը ..........................................................................335
Պաշտպանի քրեադատավարական կարգավիճակի որոշ հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում և Ռուսաստանի Դաշնությունում .......................................................................344
**Լ.Ա. Սուքիասյան**
Ընտրական իրավունքի սահմանափակման հիմնահարցերը հայ իրավաքաղաքական մտքի մինչխորհրդային շրջանում .......................360

**Ա.Ս. Նահապետյան**
Անձնական անձեռնմխելիության իրավունքի բովանդակության իրավաընկալման հիմնախնդիրները. պատմատեսական վերլուծություն ....................................................................369
**Լ.Ա. Մարգարյան**
Իրավական նիհիլիզմը որպես իրավական մշակույթի հակատեսակ ....383

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**Լ.Ա. Մակարյան**
ՀՕԿ-ի կրթամշակութային և հրատարակչական գործունեությունը ...... 391
**Մ.Գ. Գրիգորյան**
Բագրատունյաց Հայաստանի թագուհիների և իշխանուհիների եկեղեցաշինական և նվիրատվական գործունեությունը......................403
**Ա.Ռ. Առաքելյան**
Արաբական պետությունների լիգա. միջարաբական համագործակցության ձախողո՞ւմ, թե՞ ձեռքբերում...............................414
**Հ.Կ. Սուքիասյան**
Հայաստանի Հանրապետությունում «Արգելված գրականության» գոյության հարցի շուրջ (1918–1920 թթ.) ..............................................426

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**Ռ.Ս. Մելիքյան**
ՀՀ արտաքին մարտահրավերները ԵՏՄ ինտեգրման շրջանակներում...............................................................................436
**Ա.Վ. Գրիգորյան**
Խորհրդարանական դիվանագիտության հիմնական առանձնահատկությունները .............................................................445

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ**

**Ա.Ա. Ամիրխանյան**
Երկրատեղեկատվական համակարգերի օգտագործումը տուրիզմի զարգացման գործում ........................................................................456

**Խմբագրության հասցեն. Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10**

Հեռ. (374 10) 24 00 38
Ֆաքս (374 10) 24 00 38
Վեբ կայք http://www.era.am
Էլ. փոստ. info@era.am
husikgz@yahoo.com

Համակարգչային ձևավորումը՝ Մ. Գևորգյանի
Սրբագրությունը՝ Գ. Պետրոսյանի

Ստորագրված է տպագրության 4.12.2017թ.

Ֆորմատ՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 29,5 մամուլ: Տպաքանակ՝ 100:

© ԵԱ գիտական հոդվածների ժողովածու, 2017

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի
հրատարակչություն,
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10

Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Գևորգ Քոչարի փ. 21:
Հեռ.՝ (+374 10) 52-88-00:
E-mail: astghik59@gmail.com, www.astghik.am